



Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



《天桥》—熊式一著

S.I. HSIUNG
The Bridge of Heaven
/Armenian version/

Translator - Khoren Gasparyan

Stepanakert 2016

ՍՅՈՒՆ ՇԻ-Ի

ԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՍՈՒՐՁԸ

Թարգմանիչ՝
Խորեն ԳԱՄՊԱՐՅԱՆ

Ստեփանակերտ 2016

ՀՏԴ 821.581-31ՇԻ-Ի
ԳՄԴ 84(5Չ)-44
Շ 559

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

ՇԻ-Ի Սյուն

Շ 559 **Երկնային կամուրջը:** Վեպ/ Սյուն Շի-ի:
Թարգմ. անգլերենից՝ Խ. Գասպարյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2016, 360 էջ:

Չին արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ Սյուն Շի-ին իր հանրահայտ «Երկնային կամուրջը» վեպը գրել է անգլերեն, 1943 թվականին, չինարեն է թարգմանվել տասը տարի անց: Բարեփոխական շարժման, Սինհայական հեղափոխության եւ հանրապետության պատմությունը վեպում ներկայացվում է մեկ ընտանիքի կյանքի ընթացքով եւ նրա աչքերով: Էպիքականությունն ու վառ գեղարվեստականությունը գրքի այն գլխավոր արժանիքներն են, որոնք կգրավեն նաեւ հայ ընթերցողի ուշադրությունը:

ISBN 978-9939-1-0441-6

ՀՏԴ 821.581-31ՇԻ-Ի
ԳՄԴ 84(5Չ)-44

The Bridge of Heaven by S.I.HSIUNG
© Foreign Language Teaching and Research Publishing Co., Ltd.
(FLTRP), 2013
All rights reserved.

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար/, 2016

ԴԻՄԻԱՅԻՆ

*Որ երբեմն իմ խիստ քննադատն է,
Երբեմն՝ եռանդուն գործընկերս,
Եվ մշտապես՝ ինձ նվիրված կինս:*

«ԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՁԸ» կարդալիս
Տա Տունգին, որպես ջահել տղայի,
Քնքշագին խիկո էր այս հույսը տալիս,
Որ կանաչ մի տեղ մի սալորենի
Կտնկի, կամ էլ ճերմակ վարդենի,
Այնպես որ՝ զարնանը կամ հունիսին,
Երբ լույս է վերում, ջինջ լիալուսին,
Ձյունասպիտակ ժամին այդ պայծառ
Ցուցանի մարդկանց իր ծաղիկը վառ,
Եվ նրանք, ովքեր որոնել են այն,
«Կխոսի՞ արդյոք», - այսպես շնչան,-
«Հրաշք օրհնությամբ ցավը կվանի՞,
Մեր հոգսերն ամեն ի չիք կդարձնի՞:
Կանաչ ընծյուղներ կնետի՞ չորս դին,
Կդառնա՞ իրոք նա մեր Թագուհին:
Կլինի՞ նա մեր Թագուհին փրկիչ:
Կլինի՞ հաստատ, շարժվում է քիչ-քիչ»:
Բայց երբ աճում է ու տալիս ճյուղեր,
Չի լինում այգի, չեք գտնում հողեր
Ողջ Չինաստանի տարածքում անծիր,
Որտեղ կարող էր այդ բույսը աճել:
Եվ դրա տեղակ կամքն է երկաթե՝
Սովորել միայն սպանել, ատել,
Պատել-պարուրել մոլախոտերով,
Խանգարել մարդկանց, խեղդել հոգսերով:
Տահել տարիքն է սա Տղամարդու՝
Ապրիլ, որ չունի իր մայիսն արթուն,
Մայիս, բայց արդեն առանց հունիսի,
Գիշեր, ուր չկան շողերը լուսնի:

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

Սակայն խաթարված կյանքերի միջից
Գեղեցկությունը դեռ փայլում է ջինջ,
Եվ իր շողերն են խավարը զատում,
Սեզ սխալներից իսպառ ազատում:
Եվ միլիոնավոր բոցերն էլ իսկույն
Կայրեն ամոթ ու խայտառակություն,
Տա Տունգն էլ հաստատ արդեն կգտնի
Տարածք, ուր Սիտքն իր խաղաղ կլինի:
Սալորենին էլ ճերմակ, ծյունաթույր
Կծաղկի այնպես պայծառ ու մաքուր`
Երկնքի ներքո, Խաղաղ Լուսնի տակ,
Ինչպես ծովերում հանդարտ ու հստակ:

1942թ., հոկտեմբերի 15

ՆԱԽԱԲԱՆ

*Սեխի սերմ ցանես, չի աճի այդտեղ մոլախոտ երբեք,
Եղիևջի տեղակ չեն բուսնի երբեք մանուշակները:
Ինչ էլ որ գործես՝ ողորմած սրտով կամ ազահ ու նենգ,
Երկինքը երբեք չի մոռանա քո արած գործերը:*

Ձեր խոնարհ ծառա հեղինակն իր համար մեծ պատիվ է համարում սկսել այս գիրքը՝ արձանագրելով մարդասիրական մի գործի մասին:

Բարկ արեւի տակ, շոգ մի օր, Կայսր Կուանգ Սյուի իշխանության 5-րդ տարվա (1879) 7-րդ լուսնի ժամանակ քրտնաթաթախ մի խումբ տղամարդիկ՝ տքնաջան, տնքոց-հառաչանքով ծանր ու դժվարին մի առաջադրանք էին կատարում՝ Ցզյանսի նահանգի Նանչան քաղաքից 25 լի (լին մոտավորապես մեկ երրորդ մղոն է) հարավ գտնվող փոքր գետի վրա վերակառուցելով փոքրիկ մի կամուրջ:

Հանրությունն այդ տքնաջան աշխատող մարդկանց շնորհակալ լինելու պատճառ չունեք, քանզի նրանք վճարվում էին իրենց աշխատանքի համար: Ու թեեւ նրանք անասելի դժվարին գործ էին կատարում, քանի որ ավելի շատ աշխատող ձեռքերի կարիք էր զգացվում, բայց դա շինարարության ղեկավարի սխալ հաշվարկի արդյունքն էր: Նա այդ գործն ստանձնել էր ութսուն թանել արծաթադրամով եւ պետք է գործարքը չխախտեր: Նա պետք է հենց սկզբից իմանար, որ այդքանը բավական չէ, քանզի խելամիտ ու հասկացող անձնավորություն էր: Հավանաբար, տեսնելով, որ ավելին չի կարող ստանալ, մտածել էր, որ լավ կլինի ընդունել գործարքը, քան թե նեղացնել իր վաղեմի պատվիրատուին: Եվ իր մարդկանց ուղղակի ասել էր, որ անգամ վաճառվող ամենաեժման կյուրեր գնելով՝ ինքը պետք է մի այլ ճանապարհ գտնի, որպեսզի կարողանա կորուստը փոխհատուցել: Բնականաբար, բանվորներն ստիպված էին իրենց ջանքն ու ներդրումն ունենալ՝ աշխատելով սովորականից ավելի դժվարին պայմաններում:

Այն մարդը, ում չէր ուզել նեղացնել շինարարը, Լի Սինն էր: Վերջինս բարերար էր, եւ այդպիսի հրաշալի ու երախտագիտության արժանի գործին իր նվիրվածության շնորհիվ Երկինքը նրա հանդեպ շատ բարեհաճ էր գտնվել: Հիմա նա շրջանի ամենահարուստ մարդն էր: Ըստ էության, շուրջբոլորը բազմաթիվ լի հեռավորության վրա ընկած բրնձի դաշտերը նրա

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

սեփականությունն էին, եւ, շատ քիչ բացառություններով, բոլոր գյուղերի բնակիչները նրա վարձակալներն էին

Լի Մինն իր բնույթով առատաձեռն անձնավորություն էր եւ երբեք իր դուռն եկած աղքատներին ու մուրացիկներին չէր մերժում ու միշտ անվճար թեյ կամ բրինձ էր տալիս նրանց: Նա հավատում էր, որ Երկինքը երբեք բարի գործն անվարձահատույց չի թողնի: Ում մի բաժակ թեյ է տվել, կջրեն իր տնկիներից մի քանիսը, իսկ ում կերակուր է տվել, անկասկած մի քիչ գոմաղբ կլցնեն իր բրնձի դաշտերում՝ նախքան իր կալվածքներից հեռանալը:

Լի Մինն ապրում էր ալ կարմիր դարպասներով մի մեծ առանձնատան մեջ, հիշյալ կամրջից մոտավորապես վեց լի հեռավորության վրա, եւ այդ բնակավայրը կոչվում էր Լի ընտանիքի գյուղ: Գյուղում մոտ հինգ հարյուր տնտեսություն կար եւ, բացի մի քանի կրպակատերերից ու առետրականներից, բոլոր բնակիչներն էլ հողագործ էին: Լի Մինը թեւէ Լի տոհմի գլխավորը չէր, բայց նա իրեն շատ ավելի կարեւոր էր համարում, քան գյուղի տարեց այդ առաջնորդը, ում հողաշեն պատերով ու ձողտաձածկ տանիքով փոքրիկ խրճիթը Լի Մինի ախոռն իսկ լինելու համար պիտանի չէր: Շիտակն ասած, մեր բարերարն զբաղեցնում էր այս տպավորիչ առանձնատան միայն կեսը: Բայց հենց նրա զբաղեցրած այդ կեսն էր միայն, որ տպավորիչ էր. մյուս կեսը, որն զբաղեցնում էր ոչ մի լավ բանով աչքի չընկնող իր կրտսեր եղբայրը՝ Լի Կանը, իրականում հիշատակման իսկ արժանի չէր: Այդ գեղեցիկ լաքապատ դարպասների ներսում ընդարձակ ներքնաբակն էր, որ տանում էր դեպի ներսի երկու զույգ կողմնային դարպասները, եւ հենց այստեղից էլ սկսվում էր երկու եղբայրների սեփականությունն հանդիսացող տնտեսությունների զգալի տարբերությունը: Մինչ աջ կողմի դարպասները, որ պատկանում էին Լի Մինին, մաքուր էին, լաքապատ, փայլուն ու հղկված դրան թակիչներով, Լի Կանին պատկանող՝ ձախակողմյան դարպասներն այնքան վատ վիճակում էին, որ Լույսիսկ երբ փակ էին, դրանց արանքից կարող էիր տեսնել տան ներսը, որ երեսում էր պատերի վրայի ճեղքերից:

Թեւէ իր տունն այդպես լավ էր պահպանված, Լի Մինը հազվադեպ էր դրամ ծախսում շենքը բարեկարգելու համար: Դա միշտ լինում էր այն ժամանակ, երբ նա աշխատանքի մի մեծ գործարք էր կնքում շինարարի հետ՝ բարեգործական նպատակներով, այդ ժամանակ նա շինարարին խնդրում էր, որպես գործարքի բաղկացուցիչ մաս, ևորոգել նաեւ տան մի հատվածը: Շինարարն այդժամ դա իր պարտականությունն էր համարում՝ տեսնե-

լով, որ նրա տունը միշտ հիանալի վիճակում է: Բացի այդ, տանը վեց ծառայողից բաղկացած մի անձնակազմ կար: Քանի որ Լի Մինի ընտանիքն ընդամենը երկու հոգուց էր բաղկացած՝ ինքն ու կինը, տան աշխատողները բավականին ժամանակ էին ունենում հոգալու, որ այդ հոյակապ առանձնատան կամ, ավելի ճիշտ, առանձնատան կեսի տեսքը պատշաճ մակարդակի լինի:

Քաղաքից դուրս գյուղական այդպիսի տան համար վեց հոգուց բաղկացած ծառաների անձնակազմն արտառոց շոայլություն կարող էր համարվել: Բայց Լի Մինը, չսայած իր խիստ մեծահոգի բնավորությանը, երբեք չէր խրախուսում շոայլությունը: Բանն այն է, որ ևս ըստ էության գրեթե ոչինչ չէր ծախսում այդ մարդկանց աշխատավարձ վճարելու համար: Եվ մեծ բարերարին վեց ծառաները հազիվ էին բավականացնում: Իր գործի բնույթով ևս պետք է սոցիալական հարաբերություններ պահպանել ազդեցիկ մարդկանց, ինչպես, օրինակ, շրջանի դատավորի եւ Լույնիսկ իր Լահանգի Լահանգապետի հետ: Այդ իսկ պատճառով ևս պիտի ունենար տա-յա, (ծառայապետ), Էրի-յա (սպասավոր), դռնապան, խոհարար, այգեպան, մի գույգ սպասուհի՝ միջնասենյակների եւ Լնջարանների համար, եւ առնվազն երկու աղախին ծառայողներ՝ տնային գործերի ու վարձատրվող այլ աշխատանքների համար: Բայց Լի Մինի ղեկավարած տնտեսությունում վեց ծառաները, որոնցից երկուսն անչափահաս էին, միակգամայն բավարար էին իր ընտանիքի բոլոր պահանջմունքները հոգալու համար:

Ծերունի Վանը, որն առաջինը եկավ Լի Մինի մոտ ուսուցչի աշխատանք փնտրելու, նրա հեռավոր ազգականն էր, որ լավ կրթված էր, բայց անկարող էր հոգալ իր ապրուստի համար: Նա ահավոր ձեռագիր ուներ եւ երբեք չէր կարողանում աշակերտների մոտ հարգանք վայելել: Մի քանի անհաջող փորձերից հետո ևս վերջապես համաձայնեց Լի Մինի տանն աշխատել որպես պատվավոր հաշվապահ՝ սնունդ եւ բնակվելու տեղ ունենալու դիմաց:

Լի Մինը նրա համար սենյակ էր հատկացրել առջեւի դարպասներին մոտ, եւ ևս իր պարտականությունն էր համարում ամեն անգամ դուռը բացողներին պատասխանել եւ ստանալ այցելության քարտն ու ներս տանել այն, երբ այցելու էր լինում: Նա շատ լավ հասկանում էր, որ Լի Մինը, ով փողի կամ հաշիվների հետ կապված՝ ոչ ոքի չէր վստահում (այդ թվում՝ իր կնոջը), սեփական հաշվապահի կարիք չուներ, դրա համար էլ ինքը պետք է ջանար օգտակար լինել տնային տնտեսության մյուս գործերում: Քանի դեռ նրան թույլատրված էր երկար խալաթ կրել, ինչը հստակ նշան էր այն

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

բանի, որ նա կրթված, գրքի մարդ է, նա ամենեւին էլ դեմ չէր կատարելու ծառայապետի կամ դռնապանի պարտականություններ, միայն թե ոչ ոք նրան այդ անցանկալի անուններով չդիմեր:

Ծերունի Չանգը ներգրավված էր խոհարարի աշխատանքում բավականաչափ տանելի ռոճիկով, բայց Լի Մինը ոչ մի պատճառ չէր տեսնում այն բանում, թե ինչու նա չի կարող վաստակել նաեւ տան մյուս կողմում գտնվող ծաղիկների ընդարձակ պարտեզը մշակելով եւ այն վերածելով խոհանոցային բանջարանոցի: Մինչ նա պարտավորություններ էր ստանձնել կատարելու բոլոր ծանր աշխատանքները, ծերունի Վանը հաճախ էր նրան օգնության ձեռք մեկնում ավելի թեթեւ աշխատանքներում:

Բանջարանոցն իրականում շատ ավելի բանջարեղեն էր տալիս, քան կարելի էր օգտագործել տնային տնտեսությունում, եւ ծերունի Չանգը կարողանում էր վաղ առավոտյան, երբ շուկայի օրեր էին լինում, վաճառել ինչայսձ բանջարեղենը: Այդ վաճառքից ստացված գումարն ավելին էր, քան ծերունի Չանգի ռոճիկը: Երկու աղախիկներից Կաո Ման մոտ վաթսուն տարեկան էր: Նա այդ տուն էր եկել տանտիրուհու հետ՝ որպես հարսնացուի սպասուհի: Կաո Ման բարեկամ-ազգականներ չունեւ, եւ աշխատավարձն օգտագործելու կարիքն էլ չկար: Այդ իսկ պատճառով պայմանավորվել էին այնպես, որ տանտերը նրա ամբողջ աշխատավարձի գումարը միանգամից կվճարի, որպեսզի Կաո Ման իր համար մի լավ դագաղ կարողանա գնել, եւ կկատարի ըստ պատշաճի հողարկավորություն, երբ նա մահանա: Վեն Ման՝ կրտսեր սպասուհին, ծառայություն էր մատուցում առանց վարձավճարի՝ ուտելիքի եւ օթեւանի դիմաց, քանզի երախտապարտ էր Լի Մինին, որը նրա ամուսնու համար աշխատանք էր գտել դատավորի յամենում (վարչական միավոր): Երկու աղախիկները՝ Կրկնակի Օրհնությունն ու Մեծ Երջանկությունը, ծառայության էին մտել, երբ մոտ տասներկու տարեկան էին: Երբ գար նրանց ամուսնանալու ժամանակը, ապագա ամուսինները պիտի վճարեին Լի Մինին նրանց պահելու ծախսերը:

Այդուհանդերձ, Լի Մինն ամենեւի գոհ չէր իր ծառաների խնդիրներից: Նա հաճախ դժգոհում էր, որ դա մի մեծ բեռ է իր ուսերին: Ինչպես ինքն էր ասում նրանց աշխատավարձը չնչին կարելորություն ուներ, բայց ըստ էության նա այդ վեցին ապահովում էր հագուստով, սննդով ու օթեւանով: Այդ փաստը նրա մոտ մի տեսակ ափսոսանքի զգացում էր արթնացնում: Իր եւ կնոջ հին ու մաշված ամբողջ հագուստը, որ վերավաճառողները իրաժարվում էին գնել, ստիպված էր տալ ծառաներին: Չնայած դրանք մի քիչ հնա-

մաշ տեսք ունեին, բայց դեռ կարելի էր հազնել, ու բացի այդ, նրա կարծիքով խելամիտ կլիներ տանեցիներին այդպես հազցնել, քանզի դա իր ընկերներին պարզորոշ ցույց կտար, որ ինքն ամենեւին էլ շահույթ չունեի իր բարեգործությունից: Ինչ վրաբերում է օթեւանին՝ պարզ էր, որ այն ոչ մի հավելյալ ծախս չէր պահանջում, բայց սնունդն իսկապես խնդիր էր: Բոլոր ծառաներն էլ շատ ուտող էին, եւ նա պարտավորված էր, ընդունված սովորության համաձայն, ամիսը երկու անգամ նրանց մսե կերակուր տալ: Դա կոչվում էր Յա-չի կամ «զոհաբերություն ատամներին»: Ամեն ամսվա 1-ին ու 15-ին նա պետք է գներ մեկ քաթթի (քաթթին 22 ունցիա է) խոզի միս՝ մեծ կաթսայում խաշված, որպեսզի մտով ճաշ պատրաստեն: Ծառաները, սակայն, դրան այլ անուն էին տալիս: Նրանք ասում էին «խոզը Արեւելյան Լճում», ինչը շատ պատկերավոր ցույց է տալիս, թե ինչքան միս եւ ինչքան ջուր կար այդ ուտելիքի մեջ: Դժբախտաբար, Կառ Ման բուրդայական որոշ սկզբունքների բարեպաշտ հետետորդ էր: Նա խստորեն էր պահում իր պասի օրերը, որ յուրաքանչյուր ամսվա 1-ն ու 15-ն էին: Լինելով բոլորովին միայնակ այս աշխարհում՝ նա այս կրոնն էր ընդունել եւ ստանձնել նրա բոլոր պարտականությունները՝ հուսալով, որ Երկինքն իրեն ավելի լավ մի կյանք կտար իր հաջորդ գոյության ժամանակ: Այդ իսկ պատճառով նա պիտի բուսակեր լիներ ամբողջ տարվա ընթացքում, եւ մյուս հինգ ծառաներն ամեն ինչ անում էին նրան, որպեսզի նա պահպաներ գովասանքի արժանի իր այդ որոշումը:

Կարիք չկա ասելու, որ առանձնատան մյուս կեսի սեփականատերը ծառաներ չունեի: Իրականում Լի Կանը չէր կարող իրեն թույլ տալ ծառա ունենալ, եթե անգամ ծառա պահելուն այդպես կտրականորեն դեմ չլիներ: Թեեւ Լի Մինն ու Լի Կանը եղբայրներ էին, եւ այդքան մոտ էին ապրում մեկը մյուսին, ոչ մի երկու այլ անձինք այդքան տարբեր չէին իրարից: Իրենց հոր մահից հետո Լի Մինը, ում առաջարկով կատարվել էր ընտանեկան սեփականության բաժանումը, մի հազար անգամ ավելի լավ էր ապրում, քան Լի Կանը: Որպես ավագ որդի՝ Լի Մինը քիչ ավելին էր ժառանգել, բայց նույնիսկ այն ժամանակ դա չնչին բան էր: Մինչ Լի Կանը տանը նստած իր ունեցվածքն ուտում էր (ինչպես ասում են), Լի Մինը շատ գործունյա էր գտնվել իր բաժինը տնօրինելիս: Նա կրճատել էր տնային տնտեսության իր ծախսերը եւ մեծահոգի բնավորության համաձայն թույլ էր տվել, որ իր այն վարձակալները, ովքեր դժվարին վիճակում էին, ամբողջ տարին ազատվեին վարձավճար մուծելուց, մի պայմանով, որ բոլոր վարձավճարները հաջորդ տարվանից էականորեն կավելանային: Այս կերպ ու նաեւ լավ ճա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

կատագրի շնորհիվ, որ իր բարեսիրական գործերի դիմաց Երկնիքն Երևան շնորհել է Լի Մինը կարողացավ գնել շրջանի գրեթե ամբողջ անշարժ գույքը: Քանի որ այդքան շատ բան էր անում բարեգործության համար, Լի Մինը կարող էր հեշտությամբ իր համար շահավետ գնով գեղեցիկ ու մեծ մի տուն ձեռք բերել քաղաքում: Բայց հայրը, որ, թվում էր, կանխատեսել էր Լի Կանի անխուսափելի ծախսորդությունը, արգելել էր նրանց միմյանցից բաժանվել, այնպես որ եղբայրները պետք է հոգ տանեին մեկը մյուսի համար, եթե իրենցից մեկնումեկը դժվարությունների մեջ հայտնվեր, եւ, որպես մահացողի վերջին կամք ու ցանկություն, պարտադրել էր նրանց խոստանալ, որ մինչեւ մահ-գերեզման չէին հեռանա իրենց հայրական հին կալվածքից: Թեեւ առանձնատունն ըստ էության բաժանված էր երկու տան՝ մեջտեղում գտնվող պատով, անցնելու երկու դռներ կային, որպեսզի եղբայրներն ավելի մոտ լինեին եւ հաղորդակցվեին միմյանց հետ: Դռներից մեկը Լի Մինի հարկաբաժնի առջեւի մասում էր, որ բացվում էր դեպի Լի Կանի ներքնաբակը, այդտեղից էլ դեպի մեծ այգին, որ գտնվում էր ամենաձախ կողմում: Մյուսը Լի Կանի հարկաբաժնի ետեւի մասում էր ու բացվում էր դեպի Լի Մինի խոհանոցը եւ այդտեղից դեպի ամբարները, որ ամենաաջ կողմում էին:

Ամբողջ շենքը բաժանելիս նրանք մեծ դժվարության էին հանդիպել այգին եւ ամբարները բաժանելու խնդրում, որոնք երկուսն էլ խիստ անհրաժեշտ էին նրանց համար: Քանզի հնարավոր բան չէր, որ Լի Մինը վերցներ միայն ամբարները, իսկ ամբողջ այգին թողներ Լի Կանին, նմանապես հնարավոր չէր նաեւ հակառակը, Լի Մինն ի վերջո մի լուծում գտավ: Նա առաջարկեց այսպես անել. ինքը պետք է օգտագործեր այգին եւ փոխարենը նրա պահեստային ամբարները միշտ պիտի կրտսեր եղբոր տրամադրության տակ լինեին:

Ավելի ուշ պարզ դարձավ, որ այս պայմանավորվածությունը Լի Մինի համար միանգամայն գոհացուցիչ էր: Լի Կանի համար բրնձի խանութը, որ նրա եկամտի միակ աղբյուրն էր, տարեցտարի փոքրացավ շատ արագ տեմպերով, եւ շատ շուտով Լի Մինի ամբարներից մեկի անկյունում փոքրիկ մի տարածք մնաց նրանից, ինչ խանութ էր համարվում: Ինչ վերաբերում է այգուն, Լի Մինը լիովին օգուտ քաղեց իր բաժնից՝ արմատախիլ անելով բոլոր դեկորատիվ ծաղիկներն ու ոչ պիտանի ծառերը, որ տնկել էին իրենց հայրն ու պապը, եւ դրանց փոխարեն տնային տնտեսության համար պիտանի բանջարեղեն աճեցնելով: Նա ասում էր, որ գործարքը գործարք է եւ որ իր համար շատ ցավալի կլինի, եթե իր կրտսեր եղբայր Լի

Կանն այլևս չկարողանա օգտվել ամբարներից: Լի Մինը թեև բարեգործ էր, բայց ասում էր, որ ոչ համակրում է, ոչ էլ կարեկցում իրենց ունեցվածքն անխնա վատնողներին, ովքեր այդքան արագ կարող են ճակատագիրը բաց թողնել իրենց ձեռքերից:

Լի Կանն իր ընտանիքի համար ոչ միայն ծախս էր, այլ նաև հիմնահարց: Եղբայրներից նա ավելի խելացի էր և ոչ միայն ծնողների կողմից երես տված երեխա էր, այլ նաև ուսուցիչներն էին նրան երես տալիս: Ու թեև այդքան խելացի էր և լավ սովորող, նրան այդպես էլ չհաջողվեց հանձնել իր առաջին պետական քննությունը, և հետեաբար հիասթափեցրեց իր ընտանիքին՝ չկարողանալով «Չարգացած տաղանդ» պաշտոնական տիտղոսը ձեռք բերել: Լի Մինը նույնպես չանցավ այդ քննությունը, բայց նա փորձում էր նորից ու նորից և շատ ջանք էր թափում, միայն թե դրանից օգուտ չկար: Ինչ վերաբերում է Լի Կանին, պատճառն այն էր, որ նա ջանք չէր թափում: Եվ երբ վերջապես պետք է փորձ կատարեր, ուղղակի հենց այնպես հրաժարվեց իր հնարավորությունից: Կյանքում միայն այս անգամ Լի Կանին սկզբում համոզեցին և վերջապես ներս մտցրին այն շենքը, ուր պետական քննությունն էին ընդունում: Այդտեղ, շատ կարճ ժամանակում ավարտելով ակնարկ և բանաստեղծություն գրելու առաջադրանքը, նա կողքի խցում տեսավ սպիտակամազ և ճերմակ մորուքով մի տարեց ուսանողի, որը փորձում էր կախվելով ինքնասպանություն գործել: Լի Կանը շտապեց փրկելու այդ ուսանողին և հարցրեց, թե ինչ պատճառով է այդպես վարվում: Եվ իմացավ, որ դա այդ ծեր մարդու վերջին ջանքն էր, ու այդ մարդը, ցավոք, գիտեր, որ կրկին ծախողվելու է: Նայելով նրա թղթերին՝ Լի Կանը համոզվեց, որ դա շատ հավանական է: Եվ նա փոխեց իր թղթերն այդ մարդու հետ: Ու արդյունքն այն եղավ, որ իր անունն ընդհանրապես ցուցակում չընդգրկվեց, իսկ այդ ծեր մարդն ընդունվեց գերազանցությամբ: Իհարկե, նա կարող էր այդ ծեր «նոր զարգացող տաղանդից» զգալի գումար վերցնել իր արածի դիմաց, բայց երբեք չէր սիրում փողի մասին նույնիսկ հիշատակել, թեև անխոհեմաբար բավականին շատ էր փող ծախսել: Երբ նրան հարցրին իր քննության արդյունքների մասին, նա խոստովանեց, որ կտրվել է, բայց իրեն շատ ավելի երջանիկ էր զգում: Այս փորձառությունից հետո այլևս ոչինչ չէր կարող ստիպել նրան մոտենալու քննաշենքին: Ի վերջո, եթե հույս ես փայփայում, որ քննությունները կանցնես, նշանակում է հույս ունես պետական պաշտոն ունենալ, իսկ նա խոր հակակրանք ուներ պետական պաշտոնյաների հանդեպ: Որպես նրան սիրող ավագ եղբայր՝ Լի Մինը փորձեց այնպես

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

անել, որ Լի Կանը վաճառական դառնա, բայց պարզվեց, որ առեւտուրը է՛լ ավելի թանկարժեք մի ձեռնարկում կլինի նրա համար, քան որեւէ այլ բան: Որպես ձեռներեց՝ Լի Կանը կարծես շատ ձեռնտու գործարք կատարեց՝ ունենալով հսկայական շրջանառություն եւ մի քանի ամսում մեծ հաջողությամբ ետ բերեց ոչ միայն իր ներդրումները, այլեւ եկամուտ ապահովեց: Շահույթի մասին մտածելուց այդքան հեռու լինելով՝ ևս պարզապես չէր կարող ինքն իրեն ստիպել անգամ իր անձնական ծախսերը մոցնել ապրանքների գնի մեջ: Նա կարծում էր, որ անազնիվ գործարք է, եթե մի բան վաճառում ես ավելի բարձր գնով, քան ձեռք ես բերել: Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, որտեղ ևս իր ուժերն էր փորձում տարիներ շարունակ, նրա ջանքերի արդյունքն ավագ եղբորն ստիպեց այնքան ծիծաղել, որ այդ թեման շուտով վերածվեց ընտանեկան կատակի: Նա բռնձի արտի՝ վարձակալության չտրված փոքրիկ մի կտոր պահեց իրեն, որպեսզի այդտեղ իր բոլոր ֆանտաստիկ գաղափարները փորձարկի, եւ այդտեղ աճած հացահատիկային մշակաբույսերը կիսով չափ անգամ չէին կարող փակել աշխատանքային եռուն ժամանակաշրջանում նրա կողմից ժամանակավոր վարձակալած մշակների աշխատավարձը: Նա անկեղծորեն խոստովանում էր, որ ինքն առանց մասնագիտության մարդ է եւ ինքն իրեն համարում էր «պարզապես անորոշ զբաղմունքի տեր մարդ», բայց ասում էր, որ ամենայն վճռականությամբ դաստիարակելու է իր որդուն, նույնիսկ երբ որդին ընդամենը երկու տարեկան էր, որպեսզի ևս լավ հողագործ դառնա. այս ասածի համար բոլորը ծաղրում էին նրան:

Չնայած Լի Մինը հպարտանում էր, որ ինքն ամեն բանում իր ընտանիքի արժանավոր անդամն է, երկու բանի համար ևս նախանձում էր իր անարժան կրտսեր եղբորը: Ամենից առաջ ևս ինքը գիտեր, որ գիտելիքներով խիստ զիջում է եղբորը եւ երբեք չի կարող հաջողության հասնել պետական քննությունները հանձնելիս, եւ աշխարհում չկար մի բան, որ ևս ավելի շատ ցանկանար, քան «զարգացած տաղանդ», հետեւաբար եւ՝ իհարկե, պետական պաշտոնյա լինելն էր: Թեեւ Լի Կանը կտրվել էր քննություններից, բոլորի համար էլ պարզ ու հասկանալի էր, որ եթե ջանք թափեր, ոչ մի դժվարություն չէր ունենա եւ դուրս չէր մնա ցուցակից: Լի Մինը միանգամայն շնորհակալ էր, որ իր կրտսեր եղբայրը ոչ մի բանի համար պիտանի դուրս չեկավ, եւ ևս ինքն անմիջականորեն օգտվեց ամենաշուտն ընձեռնված հնարավորությունից՝ կառավարությունում դրամական ներդրում կատարելու, ինչի համար նշանակվեց պահեստի դատավոր: Քանի որ ևս տանել չէր կարող, երբ շատ էր վճարում, այս պաշտոնը դատարկ

մի տիտղոս էր պարզապես, որ նրան բավականություն էր պատճառում յոթերորդ դասի ոսկե կոճակ կրելու իր հնարավորությամբ: Մյուս բանը, որ նրան կրտսեր եղբոր հանդեպ տհաճ զգացումներով էր համակում, այն փաստն էր, որ Լի Կանը որդի ուներ, միևնույն ժամանակ ընդհանրապես զավակ չուներ: Ոմանք հակված էին մոռանալու հին ասացվածքը, որ բարեգործները հազվադեպ են ժառանգներ ունենում, իսկ տիմար գյուղացիները միշտ հիշում էին այն հիմար ասացվածքը, թե ի վերջո Երկինքը պարզապես բարեհաճ չի եղել նրա հանդեպ՝ երեխաներ ունենալու հարցում այդքան ժլատ գտնվելով: Իրենց ամուսնության առաջին մի քանի տարվա ընթացքում Լի Մինը եւ նրա կինն ուղղակի վշտացած էին երեխա չունենալու փաստից, եւ միշտ հրաշքի վրա էին հույս դնում, թե հաջորդ տարի զավակ կունենան: Բայց քանի անցնում էին տարիները, եւ ուրախալի իրադարձության որեւէ նշան չէր երեւում, Լի Մինին համակում էր հուսալքությունը: Վերջին երկու տասնամյակում նա բավականին մեծ գումար էր ծախսել (որ նրա համար նշանակում էր ավելին, քան որեւէ այլ բան) հեքիմների խորհուրդներն ստանալու համար եւ աստվածներին ու աստվածուհիներին զոհեր մատուցելով ոչ միայն իր գյուղի, այլ նաեւ շրջակա բոլոր գյուղերի տաճարներում: Որպեսզի փոխհատուցեր այդ կերպ ծախսած իր դրամը եւ կանխատեսելով նմանատիպ հետագա ծախսերը, նա ստիպված էր շատ ավելի դժվարին գործարքներ կատարել, քան երբեւէ:

Այն պահից, երբ Լի Կանի կինը տղա ունեցավ, Լի Մինի կինը կրկնակի էր տառապում: Բացի այն, որ տաճարից տաճար էր քարշ գալիս՝ աստվածներին ու աստվածուհիներին աղոթելով, նա նաեւ ամեն տեսակի ծիծաղելի միջոցների էր դիմում, բուսական տարբեր պատրաստուկներ էր օգտագործում, որոնք, ասում էին, բուժիչ, կազդուրող ու խթանիչ դեր ունեին:

Երբ Լի Կանի որդին երկու տարեկան էր, Լի Մինը, գիտակցելով, որ ինքը եղբորից երկու տարի մեծ է, սկսեց մտածել, թե ինչ կտրուկ միջոցներ կարելի է ձեռնարկել, քանի դեռ շատ ուշ չէ: Վերին աստիճանի հուսահատվելով՝ նա որոշեց հսկայական գումարներ ծախսել: Մինչ այդ՝ բոլոր բժիշկները, ում խորհրդին նա դիմել էր, գյուղական հեքիմներ էին եղել, որոնց հիմնական գործը դեղաբույսեր վաճառելն էր, բայց հիմա, խոր ցավն իր սրտում, նա դիմեց նահանգապետի առաջարկած հայտնի եւ, իհարկե, թանկ արժեցող բժշկին: Չնայած բարձրահամբավ բժիշկը սովորաբար իր հիվանդներին մեծապես օգտակար է լինում, քանի որ նրանք շատ ավելի լավ են զգում իրենց հոգեպես՝ նույնիսկ նախքան դեղորայք ընդունելը, մե-

ԱՅՈՒՆ ՇԻՒ

Ճահամբավ հիվանդն էլ իր հերթին է խիստ օգտակար լինում բժիշկներին, քանի որ նրանց խորհրդին դիմելը միշտ էլ գերազանց առաջարկություն է հետագա այլ հարուստ հիվանդների համար: Այն փաստը, որ բժիշկ Տուն Նանչանի նահանգապետի անձնական բժիշկն էր, թվում էր՝ Լի Մինի համար երաշխիք էր հանդիսանում, որ եթե որեւէ հնարավորություն լիներ, որ նրա կինը կարողանար երեխա ունենալ, ապա բժիշկ Տուն դա կաներ՝ նրա համար այնպիսի մի դեղ նշանակելով, որ գորավոր կլիներ, ինչպես թալիսմանը:

Վաղ կեսօրին բժիշկ Տուն գյուղ եկավ և անփութորեն նայում էր իր հիվանդի զարկերակը, երբ Լի Մինը զգուշորեն բացատրեց, թե ինչ է պատահել նրան: Բժիշկը ժպտաց, առանց բառ իսկ ասելու, և արագ գրեց զարկերակի տվյալներն ու դեղատոմսը: Նվաղած սրտով Լի Մինը վերցրեց թղթի այդ կտորը և բժշկին հանձնեց ծանր ծրարը, որ պարունակում էր «զարկերակի քննության նվերը», ինչպես կոչվում են խորհրդատվության համար տրվող վարձավճարները: Տեսնելով, որ բժիշկը հեռացավ իր ծածկապատզարակով, նա արագ աչքի անցկացրեց դեղատոմսը, և նրա նիհար, երկար ու նեղ դեմքը թղթի պես ճերմակեց: Բժիշկը խարդախ դրամաշորթի մեկն էր: Նա, փաստորեն, դրամը վերցրել էր՝ առանց հիվանդի համար որեւէ հատուկ դեղորայք նշանակելու: Թղթի վրա պարզապես գրված էր, որ Տիկին Լիի զարկերակը երկու դաստակներին էլ իդեալական վիճակում է, և միակ բանը, որ նրա համար կարող է օգտակար լինել, սննդարար կերակուրն է: Լի Մինը կարծում էր, թե կատակել են իր հետ: Սննդարար կերակուր իր կնոջ համար, ինչպե՞ս չէ: Անցած ամռան տոնի օրը, երբ նա կռվեց, արդեն գրեթե հարյուր ութսուն քաթթի էր: Ինքն առնվազն կես գլուխ բարձրահասակ էր կնոջից և համարյա տասը տարով ավելի մեծ էր նրանից, բայց նրա կես քաշն էլ չունեւ: Ինքը միայն ուզում էր, որ կինն իր համար մի որդի ծնի, այլ ոչ թե ուզում էր խոզ պարարտացնել: Լրացուցիչ սնունդն ի՞նչ օգուտ կարող էր ունենալ նրա համար: Լի Մինը զայրացած գնաց կնոջ մոտ և դեղատոմսը հրեց նրա առջեւ:

«Նայիր, էդ սրիկա բժիշկն ինձնից վերցրեց «զարկերակի քննության նվերը»՝ առանց քեզ համար որեւէ դեղորայք նշանակելու: Եվ դեռ լկտիություն ունեցավ առաջարկելու, որ քեզ ավելի շատ սնունդ է պետք: Բայց նա պետք է իմանա, որ դու ավելի ուժեղ ես, քան ինքը»:

«Համարձակվում եմ չհամաձայնել քեզ հետ, տեր իմ: Իրականում ես այնքան էլ առողջ չեմ զգում ինձ, ինչպես երեսում եմ: Համոզված եմ, որ ես, ինչպես ասում են, «արտաքնապես ուժեղ եմ, բայց ներքնապես չոր»:

րավոր է, որ ավելի շատ սևնդի կարիք ունեմ»:

« ,Արտաքնապես ուժեղ, բայց ներքնապես չոր» իսկապես»,- նորից ու նորից կրկնում էր զայրացած ամուսինը: Բայց վերջապես այդ բառերն սկսեցին ավելի ու ավելի ազդել նրա վրա, եւ նա մեղավոր տոնով ասաց կնոջը.

«Վերջիվերջո, մեր իմաստունները նշել են, որ որդիական բարեպաշտության դեմ գործած երեք հիմնական անարգանքներից՝ ժառանգ չունենալն ամենաաններելին է: Դե, քանի որ դու իրոք այնքան առողջ չես, ինչպես երեսում ես, ես թերեւս պետք է ... ը ... ես պետք է ... ը ...»: Նրա համար դժվար էր խոսքն ավարտել, եւ նա կամաց մի կողմ շոջվեց, բայց աչքի պոչով դեռ կնոջ կողմն էր նայում:

«Կարծում ես՝ քեզ հարճ պահե՞լ է պետք»,- կինն անմիջապես հասկացավ ինչ կար նրա մտքում:

«Դա այն պատճառով չէ, որ ես մեկ այլ միտք ունեմ... Դու պետք է հասկանաս, որ ես այլեւս երիտասարդ չեմ... եւ այս երեսուն տարվա ընթացքում քո հանդեպ անհավատարիմ չեմ եղել: Բայց ինչպե՞ս կարող եմ այն աշխարհում տեսնել նախնիներին, եթե մեռնեմ առանց որդի ունենալու»:

Կինը գիտեր, որ նա իր հանդեպ հավատարիմ էր, բայց գիտեր նաեւ, որ ամուսինը, որն իր բնույթով ինչայդ էր, իր փողի քսակներն ավելի քնքշությամբ էր փայփայում, քան կանանց: Որքան էլ Էժան լինի, կինը միշտ ծախս է ենթադրում: Դրա համար էլ նա իր լավ ճակատագրի համար պարտական էր ամուսնու՝ ավելի շատ փողի նկատմամբ, քան թե իր հանդեպ ունեցած սիրուն:

«Ես խանդոտ կին չեմ, բայց իմ սկզբունքներին դեմ է՝ թողնել, որ դու տնաքանդ վիուկ բերես տուն: Չեմ ուզում, որ դու քանդես մեր ընտանիքը: Պետք է որ լսած լինես եւ հայտնի խոսքը՝ եթե ուզում ես մեկին վնաս պատճառել, խորհուրդ տուր, որ հարճ պահի»:

«Մենք մեղմաբար ու բարյացակամ մի աղջկա կընտրենք...»:

«Ես ո՛չ մի թեթեւաբար կնոջ չեմ հանդուրժի, ինչքան էլ ասես, թե նա բարյացակամ է»:

«Բայց, ախր, դու էլ ես ուզում, որ մենք մի զավակ ունենանք, որը մեր մահից հետո գոհեր կմատուցի մեր գերեզմանին»:

«Մենք կարող ենք որդեգրել կրտսեր եղբորդ տղային՝ Տա Յունի : Նա շատ լավ տղա է... »:

«Բայց նա մեկուճար որդի է...»:

«Դա միայն նշանակում է, որ Տա Յուն կլինի «երկու ընտանիքների

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

տոհմաճառը շարունակող որդի»։ Դա շատ սովորական մի բան է, եւ հաճախ է այդպէս լինում։ Նա երկու կին կունենա. մեկից ունեցած երեխաները կլինեն կրտսեր եղբորդ ժառանգները, իսկ մյուսից ունեցած երեխաները մեր ժառանգները կլինեն»։

«Ես ավելի շուտ կուզեմ անժառանգ մեռնել, քան տեսնել, որ իմ ամբողջ փողն այդ անխնա մսխողի որդուն բաժին կհասնի։ Ես ատու՛մ եմ այդ տղային։ Ես չե՛մ ուզում, որ այդ « գրավաճառը» իմ կալվածքների վաճառողը դառնա»։

Տա Յուին՝ Լի Կանի որդուն, Լի Մինը «գրավաճառ» մակաւումով էր կոչում, որովհետեւ Լի Կանն այդ ժամանակ արդէն գրեթէ վաճառել էր բրնձի իր բոլոր արտերը, եւ միակ բանը, որ ուներ լիուպի, գրքերն էին։ Լի Մինը կանխատեսում էր, որ քանզի անհնար կլինի, որ տղան գնա հոր հետքերով՝ վաճառելով բրնձի արտերը, Տա Յուն կկարողանա միայն վաճառել հոր գրքերը, երբ մեծանա։

«Ցանկացած մեկն, ով կհամաձայնի հարձ լինել, թշվառ մի աղջիկ կլինի սարսափելի մի ընտանիքից, եւ նա հաստատ քեզնից ավելի կապրի, իսկ հետո կվաճառի այն ամենն, ինչ ունես։ Ո՛չ։ Ո՛չ։ Ես հարձ չե՛մ հանդուրժի»։

«Այդ դեպքում ի՞նչ ես առաջարկում անել»։

«Մի քանի տարի էլ սպասիր»։

«Մի՞թե բավականին երկար չենք սպասել»։

«Ընդամենը մեկ կամ երկու տարի։ Ես դեռ քառասուն չկամ։ Հայրս քառասուններեք տարեկան էր, երբ կրտսեր եղբայրս ծնվեց»։

«Բայց ես արդէն քառասունինը տարեկան եմ։ Զո մայրն այն ժամանակ շատ ավելի երիտասարդ էր, քան հիմա դու ես, այնպէս չե՞»։

«Մայրս ասում էր, որ երբ հայրս ուզում էր հազար թաւել ծախսել, որպէսզի մի երգչուհի աղջկա պահի որպէս հարձի, ինքը նրան խորհուրդ տվեց փողը ծախսել բարեգործության վրա, եւ հենց հաջորդ իսկ տարին ծնվեց կրտսեր եղբայրս։ Ինչու՞ չես նույնն էլ դու անում»։

«Դու գիտես, որ ես բարեգործություն եմ արել իմ ամբողջ կյանքում»։

«Բայց դա այլ բան է։ Երկնքի գութը շարժելու համար դու պետք է այս անգամ իսկապէս քո սեփական փողից ծախսես»։

Լի Մինը լուռ էր։ Նա հաշվեց փողի այն տարբեր գումարները, որ իզուր ծախսել էր բժիշկների ու դեղորայքի վրա, եւ շատ վշտացավ՝ տեսնելով, որ դրանք շատ ավելին էին կազմում, քան ինքն իրեն թույլ կտար ծախսել ցանկացած այլ պատճառով։ Թե իմանար, որ դրանք օգուտ չէին տալու,

երբեք փող չէր ծախսի, կամ էլ այն կօգտագործեր՝ փորձելով այլ միջոց գտնել: Թերեւս իսկական բարեգործությունն ավելի լավ էր: Բոլոր դեպքերում ինքը պետք է փորձի դա անել: Երբ կինը տեսավ, որ նա տատանվում է, շարունակեց պնդել իրենը:

«Կամուրջներ վերակառուցելն ու ճանապարհներ նորոգելը ամենաբարեգործական արարքներն են, որ երբեք չեն դադարում երկնքի բարեհաճությանն արժանանալ: Ինչու՞ չես վերակառուցում Սեյ ընտանիքի գետանցման գյուղի գետի վրայով անցնող մարմարե փոքրիկ հին կամուրջը»:

«Ես այդ մասին վաղուց եմ մտածել: Բայց քանի որ Սեյ ընտանիքի գետանցման գյուղի մարդիկ բոլորն էլ սարսափելի աղքատ են, ես չէի կարող նրանցից ստանալ հնարավոր գումարը: Իսկ մյուս վայրերի բնակիչներն էլ շատ գումար չէին տա, եթե նրանց ասվեր, որ տեղի բնակիչներն այդքան քիչ են տալիս... »:

«Չէ, ես նկատի չունեմ այն, ինչ դու սովորաբար անում ես, այլ այն, որ եթե դու ինքդ վճարես այդ ամբողջ գումարը...»:

«Ամբողջը ե՞ս վճարեմ: Կին, դու չգիտես, թե որքան դա կարժենա: Մարմարը պետք է բերվի Յունանս նահանգից, եւ կանխիկ դրամի հազար աղբյուր անգամ չի բավականացնի»:

«Հայրս հազար թանել արծաթ ծախսեց...»:

«Հազար թանել : Ատուն՝ եմ քաղաքի մարդկանց, ովքեր իրենց հարստությունը ցուցադրաբար ծախսում են արծաթե թանկեղենով: Իրականում հազար թանել արծաթը շատ ավելի քիչ է, քան կանխիկ հազարը, պարզապես դա ազդեցիկ է հնչում:

Երբ ասում ենք շղթա, նկատի ենք ունենում հազարավոր մասնիկներ եւ չենք կարող անել ավելին, քան վճարել ինք հարյուր հիսունը՝ պահանջելով այն հինգ տոկոս գեղչը որ կիրառվում է թղթարժույթի ժամանակ: Իսկ մի թանել արծաթը կարող էր վճարվել նաեւ արծաթի կտորտանքներով, ինչն ավելի քիչ արժե, քան այն ութ հարյուր մասի բաժանած կանխիկ գումարը, որն այսօր է վճարվում»:

«Բայց կարելու չէ՝ արծաթով է, թե՞ կանխիկ թղթադրամով, որքան ավելի շատ ծախսես բարեգործության վրա, այնքան Երկինքը գոհ կլինի քեզից»:

«Եթե նույնիսկ սարքեմ այդ կամուրջը, ես չեմ կարող հիմա դրա համար մարմար գտնել: Առնվազն երկու տարի կտեւի, մինչեւ այն Յունանսից այստեղ բերվի»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Դու էլ գրանիտից սարքիր. Դրանից ամեն տեղ լիքն է»:

«Նույնիսկ գրանիտը չափազանց թանկ է բարեգործական աշխատանքի համար: Ավագաքարն ու փայտը Նույնքան լավ են, որքան ցանկացած այլ բան՝ այդպիսի նպատակի համար: Եվ եթե ես ինքս եմ վճարելու այդ ամենի համար, ապա հաշվարկը շատ ճշգրիտ պետք է կատարեմ»:

«Հիշիր՝ այս անգամ որդուդ համար է»:

«Պետք է նախ շինարարի հետ խոսեմ»:

Հաջորդ օրը շինարարի ետեւից մարդ ուղարկվեց, եւ այդ գրույցի արդյունքն այն հրաշալի գործը եղավ, որ ստիպեց ամբողջ շրջապատին խոսել այդ մասին: Մարդիկ միայն մտածում էին, թե որքան առատածեռն ու մեծահոգի է Լի Մինը, որ այդպիսի հիանալի բան է անում հանրության համար, բայց ոչ ոք չգիտեր, թե ինչպիսի դժվարին խնդիր է նա ունեցել շինարարի հետ գործարք կնքելիս: Աշխատանքը նախնական գնահատվեց առնվազն կանխիկ հարյուր հազար, բայց Լի Մինը խոստատելու աստիճան երկար սակարկեց, մինչեւ որ շինարարի համաձայնությունն ստացավ քսան տոկոսով կրճատել վճարը՝ առաջարկելով, որ պետք է օգտագործվի ամենաէժեան շինանյութը: Հենց որ համաձայնություն ձեռք բերվեց, որ կանխիկ ութսուն կտորը բավական է, Լի Մինն սկսեց սակարկել մեկ այլ գործարքի համար: Նրա փաստարկն այս էր. քանի որ աշխատանքն այս անգամ հանրության կողմից չէր վարձատրվում, այլ միայն իր կողմից, շինարարը պետք է մի փոքր գնահատեր իր այդ արարքը եւ մի քիչ ավելի խնայողական լիներ՝ մարդկանց ու շինանյութերն ընտրելիս: Այն բանից հետո, երբ շինարարը համոզվեց տասը տոկոսի զեղչ կատարել, Լի Մինն ակնարկեց, որ քանի որ ինքը շինարարից չի ակնկալում իր սեփական տան նորոգում՝ որպես պայմանագրի հասկանալի մաս, ինքը պետք է վերջնական զեղչի մասին խնդրի: Բայց շինարարն անդրդվելի էր, եւ Լի Մինն սկսեց դիմել մերթ սպառնալիքների, մերթ քաղցր խոսքերի: Վերջապես, երբ արդեն լրիվ սպառել էր շինարարի համբերությունը, գործարքը հաջողությամբ կնքվեց ութսուն թաեղ արծաթ համաձայնեցված գումարով, որը, ինչպես Լի Մինն էր ասում, ավելի լավ էր հնչում, քան կանխիկ վաթսունչորս հազար կտորը:

Ընտրվեց աշխատանքն սկսելու համար նպատակահարմար օրը, եւ Լի Մինը առատածեռն մի առաջարկ արեց բանվորներին, որ ինքը նրանց մինչեւ վերջին օրը կհյուրասիրի տնական գինով, որ պատրաստվել է իր սեփական այգում, եթե նրանք իրենց հետ կկրեն հին մարմարի չջարդված կտորները:

Քանի որ մարմարի այդ կտորները չպիտի օգտագործվեին նոր կամրջի վերակառուցման համար,- դրանք պետք է գույնով համընկնեին ավագաքարերի հետ,- ևս մտածում էր, որ լավ կլինի դրանք տեղափոխել, և դեմ չէր, որ լինեին իր այգում: Դա շատ ծանր գործ էր, հատկապես օրվա այդքան շատ ծանր աշխատանքից հետո: Բայց մարդիկ դրանից ավելի էին ծարավում, և Լի Մինի գինին էլ շատ ավելի ցանկալի էր լինում խմելու համար: Մի քանի օրից փոքրիկ փայտե կամուրջը, սպիտակ մարմարի հին, ջարդված կտորներով՝ որպես ջրի տակի հիմք, և բոլորովին նոր կարմիր ավագաքարերով՝ որպես հենասյուներ, ավարտված էր և, ջրի մեջ արտացոլվելով, հեռվից շատ գեղեցիկ պատկեր էր ներկայացնում: Հին կամրջի անունն էր Սեյ ընտանիքի կամուրջ: Բնականաբար Լի Մինը կարծում էր, որ հարմար չի լինի կամուրջը կոչել իր հին անունով, քանի որ Սեյ ընտանիքը մի փոքր կանխիկ գումարով իսկ չի նպաստել դրա վերակառուցմանը: Նա ինքը կուզեր նոր անուն դնել կամրջին, բայց վախենում էր, որ դա մասսայականություն չի վայելի, և մարդիկ հակված կլինեն այն դեռևս կոչել հին անունով: Քանի որ այդքան շատ գումար էր ծախսել դրա վրա, ևս մտածում էր, որ ավելի լավ է մի քիչ ավելի գումար ծախսի՝ Նորին Գերագանցություն պարոն Վեյին՝ Նանչանգֆուի նահանգապետին խնջույքի հրավիրելով և այդ բարձր պաշտոնյային խնդրելով կամրջին նոր անուն տալ: Իրադարձության հրապարակայնությունը խորապես կդրոշմեր նոր անունը բոլորի հիշողության մեջ:

Հրավերը, որ խնամքով գրված էր կարմիր թղթի թերթի վրա, ուղարկվեց նահանգապետին, և հենց որ թղթի վրա նրա անվան ներքո նշվեց, որ ընդունել է նամակը, լուրն ինքն իրեն սկսեց տարածվել: Նախքան մյուս հյուրերը կհրավիրվեին, ողջ ժողովուրդը գյուղում և բազմաթիվ լի հեռավորության վրա ամբողջ շրջակայքում՝ խոսում էին այդ մասին: Խնջույքը համալրելու համար Լի Մինը հրավիրել էր շրջանի դատավորին, քաղաքի երեք այլ ազդեցիկ այրերի և իր կնոջ եղբորը, որի անունը Վու էր: Իր եղբայր Լի Կանին և իրեն գումարած՝ ութ հոգով կազմեցին քառակուսի սեղանի չափ մարդ: Նա չէր ուզում մի քիչ ավելի շատ մարդ հրավիրել, որը կկազմեր կլոր սեղան:

Մի քանի օր շարունակ Լի Մինի ամբողջ տնեցիները զբաղված էին խնջույքին պատրաստվելով և նահանգապետի ու մյուս ազդեցիկ հյուրերի ընդունելության կազմակերպմամբ: Նա տիկին Վուից՝ իր գոքանչից ժամանակավորապես մի խոհարար և երկու լավ պատրաստված ծառա վերցրեց, որպեսզի օգնեին այդ կարևոր միջոցառման ժամանակ: Բոլորն ավե-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

լի ու ավելի էին հուզվում, մինչև որ եկավ ամենակարևոր օրը: Այն պահից, ինչ հայտնեցին, որ Նահանգապետի ծածկապատգարակը մոտենում է գյուղին, Լի Մինը իր տան առջեւի դարպասների մոտ դրսում կանգնած սպասում էր պատվավոր հյուրի ժամանմանը: Խորին հարգանքով խոնարհվելով Լի Մինը շնորհակալություն հայտնեց նրան, որ բարեհաճ է գտնվել ու եկել է, եւ ներողություն խնդրեց, որ ներողություն է պատճառել երկար ու դժվարին այդ ճամփորդությամբ: Նահանգապետը պարզապես թեթեւակի պատասխանեց ողջույնին եւ անփութորեն ասաց, որ իր ծածկապատգարակը կրողներն իրեն որեւէ անհանգստություն չեն պատճառել:

Այնպիսի կարեւոր անձնավորությունը, ինչպիսին Նահանգապետն է, ամեն օր սովորաբար մի քանի անգամ Նախաճաշի եւ Լույնիսկ ավելի շատ ճաշի հրավերներ է ունենում: Բացառությամբ այն դեպքերի, երբ ծանոթությունը շատ թեթեւ է լինում, նա միշտ ընդունում է այդ հրավերները: Հետեւաբար նա պետք է մի խնջույքից մյուսը վազի՝ երբեք չնստելով յուրաքանչյուր սեղանի մոտ տասը կամ տասնհինգ րոպեից ավելի: Երկրում երկար ճամփորդելը տաղտկալի ու անախորժ էր Նորին Գերագանցություն պարոն Վեյի համար:

Հազիվ էր նստում եւ մի կում թեյ ըմպում, երբ արդեն ակնարկում էր, թե ստիպված է շուտով գնալ՝ այլ հրավերներ ունենալով: Այդ պատճառով էլ Լի Մինը պատվիրել էր, որ խնջույքը պատրաստ լինի այն ժամանակ, երբ ինքը Նորին Գերագանցությանը կողեկցի տեսնելու նոր վերակառուցված կամուրջը: Վեց ծածկապատգարակների երկար մի շարան, որի ամենավերջում Լի Մինը՝ իր աներորդու պատգարակում, մոտեցավ կամրջին: Նահանգապետը, լինելով խնջույքի գլխավորը, առաջինն իջավ: Նա պետք է որ խորապես հուզված լիներ բարերարի այդ լավ մտահղացումից, որը հանրությանն էր պարզեցել այդ կամուրջը, քանի որ կանգնեց այդտեղ եւ նայում էր կամրջին, ասես չէր հավատում իր աչքերին: Խոր հոգոց հանելով նա բացականչեց. «Երկնային Տեր»: Լի Մինը, շտապելով առաջ գալ եւ մեկ անգամ էլ խոր գլուխ տալով, կրկնեց իր խնդրանքը՝ անվան հետ կապված: Նորին Գերագանցությունը, Նախքան այդտեղ գալը, մի շարք հրաշալի անուններ էր մտածել՝ կապված կլինեին կամրջի գեղեցկության կամ վեհության հետ: Երբ նա նայեց այս փոքրիկ կամրջին, աչքերն սկսեց այս ու այն կողմ պտտել, մինչև որ դրանք հառեց հետաքրքրաշարժ գյուղացիների դեմքերին, որոնք եկել էին ականատես լինելու այդ կարեւոր իրադարձությանը: Նա մեծ ջանք թափեց՝ համապատասխան անուն մտածե-

լու, բայց միտքն ասես դատարկվել էր: Հուսահատ ճիգի պահին ևս մեկ անգամ էլ բացականչեց. «Երկնային Տեր»:

Լի Մինը նրան նայեց տազնապով, բայց տազնապալից արտահայտությունը, որ հայտնվեց իրեն հյուրընկալողի դեմքին, Նորին Գերազանցության համար փրկեց իրավիճակը. վերջինս հմայիչ ժպտաց և շարունակեց. «Այո, սա երկնային կամուրջ է, և կարծում եմ՝ ես այն կանվանեմ «Երկնային կամուրջ»: Հանրությանը քո առատածեռն և վերի պատճառով թող Երկինքը քեզ ոսկի և արծաթ, որդիներ ու թոռներ պարգևի»:

«Անչափ երախտապարտ եմ, Ձերդ Գերազանցություն»,- Լի Մինը ցնծում էր երջանկությունից

«Երկնային կամուրջ»,- միացան մյուսները:- «Շատ լավ անուն է»:

«Այժմ վերադառնանք պարոն Լիի տուն, քանի որ շատ շուտով քաղաք պետք է վերադառնամ»:

Նահանգապետը շտապում էր ետ գնալ խնջույքի համար, որն արդեն պատրաստ էր մատուցվելու: Բայց, ի մեծ դժգոհություն բոլորի, Լի Կանը, որը, լինելով Լի Մինի եղբայրը և ապրելով նույն առանձնատանը, համարվում էր «կես տանտեր», դեռ չէր եկել: Առավոտ վաղ Լի Մինը մետաքսե զգեստ ու ատլասե բաճկոն էր ուղարկել իր կրտսեր եղբորը, որպեսզի ևս պատրաստ լինի այդ իրադարձությանը: Քանի որ ուշ Լի Կանը ուշ արթնացողի համբավ ուներ, նրա ավագ եղբայրը չէր զարմացել, որ շնորհակալական որեւէ պատասխան չստացավ իր կրտսեր եղբորից: Եվ քանի որ նրան խնջույքի կանչելու կրկնվող առաջարկներն անուշադրության մատնվեցին, Լի Մինը որոշեց, որ լավ կանեն սկսեն, որպեսզի Նորին Գերազանցությանն սպասել չտան:

Նորին Գերազանցություն պարոն Վեյը բավականին շատ էր լսել Լի Կանի մասին, ոչ թե Լի Մինից (ով մեծապես հոգում էր, որպեսզի չհիշատակի իր անարժան կրտսեր եղբոր մասին բարձր պաշտոնյայի մոտ, և չէր ընդգրկի նրան իր հյուրերի թվում, եթե իրենք այդքան շատ մոտիկ ապրելիս չլինեին), այլ գրական ոլորտի իր բարեկամներից, որոնց շրջանում Լի Կանը հայտնի էր որպես տաղանդավոր գրող և բարձրորակ գեղագրող: Բանն այն է, որ պարոն Վեյն իրեն լավ գրող էր համարում, և ոչինչ այնքան նրան չէր ուրախացնում, որքան այն, որ մարդիկ նրան թուղթ էին ուղարկում և խնդրում իր ձեռագիրը: Իրոք, նրա գեղագրությունը շատ մեծ պահանջարկ ուներ նահանգապետարանի մարդկանց շրջանում: Ամեն անգամ, երբ նրան դիմելիս էին լինում, եթե պաշտոնական խնդրանքից առաջ դիմում էին նրա ձեռագրի օրինակն ունենալու խնդրանքով, արդյունքը միշտ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

շատ գոհացուցիչ էր լինում: Թեև որոշակիորեն զայրացած էր Լի Կանի բացակայությունից, այդուհանդերձ պարոն Վեյը որոշեց, որ ինքը պետք է ոչ պաշտոնական այցելություն կատարի մի մարդու, ում անվանում էր «գր-չընկեր գեղագիր»: Այդ միտքը մեծապես անհանգստացրեց Լի Մինին, ով, չհամարձակվելով առարկել բարձր պաշտոնյայի որեւէ քմահաճույքի, իսկույն ծերունի Վանին ուղարկեց, որպեսզի Լի Կանին նախազգուշացնի նահանգապետի այցի մասին: Չսպասելով պատասխանի՝ նահանգապետն անմիջապես ճանապարհ ընկավ, եւ Լի Մինին առաջարկեցին ուղեկցել: Երբ միջնադարպասով անցնելով հասան Լի Կանի արտաքին դռանը, Լի Մինն սկզբում հազաց, ապա բարձրաձայն կանչեց եղբորը, որպեսզի դուրս ելնի եւ ողջունի պատվավոր հյուրին: Դժբախտաբար, Լի Կանը պետք է որ բավականին ծանր լսելիս լիներ, եւ ոչ ոք ընդառաջ չէկավ: Լի Կանի կինն իր ներսի սենյակից պատասխանեց, որ ամուսինը կարդալով է զբաղված իր աշխատասենյակում: Չինաստանում ընդունված հին սովորության համաձայն կանայք չպետք է երեւային հյուրերի առջեւ, եթե վերջիններս ընտանիքի խիստ մտերիմ բարեկամներ չէին:

Մտնելով նախասրահ՝ Լի Մինը առաջնորդեց պարոն Վեյին դեպի ծախ եւ մոտեցավ աշխատասենյակին: Չայնը բարձրացնելով՝ նա ասաց. «Կրտսեր եղբայր Կան, Նորին Գերագանցություն պարոն Նահանգապետը բարեհաճեց քեզ այցելել»:

Հյուրին առաջինը ներս թողնելով սենյակ՝ Լի Մինը հետեւեց նրան եւ սաստիկ վրդովվեց ու վատ զգաց՝ տեսնելով, որ իր անպիտան կրտսեր եղբայրը կեսօրվա իր քունն է անցկացնում առանձնասենյակի վերեւի մասում գտնվող ազատ մահճակալին, որ նախատեսված էր հյուրի համար: Իր խղճով ներքնաշորերով Լի Կանը պառկած էր այդտեղ ամենեւին էլ ոչ հարգալից դիրքով՝ դեմքն արած դեպի ետնապատը, եւ թվում էր խոր քուն է մտած: Լի Մինն արդեն ինքնատիրապետումը կորցնելու վրա էր, բայց պատվավոր հյուրի ներկայությամբ ստիպված էր զսպել իրեն: Ատամների արանքից նա մի քանի անգամ ձայն տվեց եղբորը, բայց միակ պատասխանը, որ լսեց, քնածի թեթեւ խոմփոցն էր:

Լի Մինը շատ էր ուզում հայիոյել, բայց միայն շփոթված ժպիտով նայեց իր հյուրին: Նրա հյուրն ավելի շատ էր ուզում հայիոյել եւ նայեց իրեն հյուրընկալող տանտիրոջը էլ ավելի շփոթված ժպիտով: Մինչ Լի Մինը փորձում էր ներողություն խնդրել իր կրտսեր եղբոր անտաշ վարքի համար, նահանգապետը ետ շրջվեց եւ ասաց, որ հուսով է՝ ներողամիտ կլինեն իր այս ներխուժման համար:

Խնջույքն սկսվեց անմիջապես, եւ նահանգապետը, առաջին հիմնական ուտեստը մատուցելուց հետո դրանից մի քիչ ճաշակելով, վեր կացավ, ներողություն խնդրեց տանտիրոջից ու մյուս հյուրերից եւ մեկնեց քաղաք: Մյուս հյուրերը շատ երկար չմնացին եւ մեկը մյուսի ետեւից հերթով հեռացան՝ ըստ իրենց կարելիության: Դատավորը հրաժեշտ տվեց Լի Մինի աներորդուց անմիջապես առաջ: Տեղական կառավարության այս պաշտոնյան տանտիրոջ մոտ ընկերն էր եւ երբ լսեց, որ նահանգապետի բժիշկն ընդհանրապես որեւէ դեղորայք չի գրել Լի Մինի կնոջ համար, առաջարկեց իր սեփական բժշկին ուղարկել տիկնոջը նայելու համար:

Երբ արդեն վերջին չորս ուտեստն էին մատուցում, սեղանի մոտ մնացին միայն պարոն Վուն եւ տանտերը: Բրինձն ու զովացուցիչ ըմպելիքները մատուցվեցին միաժամանակ, եւ պարոն Վուն, ասելով, որ լիովին հարբել է գինուց ու կուշտ կերած է արդեն, նույնպես շնորհակալություն հայտնեց Լի Մինին եւ ասաց, որ շուտով պիտի գնա: Լի Մինն անմիջապես կարգադրեց ծերունի Վանին թեյ պատրաստել եւ մատուցել ու նաեւ տեսնել, թե պարոն Վուի պատգարակակիրները ավարտե՞լ էին արդյոք ուտելը եւ պատրաստ էին: Նա նաեւ ասաց Վու ընտանիքի երկու ծառաներին, որ առանձնաձև եւ մի բան ուտեն, քանի որ պետք է քաղաք գնային իրենց տիրոջ հետ:

Երբ մենակ մնացին միջնասենյակում, պարոն Վուն, որն իր քնույթով բավականին չափավոր մարդ լինելով՝ ամենեւին էլ հարբած չէր, թեեւ նրան պետք է որ ստիպած լինեին շատ խմել, Լի Մինին մի քանի շատ լավ խորհուրդ տվեց: Լսած լինելով, որ իր քույրը պատրաստվում է մեկ այլ բժշկի մոտ քննվելու՝ նա խիստ մտահոգ էր քրոջ առողջության համար եւ ասաց. «Իմ համեստ քույրն ինձ նման է. թեեւ բոլորովին առողջ տեսքով է, բայց, ցավոք, պիտի ասեմ, որ մարմնի չափազանց թույլ կազմվածք ունի: Մենք հաճախ ենք անհանգստացել, որ նա որդի չի ունենում, եւ ես անձամբ կարծում եմ, որ դու մեկ այլ բան պետք է անես, ոչ թե պարզապես նրան գարշելի դեղորայք տաս: Ո՛չ չորացրած խոտաբույսերը, ո՛չ հաբերը, ո՛չ դեղափոշին չեն կարող հրաշքներ գործել եւ որդի պարգևել մի կնոջ, որն անկարող է որդի ունենալ: Ստաճիր քո հսկայական հարստության մասին: Թե՞ ուզում եք մի հարյուր տարի ապրելուց հետո այն տալ մեկ ուրիշի լակոտի: Մի քիչ լայն հայացքով նայիր կյանքին, հարճ պահիր, եւ ամեն ինչ լավ կլինի»:

«Վերջերս այդ մասին ակնարկեցի քո հրաշալի քրոջը, բայց, ցավոք, նա այնպիսի պայծառ հայացք չունի ամեն ինչի հանդեպ, ինչպես դու»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Իհարկե, իմ համեստ քույրն անմիջապես չի համաձայնի: Բայց չպետք է թողնես, որ նա սկզբում իմանա: Երբ արդեն որդի կունենաս, երկուսին էլ ե՛լ մորը, ե՛լ երեխային բեր տուն, եւ իմ համեստ քույրն աշխարհի ամենաերջանիկ կինը կլինի: Թեւ իմ համեստ կինը ոչինչ չի ասի, եթե ես հիմա էլ հարձ պահեմ, բայց նա ավելի երջանիկ կլինի, երբ մորն ու որդուն տուն բերեմ»:

«Ես նույնպես ուզում եմ, որ քո հրաշալի քույրը երջանիկ լինի...»:

«Իհարկե: Դե, ուրեմն, մյուս անգամ երբ գաս քաղաք, մի քիչ ավելի երկար մնա, որպեսզի ես կարողանամ քեզ ցույց տալ շրջակա թաղամասերը: Ես գիտեմ մի քանի շատ գեղեցիկ աղջիկների, որոնց մայրերը խնդրել են ինձ նրանց համար հարմար ամուսին գտնել: Դու կարող ես նրանցից ընտրություն կատարել»:

«Դա բավականին թա՛նկ կարժենա, կարծում եմ»:

«Դե չէ: Ամենաշատը՝ մի քանի հարյուր թաեյ: Եթե, իհարկե, չես ուզենա երկուսը կամ երեքն ունենալ, երբ տեսնես, որ բոլորն էլ այդքան սիրուն են»:- Եվ տեսնելով, որ Լի Մինը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում, նույնիսկ ավելի հեռուն գնաց. «Իհարկե, Նանչանի աղջիկները առաջակարգ լինելուց հեռու են: Եթե իսկապես գեղեցկուհիներ ես փնտրում, մյուս տարի գարնանն արի ինձ հետ Շանհայ: Շանհայում ես մի քանի գործ ունեմ ամռանը եւ երեւի այնտեղ կմանամ մինչեւ շոգերն անցնեն: Բայց, այսպես թե այնպես, առաջին հերթին տեղի աղջիկներին կնայենք»:

Ծերունի Վանը թեյ եւ տաք սրբիչներ բերեց, եւ պարոն Վուն փոխեց թեման ու սկսեց դեմքն ու ձեռքերը սրբել: Թեյի մի քանի ումպից հետո նրա տան երկու ծառաները եկան եւ հայտնեցին, որ պատգարակակիրներն սպասում են նրա կարգադրությանը: Նա մտավ տան ներսի մասը քրոջը հրաժեշտ տալու, նորից ու նորից շնորհակալություն հայտնեց Լի Մինին եւ մեկնեց քաղաք, որտեղ, ինչպես ակնարկեց, հույս ուներ շուտով տեսնելու Լի Մինին:

Ինչպես ասում են՝ երբ հյուրերը գնում են, տանտերն իրեն ազատ ու անկաշկանդ է զգում: Կամրջի շինարարությունն ավարտելու եւ խնջույքի նախապատրաստության հետ կապված՝ բոլոր տնեցիներն անցած մի քանի օրերին, թվում է, լարված վիճակում էին: Այժմ, երբ կողմնակի բոլոր անձինք գնացին, Լի Մինը թեթեւացած խոր շունչ քաշեց եւ կնոջը հայտնեց կամրջի նոր անունը, որ նահանգապետն էր դրել, ինչպես նաեւ դատավորի խորհուրդը՝ կապված նոր բժշկի հետ: Ապա մտադրվեց կնոջը մի փոքր նախապատրաստել ապագա անակնկալներին՝ անորոշ կերպով ակնար-

կելով այն մասին, ինչ առաջարկել էր նրա եղբայրը, բաց կինը, թվում էր, խիստ անհետաձգելի բան ունի ասելու եւ այնուամենայնիվ դեռ տատանվում էր:

«Ուզում էի ավելի շուտ ասել քեզ, բայց այնքան էլ համոզված չէի: Հիմա, կարծում եմ, էլ կարիք չկա բժշկի մոտ գնալու կամ դեղորայք ընդունելու»:

«Ի՞նչ,- Լի Մինն ականջներին չէր հավատում:- Համոզված ես...»:

«Այո,- կինը հայացքը գետնին խոնարհեց:- Արդեն երեք ամիս է»:

«Երեք ամիս»:

«Այո»:

«Օ՛», - Լի Մինին աչքերում արցունքներ հայտնվեցին: Երկար ժամանակ նա չէր կարողանում խոսել:

«Ինչու՞ ես լռում»:

«Եթե այդ մասին ինձ հայտնեիր,- փնթփնթացող ձայնով պատասխանեց Լի Մինը,- ասենք, մեկ ամիս առաջ, ապա կարիք չէի ունենա այդ ամբողջ փողը զուր վատնել կամրջի վրա»:

«Ես համոզված չէի միևնույն հիմա: Բացի այդ, ես միշտ ցանկացել եմ, որ դու վերջապես գոնե մեկ անգամ բարեգործության համար ինչ-որ բան անես: Այդ ժամանակ զուցե Երկինքը մեզ դատեր փոխարեն որդի կպարգեմի»:

«Որդի,- մտածեց Լի Մինը:- Հարյուր թաել որդու համար»: Այս անգամ նա կարիք չունեւ շատ հաշվարկ կատարելու: Ընդհանրապես ընդունված է, որ դուստրը արժե հազար թաել, իսկ որդին տասը հազար: Դրա համար էլ աղջիկների մասին խոսելիս ասում են «հազար թաել»:

Թեւ Լի Մինը վերջերս անքուն գիշերներ էր անցկացնում, քանի որ բաժանվել էր այնպիսի մի բանից, ինչպիսին հարյուր թաելն է, կամուրջը վերակառուցելու եւ ինչոպք կազմակերպելու ժամանակ, բայց այժմ նա զգաց, որ դա մի ներդրում է, որն իրեն տասը հազար տոկոսի շահույթ կտա: Միակ բանն, ինչի համար ափսոսում էր, այն էր, որ այդքան փողն իզուր ծախսեց այդ անօգուտ բժիշկ Տուի վրա, եւ նա որոշեց դա դաս համարել իր նմանին՝ թանկ բժշկի հետ խորհրդակցելու համար:

ՉԼՈՒԽ 1

*«Հողածինն է մտքին դևում,
Հողածինն է ընդդիմանում,
Բայց Երկինքն է տևորինում»:*

Մեր իմացած բոլոր լեզուներում ոչ մի ածական չի կարող ճշգրիտ նկարագրել տղամարդու երջանկությունը, ով պատրաստվում է առաջին անգամ հայր դառնալ հիսուն տարեկան հասակում: Երբ Լի Մինը մտքում անդրադարձավ իր անսպասելի օրհնությանը, նա ուղղակի կորցրեց գլուխը եւ որոշեց ճոխ մի խնջույք մատուցել իր բոլոր համագյուղացիներին: Տևտեսական խիստ որոշակի սկզբունքներ ունեցող մի մարդու համար պետք է որ այլ պատճառներ էլ լինեին այս շռայլության համար, բացի պարզապես երջանիկ եւ շնորհակալ լինելուց: Իրականում ինչ-որ բան կար, որ Լի Մինը ուզում էր ավարտին հասցնել: Վերջին հիշարժան առիթը, երբ գյուղում բոլորը հյուրասիրվել էին գինով ու մսով, Լի Մինը հարսանիքի ժամանակ էր եղել: Դա ավելի քան քսան տարի առաջ էր: Տարեց գյուղացիներն առանձնապես շատ լավ էին հիշում, քանի որ երբ մի քանի տարի անց ամուսնացավ Լի Կանը, միայն ընտանիքների գլխավորներն ու արտոնյալներն էին հրավիրվել հյուրընկալության, ինչ վերաբերում է ոչ արտոնյալներին, վերջիններս խիստ դժգոհ էին: Նրանք ասում էին, որ խնջույքը, ինչպես տունը, այլեւս այն չէ, ինչ առաջ էր: Լի Մինը դարա համար ավստասալու հիմնավոր պատճառ ուներ: Նրա հարսանիքի խնջույքը կազմակերպվել էր իր հոր կողմից, ով շատ ժլատ էր համարվում, երբ խոսքը վերաբերում էր սեփական հարմարավետությանն ու ծախսերին, բայց չափազանց առատածեռն էր այլոց հանդեպ: Դրա համար էլ բոլորն օգտվեցին խնջույքից եւ մեծ բավականություն ստացան: Բայց երբ Լի Կանն էր պատրաստվում ամուսնանալ, նրանց հայրն արդեն մահվան մահճում էր, եւ, բնականաբար, Լի Մինը, լինելով ավագ որդին, ամեն ինչ անում էր որպես ընտանիքի գլխավոր: Կրտսեր եղբոր հարսանիքի խնջույքը կազմակերպելիս նա կյանքում մեկ անգամ մեղադրվեց շռայլ լինելու համար: Այդպիսի գյուղական ճաշկերույթի ժամանակ գլխավոր ուտեստը միշտ շոգեխաշած խոզի միսն ու շաղգամն են: Թեեւ դա կոչվում է «խոզի շոգեխաշած միս», բայց առանձին հարմարեցվող ուտեստ է, որ կարող է հեշտությամբ պատրաստ-

վել ավելի շատ կամ ավելի քիչ չափով շաղգամ խառնելով՝ կախված տանտիրոջ անազնվությունից կամ առատածեռնությունից: Իր հարսանիքի խնջոյքի ժամանակ Լի Կանն ուրախ խնդալով նկատեց, որ ավագ եղբայրը շոայլ է ու անխնա վատնող՝ համեմատած իր հոր հետ, որի ժամանակ միսը բավականին էժան ծելով էր պատրաստվում մի քիչ շաղգամ ավելացնելով, միևնույն հիմա, երբ Լի Սինն էր տանտերը, ևս փաստորեն այնքան անխոհեմ էր, որ հյուրերին շաղգամից ուտեստ առաջարկելիս ամեն ինչ արեց, որպեսզի դրան մի քանի մեծ կտոր խոզի միս ավելացվի:

Ծերունու հուղարկավորությանը ներկա էին ոչ ավելի, քան հարյուր գյուղացիներ, եւ տասնութ քառակուսի սեղանները բավականին լեփեցուն էին ու ճռնչում էին ուտեստների ծանրությունից: Ի գարմանս բոլորի՝ հիմնական ճաշատեսակը ոչ թե ավանդական շոգեխաշած խոզի միսն էր, այլ միանգամայն գայթակղիչ մի ուտեստ, որ կոչվում էր թռչնամիս հնդկեղեգի բողբոջով: Դա, իհարկե, ճոխ էր հնչում, բայց ակներեսաբար ճաշատեսակը պատրաստվել էր ավելի շատ այդ մասին խոսելու եւ քննարկելու, քան ուտելու համար: Հավը, լավագույնս իրազեկված շրջանակների համաձայն, հիևզ արժանիք ունի: Բայց մատուցվող թռչունը, թվում է, անվազն մեկ առավելություն էլ ունի: Թռչուններն ունենին իսկապես պատկառելի տարիքի հասնելու այդ բացառիկ արժանիքը, ինչը պատիվ է բերում մարդ արարածին, բայց ընդհանրապես ցանկալի չէ թռչունների ցեղի փետրավորների համար:

Ներկաների մեջ դագաղը տանողները, ովքեր տեղական սովորոյթի համաձայն իրենց ծառայությունը մատուցել էին ոչ այլ բանի, քան հացկերոյթի համար, թվում էր՝ մյուսներից ավելի վրդովված էին: Նրանք այս ու այն կողմ հրամաններ էի արձակում, որ զննեին թռչնի թելերի ծայրերի քանակը եւ խոր հիացմունքով բացահայտում, որ զիտակ խոհարարը հաջողությամբ սպասարկել է բոլոր տասնութ սեղանները միակ հավով, որն իհարկե զգուշությամբ կտրտվել, բաշխվել ու որպես խավարտ մատուցվել է բավականաչափ քանակությամբ հնդկեղեգի բողբոջներով: Նրանք հայտարարեցին, որ թռչունն այսպիսով ձեռք է բերել եւս մեկ առաքինություն, այն է՝ գրանցել սոր սխրագործություն՝ դեպի մյուս աշխարհի վերջին թռիչքից առաջ սպասարկելով տասնութ սեղան: Ինչ վերաբերում է հնդկեղեգի բողբոջներին, դրանք նույնպես համահունչ էին գլխավոր նրբահամ խորտիկին: Եթե դրանք չմասնակցեին պատրաստման պրոցեսին, գուցե ներկայանային շատ ավելի օգտակար ձեւով՝ կահույքի սոր նմուշի տեսքով:

Քանի որ գյուղացիներն այնքան ժլատ էին եղել, որ ոչ մի գոհունակու-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

թյուն չէին հայտնել իրենց երկու շքեղ հացկերույթների առիթով, Լի Մինը որոշել էր, որ նրանց այլեւս չի հյուրասիրի, ինչ էլ որ լինի: Բայց այժմ, երբ իրեն երանելի երջանկության մեջ էր զգում ընտանիքի ընդլայնման հեռանկարից, մի կողմ նետեց իր սկզբունքները եւ խոստացավ խնջույքի հրավիրել ամբողջ գյուղին, երբ երեխան ծնվի:

Բնականաբար, ապագա մայրը ոչ պակաս, այլ շատ ավելի երջանիկ էր, քան հայրը: Բացի այդ, նա իրեն այնպես էր զգում, ասես ծանր մի քար էր ընկել սրտից: Նա մտածում էր, որ դա նշանակում է վերջ տալ զգվելի դեղորայքին ու անվերջ աղոթքներին: Բայց ամենավատ բժիշկներն անգամ չէին դադարում հաճախել մեկը մյուսի ետեւից, եւ նա ստիպված էր որոշակի տեսակի դեղորայք ընդունել գրեթե ամեն օր: Այդ ամենն, ասում էին, ոչ միայն կկայունացնեին հղիությունը, այլ նաեւ կապահովեին, որ ապագա երեխան տղա լիներ, ոչ թե աղջիկ: Նրա համար անհնար էր ձեւացնել, թե ընդունում է այդ նյութերը, ապա դեն նետել, քանի որ երբ դեղորայքի համար վճարվում էր,- իսկ այսպես կոչված բժիշկները միշտ կանխիկ փող էին ուզում, երբ տրամադրում էին իրենց նշանակած դեղանյութը,- Լի Մինը մեկ վայրկյան իսկ նրան մենակ չէր թողնում, մինչեւ որ նա կուլ չէր տալիս այդ դեղն իր աչքի առջեւ: Այս ամենը եւ դեպի տաճարներ կատարած նրա անվերջ ուխտագնացությունները վերջապես դադարեցին, երբ նա իսկապես իրեն վատ զգաց եւ, բարեբախտաբար մի խելամիտ բժիշկ խորհուրդ տվեց նրան: Բժիշկն ասաց, որ քանի դեռ նա վերջ չի տվել դեղորայքի փոխարեն մատուցվող այդ աղբն ընդունելուն եւ չի դադարեցրել ծանր ու լարված ճամփորդությամբ ամբողջ երկրով մեկ դեսուդեն նետվելը,- քանի որ երկուսն էլ ճակատագրական են հղի կնոջ համար եւ հատկապես՝ նրա տարիքի ու քաշի կնոջ,- այդպիսի հիմարություններն անկասկած կհանգեցնեն վիժումի:

Այդ խոսքերն անմիջական ազդեցություն գործեցին: Բայց խեղճ կնոջ ծանր օրերը դեռ չէին ավարտվել: Այդ օրվանից նրան չէին թողնում ուտել կամ խմել ուրիշ ոչինչ, քան հատուկ միայն այն բաները, որոնք ցուցակով նշել էր բժիշկներից մեկը, եւ արգելված էր անգամ ամենաթեթեւ շարժումը: Ճորտուհիներին կարգադրված էր հանել եւ հագցնել նրա շորերը:

Մոտենում էր բախտորոշ օրը: Լի Մինը նախապես մի մանկաբարձուհի էր վարձել, որն ապրում էր Մեյ ընտանիքի գետնանցման գյուղում: Այս մանկաբարձուհուն, որ ապրում էր երկու մղոն հեռու, նա նախընտրել էր իր գյուղի մանկաբարձուհուց, որովհետեւ, ինչպես ասում էր, սա ավելի հուսալի էր: Բայց մեկ այլ պատճառ էլ կար: Երեք տարի առաջ, երբ Լի Կանի

կինը երեխա էր ունենում, նրանք ստիպված էին գնալ կողքի գյուղը այդ կնոջը բերելու, որովհետև տեղի մանկաբարձուհին լուրջ հիվանդ էր: Պա մանկաբարձուհու առաջին մասնագիտական այցն էր Լի ընտանիքի գյուղ, եւ նրա գործած առաջին տպավորությունը շատ լավն էր, երբ շնորհավորեց Լի Կանին ազնվագարմ որդի ունենալու երջանիկ հեռանկարի առթիվ: Իսկապես, մի քանի րոպե անց ապացուցվեց, որ նա ճիշտ էր: Հետո նա ասաց, որ ինքը կախարդական հմայիլներ ունի, որոնք երաշխիք են տալիս, որ իրեն դիմողներն աղջկա փոխարեն տղա ունենան: Ոչ ոք չէր հավատում նրան, եւ ամենից քիչ հավատում էր Լի Կանը՝ երեխայի հայրը: Բայց Լի Մինը բավականին տպավորված էր մանկաբարձուհու հմտությամբ՝ նախապես անառարկելի ճշմարտություն համարելով, որ եղբայրը հաստատ աղջիկ պիտի ունենար:

Չինական ընտանիքներում ընդունված ավանդույթ է՝ հրավիրել փորձառու եւ հաջողակ մի մոր, նախընտրելի է՝ մոտ ազգականի, որպեսզի մա իր ծնվելիք առաջնեկ երեխային սպասող կնոջ հետ: Լի Մինի կնոջ դեպքում մեկ ուրիշին փնտրելու կարիք չկար: Լի Կանի կինը, որ գործնականում նույն տանն էր ապրում, իդեալական ընկեր եւ խորհրդատու կլիներ: Բայց Լի Մինը չէր ուզում նրան անհանգստացնել: Հաջորդ ընտրությունն, իհարկե, զոքանչն էր, տիկին Վուն , որը, ապրելով քաղաքում, նրանցից քսան լի էր հեռու: Նա նույնպես բարձր համարում ուներ՝ այդ դեռում հանդես գալու համար, որովհետև մայր էր մի դստեր, ով Լի Մինի կինն էր, եւ մի որդու, որը շատ ավելի երիտասարդ էր՝ ընդամենը երեսուներեք տարեկան: Իհարկե, Լի Մինը գիտակցում էր զոքանչի թերությունները: Մի մայր, որը երեխայի ձայն չէր լսել ավելի քան երեսուն տարի, որքան էլ հաջողակ ու բախտավոր լիներ, դժվար թե կարողանար համեմատվել ընդամենը երեք տարի առաջ որդի ունեցած մոր հետ: Բացի այդ, հազվադեպ է, որ զոքանչն ընդունելի անձնավորություն լինի փեսայի տանը, եւ նրա մնալու համար նախապատրաստություն տեսնելն ավելորդ անհանգստություն էր առաջացնելու,- ու ամենից առաջ լրացուցիչ ծախս էր լինելու,- այն դեպքում, երբ Լի Կանի կինը կարող էր գալ եւ տեգրակնոջը տեսնել ցանկացած ժամի՝ իր տան դռնից անցնելով նրա տուն: Լի Մինը լիովին գիտակցում էր սա եւ առանձնակի մի սեր չէր տաճում զոքանչի հանդեպ: Բայց այդուհանդերձ, խնամքով հաշվարկելով լրացուցիչ բյուջեն, ինչը գրեթե խենթացնում էր նրան, խոնարհաբար որոշեց, որ զոքանչին է նախընտրում:

Տիկին Վունն ներկայացնել որպես զոքանչ նշանակում է անարդար լի-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

նել նրա հանդեպ: Նա, իսկապես, մի շատ հմայիչ փոքրամարմին տիկին էր՝ իշխող բնավորությամբ: Նա լավագույն կնոջ եւ օրինակելի մոր տիպար էր, քանի որ խորապես արհամարհում էր ամուսնուն, երբ վերջինս ողջ էր, սաստիկ կարոտում էր նրան, երբ արդեն մեռած էր, եւ խենթի պես սիրում էր իր երեխաներին: Նրա ամուսինը շատ մեղմ բնավորություն ուներ, դրա համար էլ նա ասում էր, որ ամուսինը ողնաշար չուկի: Քանի որ երեխաներն էլ բնավորությամբ հորն էին նման, նա համարում էր, որ անօգնական էին, եւ գրեթե սպանում էր նրանց մայրական իր սիրով ու հոգատարությամբ: Փեսայի համար նա միշտ հատուկ տեղ ուներ իր սրտում, բայց շուտով գիտակցեց, որ չի կարող ջերմացնել Լի Մինին, եթե անգամ իր սրտի մեջ տեղ տա նրան:

Տիկին Վուն պատրաստակամորեն ընդունեց գյուղում դստեր մոտ մեկ ամսի չափ մնալու հրավերը, թեւս ասում էր, որ թեկուզ կարճ ժամանակով դժկամությամբ է հեռանում որդուց եւ երիտասարդ հարսից : Եվ ահա, Կուանգ Սյու կայսեր իշխանության 6-րդ տարվա (1880) երրորդ լուսնի 12-րդ օրվա վաղ կեսօրին տիկին Վուն, երկար մի երթի առջեւից գնացող մեծ ծածկապատգարակով, որը տանում էին չորս ծառա, ժամանեց Լի ընտանիքի գյուղ:

Քաղաքից զոքանչի այցելությունը գյուղի տուն, թեկուզեւ հեռավորությունն ընդամենը մի քանի մղոն լինի, ընտանիքի պատմության կարեւոր մաս է կազմում: Հենց որ տիկին Վուի պատգարակը մոտեցավ տանը, Լի Մինը նշան արեց ծերունի Վանին, որն անմիջապես փոքրիկ ճայթռուկների մի շարան նետեց՝ որպես ջերմ ու սրտագին ողջույնի նշան: Ակնհայտորեն՝ Լի Մինը լավ գործարք պետք է կատարած լիներ այդ ճայթռուկները գնելու համար: Երբ ծերունի Վանը դրանք նետեց գետնին, խլացուցիչ ու բարձրաձայն ճայթռուկի փոխարեն, որ պետք է հնչեր, միայն փոքրիկ մի շրմփոց լսվեց, հենց որ դրանց ամբողջ փունջը դիպավ մայթին: Մի պահ անհարմար դադարից հետո, որի ընթացքում բոլորին թվաց, թե աշխարհն անշարժացել է, Լի Մինը հրամայեց ծերունի Վանը կրկին այրել ճայթռուկները: Ծերունի Վանը անվճռական առաջ եկավ եւ վախվխելով վեր բարձրացրեց դրանք: Մեկ անգամ էլ նա այրեց դրանք, եւ այս անգամ մի քանի թույլ ճայթռուն լսվեց: Չայնը բավականին խուլ էր:

Երբ Լի Մինը տեսավ, որ տիկին Վուն իր հետ բերել է Կապույտ Մարգարիտին՝ իր անձնական սպասուհուն եւ Չունգ Ֆուին՝ տղամարդ ծառային, նա սկսեց գիտակցել, որ իր նախկին բյուջեն բավականին սխալ էր, եւ հիմա նա ստիպված էր մինչ այդ իր սպասածից ավելին ձեռնարկել: Նա իր

բարի գալուստը քրթմնջաց տիկին Վուին , եւ այն հնչեց էլ ավելի խուլ, քան թույլ ձայն հաւող ճայթռուկները: Բայց նրա կիսն անչափ երջանիկ էր մորը տեսնելով: Եվ մինչ կանայք իրենց թանկ ներքին զգացմունքներն էին իրար հետ փոխանակում տան ներսի կողմում, ևս բակում կանգնած ուսումնասիրում էր այն ամենն, ինչ զոքանչն էր իր հետ բերել: Ի մեծ բավականություն իրեն՝ Լի Մինը տեսավ, որ, բացի իր անձնական հարմարավետության համար բերված բազմաթիվ պարագաներից, տիկին Վուին իր հետ բերել էր շատ հագուստ եւ այլ բաներ երեխայի համար: Երբ ևս ջանադրաբար նախապես գնահատում էր այդ իրերի ամենացածր հնարավոր արժեքը, նկատեց, որ դրանցից շատերը, ինչպես, օրինակ, վերարկուները, գլխարկներն ու կոշիկները, ակնհայտորեն տղայի համար էին նախատեսված: Նա շատ երախտապարտ զգաց իրեն զոքանչի հանդեպ, որն այնքան խելամիտ էր, եւ անմիջապես կարգադրեց Կրկնակի Օրհնությանն ու Մեծ Երջանկությանը գնալ խոհանոց եւ մի քիչ վառելափայտ ջարդել: Քանի որ ծերունի Չանգը միշտ զբաղված էր այգում, թեյ պատրաստելը եւ մատուցելը աղախինների պարտականությունն էր: Լի Մինի տնտեսող քաղաքականությունն այնպիսին էր, որ թեյ չէին պատրաստում նախքան հյուրերի ժամանելը, կրակ չէին վառում նախքան թեյ կպահանջվեր, եւ վառելափայտ չին ջարդում, քանի դեռ ջարդած վառելափայտի վերջին պաշարը չէր սպառվել: Այս քաղաքականությունը կարող էր որոշ ուշացման պատճառ դառնալ, բայց որոշակի երաշխիք էր ընդդեմ ավելորդ ծախսերի:

Տան դասավորությունն արագ գննելուց հետո տիկին Վուին դատերն ասաց, որ ուզում է որոշ փոփոխություններ կատարել: Լի Մինն իր իրերը պետք է տաներ միջնասրահի մյուս կողմում գտնվող հյուրասենյակ եւ այնտեղ տեղավորվեր: Նրա կիսը պետք է տեղափոխվեր ներքին սենյակ, որը մինչ այդ զբաղեցնում էին աղախինները: Տիկին Վուին պետք է ընկերակցեր իր դստերը այդ սենյակում: Լի Մինի եւ իր կնոջ սկզբնական ննջասենյակն այժմ պետք է զբաղեցներ Կապույտ Սարգարիտը՝ տիկին Վուին անձնական սպասուհին, այնպես որ, եթե տիկին Վուին գիշերն ինչ-որ բան ուզեր, Կապույտ Սարգարիտը նրան մոտ լիներ: Կրկնակի Օրհնությունն ու Մեծ Երջանկությունը իրենց անկողինները պետք է հարմարեցնեին փոքրիկ ետնասենյակում: Չանգ Ֆուին պետք է ծերունի Վանի սենյակում լիներ, իսկ ծերունի Վանը մեկ այլ տեղ պետք է գտներ իր սենյակի համար: Չնայած Լի Մինի ուժեղ բողոքներին՝ տիկին Վուին ի վերջո հասավ իր ուզածին: Տունն իսկույն հայտնվեց քառսային վիճակում, եւ ամեն սենյակ փաստորեն տակնուվրա եղավ: Նրանք զբաղված էին ամբողջ կեսօրին: Երբ երե-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

կոյան ճաշկերույթն ավարտվեց, բոլորը գնացին իրենց համապատասխան սենյակները եւ ամեն բան վերադասավորեցին ըստ իրենց ճաշակի ու ցանկության: Երբ արդեն ավարտել էին, գրեթե կեսգիշեր էր:

Ապա տիկին Վուն հանձնարարություններ տվեց Կապույտ Մարգարտին, որ ընթրիք պատրաստի: Լսելով «ընթրիք» բառը՝ Լի Միւնը հոգոց հանեց: Սա քաղաքում ընդունված շոայլություն էր, որ նա մոռացել էր հաշվի առնել, երբ իր բյուջեն էր կազմում: Որպես բողոքի նշան՝ նա բազմանշանակ նկատեց, որ գյուղի մարդիկ, ինչպես, օրինակ, ինքը, իրենց վատ կզգան գիշերվա առաջին ժամից հետո եւ անմիջապես բարի գիշեր մաղթեց զոքանչին:

Շատ տարիներ էին անցել, ինչ Լի Միւնի կինն այդպիսի հաճույք էր ստացել լավ ընթրիքից, եւ միզուցե մի փոքր ավելի կերավ, քան պետք էր: Կամ թերեւս չափից ավելի շատ էր դեսուդեն շարժվել եւ սաստիկ հուզված էր մոր ժամանումի պատճառով, այնպես որ երկար ժամանակ անքուն պառկած էր իր նոր պատրաստված անկողնում: Երբ վերջապես քնեց, մոծավանջ տեսավ: Շուտով իր ներսում սուր ցավ զգաց: Լուսաբացին բոլոր նշանները ցույց էին տալիս մեկ բան. պետք էր մարդ ուղարկել մանկաբարձուհու ետեփց: Մինչ ծերունի Վանին հրամայեցին գնալ Մեյ ընտանիքի գետանցման գյուղ, Լի Միւնի կինը ճչում էր ողջ տնով մեկ: Նա մարմնեղ կին էր եւ հետեւաբար կարող էր մեծ աղմուկ հանել:

Լի Կանին, որը միշտ սիրում էր առավոտյան անխռով հանգստի պահը վայելել իր անկողնում, Լի Միւնի կնոջ բարձր ու սուր ճիչերը մի փոքր մտահոգիչ թվացին: Նա իր կնոջն ասաց, որ գնա տեսնի, թե ինչով կարող է օգնել: Բայց տիկին Վուն ասաց, որ շատ լավ տիրապետում է իրավիճակին եւ հնարավոր ամեն բան արված է: Իսկապես, ժամեր առաջ նա պատվերների երկար մի ցուցակ էր տվել սպասուհիներին՝ ի շահ մոր եւ երեխայի: Լի Կանի կինը տեսավ, որ իրեն սիրով չեն ընդունում, եւ ստիպված էր վիատված հեռանալ: Շուտով ամբողջ տունը լցվեց ինչ-որ այրվող բանի զգվելի հոտով, եւ այդ հոտը տարածվեց բոլոր անկյուններում: Լի Կանը վեր կացավ եւ դուրս եկավ իր սենյակից, որպեսզի իմանա, թե որտեղից է գալիս այդ տհաճ հոտը: Ի զարմանս իրեն նա տեսավ, որ տան այն բաժինը, որ իր ավագ եղբորինն էր, լցված է զգվելի ծխով: Վախենալով, որ ինչ-որ բան այրվում է, նա շտապեց հարցնել Լի Միւնին, թե ինչ է պատահել:

«Ոչինչ էլ չի պատահել», - հանգիստ պատասխանեց Լի Միւնը: Բայց այդ ամենը ճիշտ չէր, քանի որ ակներեւաբար նա ինքն էլ չէր կարողանում տալեւ դա եւ կանգնած էր բալկոն՝ խուսափելով ծխի հոտից:

«Բայց ինչ-որ բան այրվում է, եւ ծուխը մեծ վնաս կտա իմ մեծ եղբոր կնոջը»:

«Չորանչս ասաց, որ արքադադի այրվող փետուրի հոտը կքշի չար ոգիներին: Քանի որ ամեն բոպե սպասում ենք երեխայի աշխարհ գալուն, պետք է ապահով տեղում լինենք»:

«Ապահով տեղում,- Լի Կանը գրեթե կորցրեց համբերությունը:- Եվ ե՞րբ են չար ոգիներն այս տուն եկել: Ես չգիտեմ նրանց ժամանման մասին»:

«Իմ կրտսեր փոքր եղբոր կինն այս առավոտ չպետք է մտներ ծննդասենյակ,- կոպտորեն նրան առարկեց Լի Միլը:- Քանի որ նա տան մյուս մասից էր եկել, իր հետ կարող էր անցանկալի տարրեր բերել»:

«Ես ոչ մի առարկություն չունեմ այլ մարդկանց հիմար ու անհեթեթ սնուտիապաշտ հավատալիքների հանդեպ, քանի դեռ դրանք որեւէ մեկին վնաս չեն տվել: Բայց այս ահավոր անդուր հոտը, որ կարծում ես, թե կքշի չար ոգիներին, կենդանի մարդկանց էլ կքշի այն աշխարհ: Մի՞թե չես մտածում խեղճ մոր մասին, որ երկունքի ցավերի մեջ է»:

«Հիմար բաներ մի՛ ասա, կրտսեր եղբայր: Թեւ կարողացել ես բոլոր տեսակի աղբ գրքերը, եւ ձեռացնում ես, թե բժշկությունից բան ես հասկանում, այս գործերի մասին ոչինչ չգիտես»:

«Մանկաբարձ կինն իր փորձառությամբ պետք է որ ավելի լավ իմանա: Նա՞ ինչու չի վերջ տալիս այս անհեթեթությանը»:

«Մանկաբարձուհին դեռ չի եկել: Ես ծերունի Չանգին ուղարկել եմ, որ տեսնի, թե ինչ է պատահել ծերունի Վանին, որը ժամեր առաջ է գնացել»:

«Ավելի լավ կլիներ տեղի մանկաբարձուհուն բերելիւր նախ, եթե այն մի կնոջ հետ ինչ որ բան է պատահել»:

«Տեղի մանկաբարձուհին բոլորովին անօգուտ է: Մենք սպասելու ենք Մեյ ընտանիքի գետնանցման գյուղից եկող այն մյուսին»:

«Բայց մայրը չի՞ կարող սպասել, երեխան էլ չի կարող սպասել: Արագացրո՛ւ, ի սե՛ր Աստծո, անմիջապես ուղարկիր տեղի մանկաբարձուհու ետեւից»:

«Ինչու՞ ես այդքան մտահոգ եւ շատ ես ուզում, որ այդ տեղական կնոջը բերենք: Զե՛ք նրա համար ինչ-որ լիազորություն՝ են խոստացել: Մի՞թե չես կարող քո գործով զբաղվել»:

Ոչինչ այնքան չէր կատաղեցնում Լի Կանին, որքան փողի հետ կապված ցանկացած մեղադրանք: Նա այնքան էր վիրավորված այդ ակնարկներից, որ զայրացած ասաց. «Շատ լավ, շատ լավ: Ես չեմ անհանգստանա ուրիշների գործերով, նույնիսկ եթե տեսնեմ, որ նրանք մեռնում են»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Գյուղի մարդիկ ընդհանրապես շատ սնահավատ են, իսկ Լի Մինը ամենասնահավատներից մեկն էր: «Մահ» ակնարկող բառերը երբեք չպիտի հիշատակվեն որոշակի կարեւոր օրերի կամ բարեպատեհ առիթներով: Լի Կանի խոսքերն ընդունվեցին որպես չարամիտ խոսքեր: Լի Մինը կատաղած էր:

«Դատարկ բաներ են խոսում, դու, անպիտան շռայլող»:

Ավելի թունդ բառեր կհնչեին, եթե ճիշտ ժամանակին արտակարգ լավ լուրը չհնչեր: Կրկնակի Օրհնությունը դուրս նետվեց ներքին սրահից և հուզված գոչեց. «Շնորհավորում ենք , Տեր իմ: Մենք այժմ երիտասարդ տեր ունենք, երիտասարդ տեր»:

Լի Մինն անչափ երջանիկ էր: Թողնելով եղբորը՝ ևս դուրս հանեց և վառեց ճայթռուկների մի մեծ փունջ - դա տասն անգամ ավելի երկար էր, քան այն փունջը, որով ողջունում էր իր զոքանչին - և այն տան առջեւի դարպասներից դուրս նետեց փողոց: Երբ այն պայթեց խլացուցիչ պայթյունների շարքով, Լի Մինն զգաց, որ ինքն ավելի լավ գործարք է կատարել, քան կարծում էր, չնայած շատ ավելին էր վճարել դրա համար, քան սովորաբար վճարում էր: Փողը երբեք սխալ ճամփով չի գնում:

«Վե՛րջ տվեք ճայթռուկներ պայթեցնելուն: Վե՛րջ տվեք, - լավեց տիկին Վուի բարձր ու գայրացած ձայնը, և այդ բառերը Լի Մինի համար Մեծ Երջանկության հետ էին կապված: - Ո՛վ ասաց նրանց, որ առանց իմ կարգադրության ճայթռուկներ պայթեցնեն: Վե՛րջ տվեք անմիջապես»:

Նորաթուխ հայրն ասես շանթահար էր եղել: Բնագղաբար հասկանալով, որ ինչ-որ բան այն չէ, ևս դուրս նետվեց դարպասներից և ոտքերով սկսեց կոխկրտել ճայթռուկների փունջը: Ապա գետնից վերցրեց մնացած կեսը և ներս տարավ տուն: Միջնասրահ մտնելիս հասկացավ, որ իր անարժան եղբայրն այնտեղ կանգնած վիճում է զոքանչի հետ, որը դեռ ներսի սենյակում էր:

«Բացարձակապես անօգուտ բան է քո այդ անպետք դեղերից գոռով նրան խմեցնելը: Դու պետք է թափահարես նրան և անընդհատ ձեռքի ափով ապտակելով շոպացնես թիկունքին», - հուսահատ բղավում էր Լի Կանը:

«Ինչպե՛ս կարող ես այդ պատիկ սիրելի արարածին ապտակներ հասցնել: Ուզում ես սպանե՞լ նրան», - կատաղած գոռաց տիկին Վուն:

«Եթե ևս չի շկչում, դա նրան փրկելու միակ միջոցն է: Ես չեմ ուզում սպանել նրան, բայց շուտով մեռած երեխա կունենաք, եթե պնդես քո այդ բուժական անհեթեթությունը»:

«Ես գիտեմ ինչպես են երեխա մեծացում ու դաստիարակում, քանի որ մայր եմ: Եվ կարիք չունեմ անտաշ տղամարդկանց միջամտության», - ձայնը գլուխը գցած հայտարարեց տիկին Վուն:

«Բայց դաստիարակելու համար մեռած երեխա կունենաս...»:

Լի Մինն այլևս չկարողացավ համբերել:

«Չայնո կորի՛ր: Չզվեի՛ անասուն: Դու պարզապես ուզում ես, որ երեխաս մեռնի: Դու՛րս այստեղից, քանի դեռ համբերությունս չեմ կորցրել»:

Բոլորն էլ կարող էին տեսնել, որ Լի Մինն արդեն կորցրել է համբերությունը: Լի Կանը հասկացավ, որ թեև նրանք, ովքեր խորհուրդ չեն ընդունում, տխմար են, բայց ավելի շատ տխմար են նրանք, ովքեր պնդում են իրենց խորհուրդը, երբ այն ոչ ոք չի ուզում ընդունել: Եվ նա հեռացավ դեպի տան իր բաժինը՝ առանց այլևս աղմկելու: Բայց վիճաբանությունը շարունակվեց նույնիսկ Լի Կանի հեռանալուց հետո: Տիկին Վուն ամեն ինչում ամեն մեկի մեղքն ու սխալն էր տեսնում: Երբ ոչ ոք չհամարձակվեց մոտ գալ նրան, հիմա էլ համարեց, որ ոչ ոք չի ուզում օգնել: Նա անիծեց բոլորին եւ ամեն ինչ՝ տանտիրոջից մինչև բաժակ, զոլալ կամ պարանի կտոր:

Նախորդ վեճից տարբերությունն այն էր միայն, որ այժմ նա վիճաբանում էր ինքն իրեն՝ առանց առարկողի: Երեխան անկասկած մեռած էր, բայց նա հույսը չէր կորցնում: Իր բոլոր դեղամիջոցները փորձելուց հետո նա ստիպված էր չինական օջիւղը այրել եւ «աստվածային ասեղ» գործածել: Այդ միջոցների կիրառումը բավականին երկար տևեց, բայց, ինչպես եւ պետք էր սպասել, հրաշք տեղի չունեցավ: Միաժամանակ՝ տառապող մայրը շարունակում էր ճչալ ուժեղ ցավերից:

Վերջապես մանկաբարձուհին ժամանեց ծերունի Վանի, ծերունի Չանգի եւ Չունգ Ֆուի հետ, որին նույնպես ուղարկել էին այդ կնոջ ետեւից::

Ակներեսաբար, ոչ ոք նրան չէր հայտնել տխուր լուրը, քանի որ, իր հին սովորույթի համաձայն, նա մի քանի անգամ խոնարհվեց Լի Մինի առջեւ եւ շնորհավորեց նրան՝ աշխարհ եկող ազնվական պարոնի հայր լինելու հրաշալի առիթով: Լի Մինը զայրացած գոչեց. « Դու՛րս շարտեք նրան: Դու՛րս շարտեք նրան»:

«Չէ՛, չէ՛,- մանկաբարձուհուն օգնության շտապեց տիկին Վուն: - Տեսնենք, թե ինչ կարող է անել: Գուցե նա բուժելու ինչ-որ հատուկ բան ունի այս վիճակում գտնվող տղայի համար»:

«Ես ասում էի, որ տղա է լինելու, - հայտարարեց մանկաբարձուհին զարմանքով, ըմբռնումով եւ ուրախությամբ: Նա կարծում էր, թե Լի Մինը զայրացել է իր վրա պարզապես ուշանալու պատճառով: Ես գիտեի, որ...»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Լռի՛ր, հիմա՛ր կին: Նախ ներս գնա եւ տես նրան», - հրամայեց տիկին Վուն:

Կինը ներս մտավ սենյակ, իսկ Լի Մինը ծառաներից պահանջեց, որ հայտնեն ճակատագրական ուշացման պատճառը: Նա տեղեկացավ, որ ծառաները չէին կարողացել գտնել այդ կնոջը, որովհետեւ վերջինս արդեն իր գյուղի մոտ գտնվող մեկ այլ տեղ էր գնացել և այն գործով: Ծառաներն ստիպված հարցուփորձ էին արել: Փաստացի հատ-հատ դիմել էին գյուղի գրեթե բոլոր ապագա մայրերին, ներառյալ նրանց, ովքեր ասել էին, թե իրենց մայրությունը դեռ հնարավոր բան է: Նրանց փնտրտուքը լրիվ ապարդյուն էր, քանի դեռ չէին հանդիպել մի տղայի, որն ասել էր, թե երբ ինքը վաղ առավոտյան գետի ափին խճաքարեր էր հավաքում, տեսել էր այդ կնոջը Երկնային կամրջի մոտ կապված ձկնորսական նավակի մեջ:

Լինելով աստղագուշակությանն ու ճակատագրին խիստ հավատացող մեկը՝ Լի Մինը հասկացավ, որ ձկնորսի երեխան պետք է իր երեխայի նման ծնված լիներ և այն ամսի, և այն օրվա և այն ժամին: Նա լի էր հետաքրքրությամբ:

«Ձկնորսի երեխան ո՞րք է»:

«Իհարկե», - խմբով ասացին բոլորը:

«Տղա՞ է, թե՞ աղջիկ», - Լի Մինը մտածեց, որ երեկ սեռը տարբեր էր:

«Տղա է», - պատասխանեց ծերունի Վանը:

«Չէ՛, աղջիկ է, - հավելեց ծերունի Չանգը: - Հայրը շատ տխուր էր: Պետք է որ աղջիկ լինի»:

Լի Մինը նայեց Չունգ Ֆուին, թե նա կհաստատի՞ արդյոք, բայց պատասխանն անօգուտ էր:

«Ինձ թվում է՝ լսել եմ, որ տղա էր, բայց չփորձեցի տեսնելով համոզվել»:

«Այո, տղա է, - արձագանքեց ծերունի Վանը: - Հայրը դժբախտ էր, որովհետեւ երեխա ունենալու համար միջոցներ չուներ»:

«Համոզվա՞ծ ես, որ տղա է», - հարցրեց Լի Մինը: Բայց ոչ ոք համոզված չէր, երբ տեսան, որ տանտերն այդքան մեծ կարեւորություն էր տալիս իրենց ասածի ճշգրիտ լինելուն:

Հասկանալի է, որ Լի Մինը զայրացած էր. «Անպետք տխմարների խումբ եք»:

«Թերեւս գնամ այնտեղ եւ պարզեմ Ձեզ համար», - ծերունի Վանը միշտ ուզում էր գոհացնել տիրոջը:

Լի Մինն անվճռական հայցքով նայում էր, երբ նրա աննրբանկատ եղ-

բայրը հանդգնություն ունեցավ նորից մտնելու միջևսարահ: Բայց Լի Կանը լրիվ մոռացել էր իրենց փոքրիկ վիճաբանությունը, քանի որ այժմ իրեն հատուկ բարեսրտությամբ ասաց. «Այո, չորս հիմար հավաքվել են միասին: Ի՞նչ ես անընդհատ հարցումփորձ անում այս տխմար թշվառականներին, փոխանակ դիմես եւ տեղեկություն ստանաս այն մասնագետ անձից, որ տանն է»:

«Մասնագետ ասելով քե՞զ նկատի ունես»:

«Չէ: Բայց ինչու՞ չհարցնել մանկաբարձուհուն: Նա դժվար թե չիմանա, ես այդպես եմ կարծում»:

«Իհարկե,-մտածեց Լի Միլը: - Ինչպե՞ս չէի մտածել այդ մասին»: Նա նույնիսկ ավելի զայրացավ եղբոր, քան ծառաների վրա: Լի Կանը նկատեց անբարյացակամ հայացքը եւ բացատրեց. «Ինձ չի հետաքրքրում, թե ինչ ես ուզում իմանալ: Ես եկել էի, որ մանկաբարձուհուն ասեմ՝ ավելի լավ է իր ուշադրությունը կենտրոնացնի խեղճ մոր վրա, քան իզուր ժամանակ վատնի մեռած երեխայի վրա: Քո հրաշալի զոքանչը դեռ ուզում է փորձել հարություն տալու իր արվեստը»:

Վերջին բառերը շատ բարձր ասելով, այնպես, որ ներսի սենյակում գտնվող կանայք կարողանային ականջ դնել, նա կրկին հեռացավ դեպի տան իր բաժինը:

Լի Միլը թողեց ծառաներին եւ կանչեց մանկաբարձուհուն, որ տեղեկանա:

«Տղա՛ է: Շահո խոշոր տղա: Ես միշտ տղաներ եմ աշխարհ բերում».- ասաց կինը:

«Իրո՞ք նրանք շատ վատ վիճակում են»:

«Նրանք նավակով ձկնորսությամբ են զբաղվում, ապրում են իրենց նավակում եւ հազիվ են ծայրը ծայրին հասցնում: Հիմա շարժվում են դեպի Բո-Յան մեծ լիճը, քանի որ գետի այս մասում բավականին ծուկ չկար, որպեսզի կերակրվեին: Երկինքն իսկապես կու՛յր է: Այդքան աղքատ ու թշվառ ձկնորսին առողջ որդի է պարգևում, միևնույն ժամանակ ուսկով ու արծաթով լի այս վեհաշուք առանձնատանը երիտասարդ տերը պետք է մահանա՝ թողնելով այն բարեկեցիկ ու ծաղկուն կյանքը, որ սպասում էր իրեն: Դե լավ, համոզված եմ, որ մյուս տարի այս ժամանակ նորից կգամ, որպեսզի ավելի բախտավոր փոքրիկ տանտեր աշխարհ բերեմ»:

Երբ մանկաբարձուհուն կրկին սենյակ կանչեցին, Լի Միլը վեր բարձրացավ դեպի իր աշխատասենյակ եւ նորից ետ իջավ միջևսարահ՝ խիստ մտախոհ ու ինքն իրեն քրթմնջալով: Նա զարմանում էր, թե ինչու՞ ձկնոր-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

սը, որ ոչ մի կամուրջ չէր կառուցել, որդի է պարգև ստանում, միևնույն ժամանակ, որ այդքան բան էր արել բարեգործության համար, միայն մտած երեխա է ունենում: Լի Մինը կուզեր քանդել այդ խղճով կամուրջը: Այն մեծ հույսը, որ ամիսներ շարունակ փայփայել էր, ի դերու ելավ: Նա անընդհատ կրկնում էր. «Այս ի՛նչ սոսկալի օր էր, սոսկալի օր»:

Լի Մինը դուրս ելավ տնից և մռայլ հայացքով նայեց երկնքին: Արեւի լույսն ավելի ու ավելի էր նվազում և ի վերջո լրիվ խավարեց: Շուտով նա տեսավ, որ սեւ ամպերն ամբողջովին ծածկեցին երկինքը: Ինչքան շատ էր մտածում կորցրած որդու մասին, այնքան շատ էր նախանձում ձկնորսին: Դուրս քայլելով գյուղից՝ նա կանգնեց ճանապարհին, բարձրադիր մի վայրում և սեւեռուն հայացքը հառեց ոչ այնքան հեռվում գտնվող Կամրջին: Ամառային պարզ օրերին փոքր-ինչ աղոտ հևարավոր էր տեսնել Կամրջը և Մեյ ընտանիքի գետնացման գյուղը: Գետի դեղին ցամաքալեզվակներն այդպիսի եղանակին փայլում էին արեւի տակ: Բայց այսպիսի օրը նա ընդհանրապես ոչինչ չէր կարող տեսնել: Դանդաղ քայլելով ճանապարհի երկայնքով՝ նա շուտով տեսավ, որ մոտենում է կամրջին: Բարեգործության այդ արգասիքը, որ միշտ շատ գրավիչ ու գեղարվեստական տեսք ուներ Լի Մինի համար, այժմ մի ողորմելի բան էր երևում նրա աչքին, և նա ատում էր այդ տեսարանը: Նա լսեց որոտի հեռավոր ձայնը և ցանկություն ունեցավ, որ կամուրջը քարուքանդ լիներ կայծակի հարվածից: Երբ հայացքն ընկավ ձկնորսի միայնակ նավակին, որ կապված էր Կամրջի տակ, հանկարծ մի որոշման հանգեց: Ինքը փող ուներ, ինչից զուրկ էր ձկնորսը, իսկ ձկնորսը երեխա ուներ, որը բեռ էր իր ծնողների համար, բայց հենց այն էր, ինչ տեսնում էր իր սիրտը: Հարավոր էր գալ այնպիսի պայմանավորվածության, որ կբավարարեր երկու կողմերին էլ: Նա զգուշորեն ծանուրթեթեւ արեց, կրկնեց ձկնորսի հետ լավ գործարք կնքելու վերաբերյալ իր բառերը և ափով ցած իջավ ուղիղ դեպի նավակը: Նախքան նավակ բարձրանալը նա մտքում դրեց՝ որպես սկիզբ տասը հազար կտորից ավելի կանխիկ վճար չտալ տղայի համար: Եթե նրանք իրոք այդքան վատ վիճակում են, ինչպես մանկաբարձուհին էր պնդում, ապա հավանաբար ութով էլ կարող է ձեռք բերել երեխային: Իսկ եթե ձեռացնի, թե այդքան էլ շատ չի ձգտում երեխային, ապա կարող է նրանց համոզել, որ վեցը վերցնեն: Սակայն վնաս չի լինի, եթե երեխայի մոտ ինչ-որ թերություն նկատի էր առաջարկի միայն չորսը: Ի վերջո, ինքը պետք է գործարքն սկսի՝ առաջարկելով երկու հազար: Այսպես վճռելով՝ նա բարձրացավ նավակ և ձեռացրեց, թե շնորհավորում է երջանիկ ծնողներին՝ իրենց ընտանիքի

ընդայնման համար: Ողջույներին հաջորդող՝ ժամանակի դժվարությունների մասին ակնարկներով Լի Մինս արագ անցավ իր ուզած թեմային: Նա ձկնորսին նրբանկատորեն հայտնեց իր մտադրության եւ վաճառքի պայմանների մասին: Նա ավարտեց իր երկար եւ խնամքով նախապատրաստած խոսքը՝ ասելով. «Քո եւ կնոջդ համար մեծ թեթեւություն կլինի, իսկ երեխայիդ համար սքանչելի հնարավորություն,- հիշիր, տղան, ի վերջո, ձեր միսն ու արյունն է, չնայած դուք նրա պահանջը պետք է որ ամենեւին չունենաք,- եւ ես... եւ ես... ես կարծում եմ կկարողանամ ձեզ կանխիկ երկու հազար տալ... բայց ոչ ավելին: Սա իմ հաստատուն եւ վերջնական առաջարկն է»:

Իր սուր աչքերով նա փնտրեց նավակի ինքնաշեն փոքրիկ խցիկը եւ գիտեր, որ ձկնորսն ու նրա կինը փաստորեն այս աշխարհում ուրիշ ոչինչ չունեին երեխայից ու նավակից բացի: Մայրը պառկած էր չոր տախտակների խցիկի վերին մասում, եւ անթիվ կարկատաններով, բայց խնամքով լվացված մի սավան ծածկում էր նրան ու երեխային: Լի Մինը զարմացավ, թե ինչպե՞ս է, որ նրանք ցրտից չեն դողում այդպիսի սառնաշունչ առավոտյան այդքան քիչ անկողնու պարագաներով, որ չէին կարող նրանց պաշտպանել ցրտից: Նա չհամարձակվեց որսալ կնոջ հայացքը, քանզի կարծում էր, որ կանայք միշտ շահագրգռված են գործարքին վերաբերող հարցերով: Եվ գիտեր, որ կնոջ աչքերն արցունքներով էին լի: Երկնային Տեր: Եթե նա սկսեր բարձրաձայն հեկեկալ, ինքն ստիված կլիներ ավելին վճարել: Նա խնդրող հայացքով նայեց ամուսնուն եւ վերջապես որոշեց ամեն անգամ իր առաջարկությունն ավելացնել հինգ հարյուրով:

Ձկնորսը զարմացել էր այդ հարուստ մարդու ներողամիտ վերաբերմունքից, երբ նա իրեն էր դիմում, եւ այժմ ապշած էր այդպիսի անսպասելի առաջարկ լսելով: Նա բառեր չէր գտնում պատասխանելու: Լի Մինը դա ընդունեց որպես անհամաձայնության նշան: Սակարկելիս ամենալավ քաղաքականությունն այն է, որ երբեք առաջարկածդ գումարը չավելացնես շատ արագ, այլ սպասես, որ դիմացինդ ինքն իրեն բացահայտի: Լի Մինն սպասեց եւ անշտապ ասաց. «Կանխիկ երկու հազարը մեծ փող է: Նույնիսկ տքնաջան աշխատելով՝ մարդ հազվադեպ է մի քանի ամսում այդքան մեծ գումար վաստակում: Ես ձեզ այդքան շատ եմ առաջարկում, որովհետեւ ուզում եմ, որ անմիջապես այստեղից հեռանաք ձեր նավակով եւ այլևս երբեք չգաք այս կողմերը: Ձեր ներկայությունն այստեղ ոչ մի լավ բան չի բերի ո՛չ ձեզ, ո՛չ էլ երեխայի համար: Հուսով եմ, կհասկանաք, թե ինչ եմ ուզում»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Ձկնորսը նայեց կնոջը, և Լի Մինը հուսահատ հայացքը մի կողմ փախցրեց: Բայց կինը պատրաստակամ տվեց իր լուռ համաձայնությունը, և ամուսինն ասաց. «Դուք իսկապես մեծ բարերար եք, որ մեր դժբախտության մեջ մեզ օգնություն եք առաջարկում: Մենք հավետ երախտապարտ կլինենք, և թող Երկինքն օրհնի Ձեզ: Իհարկե, ինչ ասում եք, մենք ընդունում ենք»:

Այս խոսքերն ասելիս նա շարունակաբար խոնարհվում էր Լի Մինին:

Կաշկանդված պատասխանելով խոնարհումի նրա ողջույների՝ Լի Մինն իրեն դժբախտ զգաց և սաստիկ ամաչեց: Նա ամաչեց ոչ այն բանի համար, որ ավելի չէր առաջարկել, այլ որ կանխիկ երկու հազար էր վատնել: Ինչու՞ այս գործում մի քիչ ավելի խելամիտ չգտնվեց: Այժմ նա պարզորոշ հասկացավ, որ աղջիկները, որպես կանոն, ավելի արժեն, քան տղաները: Աղջիկներն ավելի օգտակար էին և, հետևաբար, ավելի շատ պահանջարկ ունեին, քան տղաները, որոնք դժվարությամբ էին վաճառվում: Քանի որ հենց նոր էր կորցրել որդուն և շտապ փնտրում էր նրան փոխարինող մեկին, նրա մտքով միայն անցնում էր, որ տղա վաճառողները խիստ հազվադեպ են, միևնույն ժամանակ ևս պետք է հասկացած լիներ, որ ապագա որդի գնողներն էլ ավելի հազվադեպ են:

Բայց Լի Մինն ազնվաբարո մարդ էր: Կնքված գործարքը պետք է պահպանվեր: Նա ծնողներին վճարեց երկու հազարը թղթադրամներով՝ առանց պարտավորությունից դուրս իսկ խոյս տալու: Երբ ձկնորսը վերցրեց երեխային, որ փաթաթված էր հնամաշ շորի կտորով, և հանձնեց բարերարին, մայրն այնպես հեկեկաց, ասես սիրտը հիմա պատռվելու էր: Լի Մինն ուրախ էր, որ ամեն բան ավարտվեց, և նավակից շատ արագ հեռացավ: Քանի որ անձրեւ էր գալիս, հայրը Լի Մինին հնդկեղեգի տերեւներից պատրաստված անջրանցիկ մի գլխարկ տվեց: Գետափին կանգնած՝ Լի Մինը նայում էր, թե ինչպես է ձկնորսը քանդում պարանը և թիավարում հոսանքն ի վար: Երբ նավակն աստիճանաբար անհետացավ, Լի Մինը դանդաղ շարժվեց դեպի տուն: Բարակ անձրեւ էր մաղում, բայց երկինքը դեռ մութ էր, և ողջ գյուղը պարուրված էր լուռությամբ, միայն իր ոտնաձայներն էին լսվում և մեղմ քամու շնչից սվավացող ճամփեզրի տերեւների ձայնը:

Տուն հասնելով՝ Լի Մինը խիստ զարմացավ՝ տեսնելով, որ բոլորն ասես գիտեին, որ ինքը որդի է ձեռք բերել: Ծերունի Վանն առաջինն էր, որ շնորհավորեց նրան, և մեկը մյուսի ետեւից բոլոր ծառաները, որոնց նա հանդիպեց միջնասենյակի ճանապարհին, խոնարհվեցին ու ասացին

միեւնույն բանը: Նա նայեց իր ձեռքի փոքրիկ բարուրին եւ զարմացավ, թե ինչպէս բոլորն իսկույն իմացան, որ իր բերածը տղա երեխա է: Շորի կտորը բավականին թաց էր: Նա քայլել էր քամուն հակառակ, եւ անջրանցիկ գլխարկը չոր էր պահել միայն իր գլուխը:

Տիկին Վուն դուրս ելավ սենյակից եւ բացականչեց. «Շնորհավորանքներս, Մին: Այնքան ուրախ եմ, որ տղայի երջանիկ հայր ես վերջապէս»:

Նախքան Լի Մինը ժամանակ կգտներ նրան ինչ-որ բան պատասխանելու, նա գլխով նշան արեց Կապույտ Սարգարիտին, որ առաջ գա եւ բերի մի մեծ բարուր՝ ինամքով փաթաթված բամբակե վերմակով, որի մեջ փոքրիկ մի երեխա էր քնած:

«Որտե՞ղ էիր այս ամբողջ ժամանակ: Ամեն տեղ թեզ էինք փնտրում, եւ ասացին, որ հավանաբար դուրս ես եկել: Ի՞նչ էիր անում այս անձրեւին: Լրիվ թրջվել ես: Այդ ի՞նչ է ձեռքիդ»:

Նրա հարցերին ուշադրություն չդարձնելով՝ Լի Մինն շտապեց հարց տալ.

«Երեխան վերակենդանացե՞լ է»:

«Ո՛չ: Կինդ երկվորյակ է ունեցել: Առաջինը մահացավ, ինչպէս գիտես, բայց երկրորդը ծնվեց ժամը տասին»:

Կապույտ Սարգարիտը նրա մոտ բերեց երկրորդ երեխային, եւ նա այժմ հասկացավ՝ քանի որ իր թաց բարուրը փոքր էր եւ ինքն այն ոչ այնպէս էր պահում, ինչպէս պահում են երեխային, ոչ ոք չէր մտածել, որ դա երեխա է: Նա բարուրն ավելի ցած բռնեց եւ թեք պահեց այնպէս, որ երեխայի գլուխը հենվեց իր թեւին: Մի փոքր բացելով բարուրի վերեւի մասը՝ նա համեմատեց ձկնորսի տղային իր որդու հետ: Երկուսն էլ սարսափելի տեսք ունեին՝ կնճռոտ դեմքերով եւ ամուր փակված աչքերով: Բայց մինչ իր երեխան հանգիստ քնած էր, ձկնորսի որդին, որ շատ ավելի մեծ էր, բացեց իր տգեղ բերանը եւ սկսեց բարձրաձայն լաց լինել: Տիկին Վուն սարսափած էր եւ պահանջեց բացատրել, թե ինչ է նշանակում այս ամենը:

«Ես այս երեխային բերեցի իմ կորած երեխային փոխարինելու համար՝ չիմանալով, որ մեկ ուրիշն է աշխարհ գալու...»:

«Հափչի՛, հափչի՛»,- փռշտաց նրա սեփական երեխան, որը նույնպէս սկսեց լացել ցածր ու քաղցրաձայն:

«Թաց բարուրից փչող ցուրտն իմ սիրելի փոքրիկին մրսեցրեց: Անմիջապէս ներս տար կրտսեր տանտիրոջը, Կապույտ Սարգարիտ»:
Շրջվելով Լի Մինի կողմը՝ տիկին Վուն խիստ ու անողոք ասաց. «Չգիտեմ որտեղից ես վերցրել այդ ապօրինի ծնունդին, բայց հիմա, երբ գիտես, որ ունես քո

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

սեփական ազնվագարմ որդին, ետ ուղարկիր դրան, որտեղից որ վերցրել էս»:

«Ո՛հ: Հիմա արդեն շատ ուշ է: Նրա ծնողները գնացել են: Ես ինքս եմ այդպես ցանկացել», - Լի Մինը զոչումով ու ցավով էր լի: Նա նման էր համրի, որը սխալմամբ դառը դեղահաբ է կուլ տվել: Նա կուզեր, որ կարողանար բացատրել, բայց ստիպված էր լռել եւ ընդունել ամբողջ մեղքը:

Չնաստանում մի այսպիսի ավանդույթ կա. երջանիկ ընտանիքը երեխայի ծնունդը հայտնելու համար բարեկամներին, հարեւաններին ու աղակականներին ուղարկում է հսի-տան կամ «երջանկության հավկիթներ»: Դրանք հավի կամ բադի ձվեր են՝ կարմիր ներկված, իսկ դրանց քանակը ցույց է տալիս նորածնի սեռը: Ցանկացած կենտ թիվ, սովորաբար երեքից մինչեւ տասնմեկը՝ կախված ծնողների հնարավորությունից, ցույց է տալիս, որ երեխան տղա է, իսկ զույգ թիվը, երկուսից մինչեւ տասը, ասում է, որ ծնվողն աղջիկ է: Քանի որ տիկին Վուս ենթադրել էր, որ իր թոռան սեռը պետք է թաքցվի, եւ նա պետք է ներկայացվի որպես աղջիկ՝ չար ոգիների նախանձոտ աչքից խուսափելու համար, կարգադրվել էր, որ տասը հսի-տան կարմիր ուղարկվեր յուրաքանչյուր ընտանիքի: Նրա փեսան ոչ մի առարկություն չունեցավ այդ թվի դեմ, քանի որ իր մտադրությամբ՝ դա նշանակում էր երկու տղա՝ յուրաքանչյուրի համար հինգ հավկիթ: Նա հայտարարեց, որ ձկնորսի որդին պետք է փոխարիներ իր առաջնեկին, եւ ճանաչվեր որպես Տա-Շյաո-Յա կամ «առաջին կրտսեր տանտեր», մինչդեռ իր սեփական որդին Էրի-Շյաո-Յա էր կամ «երկրորդ կրտսեր տանտեր»:

Երբ պատգամաբերներն ուղարկվեցին գյուղում բաժանելու հսի-տանը, նրանք լուրը տարածելու մի քանի տարբերակ ունեին: Ըստ տիկին Վուս ծառաների, որոնք հետեւում էին նրա հրահանգներին, աղջիկ երեխա էր ծնվել, իսկ ըստ Լի Մինի ծառաների, որոնք պետք է հնազանդվեին իրենց տիրոջը, ծնվել էին երկվորյակ տղաներ, որոնցից առաջինն ի վերջո վերակենդանացել էր: Բայց այդ պատգամաբերներից յուրաքանչյուրն ազատորեն իր սեփական տարբերակն էր ներկայացնում, որոնք տարբեր էին երկու պաշտոնական հայտարարություններից: Սակայն երբ հայտնի դարձավ, որ երկու ստնտու են վարձել, այլեւս կասկած չմնաց, որ Լի Մինի ընտանիքում երկվորյակ երեխաներ են ծնվել: Սարդիկ փառաբանում էին Երկնքի արդարությունը եւ ասում, որ դա կամուրջը վերակառուցելու շնորհիվ է: Այդ լուրը դարձավ գյուղի խոսակցության առարկան, եւ բազմաթիվ այցելուներ էին գալիս տեսնելու Երկնային կամուրջը:

Քաղաքից մի կույր բախտագուշակի էին բերել, որ քննի երեխաների

Ճնունդը, քանի որ եւ՛ տիկին Վուն, եւ՛ Լի Մինը հավատում էին բախտագուշակությանը մարդուն բնութագրող «ուր նշանների» միջոցով, որոնք են՛ մարդու ճննդյան ժամը, օրը, ամիսը եւ տարին: Կույր մարդն ասաց, որ առաջին կրտսեր տանտիրոջ ճնունդը շատ տարօրինակ ճնունդ է: Ծնված լինելով Կուանգ Սյուի իշխանության 6-րդ տարվա 3-րդ լուսնի 13-րդ օրվա առավոտյան ժամը 8-ին, փաստորեն նշանակում էր ծնված լինել վիշապի ժամին, վիշապի օրը, վիշապի ամսին եւ վիշապի տարում: Հանկարծ կույրը հարցրեց. «Տեր իմ, արդյո՞ք երեկ առավոտյան գյուղում հորդ անձրեւ էր գալիս»:

«Այո,- պատասխանեց Լի Մինը:- Բայց ինչու՞»:

«Առաջին կրտսեր տանտերը ոսկե վիշապ է, որ Երկնքից է եկել, տեր իմ: Առանց ջրի, տեր իմ, նա հավանաբար չէր կարող ապրել, տեր իմ: Երեկ առավոտյան ժամը ութին, տեր իմ, այստեղ պետք է որ հորդ անձրեւ տեղացած լինի, տեր իմ»:

Լի Կանը նույնպես այդտեղ էր, իսկ նա բախտագուշակներին խաբեքա էր համարում: Այդ մարդուն ծաղրելու համար նա ասաց. «Հիշում եմ, որ ժամը ութին դեռ լավ եղանակ էր: Երբ ճայթռուկները գցեցին գետնին, մայթերը կատարելապես չոր էին, այլապես դրանք չէին պայթի»:

«Սխալվում ես,- միջամտեց տիկին Վուն, որը չէր ուզում, որ ասեկոսուներ տարածվեն:- Երբ Մինը ներս մտավ, լրիվ թրջված էր»:

«Ես երբեք չեմ սխալվում, տեր իմ: Չէր կարող չոր լինել: Եթե տղայի շուրջն ամենուր ջուր չլիներ, տեր իմ, նա չէր կարող կենդանի ծնվել, տեր իմ»:

Լի Կանը կասկածանքով նայեց եղբորը: Լի Մինը որոշեց թողնել, որ դա անցնի: Նա գիտեր, որ անձրեւ չէր սկսվել մի քանի ժամ երեխայի ծնվելուց հետո: Իր սեփական որդին մահացել էր, իսկ ձկնորսի որդին իսկապես շրջապատված էր ջրով: Այդ կույր մարդն այնքան մեծ տպավորություն էր գործել նրա վրա, որ նա ուզեց իմանալ, թե ինչ է անելու տղան ապագայում եւ երբ է մահանալու:

«Վիշապը, բնականաբար, քանդում է Երկինքն ու ցնցում է Երկիրը, տեր իմ, եւ մեռնում է, երբ ժամանում է մի վայր, որտեղ պետք է ջուր լիներ, բայց իրականում ոչ մի կաթիլ ջուր չկա, տեր իմ»:

«Ի՞նչ վայր է դա», - հարցրեց Լի Կանը:

«Միայն երկինքը կարող է ձեզ ասել, տեր իմ»:

«Իսկ ի՞նչ կասես երկրորդ կրտսեր տանտիրոջ ճննդի մասին», - տիկին Վուն ավելի շատ մտահոգ էր իր իսկական թոռան, քան ձկնորսի տղայի համար:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Ժամը տասը օձի ժամն էր, տեր իմ: Նա ունի վիշապի գլուխ, բայց օձի պոչ, տեր իմ: Նա շատ ավելի հեշտ կյանք կունենա, տեր իմ»:

«Իսկ վախճա՞նը»,- կատակով հարցրեց Լի Կանը:

«Կմեռնի փոսի մեջ, տեր իմ»:

«Ես դա չեմ հասկանում»:

«Ես նույնպես, տեր իմ: Բայց այդպիսին է Երկնքի վճիռը, տեր իմ: Ժամանակը կբացատրի մեզ, տեր իմ»:

Լի Մինը պարզեատրեց բախտագուշակին շատ ավելի շոայլորեն, քան սովորաբար անում էր:

Չունգ Ֆուին ուղարկեցին քաղաք՝ հրավիրելու տիկին Վուի որդուն եւ հարսին, որպեսզի մասնակցեն խնջույքին, որ տրվելու էր ծննդյան երրորդ օրը: Այդպիսի իրադարձությունը կոչվում է երեխայի «երրորդ լոգանք»:
Երբ նա ետ եկավ գյուղ, բերեց բախտավոր ծնողներին հղված շնորհավորական ուղերձ եւ մի նամակ տիկին Վուին: Այն գրված էր հարսի կողմից, եւ վերջինս այդ նամակում տիկին Վուին ասում էր, որ իր ամուսինը այդ նույն առավոտյան անհետաձգելի գործով մեկնել է Շանհայ: Նա ոչ միայն չէր ցավում, որ չի կարող մասնակցել այդ երջանիկ իրադարձությանը, այլ նաեւ ցանկանում էր, որ սկեսուրը քաղաք վերադառնա որքան հնարավոր է շուտ: Լինելով անփորձ երիտասարդ կին՝ նա ի վիճակի չէր միայնակ հոգալու մեծ տան բոլոր ծանր հոգսերը:

Տիկին Վուն գտավ, որ առայժմ հնարավոր չէ մենակ թողնել իր դստերը խնամքի ենթակա երկու փոքրիկ երեխաների հետ: Քանի որ Լի Մինը ժամանակ առ ժամանակ ստիպված էր քաղաք գնալ, տիկին Վուն խնդրեց նրան, որ իր տունը նա համարի իրենը եւ այն դարձնի քաղաքում կենտրոնական աշխատասենյակ, այնպես որ կարողանար օգնել իր երիտասարդ հարսին, երբ որեւէ դժվարություն առաջանար: Լի Մինը պատրաստակամորեն համաձայնեց դա անել, քանի որ պատահում էր, որ նա ստիպված էր լինում քաղաքում մնալ երկու կամ երեք օր, եւ իր զոքանչի հյուրընկալության առաջարկը փրկում էր նրան հյուրանոցային շատ ծախսերից: Երեխաների Երրորդ լոգանքի առիթով տրված խնջույքին ներկա էին Լի ընտանիքի գյուղի բոլոր բնակիչները: Քանի որ ամեն բան կառավարում էր տիկին Վուն, Լի Մինը խնայողության ոչ մի հնարավորություն չունեց: Գյուղացիներն իրենց հետ գործնականորեն անարժեք նվերներ էին բերել երեխաների համար, եւ փոխարենը անկեղծորեն հյուրասիրվեցին առատ ճաշկերույթով: Լի Մինն ասում էր, որ ինքը դեմ չէր, որ փող էր ծախսվել այդ գեղջուկներին կերակրելու համար, բայց նա սկզբունքորեն խիստ դեմ էր

շռայլությանը: Փոխանակ տանը մնալու եւ տեսնելու, թե ինչպես է քաղցած ամբոխն ուտելիքը խժռում, ևս որոշեց հեռու մնալ իր տնից՝ մի քանի օրով քաղաքում հապաղելով, որպեսզի մոռանա փողը զուր վատնելու այդ սրտակեղեք ծելը:

Լի Կանին, որ հայտնի էր որպես վերին աստիճանի անօգուտ անձնավորություն, բացի գրական հարցերից, խնդրեցին տղաներին անուն դնել: Եւ որոշեց, որ մեծ տղայի անունը կլինի Տա Տունգ, որ նշանակում է «Մեծ Ներդաշնակություն»: Դա նմանեցված էր իր որդու՝ Տա Յուի անվանը, որ նշանակում էր «Մեծ Բերքահավաք»: Կրտսեր տղային ևս տվեց Շիաո Մին անունը, որ այլ կերպ՝ կնշանակեր «Փոքրիկ Պայծառություն» կամ «Կրտսեր Մին (Պայծառություն)», եւ ցուցանում էր, որ դա Լի Մինի որդին է: Ասված է, որ ծնողներ չունեցող երեխայի համար Երկինքն է հոգ տանում: Սա անվազն ճշմարիտ էր Տա Տունգի դեպքում, որին ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, եւ նույնիսկ ստնտուն էր տուժում նրա պատճառով: Օրինակ, թեեւ երկու ստնտունների հանդեպ պետք է հավասար վերաբերմունք ցուցաբերվեր սննդի եւ հագուստի հետ կապված, ևս, ով խնամում էր Շիաո Մինին, սովորաբար իր ամանի հատակին՝ բրնձի տակ թաքցրած հավկիթներ կամ մսի կտորներ էր գտնում: Տա Տունգի ստնտուն զարմանում էր, թե ինչու է գործընկերուհին միշտ ժպտում իր բրնձն ուտելիս: Բայց դա արդար էր: Քանի որ Շիաո Մինը թույլ ու փխրուն երեխա էր: Եւ պետք է ավելի լավ խնամք ստանար եւ ավելի սննդարար կաթ: Իր ծննդյան օրից Շիաո Մինը տուժել էր թեթեւ մրսելուց, որ ստացել էր Տա Տունգից, որի թաց շորն էր չարիքի պատճառը: Շիաո Մինի ստնտուն շատ հնազանդ ու պարտաճանաչ կին էր, եւ չնայած տառապում էր ստամոքսի մշտական խանգարումից, բայց երբեք մեկ րոպե անգամ անուշադրության չէր մատնում երեխային: Անկախ նրանից, թե ուր էր գնում, միշտ Շիաո Մինին տանում էր իր հետ: Իհարկե, մայրն ու տատն էլ էին սիրում փաղաքշել երեխային իրենց գրկում: Նույնիսկ սպասուհիներն ու աղախիներն էին խենթանում նրա համար: Նրա թեթեւ հագը եւ փռշտոցը միշտ պատճառ էր դառնում, որ տարբեր բժիշկների կանչեին տուն, եւ չէր անցնում մեկ օր իսկ, որ ընտանիքի անդամներից որեւէ մեկը աստվածների կողմից չմատուցվեր թանկագին փոքրիկ հովանավորության ու պաշտպանության համար: Նրան տալիս էին բոլոր տեսակի կազդուրիչ միջոցներ, եւ ցերեկվա բոլոր ժամերին ու գիշերը տարբեր ժամերի մի շարք բուժումների էր ենթարկվում: Եվ սակայն բոլոր այդ կազդուրիչ միջոցները, բուժումներն ու աղոթքները շատ քիչ արդյունք էին տալիս: Թանկագին փոքրիկը կմախքի պես կիհար

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

Եր, մինչդեռ մյուս երեխան եզան պես առողջ էր:

Քանի որ Շիաո Մինն այդքան շատ խնամք էր պահանջում, տիկին Վուն ստիպված էր գյուղում շատ ավելի երկար մնալ, հատկապես երբ պատահում էր, որ Լի Մինն այդքան էր շատ զբաղված լինում քաղաքում: Քանի որ նա հաճախ էր մնում զոքանչի տանը, տիկին Վուն կարծում էր, որ անհանգստանալու կարիք չունի իր տան համար եւ միանգամայն հանգիստ էր դատեր տանը:

Երբ երեխաները մեկ ամսական էին, մի փոքրիկ խնջույքով տոնեցին դա: Երկվորյակներն այդ ժամանակ բոլորովին տարբեր էին, Տա Տունգը երկու անգամ մեծ էր Շիաո Մինից: Բոլոր այցելուները գիտեին երկվորյակների գաղտնի պատմությունը, եւ նրանց մեծ մասը թմբիկ երեխային շփոթմամբ ընդունում էր որպես ընտանիքի իսկական որդու: Ստաճելով, որ իրենք հավանաբար չեն կարող սխալված լինել մոր եւ երեխայի այդքան ապշեցուցիչ նմանությամբ, եւ որ կմախքը չէր կարող լինել այլ ոք, եթե ոչ քաղցի մատնված ձկնավաճառ կնոջ երեխան, բոլորը միահամուռ գտան, որ մեծ տղան անհամեմատ ավելի սիրելի է, քան մյուս վտիտ երեխան, եւ հուսով էին, որ ճիշտ բան են ասել: Լի Կանը միակ մարդն էր, որ անկեղծորեն բավականություն ստացավ այդ կատակից:

Տիկին Վուն մնաց մինչեւ Վիշապի նավակի տոնի ավարտը, որն ամեն տարի համընկնում է 5-րդ լուսնի 5-րդ օրվան, եւ ապա մինչեւ Միջաշնանային տոնը, որ համընկնում է 8-րդ լուսնի 15-րդ օրվան: Իրոք, նա կմնար մինչեւ Նոր տարի, եթե նրա որդին չվերադառնար 9-րդ լուսնի ավարտին, երբ նա ստիպված էր վերադառնալ տուն: Բարեբախտաբար, դրանից հետո Լի Մինն այնքան զբաղված չէր քաղաքում եւ երբեք իր տնից հեռու չէր մնում գիշերները: Այնպես որ՝ ամեն ինչ պարզապես շատ լավ դասավորվեց:

Հաջորդ տարվա վաղ գարնանը Լի Մինը պատրաստություն տեսավ հրավիրելու իր զոքանչին, որ մեկ անգամ էլ գա եւ մնա գյուղում երեխաների առաջին ծննդյան օրվա կարետր առիթով: Ի մեծ զարմանս նրա՝ տիկին Վուն արտահայտեց իր ափսոսանքը, որ ամենեւին չի կարող մնալ գյուղում, թեեւ համաձայնեց գալ ընդամենը մեկ օրով: Նրա հարսը երեխայի էր սպասում 5-րդ լուսնի ավարտին, այդ պատճառով էլ նա հաջորդ մի քանի ամիսներին չէր կարող թողնել հարսին: Այս լավ լուրը նույնպես մեծ անակնկալ էր բոլորի համար: Ոչ ոք երբեւէ չէր կարծում, որ «Վու ընտանիքի անառակ որդին», ինչպիսի մականունով կնքել էին պարոն Վուին իր բոլոր ազգականները, կարող էր երեխա ունենալ:

Իր ծննդյան առաջին տարեդարձի օրը երեխան հանդիսավոր պարտավորություն ունի կատարելու: Նա ինքը պետք է ընտրի իր մասնագիտությունը: Այս ավանդական արարողությունը կատարվում է երեխայի առջև մի մեծ սկուտեղ դնելով, որի մեջ դրված է յոթանասուներկու ազնիվ մասնագիտությունների գործիքների մեծ մասը, եւ ինչ որ նա վերցնում է այդտեղից, համարվում է նրա ապագա գործունեությանը բնորոշ: Չնայած այս ծայրաստիճան սխալական միջոցին, երբեմն պատահում է, որ ընտրած իրն իսկապես համընկնում է մարդու կոչմանն ու զբաղմունքին, եւ այս ձեւը միշտ շատ տարածված սովորություն է ծնողների շրջանում: Պատճառը թերեւս հետեւյալն է: Երբ երեխային տալիս են տարատեսակ իրեր, որ ընտրություն կատարի, նա սովորաբար ընտրում է այն առարկան, որն իրեն բնագործար դուր է գալիս: Ավելին, ատաղձագործի երեխան, որ ամիսներ շարունակ տեսել է հորը սղոց կամ ռանդա գործածելիս, ամենայն հավանականությամբ կընտրի այդպիսի առարկաներ, մինչդեռ վաճառականի որդին հավանաբար կցանկանա համրիչը, քանի որ տեսել է իր հորը ամեն գիշեր դրանով հաշվարկներ անելիս: Երբ երեխան մեծանում է, եթե հետեւում է այն մասնագիտությանը, որ ընտրել է մոտ քսան տարի առաջ, դա կհիշեն նրանք, ովքեր տեսել են արարողությունը, եւ այդժամ լուրը կտարածվի ամենուր: Բայց եթե նրա մասնագիտությունը ոչ մի կապ չունի այն խաղալիքի հետ, որն ընտրել էր իր առաջին ծննդյան օրը, ապա ոչ ոք, իհարկե, ուշադրություն չի դարձնի դրա վրա:

Երբ իր առաջին ծննդյան օրը Շիաո Մինին առաջարկեցին գրավիչ առարկաներով լի սկուտեղ, տիկին Վուն, որ մի քանի ժամ տանն էր եղել, արդեն լիովին վերահսկում էր իրավիճակը: Նա ուշադիր գննել էր սկուտեղի վրայի ամեն առարկա եւ բացառել էր բոլոր այն իրերը, որոնք նրա կարծիքով պատկանում էին անցանկալի մասնագիտությունների: Կոնֆուցիական դասական գրականության հատորը, տիկին Վուի խիստ կարգադրությամբ, փաթաթված վառ կարմիր մետաքսի կտորով, ըստ այդմ ամենաաչքի ընկնող տեղն էր զբաղեցնում, իսկ դրա կողքին դրված էր մի մեծ վրձին-գրիչ: Տղան մի կողմ հրեց գիրքը եւ անգիտակցաբար վերցրեց գրիչը: Բոլորը ցնծագին բացականչեցին եւ ասացին, որ Շիաո Մինը փայլուն գիտնական ու հետեւաբար՝ մեծ մարդ է լինելու: Հանկարծ դայակը, որ պահում էր նրան իր գրկում, ճչաց: Բոլորը տեսան, որ տղան, ուշադրությունից դուրս մնալով, զցեց գրիչը եւ վերցրեց թուղթ կտրելու դասակն ու դրանով ուժեղ հարվածում էր դայակին: Բարեբախտաբար դա շատ բուրթ դանակ էր, եւ այն ուժով խլեցին նրա ձեռքից՝ մինչ նա բարձրաձայն ճիչով լալիս էր:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Շիաո Սինս ավելի լավ մսագործ է, քան գիտնական,- միամտորեն բացականչեց Լի Կանը:- Իսկ հիմա տեսնենք, թե ինչ է պատրաստվում ընտրել իմ Տա Տունգը»: Լի Սինի որդեգրած իր եղբորորդուն ևս սիրալիր «իմ» բառով էր դիմում, քանզի հայտարարում էր, որ տղան իր հովանավորյալն է:

Հուսալով, որ արարողությունն ինքը կվերահսկի, ևս սկստեղը վերցրեց մորից՝ այն տղային առաջարկելու մտադրությամբ: Բայց երբ ուշադիր աչքի անցկացրեց բազմապիսի առարկաները, տեսավ, որ շատ բաներ, որ սովորաբար ներառվում են այդտեղ, բացակայում էին, եւ բարձրածայն հայտարարեց, թե այդպես արդար չէ: Նա ասաց Կրկնակի Օրհնությանը, որ բերի իր մեկ կամ երկու գյուղատնտեսական գործիքներից, եւ շատ շուտով վերջինս վերադարձավ՝ նրա տնից բերելով մի մեծ թոխր եւ սհարկու տեսք ունեցող մի մանգաղ: Բոլորը ծիծաղեցին, բայց ևս պնդեց, որ առկա մանգաղը բավականին փոքր է, որպեսզի դրվի սկստեղի մեջ: Այն դրեցին սկստեղի մեջ, եւ ևս այդ ժամանակ սկստեղը թեքեց դեպի իր եղբորորդին: Տա Տունգն, առանց տատանվելու, վերցրեց մանգաղը եւ ուրախ թափահարեց այն: Լի Կանը հաղթական ժպտաց եւ ասաց. «Լա՛վ է, լավ է: Իմ Տա Տունգ : Բոլոր իրերի միջից դու ընտրեցիր իմ մանգա՛ղը: Հորեղբորդ պես կարգին հողագործ կդառնաս»:

Սկզբում բոլոր ներկաները շատ զարմացած էին տղայի տարօրինակ ընտրությամբ, բայց երբ լսեցին, որ Լի Կանն ինքն իրեն ներկայացնում է որպես կարգին հողագործ, տունը քիչ էր մնում փուլ գար պոռթկացող ծիծաղի թնայունից:

Տիկին Վուն այս անգամ իր խոսքի տերն եղավ եւ ետ վերադարձավ քաղաք այդ նույն կեսօրին, հենց որ խնջույքն ավարտվեց: Դրանից հետո մեկ ամիս էլ չէր անցել, որ քաղաքից պատգամաբեր եկավ՝ կարմիր հավկիթներով լի մի փոքրիկ զամբյուղով: Նա դրանք հավասար բաժանեց Լի Սինի եւ Լի Կանի միջեւ: Վերջիններս հաճելիորեն զարմացած էին՝ իմանալով, որ երեխան ծնվել է 4-րդ լուսնի 2-րդ օրը, իր ժամանակից գրեթե երկու ամիս շուտ: Նրանք հաշվեցին հավկիթները եւ տեսան, որ յուրաքանչյուրն ստացել է տասը հատ: Պատգամաբերին ասացին, որ իրենց շնորհակալություններն ու շնորհավորանքները փոխանցի իր տիրուհուն, եւ խնդրեցին վերջինիս չվհատվել, քանի որ շատ հայտնի մի ասացվածք կար.

«Շատ տղաների ապագա մայրը միշտ, որպես սկիզբ,
Աղջիկ է ծնում,- այդպես է լինում կյանքում,- ապա ևս
Դաստիարակում է եւ ամուսնացնում իր այդ աղջկան՝
Նախքան առաջին տղայի սրտին ևս զույգ կդառնա»:

Պարզվեց, որ տիկին Վուն չափազանց պատրաստ էր հենց միայն այդ խորհրդին հետեւելու, թեւեւ նա հետեւեց դրան խիստ տառաջիորէն: Նա փեսայի ետեւից մարդ ուղարկեց, եւ վերջինս իսկույն այցելեց նրան, հենց որ կարողացավ: Բայց փեսան զարհուրանքով տեսավ, որ զոքանչն ուզում է նորածին թռնուհուն, որի անունը դրել էին Լոտոսի Բուրմունք, նշանել իր որդու հետ: Թեւեւ մարդկանց մեծ մասը դա պատիվ կհամարէին Լի ընտանիքի համար, ու թեւեւ կատարվող նշանադրությունները, երբ նշանվող երկու կողմերը դեռ անչափահաս են, բնավ էլ արտասովոր մի բան չեն, շատ նշանադրությունների համար պայմանավորվում են նույնիսկ դեռ նախքան երկու կողմերի ծնված լինելը, - Լի Սինը, այլոց անհայտ ինչ-ինչ պատճառներով, այդ ամուսնությանն իր համաձայնությունը տալուն խիստ դեմ էր: Նախ՝ նա հայտարարեց, որ ինքը բավականաչափ հարուստ չէ՝ այդպիսի լավ ընտանիքից հարս տանելու: Դրան ի պատասխան տիկին Վուն ասաց՝ քանի որ իրենք հիմա նոր բարեկամություն են կնքում հին բարեկամության հիմքի վրա, այդպիսի հաճոյախոսություններն անտեղի են: Ապա Լի Սինն ասաց, թե քանի որ անունով Տա Տունգն է իր առաջնեկը, անարդար կլինէր այդ տղայի հանդեպ, եթե մյուսին առաջինը նշանէին: Դրան ի պատասխան տիկին Վուն հեզկանքով ծիծաղեց եւ ակնարկեց, որ իրեն ամենեւին չի հետաքրքրում ձկնորսի տղան: Վերջապէս Լի Սինը պնդեց, թե միշտ էլ անցանկալի է, որ առաջին զարմիկներն ամուսնանան: Բայց տիկին Վուն նրա ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ սա այն դեպքը չէ, որ սովորաբար անվանում են «միս ու արյան տունդարծ»։ Տղաներն իրենց հայրերին են նմանվում, իսկ աղջիկները՝ մայրերին: Եթե Լի Սինն աղջիկ ունենար, իսկ Լոտոսի Բուրմունքն էլ տղա լինէր, ապա իսկապէս դա վատ ամուսնություն կլինէր, քանի որ Լի Սինի դուստրը կնմանվէր իր մորը, իսկ տղան էլ կնմանվէր իր հորը, եւ ամուսնությունը կլինէր գրեթէ այնքան անպատշաճ, որքան եղբոր ու քրոջ ամուսնությունը:

Բնականաբար, տիկին Վուն հասավ իր ուզածին, եւ Լի Սինը տուն վերադարձավ ծանր սրտով: Նա կնոջն ասաց ամուսնության մասին: Վերջինս անչափ ուրախ էր, որ իր եղբոր դուստրը իր տղայի կինն է լինելու:

Երբ տիկին Վուն, ըստ սովորույթի, Լի ընտանիքին ուղարկեց Լոտոսի Բուրմունքի ծննդյան թվի եւ ամսաթվի տվյալները կարմիր թղթի վրա, փոխանակելու համար տղայի ծննդյան ամսաթվի հետ, որպէս նշանադրության խորհրդանիշ, Լի Սինն իսկապէս շվարեց եւ որոշ ժամանակ ապշահար նայում էր թղթին՝ առանց մի բան տեսնելու: Հանկարծ նա նկատեց, որ Լոտոսի բուրմունքը ծնվել է Կուանգ Սյուի 7-րդ տարվա 4-րդ լուսնի 2-րդ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

օրվա առավոտյան ժամը 10-ին, այսինքն՝ օձի տարվա օձի ամսի օձի օրվա օձի ժամին: Ղա մի արտասովոր համակցություն էր, որ ապշանքի մեջ քարացրեց Լի Մինին: Նա մարդ ուղարկեց կույր բախտագուշակի ետեւից եւ նրա համար կարողաց ութ նշանները՝ ասելով, որ աղախնի դստեր ծննդյան տվյալներն են: Աստղագուշակն ուշադրությամբ հաշվարկեց աղջկա ճակատագիրը եւ շարունակ գլուխն էր ճոճում: Իրականում նա եւս այնքան ցնցված էր ծննդյան այս արտասովոր տվյալներով, որ բացականչեց. «Ես պետք է շատ անկեղծ լինեմ Ձեզ հետ, տե՛ր իմ: Աղջիկը սարսափելի՛ է, անտանելի՛ է, սուկալի է՛, տե՛ր իմ: Ես երբեք սրանից ավելի վատ բան չեմ տեսել, տե՛ր իմ»:

Լի Մինը հանկարծակիի եկավ եւ ասաց. «Մի՞թե այդպես է: Շատ անհարմար բան է»:

«Կարիք չկա, որ ես մեկնաբանեմ, տեր իմ, բայց կարող եմ Ձեզ ասել նրա որոշ կորստաբեր «ակտիվ» հատկանիշների մասին: Նա ուներ «Մեծ կործանում», տեր իմ, ի հավելումս «ութ անհաջողությունների», տեր իմ... որոնցից միայն մեկը բավական է, որ ընտանիք կործանի, տեր իմ: Հետո նա ունի կանացի բոլոր արատները՝ «Դեղձի ծաղիկը», տեր իմ, որ նրան արտոնություն է տալիս միաժամանակ առնվազն երկու ամուսին ունենալ, տեր իմ, «Ավլող ցախավելը», տեր իմ, որ ավլում-սրբում է նրա երջանկությունը եւ մատնում նրան մշտատեւ աղքատության, տեր իմ, «Սգացող շրջազգեստը», տեր իմ, որ նշանակում է, որ նա այրիանալու է, տեր իմ, եւ «Սպիտակ վագրը», տեր իմ, որ նրան անգավակ է դարձնելու, տեր իմ»:

«Ռ՛չ,- բացականչեց Լի Մինը տագնապահար:- Հաստան՛ տ չի՛ կարող այդքան վատ լինել»:

«Այո, տեր իմ,- պատասխանեց բախտագուշակը:- Սա ամենավատ համակցությունն է, որ ես երբեւէ հանդիպել եմ երեսուն տարվա իմ գործունեության մեջ՝ որպես բանիմաց աստղագուշակ, տեր իմ: Սա խիստ արտառոց բան է, տեր իմ»:

«Համոզվա՞ծ ես, որ ինչ-որ տեղ չես սխալվել...»:

«Ոչ մի սխալ, տեր իմ»:

Հենց որ բախտագուշակին վարձատրեցին, եւ նա գնաց, Լի Մինը մեկ անգամ էլ հարցը քննարկեց իր կնոջ հետ: Վերջինս թեւեւ բավականին սնահավատ կին էր, բայց խիստ դեմ էր, որ գարմուխին իր ընտանիքից բացի մեկ այլ ընտանիքի անդամի հետ ամուսնանա: Եվ այնուամենայնիվ աղջկա «ակտիվ» հատկանիշները, ինչպես դրանք անվանեց կույր մարդը, բավականին սարսափելի էին, որպեսզի վախեցնեին ցանկացած մահկա-

նացուի: Կինը նույնքան դեմ էր, որ իր որդին վտանգի ենթարկվեր՝ ամուսնանալով այդպիսի բախտացույց ունեցող աղջկա հետ: Այդուհանդերձ, նա նույնքան հնարամիտ էր, որքան իր մայրը, եւ հրաշալի առաջարկություն արեց: «Ձերես ավելի լավ կլինի նրան ընդունել որպես Տա Տունգի հարսնացու, որը նույնպես ունի չափազանց տարօրինակ բախտացույց: Ղա մեզ թույլ կտա պահել մեր զարմուհուն մեր ընտանիքում, մյուս կողմից էլ կփրկի մեր որդուն կնոջ պատճառով դժբախտություն կրելուց»:

«Բայց մայրդ երբեք չի համաձայնի դրան: Նա ինքն ինձ ասաց, որ չի հետաքրքրվում ձկնորսի տղայով»:

«Ձիջիր նրան եւ թույլ տուր անի, ինչ ուզում է: Նա այս տարի վաթսուսինը տարեկան է, իսկ ամուսնությունը տեղի չի ունենա մինչեւ Լոտոսի Բուրմունքի տասնութ տարեկան դառնալը: Մայրս չպետք է իմանա մեր այս պայմանավորվածության մասին: Ես առանձին կխոսեմ եղբորս հետ»:

«Բայց եթե եղբայրդ չընդունի՞ Տա Տունգին: Ավելի լավ է թաքուն խոսես հարսիդ հետ...»:

«Իհարկե, նրան էլ պիտի ասեմ: Բայց ինչու՞ պիտի մտածես, թե եղբայրս նույնքան խելամիտ չէ, որքան հարսս: Այսպես թե այնպես, կա աղջկա բախտացույցը: Նրանք չեն կարող մեզ ստիպել»:

Պարզվեց, որ Լի Մինի կնոջ առաջարկը վճիռ է լինելու: Երկուսն էլ եւ՛ նրա եղբայրը, եւ՛ հարսը համաձայնեցին դրան, հատկապես հարսը, որն այնքան շատ էր համաձայն, որ Լի Մինի կինը փոքր-ինչ զարմացած էր: Եվ բոլորը կարծում էին, որ խելամիտ է ծեր տիկնոջը զիջելը: Այդ ժամանակից է վեր, երբ խոսվում էր ամուսնության մասին, նրանք չափազանց զգույշ էին եւ իրենց ասելիքը ձեւակերպում էին հնարավորինս երկիմաստ ձեւով:

ՉԼՈՒԽ 2

*Գետերն ընթացքը եւ հունն եւ փոխում,
Երկրաշարժերից լեռներն եւ դողում,
Մարդն արարած է թոյլ ու դյուրաբեկ,
Բնույթն իր, սակայն, չի փոխվում երբեք:*

Բավականին դժվար էր Լի Սինի համար՝ հասկանալ իր զգացմունքները Տա Տունգի հանդեպ, որն իր ավագ որդին էր համարվում: Նա, անկասկած, շատ հպարտ էր տղայով, կամ գուցե իր ընտրությամբ,՝ ավելի շուտ՝ որպես ինչ-որ բան հավաքող մի մասնագետ, որը հպարտ է իր ևոր ձեռքբերածով: Եթե հեղինակավոր որեւէ մասնագետ ապացուցեր, որ իր հովանավորյալը հասարակ մի խճաքար է, նա, անշուշտ, դեն կնետեր այն՝ առանց դույզն-ինչ վարակելու: Իր սեփական որդուն՝ Շիաո Սինին, նա սիրում էր, ինչպես իր «ձեռքի ափում գտնվող մարգարտի»: Միանգամայն բնական էր, որ, չնայած երկու տղայի հանդեպ էլ ևույն վերաբերմունքն էր ցուցաբերվում, բայց թվում էր՝ Շիաո Սինին միշտ նախապատվություն էր տրվում:

Վաղ տարիքում, մինչեւ երեք տարեկանը, երեխաներն սկսում են դրսևորել սովորելու իրենց ընդունակությունը: Շիաո Սինն, անտարակույս, երկուսի մեջ ավելի խելացին էր: Նա կարողանում էր շատ արագ սովորել, բայց, ավաղ, ևույնքան արագ էլ մոռանում էր: Տա Տունգին պետք էր մի քանի անգամ սովորեցնել նախքան կկարողանար մեկ բառ հիշել, բայց մեկ անգամ նրա հիշողության մեջ մուտք գործածը մշտապես մնում էր այնտեղ: Քանի որ նա շատ ինքնուրույն էր, ոչ ոք նրա վրա ուշադրություն չէր դարձնում, բացի Լի Կանից : Արտոնյալ Շիաո Սինը գրավիչ ու սիրվող երեխա էր, թեւ գուցե մի քիչ ավելի մանկական, հաճախ մոր ձեռքերին էր կամ նստած էր նրա գրկում:

Սակայն երեխաների կրթության ուղղությամբ ոչինչ չէր արվում մինչեւ նրանց վեց տարեկան դառնալը, երբ Լի Սինը մտածեց, որ պետք է նրանց համար մի լավ մասնավոր ուսուցիչ վարձի: Այդ երեք տարիների ընթացքում, թեւ ոչ ոք լրջորեն չէր ընդունում Տա Տունգի՝ սովորելու բուն ցանկությունը, փոքրիկ տղան բավականին գիտելիքներ էր ձեռք բերել՝ հաճախակի այցելելով «իր հորեղբորը», ինչպես նա անվանում էր Լի Կանին, եւ խաղալով Տա Յուի՝ Լի Կանի տղայի դասասենյակում:

Մասնավոր ուսուցիչը, որին նկատի ուներ Լի Մինը, միակ «Ձարգացած տաղանդ» էր գյուղում: Լի Մինին նա երբեք էլ շատ դուր չէր գալիս, բայց գյուղում նա էր միայն, եւ Լի Մինն այլ ընտրություն չուներ:

Մի օր վաղ առավոտյան, Լապտերների տոնից հետո, երբ Նոր տարվա բոլոր տոնակատարություններն ավարտվել էին, եւ մարդիկ վերսկսել էին իրենց աշխատանքը, Լի Մինը ծերունի Չանգին հանձնարարեց պստիկ մի ճուտ ընտրել իր հավաքնից եւ խոզի շատ փոքրիկ մի բուդ գնել: Այա նա հանձնարարեց ծերունի Վանին վերցնել դրանք եւ քայլել իր առջեւից, երբ սկսեց իր հատուկ այցելությունը գիտնականին: Երբ մոտեցան այն վայրին, որտեղ ապրում էր նա, տեսան դրան մոտ հավաքված մի մեծ ամբոխի: Լի Մինը ներս նայեց եւ նկատեց, որ գյուղի մի շարք բնակիչներ ներքևաբակում բաժանում են խոր մորթած մի խոզ, տեսավ նաեւ գյուղի երեք աստվածներին, իրենց ծածկապատգարակների հետ միասին, միջնասենյակում դրված: Նա հանձնարարեց ծերունի Վանին, որ հարցնի ամբոխված մարդկանցից մեկին, թե ինչ է պատահել: Երբ իմացավ այս արտառոց իրադարձության պատճառը, ծերունի Վանին ստիպեց թաքցնել ճուտն ու խոզի բուդը իր հանդերձների տակ եւ տուն շտապեց՝ որքան հնարավոր է արագ:

Ետդարձի ճանապարհին Լի Մինն իրեն հուսալքված էր զգում: Քանի որ գյուղի «Ձարգացած տաղանդը» հասանելի չէր, միակ այլընտրանքը մնում էր ոչ այլ ոք, քան Լի Կանը՝ իր անարժան եղբայրը: Լի Մինը գիտեր, որ թեեւ իր եղբայրը պաշտոնական «կապույտ թիկնոցը» կրելու իրավունք չունի եւ, ամենայն հավանականությամբ, իր ամբողջ մնացած կյանքում կրելու է «սպիտակ վերնազգեստ», բայց Լի Կանի գրական տաղանդը գերազանցում էր բոլոր նրանց, ում ինքը ճանաչում էր: Իհարկե, միշտ կար նրա զոքանչ տիկին Վուն, որը կարող էր իր ամեն ցանկացածն ապահովել, բայց Լի Մինը համոզված էր, որ զոքանչը կառաջարկեր բացարձակապես անօգտակար մեկին, որը միեւնոյն ժամանակ կարող էր չափազանց մեծ վարձավճար պահանջել ուսուցանելու համար: Եվ դրա համար, թեկուզ իր կամքին էլ շատ հակառակ լիներ, Լի Մինն ստիպված էր դիմելու Լի Կանին: Այդուհանդերձ նա որոշեց, որ եղբորն այցելելիս ինքը որեւէ նվեր տանելու կարիք չունի: Սակայն ցույց տալու համար իր մեծ հարգանքը ուսուցման պատվավոր մասնագիտության հանդեպ՝ նա մեծահոգաբար մտադրվեց իր հետ վերցնել խոզի բուդը, իսկ ծերունի Վանին հանձնարարեց ազատ արձակել ճուտին: Քանի որ սա որոշ չափով պաշտոնական այցելություն էր, նա իր կրտսեր եղբոր բնակարան գնաց ոչ թե իր տնից այդտեղ տանող

ԱՅՈՒՆ ՇԻՒ

անցադրներից մեկնումեկով, այլ մուտք գործելով առջեի դարպասով:

Որպես կանոն՝ տան առջեի դռները գյուղում լայն բացված են թողնում: Լի Մինը հազաց եւ ուղիղ գևաց դեպի միջնասենյակ, բայց նրա ձեւական հանդիսավոր մուտքը ոչ ոք չնկատեց: Նա ստիպված էր ձայն տալ. «Տա Յու, հայրդ ներսում է»:

«Այո, հորեղբայր», - պատասխանեց տղան աշխատասենյակից: Նա դուրս եկավ եւ զարմացավ՝ տեսնելով հորեղբորը սենյակի մեջտեղում կանգնած՝ ձեռքին խոզի մսի մի կտոր:

«Նստեք, հորեղբայր»:

Լի Մինը ժպտաց եւ նվերը տվեց տղային. «Սա իմ նվերն է հորդ: Տար մորդ տուր»:

«Չէ, չէ, հորեղբայր: Շատ շնորհակալություն, բայց... բայց չեմ կարծում...»:- Տղան ընդամենն ինը տարեկան էր եւ չգիտեր՝ ընդունի՞ նվերը, թե՞ ոչ:

«Հիմար մի՛ լինիր, Տա Յու: Ասում եմ վերցրու, ամեն ինչ ճիշտ է: Տար մորդ տուր: Բայց հայրդ ու՞ր է»:

Տղան ընդունեց մսի կտորը շնորհակալությամբ եւ փորձեց խուսափել հորեղբոր հարցին պատասխանելուց: Նա գիտեր, որ հայրը դեռ անկողնում է, ու նաեւ գիտեր, որ հորեղբայրը հոր այս սովորությանը հավանություն չի տալիս: Նա ուզեց վազել խոհանոց՝ մոր մոտ: Լի Մինը հարցրեց. «Հայրդ դեռ անկողնում է»:

«Իմ մեծ հորաքույրը դեռ վեր չի կացել»:

Տղան փորձում էր խուսափել հոր մասին խոսելուց: Այսպես կոչված «մեծ հորաքույրը» գյուղի հասակն առած կանանցից էր՝ Լի Կանից երեք սերունդ ավագ: Նա իրեն խնամող ոչ ոք չունեւ, եւ Լի Կանը սիրով ընդունել էր նրան իր հարկի տակ: Քանի որ Տա Յուի համար դժվար էր նրան անվանել մեծ-մեծ-մեծ հորաքույր, բոլորը նրան կոչում էին մեծ հորաքույր:

«Բայց հայրդ վե՞ր է կացել »:

Տղան շփոթվեց եւ ասաց. «Լավ կանեիք մայրիկիս հարցնեիք»: Նա դուրս նետվեց միջնասենյակից:

Մայրը պարզապես չէր կարող հավատալ, որ իր տեգը իրենց մի կտոր խոզի միս կտա, թեկուզեւ փոքր, եւ շտապով ուզում էր պարզել այդ սխալի պատճառը: Լի Մինը նրան ասաց, որ ոչ մի թյուրիմացություն էլ չկա, եւ որ ինքը կուզեր տեսնել եղբորը որքան հնարավոր է շուտ: Կինը գևաց ամուսնուն կանչելու, իսկ տղան մևաց հորեղբոր հետ:

Այդպիսի ցուրտ եղանակին շատ երկար ժամանակ պահանջվեց հյու-

րի համբերության համար, որպեսզի սպասեր, մինչեւ տանտերը հրաժեշտ կտար իր տաք անկողնուն եւ կհագներ ցերեկվա իր հագուստը: Որքան երկար էր Լի Մինն սպասում, այնքան ավելի էր զոջում իր արարքի համար: Նա այժմ պարզորոշ տեսավ, որ մի մարդ, ով չափազանց երկար է մնում իր անկողնում, մինչեւ որ արեւը բարձրանում հասնում է երեք սյան բարձրության, արժանի չէ լինելու իր որդու ուսուցիչը: Նա պատրաստ էր հրաժարվել իր մտքից, բայց ցավն այն էր, որ արդեն խոզի բուրդը նվիրել էր եղբորը: Չէր կարող ետ ուզել:

«Ի՞նչ գիրք ես կարդում, Տա Յու»:

«Երգերի Գիրքը, հորեղբայր»:

«Դժվար չէ՞»:

«Չէ, հորեղբայր: Շատ հեշտ է սովորել եւ հիշել, բանաստեղծությունների մեծ մասը շատ հետաքրքիր է»:

«Նետաքրքի՞ր: Դու հասկանում ես բանաստեղծությունների իմաստը»:

«Հասկանում եմ, հորեղբայր: Հայրս բացատրում է ամեն մի տողը»:

Սա մի բան էր, որի մասին Լի Մինը չէր էլ երազել: Ինը տարեկան երեխա, որ փաստորեն կարողանում է հասկանալ Երգերի Գրքի բանաստեղծությունների իմաստը: Երբ Լի Մինն ստիպված էր կարդալ եւ անգիր ասել այդ բանաստեղծություններն իր դպրոցական տարիներին, մեկ տող իսկ չէր կարողանում հասկանալ: Եվ այժմ, երբ հիսունինը տարեկան էր, իրականում ավելի խելացի չէր: Գուցե Լի Կանը լավ ուսուցիչ էր: Բոլոր դեպքերում, մտածեց նա, մի մարդ, որ կարողանում է բացատրել Երգերի Գրքի ամեն մի տողը, պետք է որ շատ խելացի ու գիտուն լինի:

Երբ վերջապես Լի Կանը դուրս եկավ միջնասենյակ, տեսավ եղբայրը խորասուզված է մտքերի մեջ: Նա իր շնորհակալությունն ու միաժամանակ զարմանքը հայտնեց նվերի առիթով եւ անկեղծորեն հարցրեց եղբորը, թե ինչ է ցանկանում: Լի Մինը ժպտաց եւ ասաց. «Նրանք... Նկատի ունեմ, որ սա ընդամենը փոքրիկ մի նվեր է իմ երեխաներից իրենց ուսուցչին: Հույս ունեմ, որ քո զարմիկներին կընդունես որպես քո աշակերտների»:

«Ինչի՞ համար ինձ ընտրել ուսուցիչ, երբ մեր գյուղում գործազուրկ «զարգացած տաղանդ» կա: Խելքդ գլխի՞դ է» - Լի Կանն էլ ավելի զարմացավ, քան միևնույն ժամանակ:

«Անկեղծ ասած, չեմ կարծում, թե նա քեզից ավելի գիտուն է...»:

«Գուցե եւ ճիշտ է: Բայց սա քեզ նման չէ: Այդուհանդերձ, վախենամ, թե չեմ կարող ընդունել քո նվերը: Ես չեմ ուզում աշակերտ ունենալ: Լավ կա-

ԱՅՈՒՆ ՇԻՒ

Լես՝ խոզի բուղը տանես նրան: Նա խիստ կվիրավորվի, եթե իմանա, որ առաջինն ինձ ես դիմել»:

«Ո՛հ... ո՛հ»,- Լի Մինը չգիտեր ինչպես բացատրի:

Լի Կանը դույզ-ինչ չէր զայրացել, որ եղբայրը խանգարել էր իր հանգիստը: Նա տղային կարգադրեց բերել խոզի մսի կտորը խոհանոցից եւ այն ետ վերադարձրեց Լի Մինին:

Լի Մինը հուսահատ վիճակում էր: Նա ստիպված էր ասել ճշմարտությունը: «Դե, գիտե՞ս, փոքր եղբայր, ճիշտն ասած, առաջինը նրա տանը եղա, բայց չեմ կարծում, թե նա որոշ ժամանակ կկարողանա գալ: Եվ, բացի այդ, ես չեմ ուզում, որ իմ երեխաները սովորեն մի մարդուց, որ խարդախ է»:

Լի Կանն ականջներին չէր կարող հավատալ:

«Ի՞նչ: Խարդախ: Ասացիր խարդախ է»:

«Այո: Խարդախ է: Գյուղացիներն հենց այս պահին զբաղված են նրա սևնդի պահեստը բռնագրավելով: Ես տեսա՝ մորթել էին նրա խոզը եւ բաժանում էին այն: Նա հիմա սնանկացած է: Հնարավոր չէ, որ ես նրան ուսուցիչ ընտրեմ»:

«Ի՞նչ է պատահել»,- հետաքրքրվեց Լի Կանը:

«Գիտես, որ վերջին մի քանի տարին նա գյուղի աստվածներին զոհեր մատուցելու համար ստեղծված դրամական միջոցների պատասխանատուն էր: Հենց նոր պարզել են, որ նա ծախսերի կեղծ հաշվարկներ է կատարել, եւ դրամական միջոցների մեծ մասն իր սեփական գրպանն է գնացել...»:

«Իսկապե՞ս: Ա՛յ քեզ բան,- հեզնական տոնով ասաց Լի Կանը ,- Ես պետք է գնամ այնտեղ եւ դադարեցնեմ բռնությունը»: Նա շրջվեց, որ դուրս գա՝ բացարձակապես անտեսելով եղբորն ու նրա այցի նպատակը:

«Հե՛յ, ի՞նչ եղավ քեզ,- Լի Մինը դուրս նետվեց նրա ետևից, որ ետ քաշի:- Դու չես կարող դա անել, հիմար: Մարդիկ շուտ կգան դեպի քեզ... կհարձակվեն քեզ վրա»:

Բայց Լի Մինը շատ ուշացավ: Լի Կանը նետվեց դեպի բռնության թատերաբեմը եւ կանգնեց դարպասաշեմի մեջտեղում: Նա դիմեց ամբոխին.

«Ներեցեք ինձ, իմ պատվարժան ավագներ եւ իմ սիրելի եղբայրներ: Կարո՞ղ եմ մի քանի բառ ասել ձեզ»:

Մարդիկ բոլորը հավաքվեցին նրա շուրջը եւ որոշ ժամանակ լռեցին: Նա խիստ զայրացած շարունակեց. «Ես հենց նոր լսեցի, որ մեր «զարգացած տաղանդը», առանց մեր իմացության, հանրային դրամագլխից մի

մեծ բաժին է պարտք վերցրել: Չեմ գարմանում: Դուք էլ չպետք է գարմանաք: Մեր «գարգացած տաղանդը» տարեց մարդ է, եւ, բացի այդ, նա գիտնական է: Կարո՞ղ է, արդյոք, նա դաշտերը մշակել: Ո՛չ: Կարո՞ղ է աշխատել այգում: Ո՛չ: Կարո՞ղ է ձեռնասայլակ հրել: Ո՛չ: Կարո՞ղ է զույգ զամբյուղով իրեր տեղափոխել եւ դրանք վաճառել շուկայում: Ո՛չ: Բոլորդ էլ շատ լավ գիտեիք այդ մասին, երբ նրան ընտրում էիք գանձապահ: Այսօր պարզում եք, որ նա հանրության գումարից ինչ-որ մաս է օգտագործել, եւ զայրացած եք: Այժմ ասացեք, խնդրեմ, եթե մեր «գարգացած տաղանդը» չձախսի գումարը որպես իր սեփականը, ինչպե՞ս կարող է ապրել»:

Լի Կանը միշտ շատ ընդունված էր իր գյուղացիների շրջանում, եւ նրա բառը մեծապես հարգում էին: Բոլորն էլ գիտեին, որ Լի Կանն առանձնակի սեր չէր տաճում «գարգացած տաղանդի» հանդեպ, այնպես որ կասկած չկար, թե նրա խոսքում հովանավորչություն կամ կանխակալ վերաբերմունք կարող է լինել: Ի վերջո, գյուղացիները պարզ ու հասարակ մարդիկ էին եւ սկսեցին ցրվել՝ փնթփնթալով, թե այդ ամենն այսպես ու այսպես է եղել, եւ թե ովքեր են ասել իրենց, որ գան: Թեեւ Լի Կանը բավականին լավ գիտեր բոլոր հրահրողներին, բայց որոշեց մանրամասն չքննել այն, ինչ արդեն եղել էր, եւ բոլորին հորդորեց, որ տուն գնան: Նա ընտրեց վեց երիտասարդի եւ հանձնարարեց նրանց՝ երեք ծածկապատգարակները, աստվածների հետ միասին, ետ տանել Նախնիների Տաճար:

Տան բոլոր անդամները փախել էին այդտեղից, բացի գիտնականի մորից: Այժմ նա դուրս եկավ, որ շնորհակալ լինի բարեսիրտ խաղաղարարին: Բայց Լի Կանն այն մարդկանցից չէր, որ սպասեր, որպեսզի իրեն շնորհակալություն հայտնեն, եւ մինչ ծեր կինը կհասներ բակ, նա անհետացել էր տեսադաշտից: Լի Մինը, սակայն, մոտեցավ խոսելու նրա հետ:

«Ամեն ինչ արդեն կարգին է, մորաքույր: Ես իմ կրտսեր եղբորն այստեղ էի բերել, եւ մենք ցրեցինք այդ ահավոր խառնամբոխը»:

Ծեր կինն այնքան երախտապարտ էր նրան, որ ուղղակի ծնկի իջավ նրա առջեւ՝ հայտնելու իր շնորհակալությունը: Լի Մինն իրեն մեղավոր զգալով շփոթվեց եւ շոքվեց, որ գնա, բայց կինը խնդրեց նրան մնալ, որպեսզի իր որդին, հարսը, թոռները եւ ընտանիքի մյուս անդամները կարողանային գալ ծնկի իջնել նրա առջեւ՝ հայտնելու համար իրենց հավետ երախտապարտ լինելը: Կինն այնքան համառ էր նրան ետ պահելու իր ձգտման մեջ, որ Լի Մինն իրեն մեծապես թեթեւացած զգաց, երբ կարողացավ վերջապես հեռանալ եւ միանալ իր եղբորը: Երբ նրանք հասան Լի Կանի տուն, Լի Մինը կրկնեց իր խնդրանքը: Լի Կանը, մի պահ մոտրելով այդ հարցի

ԱՅՈՒՆ ՇԻՒ

շուրջ, ասաց. «Կարծում եմ, հիմա պետք է համաձայնեմ: Բայց կհամաձայնեմ մի պայմանով. դա պետք է համարվի իմ անձնական զբաղմունքը, տղաներդ պարզապես կմիանան Տա Յուլին այն աշխատասենյակում, որտեղ հիմա սովորեցնում եմ նրան»:

Հարուստ ընտանիքները միշտ էլ մասնավոր ուսուցիչներ են վարձում, որպեսզի նրանք ուսուցանեն իրենց տանը: Միայն աղքատ ընտանիքները եւ միջին դասի մարդիկ են իրենց երեխաներին ուղարկում ուսուցչի մոտ սովորելու այլ երեխաների հետ: Լի Մինը նույնիսկ չէր քննարկի նման մի առաջարկ, եթե չզիտակցեր, որ եղբայրն ու ինքը փաստորեն նույն տանն են ապրում, եւ հետեւաբար ինքը պետք է հասկանար, որ չէր կարող հարց լինել եղբոր կողմից այլ աշակերտներ վերցնելու մասին: Այրուհանդերձ, Լի Մինը շատ լավ գործարար էր, որպեսզի բաց թողներ խնայողության ցանկացած հնարավորություն:

«Լավ, կանեմ այնպես, ինչպես դու ես ցանկանում: Բայց պետք է հաշվի առնես, որ դա նույնն է, ինչ քեզ վարձեմ, որպեսզի դասավանդես իմ տանը: Երեխաների համար որեւէ տարբերություն չկա, բայց մեզ համար հարմար չի լինի ուտելիքն այստեղ բերել: Երեւի չէ՞ս մտածել այն մասին, որ ուտելիքն իմ տանը տանք»:

Լի Կանը ժպտաց եւ պատասխանեց. «Կարիք չկա, որ անհանգստանաս իմ ուտելիքի համար: Ես ծեր տանը չեմ սնվի, շնորհակալ եմ ամեն ինչի համար: Նախընտրում եմ մնալ այստեղ իմ ընտանիքի հետ, իսկ աշակերտներին ուղարկել, որ ճաշեն իրենց տանը»:

«Հոյակապ է, կրտսեր եղբայրս: Ինչ վերաբերում է աշխատավարձին, համաձայն եմ քեզ վճարել...»:

«Ո՛չ, չեմ ուզում լսել այդ մասին», - արագ ընդհատեց նրան Լի Կանը, եւ այդ պահին շիկնել էր:

Լի Մինը պետք է այդ հարցը մեկընդմիշտ լուծեր:

«Ես համաձայն եմ քեզ վճարել, ասենք, կանխիկ երեսուն հազար տարեկան ... երկու տարում: Եվ հասկանալի է, որ թեեւ դու մնում ես քո տանը, բայց իմ երեխաների մասնավոր վարձու ուսուցիչն ես եւ չպետք է ուրիշ այլ աշակերտներ վերցնես առանց նախապես իմ համաձայնությունն ստանալու»:

«Իսկոքում եմ՝ դա չասես, դու գիտես, որ ես չունեմ մասնագիտական...»:

«Միշտ ավելի լավ է, որ թյուրիմացություն չլինի... հենց սկզբից: Եթե համաձայն ես, ես վաղը քեզ կուղարկեմ քո պարտավորության թերթիկը,

եւ խնդրում եմ, երեխաների համար բարեհաջող մի օր ընտրիր, որ գան այստեղ ու հարգանքի տուրք մատուցեն Կոնֆուցիուսին եւ իրենց դաստիարակին»:

Լի Կանն ստիպված էր որդուն ասելու, որ աշխատասենյակից բերի օրացույցը: Նայելով օրացույցին՝ նա հայտնեց, որ առաջին լուսնի քսաներորդ օրը շատ բարեպատեհ օր է եւ վերին աստիճանի հարմար է, որ երեխաներն սկսեն իրենց դասերը: Լի Մինը վեր կացավ եւ ըստ պատշաճի խոնարհվեց կրտսեր եղբորը: Լի Կանը շփոթված ու կաշկանդված շարժումով պատասխանեց նրա ողջույնին եւ, քանի որ ավագ եղբայրն այդպիսի ցուցադրական հրաժեշտ տվեց, ստիպված էր ուղեկցել նրան մինչեւ առջեւի դարպասը:

Մյուս օրը վաղ առավոտյան Լի Կանին պարտավորության պաշտոնական մի թերթիկ ուղարկվեց, որտեղ հստակ ձեւակերպված էին պայմաններն ու աշխատավարձի չափը: Հաջորդ օրերին Լի Մինը դասասենյակի համար ապահովեց երկու գրասեղան եւ երկու աթոռ: Երբ եկավ կարետր օրը՝ քսանը, Լի Կանը բոլորովին մոռացել էր այդ մասին եւ երկար ժամանակ պառկած էր անկողնում: Հանկարծ նա լսեց վառվող ճայթռուկների խլացուցիչ ձայնը: Այն է՝ ուզում էր կնոջը հարցնել, թե ինչ է պատահել, երբ կինն արագ ներս մտավ ասելու, որ նրա ավագ եղբայրն իր աշակերտներին դպրոց է բերել: Լի Մինն ստիպված էր բավական երկար սպասել, մինչեւ որ Լի Կանը մտավ դասասենյակ: Նույնիսկ երբ վերջապես արդեն այդտեղ էր, նա պատշաճ կերպով հագնված չէր կամ համենայն դեպս հագնված չէր այն կերպ, ինչպես վայել է դաստիարակ ուսուցչին: Այդուհանդերձ, Լի Մինը վերահսկում էր նրա վարքը, որքան որ կարող էր եւ, իր կրտսեր եղբորը խոնարհվելուց հետո երեխաներին ասաց, որ ծնկի իջնեն նախ Կոնֆուցիուսի հուշատախտակի եւ ապա իրենց դաստիարակ ուսուցչի առջեւ: Նա ձեռքին հնդկեղեգի բարակ մի ծող ուներ եւ այն հանձնեց Լի Կանին՝ ասելով. «Ահա եղեգնյա ծողը, ծեծիր դրանով իմ երեխաներին՝ որքան որ անհրաժեշտ ես համարում: Առաձն ասում է. «Սոսկ կերակրել երեխաներին, առանց նրանց դպրոց ուղարկելու, հա՛յրն է սխալ, սոսկ սովորեցնել նրանց, առանց խիստ կարգապահության, ուսուցի՛չն է անպատասխանատու»: Հուսով եմ կկրես այս ծողը՝ այն օգտագործելով բավական հաճախ: Եվ չմոռանաս դիմել ինձ, որ շատ շուտով երկրորդ ծողն ուղարկեմ քեզ»:

«Չէ, չէ: Վեր կացեք եւ գնացեք նստեք ձեր տեղերում, իմ լավ աշակերտներ»,- ասաց Լի Կանը եւ օգնեց երեխաներին վեր կենալ ու ցույց

ԱՅՈՒՆ ՇԻՒ

տվեց նրանց գրասեղանները: Միաժամանակ նա ետ հրեց ծողը: «Ո՛չ, ավագ եղբայրս, ես այդպիսի սարսափելի գործիք օգտագործելու կարիքը չունեմ: Ես ուսուցիչ եմ. կարծում եմ՝ միայն դարբինն է, որի նշանաբանն է «զարկիր անդադար»»:

Լի Մինն այնուհետև ներկայացրեց աշակերտների նվերը ուսուցչին՝ փոքրիկ մի փաթեթի հետ, որի մեջ «կրտսեր համադասարանցիների» նվերներն էին Տա Յուփն՝ իրենց «ավագ համադասարանցուն»:

Այս ձեռակախություններից հետո Լի Մինը հրաժեշտ տվեց եղբորը: Դուրս ելնելիս նա եղբոր կնոջն ասաց, որ այսուհետ ինքն ուրախ կլիներ դպրոցը թեյով ապահովել: Նա ասաց, որ կհանձնարարի Կրկնակի Օրինությանը, որ ամեն առավոտ մի սկահակ տաք թեյ էլ չորս գավաթ բերի դպրոց էլ ամեն երեկո ետ տանի դրանք:

Երբ Լի Կանը զննեց իրերը, որ աշակերտներն էին բերել իրեն, տեսավ, որ, բացի վրձին գրիչներից էլ այլ գրենական պիտույքներից, նրանցից յուրաքանչյուրն ուներ Չորս գրքերի լրակազմը՝ հայտնի Կոնֆուցիական դասականներին: Նա չէր կարծում, թե այդ մեծ աշխատանքը, որքան էլ որ կարելու է օգտակար, լիովին համապատասխան է վեց տարեկան երեխաների համար, էլ կանչեց Տա Տունգին, որ մոտենա իր գրասեղանին:

«Այժմ, Տա Տունգ, ինձ մոտ բեր քո Չորս գրքերը: Չեմ կարծում, թե դու դեռ կարող ես կարդալ դրանք: Մեծ Ուսմունքը էլ Ոսկե Միջինը չափազանց դժվար են նույնիսկ իրենց դեռահասության վաղ տարիքում գտնվող երեխաների համար, ուրեմն ինչպե՞ս կարող եք հուսալ, թե դուք կհասկանաք դրանք: Մենցզիի գիրքը լի է փաստարկներով ու բանավեճերով էլ գուցե շատ օգտակար կլինի ձեզ մի օր, ուրեմն՝ ես չպետք է այնպես անեմ, որ դուք այդ գիրքն ատե՞ք՝ ստիպելով ձեզ կարդալ ձեր դյուրագգաց տարիքում: Կոնֆուցիուսի գիրքը շատ կարելու աշխատություն է ձեր բնավորության ձեռավորման համար: Կարծում եմ, ձեզ կուսուցանեմ դա, հենց որ ավարտեք այս գիրքը»: Դարակից հանելով փոքրիկ մի գիրք, որ կոչվում էր Ժամանակակից դասականներ, նա դրեց իր գրասեղանին էլ բացեց այն: Նա գրչակալի միջից վերցրեց իր ալ կարմիր գրիչը էլ, մասերի բաժանելով նոր գրքի առաջին մի քանի նախադասությունը, տղային հորդորեց կարդալ դրանք.

«Ժամանակակից աշխարհը
Բաղկացած է երկու կիսագնդից՝
Արեւելյան էլ Արեւմտյան:
Հինգ մայրցամաք կա՝

Ասիա, Եվրոպա, Աֆրիկա,
Եվ Ամերիկա, որ բաժանված է
Հյուսիսայինի ու Հարավայինի»:

Եվ ևա շարունակեց բացատրել տղային, թե ինչ են նշանակում «կիսա-գունդ» եւ «մայրցամաք» բառերը:

Տա Տունգը հմայված էր այս նոր ու անձանոթ արտահայտություններով եւ, լինելով խելացի երեխա, սովորեց դրանք շատ արագ ու շատ մեծ բավականություն ստացավ նոր գրքից:

Շիաո Մինին տրվեց Ընտանեկան անունների գիրքը, որ կարդա: Այն սկսվում էր այսպես.

«Չաո, Չիեն, Սուն, Լի,
Չոու, Կու, Չենգ, Վան:
Հունգ, Չեն, Ցու, Կեյ,
Չան, Չինգ, Հան, Յան:
Չու, Չինգ, Ցու, Սյու,
Հո, Լու, Շու, Չանգ»:

Քանի որ դրանք սովորական ազգանուններ էին, բացատրելու ոչինչ չկար: Թեեւ այդ ազգանունները Շիաո Մինը սովոր էր լսել ամեն օր, բայց նշանները, որոնցով դրանք ներկայացվում էին, նրա համար ծայրաստիճան դժվար էր հիշել: Լի Կանը շատ ներողամիտ ուսուցիչ էր եւ երբեք չէր սիրում գործածել «ուղղիչ եղեգնածողը»: Շիաո Մինը շատ դանդաղ էր առաջադիմում:

Չինաստանում տարին, որպես կանոն, բաժանվում է երեք շրջանի: Բաժանման առաջին սահմանը Նոր տարուց հետո Վիշապի տոնն է, որը տեղի է ունենում հինգերորդ լուսնի հինգերորդ օրը: Դպրոցն այդ օրը սովորաբար փակ է, իսկ ուսուցչին ճաշկերույթով են պատվում:

Այն օրը, երբ Լի Կանն իր առաջին ճաշկերույթն էր վայելում ավագ եղբոր տանը, նրան առաջին անգամ պատվավոր տեղում էին նստեցրել եւ, դարձյալ առաջին անգամ իր կյանքում, ստացավ իր առաջին աշխատավարձը տվյալ ժամանակահատվածի համար՝ կանխիկ տասը հազար թղթադրամներով կարմիր ծրարում: Այդ ժամանակ, եւ միայն այդ ժամանակ, թույլատրվում է, համաձայն մեր սովորության, հարցնել ուսուցչին, թե ինչ է տեղի ունենում դասասենյակում, որը համարվում է արգելված մի պալատ, ուր միահեծան տերուտնօրենն ուսուցիչն է: Լի Մինն ամենեւին էլ գոհ չէր այն գրքերից, որոնցով եղբայրն ուսուցանում էր իր երեխաներին, այնպես որ, ճաշկերույթի ժամանակ, Լի Կանին հայտնեց, որ ինքը Ընտանե-

ԱՅՈՒՆ ՇԻՒ

Կան անունների գիրքը բնավ չի համարում իր որդուն համապատասխան ընթերցարան: Այդ գիրքն, ըստ նրա, պատշաճում է լոկ բեռնակիրների եւ ծածկապատգարակ կրողների որդիներին, որոնք պետք է պատրաստ լինեն կարողալու դռների վրայի անվանաթիթեղները: Այնպես որ, Լի Կանն ստիպված էր համաձայնել, որ տղաներին կտվորեցնի Չորս գրքերից մեկով, երբ առաջին գիրքն ավարտի: Լի Մինը գոհ չէր նաեւ Տա Տունգի կարդացած գրքերից: Նա ասաց, որ այնպիսի բառերը, ինչպիսիք են՝ Եվրոպա, Ամերիկա, Նապոլեոն, Կոլումբոս, ծիծաղելի են հնչում, եւ ինդրեց եղբորը, որ բացատրի, թե ինչու չեն օգտագործվում համընդհանուր ճանաչում վայելող գրքերը: Ավելացրեց նաեւ, որ ինքը գիտե, որ Տա Յուն կարդացել է Երգերի Գիրքը: Ինչու, հարցրեց նա, դաստիարակ ուսուցիչը պետք է օտար եւ անօգտակար գրքեր տա իրեն վճարող աշակերտներին կարողալու, երբ իր սեփական որդուն ուսուցանելիս լավ գրքեր է տալիս, որ կարդա: Լի Կանն իրեն վիրավորված զգաց եւ զայրացած ասաց, որ իր որդուն Երգերի Գիրքն է ուսուցանել, որովհետեւ մտադիր է, որ տղան հողագործ կդառնա: Հողագործը, ասաց նա, պետք է իմանա այդ գրքի բոլոր գյուղական երգերն ու պոեմները: Տա Տունգը պատրաստվում է աշխարհի մարդ դառնալ, հետեւաբար պետք է աշխարհի մասնին գիտելիքներ ունենա: Շիաո Մինին լավագույնս հարմար է վաճառական լինել, հետեւաբար նա պետք է սովորի ազգանուններն ու մյուս ընդհանուր բաները Կոնֆուցիուսի եւ Մենցզիի տեսական ուսմունքների փոխարեն, որոնք, իր կարծիքով, կործանարար կլինեն, եթե կիրառվեն գործարքներ կատարելիս:

Այդուհանդերձ, Լի Մինը չցանկացավ, որ իր երեխաները զրկվեն դասական կրթությունից, ուստի փոքր տղաներին հաջորդ իսկ օրվանից տրվեց կարողալու Կոնֆուցիուսի գիրքը: Տա Տունգը ջանասեր աշակերտ էր եւ լավ կարողանում էր տիրապետել այն ամենին, ինչ երիտասարդ միտքը կարող էր ըմբռնել, իսկ Շիաո Մինը չսիրեց այս գիրքը նույնիսկ ավելի, քան իր առաջին գիրքը, քանզի Չորս գրքերից ոչ մեկը հանգավորված չէր:

Երկրորդ տոնը ութերորդ լուսնի տասնհինգերորդ օրն էր՝ Միջաշնա-նային Փառատոնը: Երբ Լի Կանն ստացավ երկրորդ ծրարը, որի մեջ մյուս տասը հազարն էր կանխիկ թղթադրամներով, կատակով նշեց, որ ինքն արժանի է այդ գումարի միայն կեսին: Պատճառը, նրա ասելով, պարզապես այն էր, որ ինքը չէր կարողանում Շիաո Մինին դրդել, որ նա ուշադրություն դարձնի իր ուսմանը: Քանի որ տղան տակավին շատ երիտասարդ էր, ոչ ոք դրա համար չէր անհանգստանում: Լի Կանը նույնիսկ թաքուն գոհ էր այն բանից, որ Շիաո Մինն ընդհանրապես չի ուզում սովորել: Տղան

շատ վատ բնավորություն ուներ եւ չէր սիրում սովորել: Այնպես որ, փոխանակ ժամանակ վատներ նրան համոզելու, որ կարդա, Լի Կանն իր եռանդը կենտրոնացնում էր Տա Տունգին ուսուցանելու վրա: Մինչեւ տարեվերջ Տա Տունգն ավարտել էր ժամանակակից դասականների եւ Չորս գրքերի երեք հատորները, մինչ իր կաթնեղբայրը դեռ պայծարում էր Ընտանեկան անունների գիրքը հաղթահարելու համար եւ հազիվ սկսել էր Կոնֆուցիուսի գիրքը կարդալ:

Տասներկուերորդ լուսնի քսանչորսերորդ օրը, երբ տարեվերջին դպրոցը փակ էր, երրորդ ճաշկերույթը կազմակերպվեց ուսուցչի համար: Երեխաները, որոնք այժմ արդեն մոտ յոթ տարեկան էին, իրենց կյանքում առաջին անգամ կարող էին ինքնուրույն տեղ ունենալ քառակուսի ճաշի սեղանի մոտ: Կանայք, որպես կանոն, ներկա չէին լինում, երբ ճաշկերույթ էր կազմակերպվում դաստիարակ ուսուցչի համար: Բայց երբ դաստիարակ ուսուցիչը ոչ այլ ոք էր, քան տանտիրոջ եղբայրը, միանգամայն պատշաճ բան էր, որ խնջույքը ընտանեկան հավաքի վերածվի: Սակայն Լի Մինը կարծում էր, որ խնայողության համար ավելի լավ կլինի՝ իր կինը չմասնակցի, քանի որ հակառակ դեպքում նա իրեն պարտավորված պիտի զգար հրավիրելու նաեւ եղբոր կնոջն ու զարմիկին:

Երբ գրուցում էին տղաների՝ տարվա աշխատանքի մասին, Լի Կանն ասաց, որ առաջին կիսամյակի ընթացքում Շիաո Մինն ընդհանրապես չի սկսել կարդալ, իսկ Վիշապի Նավակի տոնից հետո, երբ օրերն ավելի ու ավելի էին տաքանում, տղան շատ քնկոտ էր դարձել եւ քնում էր դասի ժամանակ: Միջաշնանային տոնից ի վեր՝ Շիաո Մինը ամեն լուրջ բան հետաձգում էր եւ սպասում էր Նոր տարվա արձակուրդներին:

Լի Մինը, լսելով այս դաժան տեղեկությունն իր որդու մասին, մի պահ լուռ էր: Տա Տունգը զարմացած էր այս լուրից եւ հանկարծ ասաց. «Հայրիկ, կարծում եմ՝ եղբայրս պետք է վարվի համաձայն այն բանաստեղծության, որ հենց նոր եմ սովորել: Սա է բանաստեղծությունը.

«Ես զարնանը գիրք չեմ կարդում,
 Մինչ օրերն ամռան,
 Ամռանն էլ շատ եմ երագում
 Սալորներ աշնան:
 Տարեվերջին, երբ ավարտենք
 Եվ տարին փակենք,
 Գիրքը պահենք, փայտ հավաքենք
 Ձմռան համար մենք»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Լի Կանը ծիծաղեց եւ ասաց, որ միամիտ տղան լիովին ճիշտ է: Բայց Լի Մինին դուր չեկավ կատակը, եւ նա խստորեն հարցրեց, թե ինչպիսի առաջադիմություն է ունեցել Տա Տունգը տարվա ընթացքում: Լի Կանը շատ ուրախ էր, որ հնարավորություն ստացավ գովելու իր սիրելի աշակերտին: «Նա մեկ տարվա մեջ ավելի շատ գիրք է կարդացել, քան այդ տարիքի տղան երկու տարում կարող է կարդալ: Չափազանց խելացի է...»:

Սա դուր չեկավ Լի Մինին, եւ նա ընդհատեց եղբորը. «Ով չափազանց խելացի է պատանի տարիքում, նա ենթակա է բթամիտ ու անախտան լինել, երբ դառնա չափահաս»:

Լի Կանը հասկացավ, թե ինչ է նենգամտորեն ակնարկում եղբայրը եւ հապաղեց պատասխանել: Նա կուզեր իմանալ, թե արդյոք հյուրն իրավունք ունի՞ կտրուկ առարկել իրեն հյուրընկալող տանտիրոջը: Դարձյալ Տա Տունգը միջամտեց անսպասելիորեն ու միամիտ անմեղությամբ. «Հայրիկ, դու պետք է որ չափազանց խելացի եղած լինես պատանի ժամանակ»:

Լի Կանը փորձեց ամեն կերպ զսպել ծիծաղը, բայց դա նրան չհաջողվեց: Լի Մինը կատաղած էր, բայց չկարողացավ բառեր գտնել հանդիմանելու տղային, միայն ասաց, որ ձայնը կտրի:

Դպրոցը վերաբացվեց առաջին լուսնի տասնվեցերորդ օրը՝ Լապտերների տոնի հաջորդ օրը: Շիաո Մինն այնքան շատ էր վայելել իր երկար արձակուրդները, որ այժմ գրքերի տեսքից զզվանք էր զգում: Նա հաճախ էր բացակայում, եւ արդարանալու նրա միակ պատրվակն այն էր, որ լավ չի զգում: Երբ դպրոց էր գնում, ժամանակի մեծ մասը նվիրում էր Տա Տունգի եւ Տա Յուի հետ վեճին ու կռվին: Տա Տունգն ավելի խոշոր եւ ավելի ուժեղ տղա էր եւ միշտ վճռականորեն պաշտպանում էր ինքն իրեն ու պարտության մատնում իր վրա հարձակվողին: Երբ Շիաո Մինի տեղը նեղվում էր, մշտապես լալիս էր ու օգնություն կանչում: Ցավոք, Լի Կանն ուժեղ նախապաշարմունքների տեր մարդ էր եւ երբեք ոչ մի անգամ չէր հանդիմանում Տա Տունգին, ինչպիսին էլ որ լիներ նրանց կռվի արդյունքը:

Սակայն Տա Յուն ծանր վիճակում էր հայտնվում: Նա երեք տարի մեծ էր Շիաո Մինից, հետեւաբար արդար չէր կռվել իրենից փոքր տղայի հետ ամբողջ ուժով: Լինելով ուսուցչի որդին՝ նա չէր կարող, համաձայն երեխաների վարվելակարգի, հայտնել իր հորը կամ կանչել նրան: Լի Կանը նույնպես երկընտրանքի առջեւ էր կանգնում. հազիվ թե լավ դիտվեր, եթե նա պատժեր Շիաո Մինին, երբ նա վիճում էր իր սեփական որդու հետ, եւ ամենեւին արդար չէր լինի պատժել Տա Յունին:

Դասասենյակում տիաճ դեպքերից խուսափելու համար Լի Կանն իր որդուն ուղարկում էր դաշտերը, որպեսզի սկսի գյուղատնտեսական աշխատանքներին ընտելանալ, մինչև որ նա դարձավ տասնմեկ տարեկան: Երբ մեծ տղան գնացել էր, դպրոցում շատ ավելի հանգիստ էր, որովհետև Շիաո Մինը կորցրել էր իր գլխավոր գոհին:

Այդ ժամանակ էր (1888-ին), որ կառավարությունը հանկարծ հայտարարեց, թե այսուհետ, ի հավելումն դասական գրականության եւ պատմության, մաթեմատիկա առարկան պետք է ընդգրկվեր պետական քննություններում: Երբ այս անհավատալի լուրը առաջին անգամ հասավ գյուղ, Լի Մինն անչափ ուրախացավ: Նա հաշվելու գործի մասնագետ էր եւ գիտեր չինական համրիչի օգտագործման բոլոր ձևերը: Մյուս կողմից, Լի Կաննի մատները երբեք չէին դիպել հաշվիչ սարքի, եւ ոչ ոք երբեք չէր լսել, որ նա թվերով որեւէ հաշվարկ կատարած լիներ:

Մի առավոտ, դպրոցի ճաշի ընդմիջումից շատ առաջ, Լի Մինը վերցրեց երկու համրիչ եւ անսպասելի այցելություն կատարեց իր կրտսեր եղբորը: Ստնելով առջեւի անցադնով եւ աննկատ մոտենալով դասասենյակին՝ նա լսեց, թե տղաներն ինչպես են հուզված բղավում: Նա զարմացավ եւ գնաց սենյակի ճաղավանդակավոր պատուհանի առջեւ, որպեսզի ներս նայի: Ուսուցիչը դասասենյակում չէր: Ակնհայտ էր, որ Լի Կանը դեռ անկողնում է: Այդուհանդերձ, Լի Կաննի աթոռն ու գրասեղանը դատարկ չէին: Դրանք տեղափոխված էին սենյակի կենտրոն: Հեռվից թվում էր, թե դա մեծ մանդարինի ունկնդիրների հանդիսասրահ է: Գլխավոր աթոռն զբաղեցրել էր ակնոցավոր, ցանցառ բեղ-մորուքով փոքրիկ մի ծերունի: Չնայած նա արժանապատիվ կեցվածք ուներ, բայց այդ պահին թվում էր, որ նա ցասման մեջ է, քանի որ կատաղած զարկում էր գրասեղանին իր թղթապանակով: Ամեն հերթական հարվածից հետո նա բացականում էր. «Դու՛րս քաշեք նրան յամենից (կայսերական Չինաստանում վարչական գրասենյակ եւ/կամ բյուրոկրատի կամ մանդարինի տեղական բնակավայր- ծ. թ.) եւ կտրե՛ք նրա գլուխը»:

Չայնը մատնեց նրան: Դա ուրիշ մարդ չէր, այլ Շիաո Մինն էր, եւ նրա ակնոցը, բեղերն ու մորուքը ուրիշ բան չէին, այլ սեւ թանաքի բծեր: Նա խաղում էր մեծ պաշտոնյայի դեր, որի հիմնական զվարճալիքը, թվում էր, մարդկանց գլուխները կտրելն է:

Սենյակի մյուս մասում Տա Տունգն իր շտաբն էր կառուցում: Նա վերահասավորել էր գրասեղաններն ու աթոռներն այնպես, որ դրանք պատկերում էին ձկնորսական փոքրիկ մի նավակ: Տա Տունգն անձրեւից պաշտ-

ԱՅՈՒՆ ՇԻՒ

պանող թիկնոց եւ լայնեզր գլխարկ էր կրում, երկուսն էլ սովորաբար թից պատրաստված, եւ ճիշտ նույն տեսքն ուներ, ինչ իր հայրը՝ ձկնորսը, որն այդպես էր հագնված, երբ ութ տարի առաջ հեռանում էր իր նավակով: Տղայի գեղեցիկ մետաքսե պատմունանն այժմ վերածվել էր երկար պարանից կապված ձկնորսական մի ցանցի: Նորաթուխ ձկնորսը հենց նոր էր գցել իր ուռկանը երեսակայական ջրի մեջ, եւ արդեն դանդաղ ու համաչափ շարժումներով քաշում էր այն, ասես ուռկանը լիքն էր ձկներով:

Այդ փոքրիկ տեսարանը խառն զգացմունքներով լցրեց Լի Մինի սիրտը: Շատ ուրախալի էր, իհարկե, տեսնել, որ Շիաո Մինը, նույնիսկ հիմա, իր ամեն ինչով մեծ պաշտոնյա է, բայց այն, ինչ անում էր Տա Տունգը, նրան պատճառեց ցավ, հիասթափություն, զզվանք, ափսոսանք եւ զայրույթ: Ութ տարի շարունակ նա, կյութական ներդրում կատարելով, օդում շքեղ դոյակներ է կառուցել: Եվ այժմ հանկարծ դառնում է համոզված կողմնակիցն այն ասացվածքի, որ պնդում է՝ «Մի՛ սպասիր, թե շան բերանից փղոսկր կստանաս»: Ինչպիսի՛ մեծ կորուստ է դա եղել այդ ութ տարիների ընթացքում: Հենց միայն փողի մասին միտքը, որ ծախսել էր այդ անպետք ձկնորսի տղայի վրա, բավական էր, որ նրան խելագարության հասցնի: Նա ներս նետվեց սենյակ եւ կատաղած գոչեց. «Դու՛, ստորին ծագման լակո՛տ: Չնայած այն ամբողջ փողին, որ ես ծախսել եմ քո կրթության վրա, մինչեւ ուղևուծուծը սոված ձկնորսի լակոտ ես: Դու՛րս կորիք հիմա, կորի՛ր այստեղից, ցածրակարգ լակո՛տ»:

Տա Տունգն անմիջապես հասկացավ, որ ինչ-որ սխալ բան էր արել, առանց գիտակցել կարողանալու իր հանցանքի բնույթն ու լրջությունը: Դրա համար էլ հանեց գլխարկն ու թիկնոցը եւ սկսեց սեղաններն ու աթոռները տեղաշարժել՝ իրենց նախկին դիրքին բերելով: Շիաո Մինն սկզբում վախեցավ հոր կատաղի տրամադրությունից: Բայց շուտով հանգստացավ, երբ հասկացավ, որ Տա Տունգն էր միայն հանցանք գործողը: Ոչինչ նրան ավելի մեծ հաճույք չէր պատճառի, քան տեսնելը, թե ինչպես է Տա Տունգը պատժվում իր սխալի համար: Նա եկավ դեպի հայրը եւ մատնացույց արեց խորթ եղբորը. «Հայրի՛կ, նա չի խաղում ինձ հետ եւ ասում է, որ կսպանի ինձ, եթե ես կտրեմ իր գլուխը»:

«Ուրեմն ուզում ես սպանե՞լ Շիաո Մինին, երբ նա քեզ խնդրում է խաղալ իր հետ, հա՞, ստորակարգ լակո՛տ: Դու՛րս կորիք այստեղից անմիջապես», - գոչեց Լի Մինը: Նա ցատկեց առաջ, բռնեց Տա Տունգի վզից եւ փորձեց քարշ տալ նրան դուրս:

Տա Տունգը սաստիկ վրդովվեց այս անարդար վարմունքից: Լինելով

համառ ու հաստատակամ տղա՝ նա լռություն պահպանեց եւ ամուր բռնեց իր գրասեղանից, բացահայտորեն ընդդիմանալով հորը: Լի Մինը քիչ ավելի ուժով քաշեց տղային, գրասեղանը շրջվեց, եւ գրքերն ու թղթերն այս ու այն կողմ թռան: Լի Մինն էլ ավելի մոլեգնեց. «Ախ դու խռովարար: Ես դուրս կշարտեմ քեզ»:

Բայց գրեթե վաթսուն տարեկան մարդու համար հեշտ բան չէր դուրս շարտել Տա Տունգին, որն այժմ բավականին խոշորամարմին տղա էր, իր տարիքի համար հիրավի խոշոր: Նա կառչում էր այն ամենից, ինչն իրեն հասանելի էր: Պայքարն այնքան հուսահատ էր ու մոլեգին, որ կահույքից ոչինչ կանգուն չմնաց, եւ ամեն ինչ աղմուկ-դղրդոցով ցած ընկավ: Լի Մինը գոռում էր եւ հայհոյում, բայց քիչ հաջողության հասավ: Շիտո Մինը մեծագույն ցնծությամբ էր նայում այդ տեսարանին:

Այդ ընթացքում Լի Կանն արթնացել էր: Լսելով ամբողջ աղմուկը դասասենյակում, նա շտապեց այնտեղ՝ պարզելու, թե ինչ է եղել: Եվ որքան ապշած, նույնքան խորապես վրդովված էր՝ տեսնելով պայքար մղող կողմերին ու տակնուվրա եղած կահույքը: Նա գայրացած զոչեց. «Վե՛րջ տվեք: Վե՛րջ տվեք այս ամենին: Ասացեք տեսնեմ ի՞նչ եք անում այստեղ»:

Եղբոր ձայնը լսելով Լի Մինը, որ հետում էր եւ գրեթե ուժասպառ էր եղել, անմիջապես կանգ առավ: Դժբախտաբար, այդ պահին Տա Տունգը, որ կամ չէր լսել Լի Կանի հրամանը, կամ զինադադար չէր ուզում նախքան փոքր-ինչ հաշիվ մաքրելը, անարդարացիորեն օգտվեց իրավիճակից՝ գետնին տապալելով Լի Մինին:

«Վե՛րջ տուր, Տա Տունգ», - կրկին ասաց Լի Կանը՝ եղբորն օգնության նետվելով:

Լի Մինն այնքան գայրացած էր, որ չթողեց եղբայրն իրեն դիպչի: Նա կարծում էր, որ Լի Կանը խռովարար Տա Տունգի մեղսակիցն է:

Լի Մինը նստեց հատակին եւ հավաքեց իր համրիչները: Գլուխը թափ տալով եւ ատամները կրճտացնելով նա ասաց. «Լամ՛վ ուսուցիչ ես... դու: Ես վճարում եմ քեզ... որ տղային սովորեցնես... վրա՛ն հարձակվի»:

Լի Կանն արդեն ուզում էր հանդիմանել Տա Տունգին կոպիտ պահվածքի համար, բայց երբ լսեց այս անհեթեթորեն անարդար մեղադրանքը, միանգամից փոխեց վերաբերմունքը: Գնալով իր գրասեղանի մոտ՝ նա նստեց եւ ասաց. «Բայց ինձ վիճակվեց տեսնել, որ դու՛ էիր հարձակվում նրա վրա: Դու փորձում էիր, բարեբախտաբար առանց հաջողության, դուրս նետել նրան իմ աշխատասենյակից»:

Լի Կանն ուզում էր շունչը տեղը բերել, երբ Լի Մինը հակադարձեց. «Աշ-

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

խատասեւյա՛կ: Ես մտածեցի, որ դա մի կեղտոտ ձկնորսանավա՛ն է: Այս փոքրիկ անասունը ոչինչ չի սովորել, բացի այստեղ ձկնորսություն անելուց եւ ըմբշամարտից»:

Այժմ բոլորի համար հայտնի բան է, որ դասասեւյակ մտնել առանց ուսուցչի թոյլտվության՝ սաստիկ վատ սովորություն է, իսկ աշակերտի հետ իրեն ազատություն թոյլ տալը, թեկուզ այդ աշակերտը որդիդ լինի, անպատիվ բան է: Լի Կանն զգաց, որ խախտում կատարողն իրեն կոպտորեն վիրավորել է, եւ անցավ ավելի խիստ տոնի. «Քանի որ իմ դպրոցն ես եկել, բարի եղիր նստել»: Նա հասկացավ, որ աթոռ չկա, որպեսզի եղբայրը նստի, եւ Տա Տունգին հանձնարարեց աթոռ ճարել:

Տա Տունգը, որ գործուկյա կերպով վերադասավորում էր կահույքը, վերցրեց շոջված աթոռներից մեկը եւ այն առաջարկեց հյուրին: Լի Մինն ընդհանրապես արհամարհեց տղային եւ մոտեցավ Լի Կաննի գրասեղանին:

«Ես նստելու ոչ մի մտադրություն չունեմ: Եկել եմ այստեղ, որպեսզի քեզ ասեմ, որ կառավարությունը հենց նոր հայտարարել է մաթեմատիկական պետական քննության ուսումնական ծրագրում ներառելու մասին, եւ ուզում եմ, որ տղաները սովորեն մաթեմատիկա: Ես երկու համրիչ եմ բերել ինձ հետ, բայց հիմա տեսնում եմ, որ դպրոցն ամենեւին դպրոց չէ...»:

Լի Կաննը հեզկաբար ծիծաղեց եւ ընդհատեց նրան. «Այո, ես իսկապես տեսա ըմբշամարտը: Բայց չեմ կարողանում հասկանալ, թե ինչու պետք է համրիչներն այստեղ բերեիր»:

«Նրանք պետք է դա սովորեն հիմա: Եթե դու չես կարող սովորեցնել, ապա ես ինքս պետք է նրանց սովորեցնեմ: Քեզ ասացի, որ կառավարությունը...»:

«Դե, քանի որ կառավարությունը հայտարարել է, որ մաթեմատիկական ներառվելու է պետական քննության ուսումնական ծրագրում, ես էլ, փաստորեն, արդեն սկսել եմ նրանց սովորեցնել արաբական թվերը: Մենք քո համրիչների կարիքը չունենք,- Լի Կանն իր դարակից հանեց փոքրիկ մի գիրք, որը բացեց եւ ցույց տվեց եղբորը: Դա մաթեմատիկայի տարրական մի դասագիրք էր, որի էջերում արաբական թվեր էին:- Տես՝ թե ինչ պետք է նրանք հիմա սովորեն»:

Լի Մինը լուռ ու անխոս նայեց գրքին: Սա մեկ այլ հարված էր նրա համար:

«Դու միշտ նորաթուխ գաղափարներ ունես»,- ծաղրոտ արհամարհանքով նետեց նա:

«Սա իմ «նորաթուխ» գաղափարը չէ՛: Այն տպագրվել է կրթության նախարարության «նորաթուխ» պահանջներին համապատասխան», - առարկեց Լի Կանը:

«Դե, լավ կանես՝ դա պահես քո որդու համար: Իմ Շիաո Միևը չի պատրաստվում սովորել դա», - նա գիրքը ետ նետեց Լի Կանին:

«Շահտ լավ: Այդ դեպքում ես կարիք չունեմ այլևս նրա վրա զուր ժամանակ վատնելու: Տա Տունգը միակն է, ով խիստ հետաքրքրվում է դրանով...»:

«Տա Տունգը : Ո՛չ էլ նա է սովորելու դա: Ես պատրաստվում եմ տանել նրան»:

«Տանել: Ի՞նչ նկատի ունես»:

«Նա ոչինչ չի սովորել, բացի ձկնորսությունից ու կովից: Ես նրան ուղարկելու եմ այնտեղ, որտեղից եկել է»:

«Միավուն՝ ես, մեծ եղբայր: Այդ Շիաո Միևն է, ում պետք է տանես այնտեղից: Նա բացառապես ոչինչ չի սովորել եւ մշտապես անախորժություններ է պատճառել»:

«Այլևս կարիք չես ունենա բողոքելու իմ տղայից, քանի որ որոշել եմ նրան նույնպես տանել»:

«Դեմ չեմ Շիաո Միևին տանելու: Բայց ինչ վերաբերում է իմ Տա Տունգին...»:

«Քո Տա Տունգն այլևս քոնը չի լինի: Նա ի՛մ որդին է, եւ ես նրան տանելու եմ հենց այսօր: Այս իսկ րոպեին»:

«Տարօրինակ ձեւ է՝ տնային ուսուցչիդ հյուրասիրելու: Ինչու՞, դեռ կիսամյակի վերջը չէ նույնիսկ, այնպես չէ՞», - ասաց Լի Կանը՝ վիրավորված :

«Ախ, հա՛, հասկանում եմ: Մի՛ անհանգստանա դրա համար: Կիսամյակի աշխատավարձը վաղը կուղարկեմ: Դրան ամենեւին դեմ չեմ»: Լի Միևն իրականում դեմ էր դրան, բայց որոշել էր թեկուզեւ մեծ զոհաբերություն կատարել, եթե անհրաժեշտ էր:

«Կարող ես քեզ պահել կեղտոտ փողերդ: Ես քեզնից կանխիկ մեկ մանրադրամ իսկ չեմ ուզում,- Լի Կանը ոտքի կանգնեց եւ ցատումնալից նայեց եղբորն ու Շիաո Միևին:- Իսկ հիմա՝ դու՛րս իմ տանից: Արագ, երկունդ էլ»:

«Ո՛չ, երկուսս չէ՛, այլ՝ երեքս: Ցավում եմ քեզ համար, բայց գիտեմ, որ չես ընդունի չվաստակած ոչ մի աշխատավարձ», - Լի Միևը բռնեց իր որդու ձեռքից եւ նշան արեց, որ Տա Տունգը միակն իրենց:

Տա Տունգը, որ լսել էր խոսակցությունը, լի էր վատ նախազգացումով

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

եւ ամենեին ցանկություն չունեք գնալու: Բայց Լի Կանը համոզեց. «Լավ, Տա Տունգ, դու պետք է գնաս: Զանի որ նա անվանապես քո «հայրն» է, դու պարտավոր ես ենթարկվել նրա հրամաններին: Բայց ես կոտեսնեմ, թե ինչ կարող եմ անել քեզ համար հետո»:

Տա Տունգը ոչինչ չպատասխանեց եւ սկսեց հավաքել իր գրքերը: Լի Մինն անհամբեր ասաց. «Գնացի՛նք, Տա Տունգ: Թո՛ղ այդ գրքերը եւ արի՛ մեզ հետ»:

Տա Տունգն անվճռակաևորեն նայեց Լի Կանին եւ տեսավ, որ ուսուցիչը գլխով հավանություն է տալիս: Նա ցած դրեց իր գրքերը եւ, հետետելով Լի Մինին ու Շիաո Մինին, դուրս եկավ:

Նրանց գնալուց հետո շուտով դպրոց եկավ Կրկնակի Օրհնությունը՝ իրերը եւ տղաների գրքերը հավաքելու: Աղջիկը եկավ եւ գնաց, ինչպես միշտ, Լի Կանի տան ետեւի անցադռնով: Ի հաստատումս եղբոր հետ այլեւս առնչություն չունենալու իր վճռակաևության՝ Լի Կանը հետեւեց աղջկան մինչեւ անցադռուը, որն էլ հենց նույն պահին տեղում շրխկոցով փակեց եւ սողնակը գցեց:

Երբ Կրկնակի Օրհնությունը գրքերը հանձնեց իր տիրոջը, նրան պատմեց նաեւ անցադռուը շրխկոցով փակելու եւ սողնակը գցելու մասին: Լի Մինը խիստ զայրացավ եղբոր այդ վարմունքից եւ կարգադրեց աղջկան, որ գնա ու շրխկոցով փակի մյուս անցադռուը, որ գտնվում էր տան առջեւի մասում, սողնակն էլ գցի: Աղջիկը մեծ հաճույքով հնազանդվեց տիրոջ հրամանին եւ նույնիսկ այն աստիճան ջանաց, որ երկու անգամ շրխկացրեց դռուը սողնակը գցելուց առաջ: Սակայն նրա հաճույքը շատ կարճ տևեց: Երբ եկավ տիրոջը զեկուցելու, թե ինչ է արել, Լի Մինը միտքը փոխել էր: Լի Կանը փակել էր այն դռուը, որը նա սովորաբար օգտագործում էր ամբարներ գնալու համար, քանի որ այլեւս այդտեղ պահվող բրինձ չունեք: Բայց Լի Մինը ոչ մի դեպքում չէր կարող իրեն թույլ տալ նույն կերպ վրեժ լուծել: Որովհետեւ Լի Կանի այգին, որտեղ հասնելու միակ ճանապարհն այժմ մյուս անցադռնով էր, լի էր բանջարեղենով, որ Լի Մինն էր վերջերս աճեցրել: Այնպես որ՝ խեղճ Կրկնակի Օրհնությանն այժմ ասվեց, որ ետ գնա ու նորից բացի անցադռուը՝ որքան հնարավոր է անաղմուկ:

ԳԼՈՒԽ 3

*Երդվում եմ ես՝ դեն էր նետված
Ղևտեր պարանև այս հիև:
Երբ տուն տարա, տեսա հանկարծ՝
Կով էր կապված ծայրին:*

Տա Տունգև այդ գիշեր չկարողացավ քնել: Հաջորդ առավոտ, երբ վեր կացավ եւ մտավ միջնասենյակ, տեսավ, որ նախաճաշը դեռ մատուցված չէ: Նա զգաց, որ ուշ է, բայց քանի որ այդ օրն արեւ չկար եւ քանի որ տան միակ ժամացույցը գտնվում էր մոր ննջասենյակում, գնաց այնտեղ՝ տեսնելու, թե ժամը քանիսն է: Ժամը տասին մոտ էր, բայց նա տեսավ, որ մայրը, ինչպես նաեւ Շիառ Մինը, երկուսն էլ դեռ անկողնում են: Հոր հետքն իսկ չէր երեւում:

Տա Տունգը հասկացավ, որ առայժմ որոշ ժամանակ երեւի դպրոց չեն գնա: Նա չանհանգստացավ, ինչպես միշտ էր լինում, երբ համոզում էր Շիառ Մինին, որ վեր կենա ու պատրաստվի դպրոց գնալու: Ուղղակի սովորականի պես ողջունեց մորը եւ ապա գնաց խոհանոց, որ իմանա, թե ինչ եղավ նախաճաշը: Ծերունի Չանգը նրան ասաց, որ ամեն ինչ պատրաստ է, բայց իրեն կարգադրել են սպասել տանտիրոջը, որն այդ առավոտ շատ շուտ էր դուրս եկել: Շուտով Լի Մինը ետ եկավ եւ հրամայեց անմիջապես նախաճաշը մատուցել: Նախքան սեղանի մոտ նստելը նա գնաց իր աշխատասենյակ ինչ-որ բան գրելու: Թղթի կտորը, որի վրա գրել էր, դնելով գրպանը՝ նա ետ եկավ միջնասենյակ նախաճաշելու: Երբ նրա կինն ու Շիառ Մինը դուրս եկան ննջասենյակից, նա կնոջն ասաց, որ աղախիններին հանձնարարի «անմիջապես կապել իրերը»: Կինը մի փոքր զարմացավ: Նայելով Տա Տունգին ինչ-որ տխուր նախազգացումով նա դուրս եկավ ետնասենյակով: Մինչ Տա Տունգն ազահաբար նախաճաշն էր կով տալիս, զգաց, որ փոքր-ինչ տարօրինակ է, որ մայրն իր սենյակը չգնաց: Նա կուզեր իմանալ, թե այդ ինչ իրեր են, որ հայրն ուզում էր աղախինները կապեն:

Մինչ նախաճաշը կավարտեին, Կրկնակի Օրինությունը միջնասենյակ եկավ՝ ձեռքին փոքրիկ մի կապոց: Մի հայացք նետելով Տա Տունգի կողմը՝ կապոցը դրեց նրա մոտ եւ ոչինչ չասաց: Լի Մինը շատ արագ կերավ վերջացրեց իր բրինձը եւ կարգադրեց Տա Տունգին շտապել: Հենց որ տղան ցած դրեց իր թասն ու ծողիկները, Լի Մինը, մի ձեռքով հատակից վերցնե-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

լով կապոցը, իսկ մյուսով Տա Տուևգի ծեռքը բռնելով, դուրս ելավ տևից՝ տղային համարյա քարշ տալով իր ետեւից: Տա Տուևգը շփոթմունքի ու տարակուսանքի մեջ էր եւ ավելի շփոթվեց, երբ անցան գլխավոր մուտքը: Տեսնելով, որ մոտենում են, ծերունի Վանը շտապեց ընդառաջ, ինչպես իր սովորույթն էր եւ պարտականությունը, որպեսզի թեթեւացնի իր տիրոջ բեռը: Բայց գլխի թեթեւ մի շարժումով Լի Մինը, առանց բառ իսկ արտաբերելու, նշան արեց նրան, որ հեռանա: Լի Մինը հայտնի էր տան ծառաներին ամեն կերպ օգտագործելու իր սովորությամբ: Հազվադեպ կարելի էր նրան տեսնել, որ տևից դուրս գա՝ ինքը կրելով թեկուզ փոքրիկ մի փաթեթ: Տա Տուևգի ուշիմ մտքի համար պարզ էր, որ հայրը չի ուզում ուրիշ որեւէ մեկն իմանա, թե ուր են իրենք գնում: Նա անհանգստացավ: Ապա հարցրեց. «Ո՞ր ենք գնում, հայրիկ»:

«Հարց մի՛ տուր: Արի՛ ինձ հետ, շուտով ամեն ինչ կիմանաս»:

«Շա՞տ հեռու ենք գնալու, հայրիկ: Կարո՞ղ եմ կապոցն ինքս վերցնել»:

Լի Մինը չպատասխանեց:

Տա Տուևգը գիտեր, որ ինչ-որ բան այն չէ: Նա ետ նայեց դեպի տան գլխավոր մուտքը, որով հենց նոր էր դուրս ելել, եւ տեսավ, որ մայրն ու եղբայրը կանգնած են այդ մուտքի դրսի կողմում եւ նայում են իրեն ու հորը: Նրանց դեմքերին կարծես տարօրինակ արտահայտություն կար: Ծառաներից մի քանիսը նույնպես գաղտագողի իրեն էին նայում տանտիրուհու եւ Շիառ Մինի ետեւից:

«Ո՞ր ենք գնում, հայրիկ,- պատասխան պահանջեց Տա Տուևգը :- Մինչեւ չասես, թե ուր ենք գնում, չեմ գա քեզ հետ»:

Տղային քարշ տալով իր ետեւից՝ Լի Մինը կտրուկ պատասխանեց. «Այնտեղ, որտեղից եկել ես»:

Տա Տուևգը բնագոյաբար դանդաղեցրեց քայլերի արագությունը: «Ես չեմ հեռանա իմ տևից: Ես եկել եմ իմ հորեղբոր դպրոցից: Ես ուզում եմ ետ գնալ»:

Տղան, շատ չմտածելով, թե ինչպես է իրեն պահում փողոցում, սկսեց հորը ետ քաշել:

«Վերջ տուր,-գոռաց նրա վրա Լի Մինը:- Քեզ կարգին պահիր հասարակական վայրում»:

«Չէ՛, - Տա Տուևգը համառ տղա էր, եւ հայրը գիտեր դա:- Ես պետք է իմանամ ո՞ր ես ինձ տանում»:

Փողոցում պայքարելը պատշաճ չէր լինի: Լի Մինն ստիպված էր համոզել տղային, որ հետեւի իրեն. «Ես մի շատ լավ տեղ եմ գտել քեզ համար եւ

քեզ տաևում եմ այնտեղ»:

«Բայց ի՞նչ է լավ տեղը: Ես այնտեղ ի՞նչ եմ անելու»:

«Քանի որ այդքան տարված ես ձկնորսությամբ, քեզ ուղարկում եմ ձկնորսի մոտ, որ իրեն աշակերտ վերցնի: Նրանից ձկնորսություն կսովորես սրտիդ ուզածի չափ: Հիմա իմացա՞ր ուր ես գնում»: Իր ետեւից քարշ տալով տղային՝ նա նորից արագացրեց քայլերը: «Արա՛գ, արի՛ ինձ հետ»:

«Ձկնորսություն»»: Տղան տատանվում էր: «Իսկ ի՞նչ կասի հորեղբայրս»:

«Հորեղբայրդ: Ո՞վ է քո հորեղբայրը»,- ծաղրանքով ասաց Լի Մինը:

Նրանք արդեն դուրս էին եկել գյուղի բնակելի տարածքից եւ գտնվում էին բաց տեղանքում՝ շարժվելով ուղիղ դեպի Երկնային կամուրջը: Լի Մինը որոշեց պատմել տղային ամեն բան:

«Դու հորեղբայր չունես, համենայն դեպս դա իմ իմացած մարդը չէ: Քո հայրը ձկնորս էր»:

«Ես դա գիտեմ»,- հնչեց անսպասելի պատասխանը:

«Գիտե՞ս, այդ ինչպե՞ս: Ո՞վ է ասել քեզ: Համոզված եմ՝ դա քո անպիտան... անպետք...»: Լի Մինը չէր կարողանում ավելի լավ բան գտնել, այնպես որ ստիպված էր ասել՝ «... քո անպիտան հորեղբայրն է եղել»:

«Չէ՛,- ասաց տղան,- Շիաո Մինն է ինձ ասել առաջինը: Հետո ես լսել եմ բոլորից ու ամեն տեղ: Հորեղբայրս միշտ արգելում էր Շիաո Մինին հիշատակել, որ ես «թշվառ ձկնորսի լակոտ» եմ: Դու ինքդ դա ինձ ասացիր միայն երեկ»:

«Դե, քանի որ գիտես, է՛լ ավելի լավ,- ասաց Լի Մինը,- Բայց ես ամեն բան արեցի, որ քեզ մարդ դարձնեմ... եւ ձախողվեցի: Ես քեզ գնեցի քո քաղցած հորից ութ տարի առաջ... Ես վճարեցի... Բավականին մեծ գին վճարեցի քեզ համար... եւ դու ինձ վրա շատ ավելի թանկ արժեցար այս ութ տարվա ընթացքում: Քո ուտելիքը, հագուստը եւ շատուշատ այլ ծախսեր: Ես կանխիկ վաթսուն հազար վճարեցի իմ այդ անպիտան եղբորը, որ քեզ սովորեցնի, բայց Շիաո Մինն ընդհանրապես ոչինչ չի սովորել, իսկ դու դարձել ես բացարձակ սրիկա»:

«Ես սրիկա չե՛մ դարձել...»,- բողոքեց տղան:

«Ինչպե՞ս ես համարձակվում հակաճառել ինձ, անիծվա՛ծ սրիկա,- պոռթկաց Լի Մինը:- Եվ այն ամենից հետո, երբ այդքան գումար ծախսեցի ու դաստիարակեցի քեզ, փոխարենն ի՞նչ ստացա որպես հատուցում: Անիծվա՛ծ սրիկա, քիչ էր մնում ինձ սպանելի երեկ»:

Տա Տունգի սիրտը զղջումով էր լի երեկվա միջադեպի պատճառով,

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

բայց ևս զգում էր, որ կգերադասեր մեռնել, քան ներողություն խնդրել մի բանի համար, որտեղ իր մեղքը չկար, եւ ինքը դա լավ գիտեր: Եթե Լի Մինն առաջինը իր ափսոսանքը հայտներ, Տա Տունգն ամենայն հավանականությամբ կմոռանար վիրավորանքը եւ կխոստովաներ, որ դա եղել է իր սեփական մեղքով: Բայց քանի որ Լի Մինը դեռ անարդարացիորեն մեղադրում էր իրեն, ևս խռոված լռություն էր պահպանում:

«Հին ասացվածքն ասում է՝ «Երբեք մի՛ փորձիր վագր դաստիարակել: Եւ քո բարությունը կփոխհատուցի քեզ ուտելով»: Այդպես է ևս ստորին ծագման լակոտին դաստիարակելու դեպքում,- շարունակեց Լի Մինը:- Կգերադասեի դժոխք գնալ, քան քեզ մեկ օր էլ պահել»:

Տա Տունգը կուզեր նրան ասել, որ չարաչար սխալվում է եւ եթե ևս դաստիարակեր վագր, այդ վագրն, անկասկած, կփոխհատուցեր իր համար ծախսած ամեն մի կանխիկ դրամ: Բայց այդպիսի բառերը կհնչեին որպես նվաստացում եւ աղաչանք, իսկ Տա Տունգը չափազանց հպարտ էր դա անելու համար: Փոխարենը ևս ասաց. «Պետք չէ, որ ինձ պահես: Հորեղբայրս կպահի ինձ»:

«Հորեղբայրդ: Ո՞վ է քո հորեղբայրը,- չարամիտ ծաղրանքով ասաց Լի Մինը:- Դու գիտես, որ ևս այնքանով է հորեղբայրդ, որքանով ես հայրդ եմ»:

«Որտե՞ղ է... որտե՞ղ է... որտե՞ղ է իմ հայրը՝ ձկնորսը», հարցրեց Տա Տունգը անվճռականորեն:

«Հայրդ, ձկնորսը,- քմծիծաղեց Լի Մինը:- Ուրեմն դու նրան հայր ես անվանում: Լավ, եթե ուզում ես իմանալ, ևս անհետացել է երկու հազարի հետ... այն փողի հետ, որ վճարեցի քեզ համար»:

«Իսկ... իսկ... իսկ մայրս...», - համարձակվեց հարցնել Տա Տունգը:

«Մայրդ,- արհամարհանքով արձագանքեց Լի Մինը:- Չկնորսի կնոջը նկատի ունես, կարծում եմ: Եւ անհետացավ ամուսնու հետ միասին»:

«Ի՞նչ է նրանց անունը: Ի՞նչ է... ի՞նչ է իմ անունը... իմ իսկական անունը»:

«Ես իսկապես չգիտեմ»:

Լի Մինի սիրտն ամենեւին էլ չցավեց, երբ լսեց, որ տղան այդպիսի հարց է տալիս, թեեւ ևս ցավ ապրեց ի՞ր համար: Որովհետեւ հիմա հասկացավ, որ այդքան շատ փող էր ծախսել դաստիարակելու համար մեկ ուրիշի որդուն, ով, հակառակ այն բանին, որ ոչ մի կապ չի ունեցել իր սեփական հոր եւ մոր հետ, դեռ այդքան շատ էր ուզում իմանալ նրանց մասին:

Տա Տունգը լուռ էր որոշ ժամանակ: Եւ չգիտեր ինչ ասի կամ ինչ անի:

Ասեկոսները, որ հաճախ էր լսել, այժմ հաստատվում էին: Քանի որ «հայր» եւ «մայր» բառերը երբեք նրան փաղաքշանքի զգացում չէին հաղորդել, նա ո՛չ ցավ էր ապրում, ո՛չ էլ հիասթափված էր՝ իմանալով, որ ինքը լքված մի անձնավորություն էր: Որքան էլ տարօրինակ էր, միշտ նրան թվում էր, թե «հորեղբայր» բառն ավելի քաղցր է հնչում, քան «հայրը» կամ «մայրը»:

Քանի դեռ քայլում էին, Լի Մինը շարունակում էր հանդիմանել նրան եւ դժգոհել տղայի ծնողներից: Տա Տունգն այժմ մտքերով էր տարված եւ ընդհանրապես չէր լսում, թե այդ մարդն ինչ է ասում: Նա գնում էր Լի Մինի ետեւից կամրջի վրայով եւ անտարբեր ու անհաղորդ հայացքով նայում էր երեւացող տներին: Այնտեղ, ուր նախկինում ընդհանրապես ոչինչ չկար ավազուտ ցամաքալեզվակին, այժմ ծղոտե տանիքով բավականին շատ ծածկակառույցներ էին գետի ափին, բացի այդ՝ մեկ տասնյակից ավելի տներ կային հեռվում: Մի տարօրինակ փոքրիկ ու հին հյուղակ էր կանգնած այդտեղ՝ դեմքով դեպի գետը: Ակնհայտորեն՝ երբեք շատ պաշտպանված չէր եղել տարերքից՝ նույնիսկ երբ նոր էր, եւ տարիներ շարունակ անձրեւն ու քամին խարխուլել էին այն՝ հասցնելով այս խղճալի վիճակին: Այդտեղ բնակվողը պետք է որ շատ ծույլ ու անհոգ մեկը լիներ, քանզի ակներեւ էր, որ այս խղճուկ ցախանոցի նորոգումները պարզապես այն ավերակների վերածվելուց փրկելու համար էին արվել: Այն իր ողջ ծանրությամբ թեքվել էր դեպի հարավ, եւ տապալված կլիներ գետնին, եթե որպես հենարան չձառայեին երկու խորտակված նավերի կայմերը: Տանիքն այս կամ այն կերպ կարկատված էր արմավենու սաղարթով, ծղոտի կապուկներով ու հնդկեղեգի տերեւներով, ճյուղերով եւ կոտրված կահույքի բեկորներով:

Դուռ չկար, եւ Լի Մինը Տա Տունգին տարավ ուղիղ դեպի հյուղակի ներսը: Միջին տարիքի մի տղամարդ, ցնցոտիներ հագած, կռացել էր անկյունում եւ չոր ճյուղերով ու տերեւներով կրակ էր վառում կոտրված վառարանի մեջ: Առանց վեր կենալու՝ նա իր տգեղ դեմքը շոջեց Լի Մինի կողմը եւ ասաց. «Նստե՛ք, տեր իմ: Աթոռ չկա, նստե՛ք, խնդրեմ, իմ մահճակալին»:

Նրա անկողինը ծղոտից ու փալասներից էր պատրաստված եւ չափից դուրս կեղտոտ էր՝ բառերով նկարագրելու համար: Լի Մինը սարսափով նկատեց դա եւ նշեց, որ կնախընտրեր կանգնած մնալ:

«Շատ եմ ցավում, որ ոչինչ չեմ կարող Ձեզ հյուրասիրել, տեր իմ: Տեսա, որ հեռվից եք եկել, ասացի ջուր եռացնեմ՝ Ձեզ թեյ հյուրասիրելու համար, տեր իմ»: Այս ասելով՝ նա շարունակեց բերանով փչել կրակը:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Քանի որ ո՛չ վառարանը, ո՛չ հյուղակը ծիսելույզ չունեին, փոքրիկ տարածքը լցվեց ծխով, ինչը Լի Մինին եւ տղային բավականին անհարմարություն պատճառեց:

«Տուր եռացնելու կարիք չկա, ես թեյ չեմ ուզում,- ասաց Լի Մինը հրամայական տոնով:- Ահա քո աշակերտը»:

Հաստատված տեսելով իր ամենավատ կասկածները՝ Տա Տուկը գրեթե ճչաց: Նա աչքերը հառել էր տղամարդու մեծ, տգեղ դեմքին եւ պատրաստ էր արդեն փախչել, եթե այդ մարդը փորձեր մոտ գալ իրեն: Սակայն չէր երեւում, թե նա ընդհանրապես հետաքրքրված է տղայով:

«Լավ, ուրեմն իզուր եմ փորձում այս անիծյալ կրակը վառել: Տեսնում եմ իմ թեյը չեք խմի»,- այս ասելով՝ նա իր մազոտ ձեռքերից մեկով բարձրացրեց թեյամանը եւ մի քիչ ջուր թափեց կրակի վրա: Թշնոց լսվեց, եւ ծուխ ու գոլորշու ամպեր բարձրացան ու լցրեցին հյուղակը:

Լի Մինն ու Տա Տուկը հագացին շնչահեղձ լինելով՝ հագիվ կարողանալով աչքերը բացել: Սակայն տղան, անընդհատ շփելով աչքերը, չէր համարձակվում հայացքը կտրել այն մարդուց, ում գլուխը, երբ հիմա կանգնած էր, փոքրիկ հյուղակի գրեթե տանիքին էր հասնում:

Հրեշների ու դեւերի մասին պատմությունները երբեք չէին վախեցրել Տա Տուկին: Բայց երբ տեսավ այս այլանդակ ճիվաղին, որն, ինչպես ասվեց, իր տերն էր լինելու, ծխով պարուրված՝ մութ անկյունից դուրս ելնելիս, որի կերպարանքը, թվում էր, ամեն վայրկյան ավելի էր մեծանում, իսկ գլուխն ավելի ու ավելի փոքրանում էր, մասամբ հեռավորության պատճառով եւ մասամբ՝ իր հսկայական մարմնի հետ համեմատած՝ տղայի դողը չէր դադարում, եւ նա ավելի ու ավելի ամուր էր սեղմվում հորը:

«Դե, Տա Տուկ, ահա քո տերը»,- ասաց Լի Մինը, երբ փորձում էր տղային առաջ հրել:

«Չէ՛, չէ՛,- գոչեց Տա Տուկը՝ հնարավորինս խույս տալով ու ետ փախչելով որքան կարող էր հեռու: - Խնդրում եմ, հայրի՛կ, արի ետ գնանք»:

«Ուրեմն իմ փոքրիկ աշակերտն ինձ չի՞ սիրում: Նա ուզում է ե՛տ գնալ իր հոր հետ, հը՞»,- ատամները բացելով հեզնաժպիտ ասաց տղամարդը:

«Ո՞վ է քո հայրը: Ես քո հայրը չեմ, դու գիտես»,- դաժանորեն ասաց Լի Մինը: Նա տղային քաշեց առաջ:

Տա Տուկը խորշում էր իր այսպես կոչված տիրոջ տեսքից, բայց հիմա Լի Մինի բառերն ու արարքը տղային ստիպեցին էլ ավելի խորշել իր այսպես կոչված հորից: Որքան որ ահավոր էր գնալ այդ օտարականի մոտ, բայց միաժամանակ սփոփիչ էր Լի Մինին թողնելը: Տղան դանդաղ քայլեց

դեպի մարմնեղ տղամարդը՝ նահատակի հնազանդ վճռականությամբ, որն ուզում է իմանալ, թե ինչ է իր հետ լինելու, և ինչ պետք է ինքն անի հետո: Նա վախով ու վատ կանխազգացումով նայեց օտար մարդու կոշտուկոպիտ դիմագծերին և սարսռաց՝ ուսի վրա իր տիրոջ ողջուկող ձեռքի շոյանք - հպումը կանխազգալով:

Սակայն Տա Տունգը գերազնահատում էր իրեն: Թվում էր՝ տերը նրա վրա շատ ուշադրություն չի դարձնում: Անտեսելով տղայի մոտենալը՝ այդ մարդը նայեց Լի Մինին և հարցրեց. «Դե, տեր իմ, իսկ փող բերե՞լ եք ինձ»:

«Այո,- ասաց Լի Մինը,- բայց դու պետք է նախ պայմանագիրն ստորագրես»:

Նա ցած դրեց իր կապոցը և գրպանից թղթի մի մեծ թերթ հանեց:

«Բայց ես չեմ կարող ստորագրել, - ասաց տղամարդը:- Իսկ նրա հագուստն ու մյուս իրերը բերե՞լ եք Ձեզ հետ»:

«Դրանք բոլորն այստեղ են՝ կապոցի մեջ,- պատասխանեց Լի Մինը:- Եթե չես կարող ստորագրել, պետք է մատնահետքերդ դնես դրա վրա»:

Տա Տունգը չէր կարողանում հասկանալ դա: Եթե Լի Մինը տղային վաճառում էր անձանոթին, վաճառողն, անկասկած, կարիք չունեի փող բերելու, որ վճարեր գևորդին: Նա ուշադիր լսում էր նրանց: Այդուհանդերձ, պայմանագրի համաձայն, որն անձանոթը չէր ստորագրելու, մինչև որ Լի Մինն այն ամբողջությամբ չկարդար նրա համար, Լի Մինն այդ մարդուն վճարելու էր քսանհինգ հազար՝ կանխիկ թղթադրամներով, որ սահմանվում էր որպես «ուսուցման վարձավճար և ներդրում տղայի ապագա ծախսերի համար»:

Քանի որ հյուղակույմ թանաք չկար, և այդ մարդը բավականին անհամբեր էր թվում, որ փողն ստանա, նա ստիպված թրջեց իր մատները և դրանցով շփեց թեյամանը դրսի կողմից, ինչպես ևաև վառարանի մուրն ու մոխիրը, որպեսզի ստացվեր դրոշմի համար անհրաժեշտ սետությունը: Այս անելուց հետո, ինչը, բնականաբար, զգվելիորեն կեղտոտեց նրա ձեռքերը, նա ուղղակի սրբեց դրանք իր տաբատի վրա և առաջ պարզեց փող վերցնելու համար: Լի Մինն այդ փողը թղթադրամներով հատ-հատ հաշվեց նրա համար: Նա արագ հափշտակեց թղթադրամները իր մագոտ ու կեղտոտ մեծ ձեռքերով և խցկեց գրպանը: Այդ մարդուն ասելով, որ այժմվանից և այսուհետ նա պատասխանատու է լինելու տղայի համար, Լի Մինը հեռացավ՝ առանց Տա Տունգին մեկ բառ իսկ ասելու:

Որքան էլ որ տարօրինակ է, բնագործ, որ տղային ստիպեց նետվել դեպի դուռը, միաժամանակ պատճառ դարձավ, որ նա կանգ առնի այդտեղ: Լի Մինն արագ հեռանում էր առանց ետ նայելու, և Տա Տունգը ձայն տվեց.

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Չե՛մ ուզում մնալ այստեղ, հայրի՛կ, ինդրո՛ւմ եմ տա՛ր ինձ այստեղից, հայրի՛կ: Հայրի՛կ: Հա՛յ...»: Տա Տունգը մի տեսակ իրեն անկարող էր զգում շարունակել այդ մարդուն հայր անվանել: Նա ծանր հայացքով սեւեռուն կայեց այդ կերպարանքի ետեփց, որն ավելի ու ավելի էր փոքրանում, եւ վերջապես տեսարանը նրան այնքան կողկալի թվաց, որ այլեւս չէր կարող կայել: Հայացքը շրջեց եւ կայեց հորիզոնին: Երկինքը, որ մասամբ ամպամած էր, սկսեց լուսավորվել մի փոքր, բայց անձրեւ էր մաղում: Տա Տունգը թաքուն մի հայացք նետեց հեռացող կերպարանքի կողմը եւ բղավեց ամբողջ ձայնով. «Անձրե՛ւ՛ է գալիս: Չե՛ս վերադառնա»:

Ո՛չ: Անօգուտ էր: Սրընթաց կերպով փոքրացող կերպարանքը շարունակում էր հեռանալ՝ նույնիսկ արագացնելով իր ընթացքը: Տա Տունգն զգաց, թե ինչպես հարավ-արեւմտյան մեղմ քամին խփվեց դեմքին՝ սառը ջրակաթիլներով, եւ ետ դարձավ հյուղակ:

Անձանոթը ծնկել էր գետնին՝ բաց կապոցն իր առջեւ: Դրա մեջ արժեքավոր ոչինչ չկար: Միայն Տա Տունգի ներքնաշորերն էին եւ գուլպաները՝ բոլորն էլ սովորական գործվածքից պատրաստված եւ բավականին հնամաշ: Դրանք մաքուր էին եղել, բայց այժմ տրորված էին ու աղտոտված սեւ մատնահետքերից: Տղամարդը հիասթափված էր եւ շարտեց դրանք իր անկողնու վրա: Վեր կենալով՝ նա գայրացած ասաց Տա Տունգին.

«Ուրեմն ունեցած-չունեցածդ էս է: Դրանք ինձ քոռ գրոշ իսկ չեն բերի: Փոքրիկ մուրացկան: Դե հիմա գնանք աշխատելու»:

Գյուղում աշխատանքը նշանակում է դաշտերում աշխատել կամ ձեռքի այլ աշխատանք կատարել, իսկ սովորելն ավելին չի համարվում, քան պարզապես ժամանց: Այսպես Տա Տունգին նախկինում երբեք չէին ասել, որ աշխատի, եւ բառը գրավչություն ուներ նրա համար: Նա պատրաստ էր եւ անհամբեր՝ հետեւելու անձանոթին:

Տղամարդը դուրս ելավ եւ կայեց երկնքին: Անձրեւը շատ ավելի էր ուժեղացել, քան նախկինում էր, եւ թվում էր՝ որոշ ժամանակ եղանակը չի փոխվի: Առանց անջրանցիկ զգեստ հագնելու՝ նա, պատրաստվելով դուրս գալ, գլխով նշան արեց Տա Տունգին, որ հետեւի իրեն. «Արի այստեղ: Հետս արի»:

«Բայց անձրեւ է գալիս: Չե՛ս ուզում մի բան հագնել,- հետաքրքրվեց Տա Տունգը: - Ճանապարհը շատ թաց է, իսկ ես «մեխով կոշիկներ» չունեմ»:

Չինական կոշիկները նման են հողաթափերի: Հարուստները հագնում են կերպասե կոշիկներ կաշվե ներբաններով, իսկ աղքատները եւ համար-

յա բոլոր գյուղաբնակները հազնում են բամբակե կոշիկներ՝ լաթե ներբաներով: Դրանք բացառապես անպետք են թաց եղանակի ժամանակ: Կաշվե ճտքավոր կոշիկներ հազվադեպ են օգտագործվում: «Մեխով կոշիկներ» սովորաբար հազնում են այն մարդիկ, ովքեր չեն ուզում դուրս գալ բոբիկ ոտքերով: Դրանք պատրաստվում են բուսական յուղով ներծծված եւ չորացրած կտորից եւ ունեն փայտե ներբաններ՝ սովորաբար մեկ մատնաչափ հաստությամբ, որոնք ծածկված են մեծ մեխերով: Հարուստները շրջում են ծածկապատգարակներով, աղքատները հոյսը դնում են իրենց բոբիկ ոտքերի վրա, իսկ «մեխով կոշիկները» տարածված են միայն միջին դասի շրջանում:

Ոտաբոբիկ անձանոթը գոռաց անհամբեր. « «Մեխով կոշիկներ՝»: Գրողի ծո՛ցը «մեխով կոշիկները»: Հանի՛ր կոշիկներդ ու գուպաներդ եւ արի ինձ հետ հե՛նց հիմա»:

Տղամարդը դուրս քայլեց անձրեւի տակ: Տա Տունգը հասեց իր կոշիկներն ու գուպաները՝ որքան կարող էր արագ եւ շտապեց հետեւել նրան: Անձրեւը թափվում էր հորդառատ, եւ տղան ետ նետվեց, որպեսզի վերցնի գործվածքի մեծ կտորը, որն օգտագործվել էր կապոցի համար, եւ դրանով ծածկեց իր գլուխն ու ուտերը: Տղամարդն անցել էր որոշ հեռավորություն եւ նորից գոռաց. «Արագացրո՛ւ, անպիտան պճնամուլ: Անձրեւը քեզ չի սպանի: Դե՛, արագացրո՛ւ»:

Տա Տունգը հետեւեց տղամարդուն՝ որքան կարող էր արագ եւ տեսավ, որ այնքան էլ հեշտ չէ հասնել մեծ քայլերով գնացող այդ մարդու ետեւից: Գետի ավազուտ ափին Տա Տունգն զգաց, որ հաճելի է բոբիկ քայլել, եւ հատկապես իր ոտքերի ճողփացող ձայնը շոյում էր նրա մանկական լսողությունը: Բայց երբ հասան գյուղի խորդուբորդ ճանապարհին, իսկ հետո՝ բրնձի ոռոգվող դաշտերի միջեւ ընկած փոքրիկ նեղ կաճանին, նա սկսեց գիտակցել, որ իր նուրբ, մերկ ոտքերով քայլելը սարսափելի տանջանք է: Քանի որ տղամարդը երբեք չէր դանդաղեցնում քայլերը, երեխան հազիվ էր կարողանում հետեւել նրան:

Տղամարդն ուղեւորվում էր դեպի բաց դաշտերը՝ շատ հեռու եւ՛ գյուղից, եւ՛ գլխավոր ճանապարհից: Այժմ, երբ բավականաչափ հեռու էր իր գյուղից, սկսեց դադար առնել ամեն անգամ լճակի հասնելով: Բավականին շատ լճակներ կան գյուղական տարածքում, քանի որ բրնձի դաշտերի համար դրանք որպես ջրամբար են ծառայում: Երբ նա կանգ էր առնում գետնու այդ լճակները, դա հնարավորություն էր տալիս Տա Տունգին ավելի մոտենալ, եւ շուտով պարզ դարձավ, որ նա ամբողջովին թրջվել է

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

անձրեւից, եւ որ նրա գլխի շուրջն աստիճանաբար գոլորշու լուսապսակ էր ձեւավորվում, ու գլուխը նմանվել էր կաթսայի շոգիի միջից հեկց կոր հա-
նած մեծ ու տաք խմորագլուխի: Տղան սկսեց հոգնություն զգալ եւ նկատեց,
որ ինքն էլ թրջված էր, ու շորի կտորն ամենեւին օգուտ չէր տալիս: Նա զգ-
աց իր տաք եւ հատու շնչառությունը: Անձրեւը նրա համար այլեւս տհաճ
չէր, որովհետեւ մտածում էր, որ այսպես թե այնպես՝ իր հագուստը միայն
քրտինքից էլ հավասարապես թրջվելու էր:

Անձանոթը Տա Տունգին ասաց, որ խնամքով կշի մի քանի լճակի հնա-
րավոր արտահոսքը, ապա նրանք տուն դարձան: Կեսօրից հետո շատ ուշ
էր, երբ տուն հասան, եւ Տա Տունգը սաստիկ ուժասպառ էր ու քաղցած:
Նա բավականին ետ էր մնացել, եւ երբ հյուղակ մտավ, տեսավ, որ անձա-
նոթը, կիսամերկ, կռացել էր ծխացող վառարանի վրա եւ ինչ-որ բան էր
եփում: Տա Տունգը հանեց իր թաց շորերը եւ աղքատիկ ներքնազգեստի
միջից ինչ-որ բան ջոկեց հագնելու համար: Նա նկատեց, որ տղամարդն իր
թաց, հաստ վերնազգեստը կախել էր վառարանի մոտի ցցից՝ չորացնելու,
եւ դրա համար ինքն էլ իր հագուստը փորձեց կախել նրա վերնազգեստի
վրայից նույն ցցին: Տղամարդը սաստիկ գայրացավ: Նա կանգնեց, ցցի
վրայից հանեց տղայի շորերը եւ շարտեց գետնին: «Նախ քամի՛ր, հետո ու-
րիշ մի տեղ կախիր,- գոռաց նա:- Չհամարձակվե՛ն կախել իմ շորի վրա-
յից»:

Տա Տունգը գետնից հավաքեց իր թաց շորերը եւ ամբողջ ուժով փոր-
ձեց քամել: Մի քիչ ջուր կաթկթեց, սակայն շորերը շատ ծանր էին տղայի
համար, որպեսզի կարողանար ամբողջ ջուրը քամել: Նա ստիպված էր
այդպես թաց-թաց կախել:

Շատ մութ էր, եւ վառարանի կրակը լույսի միակ աղբյուրն էր այդ վայ-
րում: Երբ տղան նայեց տղամարդուն, նրա դեմքի արտահայտությունն
առանձնապես ահավոր թվաց: Նա բարձրացրեց կափարիչը եւ մի զույգ
անմշակ, խորդուբորդ փայտածողով խառնեց այն, ինչ եփում էր կաթսա-
յում: Կաթսայի միջինը եռում էր, եւ գոլորշին խառնվեց վառարանի ծխի
հետ ու պար բռնեց տղամարդու այլանդակ դիմագծերի շուրջը: Տեսարա-
նը Տա Տունգին հիշեցրեց Անդրաշխարհ-դժոխքի դառնական պատկերնե-
րից մեկը, որ նա մի անգամ տեսել էր: Դա մի սարսափելի սատանա էր, որ
մարդ արարածի մարմինն էր եռացնում իր կաթսայում եւ խառնում մի մեծ
պատառաքաղով: Տղան սարսռաց ու խիստ ցուրտ զգալով՝ սկսեց մրսել:
Տղամարդը վերցրեց թասը եւ սկսեց ուտել՝ առանց տղայի կողմն իսկ նա-
յելու: Տա Տունգը մոտեցավ վառարանին՝ փորձելով մեկ այլ թաս փնտրել:

Բայց չգտավ: «Որտե՞ղ են թասերը, տեր իմ,- վերջապես հարցրեց Տա Տու-
նզը:- Կարո՞ղ եմ դրանցից մեկը վերցնել: Շատ քաղցած եմ»:

«Սպասիր մինչեւ վերջացնեմ», - ասաց տղամարդը:

Տա Տունզը երկար սպասեց: Տղամարդը լցրեց երկրորդ, ապա երրորդ
թասը: Տա Տունզն անհանգստացավ: Նա վախեցավ, որ ուտելու ոչինչ չի
մնա: Բայց երրորդն ուտելուց հետո տղամարդը թասը տվեց տղային եւ
ասաց. «Վերցրու թասն ու մնացածը կեր վերջացրու: Էլ չեմ ուզում ուտել»:

Ավերելաբար դա տան միակ թասն էր: Ահա թե ինչու Տա Տունզը պի-
տի սպասեր, մինչեւ տղամարդն ավարտեր: Տա Տունզը վերցրեց այն եւ
ջրաման փնտրեց, որ թասը լվանար: Բայց ջրաման չգտավ:

«Որտե՞ղ կարող եմ թասը լվանալ», - հարցրեց տղան:

Տղամարդը կիսապառկած էր իր անկողնում եւ ծաղրանքով ասաց.
«Թասը լվանա՞ւ: Քեզ համար, ուրեմն, ես շատ եմ կեղտոտ, հա՞»:

«Չէ, բայց կուզեի լվանալ...», - համարձակվեց ասել տղան:

«Գնա գետի մոտ, եթե ինչ-որ բան ես ուզում լվանալ: Ես ազնվական
չեմ», - ասաց տղամարդը:

Տղան ստիպված էր դուրս գալ հյուղակից եւ թասը լվանալ գետում: Դր-
սում սաստիկ ցուրտ էր, եւ նա ամբողջ ժամանակ դողում էր: Կաթսայի մի-
ջի կերակուրը բրնձի ցածրորակ այլուր էր եւ իրենից ներկայացնում էր
թանձր ապուրի ու ջրիկ խմորի մի խառնուրդ: Բայց այն տաք էր, իսկ
տղան մրսում էր ու քաղցած էր, այնպես որ նրան բավականին համեղ
թվաց, եւ նա շատ արագ կերավ վերջացրեց մնացածը, որ երկու թասի
չափ կլիներ: Այդ պարզունակ ուտելիքից հետո նա իր ուժերը շատ ավելի
վերականգնված զգաց եւ շոգեց ու քրտնեց: Ուռքերն սկսեցին տաքանալ,
բայց նաեւ ծանրացան ու ցավել սկսեցին: Ներբաններին կապտուկներ ու
քերձվածքներ կային, բայց նա դրանք բանի տեղ չէր դնում:

Երբ տղամարդը տեսավ, որ Տա Տունզը վերջացրել է ուտելը, վեր կա-
ցավ անկողնուց եւ, վերցնելով իր կիսաչորացած վերնազգեստը ցցի վրա-
յից, սկսեց հագնել այն: Նա ասաց Տա Տունզին. «Ուրիշ շորեր էլ հագիր եւ
արի ինձ հետ աշխատելու»:

Տա Տունզը վերցրեց իր շորերը եւ տեսավ, որ դրանք դեռ ամբողջովին
թաց են: Նա կրկին կախեց դրանք ու ասաց. «Տաք է, կարող եմ չհագնել»:

«Կսառչես կփայտանաս, եթե շատ շոր չհագնես: Արագացրո՛ւ, շու՛տ», -
հրամայեց տղամարդը:

Տա Տունզը հագավ լրիվ թաց մի վերնազգեստ եւ հետեւելով նրան՝
դուրս եկավ: Տղամարդը մի աղյուս վերցրեց եւ կապեց երկար մի պարանի

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Ճայրին: Նա գնաց դեպի ջուրը եւ աղյուսը գետը նետեց՝ ձեռքին պահելով պարանի մյուս ճայրը: Հետո քաշեց պարանը, եւ թվում էր, որ շատ ծանր մի բան է քաշում: Մթության մեջ Տա Տուկը չէր կարող նկատել, թե ինչ է դա: Բայց երբ տղամարդը ներս մտավ հյուղակ, վառարանում մարող կրակը բավականաչափ պայծառ էր, որպեսզի Տա Տուկը կարողանար տեսնել, որ ձկան չորս ծուղակ էին՝ հնդկեղեգի բարակ ձողերից պատրաստված: Դրանք երկար լարով կապված էին իրար, եւ յուրաքանչյուր ծուղակի մեջ մի քանի մեծ քարախիճ կար, այնպես, որ ջրի երեսին չողային: Քարախիճերը հանելով դրանց միջից՝ տղամարդն այդ ծուղակները տվեց Տա Տուկին, իսկ ինքը մի բրիչ վերցրեց: Նրանք կրկին ուղեւորվեցին դեպի դաշտերը: Տա Տուկի համար շատ ավելի դժվար էր մթության մեջ հետեւել տղամարդուն, թեեւ գիտեր, որ գնում են այնտեղ, որտեղ եղել էին կեսօրին: Տղամարդն այժմ շատ ավելի դժվար էր քայլում, քանի որ ուշադիր պիտի գնար, այնպես կորստաբեր սխալ քայլ կկատարեր: Բայց տղան, վախենալով, որ տղամարդուն տեսադաշտից կկորցնի, ստիպված էր հետեւել նրան որքան կարող էր՝ արագ, եւ միաժամանակ ձկան ծուղակները չափազանց ծանր ու կաշկանդող բեռ էին իր համար: Բացի այդ, ևս դողում էր ցրտից՝ թափանցող քամու գրկում եւ մանրամաղ անձրեւի տակ, իսկ ոտքերի վերքերն ավելի ու ավելի անտանելի էին ցավում: Սակայն տղան կարող էր միայն շրթունքները կծել եւ շարունակել քայլել: Նա շատ էր ուզում աշխատել սովորել, այնպես, որ կարողանար անկախ լինել:

Ինչպիսի՜ թեթեւություն էր տղայի համար, երբ կանգ առան երկու լճակների միջեւ ընկած մի վայրում, որտեղ դադար էին առել կեսօրին: Ջրի մակարդակը լճակներից մեկում շատ ավելի բարձր էր, քան մյուսում, եւ տղամարդը, ընտրելով լճակների միջեւ ընկած արահետի ամենանեղ մասը, իր բրիչով սկսեց ջուր բաց թողնելու անցք փորել: Նա տղային ասաց, որ ձկան ծուղակներից մեկի կապը թուլացնի: Քանի որ հողը շատ փափուկ էր շարունակաբար տեղացած անձրեւի պատճառով, շատ հեշտ գործ էր նրա համար՝ խոր բացվածք փորել, որպեսզի ջուրը հոսեր դեպի ցածր լճակը: Ձկան ծուղակն այնպես էր սարքած, որ ձուկը հեշտությամբ կարող էր մտնել դրա մեջ, բայց մտնելուց հետո կմնար այդտեղ, քանի որ ծուղակի բերանը ծածկված էր հնդկեղեգի ազատ, շարժուն ձողերից, որ միակողմանի անցում էին ստեղծում: Տղամարդը մի ծուղակ վերցրեց Տա Տուկին, խորը հարմարեցրեց բացվածքի ներքեւում, ապա փորածը կրկին հողով ծածկեց: Նա Տա Տուկին ասաց, որ խնամքով եւ ուշադիր նշի տեղը, եւ անցավ մյուս երեք լճակներին, որպեսզի կրկին նույն աշխատանքը մնա-

ցած երեք ծուղակով:

Տա Տունգը խելացի տղա էր: Նա շուտով իմացավ, աշխատանքի ընթացքում ժամանակ առ ժամանակ հարցեր տալով, թե ինչ իմաստ ունենալու էր: Նրա համար պարզ էր, որ այս մարդը պարզապես գող է, որևէ իր համար ապրուստ է վաստակում խարակածկներ, մանր ծովախեցգետիններ եւ այլ տեսակի մանր ձկներ գողանալով, այս խորամանկ հարմարանքով ջուրը մեկ լճակից մյուսը թողնելով, ինչի իրավունքն ամենեւին չունենալու էր: Վատ կանխազգացումներով ու մտավախությամբ համակված՝ նա գնաց տուն տղամարդու ետեւից՝ խորապես մտահոգ, թե ինչ պետք է անի:

Հասնելով հյուղակ տղամարդը նրան ասաց, որ իր համար մի դույլ ջուր բերի գետից, որպեսզի ոտքերը լվա: Այս ամենն անելով՝ նա պառկեց քնելու եւ Տա Տունգին հետեւյալ հանձնարարությունները տվեց. «Մի՛ թողնիր, որ քեզ քնելիս բռնեցնեն: Սպասիր այստեղ, մինչեւ պահանջվող ժամանակում երեք կաթսայի չափ ջուրը եռա, հետո գնա այն տեղերը, որտեղ մեր ծուղակներն ենք դրել: Հավաքիր դրանք եւ ծածկիր բացվածքները: Ձկները ծուղակներից դույլի մեջ լցրու, ապա նորից դրանց մեջ լցրու քարախճերը, կապիր ծուղակներն իրար ու զգիր նորից գետի մեջ: Հետո ես վեր կկենամ ու կթողնեմ, որ դու քնես»:

Տա Տունգը տեսավ, որ անկողինը շատ փոքր է երկու հոգու համար, եւ ոչինչ չասաց: Նա մրսած էր, քաղցած ու շան պես հոգնած, իսկ ոտքերի ներբանների վերջերս այրվում էին ցավից: Գլուխն սկսեց ցավել, եւ նա արդեն տենդով էր համակվում: Բայց նրա ֆիզիկական տանջանքները ոչինչ էին իր մտահոգության ու հուզմունքի հետ համեմատած: Այս անձանոթը, որը, Լի Մինի ասելով, իր նոր տերն էր, եւ ումից կախված էր լինելու տղան ապագայում, պարզվեց, որ դաժան բռնակալ է ու գող: Նա գիտեր, որ Լի Մինն իրեն ետ չի տանի, եւ եթե նույնիսկ ցանկանար էլ դա անել, Տա Տունգն ինքը նրա մոտ չէր վերադառնա: Այլ բան չէր մնում տղայի համար՝ Լի Կանին դիմելուց բացի: Թեեւ Լի Մինն ասել էր տղային, որ Լի Կանն այլեւս իր հորեղբայրը չէ, ինչպես որ ինքը հայրը չէ, բայց Տա Տունգը համոզված էր, որ իր դաստիարակը հուսախաբ չի անի իրեն: Նա սպասեց, մինչեւ որ անձանոթը խոր քուն մտավ եւ բարձր խոմփացնում էր, ապա Կամրջով սկսեց տուն վերադառնալ՝ Լի ընտանիքի գյուղը:

Ճամփորդելու համար նա իրեն բավականաչափ ուժեղ չէր զգում. գլուխը թվում էր մեծ ու ծանր եւ պտտվում էր, ոտքերը հազիվ էին կարողանում դիմանալ ճանապարհի խորդուբորդությանը, եւ մեծ դժվարությամբ էր կարողանում աչքերը բաց պահել, բայց նա ամբողջ ուժով պայքարում էր, որ-

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

պեսզի անձրեւի ու հողմի միջով ճանապարհի հարթի դեպի գյուղ:

Ճանապարհն անհարթ էր ու սայթաքուն: Տա Տունգն անընդհատ ընկնում էր ցեխոտ ջրափոսերի մեջ եւ շատ դանդաղ էր առաջ շարժվում: Գիշերվա խավարում ճանապարհն անվերջ էր թվում, եւ թվում էր՝ երբեք չի հասնի վերջնակետին: Ամեն ընկնելուց հետո վեր կենալիս ավելի ու ավելի թույլ էր զգում իրեն եւ մտածում էր, թե կկարողանա՞ր, արդյոք, ընդհանրապես վեր ելնել տեղից հաջորդ ընկնելուց հետո:

Վերջապես արեւելքում արշալույսն սկսեց բացվել, եւ անձրեւն ու քամին աստիճանաբար դադարեցին՝ առավոտյան արեւի առաջին ճառագայթների երեւալուն պես: Տղան հիմա այնքան էր ամբողջությամբ ուժասպառ եղել, որ հազիվ էր կարողանում առաջ շարժվել: Հույսը մարում էր, եւ նա կործանման եզրին էր:

«Հա՛Ֆ, հա՛Ֆ, հա՛Ֆ...»:

Մի շուն սկսեց հաչել նրա վրա, եւ շուտով լսվեցին շատ շների հաչոցներ: Բարձրացրեց գլուխը եւ տեսավ, որ գյուղ է մտել: Դա նոր ուժ ու եռանդ հաղորդեց նրան: Մի կերպ, դանդաղ առաջ էր շարժվում՝ գնալով ուղիղ դեպի Լի Կանի տան ետնամուտքը, եւ վերջապես ահավոր դժվարությամբ կարողացավ հասնել այդտեղ:

Ետեւի դարբասները բաց էին: Ամենայն հավանականությամբ Տա Յուն արդեն գնացել էր բրնձի դաշտերում աշխատելու: Ուրախության թույլ ու նվաղուն ճիչով Տա Տունգն անցավ շեմը եւ ամբողջ ծանրությամբ ընկավ գետնին: Որքան կարող էր բարձրաձայն կանչում էր. «Հորեղբայ՛ր, հորեղբայ՛ր»: Բայց այս բառերը հազիվ լսելի էին:

Սակայն Լի Կանի կինն աշխատում էր խոհանոցում եւ լսեց, որ ինչ-որ մեկն ասես ընկավ ետեւի դարբասի մոտ: Մի պահ նա կարծեց, թե դա կարող է տարեց մեծ հորաքույրը լինել, ով պետք է որ վաղ վերկացած լիներ եւ շեմի վրա սայթաքած ու ընկած: Վազելով օգնության՝ նա ապշեց՝ տեսնելով Տա Տունգին ուշագնաց ընկած գետնին: Տղան ամբողջովին թրջված էր, եւ նրա ընկած տեղից ջուր էր հոսում: Կինը ձայն տվեց ամուսնուն, որն իսկույն եկավ, եւ երկուսով ներս տարան Տա Տունգին, հանեցին թաց հագուստը եւ պառկեցրին անկողնում:

Լի Կանը բժշկական շատ գրքեր էր կարդացել եւ ինքն էլ բավականին հասկանում էր բժշկությունից: Քննելով Տա Տունգի զարկերակը՝ նա պարզեց, որ տղան միայն ցրտից, քաղցից եւ ուժասպառ լինելուց էր տառապում: Մինչ նա տղային տալիս էր, ինչ անհրաժեշտ էր, կինը գնաց Լի Մինին հայտնելու նրա վերադարձի մասին:

Նախորդ օրը, Լի Կանն իմանալով, որ Տա Տունգն այլևս տանը չէր, գնացել էր եղբոր մոտ՝ իմանալու պատճառը: Լի Մինն ասել էր, թե որդուն ուղարկել է իր ընկերներից մեկի մոտ՝ օգտակար մասնագիտություն սովորելու: Լի Կանը հավանություն չէր տվել տղային իր դասական կրթությունից զրկելուն եւ պահանջել էր, որ ինքն իմանա, թե ինչ արհեստ է դա, բայց Լի Մինը հրաժարվել էր պատասխանել լրացուցիչ որեւէ հարցի: Քանի որ հայրը լռիվ իրավունք ունի իր որդուն ուղարկելու՝ որպես աշակերտ ցանկացած մասնագիտություն սովորելու, Լի Կանը, թվում էր, խառնվում է ուրիշի գործերին: Բայց հիմա, երբ տղան ետ էր եկել այսպիսի ահավոր վիճակում, ամբողջ գործն ակնհայտորեն կասկածելի տեսք ուներ:

Լսելով տղայի անսպասելի վերադարձի մասին՝ Լի Մինը սաստիկ շփոթվեց: Նա ասաց, որ խիստ զայրացած է իր անհնազանդ որդու վրա, որը համարձակվել է փախչել իր աշխատանքից: Եվ հայտարարեց, որ երբեք ետ չի ընդունի նրան, ու ցանկություն հայտնեց, որ Լի Կանն ու իր կիները դուրս վռնդեն նրան, այնպես, որ այդ անբանի համար, բացի իր նոր տիրոջ մոտ վերադառնալուց, այլ ճանապարհ չիկնի: Լի Մինը նույնիսկ չառաջարկեց, որ գնա եւ տեսնի տղային:

Տա Տունգը շուտով ուշքի եկավ եւ հորեղբորը պատմեց ամբողջ պատմությունը: Լի Կանը կատաղել էր եղբոր խայտառակ ու վրդովեցուցիչ արարքի համար, բայց մյուս կողմից՝ ուրախ էր, որ տղան իր մոտ է եկել, եւ նրան ասաց, որ այսուհետեւ նրանց էլ ոչինչ չի կարող բաժանել:

Մեծ հորաքույրը, որը նույնպես ողջունում էր Տա Տունգին իրենց մոտ պահելու գաղափարը, կարծում էր, որ նախ պետք է ինչ-որ բան արվի:

«Լի Մինն անմաքուր ու սեւ խղճով մի արարք է գործել: Նրա հետ պետք է շատ խիստ վարվել: Տա Տունգը համարվում է նրա որդին, եւ ինքը դեռ պատասխանատու է տղայի համար: Քանի որ մենք պատրաստվում ենք պահել իր որդուն իր փոխարեն, պետք է ստիպենք նրան, որ վճարի տղային պահելու համար...»:

«Ո՛չ, չե՛մ ուզում լսել այդ մասին,- վճռականորեն ընդհատեց Լի Կանը: - Թե՛ն ես մի լավ վիճակում չեմ, բայց մի բերան ավել կամ պակաս կերակրելուց մեծ տարբերություն չի լինի»:

«Բայց քանի դեռ հանրության առջեւ նրա վրա պահանջ չես դրել եւ ամբողջ գյուղին տեղյակ չես պահել պատճառի մասին, նա կարող է ասել, որ դու տղային գայթակղել ես, որպեսզի իր մասնագիտությունը թողնի եւ փախչի քեզ մոտ...»:

«Թող ասի, հոգ չե՛...»:

ԱՅՈՒՆ ՇԻՒ

«Եվ նա կարող է քեզ մեղադրել, թե դու մտադիր ես խաբեությամբ շորթել տղայի ժառանգությունը»:

«Մենք չե՛նք վերցնի նրա կեղտոտ փողերը»:

«Եվ օրենքով նա կարող է ետ պահանջել տղային, քանի որ դու Տա Տունգի խնամակալը կամ ուրիշ որեւէ մեկը չես իր համար: Եթե նա դիմի օրենքին, դու ամենեւին ապացույց չունես...»:

«Դա լուրջ նկատառում է,- համաձայնեց վերջապես Լի Կանը:- Ի՞նչ պետք է անեմ՝ տղային պահելու համար»:

«Կամ կարող ես կանխել նրան՝ առաջինը դիմելով օրենքին...»:

«Ո՛չ, ես ատում եմ դատավորին եւ բոլորին նրա յամենում»:

«Կամ էլ դատաստանի համար դիմել ամբողջ գյուղին»:

«Լա՛վ: Հավաքենք գյուղի բնակիչներին եւ բացահայտենք բոլորի համար բարերարի այս խայտառակ արարքը»:

Նա իսկույն հրավերներ ուղարկեց գյուղի բոլոր տարեցներին՝ խնդրելով նրանց հանդիպել հաջորդ առավոտյան գյուղի միջով անցնող գլխավոր ճանապարհի մոտ գտնվող թեյարանում:

Հանդիպումը, որին հրավիրվում են գյուղի բոլոր տարեցները թեյարանում, միայն մեկ իմաստ ունի: Դա նշանակում է, որ լուրջ վիճաբանություն կա, եւ որ հարցը պետք է լուծվի հասարակական կարծիքի միջոցով:

Բնականաբար, բոլոր նրանք, ովքեր արտոնություն ունեն իրավերն ստանալու, այն ընդունեցին հաճույքով, թեեւ որոշակի մտավախություններով: Նրանք շտապում էին տեղեկանալ, թե ինչ է պատահել, եւ գյուղի ասեկոսները նրանց կյանքի հիմնական ժամանակն էին զբաղեցնում: Թեեւ պատմության տարբեր մեկնակերպեր էին շրջանառվում, հիմնական փաստերն անփոփոխ էին մնում: Շրջակայքում բոլորը գիտեին ձկնագողին, որն ապրում էր Երկնային կամրջի մոտ: Թվում էր՝ Լի Մինի դեմ եղող այս փաստն անհերքելի ու աններելի է:

Թեյարանում հանդիպման ժամանակ Լի Կանը պատմեց ամբողջ պատմությունը: Քանի որ Երկնային կամրջի մոտ ապրող սրիկան հաճախ էր բանտարկվում գողության համար, Լի Կանը ներկայացրեց այսպիսի առաջարկ. ելնելով այն բանից, որ Լի Մինը կապված է եղել այդպիսի անուղղելի հանցագործի հետ, նրա անունը պետք է պաշտոնապես ջնջվի իրենց համայնքի գրքից: Թեեւ Լի Մինի հանցանքն աններելի էր, բայց սա, թերեւս, չափազանց խիստ մի պատիժ էր: Համայնքի գրքից մեկի անվան պաշտոնական ջնջումը մահվան դատավճռի բարոյական համարժեքը կլիներ: Գյուղացիներն այդ մարդու հանդեպ կվերաբերվեին որպես վտարան-

դիի, եւ նա այլեւս գյուղի պաշտպանության ներքո չէր լինի: Լի Սինը՝ ամբաստանյալը, որեւէ պաշտպանություն չներկայացրեց: Նա գիտեր, որ ինքն ընդհանրապէս ոչ մի փաստարկ չունի, բայց ստիպված էր գալ հետեւելու հանդիպմանը, որպէսզի ոչ ոք չդիպչէր հյուրասիրություններին, որոնք միշտ այնքան շատ էին գայթակղիչ: Ակնհայտ էր, որ նա գործը տալու է տալու, եւ, համաձայն կանոնների, նման դեպքերում պարտվողը պետք է վճարի հանդիպման ծախսերի համար: Եթէ նա այդտեղ չերեւար, համոզված էր, որ տարեցները, բացի թեյի չափազանց մեծ բաժին խմելուց եւ սեխի անթիվ սերմեր չրթելուց, որոնք, ասում էին, շատ օգտակար են քննարկումների ժամանակ, ի սրտե, մեծ հաճույքով կվայելէին հյուրասիրությունները, որոնք թեյարանի տերն առատորէն կմատուցէր:

Սինչ Լի Սինը լռություն էր պահպանում, ինքնակոչ մի փաստաբան, հակառակ բոլորի սպասումներին, կրքոտ բողոքարկեց. «Ո՛չ: Կարծում եմ, դա շատ անարդար կլինի: Պատվարժան իմ տարեցներ եւ իմ սիրելի եղբայրներ, կարծում եմ, մենք հրավիրվել ենք այստեղ՝ միջամտելու երկու եղբոր մասնավոր գործերին: Ասացվածքը նշում է. «Դժվար է ամենակարող դատավորի համար մասնավոր ընտանեկան հարցը լուծել»: Եվ դրա համար ես ասում եմ, որ մենք վեճը պետք է լուծենք՝ այն թողնելով չլուծված»:

Խոսողը ոչ այլ ոք էր, քան գյուղի միակ «գարգացած տաղանդը»: Իր տանը տեղի ունեցած այն փոքրիկ միջադեպից ի վեր նա շատ երախտապարտ էր Լի Սինին, ում համարում էր իր բարեգործը: Եվ այն օրից ի վեր, ինչ Լի Սինը եղբորը վարձել էր որպէս իր տղաների դաստիարակ-ուսուցիչ, նա շատ վատ հարաբերությունների մեջ էր Լի Կանի հետ, ում համարում էր իր մրցակիցը: Սա էր նրա արտառոց ելույթի պատճառը:

Յանկացած այլ դեպքում գյուղացիները կհետեւէին Լի Կանի առաջարկին եւ հաշվի չէին առնի «գարգացած տաղանդի» ասածը, բայց այս մասնավոր դեպքում, երբ, ցավոք, Լի Կանն էր վիճաբանող կողմերից մեկը, նրանք ստիպված էին հետեւել «գարգացած տաղանդին»: Երբ վերջինս տեսավ, որ իր խոսքերն ազդեցություն գործեցին մարդկանց վրա, շարունակեց. «Վեճը կարգավորելու լավագույն ճանապարհն է՝ «մեծ հարցը դարձնել փոքր հարց եւ ապա փոքր հարցը դարձնել ոչ մի հարց», ինչպէս հնում էին ասում: Ես ձեզ խորհուրդ եմ տալիս անտեսել հարցը, եւ եկե՛ք տուն գնանք խաղաղությամբ»:

Գյուղացիները բավականին լավ գիտեին, որ իրենց մեկ բաժակ թեյից ավելի դժվար թէ հյուրասիրեին, եւ հետեւաբար միայն շատ էին ուզում ցր-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

վել: Նրանք ուղի կանգնեցին եւ իրար ողջունելով սկսեցին բաժանվել: Լի Մինն իրեն մեծապես թեթեւացած զգաց եւ ուրախությամբ պատրաստվում էր հեռանալ:

Լի Կանն ապշած էր այս պոռթկումից եւ զգաց, որ ինքը մեծապես վիրավորված է: Նա բարձրաձայն գոչեց. «Պատվարժան իմ տարեցուներ եւ իմ սիրելի՛ եղբայրներ, եթե հարցը թողնում եք չլուծված, ինչպես այս դեպքում, վախենամ, որ ձեզնից յուրաքանչյուրն իր սեփական հաշիվները պետք է փակի թեյարանի տիրոջ հետ: Քանի որ, եթե մտածում եք, թե եղբայրս սխալ չէ, ոչ ոք չի պատրաստվում այդ դեպքում հաշիվը փակել: Ես սխալ չեմ, եւ դուք չեք կարծում, թե ես եմ պատրաստվում վճարել, այնպես չէ՞»:

Սա վարպետ հարված էր: Քանի որ Լի Կանն իրոք սխալ չէր, նրանք չէին կարող դիմել Լի Կանին, որ հաշիվը վճարի: Ակնհայտ էր, որ եթե խնայեին Լի Մինին, խնայելու էին իրենց ծախսերի հաշիվն: Նրանցից մի քանիսն իսկույն սկսեցին վիճել «գարգացած տաղանդի» հետ, եւ անկախ այն բանից, թե ինչպիսի եռանդով էր նա պաշտպանում, միաձայն որոշում ընդունվեց, որ Լի Մինը պետք է վճարի բոլոր ծախսերը եւ կյուրական պատասխանատվություն կրի տղայի դաստիարակության համար, թեեւ Լի Կանն էր լինելու խնամակալը:

«Վա՛յ այս օրին,- մտածեց Լի Մինը:- Կնախընտրեի, որ պաշտպանություն չլիներ, եւ իմ անունը ջնջվեր համայնքի գրքից: Այնժամ ոչինչ չէի ունենա անելու՝ այդ թշվառ տղայի եւ իմ անարժան եղբոր հետ կապված»:

Նա հաշվեց թեյի գավաթներն ու սեխի սերմի դատարկ ափսեները եւ հաշիվն ուշադիր ստուգեց: Տեսնելով, որ թեյարանի տիրոջ հետ չհամաձայնելու ոչինչ չկա, դժկամությամբ վճարեց հաշիվը: Երբ նա մտախոհ հրաժեշտ տվեց, ցավ էր զգում, քանի որ մտածում էր այն մեծ գումարի մասին, որ ստիպված էր եղել ծախսել, եւ դա համարում էր էլ ավելի զայրացուցիչ, երբ նկատի էր առնում, որ բոլոր այդ մարդիկ հեռացել էին՝ առանց նույնիսկ իրեն շնորհակալություն հայտնելու:

Երբ Լի Կանը տուն եկավ եւ Տա Տունգին հայտնեց բարի լուրը, տղան անհամբերությամբ հարցրեց. «Կարո՞ղ եմ հիմա մնալ այստեղ քեզ մոտ, հորեղբայր»:

«Իհարկե, Տա Տունգ: Ըստ էության դա էր մեր գյուղի տարեցուների վճիռը», - պատասխանեց Լի Կանը:

«Ուրեմն Երկնային կամրջի մոտի տղամարդը չի գա եւ պահանջի ինձ, չէ՞, հորեղբայր»:

«Իհարկե ոչ: Նա մի գող է, ում քո... քո... իմ եղբայրը փորձել է կաշառել, որ քեզ այստեղից հեռու տանի: Նա քեզ հետ ոչ մի կապ չունի, Տա Տուև»:

Բառերով դժվար է ասել, թե որքան երջանիկ էր տղան: Նա որոշ ժամանակ լուռ էր, ապա, մի պահ մտածելով, ասաց. «Չեմ կարծում, թե մենք կարիք ունենք ընդունելու իմ... իմ հոր փողը ծախսերի համար: Կարծում եմ, ես կարող եմ աշխատել, որպեսզի ինքս ինձ պահեմ... իսկ հետագայում, գուցե, կկարողանամ պահել քեզ եւ հորեղբորակնոջս: Ես շատ ուժեղ եմ եւ...»:

«Ո՛հ, սիրելի Տա Տուև, դու կարիք չունես դրա համար անհանգստանալու: Իհարկե մենք չենք վերցնի այդ կեղտոտ, անազնիվ ճանապարհով ձեռք բերված փողը: Բայց դեռ հարկ չկա, որ դու ինքդ քեզ պահես: Ես հոգ կտանեմ քեզ համար, իմ սիրելի Տա Տուև»:

«Իրո՞ք, հորեղբայր: Ես ուրախ եմ, որ վերջապես եկա քեզ մոտ, սիրելի՛ հորեղբայր»:

Տա Տուևն այժմ սկսեց քնակվել Լի Կանի տանը: Նրան սենյակ տվեցին մեծ հորաքրոջ սենյակի կողքին, որն ասում էր, թե դա ավելի հարմար կլինի իր համար, որպեսզի հոգ տանի տղայի մասին: Վաղ առավոտյան եւ ուշ գիշերով տարեց տիկինը կանչում էր Տա Տուևին իր սենյակ՝ հարցնելու, թե ինչպես է զգում իրեն, եւ ինչ կարող է ինքն անել նրա համար: Հետո նա տղային խնդրում էր յուրահատուկ ձեռով մերսել իր ոսկրացած ցավող մեջքը՝ բռունցքով թեթեւ հարվածելով: Բացի առավոտյան եւ երեկոյան մերսման այս սովորական դարձած աշխատանքից, նա Տա Տուևին ասում էր, որ ամեն տեսակի տարաբնույթ աշխատանքներ անի եւ իր այս կամ այն հանձնարարությունը կատարի: Մի խոսքով, նա կարծում էր, որ իր համար շատ հարմար է հոգ տանել տղայի մասին:

Այժմ, երբ Շիաո Մինն այլևս չէր գալիս սովորելու, դասասենյակն ազատվել էր խառնակչից: Լի Կանը կարող էր, հետևաբար, իր ուշադրությունը կենտրոնացնել Տա Տուևին ուսուցանելու վրա, որը, թարմ հույսով ու քաջալերանքով լեցուն, այժմ ավելի եռանդով էր սովորում եւ ավելի արագ էր առաջադիմում, քան երբեւէ:

ՉԼՈՒԽ 4

*Ինչքան կարճ է կյանքը մարդու,
Անես լինի կաթիլ ցողի.
Օրն իր ասքը նոր է թարթում,
Իսկ նա ցնդում է անցողիկ:*

Հեռանալով թեյարանից՝ Լի Մինը որոշեց մեկ անգամ էլ ուղեորվել դեպի Երկնային կամուրջը: Նա հյուղակից դուրս կանչեց տղամարդուն եւ ետ պահանջեց իր փողը, որովհետեւ այսպես կոչված տերը ինչպես հարկն է չէր հետեւել իր աշակերտին: Տղամարդը նրան շատ սառն ընդունեց եւ Լի Մինի սպառնալիքին՝ նրան դատավորի մոտ տանել, քանի որ խախտել էր պայմանագիրը, սրիկան հակադարձեց, թե, շրջանի բանտի մշտական կենվորը լինելով, ինքը դրա դեմ առարկելու ոչինչ չունի: Երբ Լի Մինի խիստ խոսքերին վատ լեզվով պատասխան տրվեց, բարեբարն սկսեց գիտակցել, որ իր կանխիկ քսանհինգ հազարը փաստորեն ասես Արեւելյան ծովի հատակը սուզվեց:

Ամբողջ կյանքում Լի Մինը միշտ հաջողակ էր եղել իր ֆինանսական գործարքներում: Ճիշտ է, ժամանակ առ ժամանակ նրա չափազանց լավ գործարքներից մեկնումեկը, որ նա փոքր-ինչ ավելի չարչարանքով էր կատարել, ձախողվում էր, բայց դա համեմատաբար հազվադեպ երեւոյթ էր: Հետեւաբար նա ոչինչ չէր կարող անել, այլ միայն խոր ափսոսանք ապրել, որ որդեգրել ու դաստիարակել էր Տա Տունգին: Դա ամբողջովին վատ գործարք էր եղել սկզբից մինչեւ վերջ: Միակ սփոփանքն այն էր, որ հիմա, շնորհիվ Երկնքի եւ շնորհիվ Երկրի, այդ գործարքն ավարտվել էր:

Լի Մինը մոտեց էր, երբ անձրեւի տակ տուն էր դառնում իր վերջին ուղեորությունից, եւ վաղ գարնան քամու ժամանակ այս երկրորդ ճամփորդությունն էլ ավելի վատացրեց նրա վիճակը: Այն ժամանակ, երբ Տա Տունգը գրեթե անմիջապես ապաքինվեց, Լի Մինը հարկադրված էր անկողին ընկնել եւ շուտով ծանր հիվանդացավ: Նրա սկզբունքներին դեմ էր՝ խորհրդակցել լավ բժիշկների հետ, որոնք չափազանց թանկ էին իր համար, դրա համար էլ, հենց որ գիտակցեց իր վիճակի լրջությունը, անմիջապես կանչեցին մի հեքիմի, որի ծախսերն անչափ համեստ էին, եւ որը միշտ դեղորայք էր տրամադրում ձեռնառու գներով: Կա՛մ տկարության պատճառը չափից ավելի վշտանալն էր Տա Տունգի վրա կատարած ֆի-

նանսական ծախսերի համար, կա՛մ էլ նրա ընդունած դեղորայքը հակա-
ռակ ազդեցությունն էր ունեցել, քանի որ Լի Մինը շատ ավելի վատացավ,
քան նախորդ օրն էր: Նա տառապում էր սաստիկ ծարավից, եւ ոչինչ չէր
կարողանում հագեցնել այդ ծարավը: Լի Մինը կորցրել էր ծայրը եւ տասն
օր չէր կարողանում հողաբաշխ խոսք արտաբերել: Հեքիմին նորից կանչե-
ցին: Վերջինս հավաստեց, որ դա ուժեղ մրսելուց է, եւ որ, իր նախկին դե-
ղատոմսի համաձայն, դեղի ավելացրած չափաբաժինն այն ամենն է, ինչ
անհրաժեշտ է հիվանդին: Նա նույն դեղորայքի ավելի մեծ չափաքանակ
հավելեց նույնիսկ էլ ավելի էժան գնով եւ խորհուրդ տվեց ընդունել կար-
ճատեւ ընդմիջումներով:

Այժմ միանգամայն ակնհայտ էր, որ դեղորայքը խիստ ներգործող է:
Որովհետեւ դրա յուրաքանչյուր հաջորդող չափաբաժնից հետո Լի Մինի
վիճակն ավելի վտանգավոր էր դառնում, քան նախկինում: Լի Կանը եկավ
նրան տեսնելու եւ զգուշացրեց, որ հեքիմների նշանակած խոտաբույսերն
ու արմատները ո՛չ միայն անհուսալի էին, այլ նաեւ վնասակար: Նա առա-
ջարկեց, որ անմիջապես մարդ պետք է ուղարկվի քաղաքի մի լավ բժշկի
ետեւից: Լի Մինը բառերով չէր կարող առարկել, քանի որ ամբողջովին
համր էր արդեն, բայց գլուխը տարուբերեց այնքան վճռական, որքան իր
վիճակը թույլ էր տալիս: Վախենալով, որ շարժումով արտահայտած իր
առարկությունը բավարար չէ, նա նշան արեց, որ վրձին-գրիչ եւ թուղթ բե-
րեն: Դողացող ձեռքերով նա ի վիճակի եղավ նորից ու նորից տարտամ ու
անորոշ խզբզել «անօգուտ է» բառերը: Մի քանի օր էլ անցավ, եւ ակնհայտ
դարձավ, որ Լի Մինը, թեեւ ընդամենը հիսունութ տարեկան, մոտենում է իր
վախճանին:

Կատարվում էին բոլոր անհրաժեշտ նախապատրաստությունները:
Նրա անկողնու վարագույր-ամպիոճանիները հեռացվեցին, այնպես, որ
սնոտիապաշտ հավատի համաձայն, նա մյուս աշխարհում փակված չլի-
ներ բանտում: Ննջարանի պատուհաններն ու դռները փակվեցին, որպես-
զի ոչ մի չար ոգի չկարողանար գալ եւ մոլորեցնել նրան: Մի փոքրիկ ճրա-
գ էր վառվում նրա անկողնու կողքին, որպեսզի նրա համար ուղեկցող լույս
լինի իր վերջին երկար ու մութ ճամփորդության ժամանակ: Թղթադրամ-
ներ պատրաստվեցին առատորեն եւ դրանք պիտի այրվեին այն պահին,
երբ նա մոտ լիներ հեռանալու փուլին, այնպես, որ կարողանար կաշառել
Մահվան Սուրհանդակին եւ գուցե նույնիսկ Դատական ատյանին: Նրա
դագաղը, որ տարիներ առաջ էր պատրաստվել, դուրս հանվեց ամբարի
հեռավոր անկյունից, որպեսզի լաքապատվի, իսկ այրու ու որբի, ինչպես

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Նաեւ մյուս մոտ հարազատների սգո զգեստները ծեւել էին ու արդեն սկսել էին կարել:

Լի Միւր մեծ անհանգստությամբ էր հետետում այդ պատրաստություններից մի քանիսին, եւ կիւր նկատեց, որ նա մտքում ինչ-որ բան ունի, որ ուզում է ասել իրեն: Կիւր բազմաթիվ հարցեր տվեց նրան, եւ իր ենթադրությունների մեծ մասը ծիծաղելի էր: Լի Միւր շարունակում էր գլուխը տարուբերել եւ ի վերջո ստիպված էր դիմել վրձին-գրչի ու թղթի օգնությանը: Նա այժմ հազիվ էր կարողանում գրել, բայց շատ մեծ ճիգով նրան հաջողվեց մի քանի նշան խզբզել, որոնք Լի Կանի օգնությամբ մեծ դժվարությամբ վերծանվեցին որպէս «Լոտոսի Բուրմուլք»: Այս երկու բառերի տակ Լի Միւր ակնհայտորեն փորձում էր էլի ինչ-որ բան գրել, բայց, ցավոք, նրա ներքին ուժերն արդեն սպառվել էին, եւ նա այլեւ չկարողացավ ոչ մի գիծ գծել:

Թեւ տարօրինակ էր, որ Լի Միւր այդ պահին բոլոր անձանցից, որպէս մահվան մահճում գրած իր նամակի հասցեատեր, պետք է ընտրեր Լոտոսի Բուրմուլքին՝ իր կնոջ զարմուհուն, բայց այդուհանդերձ անխելամիտ չէր թվում, որ աղջիկը, որպէս իր ենթադրյալ գալիք հարսնացու, պետք է լիներ այն մարդը, ում նա ամենաշատն է ցանկացել տեսնել վախճանվելուց առաջ: Կիւր անմիջապէս հատուկ սուրհանդակ ուղարկեց քաղաք, որ իր մորը՝ տիկին Վուին հայտնի այս լուրը, եւ Լոտոսի Բուրմուլքը, տատի ուղեկցությամբ, հենց այդ նույն երեկոյան ժամանեց նրանց տուն:

Տիկին Վուն հիմա յոթանասունհինգ տարեկան էր, բայց ծեր տարիքը դեռ չէր խաթարել նրա առողջությունը: Լի Միւրի կիւր իր մորն ընդունեց խառն զգացումներով, միևնույն տիկին Վուն մխիթարում էր դստերն ինչպէս կարող էր՝ հայտնելով, որ ինքը պետք է քաղաք վերադառնա մեկ կամ երկու օրից, որովհետեւ իր հարսը, ինչ-ինչ պատճառներով, հրաժարվեց գյուղ ուղեկցել իրենց:

Երբ Լոտոսի Բուրմուլքին բերեցին տեսնելու Լի Միւրին, վերջինս գլուխը թույլ օրորեց, եւ ոչ ոք չէր կարող հասկանալ, թե ինչ է ուզում ասել: Նա, թվում էր, անչափ շատ էր ցանկանում ինչ-որ բան ասել Լոտոսի Բուրմուլքի մասին, բայց նրա ասելիքի իմաստը փոխանցելու բոլոր հնարավոր միջոցները թվում էին անհաջողության մատնված՝ իր ուժասպառ վիճակի պատճառով: Երբ պարզվեց, որ աղջկա մասին տրված հարցերը նրան ավելի շատ վշտացնում են, քան հանգստացնում, հոգ տարան, որ նրա մոտ այլեւ Լոտոսի Բուրմուլքի մասին չհիշատակեն:

Հաջորդ օրը վաղ առավոտյան ամեն ինչ ցույց էր տալիս, որ վախճա-

նը մոտ է: Լի Մինը մի հայացք զցեց ամուր փակված, թղթապատ լուսամուտի կողմը, որի վրա արեւն էր շողում, ապա սեւեռուն հայացքը դարձրեց դեպի ճրագը, որը, իր կրկնակի պատրույզով, այրվում էր պայծառ ու համաչափ: Մինչ բոլորն սպասում էին ճգնաժամային պահի վրա հասնելուն, նա պայքար էր մղում ավելի երկար կառչելու կյանքից: Նա ամբողջ ուժով ձգտում էր ձեռքը բարձրացնել, բայց կարողացավ միայն երկու մատն առաջ պարզել: Ապա աղերսող հայացքով նայեց կնոջը եւ իր պարզած մատներին, ասես կնոջը իր այդ շարժումով խնդրում էր մի բան անել: Կինը փորձեց նրա ձեռքն ու մատները ետ տանել, բայց ոչ, դա այն չէր, ինչ Լի Մինն ուզում էր: Շուտով պարզ դարձավ, որ նա ցույց է տալիս «երկու» թիվը, եւ կինը նորից սկսեց ենթադրություններ անել:

«Ուզում ես այստեղ երկու օր պառկե՞լ նախքան դագաղի մեջ դրվելը»:

Ոչ:

«Երկու բուդոյայական հոգեւորակա՞ն ես ուզում»:

Ոչ:

«Երկու դառսակա՞ն հոգեւորական»:

Ոչ:

«Թաղման թափոքում երկու տաղավա՞ր»:

Ոչ:

«Երկու գերեզմանաքա՞մ»:

Ոչ:

Կինը փորձեց «երկու» թվի հետ կապված ամեն հնարավոր հարց, ապա շարունակեց մեծացնել տասնապատիկ եւ հարյուրապատիկ: Երբ հնարավոր չեղավ ստանալ նրա հավանությունը՝ նույնիսկ երկու հազարի, քսան հազարի կամ երկու հարյուր հազարի հետ կապված որեւէ բանի հանդեպ, կինը հանկարծ մտածեց մեկ այլ բանի մասին: Այդ ամբողջ ժամանակ Լի Մինը հերոսաբար էր կրում իր տառապանքները եւ կարծես որոշել էր այժմերը չփակել, մինչեւ իր վերջին ցանկությունը կատարվի:

Կինը կանչեց Լի Կանին, որ տեսնի եղբորը, եւ ասաց հաղթականորեն. «Ուզում ես տեսնել քո ընտանիքի երկրորդ մարդուն, այնպես չէ՞: Ահա՛ նա»:

Ոչ: Լի Մինը դեռ առաջ էր պարզել երկու մատը: Ապա կինը կանչեց Տա Տունգին եւ կանգնեցրեց նրան Շիաո Մինի հետ կողք կողքի:

«Ուզում ես, որ քո երկու որդին քեզ հրաժեշտ տան, չէ՞»:

Ոչ: Կինն ստիպված էր ձեռք քաշել: Բայց Լուտոսի Բուրմունքը նկատեց, որ մեռնողն այժմերը ճրագին է հառել:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Հաստատ ինչ-որ բան այն չէ ճրագի հետ,- ասաց Լուսուսի Բուրմուսը:- Նա աչքերը պատրույզներին է սեւեռել...»:

«Ես գիտե՛մ», - պոռթկաց Շիառ Մինը երջանիկ ժպիտով: Տղան հասկանում էր իր հոր տևտեսող սկզբունքը կյանքում: Նա գնաց դեպի ճրագը, առանձնացրեց իրարից կրկնակի պատրույզի մասերը եւ դրանցից մեկի կրակը հանգցրեց: Ապա եկավ հոր մոտ եւ ասաց. «Արեւը շողում է: Մենք չպետք է միաժամանակ երկու պատրույզ վառենք: Մեկ պատրույզը լրիվ բավական է: Այդպես չէ՞, հայրիկ»:

Ի վերջո, մարդու սեփական միս ու արյունը միայն կարող է հասկանալ նրա նվիրական զգացումները: Լի Մինը հագիվ նկատելի թույլ ժպտաց, փակեց աչքերը եւ վերջին շունչը փչեց:

Թեեւ Լի Մինը մեռնելիս որեւէ հանձնարարություն չէր թողել, նրա այրին գիտեր, որ ամուսնու ցանկությունը պետք է լիներ՝ հնարավորինս խնայողություն անել թաղման արարողությունների ժամանակ: Բայց կնոջ մայրը՝ տիկին Վուն, որն այժմ որոշել էր մի փոքր ավելի երկար մնալ գյուղում, ստանձնեց դստեր պարտականությունը: Նա պատվիրեց, որ գոհեր մատուցվեն յոթ անգամ յոթ օր քսանմեկ բուդոյայական հոգեւորականների կողմից, եւ որ հուղարկավորության օրը թափորին պարտադիր ուղեկցեն դրոշակակիրների մի մեծ շքախումբ, եւ այլև, երեք տաղավար, երաժշտական երկու նվագախումբ, քսանչորս դառասական հոգեւորական, բացի բուդոյայական հոգեւորականներից, եւ երեսուներկու դագաղակիր:

Այդ քառասունինն օրվա ընթացքում տունն ավելի շատ նմանվել էր թատրոնի, քան բնակարանի: Բոլոր պատերը, քիվերը, առաստաղները ծածկված էին գեղազարդ վահանակներով, որոնց վրա կային բազմաթիվ նախշանկարներ՝ պատրաստված միասին կցակարված մաքուր սպիտակ գործվածքներից: Վարձվել էին տասնյակ ժամանակավոր ծառաներ, եւ երաժշտական նվագախումբը նստած էր հենց գլխավոր դարպասից ներս, որպեսզի կարճատեւ երաժշտություն հնչեցնեն, երբ որ մի այցելու կամ սզացող ներս մտներ կամ դուրս ելներ: Միջնասենյակը բաժանված էր երկու մասնաբաժնի. կենտրոնից մի մեծ սպիտակ վարագույր էր կախված: Դագաղը դրված էր վարագույրի ետեւում, որ ծածկված էր մետաքսե սպիտակ շերտակտորներով, որոնց վրա սզո բանաստեղծական տողեր էին գրված: Վարագույրների կենտրոնում հանգուցյալի նկարն էր:

Քանի որ լուսանկարն այն ժամանակ հայտնի չէր, դիմանկարը նկարվել էր հատուկ արհեստավորի կողմից, որ ոչ մի դեպքում գեղանկարիչ չէր, եւ որի միակ մասնագիտությունն էր դիակներ նկարելը՝ նախքան դրանք

դագաղների մեջ դնելը: Նկարի ներքեում, վարագույրի դիմաց, իրար մոտ տեղադրված էին երեք քառակուսի սեղաններ: Բոլոր սեղանների վրա, այս ու այնտեղ սպիտակ ու կանաչ մոմեր եւ զոհաբերության տարբեր անոթներ էին դրված, իսկ ճիշտ մեջտեղում խնկի բուրվառ էր կանգնեցված: Բուդդայական հոգեւորականները կատարում էին սեղանի երկու կողմերում եւ կարդում էին սանսկրիտ սուրբ գրություններ ու նվագում էին սրբազան նվագարաններ: Սի մեծ բարձ էր դրված կենտրոնական մասում, սեղանների առջեւ, եւ դրա վրա պետք է ծնկի գալիս սգացողներն ու իրենց հարգանքի տուրքը մատուցեին: Չախ կողմում, ծղոտե ներքնակի վրա, հենց սպիտակ վարագույրի առջեւ, Շիաո Սինս ու Տա Տուլզը, սպիտակ պատմունճաններով, որոնց վրա կանեփաթեղից գործված բաճկոնակ էին հագել, ստիպված ծնկի պիտի իջնեին, երբ սգացողներից որեւէ մեկը մոտենար հարգանքի տուրք մատուցելու մահացածին: Այրին եւ Լոտոսի Բուրմուկը պետք է ծնկեին աջ կողմում վարագույրի ետեւում, որտեղ դագաղն էր գտնվում: Նրանք կառն պարտավոր էին կարճատեւ ողբալ ամեն անգամ, երբ որեւէ մեկը մոտենար: Այրու սգո զգեստը բաղկացած էր ճերմակ վերարկուից ու կիսաշրջազգեստից եւ կանեփաթեղից գործված վերնաբաճկոնակից, մինչդեռ ապագա հարսը հագել էր միայն ճերմակ վերարկու եւ կիսաշրջազգեստ: Բայց փոքրիկ աղջկա կոճակները եւ դրանց մերակներն ամբողջովին կարմիր էին. այս վառ գույնը նշանակում էր, որ նրա սեփական ծնողները դեռ ողջ էին:

Առաջին մի քանի օրերին բավականին ծանր էր այրու եւ երեխաների համար՝ բազմիցս ծնկի իջնել, քանի որ մահվան պաշտոնական հայտարարությունից անմիջապես հետո այցելուների մշտական հոսք էր: Էլ ավելի դժվար էր այրու համար, որը պետք է գրեթե անընդմեջ բարձրաձայն ողբար: Հարուստ ընտանիքները քաղաքում սովորաբար հատուկ սգացողներ էին վարձում, որպեսզի ողբան կանանց փոխարեն, բայց գյուղում դա հնարավոր չէր, քանի որ կին այցելուները մշտապես գալիս էին վարագույրի ետեւը մի քանի մխիթարիչ խոսք ասելու կորուստ ունեցողներին եւ հետեւաբար պատասխանատու էին լինելու փոխարինող գտնելու համար: Բայց առաջին մի քանի օրվա խառն վիճակից հետո ամեն ինչ սկսեց փոքր-ինչ հանդարտվել: Այրին կարող էր ժամանակ առ ժամանակ կատարել եւ մի փոքր հանգստանալ, երբ այցելու չկար: Երեխաներն, իսկապես, նույնիսկ ավելի հեռուն գնացին եւ թաքուն սողոսկում էին այգի ու զվարճանում իրենց համար: Դարպասի մոտի նվագախումբը մեծապես օգնում էր: Այն, փաստորեն, ազդարարում էր յուրաքանչյուր այցելուի ժամանումը եւ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

այդպիսով, թեկուզ կարճ, բայց լավ ազդանշան էր երեք գործալիքների համար, որոնք պետք է զգուս եւ ուշադիր լինեին՝ լսելով ազդանշանը:

Թեւեւ Լոտոսի Բուրմուկը նշանված էր տղաներից մեկի հետ, ու թեւեւ նրանք այդքան մոտ ազգականներ էին, բայց երբեք չէին հանդիպել նախկինում: Ե՛վ Լի Մինը, եւ՛ աղջկա մայրը կարծես թե շատ լավ հաջողեցրել էին կանխել երեխաների հանդիպումը՝ հակառակ տիկին Վուի ցանկության, որ նրանք ծանոթանային որքան հնարավոր է շուտ: Լոտոսի Բուրմուկը շատ էր լսել տատից իր նշանածի՝ Շիաո Մինի մասին, թերեւս չափազանց շատ: Համաձայն տիկին Վուի նկարագրության՝ Շիաո Մինը պետք է աշխարհի ամենագեղեցիկ պատանին լիներ եւ, բացի ամենաօրինակելի վարքագծի տեր լինելուց, նաեւ ամենաբարեսիրտ եւ ամենախելացի մեկն ապրողների մեջ: Տա Տունգի մասին, սակայն, ասելուսները ցույց էին տալիս, որ այն, ինչ ուներ Շիաո Մինը, դրանից զուրկ պիտի լիներ այս տղան, եւ գրեթե մահացու դժբախտություն կլիներ հաստատ նրա համար, ով ընդհանրապես ճանաչեր Տա Տունգին:

Լինելով միակ երեխան՝ Լոտոսի Բուրմուկը շատ երես առած էր եւ բավականին անհնազանդ բնավորություն ուներ: Նա հաճախ էր վիճում եւ հակառակվում մոր հետ եւ երբեք ոչ մի անգամ չէր հաշտվում տատի հետ, ում հանդեպ ուժեղ հակակրանք ուներ պարզապես նրա համար, որ տարեց կինը խենթի պես սիրում էր իրեն: Տիկին Վուի՝ Շիաո Մինին փառաբանող գովեստներն, ավաղ, միայն հակառակ ազդեցությունն ունեցան, եւ Լոտոսի Բուրմուկը շուտով տղայի հանդեպ հակակրանքով նախատրամադրվեց: Թեւեւ հաճախ էր վիճում տատի հետ՝ Տա Տունգի առիթով, որը, ինչպես ինքն էր ասում, չէր կարող լինել այդքան ահավոր, ինչպես ծեր կինն էր համարում, այնուամենայնիվ, Լոտոսի Բուրմուկը կարծում էր, թե տղան կոպիտ, անտաշ ու անկիրթ մի գեղջուկ է, որի հետ խաղալը պետք է որ շատ տհաճ լիներ: Բայց այժմ, երբ տղաներից երկուսի հետ էլ բավականին մտերմացավ, աստիճանաբար սկսեց իր սեփական կարծիքը կազմել նրանց մասին: Խելացի եւ գեղեցիկ Շիաո Մինը ավելի ու ավելի հիասթափեցնող դարձավ նրա համար, մինչդեռ Տա Տունգն օր օրի ավելի ու ավելի էր բարձրանում նրա աչքին: Շուտով նա սկսեց մտածել, որ իր տատը պետք է որ խառնած լիներ կամ նրանց անունները, կամ անձերը: Լոտոսի Բուրմուկը չէր կարողանում տանել Շիաո Մինի սեփականատիրական նկրտումներն ու իր վրա իշխանություն ունենալու հովերը: Շիաո Մինը նրա աչքին աշխարհի ամենաինքնահավան ու եսասեր տղան էր: Այդ տղան մնացած բոլորին իրենից ցածր էր համարում,- եւ մասնավորապես

Լոտոսի Բուրմունքին, որին վերաբերվում էր ինչպես մի աղախնու: Աղջիկը քաղաքից իր հետ բերել էր արտասահմանյան շատ կոր ու անձանոթ իրեր եւ ժամանակակից խաղալիքներ, ինչպես, օրինակ, հնդկական ռետինե գնդակներ եւ ցեյուպոիդե տիկնիկներ, որոնց մասին, իհարկե, գյուղում լսած իսկ չկային: Այն ժամանակ, երբ Տա Տունգը մշտապես թույլտվություն էր խնդրում նրանից, նախքան կհամարձակվեր ձեռք տալ դրանց կամ գնել, Շիաո Մինը պարզապես խլում էր դրանք Տա Տունգի կամ աղջկա ձեռքից, երբ ուզենար, ասես նրա բոլոր իրերի հանդեպ նախնական իրավունք ուներ:

Երբ չէր կարողանում իր ուզածին հասնել, Լոտոսի Բուրմունքը սիրում էր անմիջապես այդ մասին հայտնել տատին: Նրան հատկապես խիստ կատաղեցնում էր Շիաո Մինի սովորությունը՝ իր եսասիրական բողոքները հայտնել մորը եւ նույնիսկ ավելի շատ բողոք հայտնել, քան աղջկին իրականում արել էր, ինչպես նաեւ տատի սովորությունը՝ հրամայել իրեն, որ զիջի տղային, անկախ նրանից, թե ով է իրավացի:

Տղաները երկուսն էլ պաշտում էին հնդկական ռետինե գնդակները: Տա Տունգը, ցանկանալով ունենալ դրանցից մեկը, առաջարկեց պատրաստել մի շատ գեղեցիկ, աքաղաղի փետուրներով Շիեն-ցզի՝ փետրագնդակի մի տեսակ, որ գործածվում է ոտքով խաղի ժամանակ, եւ առաջարկեց աղջկան խաղալ սովորեցնել՝ նրա փոքրիկ ռետինե գնդակներից մեկի հետ փոխանակելու դիմաց: Լոտոսի Բուրմունքն անմիջապես համաձայնեց եւ կանխավայելում էր, որ կսովորի կոր խաղը ու նաեւ կտեսնի, թե ինչպես է պատրաստվում Շիեն-ցզին: Բայց Շիաո Մինը պարզապես ընտրեց մի մեծ ու զունավոր գնդակ, աղջկա սիրած գնդակը, եւ ասաց, որ դա այն է, ինչ ինքը պետք է ունենա: Երբ գնացին այս տարածայնության մասին հայտնելու, որի պատճառով երկուսն էլ կոպել էին ու լաց եղել, տիկին Վուն Լոտոսի Բուրմունքին ասաց, որ նա չպետք է վիճի Շիաո Մինի հետ եւ որ, որպես փոխզիջում, նրանց թույլ կտրվի նույն գնդակով խաղալ: Երկուսն էլ, ցանկանալով ունենալ իրենց լիարժեք բաժինը, դրանից հետո անընդհատ խաղում էին այդ գնդակով:

Այգում, նրանց խաղահրապարակին մոտ, մի ժամանակ մայրու մեծ, ծեր մի ծառ էր եղել, բայց կտրվել էր, որովհետեւ Լի Մինը կարծում էր, թե այն փակում է արեւի լույսը, որն այնքան անհրաժեշտ էր իր տնային տնտեսության բանջարեղենների աճի համար: Այդ ծառի չորացած արմատների միջեւ մի փոս կար՝ մոտ երկու ոտնաչափ խորությամբ եւ ընդամենը մի քանի մատնաչափ տրամագծով, եւ դա միշտ սպառնալիք էր գնդակ խաղա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ցողների համար: Հնդկական ռետինե գնդակը շատ ավելի բարձր ու ավելի ազատ էր գետնից ետ ցատկում, քան բամբակե գնդակները, որոնցով սովորաբար խաղում էին տղաները, եւ մի օր, ի մեծ ցավ Լոտոսի Բուրմուլքի, որը նայում էր, Շիաո Մինը գնդակը նետեց ուղիղ դեպի փոսը, որն ընկավ փոսի մեջ, նախքան նրանցից որեւէ մեկը կրող էր այն բռնել: Շիաո Մինը հանգիստ ասաց, որ հոգ չէ, ինքը կարող է այն հանել իր ձկնորսական կարթաթելի ու կարթի միջոցով, ինչպես միշտ արել էր, երբ իր բամբակե գնդակն ընկել էր փոսը: Բայց շուտով սարսափով պարզեց, որ ողորկ ռետինե գնդակը կարթին բանի տեղ կարծես թէ չէր դնում: Նա անմիջապես կորցրեց համբերությունն ու ինքնատիրապետումը եւ, ձկնորսական կարթաթելը մի կողմ նետելով, սկսեց անիծել ու հայհոյել:

Փոքրիկ Լոտոսի Բուրմուլքը խիստ վշտացած էր. նա լալիս էր եւ պահանջում Շիաո Մինից ինչ գնով էլ լինի հանել իր գնդակը: Այդ ժամանակ Շիաո Մինն իր գայրոյթը թափեց աղջկա վրա եւ սրտի ուզածի չափ վիրավորեց նրան: Մինչ այդ երկուսը կռվում էին՝ Տա Տուկը գնաց դեպի ջրհորը եւ շուտով ետ եկավ ջրով լի մի մեծ դույլ ձեռքին: Առանց մի խոսք ասելու նա ջուրը լցրեց փոսի մեջ, եւ գնդակը, ջրի վրա լողալով, գլորվելով դուրս եկավ իր թաքստոցից հենց որ փոսը լիքը լցվեց ջրով, եւ ջուրն սկսեց դուրս հոսել: Լոտոսի Բուրմուլքն անմիջապես վերցրեց իր գանձը եւ նայեց տղային այնպիսի հիացմունքով ու համակրանքով, որ նախկինում երբեք չէր զգացել որեւէ մեկի հանդեպ: Այդ պահից Տա Տուկը նրա հերոսն էր:

Այն փաստը, որ իր տատը երբեք լավ խոսք չէր ասում տղայի մասին, ստիպում էր աղջկան էլ ավելի սիրել Տա Տուկին: Նա այժմ լիովին համոզված էր, որ Տա Տուկը մի տեսակ հալածվող զոհ է, եւ ոչինչ այդքան խոր չէր հուզում աղջկա սիրտը, քան նրա այն հայտնագործությունը, որ այս հանիրավի զոհի բնույթը լրիվ հակառակն է այն ամենի, ինչ ասվում էր նրա մասին, եւ որ նա ինքը բոլորովին անտարբեր է այն անարդարությունների նկատմամբ, որոնց պատճառով տառապանք է կրել:

Լոտոսի Բուրմուլքը, բացի նրանից, որ մի փոքր երես առած էր, շատ գեղեցիկ ու հրապուրիչ աղջիկ էր, եւ քանի որ իր զգեստներն ու շարժումները լրիվ քաղաքի ոճով էին, գյուղի ոչ մի աղջիկ չէր կարող համեմատվել նրա հետ: Բնական է, որ Տա Տուկը պետք է հրապուրվեր նրանով նույնքան, որքան նա իրենով: Սկզբում աղջիկը Տա Տուկի կողմն էր միշտ անցնում, երբ որ միասին խաղում էին, բայց հետո նա արդեն փորձում էր նույնիսկ խուսափել Շիաո Մինից եւ ձգտում էր մենակ մնալ Տա Տուկի

հետ: Շիաո Մինը, սակայն, շատ խանդոտ էր եւ երբեք նրանց մեկ վարկյան իսկ միասին չէր թողնում: Նրանք կարողանում էին առանց Շիաո Մինի միջամտության միմյանց ներկայությունից հաճույք ստանալ միայն վաղ առավոտյան: Շիաո Մինը սովորություն ուներ վեր կենալուց առաջ երկար ժամանակ արթուն պառկել անկողնում, եւ քանի որ նա քնում էր նույն սենյակում իր մոր հետ, նրանք վաղ առավոտյան մտում էին անկողնում եւ զրուցում ամեն տեսակ մանկական ու հիմար բաների մասին: Մյուս կողմից՝ Տա Տունգը պարտավոր էր շատ վաղ վեր կենալ: Լուսաբացից քիչ առաջ մեծ հորաքույրը, որ կողքի սենյակում էր, արթնացնում էր նրան իր անընդմեջ հազով: Շենց որ լուսանում էր, նա պիտի ծայն տար Տա Տունգին, որ հարցներ, թե ինչպես է քնել գիշերը եւ հո չի մոտել կամ շոգել եւ այլն: Ապա պիտի հանձնարարեր նրան կատարել իր ամենօրյա աշխատանքը՝ մերսումը, որը երբեմն կես ժամ էր տեւում: Բայց եթե Տա Տունգը կարողանում էր խուսափել եւ մերսումից հետո դուրս մնալ նրա տեսադաշտից, մեկ կամ երկու ժամ լիովին ազատ էր լինում նախքան աշխատասենյակ գնալը, որպեսզի պատրաստվեր օրվա աշխատանքին: Միշտ այդ ժամերին էր նրան հաջողվում մենակ մնալ Լոտոսի Բուրմունքի հետ:

Լոտոսի Բուրմունքը, որ հրճվանք էր ապրում արեւի լույսով բաց օդում, վայրի թռչուններով, բարձրաբերձ, վայելչագեղ ծառերով ու վայրի ծաղիկներով, նույնպես հաջողեցնում էր եւ առավոտյան արթնանում ավելի վաղ, քան քաղաքում էր արթնանում, որպեսզի Տա Տունգի հետ զբոսնի դաշտերում: Նա պաշտում էր գյուղի բաց տարածությունը, որ առանձնապես գեղեցիկ էր, երբ գարնան օրերն ավելի էին տաքանում, եւ ամեն ինչ թարմ ու կանաչ տեսք էր ստանում:

Լոտոսի Բուրմունքը երբեք ձուկ չէր տեսել, բացի խոհանոցում պատրաստված եւ իր ճաշի սեղանին դրված ձկներից: Դրա համար էլ որոշվեց, որ Տա Տունգը նրան պետք է տանի ոչ շատ հեռվում գտնվող ձկնաբուծական մի լճակի մոտ, որտեղ, իր ասելով, աղջիկը կարող էր տեսնել, թե ինչպես է լողում գետածածանը: Բայց ասես հատուկ հենց այդ առավոտյան մեծ հորաքույրը որոշել էր խաթարել տղայի երջանկությունը: Թվում էր՝ նրա հողատապը շատ ավելի է նեղում, եւ նա Տա Տունգին սովորականից ավելի երկար պահեց, որ իր թիկունքը մերսի: Մինչ տղայի ուշքումիտքն ամբողջությամբ Լոտոսի Բուրմունքին շուտափոյթ հասնելն էր, նրա փոքրիկ բռունցքը բավականին անտարբեր ու թույլ հարվածներ էր հասցնում: Աչքերը հառած մեծ հորաքրոջ սենյակում կախված վագրի հին նկարին՝ տղան իր խաղընկերուհու հետ հանդիպելու երջանիկ պահից բացի այլ

ԱՅՈՒՆ ՇԻՒ

բանի մասին չէր մտածում:

«Ավելի ուժեղ խփիր, Տա Տունգ»,- ծեր կինը գոհ չէր:

«Այո, մեծ հորաքոյր»:

Նա ավելի ուժեղ խփեց, բայց բավականին յուրահատուկ ծնով: Աչքերի առջեւ գունվող վագրի նկարն սկսեց ուղղորդել նրա ձեռքը, եւ տղայի բռունցքն սկսեց շարժվել նկարչի վրձնած աշխատանքի ուղղությամբ: Տա Տունգն սկզբում ստեղծեց վագրի գլուխը, ապա մարմինը, որն ընկավ ծեր կնոջ թիկունքի ուղիղ կենտրոնում: Հետո եկավ պոչը: Բուն նկարում այն բարձր ցցված էր օդում, եւ Տա Տունգը, ավելի ու ավելի ուժեղ խփելով՝ ըստ իր ստացած հրահանգների, ջանում էր պատճենել ուժեղ պոչը՝ ավելի ու ավելի ուժգին հարվածներ հասցնելով դեպի վեր, մինչեւ որ փաստորեն սկսեց բռունցքով հարվածել ծեր կնոջ վզին եւ նրա գլխի ետեւի մասին:

«Էդ ի՞նչ ես անում»,- ցավից ճչաց ծեր կինը:

«Վա՛յ, ներողություն»:

Մինչ ծեր կինը նախատում էր նրան, Տա Տունգը դուրս փախավ սենյակից: Լոտոսի Բուրմունքն անհամբեր սպասում էր նրան այգում: Նրանք այգուց գնացին դեպի լճակը եւ տեսան, թե ինչպես հսկայական մի գետածածան արագ դեսուդեն է լողում բաց կանաչավուն ջրի հենց մակերեսույթի տակ: Դա մի բան էր, որ չափազանց մեծ տպավորություն գործեց քաղաքի աղջնակի վրա: Այստեղ, մեծ, լացող ուռենու տակ, որի ճյուղերն ասես քնքշորեն շոյում էին նրանց իրենց անուշաբույր մատղաշ տերեւերով, Լոտոսի Բուրմունքն առաջարկեց, որ նստեն եւ մի քիչ հանգստանան: Խոտը փայլում էր ցողից, եւ Տա Տունգը չհամաձայնեց. «Չէ, շատ թաց է...»:

«Բայց ես թաշկինակ ունեմ,- ասաց աղջիկը:- Թաշկինակս կփռեմ խոտի վրա: Բավականին լայն է երկու հոգու համար: Կարող եսք միասին նստել»:

«Չէ, ես ցողից չեմ խուսափում»:

«Բայց թաշկինակն ինձ համար շատ մեծ է...»:

«Կարող ես ծալել, որ ավելի հաստ լինի...»:

«Բայց ծալած էլ բավականին մեծ է երկու հոգու համար...»:

«Դե, ուրեմն, երկու անգամ ծալիր: Ավելի լավ քեզ համար»:

Եվ որպեսզի այլ փաստարկ չբերի, առաջինը նստեց խոտին:

Լոտոսի Բուրմունքը շինծու քամահրանքով, բայց թաքուն հիացմունքով նայեց համառ, բայց բարեսիրտ տղային: Նա ծալեց իր թաշկինակը եւ նստեց դրա վրա՝ տղային շատ մոտ:

«Այն դու կամակոր, հիմար տղա, երբեմն սիրում եմ քեզ դրա համար»:

Աղջիկը սեւեռուն կայեց Տա Տունգին:

«Հա՛», - ասաց տղան շիկնելով եւ կայեց ջրի մեջ: Ապա անվճռականորեն ավելացրեց. «Ես էլ քեզ եմ սիրում»:

«Իսկապե՞ս, - բացականչեց աղջիկն ուրախ եւ առանց շփոթվելու: - Ինչքա՞ն ես ինձ սիրում»:

«Շատ», - պատասխանը հազիվ լսելի էր:

«Ձեռքս կծիր, - ասաց աղջիկը՝ վեր քշտելով թելը եւ աջ ձեռքը տղայի կողմը պարզելով: - Կծիր այնքան ուժեղ, ինչքան որ կարծում ես, թե սիրում ես ինձ»:

Տա Տունգը չէր համարձակվում գլուխը բարձրացնել: Եւ քնքշորեն շուրջ ձյունաճերմակ փոքրիկ թելը եւ զգուշորեն թեթեւ կծեց:

«Այդքա՞ն ես ինձ սիրում, - հարցրեց հիասթափված աղջիկը: - Դու ինձ ամենեւին չես սիրում»:

«Սիրում եմ, - բողոքեց տղան: - Վախեցա չդիմանաս»:

«Դե ուրեմն կորից կծիր: Թող տեսնեմ ինչքան ես ինձ սիրում»:

Տա Տունգը կորից կծեց գեղեցիկ թելը, այս անգամ շատ ավելի ուժեղ: Եւ անմիջապես կայեց կծած տեղը եւ գրեթե սրտաբեկ եղավ՝ տեսնելով ատամների հստակ երեւացող չորս հետք, որ խոր դրոշմվել էին մաշկի մեջ: Բայց Լոտոսի Բուրմունքը դեռ դժգոհ էր:

«Այդքան բա՞ն»:

«Այո», - ասաց Տա Տունգը վճռական: Եւ իրեն չէր կարող թույլ տալ ավելի ուժեղ կծել:

«Ուրեմն կհսով չափ էլ չես սիրում ինձ, ինչքան որ ես եմ քեզ սիրում, - աղջիկը հիասթափված ծածկեց թելը: - Դե հիմա քո ձեռքն ինձ տուր, եւ ես ցույց կտամ, թե ինչքան եմ քեզ սիրում»:

Տա Տունգը մտավախությամբ լի գողունի մի հայացք գցեց աղջկա կողմը եւ ապա դժկամորեն առաջ մեկնեց աջ ձեռքը:

«Չէ՛, - զարմացած զոչեց աղջիկը: - Աջը կնոջ համար է, իսկ ձախը՝ տղամարդու: Չգիտե՞ս կարգը»:

Տա Տունգը բացեց ձախ թելը եւ ոչինչ չասաց: Լոտոսի Բուրմունքը բռնեց տղայի թելը եւ, կախքան կծելը, հարցրեց. «Ցավից վախենո՞ւմ ես»:

«Իհարկե՛ չէ», - արհամարհական պատասխանեց Տա Տունգը: Եւ շրջվեց, որ ուշադրություն չդարձնի:

Լոտոսի Բուրմունքն սկզբում սեւեռուն ու երկար կայեց Տա Տունգին եւ ապա կծեց նրա թելը՝ դողդոջուն պաշտամունքով: Ատամները սեղմած

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

պահելով՝ նա հարցրեց. «Ցավն զգո՞ւմ ես»:

«Չե՛», - հերոսաբար պատասխանեց Տա Տուկը:

«Հիմա զգո՞ւմ ես», - աղջիկն ավելի ուժեղ կծեց:

«Չե՛»:

«Իսկ հիմա՞»:

«Ու՛հ», - Տա Տուկը թեւը մի կողմ քաշեց աղջկա ամուր սեղմած ատամների արանքից:

«Ցավեցրի՞», - աղջիկն արագ բռնեց նրա թեւը, որպեսզի նայի, եւ տեսավ, որ փոքրիկ մի քերծվածք կա: Այն մի քիչ արյունոտ էր: Շատ կներես, բայց թեւը չպիտի քաշեիր»:

Տա Տուկն անփութորեն շփեց վերքը եւ կայեց ջրին: Նա քրթմնջաց. «Բան չկա: Ամեն ինչ լավ է»:

Լոտոսի Բուրմուկը շուրթերով դուրս քաշեց վերքի արյունը, - վերքն այնքան էլ մեծ չէր, - եւ այտը քնքշորեն սեղմեց դրան: Տա Տուկը շատ անհարմար զգաց եւ ետ քաշեց ձեռքը: Նա շրջվեց կայելու Լոտոսի Բուրմուկին եւ զգաց, որ արյան փոքրիկ մի բիծ կար նրա աջ այտին:

«Այտիդ վրա արյան բիծ կա»:

«Որտե՞ղ, - Լոտոսի Բուրմուկը դեմքն ավելի մոտեցրեց նրան: -

Սրբիր այն»:

Տա Տուկը նախկինում երբեք որեւէ աղջկա հետ այդքան մոտ չէր եղել եւ սաստիկ շփոթված էր: Նա մատներով արագ սրբեց արյան բիծը եւ չզիտեր, թե ինչ անի հետո:

«Հե՛յ, ի՞նչ եք անում այդտեղ, - Շիառ Մինի ձայնը հեռավորությունից ընդհատեց փոքրիկ սիրավեպը: - Ամեն տեղ ձեզ էի փնտրում, հիմա բռնացրի»:

«Դու ձանձրալի ես», - զոչեց Լոտոսի Բուրմուկը:

Տա Տուկը փորձեց ոտքի կանգնել, բայց Լոտոսի Բուրմուկը ցած քաշեց նրան եւ ստիպեց նստած մնալ իր կողքին:

«Նստի՛ր, - կարգադրեց աղջիկը: - Ինչո՞ւ պիտի վախենաս նրանից»:

«Ես նրանից չեմ վախենում, բայց չեմ ուզում մնալ այստեղ, երբ նա եկել է: Արի տուն գնանք»:

«Նայիր այստեղ, Տա Տուկ: Դու ասացիր, որ չես վախենում նրանից, բայց նրանից ինձ կպաշտպանե՞ս»:

«Իհարկե՛»:

«Եվ եթե քեզ ասեմ, ինչ ուզեմ՝ կանե՞ս նրան»:

«Սիրով»:

Շիաո Մինն ավելի մոտեցավ եւ սկսեց կեղտոտ խոսքերի տարափ տեղալ անմեղ զույգի վրա: Լոտոսի Բուրմունքը, դաստիարակված լինելով քաղաքի լավ ընտանիքում, նախկինում երբեք չէր լսել այդպիսի զարշելի բառեր եւ իրեն կոպտորեն վիրավորված զգաց: Արցունքներն աչքերին ևս վեր կացավ եւ աղերսագին դիմեց Տա Տունգին. «Եթե իսկապես սիրում ես ինձ, ջուրը նետիր նրան հատուն ինձ»:

Տա Տունգը բավական կուշտ էր Շիաո Մինից եւ միայն շատ ուրախ էր ինչ-որ պատրվակ գտնել, որպեսզի այդ գոեհիկ ինքնակոչի հանդեպ հանդուգն մի բան աներ: Նա ցատկելով ոտքի կանգնեց եւ մեկ ուսոյունով բռնեց ընկրկող տղային ու ամուր սեղմեց իր բազուկների մեջ: Հեշտությամբ վեր բարձրացնելով՝ ևս Շիաո Մինին նետեց լճակը: Ամբողջ ծայնով աղաղակելով՝ Շիաո Մինն ընկավ՝ մեծ ճողփյուն ու ջրացայտեր առաջացնելով: Բարեբախտաբար, ափի մոտ ջուրը խորը չէր, այնպես որ՝ Շիաո Մինը միայն մեկ-երկու կում ջուր կուլ տվեց եւ ամբողջովին թրջվեց, բայց կարողացավ բավականին հեշտ դուրս մագլցել առանց Տա Տունգի օգնության: Բարձր ու անընդմեջ լալով՝ Շիաո Մինը քայլեց ուղիղ դեպի տուն, որ պատմի եղածը:

Երկու դավադիրները կարճ հեռավորությունից հետեւում էին «ջրի մարդուն» եւ հիմա, երբ հատուցել էին իրենց թշնամուն, բավականին պատրաստ էին հետեւանքների համար պատասխան տալու:

Բարձրածայն հեկեկոցների միջից Շիաո Մինը տիկին Վուին եւ իր մորը պատմեց, թե ինչպես է ինքը գտել Լոտոսի Բուրմունքին՝ Տա Տունգի հետ «սիրային փախուստ տալիս» եւ փոքրիկ լճակի ափին «անամոթաբար սեր անելիս»: Ասաց, որ ինքը նրանց «մեղմորեն» հորդորեց տուն գնալ, իսկ Տա Տունգը, Լոտոսի Բուրմունքի օգնությամբ, իրեն հրեց զցեց ջուրը, մինչ ինքը միամիտ էր ու անտեղյակ նրանց չար մտադրությանը: Տիկին Վուն, երբ մեղմ հանդիմանում էր իր չարածճի թռնուհուն խայտառակ վարքի համար, դստերը հանձնարարեց «այդ զգվելի ձկնորսի տղային» ուղարկել Լի Կանի մոտ եւ էլ երբեք թույլ չտալ, որ այդ տուն գա: Թեւեւ, ասաց նա, իր հանգուցյալ փեսայի համար լավ չէ միայն մեկ «սագացող որբ» ունենալ երկուսի փոխարեն, բայց զոհեր մատուցելու մնացած օրերի ընթացքում դա բոլորովին կարելու չէր: Մեծ հուղարկավորության օրը տղան կարող էր միանալ թափորին, եւ բոլորը կտեսնեին, որ երկու «սագացող որբ» կա ի վերջո:

Թեւեւ Լոտոսի Բուրմունքին արգելել էին տեսնել Տա Տունգին՝ սպառնալով, թե ծեծով կպատժվի, աղջիկը գիտեր, որ դա միայն իրեն վախեցնելու

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

նպատակ է հետապնդում, այնպես որ՝ նա դեռ կարողանում էր իր սիրելի-ին ամեն օր վաղ առավոտյան հանդիպելու հնարը գտնել: Չնայած Լի Կա-նը չէր սիրում աղջկան, բայց նա բարեսիրտ մարդ էր և երբեք ոչևնզվ չէր խաթարում երեխաների երջանիկ հանդիպումները: Նա տղային խորհուրդ տվեց շատ հաճախ չհանդիպել աղջկան, սակայն որոշեց հանդուրժել նրանց ժամադրությունները, ինչպես ասում են՝ «մեկ աչքը բաց, մյուսը՝ փակ»:

Քառասունինև օր զոհաբերություններ մատուցելու ծեսերից հետո, որոնց ընթացքում Տա Տունգը և Լոտոսի Բուրմունքն անչափ սիրեցին մե-կը մյուսին ու դարձան իրոք անբաժանելի, տեղի ունեցավ մեծ իրադար-ձությունը՝ հուղարկավորությունը: Տիկին Վուն իսկապես առաջնակարգ թաղում էր ուզում և ծախս չէր խնայել, թեև փողն իրենը չէր: Սգո երթն իրոք վեհաշուք էր, և շրջակա բոլոր գյուղերի բնակիչները երբեք չէին տե-սել նման բան: Տևից մինչև ընտանեկան գերեզմանատեղի կես մղոնից մի քիչ ավելին էր, բայց տիկին Վուի կարգադրությունների համաձայն թափո-րը պետք է անցներ շրջանաձև երթուղով՝ ընդգրկելով տասը մղոնի չափ տարածություն: Թաղման հոգեհացը, որին մասնակցելու էին եկել գյուղի գրեթե բոլոր բնակիչները, ամենաճոխ ճաշկերույթն էր, որի մասին երբեմ էլ լսել էին գյուղացիները, և մասնակիցներից ամեն մեկին թույլ էր տրված զոհաբերության խոզի մսից մի մեծ կտոր տանել տուն:

Սակայն, չնայած այս ամբողջ ճոխությանն ու առատաձեռնությանը, որ արժեցավ Լի Մինի կարողության մի զգալի մասը, գյուղացիներն ամենեւին գոհ չէին թաղումից: Պատճառը դազաղակիրների հարցն էր, որի մասին տիկին Վուի կարծիքը տարբերվում էր գյուղի տարեցների կարծիքից: Իհարկե, այդպիսի մեծ մասշտաբի թաղման դեպքում միանգ-ամայն բնական է, որ չէր պահպանվի ամբողջ ծրագիրը, և իսկապես խիստ ծիծաղելի կլիներ ունենալ երեսուներկուսից պակաս դազաղակիր: Գյուղական միջավայրում դազաղակիրները միշտ նույն գյուղի անդամներն են և նրանք այդ գործն անում են ոչ թե փողի, այլ «հաճույքի» համար, թեև կարելի է զարմանալ, թե ինչպես կարելի է հաճույք ստանալ նման դեպքում: Գյուղում, սովորաբար, դրանք ութից ավելին չեն, և համարվում էր, որ Լի Մինի բախտը բերել է, երբ ասացին, որ հավաքվել են, ներառյալ մի քանի պահեստային անձինք ու սկսնակներ, մինչև տասնվեց հոգու չափ մարդ: Բայց ո՛չ: Տիկին Վուն իր ուզածը պետք է աներ: Նա առաջար-կեց, որ վարձի այդ գործն անող եւս տասնվեց մարդ քաղաքից: Իսկ դա մեծ վիրավորանք էր գյուղաբնակների համար: Խառնվել դազաղակիր աշ-

խատող այդ մարդկանց հետ, որոնք պարզապես մուրացկաններ ու ստահակներ էին, այնպիսի մի վիրավորանք էր նրանց համար, որ երբեք չի ջնջվում: Գյուղի տարեցուները երկար ժամանակ վիճաբանում էին տիկին Վուի հետ, եւ երբ տեսան, որ անկարող են նրան համոզել, որպեսզի բավարարվի տասնվեց մարդով, ասացին, որ նա կարող է այնքան դազադակիր բերել քաղաքից, որքան ուզում է, բայց գյուղաբնակները դրանից հետո Լի Մինի ընտանիքի համար այլևս մատը մատին չեն խփի: Տիկին Վուն շատ լավ պատրաստ էր պատասխան տալու այդ մարտահրավերին եւ ասաց գյուղացիներին, որ դա իրեն լիովին ձեռք է տալիս: Նա դստեր հետ խոսեց գյուղում ապրելու անցանկալիության մասին եւ դա ներկայացրեց ի շահ Շիաո Մինի, որը քաղաքում լավ կրթություն ստանալու կարիք ուներ. նրանք պետք է թողնեին հին առանձնատունը եւ ապրեին իր մոտ, եւ ինքը կկարողանար հոգալ նրանց մասին ինչպես հարկն է: Լի Մինի այրին նույնքան հնազանդ էր որպես դուստր, որքան որ հնազանդ էր եղել որպես կին, եւ ինչ որ մայրն ասում էր նրան, միշտ պատրաստակամ էր կատարելու: Բանն այն է, որ ամուսնու մահից հետո նա իրոք չգիտեր ինչ անել առանց մոր:

Շուտով, թաղումն ավարտվելուց հետո, տիկին Վուն եւ Լուտոսի Բուրմունքը վերադարձան քաղաք: Երբ գնում էր, Լուտոսի Բուրմունքը շատ արցունք թափեց եւ Տա Տունգին աղերսեց՝ քաղաք գնալ հնարավորինս շուտ եւ հաճախ: Նա ասաց, որ ինքը շատ դժբախտ կլինի առանց Տա Տունգին տեսնելու, մանավանդ որ Շիաո Մինը հաստատ ապրելու է իրեն մոտիկ մի տեղ: Տա Տունգը լուռ էր, քանզի գիտակցում էր, որ խոստանալը դժվար բան է, բայց ի վերջո ասաց, որ միշտ կմտապահի աղջկա խոսքերը եւ երբեք չի մոռանա նրան:

Մինչ Տա Տունգը շարունակում էր ուսումը Լի Կանի մոտ, Շիաո Մինը, սպասելով, որ մայրը գնալու է քաղաք, որտեղ ինքը կկարողանար շատ ավելի լավ կրթություն ստանալ, ժամանակավոր արձակուրդում էր:

Լի Մինն իրենից հետո հսկայական կարողություն էր թողել, եւ մեծ մասը բրնձի դաշտեր էին: Շատ քիչ կանխիկ փող կար, ու դա ամենեւին բավարար չէր թաղման ծախսերը փակելու համար: Այրին, իր մոր ղեկավարությամբ եւ օգնությամբ, ստիպված էր վաճառել որոշակի հողատարածք, որպեսզի բազմաթիվ հաշիվներ վճարեր, որոնցից յուրաքանչյուրի համար տիկին Վուն կարող էր տալ համարժեք բացատրություն: Հողի մեկ այլ բաժին էլ վաճառվեց, որպեսզի միանվագ մեծ գումար ձեռք բերվի, եւ մայրն ու տղան հաստատվեն քաղաքում, մնացածն էլ պահվեց տան առօրյա

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ծախսերը հոգալու եւ Շիատ Միևի կրթության համար:

Մեծ հորաքոյրը, լսելով, որ Լի Միևի ունեցվածքը տնօրինել է այրին եւ ոչինչ չի ժառանգվել Տա Տուևգին, ով ծեականորեն համարվում էր հանգուցյալի ավագ որդին, մտածեց, որ խիստ անարդար են վարվել տղայի հանդեպ: Նա համառորեն համոզում էր Լի Կանին՝ Տա Տուևգի համար պահանջ ներկայացնել:

«Պու պետք է ևորից հավաքես գյուղի ավազներին: Ինչպե՞ս կարող էին նրանք ընդհանրապես անտեսել իմ խեղճ Տա Տուևգին: Տոհմագրքում Տա Տուևգի անունը անմիջապես Լի Միևի անվան տակ է գրված՝ որպես նրա որդին: Ոչ ոք չի համարձակվի որեւէ բան խոսել ժառանգության համար նրա օրինական պահանջի դեմ»:

Լի Կանը ժպտաց: «Ես շատ պատճառներ ունեմ, որպեսզի չանհանգստանամ դրա համար: Նախ՝ եթե Տա Տուևգը պատրաստվում է հանրության համար օգտակար մարդ լինել, աւ փողի կարիք չի ունենա: Երկրորդ՝ եթե Տա Տուևգը պետք է ժառանգությունից կախում ունենա, աւ սոված կմա, եթե անգամ ժառանգի հոր ամբողջ կարողությունը: Բացի այդ, չափազանց շատ փող ունեցող երիտասարդը դատապարտված է կործանելու ինքն իրեն: Տա Տուևգին արդեն ստիպել են շատ ժամանակ վատնել, որովհետեւ նրա հայրը չափազանց մեծ գումար է թողել, որպեսզի այն ծախսվի իր շքեղ հուղարկավորության համար, եւ ես պետք է հոգամ, որ այլեւս տղայի ժամանակն իզուր չանցնի: Եթե աւ շարունակի սովորել ինձ մոտ, աւ շատ ավելի լավ վիճակում կլինի, քան եթե կարողություն ժառանգած լինի»:

«Հա՛, հա՛,- մեծ հորաքոյրը քրքջաց:- Իրոք որ ապուշ գրամուլի մեկն ես: Եթե նույնիսկ Տա Տուևգը տիրապետի քեզնից սովորած ամեն ինչին, չի կարող ավելի լավ վիճակում լինել, քան դու՝ անօգուտ, խիստ կարիքավոր, անորոշ զբաղմունքի տեր մարդ: Երբ Տա Տուևգը մեծանա, քեզ երբեք չի ների, որ չես հոգացել իր սեփականության համար»:

«Գուցե մեզ թվում է, թե շատ բան ինքնըստիևքյան լինելու է այնպես, ինչպես մտածում ենք: Պետք է թողնենք Տա Տուևգն ինքն ասի՝ արդյոք ինչ-որ բան ուզու՞մ է հոր ունեցվածքից»: Եվ աւ ձայն տվեց, որ տղան գա:

«Ո՛չ,- բողոքեց մեծ հորաքոյրը:- Ութ տարեկան տղան ի՞նչ է հասկանում: Ամենահավանականն այն է, որ չի համարձակվի ինչ-որ բան խնդրել»:

«Հիմա, Տա Տուևգ, երբ հորդ ողջ ունեցվածքը տնօրինվում է, կցանկանայի՞ր ինչ-որ բան պահանջել որպես ժառանգություն: Ես չեմ ուզում ա-

խապես ազդել քո որոշման վրա՝ իմ խոսքով, եւ դու լիովին իրավունք ունես ողջամտության սահմաններում ցանկացած բան պահանջելու որպէս ժառանգություն: Բայց հարցն այն է, թե իրո՞ք ինչ-որ բան ես ուզում նրանցից»:

«Այո, հորեղբայր, ուզում եմ»:

«Ո՛չ», - բացականչեց հուսախաբ Լի Կանը:

«Պետք չէ միջամտել, Կան», - հաղթականորեն գոչեց մեծ հորաքույրը: Դառնալով Տա Տունգի կողմը՝ նա ասաց. «Գիտե՛ի, որ կուզես, տղաս: Քո որոշումը վերջնական է: Ո՛չ ես, ո՛չ հորեղբայրդ չպետք է արգելք լինենք քո ցանկությանը: Ինչ էլ որ լինի քո պահանջը, եթե այն խելքի մոտ բան է, մենք պետք է ամեն ինչ անենք, որ դու ստանաս այն»:

«Իսկապէ՞ս կարող եմ ունենալ այն, ինչ ուզում եմ»:

«Իհարկե, եթե խելքի մոտ բան է», - ավելացրեց մեծ հորաքույրը:

«Բայց կարծում էիք, թե դու հորիցդ ոչինչ չես ուզում, Տա Տունգ», - փորձեց միջամտել Լի Կանը:

«Բայց ես երկար ժամանակ մտածել եմ այդ մասին: Կարծում էի, որ եթե Շիաո Սինին է պատկանում, ինձ չեն տա»:

«Ես ամաչում եմ քո փոխարեն, Տա Տունգ, - Լի Կանը խորապես վրդովված էր: - Կարծում էի դու ավելի լավ գիտես»:

«Չպետք է արգելք հանդիսանաս տղայի ցանկությանը: Նրա որոշումը վերջնական է»: Այնուհետեւ մեծ հորաքույրը դարձավ դեպի Տա Տունգը. «Քանի որ դու ավագ որդին ես, քեզ առաջնային իրավունք է տրվում Շիաո Սինի հանդեպ: Ասա՛ ինչ ես ուզում. գո՛ւյք , թե՞ կանխիկ փող»:

«Ո՛չ այն, ո՛չ այն, այլ խոհանոցում գտնվող սպիտակ փիսիկը», - ասաց տղան վճռական:

«Ի՞նչ», - Լի Կանն ուրախությունից վեր ցատկեց:

«Շիաո Սինը միշտ ասում էր, որ դա իր սիրած կենդանին է, եւ ինձ չէր թողնում դիպչել փիսիկին: Իրո՞ք կարծում եք, որ եթե որպէս իմ ժառանգություն պահանջեմ այդ փիսիկը եւ ուրիշ ոչինչ, ապա թույլ կտան, որ իմը լինի»:

«Իհարկե», - պատրաստակամ պատասխանեց Լի Կանը:

«Չէ, բայց ինչի՞ համար ես կատուն ուզում, - մեծ հորաքույրը հիասթափված էր: - Դու հազար փիսիկ կարող ես գնել չնչին գումարով...»:

«Տա Տունգի որոշումը վերջնական է. ինքը ասացիր», - գոչեց Լի Կանը:

«Բայց, Տա Տունգ, կարծում էի դու կենդանիների մասին չէիր հոգում»:

«Ո՛չ, ամենեւին չեմ հոգում»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Էլ ինչո՞ւ ես կատուն ուզում: Ավելի լավ չէ՞ր՝ փողը վերցնեիր,- առաջարկեց մեծ հորաքույրը:- Ես կզետեմ քեզ համար սպիտակ փսիկ...»:

«Չէ, ես ուզում եմ այդ փսիկը Շիաո Մինից վերցնել, որովհետեւ ես խեղճ կենդանուն այնքան էր տանջում, որ մի քանի անգամ քիչ էր մնում սատկի: Ծերունի Վանն ինձ չէր թողնում կատվին տալ ուրիշին: Ասում էր՝ Շիաո Մինն իրեն կմեղադրի դրա համար»:

Չնայած մեծ հորաքրոջ սաստիկ բողոքներին՝ Տա Տունգի ցանկությունը կատարվեց: Հենց որ իր ուզածն ստացավ որպես ժառանգություն, եւ իսկույն բաժանվեց դրանից՝ տալով մոտակայքում ապրող բարեսիրտ մի երեխայի:

Շուտով տիկին Վուն դստեր համար մի լավ ու հարմարավետ տուն գտավ՝ իր տանը մոտիկ: Տունը վերահարդարելուց հետո Լի Մինի այրին շուտով տեղափոխվեց այդտեղ: Այժմ, երբ տիկին Վուն դստերն ու թոռանն իր մոտ էր տարել, սկսեց լավ ուսուցիչ փնտրել երեխայի համար: Պետք է ասել, որ ինչքան էլ շատ էին տիկին Վուն ու իր դուստրը սիրում Շիաո Մինին, այդուհանդերձ մեկ վայրկյան իսկ մտադիր չէին անտեսել տղայի կրթությունը: Ամիջապես վարձեցին քաղաքում շատ հայտնի գիտուն մի մարդու, որ դառնա նրա մասնավոր ուսուցիչը, իսկ Լուտոսի Բուրմունքին թույլատրվեց միանալ նրան՝ որպես լրացուցիչ աշակերտ: Ուսուցանվում էին պատմություններն ու դասականները, եւ ուսուցչից պահանջվում էր՝ իր սաներին բացատրել գրքերի իմաստները: Ուսուցչին վիճակված էր լինել գրի մարդ, բայց ոչ պերճախոս: Եվ ամեն անգամ, երբ փորձում էր բացատրել դասական գրերի իմաստը, եւ պարզապես բարձրաձայն կարդում էր դրանք կրկին ու կրկին, միապաղաղ ձայնով՝ ճաղատ գլուխը եռանդուն շարժելով ու թափահարելով: Նրա կարծիքով՝ իր գլխի շարժումը չափազանց անկեղծ էր:

Շիաո Մինը չէր կարողանում ըմբռնել դասականների իմաստը: Պետք է ասել, որ նման գործերը սովորաբար շատ չոր են եւ հակված են անուշադիր պատանիներին քնով համակելու: Մի անգամ, երբ ուսուցիչը կարդում էր բացատրում էր դասը, որն իրեն հափշտակության մեջ էր գցել, պատահաբար նայեց աշակերտների կողմը եւ տեսավ, որ Շիաո Մինը, աչքերը կիսաբաց, գրեթե նիհիում էր: Ուսուցիչը ցրված ասաց . «Մի՞թե հիացած չես այս հատվածի գեղեցկությամբ, Շիաո Մին: Խիստ սքանչելի է: Ուղղակի գլխիս նայիր»:

Կեսքուն վիճակում Շիաո Մինը բարձրացրեց աչքերը եւ իր առջեւ տեսավ ճաղատ գլուխը, որ եռանդուն կերպով շրջանաձեւ շարժում էր կատա-

րում: Նա երազկոտ պատասխանեց. «Այո, պարոն»:

«Ի՞նչ ես մտածում այդ մասին»:

«Կլոր, պայծառ ու հարթ գլուխ է, ոնց որ վառվող լապտեր լինի»:

Շիաո Մինն անարդարացիորեն պատժվեց այդ միամիտ դիտարկման համար, որ արել էր քնաթաթախ վիճակում: Եվ բնական էր, որ տղան դրանից հետո հաճախ պետք է դասերին չներկայանար: Երբ ուսուցչի կրկնվող պահանջները, որ տղան պետք է ավելի կանոնավոր կերպով գա դասերին, հաճախակի սկսեցին անտեսվել, նա որոշեց հրաժարվել ուսուցչությունից: Մի քանի այլ վարձու ուսուցիչներ հաջորդեցին իրար, բայց բոլորն էլ անհաջողության մատնվեցին:

Մինչ Շիաո Մինի առաջադիմությունն աննշան էր, Լոտոսի Բուրմուկը զրեթե երկու աշակերտի չափ աշխատում էր: Բացի իր բոլոր դասերն անգիր սովորելուց, նա միշտ կարողանում էր ականջ դնել եւ յուրացնել նաեւ այն ամենը, ինչ ուսուցիչը սովորեցնում էր Շիաո Մինին: Երբ մեծերն այս մասին իմացան, Լոտոսի Բուրմուկը զրկվեց սովորելու իր հնարավորությունից: Հիշելով Լոտոսի Բուրմուկի ծննդյան հետ կապված արտառոց բախտացույցը՝ Լի Մինի այրին դժգոհություն հայտնեց մորը՝ ասելով, որ քանի այդ աղջկան թողնում են դպրոց գնա իր որդու հետ, ոչ մի հնարավորություն չկա, թե Շիաո Մինն ինչ-որ բան կսովորի: Նա բավականին նրբանկատ էր, որպեսզի չակնարկեր աղջկա «ուր հատկանիշների» մասին, բայց մոր ուշադրությունը հրավիրեց նրա այն անհեթեթ սնահավատության վրա, թե աղջիկը խլում է տղայի խոհեմությունը, երբ նրանք սովորում են միասին: Դրա համար էլ տիկին Վուն հանեց թոռնուհուն դպրոցից՝ դառն հիասթափություն պատճառելով Լոտոսի Բուրմուկին: Աղջկա մայրը նույնպես դառնացած էր, բայց տիկին Վուն ասաց, որ իրենք Շիաո Մինի շահերը պետք է մնացած բոլորի շահերից վեր դասեն:

Լոտոսի Բուրմուկին դասերից հանելուց հետո Շիաո Մինը լավ առաջադիմություն կցուցաբերեց, եթե հաջորդ ուսուցիչների հետ նրա բախտը մի փոքր ավելի բերեց: Հաջորդող մի քանի տարիների ընթացքում Շիաո Մինի համար զրեթե հաստատուն սովորություն դարձավ ամեն տարվա սկզբին նոր ուսուցիչ ունենալ, եւ Վիշապի նավակի փառատունից առաջ, որը նշվում է հինգերորդ լուսնի հինգերորդ օրը, անհաստատուն ուսուցիչը պարտավոր էր ծանուցել, որ ինքը չի կարող շարունակել իր ծառայությունները հաջորդ կիսամյակում: Եվ աշխատանքից հրաժարվելու նրանց անփոփոխ պատրվակն այն էր, թե իրենց ընտանիքների հետ անսպասելի ինչ-որ բան է պատահել, թեւ տիկին Վուն ասում էր, թե ինքը գիտե, որ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Արանցից ոմանք ամուրի են եւ ոչ մի ընտանիք էլ չունեն:

Յուրաքանչյուր տոր ուսուցչի հետ Շիաո Սինը միշտ պահանջում էր դասագրքերի տոր լրակազմ: Եվ դրանք այնքան տաղտկալի էին նրա համար, որ սկսում էր ծանծրանալ նախքան առաջին մի քանի էջը սովորելը: Սի կողմ նետված այդ գրքերը նա տալիս էր Լոտոսի Բուրմուկին, որի մայրն ամեն ինչ անում էր, որպեսզի աղջկան սովորեցնի դրանք կարդալ: Լոտոսի Բուրմուկը խելամիտ աշակերտ էր: Բացի Շիաո Սինի մի կողմ նետված գրքերը կարդալը, նա նկարելու արվեստ էր սովորում իր մորից, որը շատ լավ նկարչուհի էր: Շատ շուտով նա դարձավ նույնքան լավ նկարչուհի, որքան իր տաղանդավոր մայրը: Սինչոեւ եւ տիկին Վուն, եւ Լի Սինի այրին մշտապես լրջորեն մտահոգ էին Շիաո Սինի ապագայի համար եւ երբեք չէին մոռանում նրա կրթության մասին: Բայց տղային դեռ երեխա էին համարում եւ կարծում էին, թե նրա համար չափազանց ուշ չի լինի հաջորդ տարվանից լրջորեն սկսել սովորել: Եվ, ինչպես միշտ լինում էր հաջորդ տարի, որը թվում էր, թե շատ արագ մոտենում է, բայց որն այդպես էլ չէր գալիս, տղան այդպես զուր վատնում էր պատանեկության իր լավագույն տարիները՝ ոչինչ չանելով, բացի խաղալուց եւ մոր ու տատի հետ այս կամ այն բարեկամին ու հարազատին այցելելուց:

ՉԼՈՒԽ 5

*Ազգի բարգավաճման կամ թշվառության համար
Պատասխանատու է երկրում ապրող ամեն ոք:*

Երբ Տա Տուևը սկսեց մեծանալ և ընկալունակ դառնալ երկրում ու աշխարհում կատարվող գործերի հանդեպ, Լի Կանը կամաց նրա զուվը լցնում էր վտանգավոր գաղափարներով: Պատիարակն ասում էր նրան, որ Չինաստանը, որն այն ժամանակ կոչվում էր Երկնային Կայսրություն, այն չէր, ինչ պետք է լիներ: Նա իր աշակերտին պատմում էր Ափիոնային պատերազմի պատճառի ու ազդեցության մասին, Տյանցզինի բռնազավթման, նաև կայսերական պալատները գրոհելու, և Սյան Ֆեն կայսեր իշխանության տասներորդ տարում (1860) Բրիտանիայի ու Ֆրանսիայի դաշնակցային ուժերի կողմից Կլոր Պայծառ Պարտեզն այրելու և թալանելու մասին:

Աստիճանաբար Տա Տուևը սովորեց ուսումնասիրել քարտեզը և տրտմեց՝ տեսնելով, որ Բիրման, Անամը և Լյու Կյու կղզիները, որ բոլորն էլ պատկանելիս են եղել Չինաստանին, այժմ համապատասխանաբար գրավված էին Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի կողմից: Երկիրն այդ կորուստները կրել էր մեկ կնոջ պատճառով,- ասում էր նա իր ուսուցչին: Այդ կինը ոչ այլ ոք էր, քան կայսրուհի Յի Սին:

Լի Կանը իդեալիստ չէր, որը պարզապես խոսում է: Նա որքան կարող էր աջակցում էր, երբեմն իր հնարավորությունից ավելի, բոլոր գաղտնի կազմակերպություններին, որոնց նպատակն էր փրկել երկիրը: Նա նաև նամակագրական կապի մեջ էր ժողովրդական առաջադեմ առաջնորդների հետ և նույնիսկ նրանց որոշ արտասահմանյան ընկերների հետ: Այն օրերին փոստային բաժանմունքներ դեռ չէին հիմնադրվել, և մասնավոր նամակները փոխանցվում էին «Նամակագրական գործակալություններ» կոչվող մասնավոր կազմակերպությունների միջոցով, որոնց գինը շատ բարձր էր: Նամակ գրելն այն ժամանակ շրայություն էր համարվում: Քանի որ բոլոր «Նամակագրական գործակալությունները» քաղաքում էին, Տա Տուևին էր վստահված Լի Կանի նամակների առաքման ու հավաքելու գործը: Տուևի՝ քաղաք կատարած հաճախակի ուղեորությունները նրա համար մեծ հնարավորություններ էր ընձեռում՝ տեսնելու Լոտոսի Բուրմունքին, որն սկսել էր մեծանալ և գեղեցիկ երիտասարդ կին դառ-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

նալ: Սակայն նրանց հանդիպումները կարճ էին ու անզգացմունք: Նրանց երբեք չէր հաջողվում բարեկամական ողջույնից ավելի մի քանի բառ փոխանակել, թեև սաստիկ ցանկանում էին այդ սահմանն անցնել:

Պատճառը, թե ինչու էր տղան իր ծեռքբերումներում այդքան համեստ, բացատրվում էր նրանով, որ Տա Տունգը ձգտում էր և՛վիրվել իր երկրին: Նա կարծում էր, որ Լոտոսի Բուրմունքի տանը սիրաբանելն ու զվարճանալը հայրենիքի համար իր պարտականությունները կատարելու ժամանակի զուր վատնում կլինի: Եվ իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում առաջատար առաջադեմ բարեփոխիչների կողմից գրված գրքեր ու բրոշյուրներ կարդալով, Չինաստանի առաջին և միակ՝ «Ինթերնեշնլ փաբլիք կյուզ» թերթի կանոնավոր ընթերցողներից էր, թերթ, որ լույս էր տեսնում Շանհայում, ամերիկացի Ջոն Ալլեն Յանգի կողմից, որի չինական անունը Լին Լաո-Չի էր: Այդ թերթերը Նանչան էին գալիս ջոնկա առագաստանավերով, որ նավարկում էին Յանգզիի, ապա նաև Կան գետի հոսանքն ի վեր: Երկար ժամանակ էր տեսում միևնույն դրանք տեղ էին հասնում: Շոգենավերը հազվադեպ բան էին Յանգզի գետում, այն էլ միայն օտարերկրացիներն էին դրանցով նավարկում: Պահպանողական մարդկանց մեծ մասը կարծում էր, որ այդպիսի արտառոց հայտնագործություններով ճամփորդելը պետք է որ խիստ վտանգավոր լինի:

Քանի որ Լի Կանն ապստամբական բնույթի նամակներ էր գրում, որոնք հրապարակվում էին «Ինթերնեշնլ փաբլիք կյուզ»-ում, նա շատ նոր ընկերներ և ոչ քիչ թշնամիներ էր ձեռք բերել: Անգլիայից եկած մի միսիոներ՝ Թիմոթի Ռիչարդը, որ չինական «Լի» ազգանունն էր ընտրել, և չինարեն իր անունն ստորագրում էր «Լի Թի-Մո-Թայ», շարունակում էր նրան նամակներ ուղարկել Շանսի նահանգից: Թիմոթի Ռիչարդը չինարեն շատ գրքույկներ էր գրել դրսի աշխարհի գիտության ու պատմության մասին, և երիտասարդ Տա Տունգը շատ էր հիանում նրա աշխատանքով:

Եվ Ջոն Ալլեն Յանգը, և՛ Թիմոթի Ռիչարդը անկեղծորեն սիրում էին Չինաստանը և շատ էին մտահոգ, որ Չինաստանը դարձնեին ժամանակակից և հզոր պետություն՝ համոզելով, որ երկիրը ետ կանգնի իր հնացած գործելաոճից և որդեգրի մի Ընդհանուր բարեփոխում, ինչպես Ճապոնիան էր արել ոչ շատ առաջ: Բայց Այրի կայսրուհուց սկսած՝ ավելի ցածր կառավարական պաշտոնյաների ինստունկները տոկոսը համառորեն հրաժարվում էր ընդհանրապես փոփոխության մասին լսել, էլ չէնք ասում այնպիսի կտրուկ փոփոխության, ինչպիսին Ընդհանուր բարեփոխումն է:

Մինչ Լի Կանի ընկերները հիմնականում չճանաչված գիտնականների,

օտարերկրյա միսիոներների, Ճապոնիայից վերադարձած ուսանողների շրջանում էին, որոնք ցրված էին լայնածավալ երկրով մեկ, նրա թշնամիներն, ավաղ, տեղական կառավարական ազդեցիկ պաշտոնյաներն էին, որոնք սպառնազին հետետում էին նրան շատ մոտիկից: Կուանզ Սյուի տասնիներորդ տարում (1893-ին) Տա Տունզը, այն ժամանակ տասներեք տարեկան տղա, երբ նամակ պետք է ստանար գործակալությունում, տարվեց շրջանի դատավորի մոտ՝ յամեն: Տղան քաջ էր ու հանդարտ եւ պահանջեց, որ հայտնեն իրեն ձերբակալելու պատճառը: Դատավորը նրան նամակների մի տրցակ տվեց: Բոլոր նամակները հասցեագրված էին Լի Կանին եւ բոլորն էլ բացված էին: Նա ասաց, որ դրանցից մեկը մի շատ վտանգավոր օտարերկրացուց է, որի անունը Լի Ռի-Մո-Ռայ է: Թեեւ այդ նամակների բռնադակության մեջ չգտնվեց այնպիսի բան, որ հաստատեր պետական դավաճանության համար մեղադրանքը, Լի Կանին հիմնավորապես զգուշացրին, որ նա այդքան անխոհեմ է եղել՝ այդպիսի մարդու հետ նամակագրական կապ ունենալու համար: Քանի որ դատավորն իրեն համարում էր իր վարչաշրջանի ժողովրդի հայրը, նա նա ուզում էր ցույց տալ իր զավակներին, որ այդ տխրահռչակ օտարերկրացին՝ Լի Ռի-Մո-Ռայը, վերջերս էր արտաքսվել Շանսի նահանգից եւ որ Լի Կանի համար շատ անխոհեմ բան կլիներ հաղորդակցվել վարկաբեկված «բարբարոս սատա-նայի» հետ: Այս բառերն արտաբերելուց հետո դատավորը բաց թողեց տղային: Տա Տունզին տարան պահակաբաժին, եւ յամենի ծառայողները բոլորը շնորհավորեցին նրան, որ բախտը խիստ բերել է, եւ նա փրկվել է ծեծից ու դատապարտվելուց: Տա Տունզը զարմացած էր եւ անմեղորեն ասաց. «Շնորհակալություն, բայց չեմ տեսնում, թե որեւէ հանցանք եմ գործել»:

Քանի որ Տա Տունզը շնորհակալ չեղավ, որ իր բախտը բերեց եւ իրեն խնայեցին, ավելին՝ ցույց էլ չտվեց, թե նրանց վճար կտա, ծառայողներն սկսեցին հեզնանքի ու ծաղրի դիմել, եւ նրանցից մեկն ասաց. «Քեզ բան-տարկելու համար մեզ պետք չէ, որ հանցանք գործես, տղաս»:

Տա Տունզը խայտառակ բաներ էր լսել շրջանի Յամենների եւ այդտեղ ծառայողների մասին եւ որոշեց հեռանալ այդտեղից առանց ավելորդ գլխացավանքի: Երբ շրջվեց, որ գնա, ծառայողներից մեկը ետ պահեց նրան եւ հարցրեց. «Նեյ, տղաս, էդ ո՞ւր»:

«Տուն, էլ ո՞ւր»:

«Բան չե՞ս մոռացել»:

«Ի՞նչ»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Մի քիչ մտածիր, տղաս: Ի՞նչ պիտի անես մեր մոտից գնալուց առաջ»:

«Չգիտեմ: Ի՞նչ»:

«Ուրեմն գրպաններդ կայիր: Մեզ համար բան չունե՞ս»:

Տա Տունգը դժվարությամբ էր հավատում, թե այդ մարդիկ կարող էին իրենից փող ուզել: Նա առատաձեռն տղա էր եւ գուցե նրանց ինչ-որ բան տված կլիներ, եթե այդպես սպառնալից վերաբերմունք չցուցաբերեին: Բայց հիմա վճռակատրեն որոշեց ոչինչ չտալ:

«Ձեզ փող տալու ոչ մի պատճառ չեմ տեսնում»:

Ծառայողները բարկացան եւ նրան կոպտորեն դուրս հրեցին սենյակից:

Մինչ Տա Տունգը դեռ զարմանքից իրեն կորցրած էր նրանց այդ կոպիտ վարքագծի պատճառով, երկու ծառայող դուրս եկան նրա ետեւից եւ հեռու քարշ տվեցին:

Տա Տունգը գոչեց. «Վե՛րջ տվեք: Ես գիտեմ ինչպես գնամ...»:

«Չէ, դու չգիտես ինչպես գնաս: Մենք քեզ ցույց կտանք կարճ ճամփան», - ասաց նրանցից մեկը:

«Մենք ցույց կտանք կարճ ճամփան, թե ունե՞ք դուրս հանելք էս աշխարհից, տղաս», - հավելեց մյուսը:

Չնայած տղայի կտրուկ բողոքներին, նրան տարան մի կեղտոտ դատարկ սենյակ եւ փակեցին այնտեղ: Տղան բղավեց, բայց ոչինչ տեղի չունեցավ: Նա քացով եւ բռունցքներով զարկեց դռներին ու պատին եւ նորից բղավեց ամբողջ ձայնով, մինչեւ որ հոգնեց ու խռպոտեց, բայց ոչ ոք չեկավ:

«Մի՞թե իրոք ուզում եմ թողնել, որ այստեղ մեռնեմ», - մտածեց տղան: Բայց նա սխալվում էր, որովհետեւ լսեց, որ ինչ-որ մեկը մոտենում է: Տղան նորից բղավեց: Ոտնաձայները լռեցին, եւ կոշտուկոպիտ մի ձայն ասաց. «Եթե էլի աղմուկ անես, չեմ գա քեզ մոտ, հիմար տղա»:

Տղան ստիպված էր հնազանդվել, եւ տարեց մի մարդ մոտեցավ, որ փակ դռների միջից խոսի իր հետ:

«Կարող ես ձայնդ գլուխդ զցած գոռալ, ինչքան ուզես: Ոչ ոք բանի տեղ չի դնի: Ես եկել եմ քեզ օգնելու: Իսկ դու ուզում ես մոտ չթողնել ինձ»:

«Ներողություն, ես չգիտեի, որ գալիս եք ինձ օգնելու»:

«Բան չկա: Հիմա ասա՛ ուզո՞ւմ ես նամակ ուղարկել ընտանիքիդ, ասենք՝ հորդ... »:

«Չէ, հորս չէ, բայց ուզում եմ հորեղբորս նամակ ուղարկել... »:

«Ես կարող եմ դա անել, եթե այդ մասին ոչ ոքի բան չասես...»:

«Շատ շնորհակալ եմ: Դուք շատ բարի եք»: Տա Տուևը զարմացել էր, որ յամենում այդքան լավ մարդիկ կան:

«Եթե չես կարող գրել, ես կարող եմ գրել քո փոխարեն, եւ դա կարծեւա ընդամենը կանխիկ հիւսց հարյուր՝ որպէս հավելւածար»:

«Ոչ, շնորհակալություն, ես ինքս կարող եմ գրել»,- ասաց տղան:

«Շատ լավ, ուրեմն ինքդ գրիր: Դե ինձ կանխիկ հիւսց հարյուր տուր, եւ ես քեզ թուղթ ու գրիչ կտամ»:

«Բայց ինչո՞ւ պիտի վճարեմ ձեզ, երբ ինքս եմ գրում»:

«Թղթի, ծրարի եւ գրիչ ու թանաք օգտագործելու համար, նաեւ առաքման վճարի մի մասը: Իհարկեւ, հորեղբայրդ,- հորեղբայրդ էր, չէ՞,- հորեղբայրդ տուցկապէս դրա համար մի բան կվճարի»:

«Ես ձեզ ոչինչ չեմ վճարի: Սա պարզապէս շորթում է»:

«Մի՛ համարձակվիր վատ բառեր ասել, հանդուգն տղա: Եթե չես ուզում կապ հաստատել հարազատներիդ հետ, իմ հոգը չէ: Երեւի գերադասում ես այստեղ մնալ: Բայց սա հյուրանոց չէ, եւ դու կտեսնես, որ թանկ ենք վերցնում ուտելիքի ու անկողնու սպիտակեղենի համար»:

«Բայց եթե բանտարկյալը վճարելու հնարավորություն չունի՞»:

«Օ, ո՛չ, սա բանտ չէ, եւ դու պաշտոնապէս բանտարկյալ չես: Քեզ այստեղ պահում են, մինչեւ որ անձնական հաշվում որոշ կարգավորում արվի, այսքան բան»:

Եվ նա հպարտ ու ծանրաքայլ հեռացավ:

«Տե՛ր Աստված, սա ժողովրդի հոր յամենն է»,- մտածեց Տա Տուևը: Նա չէր ուզում կամակ ուղարկել, բայց ոչ թե՛ որ այդքան թանկ էր դա, այլ որոշել էր՝ պետք է հրաժարվի դրանց հետ որեւէ գործարքից՝ որպէս բողոք:

Երբ գիշերն իջավ, եւ նա քաղցած էր ու մրսում էր, տարեց մարդը մի քանի անգամ անցավ այն սենյակի մոտով, որտեղ տղան փակված էր, բայց Տա Տուևը հաստատակամ էր եւ գերադասեց դիմանալ առանց ուտելիքի ու կացարանի, քան խոսել նրա հետ:

Այդ ընթացքում Նամակագրական գործակալությունը բանբեր ուղարկեց գյուղ՝ հայտնելով Լի Կանին, որ Տա Տուևը ձերբակալվել է դատավորի կարգադրությամբ: Ե՛վ մեծ հորաքույրը, ե՛ւ Լի Կանի կինը շատ անհանգստացած էին վատ լուրից, եւ Լի Կանն շտապ մեկնեց շրջանի Յամեն: Նա տեղ հասավ վաղ առավոտյան, բայց ստիպված էր սպասել մինչեւ ուշ երեկո, մինչեւ որ վերջապէս ընդունելության արժանացավ: Պահակի սենյակում երկար սպասելու ընթացքում նա հարցրեց, թե որտեղ է Տա

ԱՅՈՒՆ ՇԻՒ

Տունգը, եւ նրան պարզապէս ասացին, որ դիմի դատավորին:

Լի Կանը դեռ չէր հասցրել բառ իսկ ասելու, դատավորը նրան հակիրճ եւ արագ ասաց այն, ինչ ասել էր Տա Տունգին, եւ վեր կացավ, որ արձակի այցելուին: Լի Կանն ընդհատեց. «Որտե՞ղ է իմ համեստ զարմիկը՝ Տա Տունգը: Ինչո՞ւ եք կալանել նրան, տեր իմ»:

«Ես նրան չեմ կալանել. դուք ապատեղեկացված եք», - ևս դեմքը շրջեց, որ մենակ մնա:

«Մեկ րոպէ, տեր իմ: Նա ձերբակալվել է ձեր մարդկանց կողմից եւ դեռ ազատ չի արձակվել»:

«Եթէ ևս յամենում է, կարող եք տուն տանել: Վստահեցնում եմ ձեզ, որ ոչինչ չգիտեմ այդ մասին»: Եվ ևս դուրս եկավ, առանց Լի Կանի կողմը նայելու:

Այժմ Լի Կանի համար պարզ էր, որ Տա Տունգին ոչ պաշտոնապէս պահել են ծառայողները, եւ այդ պատճառով ևս գնաց պահակաբաժին, որպէսզի պահանջի անհապաղ ազատել տղային: Պահակապետը, որ մինչ այդ խուսափել էր խոսել նրա հետ, այժմ նրան խնդրեց նստել եւ երկար-բարակ խոսեց հետը՝ բացատրելով, որ պահակաբաժինը հսկայական ծախսեր է անում, եւ ասելով, որ եկամտի իր միակ աղբյուրը այցելուներից ստացած վճարներն են: Սկզբում Լի Կանն այնքան էր զայրացած, որ ասաց, թէ համաձայն չէ շանտաժի ենթարկվել եւ փրկագնի նման մի բան վճարել իր զարմիկի համար: Նա կրկին պահանջեց, որ տեսնի դատավորին: Պահակապետն ասաց, որ դատավորը հիմա քնած է արդեն, եւ կարգադրված է, որ ոչ ոքի չընդունեն: Լի Կանը գիտեր, որ դատավորն անկասկած կարդարացնի իր ծառայողների արարքները, այնպէս որ միակ բանը, որ կարող էր անել, խնդրագիր ուղարկելն էր ոստիկանապետին՝ յամենի մոտ գտնվող ոստիկանապետություն: Քանի որ չարժեր մեծ ազմուկ սարքել փոքր գումարի համար, - թեեւ նրանց պահանջը օրենքի բավական կոպիտ խախտում էր, - ևս ի վերջո որոշեց հանդուրժել յամենի այդ խայտառակ կաշառակերությունը՝ պահակապետին վճարելով, - միանգամայն մեծ մի գումար, - խեղճ տղային որքան հնարավոր է շուտ դուրս բերելու համար:

Տղան անչափ ուրախացավ տեսնելով հորեղբորը եւ պատմեց նրան իր բանտապահների վիրավորական վարվելակերպի մասին: Լի Կանը ժպտաց փիլիսոփայորեն եւ ասաց՝ հարկ չկա, որ իրենք դրանով զբաղվեն հենց հիմա:

Այս փորձառությունից հետո Տա Տունգն առավել, քան երբեք, շահագրգռված էր քննարկելու ընդհանուր բարեփոխումը:

Հաջորդ տարվա ամռանը Ճապոնիան, բռնազավթելուց հետո Կորեան, որ պատկանում էր Չինաստանին, սկսեց գրոհել երկրի հյուսիսարևելյան մասը: Ավելի ուշ պատերազմ հայտարարվեց, և չինական բանակն ու ռազմածովային նավատորմը,- եթե այդպես խղճուկ սպառազինված ջուրկա առազաստանավերի նավատորմը կարող էր ռազմածովային նավատորմ կոչվել,- պարտություն կրեց պարտության ետևից: Հաջորդ գարնանը տեղի ունեցավ ամբողջական կապիտուլյացիա և դրան հետևեց Չինական ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատարի մահը: Խաղաղության տասնմեկ պայմանագրեր ստորագրվեցին Լի Հունգ-Չանգի կողմից՝ ողջ աշխարհում տղամարդկանց ու կանանց՝ անարդարության մասին բարձրաձայն աղաղակների ներքո: Ավելի ուշ միջամտեցին Ռուսաստանը, Ֆրանսիան ու Գերմանիան: Նրանք ասում էին, որ ուզում են օգնել Չինաստանին: Իրականում նրանք ցանկանում էին պահպանել ուժերի հավասարակշռությունը Ասիայում:

Որ կառավարությունը սխալ ձեռքերում էր, այժմ կասկածից դուրս էր: Ափիոնային պատերազմի ժամանակներից ի վեր բոլորը գիտեին, որ ուժեղ ռազմածովային նավատորմը խիստ կարևոր է պետության պաշտպանության համար: Հսկայական գումարներ էին հավաքվել, որպեսզի նավատորմ հիմնվի, և այժմ ժողովուրդն ականատեսն էր դարձել մեկ ակնթարթում այդ ամենի բնաջնջման: Ինչ-որ բան պետք է որ սխալ եղած լիներ: Կառավարությունը երբեք չէր հրապարակում բյուջեն և ժողովրդին երբեք չէր ասում, թե ինչ է տեղի ունեցել որոշակի նպատակների համար հատուկ հավաքված գումարի հետ: Յի-Հո-Յուանի Նոր ամառային պալատի շենքը, հաճույքի մի պարտեզ Այրի կայսրուհու համար, որ կառուցվել ավարտվել էր ընդամենը մի քանի տարի առաջ, շատերի քննադատական վերբերմունքը հարուցեց, քանի որ հայտնի դարձավ այն գաղտնիքը, որ պալատի համար օգտագործված փողը ռազմածովային նավատորմի համար ստեղծված հիմնադրամի գումարներից էր: Մինչ երկրում ամենուր դժգոհություն էր տիրում, Գուանդուն նահանգում մի երիտասարդ, մասնագիտությամբ բժիշկ, հիմնադրեց մի կազմակերպություն, որ կոչվում էր Շին Չունգ Հոյ, կամ Չինաստանի վերածննդի ընկերություն: Անունն ինքնին բացատրում էր իր իմաստը, իսկ կազմակերպության նպատակն էր տապալել այրի կայսրուհուն ու մանջուրներին և ժողովրդավարություն հաստատել: Այդ երիտասարդի անունն էր Սուն Վեն, և նա հետագայում հայտնի դարձավ որպես Սուն Յաթ-Սեն: Լի Կանը որոշ ժամանակ նամակագրական կապի մեջ էր եղել նրա հետ, բայց այժմ, երբ կազմավորվել էր գաղտ-

ԱՅՈՒՆ ՇԻՒ

նի ընկերությունը, նամակները դադարել էին սովորական խողովակով նամակագրական գործակալության միջոցով փոխանցվել: Բժիշկ Սունի գաղտնի մտադրությունը՝ գրավել Կանտոն քաղաքը, ձախողվեց, երբ ոստիկանության կողմից հայտնաբերվեց գեներալի խմբաքանակ: Բժիշկ Սունը փախավ Ճապոնիա, բայց նրա ընկերներից շատերը ձերբակալվեցին:

Երբ կառավարությունը համընդհանուր հանձնարարական արձակեց Սուն Վենի ձերբակալման համար եւ հրաման տվեց, որ բոլոր նրանք, ովքեր որեւէ առևտրություն են ունեցել այս խռովարարի հետ, պետք է ձերբակալվեն, շրջանի դատավորը հիշեց, որ տեսել է այդ մարդու նամակները՝ ուղարկված Լի Կանին:

Մի օր, լույսը դեռ չբացված, մարդկանց եւ սմբակների ձայներ լսվեցին Լի գերդաստանի գյուղում, եւ անմիջապես ուժեղ թակեցին Լի Կանի տան դուռը:

Տիկնայք սաստիկ վախեցան: Բայց Լի Կանը հանգիստ էր եւ Տա Տունգին ասաց, որ բացի դուռը: Չհնվորներն ու ոստիկանները, ջահերը ձեռքներին, ներս խուժեցին: Նրանք պահնջեցին Լի Կանին, որը համարձակ առաջ եկավ եւ անմիջապես ձերբակալվեց ու շղթայակապ արվեց: Հրամայված էր ուշադիր ու մանրամասն խուզարկել, եւ տունը գրեթե տակնուվրա արվեց: Գեղեցիկ տպագրված եւ մետաքսե թելով ճաշակով կազմված թանկարժեք շատ գրքեր նետվեցին հատակին: Չհնվորներն ու ոստիկաններն ուղղակի ոտքի տակ էին տալիս դրանք, ասես անպետք մի բան: Ի վերջո նրանք վերցրին բոլոր նամակները, որ կարողացան գտնել տանը: Երբ նրանք տարան Լի Կանին, մեծ հորաքույրը հեռացավ իր սենյակ: Լի Կանի կինը լաց եղավ եւ ուզում էր հետեւել ամուսնուն: Տա Տունգը, թեեւ դեռ տասնհինգ տարեկան, ըստ էության արդեն հասել էր խոհեմության տարիքի: Նա հորեղբոր կնոջն ասաց, որ չտրվի վշտին, այլ մնա տանը, իսկ ինքը կգնա քաղաք եւ հոգ կտանի հորեղբոր համար:

Մեծ հորաքույրը դուրս եկավ ձեռքին փողի փոքրիկ մի քսակ, որը մեկնեց Տա Տունգին. «Այս ամենն իմ խնայողություններն են, որ նախատեսված էին ձեր ոսկորներիս արժանի մի դագաղի համար: Լավ կանես՝ վերցնես եւ օգտագործես Յամենում: Այդտեղի շնածկները պետք է կերակրվեն, եւ ահա սա իմ ավանդն է՝ նրանց ուղղված իմ անեծքի հետ մեկտեղ: Ես ուժեղ եմ: Կկարողանամ անիծել նրանց մի քանի տարի»:

Լի Կանի կինն ասաց, որ ժամանակին տրված այդ փոխառությունը պետք է հատուցվի, եթե անգամ ստիպված լինեն վաճառել բրնձի իրենց բոլոր արտերը: Նա նաեւ Տա Տունգին տվեց պատրաստի այն ամբողջ

կանխիկ գումարը, որ ձեռքին ուներ եւ ասաց նրան, որ ավելի շատ գումար կհավաքի, որպեսզի կարողանա ծախսերը փակել, որոնք այժմ արագ կաճեն:

Լի Կանը բանտարկվեց շրջանային յամենում: Տա Տունգին այնտեղ տեսակցության չէին թողնում: Նա դժվարությամբ պարզեց, որ հորեղբայրը մեղադրվում էր պետական դավաճանության համար: Տա Տունգը գնաց հանդիպելու իր բարեկամներին ու հարազատներին օգնության համար, բայց լսելով մեղադրանքի մասին՝ նրանք այնպես էին վախենում տղայից, ինչպես թույնից: Հիմնականում գյուղի ամենաաղքատ մարդիկ էին գալիս մխիթարելու Լի Կանի կնոջը եւ որպես օգնություն առաջարկելու այն ամենն, ինչ կարող էին:

Դատավորն անմիջապես հարցաքննեց Լի Կանին: Դատարանը շատ դաժան պայմաններ ուներ այդպիսի դեպքերում, երբ ոչ ոքի, բացի յամենի պաշտոնատար անձանցից, չէր թույլատրվում այցելել բանտարկյալին: Դատավորը շատ լավ գիտեր, թե ով է Լի Կանը, բայց նա մինչեւ վերջ կիրառեց սովորական սահմանված ընթացակարգը՝ նախ հարցեր տալով բանտարկյալի անվան, տարիքի, բնակության վայրի, մասնագիտության մասին եւ այլն: Ապա նա դիմեց ոստիկանության ղեկավարին, որ իրեն հանձնեն այն թղթերը, որոնք ձեռք էին բերել տան խուզարկության ժամանակ: Թեեւ չհաջողվեց հայտնաբերել այնպիսի մի բան, որը կհաստատեր, թե օրենքի չնչին իսկ խախտում է եղել, էլ չենք ասում պետական դավաճանություն, նա փայտի կտորով, որ կոչվում է «դատարանի ահաբեկում», ուժեղ զարկեց իր գրասեղանին եւ խիստ ծայրով ասաց. «Կալանավոր, ավելի լավ է՝ ընդունեք ձեր մեղքը»:

«Ես ոչ մի մեղք չունեմ, որ խոստովանեմ, տեր իմ», - ասաց Լի Կանը, որին ստիպել էին ձևիկ իջնել դատարանի մեջտեղում՝ դեմքով դեպի դատավորի գրասեղանը:

«Ձեր հերքումից ոչ մի օգուտ չկա, կալանավոր: Ասացեք, թե որտեղ է ձեր հանցակից Սուն Վենը, եւ խոստովանությունը ձեզ համար օգտակար կլինի»:

«Ես նրա հանցակիցը չեմ, տեր իմ»:

Դատավորն անընդհատ զարկում էր փայտի կտորով, իսկ նրա սպավորը բարձրաձայն գոռում էր, որպեսզի վախեցնի կալանավորին:

«Համարձակվում եք ժխտել, որ ճանաչում եք նրան», - բացականչեց դատավորը:

«Ո՛չ, տեր իմ: Բայց մենք երբեք չենք հանդիպել միմյանց»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Այ, դա լավ է: Դուք գրել եք մեկը մյուսին՝ հեղափոխություն բորբոքելու նպատակով»:

«Ոչ, տեր իմ: Մենք պարզապես քննարկել ենք բժշկության չինական եւ եվրոպական համակարգերի միջեւ եղած տարբերությունը»:

«Տխմարություն»:

«Այո, տեր իմ: Նա եվրոպական դպրոցի բժիշկ է, իսկ ես ուսումնասիրել եմ եւ փոքր-ինչ հասկանում եմ չինական բժշկությունից»:

Փայտի կտորը նորից շրխկաց, եւ բարձրաձայն բղավոցները շարունակվեցին: Դատավորն իր սեղանի վրայի բռնելու հարմարանքից բամբուկի երկու ծող նետեց գետնին եւ ասաց. «Համառ կլանավորի հանդեպ ներողամիտ լինելն իմաստ չունի: Ուզում եք խոշտանգման ենթարկվել: Երկու հարյուր հարված հասցրեք նրան»:

«Այո՛, տեր իմ», - գոչեցին սպասավորները: Նրանք սկսեցին խփել Լի Կանի թիկունքին բամբուկե երկար ծողով: Սպասավորներից մեկը բարձր ձայնով հաշվում էր զարկերի քանակը: Լի Կանը սեղմել էր առամները եւ ոչինչ չէր ասում: Հիսուներորդ զարկի հետ դատավորը նորից շրխկացրեց իր փայտի կտորով եւ ասաց. «Կալանավորը ցավի ճիչ չի արձակում: Հաստատ թույլ եք խփել: Ուժեղ հարվածեք»:

«Այո՛, տեր իմ», - գոչեցին սպասավորները:

Նրանք ուժեղ հարվածեցին, բայց Լի Կանը լուռ մնաց: Հարյուրերորդ զարկից հետո դատավորը կրկին միջամտեց: Նա հարցրեց կալանավորին, թե չի՞ ուզում արդյոք միտքը փոխել եւ խոստովանել: Լի Կանը, որ վաթսուներեք տարեկան էր, չէր կարողացել դիմանալ ցավին եւ արդեն ուշագնաց էր եղել: Դատավորը հրամայեց դադարեցնել ծեծը եւ բանտարկյալին նորից բանտ տանել: Դատարանն ազատ արձակվեց, իսկ գրագիրն արձանագրությունները հանձնեց դատավորին:

Դատավորը բավականին անհանգստացած էր Լի Կանի համար: Ավելի հայտ էր, որ այդպիսի համառ բանտարկյալի խոշտանգումն իզուր էր. վերջինիս ծեր տարիքն ու տկար վիճակը երկու կարեւոր բան էին, որոնք դատավորը պետք է հաշվի առներ: Նա չէր ուզում, որ Լի Կանը մեռնի, քանի դեռ իր մոտ էր բանտարկված: Դրա համար էլ որոշեց արձանագրությունները փոխելով դեպքին ավելի լուրջ ընթացք տալ եւ հաջորդ օրն ամբողջ գործը հանձնեց իր վերադաս յամենին: Դժբախտաբար, շրջանի ոստիկանության պետն այժմ մանչժուր էր, որի կոչումն ու պաշտոնը ծեռք էին բերվել Կայսերական դատարանին մեծ գումար մուծելով, եւ նա ոչինչ չգիտեր կառավարության կամ օրենքի մասին: Լի Կանը դատվեց եւ մեկ անգամ էլ

խոշտանգման ենթարկվեց, եւ քանի որ չէր կարողանում ո՛չ խոսել, ո՛չ շարժվել, ուստի կանապետը, վախենալով, որ տարեց կալանավորը կմահանա քանի դեռ իր ձեռքում է, որոշեց մի քանի լուրջ մեղադրանք էլ ավելացնել՝ շեշտելու համար գործի կարեւորությունը եւ այն արագ կերպով հանձնեց Նահանգային դատավորի յամենին:

Նահանգի դատավորը՝ Նորին արժանապատվություն պարոն Վեյը, գիր ու գրականության մարդ էր, որը մեծ հարգանք ուներ արվեստների հանդեպ: Նա շատ ավելի հետաքրքրվում էր պոեզիայով, գեղանկարչությամբ ու գեղագրությամբ, քան իրավական վարույթներով: Սովորաբար նա իր բոլոր փաստաթղթերը թողնում էր քարտուղարների ձեռքում, որոնք էլ, իրենց հերթին, դրանք վստահում էին գրագիրներին: Մի քանի տարի առաջ պարոն Վեյն ընդամենը շրջանի ուստիականության պետ էր: Բայց իր գրական ընկերակիցների օգնությամբ, որոնք մի ժամանակ միակ հնարավոր թեկնածուներն էին պետական բարձրագույն քննությունների համար եւ հետագայում քննությունները շատ հաջող հանձնեցին գերազանցությամբ, նա վերջերս առաջ էր քաշվել իր պաշտոնում եւ նշանակվել Նահանգային դատավոր:

Պետական դավաճանություն համարվող գործը պարոն Վեյը ստիպված էր աչքի անցկացնել դրա վերաբերյալ տարբեր հաղորդումների օգնությամբ եւ պատահականորեն հիշեց, որ Լի Կանը՝ դավաճանության մեջ կասկածվող բանտարկյալը, գեղագրությամբ զբաղվող այն մեծամիտ անձն էր, որին նա մի անգամ ցանկացավ հանդիպել, բայց որը միանգամայն կտրուկ մերժեց իր բարեկամությունը: Հազվագյուտ կոպտության այդպիսի մի միջադեպը երբեք չէր կարող ո՛չ մոռացվել, ո՛չ էլ ներվել, եւ նա լի էր վճռականությամբ՝ ամենայն խստությամբ քննել կարեւոր այդ գործը: Իր կյանքում մեկ անգամ նա մեծ խնամքով եւ ուշադրությամբ ուսումնասիրեց բոլոր թղթերը եւ, ի մեծ զարմանս իր, տեսավ, որ մեղադրյալի դեմ ոչ մի փաստ չկար, բացի մի բանից. կալանավորը չէր ժխտում, որ ինքը եւ խռովարար Սուն Վենը բժշկության հետ կապված հարցեր են քննարկել նամակագրությամբ: Բայց նույնիսկ այդ խոստովանությունը չէր ստորագրվել, այն պատճառով, որ կալանավորն ուշագնաց էր եղել առաջին իսկ դատական հարցաքննության ժամանակ: Ինչ վերաբերում է լրացուցիչ մյուս մեղադրանքներին՝ կապված այն բանի հետ, թե նա դավադրություններ էր ծրագրել մյուս խռովարարների հետ, դրանք լիովին անսիմն էին: Դատավորի արդարության զգացումը նրան մղեց համակրանք տածել Լի Կանի հանդեպ, որն, ի վերջո, նրա կարծիքով, գեղագրության լավ մասնա-

ԱՅՈՒՆ ՇԻՒ

գետ էր: Ստանալով մեղադրյալի ստորագրությունը՝ առաջին դատաքննության ժամանակ նրա հայտարարության հետ կապված՝ դատավորը խոստացավ գրավի դիմաց ազատ արձակել նրան մինչև հետագա քննությունը, եթե անհրաժեշտ լինի:

Շատ մեծ դժվարությամբ Տա Տունգին հաջողվեց համոզել երկու պատկառելի խանութների՝ երաշխիք տրամադրել, որ Լի Կանը չի փախչի, այլ դատարանում ցուցմունք կտա, երբ նրան կանչեն դրա համար, ինչպես պահանջվում է իշխանությունների կողմից, որպեսզի կարողանա նպաստել իր ազատման գործին: Երբ Լի Կանը վերջապես ազատ արձակվեց, նրան տուն տարան բամբուկե թախտին պառկած, եւ թվում էր, թե ավելի շատ մեռած է, քան ողջ: Կինը եւ մեծ հորաքույրն ուզում էին բժիշկ կանչել, որ նայի նրան, բայց Լի Կանը վճռակատրեն ասաց՝ ո՛չ:

«Չպետք է բժշկից հրաժարվես ծախսերի պատճառով,- համոզեց կինը:- Քանի դեռ գոյություն ունի հզոր լեռը, վառելափայտի պակաս չի լինի...»

«Բայց ես արդյունավետ լեռ չեմ: Դուք պետք է վառելափայտի այլ աղբյուր ձեռք բերեք,- բացականցեց Լի Կանը:- Բացի այդ, գիտեմ, որ լավ եմ: Եթե ինձ թուղթ ու գրիչ բերեք, ինքս ինձ համար դեղ կգրեմ»:

«Լավագույն բժիշկն անգամ չի կարող ինքն իրեն խորհուրդ տալ», - պնդեց կինը:

«Դա լավ է եւ լավ խորհուրդ է սովորական դեպքերում: Բայց քանի որ ես տանջվում եմ միայն վերքերից եւ բանտում թերսևվելուց, ըստ էության բժշկական խորհրդատվության կարիք չկա,- ժպտաց նա:- Պետք է հիշեք, որ դեղ չիմելն ավելի լավ է, քան շարքային բժիշկ ունենալը»:

Կինը շատ հանգստացավ՝ լսելով, որ նա առաջվա նման բարձր տրամադրությամբ է վիճաբանում: Եվ կատակելով ասաց. «Ուրեմն պետք է քո մասին շատ բարձր կարծիք ունենաս՝ որպես բժշկի: Քանի որ հենց նոր առաջարկեցիր, թե ինքդ քեզ համար դեղ կգրես»:

«Մեր դեղերի մեծ մասը պարզապես անվնաս խոտաբույսեր են, որոնց ամենակարեւոր գործառույթն է՝ հիվանդին հոգեբանորեն հանգստացնել: Երբ հիվանդությունը գալիս է, այն ամենն, ինչ կարող է անել բժիշկը, թողնելն է, որ հիվանդությունը զարգանա: Նա պետք է ինչ-որ դեղ նշանակի, որովհետեւ եթե դեղ չգրի, իրեն չեն վճարի: Շատ դեպքերում ինչքան շատ դեղ ես տալիս հիվանդին, այնքան նա կարծում է, թե դու լավ բժիշկ ես, եւ այդ պատճառով, ինչքան հաճախ է դեղ ընդունում, այնքան արագ է ապաքինվում»:

«Եվ դու էլ կարծում ես, թե կարող ես այդպես քեզ հանգստացնել...»:

«Չէ, եթե ես ընդհանրապես դեղ խմեմ, դա միմիայն ձեր օգուտի համար կանեմ: Ես այնպիսի բան կգրեմ, որ լավ համ ունի, եւ դուք կթեթեւանաք, երբ պատկերացնեք, որ դա բարելավում է իմ վիճակը»:

Երբ բժշկական առասպելը պարզաբանվեց, այդ մասին այլևս չխոսեցին: Իսկ մի քանի օր հետո Լի Կանն իրեն բավականին լավ էր զգում, որպեսզի նորից սոցիալական, քաղաքական եւ կրոնական խնդիրներ քննարկի Տա Տունգի հետ: Այդպիսի սոսկալի փորձառությունից հետո Տա Տունգն ավելի դառն զգացումներ ունեցավ պաշտոնյաների հանդեպ, քան մինչ այդ ուներ: Իմանալով, որ Լի Կաննի հանցանքների մասին անհիմն պնդումներն ավելի ու ավելի էին շատացել, երբ ամեն անգամ գործը փոխանցվել էր ավելի բարձր Յամենի ատյանին, եւ որ դրա համար փորձ իսկ չէր արվել որեւէ ապացույց ներկայացնել, պարզապես ապշեց: «Բայց ինչպե՞ս կարող էին համարձակվել դա անել առանց քո դեմ որեւէ ապացույցի: Կարծում էի, թե հիմնավոր փաստեր ունեին»:

«Չէ, տղաս: Ես պատրաստ էի դրան: Ինչ էլ որ անեին, չէին կարող իմ դեմ որեւէ հանցանշան գտնել»:

«Այդ դեպքում ինչքան անարդար բան է,- գոչեց Տա Տունգը:- Ասեմք թե դու իրոք անմեղ էիր, ասեմք թե ոչինչ չգիտեիր բժիշկ Սունի քաղաքական գործունեության մասին եւ նրա հետ կամակազրություն էիր ունեցել ազնվորեն ու իսկապես քննարկել էիք բժշկական հարցեր...»:

«Ոչ մի տարբերություն չկա: Ահա թե ինչու պետք է Ընդհանուր բարեփոխում անենք, տղաս: Ներկայումս մենք Սահմանադրություն չունենք: Կառավարությունը մեզ ինչ էլ անի, մենք իրավունք չունենք դրա դեմ որեւէ բան ասելու: Օրենքը կառավարում է կառավարվողներին, բայց ոչ կառավարողին: Մենք ապրում ենք բացառապես նրանց առատածեռնությամբ ու գթասրտությամբ, եթե ունեն նման բան»:

«Սահմանադրությունն ի վիճակի՞ է վերականգնելու մեր պետությունը: Ամբողջ երկիրը սրիկաների ձեռքին է: Չեմ հավատում, թե կա պետական մի պաշտոնյա, որը հարյուր տոկոսով կաշառված չէ»:

«Չգիտեմ, Տա Տունգ: Նահանգի դատավորն, օրինակ, կարծես թե արժանապատիվ մարդ էր: Ես չպետք է խռմփացնեի՝ քնած ձեւանալով, երբ նա եկավ ինձ տեսնելու: Բայց նրա գեղագրությունն այնքան վատն էր: Եթե չձեռագրեի, թե քնած եմ, կարող է ստիպված ինչ-որ բան ասել նրա ձեռագրի մասին, այդ դեպքում չէի կարող ինձ զսպել եւ իմ կարծիքն ազնվորեն չասել: Դա նրան կդարձներ իմ թշնամին կյանքում»:

«Ճիշտ է, որ նա քեզ ազատ արձակեց: Բայց դու չգիտես՝ նրա Յամենն

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

արդյո՞ք լցված չէ արևախումբերով: Մենք խիստ կարիք ունենք արմատական փոփոխությունների: Բոլոր պաշտոնյաներին պետք է գլխատել եւ բոլոր բանապահներին բանտարկել»:

«Բժիշկ Սունն էլ է որոշ չափով քո կարծիքին: Նա կարծում է, որ քանի դեռ մանչժուրներն են իշխանության գլուխ, Չինաստանի համար ոչ մի հնարավորություն չկա: Բայց շատերը կան, որ համաձայն չեն նրա հետ: Կան Յու-Վեյը միայն ընդհանուր բարեփոխում է ուզում: Նա կարծում է, որ երիտասարդ կայսր Կուանգ Սյուն շատ խոստումնալից է: Եթե Այրի կայսրուհի Յի Սիին եւ նրա կամակատարներին ու հետետորդներին հնարավոր լիներ հեռացնել, Չինաստանը կրկին հզոր երկիր կդառնար: Անգլիացի մեր բարեկամը՝ Լի Ռի-Սո-Ռայը, համաձայն է նրա հետ: Ես պետք է գրեմ նրան՝ հենց որ ինձ լավ զգամ»:

«Հիմա դա վտանգավոր է: Կարծում եմ՝ նրանք հսկողության տակ են պահում քո բոլոր կամակները»:

«Մի անհանգստանա, որովհետեւ ես միայն խնդրելու եմ նրան, որ հոգ տանի քո մասին»:

«Հոգ տանի իմ մասին»:

«Այո, ես շուտով հեռանալու եմ քեզնից, սիրելի Տա Տունգ»:

Տա Տունգն ապշեց: Լի Կանը ժպտաց:

«Մի՛ անհանգստանա, տղաս: Այս անգամ բանտ չեմ գնում, այլ մի հարուստ ընտանիք: Տարիներ շարունակ ցանկացել են ինձ դարձնել անձնական քարտուղար: Քանի որ ես ատում եմ այդպիսի պաշտոնը ու նաեւ այն պատճառով, որ պետք է քեզ ուսուցանեի, առաջարկը մերժեցի: Հիմա, երբ դու մեծացել ես եւ, զիտեմ, սովորել ես գործնականորեն ամեն բան, որոշել եմ ընդունել այդ առաջարկը: Բացի այդ, այժմ արդեն մենք փողի կարիք ենք ունենալու: Իմ վերջին շրջագայությունը բոլոր երեք Յամենների բանտերով պետք է որ շատ մեծ գումար արժեցած լինի...»:

«Չէ՛, փողի համար չպետք է անհանգստանաս»:

«Գիտեմ, որ դրանք թանկ տեղեր են: Դու ինձ վրա պետք է որ բավականին շատ ծախսած լինես»:

«Չէ՛»:

«Ժխտելն անօգուտ է: Բանապահների դեմքի արտահայտությունից զիտեի: Երբ արհամարհանքով էին ինձ նայում, դա պարզորոշ ասում էր, որ դեռ քեզ չի հաջողվել նրանց համար փող ճարել: Երբ մոռանում էին իմ մասին, դա նշանակում էր մի քիչ փող: Իսկ երբ ժպտում էին ինձ, հասկանում էի, որ բրնձի դաշտերիս մի մասն արդեն չկա»:

«Որոշ բան դեռ մնացել է»:

«Ինչպիսի՞ մեծահոգություն նրանց կողմից»:

«Ես բավականին մեծ եմ եւ կարող եմ աշխատել»:

«Դու առջեւում շատ ավելի կարեւոր գործ ունես, քան ապրուստի մասին հոգալը»:

Եվ կտրուկ փոխելով թեման՝ հարցրեց. «Դե, Տա Տոււզ, ասա ինձ անկեղծ՝ ի՞նչ կարծիք ունես քրիստոնեության մասին»:

«Ես ատում եմ դա: Հո չե՞ս մտածում, որ իմ ապագա աշխատանքը դրա հետ է կապված»:

«Ոչ: Բայց համոզված եղիր՝ ինձ սխալ չես հասկանում: Ես հարցնում եմ քո կարծիքը քրիստոնեության, ո՛չ թե քրիստոնյաների մասին, հատկապես նրանց, որ մեր գյուղում են: Իհարկե, ատում ես այն մի քանի քրիստոնյային, որ տեսել ես այստեղ քո շուրջը: Նրանք բոլորը սովորական մեղավորներ են, ինչպես կոչվում են իրենց կրոնի նոր բնորոշմամբ: Եվ եթե մեղավորներ չլինեին, ի՞նչ օգուտ կունենային օտար կրոնից: Բուդդայական կամ դաոսական հոգեւորականները չեն կարող պաշտպանել նրանց, երբ նրանք խախտած լինեն օրենքը: Բայց եթե միսիոները բնատարկյալից պահանջում է դառնալ իր նորադարձներից մեկը, նա պետք է միանգամից ազատ արձակվի: Մի քանի անազնիվ միսիոներից բացի, եւ, իհարկե, այդ արհեստավարժ քրիստոնյա մեղավորներից, քրիստոնեությունը մի կրոն է, որը մարդ չպիտի ատի: Այն սովորեցնում է լավը լինել ճիշտ այնպես, ինչպես մեր կրոններից յուրաքանչյուրը»:

«Վախենում եմ, որ չափազանց շատ եմ ատում այն»:

«Ինչո՞ւ»:

«Որովհետեւ այդքան ագրեսիվ է: Մեր կրոններից ցանկացածը, հատկապես կոնֆուցիականությունը, եթե այն կրոն է համարվում, այլ ոչ փիլիսոփայություն, երբեք չի քարոզել այնպես, որ անգամ թեթեւակի ակնարկեր, թե բոլոր մյուս կրոնները հեթանոսական ու հերձվածողական են, եւ միայն իր քարոզած դավանանքն է ճանապարհը դեպի Երկինք: Դա ամենատհաճ բանն է, որ կարելի է քարոզել»:

««Փողոցներում լսածն ու անցորդների ասածը չպետք է հիշեք»: Մոռացե՛ր եւ Կոնֆուցիուսի ուսմունքը: Ես պետք է իմ գրադարանում մի քանի գիրք ունենայի քրիստոնեության մասին, որպեսզի դու ավելի լավ իմանայիր, բայց դա ինձ համար այնքան քիչ նշանակություն ունի, որ երբեք հոգ չեմ տարել այդ գրքերը պահել, երբ ստացել եմ իմ միսիոներ բարեկամներից»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Թվում է հավանություն ես տալիս դրան, իսկ ես կարծում էի, թե ոչ: Ես հաճախ էի զարմանում, թե ինչպե՞ս է հնարավոր, որ այդքան շատ բարեկամներ ունեիր, որոնք միսիոներ էին, բայց ցեայնպես չեք վիճում»:

«Ես հեռու եմ կանգնած կրոններից, քանի որ անտարբեր եմ դրանց բոլորի հանդեպ: Ես հետեում եմ ճշտի ու սխալի իմ զգացողությանը, եւ դա է իմ կրոնը: Գուցե ընդունել եմ դրանց բոլոր լավ ու բարի ուսմունքները եւ արհամարհել բոլոր եսասիրական կանոնները: Բայց իմ բախտն անչափ բերել է, որ հանդիպել եմ միայն այն միսիոներների հետ, որանք խելամիտ են: Երբ փորձել են ինձ դարձնել իրենց հավատին եւ ծախողվել են, այլեւս չեն անհանգստացրել ինձ: Ով գլուխս տանում է, ես նրան հեռացնում եմ ինձնից: Այնպես որ՝ ահա ես՝ միևնույն հիմա անուղղելի ծեր հեթանոս»:

«Ինչո՞ւ հանկարծ ինձ հարցրիր քրիստոնեության մասին»:

«Որովհետեւ ուզում եմ իմանալ, թե արդյոք համաձայն կլինե՞ս սովորել միսիոներական դպրոցում»:

«Իհարկե, եթե հնարավորություն ունենամ»:

«Գիտեմ, որ կուզես: Եվ գիտեմ՝ մեծ է հավանականությունը, որ մի օր կդառնաս քրիստոնյա»:

«Ո՛չ: Երբե՛ք»:

«Այո, հնարավոր է, որ դառնաս այն, ինչ ատում ես այսօր»:

«Կարծում ես անկայուն ու անհետեողակա՞ն եմ»:

«Ոչ: Եթե մենք սիրում ենք մի կնոջ, հնարավոր է, որ մի օր ատենք նրան, եւ հակառակը: Կրոնի եւ ցանկացած այլ բանի դեպքում էլ նույնն է: Միայն եթե չես անհանգստանում մի բանի համար, դա քեզ չի հուզի»:

«Ես ուզում եմ սովորել միսիոներական դպրոցում, որովհետեւ նոր գիտելիքի կարիք ունեմ, որը չեմ կարող ձեռք բերել ուրիշ տեղ: Բայց մեկ է՝ չեմ սիրում քրիստոնեությունը»:

«Հոգ մի՛ անի, տղաս, քրիստոնեության համար միեւնույն է՝ չես սիրում, թե սիրում ես այն: Ծատ լավ է նաեւ, որ չենք զգում այս երկրում որոշ միսիոներների ագրեսիվ քաղաքականության կողմից նրան պատճառված վնասը: Իմ ապագա գործատուն էլ է ագրեսիվ քրիստոնյա: Ամեն անգամ, երբ ինձ ճաշի էր հրավիրում, աղոթում էր, որ ես դարձի գամ: Ահա թե ինչու եմ խուսափել նրանից եւ միշտ մերժել իր առաջարկը: Հիմա ստիպված եմ ընդունել նրան այնպիսին, ինչպիսին կա, եւ կարծում եմ՝ այդպիսի աղոթքները ինձ համար մեծապես օգտակար կլինեն: Դրանք կնպաստեն իմ համբերատարությանը»:

Տա Տուզը մտազբաղ էր: Նա լրջորեն մտածում էր սովորելուց հրաժարվելու եւ Տա Յուին միակալու ու նրա հետ դաշտերում աշխատելու մասին: Բայց հասկանում էր, որ շատ քիչ դաշտեր են մնացել իրենց՝ որպես սեփականություն, եւ Տա Յուն օգնության կարիք չէր ունենա: Իհարկե, ինքը կարող էր բռնձի մի քանի դաշտ վարձակալել եւ այդ դաշտերում տքնաջան աշխատելով գուցե կարողանար ինչ-որ բանով թեթեւացնել ընտանիքի ամենօրյա ծախսերը: Նա եւ Տա Յուն կկարողանային հինգ հոգանոց ընտանիքը պահել առանց դժվարության, բայց նրանց կյանքի ճանապարհը պետք է տարբեր լիներ: Նա եւ Տա Յուն դեմ չէին լինի, բայց ծանր կլիներ Լի Կանի, նրա կնոջ եւ մեծ հորաքրոջ համար: Կար նաեւ հին գրքեր հավաքելու գործը: Ծեր մարդու համար դա շատ էժանագին սիրած զբաղմունք էր, բայց այն մարդկանց համար, որոնք հագիվ էին ծայրը ծայրին հասցնում, դարձել էր ճոխություն, որին պետք էր ընդհանրապես վերջ տալ: Ու թեեւ անխոհեմություն էր, բայց Տա Տուզն ուզում էր հորեղբորը ետ պահել անցանկալի մարդու առաջարկած գործն ընդունելուց: Իսկ ինքը որոշեց հետեւել հորեղբոր առաջարկին: Թերեւս ծերունու համար ավելի տխուր կլիներ տանը, երբ լիովին գրկվեր այն բանից, ինչին սովոր էր, քան եթե աննրբանկատ քրիստոնյայի հետ ապրեր, որը նրան կտար կյանքի հարմարությունների մեծ մասը, որոնք շատ կարեւոր էին Լի Կանի տարիքի մարդկանց համար:

Տա Տուզը ծարավի էր «նոր» գիտելիքների: Դրա համար նա պատրաստակամորեն կգոհաբերեր ինչ ասես: Միսիոներական դպրոցում սովորելը չէր կարող շատ ավելի վատ լիներ, քան դժոխքի միջով անցնելը, եւ նա լիովին պատրաստ էր անցնելու հարյուր դժոխքի միջով, միայն թե կարողանար «նոր» գիտելիք ձեռք բերել: Լի Կանի ընդարձակ գրադարանում միայն մեկ բարակ հատոր կար, որը կարելի էր համարել «նոր» գիտելիքի գիրք: Այն կոչվում էր «Ութ գիծ», եւ Տա Տուզը շատ անքուն գիշերներ էր անցկացրել այդ գրքի վրա: Քանի որ ոչ մի այլ գիրք նրան այդքան շատ տարակուսանքի մեջ չէր գցել, նա կարծում էր, թե եռանկյունաչափության մասին այս տարրական տրակտատը գիտության ամենաբարձր գիտելիքն է պարունակում: Մինչեւ որ չկարդաց երկրաչափության եւ հանրահաշվի վերաբերյալ որոշ գրքույկներ եւ նոր հասկացավ, որ այդ գիրքը շատ քիչ է: Նա անմիջապես հասկացավ, որ քանի դեռ ձեռք չի բերել արդյունավետ գործիք՝ չի տիրապետել եվրոպական մի լեզվի, հանրահաշիվ, երկրաչափություն եւ եռանկյունաչափություն հիմնավորապես ըմբռնելու իր հույսը շատ չնչին է: Իսկ չինարեն ոչ մի այդպիսի գիրք չէր կարող գտնել:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Մինչև տարեվերջ Լի Կանի վերքերն ամբողջովին ապաքինվեցին, ու նաև ավարտին հասցվեցին բոլոր նախապատրաստությունները, որպեսզի նա ստանձնի իր պաշտոնը նահանգի հարավում գտնվող գավառական Կան-չոու քաղաքում, որտեղ ապրում էր նրա գործատուն՝ պարոն Լու: Աշխատավարձը տարին վաթսուն թաեղ արծաթադրամ էր, իսկ աշխատանքն սկսվելու էր նոր տարվա առաջին լուսնի տասնվեցերորդ օրը: Կան-չոուն Նանչանից ութ հարյուր լի հեռավորության վրա էր գտնվում, եւ նավարկությունը Կան գետի հոսանքն ի վեր մինչև մեկ կամ երկու ամիս կտեւեր, եթե բարենպաստ քամի չլիներ: Իհարկե, ճանապարհով գնալն ավելի արագ կլիներ, բայց Լի Կանը չէր կարող իրեն թույլ տալ ծածկապատգարակ վարձել, իսկ Տա Տունգը չէր թողնի, որ նա ոտքով ճանապարհ գնա:

Եվ այսպես, տասնմեկերորդ լուսնի կեսերին, գեղեցիկ մի օր, երբ փչում էր հյուսիսային ուժեղ քամին, Լի Կանը հրաժեշտ տվեց մեծ հորաքրոջը, կնոջն ու որդուն: Նրա ուղեբեռը տանում էր նավավարը, որն իր նավակով հասել էր Երկնային կամրջի մոտ, որպեսզի տանի պատվիրատուն: Տա Տունգը, որ բամբուկե փոքրիկ մի գրապահարան էր տանում հորեղբոր համար, գնաց դեպի նավակը, որ նրան ճանապարհ դնի: Նավավարի որդին հորից վերցրեց ուղեբեռը եւ այն կապերից արծակեց նավախցում: Նավավարի կինը հարմարավետ անկողին պատրաստեց Լի Կանի համար, նաև թեյ պատրաստեց ու մատուցեց: Լի Կանն ուզեց, որ նավավարի ընտանիքն իրեն միանա եւ օգուտի իր հետ բերած նախաճաշիկից: Նրանք շնորհակալություն հայտնեցին, բայց հրաժարվեցին հյուրասիրությունից: Մինչ Տա Տունգն ուրախ էր տեսնել, որ իր հորեղբայրը ճանապարհորդում է շատ սիրալիր ընտանիքի հետ, նրանք նույնպես ուրախ էին, որ իրենց հաճախորդն այդպիսի բարի պարոն է:

Նախքան առագաստը պատրաստելը, որ նավարկեն գլխավոր գետով, իսկ այդտեղից էլ՝ դեպի հարավ, Լի Կանն ասաց Տա Տունգին. «Տղաս, ես շատ տխուր եմ, որ հեռանում եմ քեզից, բայց հանգամանքներն ինձ ընտրություն չեն թողել: Չտխրես եւ չանհանգստանաս ինձ համար: Շատ շուտով Լի Թի-Մո-Թայից պատասխան կգա, բայց ես չեմ կարող սպասել դրան: Նա ինձ մի քանի անգամ հորդորել է՝ քեզ ուղարկել քաղաքի միսիններական դպրոց եւ ասել է, որ կհոգա, որպեսզի քեզից ուսման վարձ չվերցնեն: Եթե անգամ դա չհաջողվի էլ, դու պետք է դպրոց ընդունվես հաջորդ կիսամյակին: Իմ աշխատավարձը կլինի, եւ մենք կարող ենք մեզ թույլ տալ ուսման վարձ վճարել, եթե անհրաժեշտ լինի»:

«Ես չեմ ուզում մտածել իմ ծախսերով քեզ ծանրաբեռնելու մասին...»:

«Ես շատ ավելի կվշտանամ, եթե քո կրթության գործը դժվարանա այն պատճառով, որ դու չես ուզում դրա համար ծախսել իմ փողը: Արա ինչպես ասում եմ, իսկ ես կարիք չեմ ունենա քեզ ստիպելու, որ տքնաջան սովորես: Գիտեմ, որ դու այդպես էլ կանես: Քեզ լավ նայիր եւ մասս բարով»:

«Պահպանիր քեզ, հորեղբայր, եւ թող համընթաց քամին քեզ ուղեկցի ամբողջ ճանապարհին»:

«Եվ թող համընթաց քամին քեզ ուղեկցի ամբողջ կյանքում»:

Դուրս գալով նավակից եւ կանգնելով փայտե փոքրիկ կամրջին՝ Տա Տունգն այնքան նայեց, մինչեւ ջունկայի առագաստներն ամբողջությամբ անհետացան տեսադաշտից:

ՉԼՈՒԽ 6

*Ինչպես որ նեֆրիտի կոշտ հանքաքարն անհարթ,
Պետք է հատվի, հղկվի, փայլ ու ձեռն ստանա,
Այդպես կրթվի պիտի կյանքում ամեն մի մարդ,
Որ զուսպ ու բարեկիրթ ու նրբագեղ դառնա:*

Լի Կանի մեկնելուց հետո շուտով Լի Ռի-Սո-Ռայից կամակ եկավ: Ինչպես Լի Կանն էր պատվիրել՝ Տա Տունգը բացեց այն եւ կարդաց: Անգլիացի հավատարիմ բարեկամն ասում էր, որ խորապես ցավում է՝ իմանալով իր ավագ եղբայր Կանի հետ վերջերս պատահած դժբախտության մասին, եւ հույս ունի, որ Աստծո ողորմածությամբ ամեն բան ի վերջո լավ կլինի: Քանի որ իր ազգանունը նույնպես «Լի» է, հայտնում էր նա, ուրեմն իրենք մեկ ընտանիքի նման են, եւ ինքը միշտ Տա Տունգին վերաբերվել է որպես իր զարմիկի: Իհարկե ինքը հոգալու է, որպեսզի Տա Տունգը հիմնավոր ու լավ կրթություն ստանա, եւ իր պատասխանատվությամբ ու հոգածությամբ է, որ զարմիկն ուղարկվելու է Նանչանի միսիոներական դպրոց: Նա կից կամակ էր ուղարկել այդ դպրոցի տնօրենին եւ Տա Տունգին խնդրում էր գնալ ու տեսնել այդ պարոնին, որն, անշուշտ, սիրով կընդուներ տղային: Նաեւ հույս էր հայտնում, որ Տա Տունգի համար հաճելի կլինի անգլիացի այդ պարոնի ղեկավարությամբ աշխատելը, եւ՝ որ ինչ էլ պատահի, ինքը միշտ ուրախ կլինի օգնել իր զարմիկին: Աղոթելով Աստծուն, որ օրհնի Լի Կանին եւ նրա ողջ ընտանիքը, նա կամակը եզրափակում էր՝ ստորագրելով որպես «անխելք կրտսեր եղբայր Լի Ռի-Սո-Ռայ»:

Տա Տունգն անչափ ուրախ էր: Կից ուղարկված կամակը հիացնում էր նրան: Առաջին անգամն էր արտասահմանյան ծրար տեսնում: Այն պատրաստված էր ամուր ու դիմացկուն թղթից եւ բաց երկնագույն էր՝ խիստ տարբեր չինականից: Քանի որ ծրարը կնքված չէր, նա բացեց, որ մի հայացք զգի կամակին: Նամակի թուղթը նույնպես ամուր ու դիմացկուն էր, իսկ գիրը, որ առաջ էր սողում գալարվող անձրեւորդերի շարքերի նման, թվում էր առանձնակի հմայք ունի: Իհարկե, նա չգիտեր որ կողմը վեր պահի, որովհետեւ չէր կարողանում գտնել գեթ մի տառ, որ կամակը լիներ հանրահաշվի իր գրքում տեսած տառերին: Նա մտածեց, որ սիրով իր կյանքի մի քանի տարին կտար այդ կամակը կարդալ կարողանալու փոխարեն: Տա Տունգը նորից զննեց ծրարը: Հասցեատիրոջ անունն այդտեղ գրված էր

երկու լեզվով: Թե ինչ էր բնագիր լեզվով, նա չէր կարող ասել, բայց չինարեն գրված էր՝ «Պրն. Սա-Կե-Լաո»:

Հաջորդ օրը վաղ առավոտյան Տա Տունգն իր նամակը տարավ միսիոներական դպրոց, որը գտնվում էր գետի ափին, Նանչան քաղաքի հյուսիսային դարպասներից ոչ հեռու: Նա մեծապես տպավորված էր դպրոցի շենքից, որ վեհ ու շքեղ տեսք ուներ եւ բավականին տարբերվում էր իր տեսած չինական ցանկացած տնից: Երբ այդտեղ կանգնած նայում ու հիանում էր շենքի տեսքով, լավ հագնված եւ հպարտ մի մարդ մոտեցավ ու խիստ ձայնով դիմեց նրան. «Հե՛յ, ի՞նչ ես անում այստեղ: Հեռացիր անմիջապես: Վատ կլինի, եթե օտարերկրացի պարոնը քեզ տեսնի»:

Կռահելով, որ այդ մարդը դպրոցի պահակը կլինի, Տա Տունգը ժպտալով ասաց. «Հենց դրա համար էլ եկել եմ: Ես ուզում եմ տեսնել օտարերկրացի պարոն Սա-Կե-Լաոյին՝ տնօրենին»:

Որ այդքան վատ հագնված գյուղացի տղան տնօրենի հետ տեսակցություն կխնդրեր, խիստ անսպասելի էր նույնիսկ զուսպ ու սառնասիրտ պահակի համար:

«Օտարերկրացի պարոնը ժամանակ չունի ամեն մեկին տեսնելու: Ո՞վ է ասել, որ գաս»:

«Ահա նամակ պարոն Լիից, որն ինձ ասել է...»:

«Օ, ուրեմն պարոն Լիից նամակ էս բերել: Ինչո՞ւ չէիր շուտ ասում: Կարող ես այստեղ թողնել ու գնալ»:

«Բայց պարոն Լին ցանկանում էր, որ ես անձամբ ներկայացնեմ նամակը պարոն Սային»:

Տա Տունգը պահակին ցույց տվեց չկնքված նամակը:

«Ո՞վ է այդ պարոն Լին»:

«Նա նույնպես օտարերկրացի պարոն է...»:

«Օ՛,- պահակի դեմքի արտահայտությունը փոքր-ինչ փոխվեց:- Ինչո՞ւ չէիր շուտ ասում: Եթե քո օտարերկրացի պարոնն այդպես է պատվիրել, պետք է այստեղ սպասես: Դասերը շարունակվում են: Մեր տնօրենը շատ զբաղված է: Ոչ ոք չի կարող նրան անհանգստացնել»:

«Ձեր կարծիքով նա ե՞րբ ազատ կլինի»:

«Չգիտեմ: Դու պարզապես սպասիր»:

Վաղ առավոտից մինչեւ կեսօր Տա Տունգն սպասեց, եւ երբ տեսավ, որ մարդիկ ընդմիջմանը դուրս են ելնում, որպեսզի գնան ճաշելու, մեկ անգամ էլ պահակին հիշեցրեց, որ ուզում է տեսնել տնօրենին: Պահակն ասաց, որ բոլորը գնում են ճաշելու, եւ որ օտարերկրացի պարոնին ճաշի

ԱՅՈՒՆ ՇԻՒ

ժամին ընդմիջելն աններելի հանցանք կլինի: Շուտով խոհանոցից մի մարդ եկավ սկուտեղը ձեռքին, որի վրա պահակի ճաշն էր: Նա կերավ առանց Տա Տուևի բան ասելու: Կեսօրից հետո օրվա երկրորդ կեսից մինչև երեկո Տա Տուևը շարունակեց սպասել: Չմտան օրերը կարճ են, բայց թվաց, թե այդ օրը մի տարի տևեց: Երբ Տա Տուևը տեսավ, որ արեն սկսեց մայր մտնել արեմուտքում, պահակին ասաց, որ ինքը դեռ քսան լի պետք է ուղքով գնա, որպեսզի տուն հասնի, եւ պահանջեց անմիջապես տեսնել տնօրենին:

«Բայց հիմա օտարերկրացի պարոնի թեյի ժամն է: Ես չեմ կարող հենց հիմա ներս մտնել,- անվրդով ու անտարբեր նկատեց պահակը:- Եթե մի փոքր էլ հանգիստ մնաս, կտեսնեմ, թե ինչ կարող եմ անել քեզ համար»:

«Դուք ինձ ստիպեցիք սպասել այստեղ ամբողջ օրը: Միգուցե հետո էլ ընթրելու է նա...»:

«Ո՛հ,- ուղղեց պահակը:- Օտարերկրացի պարոնը տանը «ճաշում է» իր օտարերկրացի տիկնոջ հետ»:

«Ինձ համար մե՛կ է, թե ինչ է անում, որտեղ եւ ում հետ,- Տա Տուևը ձայնը բարձրացրեց:- Ես պետք է տեսնե՛մ նրան»:

«Մի՛ գոռա: Ես քեզ կարող եմ լսել: Եթե ստամոքսդ դատարկ է, կարող ես գնալ եւ մի բան ուտել մոտակա ռեստորաններից մեկում»:

«Եթե ինձ ներս չտանես, որ տեսնեմ տնօրենին, ինքս ներս կգնամ եւ կթեյեմ նրա հետ»,- Տա Տուևը պատրաստվեց ներս գնալ: Նա լռջորեն էր տրամադրված:

Պահակը զայրացավ, բայց կանե վախեցավ:

«Հե՛յ: Սպասի՛ր: Հենց հիմա ներս եմ մտնում: Դու սպասիր ծածկապատշգամբի տակ, մինչև ես գնամ տեսնեմ, թե օտարերկրացի պարոնն ավարտե՞լ է թեյերը»:

Նա Տա Տուևի հետ պահատակից դուրս ելավ, ապա կողպեց դուռը:

Նախքան մարզագետնի երկայնքով անշտապ դեպի դպրոցի գլխավոր շենք գնալը նա հարցրեց Տա Տուևին. «Ի՞նչ է անում...»:

«Անունս Լի Տա Տուև է...»:

«Չէ, քո՛ անունը չեմ ուզում: Ի՞նչ է օտարերկրացի պարոնի անունը, որն ուզում է դո՛ւ ներկայացնես նամակը»:

«Նրա անունը Լի Թի-Մո-Թայ է»:

«Նամակն ինձ չե՞ս տա»:

«Չէ, ես ինքս կներկայացնեմ»:

Մի վերջին սրտնեղած հայացք նետելով Տա Տուևի կողմը՝ նա քայլեց

խոտի վրայով, որ շարունակում էր գեղեցիկ ու կանաչ մալ նույնիսկ ծմռան այդպիսի ցուրտ օրերին: Հասնելով գլխավոր շենքի կենտրոնական դռանը՝ նա կանգ առավ եւ վախվորած ներս նայեց գաղտագողի: Նրա ամբարտավանությունը, որ այնքան տպավորիչ էր մեկ րոպե առաջ, այժմ արդեն այժմ արդեն լրիվ չքացել էր: Վերջապես նա շտկեց բամբակով լցունված իր վերարկուի օձիքը, ձեռքով դեմքը սրբեց եւ մտավ շենք՝ շուրթերին շատ հաճելի մի ժպիտ: Որոշ ժամանակ անց կրկին հայտնվեց դռան մեջ եւ նշան արեց Տա Տունգին, որ մոտենա: Տա Տունգը շտապով քայլեց ուղիղ մարգագետնի միջով եւ տեսավ, որ այդ մարդը զայրացած ձեռքերն է թափահարում: Չհասկանալով, թե նա ինչ է ուզում ասել՝ Տա Տունգը շարունակեց քայլել եւ երբ հասավ դռան մոտ, արգելքի հանդիպեց պահակի կողմից:

«Աչքերդ լայն բացիր, երբ քայլում ես, տղաս,- շնչաց պահակը զսպված զայրոյթով:- Խոտն ինչո՞ւ տրորեցիր: Եվ ինչո՞ւ ինձ արհամարհեցիր, երբ նշան էի անում, որ դուրս գաս»:

«Բայց ես միայն հետեւում էի ձեր ոտնահետքերին...»:

«Ցածր խոսիր: Մարգագետինը նախատեսված է միայն օտարերկրացի պարոնի եւ նրա կնոջ համար: Նրանցից բացի ուրիշ ոչ ոքի չի թույլատրվում քայլել խոտի վրայով: Իմ պարտականությունն է լավ վիճակում պահել այն: Ես պետք է հետեւեմ, որ այն մաքրվի մոլխոտներից եւ ջրվի: Իհարկե, մեկ-մեկ էլ կարող եմ քայլել խոտի վրայով»:

«Չգիտեի: Կներեք»:

«Շարժուձեւիդ հետեւիր, տղաս, հատկապես օտարերկրացի պարոնի առջեւ: Շատ հարգալից եղիր նրա հանդեպ: Երբ նա խոսում է քեզ հետ, ուշադիր եղիր եւ թեթեւակի խոնարհիւր գլուխդ: Ինչ էլ որ հարցնի քեզ, ասա «Այո, պարոն»: Քանի որ քեզ տանում եմ նրա մոտ, պատասխանատու եմ քո վարքի համար: Հիշիր ինչ որ քեզ ասել եմ»:

Տա Տունգը լուռ էր:

Պահակը Տա Տունգին առաջնորդեց շենքից ներս եւ երկար մի դահլիճի միջով գնաց դեպի վերջում գտնվող դուռը: Այն ամուր փակված էր, եւ պահակը վախվորած թակեց: Ներսից տարօրինակ մի ձայն ասաց. «Մտեք»: Պահակը կամաց բացեց դուռը եւ Տա Տունգին ուղեկցեց դեպի մեծ, լուսավոր, շքեղ ու տաք մի սենյակ: Լուսամուտի կողքին, մի մեծ գրասեղանի մոտ նստած էր մոխրադարչնագույն մազերով, խիստ գունատ, արտասովոր հագնված, պարանոցին ճերմակ ձիգ ժապավեն փաթաթած, տարօրինակ տեսքով միջին տարիքի մի տղամարդ: Գրասեղանը լի էր ան-

ԱՅՈՒՆ ՇԻՒ

սովոր առարկաներով, եւ նա գրում էր, երբ պահակն ու Տա Տունգը ներս մտան: Տղամարդը դադարեցրեց գրելը եւ հայացքը վեր բարձրացրեց: Տա Տունգը խոնարհվեց նրան, եւ նա պատասխանեց ողջույնին գլխի թեթեակի խոնարհումով: Ապա իր երկնագույն աչքերով ուղծից գլուխ գնեց տղային: Մի յուրահատուկ հանգիստ ծայտով նա դիմեց պահակին. «Թող նրան այստեղ: Կարող ես գնալ»:

«Այո, պարոն»:- Պահակը խոնարհվեց եւ հեռացավ իր ետեւից դուռը կամացուկ փակելով:

Օտարերկրացին շարունակեց որոշ ժամանակ գնել Տա Տունգին, ապա ասաց. «Դո՞ւ ես ասել, որ ինձ համար նամակ ես բերել իմ գործընկեր Լի Թի-Մո-Թայից»:

«Այո, պարոն»:

«Նամակը քեզ մո՞տ է»:

«Այո, պարոն»:

Տա Տունգն անմիջապես նրան հանձնեց նամակը: Արագ մի հայացք գցելով դրա վրա՝ տղամարդն ասաց. «Դո՞ւ ես Լի Տա Տունգը»:

«Այո, պարոն»:

«Բայց դու բավականին գեղջուկ տեսք ունես: Ինչպե՞ս կարող էր գործընկերս քեզ խելացի եւ ուշիմ սովորող կոչել: Կարո՞ղ ես կարդալ եւ գրել»:

«Այո, պարոն»:

«Բժիշկ Լին ասում է, որ քո հորեղբայրն իր շատ լավ բարեկամն է: Դա ճի՞շտ է»:

«Այո, պարոն»:

«Բժիշկ Լին ինձ առաջարկում է քեզ ընդունել մեր դպրոցի աշակերտ: Դրա համա՞ր ես եկել ինձ տեսնելու»:

«Այո, պարոն»:

Առայժմ պահակի հրահանգը շատ օգտակար էր: Երկյուղ ու պատկանանք ներշնչող օտարերկրացի պարոնին այն շատ ավելի լավ տրամադրության մեջ էր դրել, քան կլիներ հակառակ դեպքում: Բայց հաջորդ հարցը տարբեր էր:

«Դու գիտես այս դպրոցի վարձավճարները: Ենթադրում եմ, որ հորեղբայրդ շատ հարուստ է եւ հողի մեծ կալվածքների սեփականատեր է գյուղում, այնպես չէ՞»:

Տա Տունգը մի պահ վարանեց եւ որոշեց, որ ազնվությունն ավելի լավ է, քան

կույր հնազանդությունը:

«Ոչ, պարոն»:

«Ի՞նչ,- օտարերկրացու դեմքն անմիջապես փոխվեց՝ արտահայտելով մեծ դժգոհություն: Տա Տունգը չէր կարող չհիանալ պահակի իմաստությունը, որն այլևս սենյակում չէր, ինչի համար Տա Տունգն ուրախ էր: Ի՞նչ նկատի ունես:

Ո՞վ է վճարելու ուսմանդ վարձը»:

«Ոչ ոք, պարոն»:

«Ասացիր «ոչ ո՞ք»»:

«Այո, պարոն»:

Տղամարդը վերընթերցեց սամակը՝ դեմքի զարմացած արտահայտությամբ: Ձեռքը դնելով ճակատին՝ նա բացականչեց. «Հասկանում եմ: Նա հաստատ ցանկանում է, որ ես քեզ ընդունեմ որպես ինքնուրույն վաստակող սովորողի»:

Կարդալով սամակը երրորդ անգամ նա ցած գցեց այն՝ ակնհայտ հիասթափությամբ:

«Լավ, տղաս,- ասաց նա՝ տեղը բերելով իր ողջ քրիստոնեական ոգին՝ առնչվելու համար տհաճ մի գործի հետ:- Քանի որ չես կարող վարձը վճարել միջոցներ չունենալու պատճառով, ի՞նչ կարող ես անել հոգսերդ հոգալու համար»:

«Այն ամենն, ինչ կուզեք, պարոն: Կարծում եմ կարող եմ...»:

«Մի՛ պարծենա, տղաս,- խիստ ձայնով ընդհատեց օտարերկրացի պարոնը:- Ինչպե՞ս կարող ես ամեն ինչ անել: Նույնիսկ ես չեմ համարձակվում այդպիսի բան պնդել»:

«Ուզում էի ասել, պարոն, որ կարծում եմ կսովորեմ, եթե բարի լինեիք ցույց տալ ինձ, թե ինչպես պետք է անեմ»,- բացատրեց տղան:

«Կարող ես, այնպես չէ՞: Կտեսնենք»:

Տա Տունգը տեսավ, որ նա ձեռքի ափով անընդմեջ հարվածեց արույրն փոքրիկ փայլուն կամար հիշեցնող մի առարկայի, որը գլխիվայր դրված էր գրասեղանի անկյունում գտնվող կանգնակին եւ դողանջանման սուր ձայներ էր արձակում: Շտապով սենյակ մտավ մի մարդ, որ շարունակաբար խոնարհվելով օտարերկրացուն՝ ասաց. «Այստեղ եմ, պարոն Մա, այստեղ եմ, պարոն Մա»:

Քանի որ գրասեղանի առջեւ գտնվող Տա Տունգը զբաղեցնում էր սենյակի կենտրոնը, նոր ներս մտած անձանոթը տղային այնպես հրեց մի կողմ, որպեսզի կարողանար տեսնել օտարերկրացի պարոնին տեսանելի դիրքում: Իսկ Տա Տունգի կողմն ընդհանրապես չէր էլ նայում:

«Նստեք, պարոն Վան», - ասաց պարոն Ման եւ բավականին անփույթ շարժեց ձեռքը: Պարոն Վանը շատ էր երախտապարտ, որ իրեն թույլ տվեցին նստել տնօրենի աշխատասենյակում, եւ նորից ու նորից շնորհակալություն հայտնեց նախքան գրասեղանի կողքի փոքրիկ աթոռին կիսանստելը: «Կիսանստել» արտահայտությունը ամբողջովին համարժեք չէ պարոն Վանի նստելու ձեւին: Իրականում նա պարզապես ձեւացնում էր, թե նստած է աթոռի հենց եզրին: Տա Տունգը չէր կարող չմտածել, որ եթե աթոռը հեռացնեին պարոն Վանի ետեւից, նա չէր էլ զգա, որ ինչ-որ բան է պակասում, եւ դեռ կշարունակեր պահպանել հավասարակշռությունը՝ օդում նստելու իր զարմանահրաշ հմտությամբ: Քանի որ պարոն Ման ցույց էր տալիս նամակը եւ պարոն Վանին ասում էր, թե ինչն ինչոց է, Տա Տունգը նայեց այս չափազանց քաղաքավարի տղամարդուն: Նա շատ երիտասարդ էր, թերեւս ոչ շատ մեծ, քան Տա Տունգը, բայց ակնոցով էր եւ հասուն շարժումներ ուներ, ինչը նրան շատ ավելի մեծի տեսք էր տալիս: Ակներեաբար, նա հյուսիսից էր, բարձրահասակ էր եւ թուխ, իսկ առոզանությունը հնչում էր մանդարինի առոզանության նման՝ օտարերացու թեթեակի հնչերանգով, որ ձեռք էր բերել, երեւի, եվրոպացիների հետ շատ շփվելու հետեանքով: Կարճատեւ գրույցից հետո, որի ժամանակ պարոն Վանի խոսքերը սահմանափակվում էին երկու արտահայտությամբ՝ «Այո, պարոն» եւ «Շնորհակալություն, պարոն», պարոն Ման ասաց Տա Տունգին, որ գնա պարոն Վանի հետ, որը տղային տարավ իր սենյակ: Այդ սենյակը տնօրենի սենյակի կողքին էր եւ փոքրիկ էր ու նեղ: Մտնելով սենյակ՝ Տա Տունգն զգաց, որ ինչ-որ բան այն չէ: Դա ավելի շատ նման էր անցումի, քան սենյակի: Ցանկացած սենյակ, ինչպես Տա Տունգը հասկանում էր, չորս պատ պիտի ունենար, բայց այս մեկը միայն երկու պատ ուներ, որոնց երկայնքով գրքերի ու փաստաթղթերի անթիվ կույտեր էին, այնպես, որ հազիվ կարելի էր պատ տեսնել, այն էլ՝ դրանց միայն վերին մասն էր երեւում: Տա Տունգը փորձեց գտնել մյուս երկու պատերը, բայց դա նրան չհաջողվեց: Որովհետեւ հեռավոր ծայրում ֆրանսիական մի լուսամուտ էր, որի մյուս կողմում այգին էր, իսկ այն ծայրում, որտեղից ինքն էր մտել, դուռն էր: Դռան եւ լուսամուտի երկու կողմերում տարածություն գրեթե չկար: Սենյակի կենտրոնում մի փոքրիկ գրասեղան կար, եւ պարոն Վանը, թեւեւ շատ նիհար կազմվածք ուներ, ստիպված էր սեղմվել, որպեսզի անցնի դրա միջով եւ նստի իր աթոռին: Գրասեղանի այս կողմում երկու աթոռակ կար, բայց դրանք մարդկանց նստելու համար չէին նախատեսված, այլ՝ որ պարոն Վանը դրանց վրա դներ իր գրքերը, տուփերն ու փաս-

տաթղթերը: Տա Տունգին ասվեց, որ կանգնի աթոռակների մոտ, քանի դեռ պարոն Վանը թղթերի կոյտի մեջ ձեռաթուղթ էր փնտրում: Վերջապես ևս թղթի մի մեծ թերթ գտավ, որը տեղավորեց գրասեղանին, եւ ապա սկսեց Տա Տունգին մի շարք հարցեր տալ: Տա Տունգի բոլոր պատասխանները ևս գրի էր առնում այդ թղթի վրա: Նախնական հարցերին, ինչպիսիք են անունը, տարիքը, ծննդավայրը, ծագումը եւ այլն, հետեւեց կրոնի վերաբերյալ հարցը: Նա հարցրեց Տա Տունգին. «Հայրդ քրիստոնյա՞ էր»:

«Չգիտեմ, պարոն»: Տա Տունգը մի վայրկյան մտածեց, ապա ավելացրեց. «Կարծում եմ դժվար թե, պարոն»:

«Իսկ մա՞յրդ: Նա քրիստոնյա՞ է»:

«Ոչ, պարոն: Վախենամ, որ ոչ...»:

«Լավ,- կարճ կտրեց պարոն Վանը:- Հորեղբայրդ կամ ձեր ընտանիքի անդամներից որեւէ մեկը քրիստոնյա՞ է»:

«Ոչ, պարոն: Հորեղբայրս չի սիրում այն մարդկանց, որոնք փորձում են վերափոխել իրեն...»:

«Լավ: Քանի որ ձեր ընտանիքից ոչ ոք քրիստոնյա չէ, դու ինչո՞ւ ես ուզում քրիստոնյա լինել»:

«Բայց, պարոն, ես չեմ ուզում քրիստոնյա լինել, եթե դա հնարավոր է»:

Պարոն Վանը ցնցված էր: Նա ցած դրեց գրիչն ու գոչեց. «Ի՞նչ ես ասում: Չես ուզում քրիստոնյա՞ լինել»:

«Ի՞նչ օգուտ, պարոն, եթե ես չեմ ուզում խախտել օրենքը, եւ ապա խնդրել միսիոներին, որ պահանջ ներկայացնի եւ ինձ բանտից դուրս հանի»:

«Լսի՛ր, դու՛: Ես չեմ փորձում քեզ վերափոխել...եւ երբեք էլ հավանություն չեմ տալիս, երբ մարդկանց վերափոխում են՝ դատական դեպքերի ժամանակ գայթակղելով նրանց եկեղեցու կողմից պաշտպանված լինելու խոստումներով: Բայց կարծում եմ պետք է իմանաս, որ քրիստոնյաները գնում են մեր Երկնային Տիրոջ մոտ, միևնույն հեթանոսները գնում են դժոխք՝ սատանայի մոտ...»:

«Բայց, պարոն, դա զուտ սնահավատություն է, որ օգտագործվում է անկիրթ զանգվածներին հիմարացնելու համար: Ձեզ նման մարդը, պարոն, անշուշտ պետք է բավականաչափ ողջամտություն ունենա, որպեսզի չհավատա նման անմտությանը»:

«Անմտություն: Ողջամտություն,- պոռթկաց պարոն Վանը:- Հասկանո՞ւմ ես, թե ինչ անհանդուրժելի անարգանք ու մեղքով ես լի: Եթե բժիշկ Լի Թի-Մո-Թայի երաշխավորագիր նամակը եւ պարոն Մայի կարգադրությունը չլինեիր, ես քեզ դուրս կշարտեի գրասենյակից, անմիջապես»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Տա Տունգն սկսեց գիտակցել, որ որոշակի բաներ կան, որոնք ավելի լավ է չասվեն:

«Ներեցեք, պարոն: Ես դա նկատի չունեի, պարոն»:

«Շատ ավելի լավ: Քանի որ պարոն Սան ասաց, որ դու չես կարող քեզ թույլ տալ վճարելու այս դպրոցի վարձը, ուրիշ այլընտրանք չկա, բացի այն, որ դիմում գրես ինքնաձեռնաօգնական համար: Դա քեզնից կպահանջի, որ դու որոշակի աշխատանք կատարես դպրոցի համար՝ որպես մասնակի վճարես քեզ արված մեր ... ը... ը... բարեգործության համար»:

«Այո, պարոն»:

«Մեր կանոնակարգի համաձայն՝ նյութական դժվարություններ ունեցող քրիստոնյաները, դպրոցի տնօրենի եւ տնօրենների խորհրդի հավանության դեպքում, կարող են դիմել այդպիսի ուսանողական թոշակների համար: Քանի որ ո՛չ հայրը, ո՛չ մայրը, ո՛չ էլ ընդհանրապես ձեր ընտանիքից որեւէ մեկը քրիստոնյա չեն, հնարավոր չէ, որ մենք քեզ ընդունենք որպես քրիստոնյա՝ առանց նախապես մկրտելու: Հիմա պատասխանիր ինձ անկեղծորեն՝ ուզո՞ւմ ես մկրտվել եւ դառնալ քրիստոնյա»:

Տա Տունգը մի վայրկյան մտածեց: Այլ ելք չկար: Նա պատրաստ էր համաձայնել ցանկացած պայմանի:

«Այո, պարոն»:

«Շատ լավ: Բայց մի բան էլ կա. Դու պետք է երկու երաշխավոր գտնես. մեկը նրա համար, որպեսզի երաշխավորի, որ դու ծառայելու ես մեր դպրոցին կամ մեր միսիոներական կազմակերպությանը երկու տարի, եթե դառնաս ցերեկային սովորող, եւ չորս տարի, եթե դառնաս այստեղ վարձու սենյակ ունեցող սովորող, մինչեւ որ ավարտես ուսումը: Այդ ընթացքում դու վճարվելու ես, բայց աշխատավարձը կլինի... դե... համեմատաբար փոքր, այնպես, որ քեզ հնարավորություն տա որոշ չափով փոխհատուցելու մեր կողմից ընձեռված անվճար կրթությունը: Նա պետք է նաեւ երաշխավորի, որ եթե քեզ վտարեն դպրոցից եւ այդ պատճառով բացարձակապես չկարողանաս ծառայել դպրոցին կամ միսիոներական կազմակերպությանը, կանխիկ վճարես ուսման եւ կացարանի վարձերի համար մեզ ունեցած պարտքը: Բայց եթե անկարող լինես ծառայել դպրոցին լուրջ հիվանդության կամ վերջույթները կորցնելու կամ մահվան պատճառով, այդ ժամանակ դպրոցի ղեկավարությունը մեծահոգի կլինի, եւ երաշխավորիցդ չեն պահանջի վճարել քո վարձավճարները: Երկրորդ երաշխավորը դպրոցի համար լրացուցիչ ապահովություն է: Նա պետք է երաշխավորի, որ առաջին երաշխավորը կկատարի իր պարտավորությունները»:

Տա Տունը խիստ շփոթված էր այսպիսի բարդ ու խճճված կանոններից: Նա անմեղորեն հարցրեց. «Իսկ երրորդ երաշխավոր չէ՞ք պահանջում, որպեսզի երաշխավորի երկրորդին, որ նա...»:

«Մի՛ հեգնիր: Այստեղ քեզ համար երկու ձեռաթուղթ ունեմ: Վերցրու դրանք եւ տուն գնա: Կգաս ինձ տեսելու՝ հենց որ գտած կլինես սոցիալական բարձր կարգավիճակ ունեցող երկու քրիստոնյայի, որոնք կլրացնեն այս ձեռաթղթերը, կստորագրեն ու կկնքեն...»:

«Բայց մեր իմացած քրիստոնյաները, բացառությամբ մեկ կամ երկու միսիոների, բոլորն էլ առանց որեւէ սոցիալական կարգավիճակի անծինք են: Իրականում նրանք մեծ մասամբ սոսկալի սրիկաներ են...»:

«Վե՛րջ տուր: Եթե պատվարժան որեւէ քրիստոնյայի չես ճանաչում, ցանկացած կրոնի մարդիկ դա կանեն, քանի դեռ 5-րդ աստիճանից ոչ ցածր աստիճանի պաշտոնյա են: Իրականում մենք դիրք ունեցող հեթանոսներին նախընտրում ենք վատ համբավ ունեցող քրիստոնյաներից...»:

«Բայց, պարոն, մենք չգիտենք ոչ ոքի, որ 5-րդ աստիճանի պաշտոնյա լինի: Իմ հորեղբայրն ատում էր բոլոր պաշտոնյաներին: Նա դրանցից ոչ մեկի հետ չէր բարեկամանում, նույնիսկ 9-րդ աստիճանի պաշտոնյաների հետ»:

«Մի՛ ընդհատիր ինձ: Անմատչելի բարձրաստիճան պաշտոնյաների մոտ կարելի է այդ գործը դասավորել հինգ հազար արծաթե թաւելից ոչ պակաս գումարով»:

«Դա նույնն է, թե դատապարտյալին բանտից դուրս բերեն գրավով: Ինչու՞ պետք է ես...»:

«Լռի՛ր: Մեր հաջորդ կիսամյակը սկսվում է մյուս տարի՝ հունվարի 28-ին: Այս երաշխիքային ձեռաթղթերը պետք է հանձնես հնարավորինս շուտ: Եթե ընդունվես, պետք է գաս դպրոցը բացվելուց մեկ շաբաթ առաջ, որպեսզի օգնես ծառաներին, որ դպրոցը պատրաստ վիճակում լինի: Հասկանո՞ւմ ես»:

«Այո, պարոն»:

«Այժմ կարող ես գնալ: Ես շատ զբաղված եմ: Ահա ձեռաթղթերը»:

Նա ձեռքը թափ տվեց, որպեսզի Տա Տունը դուրս գա: Վերջինս ստացավ ձեռաթղթերը, խոնարհվեց եւ գնաց դեպի դուռը: Բայց դուռը, հակառակ չինական սովորության, ամուր փակված էր, եւ Տա Տունը, բռնակը հրելով ու քաշելով, չկարողացավ այն բացել:

«Պտտի՛ր բռնակը, անշնորհք ապուշ, պտտի՛ր բռնակը», - անհամբեր զոչեց պարոն Վանը:

ԱՅՈՒՆ ՇԻՒ

Տա Տունը պտտեց բռնակը եւ շատ ուրախ էր, որ դուրս եկավ սենյակից:

«Ինչպե՞ս կարող եմ երկու երաշխավոր գտնել», - մտածեց Տա Տունը եւ կայեց ձեռաթղթերին: Ապա դուրս քայլեց դպրոցից եւ, փոխանակ ուղիղ տուն գնա, ճամփա ընկավ դեպի քաղաք: Եւ մեկն էր այն քչերից, ովքեր հասկանում են, որ արտասահմանյան օրացույցը բավականին տարբերվում է չինականից, եւ որ մյուս տարվա հունվարի 28-ը նշանակում է այս տարվա 12-րդ լուսնի 14-րդ օրը, որը հազիվ մեկ ամիս էր առաջ այն ամսաթվից, երբ պետք է լրացներ ձեռաթղթերը:

Արդեն մթնշաղ էր, եւ գիշերն արագ մոտենում էր: Ծանր մտքերով պարուրված՝ նա երեքավով քայլում էր փողոցի մեջտեղով: Ցրված ու անուշադիր՝ ներս մտավ քաղաքի հյուսիսային դարպասով, որ կոչվում էր Հաղթանակի դարպաս, եւ քայլեց դեպի հարավ՝ Միջին գլխավոր փողոցի երկայնքով: Այն ժամանակ, երբ հասել էր փողոցի հարավային ծայրին, որ կոչվում էր «Ձի լողացնելու լճակ», մի բարձր պաշտոնյա, որի առջեւից գնում էր նրա սովորական շքախումբը, իր ծածկապատգարակում նստած՝ շտապում էր դեպի հյուսիս: Այս պաշտոնյան շատ ցուցամուլ անձնավորությունն էր, ու քանի որ Գրքերի փողոց կատարած իր հաճախակի այցելություններից մեկն էր սա, եւ նա իր յամենն էր վերադառնում, նրա շքախումբը շատ մեծ էր, եւ նա շեփորներ ու կոչնազանգեր էր օգտագործում իր «ճանապարհը բացելու համար», ինչպես սովորաբար անում են մյուս բարձր պաշտոնյաները: Եւ ընդամենը դիմացից գնացող երկու ուղեկցորդ ուներ եւ երկու սպասավոր՝ չորս հոգով տարվող իր ծածկապատգարակի առջեւում ու երկու սպասավոր էլ՝ ետեւում: Մութ էր, եւ փողոցն էլ պայծառ էր լուսավորված: Թեեւ դիմացից գնացող ուղեկցորդները ժամանակ առ ժամանակ բացականչում էին «ճանապարհի տվեք», որպեսզի հետիոտներին հեռու պահեին ճանապարհի մեջտեղից, Տա Տունը նրանց ո՛չ տեսնել էր կարող, ո՛չ էլ լսել, եւ գնաց ուղիղ դեպի փոքրիկ թափորը: Եւ խուսափեց դիմացից գնացող ուղեկցորդներից ու սպասավորներից, բայց դեմառդեմ բախվեց առաջին պատգարակակրին: Տա Տունը ընկավ մայթին, մայթին ընկավ նաեւ ծածկապատգարակը՝ իր բեռով հանդերձ: Սա շատ լուրջ հանցանք էր, եւ սպասավորներն անմիջապես ձերբակալեցին Տա Տունին: Բարձր պաշտոնյան, բարեբախտաբար, էր վնասվածք էր ստացել, այլ միայն սաստիկ վախեցել էր: Աղմուկ ու իրարանցումի պահից հետո նա հավաքեց ինքն իրեն եւ գայրացած հարցրեց, թե ինչ է պատահել: Տա Տունին բերեցին նրա մոտ, եւ նա շատ խիստ հարցրեց՝ տղան գիտե՞ս արդյոք, թե ինչ

հանցանք է գործել:

«Ոչ պարոն,- աղաչեց Տա Տուևը:- Ես մտահոգված էի...»:

«Պու պատճառ դարձար, որ Նորին Գերագանցությունը՝ նահանգի դատավորը, ընկնի իր պատգարակից...»,- կատաղած ասաց սպասավորներից մեկը:

«Նորին Գերագանցություն պարոն Վեյը»,- հարցրեց Տա Տուևը:

«Այո, նահանգի դատավորը»,- պատասխանեց սպասավորը:

«Եվ գրականության մասնագետն ու գեղագրո՞ղը»,- Տա Տուևը շատ պարզորոշ հիշեց այդ պաշտոնյային:

«Իսկ ո՞վ ես դու: Երեւում է հասկացող մարդ ես: Գրականությամբ ես զբաղվում»:- Պարոն Վեյը միանգամայն գոհ էր, որ իրեն գրականության մարդ եւ գեղագրող են անվանում, թեկուզ անգամ դա լինի փողոցի մարդը:

«Հույս ունեմ այդպիսին լինել, պարոն: Ես Լի Տա Տուևն եմ պատմության եւ դասկան գրականության սովորող»:

«Ի՞նչ կարող ես ասել քո գործած հանցանքի մասին»:

«Ոչինչ, պարոն: Ցավում եմ, պարոն: Բայց, որքան էլ տարօրինակ թվա, այդպիսի հանցանքն առանց նախադեպի չէ գրականության պատմության մեջ: Տան դիկտատիայի ժամանակ հայտնի բանաստեղծ Չիա Տան ճիշտ ու ճիշտ իմ հանցանքի նման հանցանք է գործել: Նա պարզապես այս երկտողն է հորինել.

«Թռչունները թռեցին լճակի մոտ, ծառերին,

Դուռն հրեց մի վանական, լուսինն էր շողում վերից»:

Նա չէր կարողանում որոշել, թե կարո՞ղ է արդյոք կատարելագործել երկրորդ տողը՝ «հրել» բառը փոխարինելով «թակել» բառով: Կիսածայն երգելով այդ տողը՝ փոխնիփոխ երկու բառերով էլ, նաեւ թակելու եւ հրելու շարժումներ կատարելով՝ նա ըստ էության հրում եւ բախվում էր գրականության պաշտոնյայի եւ մեծ մարդու՝ Հան Յույի շքախմբին, որն այնքան ողորմած էր, որ օգնեց նրան ու նրա փոխարեն որոշեց՝ «թակել» բառը, ունենալով «արական կիսատոն», ավելի լավ է: Ես նույնպես երկընտրանքի մեջ եմ, թեւեւ ոչ պոեզիայի հետ կապված: Հույս ունեմ ընդունվել միսոներական դպրոց՝ որպես ինքնաձախսածաձկող սովորող, իսկ դպրոցի ղեկավարությունն ուզում է, որ ես երկու երաշխավոր հայթայթեմ, որ հայտնի մարդիկ պետք է լինեն: Կուզեի իմանալ, թե արդյոք Ձերդ Գերագանցությունը կարո՞ղ է օգնել ինձ, ինչպես Տան դիկտատիայի մեծ գրողն օգնեց բանաստեղծին»:

«Մի երիտասարդ, որ այդքան լավ կարդացած է եւ ծանոթ է Տան դա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

րաշրջանի բանաստեղծներին, մեծապես արժանի է օգնության: Մի օր արի իմ յամենը, եւ ես կտեսնեմ, թե ինչ կարող եմ անել քեզ համար»: Պարոն Վեյը ժպտաց՝ լսելով, որ իրեն համեմատում են Հան Յոյի հետ:

Ձեր սովորողն անչափ երախտապարտ է: Բայց այստեղ ձեւաթղթեր կան, եւ եթե Ձերդ Գերազանցությունն այնքան ողորմած կլինի, որ կլրացնի դրանք ու կուղարկի դպրոց, ձեր սովորողը կկարողանա իր ամբողջ ժամանակը նվիրել՝ լսելու ձեր հրահանգները, երբ գա իր հարգանքը մատուցելու Ձերդ Գերազանցությանը»:

Պարոն Վեյը սրան համաձայնեց, եւ Տա Տուկը թղթերը հանձնեց սպասավորներից մեկին: Հրաժեշտ տալով դատավորին՝ Տա Տուկը տուն շտապեց, որպեսզի հորեղբորը գրի իրադարձություններով լի այդ օրվա դեպքերի մասին:

Դատավորն իր խոսքի տերն եղավ, եւ Տա Տուկը շուտով իմացավ, որ ընդունվել է միսիոներական դպրոց: Երբ հայտնի դարձավ, որ ևս գնալու է այդ միսիոներական դպրոցը, ամբողջ գյուղը փորձեց նրան ետ պահել՝ այն հիմքով, որ օտարերկրացիների մասին սարսափելի լուրեր էին պտտվում, եւ որ շատ վտանգավոր բան էր «այդ բարբարոս սատանաների» հետ շփվելը: Երբ նրանց բոլոր խորհուրդներն իզուր անցան, փորձեցին Տա Տուկին հորդորել, որ ծայրահեղ դեպքում գոնե պետք է մնա հորեղբոր կնոջ հետ, մինչեւ որ Նոր տարվա տոնն ավարտվի: Քանի որ դա գյուղի մարդկանց միակ տոնն է, նրանք մտածեցին, որ եթե տղան որոշել է գնալ իր ճակատագրին ընդառաջ, ավելի լավ կլիներ, որ մի քիչ հաճույք եւ ուրախություն վայելեր տանը, նախքան այդ «սատանաների» մոտ գնալը: Այն փաստը, որ դպրոցն իր աշխատանքներն սկսում էր Նոր տարվա տոնից անմիջապես առաջ, բավական էր, որ ապացուցի նրանց «բարբարոսությունը»: Չնայած այս բոլոր բարի խորհուրդներին, Տա Տուկը պնդեց, որ իր հորեղբոր հատուկ ցանկությունն է դա, որ ինքը որքան հնարավոր է շուտ գնա այդ դպրոց: 12-րդ օրվա վաղ առավոտյան ևս հրաժեշտ տվեց հորեղբոր կնոջը, մեծ հորաքրոջն ու Տա Յուին եւ դպրոց գնաց նոր կիսամյակն սկսվելուց մեկ շաբաթ առաջ:

Բացի պարոն Վանից եւ մի քանի ծառաներից, որոնց գլխավորում էր պահակը, ուրիշ ոչ ոք չկար դպրոցում: Պարոն Վանը Տա Տուկին նշանակեց աշխատանքի՝ պահակի հսկողության ներքո, որն անմիջապես տղային հանձնարարեց մի քանի դժվարին աշխատանք կատարել այգում: Հիմնականում ևս պետք է մարգագետինը պահեր լավ վիճակում, այնպես, որ օտարերկրացի պարոնը հաճույքով քայլեր այդտեղ, եւ Տա Տուկն ստիպ-

վաճ էր օրերով քարշ գալ այդտեղ՝ աշխատելով առավոտից մինչև մութն ընկնելը: Շատ շուտով Տա Տունգն ընկերացավ երեք երիտասարդ ծառաների հետ, որոնք աշխատում էին գրադարանում, լաբորատորիայում եւ ընդհանուր դասարաններում՝ կարգի բերելով ամեն բան: Եվ տեսավ, որ նրանք էլ իր նման ինքնաձայնաձայնակցումով սովորողներ էին:

Ուսուցիչներն սկսեցին ժամանել դպրոցը բացվելուց երեք օր առաջ: Բացվելու նախորդ օրը բոլոր աշխատողները կազմ ու պատրաստ էին եւ սպասում էին տնօրենի ժամանմանը, որը եկավ ուշ երեկոյան: Պարոն Ման երիտասարդ կին ուներ, որը աղջիկների համար նախատեսված մասնավոր դպրոց էր դեկավարում: Նրանք ապրում էին փոքրիկ մի շենքում, որ հատուկ իրենց համար էր կառուցված՝ հենց դպրոցի ետեւում: Տա Տունգը մկրտվեց դպրոցի մատուռում պարոն Մայի կողմից, որն իր մատներով մի քիչ ջուր ցողեց տղայի ճակատին եւ շատ հանդիսավոր կերպով ինչ-որ բան մրմնջաց: Դա շատ պարզ մի արարողություն էր, իսկապես այնքան պարզ, որ Տա Տունգը դժվարությամբ էր կարողանում հավատալ, որ ինքն արդեն ընդունվել է նոր կրոնի մեջ, երբ մկրտությունն ավարտվեց: Նրան ասացին, որ այսուհետ իր անունը «Տա Վեյ» է, կամ անգլերեն՝ «Դավիթ»:

Շատ սովորողներ եկան հունվարի 28-ին, բայց դասերը, հարկ եղած ձեւով չէին անցկացվում դեռ, մինչև որ երկու շաբաթ հետո ավելի շատ սովորողներ հավաքվեցին: Իրականում, դպրոցի բացումից հետո երեք շաբաթ շարունակ սովորողներ էին գալիս գրանցվելու, օրը մեկ կամ երկու հոգի, եւ ուշ եկածները կարծես թե ավելի էին հպարտանում իրենց ուշացումով, քան նրանք, ովքեր չէին ուշացել: Սկզբում Տա Տունգը սա չէր հասկանում, բայց հետո իմացավ, որ մինչ ինքնաձայնաձայնակցումով սովորողները պետք է ծառաների հետ դպրոցում լինեին կիսամյակն սկսվելուց յոթ օր առաջ, վճարովի սովորողները, որոնք քրիստոնյա էին եւ պահանջում էին, որ վարձավճարները կրճատվեն, պարտավոր էին ներկայանալ բացման օրը, իսկ լրիվ վարձավճարներ մուծող ոչ քրիստոնյաները կամ այն հարուստ քրիստոնյաները, որոնք իրենց արժանապատվությունից ցածր էին համարում եւ չէին ուզում վարձավճարի կրճատում պահանջել, կարող էին գրանցվել երեք շաբաթ հետո: Նրանց համար, ովքեր չէին կարողացել գալ համապատասխան ժամանակին, ընդունված էր նույնը՝ լրացուցիչ տուգանք վճարել՝ ամեն օրվա համար կես թանկ արծաթի չափով:

Մատուռ բոլոր սովորողներն էին պարտավոր գնալ: Հարուստների համար նախատեսված էին առջեւի շարքի նստարանները, մինչդեռ կես վար-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ձավճար մուծողները ստում էին անմիջապես նրանց ետետում, իսկ ինքնաձախսաձածկումով սովորող չորս հոգին զբաղեցնում էին վերջին ևստարանները, այն բանից հետո, երբ բաժանել էին Աստվածաշունչներն ու օրհներգի գրքերը: Այս չորս տղաները պետք է ևս անցնեին շարքերի միջով՝ հատուկ պատրաստված՝ փայտե բռնակներ ունեցող թավշե պարկերով, որպեսզի յուրաքանչյուր հավաքի ժամանակ հանգանակություն կատարվեր: Տիկին Մայի մասնավոր դպրոցից մի քանի աղջիկ ևույնպես մասնակցում էին մատուցում արարողությանը, բայց նրանց համար տարածքը խստորեն սահմանափակված էր կենտրոնական անցատեղի աջ կողմով միայն: Սկզբում աղջիկների ծնողների կողմից խիստ բողոքներ էին եղել՝ աղջիկներին տղաների հետ խառնելու այս բարբարոսական սովորույթի պատճառով, բայց պարոն Մային հաջողվեց մեղմել նրանց դժգոհությունը՝ կենտրոնական անցուղին երկու ոտնաչափ ընդլայնելով:

Անարդար կլիներ ասել, թե Տա Տունգի հանդեպ վատ էին վարվում դպրոցում, քանի որ տղայի համար շատ հաճելի էր այդտեղ, և ևս ընդհանուր առմամբ բավականին գոհ էր իր կյանքից: Թեև կես վճար մուծող քրիստոնյա սովորողները վերից էին նայում ինքնաձախսաձածկումով սովորողներին, ու թեև այդ չորսն ստիպված էին իրար հետ առանձին խաղալ, երբ կարողանում էին դասերից և մյուս պարտականությունները կատարելուց հետո ազատ ժամանակ գտնել, նրանք կարծես գոհ էին և երբեք չէին նեղվում մեծամիտների հասարակությունից: Իրենց հերթին՝ կես վճար մուծող քրիստոնյա սովորողներին վերից էին նայում ամբողջական վճար մուծող հարուստ տղաները, որոնք ամբողջ համայնքի ընտրյալներն էին: Ընտրյալները հազիվ թե իրենց արհամարհական հայացքը զգեին ցածրերից ցածրակարգերի՝ ինքնաձախսաձածկումով սովորողների վրա: Դպրոցում նրանց սոցիալական կյանքի տարբերությունը չհաշված՝ ուսման մեջ բոլոր տղաներին հավասար հնարավորություններ էին ընձեռված: Դասասենյակում, քանի դեռ դասաժամեր էին, ընտրյալները ոչ մի արտոնություն չունեին: Իսկապես, ամբողջական վարձ վճարող հարուստները բավականին թույլ սովորողներ էին՝ համեմատած ինքնաձախսաձածկումով սովորողների հետ, որոնք ապացուցում էին, որ փայլուն են ուսման մեջ: Հատկապես Տա Տունգը շատ ջանասեր էր և, բացի Աստվածաշունչից ու անգլերենից, մյուս բոլոր առարկաները շատ լավ էր սովորում ու հենց սկզբից էլ դասարանի առաջատարն էր: Շուտով ևս այնքան աչքի ընկավ չինարենից, մաթեմատիկայից, պատմությունից և աշխարհագրությունից, որ ուսուցիչները նրան այդ չորս առարկաներից առաջ քաշեցին և տեղափոխե-

ցին ամենաբարձր դասարան:

Պարտականություններն այգում, հատկապես վաղ գարնանը, Տա Տու-
նգին այնքան զբաղված էին պահում օրվա ընթացքում, որ նա, դասերին
հաճախելուց բացի, հազիվ էր սովորելու հնարավորություն ունենում: Երե-
կոյան մեկ ժամ ու կես էր թույլ տրվում դասերը կրկնելու համար: Ժամը ին-
նին մոտ բոլոր սովորողները պետք է լքեին դասասենյակները, որպեսզի
գնային իրենց ննջարանները: Ինն անց կեսին բոլոր լույսերը մարում էին:
Տա Տունգը կարծում էր, որ իրեն ավելի շատ ժամանակ է պետք պարապե-
լու համար: Սկզբում նա մի կապոց մոմ գնեց և իր սենյակում մեկ մոմ վա-
ռեց, որպեսզի կարող, երբ հերթական անգամ հանգրիս դպրոցի լույսը:
Սենյակի իր ընկերները, որոնք մյուս երեք՝ ինքնաձայնաձայնակումով սո-
վորողներն էին, ասացին, որ դա չի թույլատրվում: Բայց Տա Տունգը պնդեց՝
քանի որ իր մոմն է վառում և քանի դեռ անուշադրության չի մատնում իր
պարտականությունն առավոտյան, չի կարող հասկանալ, թե ինչու դա
չպետք է թույլատրվի: Շուտով կրկնվող թակոցներ լսեց իր դռանը: Պարան
Վանի ձայնն էր, որ ասում էր. «Անմիջապես հանգրո՛ւ լույսը: Այդ ո՞վ է, որ
համարձակվում է դպրոցի կարգը խախտել»:

«Ներեցեք, պարոն Վան: Կարծում էի...»:

«Լռի՛ր, Լի Թա Վեյ: Հանգրո՛ւ լույսը և զեկուցի՛ր ինձ վաղն առավոտ-
յան»:

Հաջորդ առավոտյան պարոն Վանը Տա Տունգին մեղադրեց իր դասըն-
կերների կյանքը և դպրոցի գույքը վտանգի ենթարկելու համար: Առաջին
հանցանքի համար Տա Տունգը թեթեւ պրծավ. գրանցեցին նրա հանդեպ
«մեծ անվստահություն»: Եթե նորից նման լուրջ հանցանք գործեր, կվ-
տարվեր դպրոցից: Անօգուտ էր վիճել պարոն Վանի հետ: Նա չէր ընդունի
այն պատճառաբանությունը, թե մոմերն ավելի վտանգավոր չէին, քան
դպրոցի նավթի լամպերը, և որ Տա Տունգի՝ մոմի հանդեպ ունեցած անձ-
նական ուշադրությունն ավելի քիչ հնարավորություն կտար կրակի բռնկ-
ման, քան որոշ սովորողների՝ իրենց սենյակներում լամպերն առանց հս-
կողության թողնելը ժամը իննից մինչև ինն անց կես, երբ սիրում էին այ-
ցի գնալ մյուս սովորողների սենյակներ: Բացի այդ, դպրոցի կանոնների
հետ կատակ անել չէր կարելի: Երբ բոլոր մյուս սովորողները կատարյալ
կարգուկանոնի էին ենթարկվում, վիրավորական էր տեսնել, որ մի նորեկ,
և այն էլ ինքնաձայնաձայնակումով սովորող, համարձակվում է խախտել
դպրոցի կանոնները:

Տա Տունգը վճռել էր երկու կամ երեք ժամ ավելի ընթերցել գիշերը, և

ԱՅՈՒՆ ՇԻՒ

ոչինչ չէր կարող նրան ետ պահել: Քանի որ նրան չէին թողնում, որ իր սենյակում կարդա, նա սպասում էր մեկ ժամ, երբ գիտեր, որ պարոն Վանն արդեն անկողնում խոր քնած կլիսի, ապա դուրս էր գալիս, երբ եղանակը լավն էր, եւ պայծառ լուսին էր, ու գնում էր խաղահրապարակ՝ գիրքը ձեռքին: Իսկ եթե մութ էր լինում, նա ստիպված էր կանգնել զուգարանի դրսում գտնվող լամպի տակ: Դա նավթի փոքրիկ մի ճրագ էր, եւ լույսը շատ էր թրթռում: Ռեւեւ նրա աչքերը մի փոքր ցավում էին, բայց դա այն սակավաթիվ լամպերից էր, որ վառվում էր ամբողջ գիշեր: Եվ երբ մարդիկ էին երբեմն դուրս ելնում գիշերով, Տա Տունգն ստիպված արագ թաքցնում էր իր գիրքը եւ հեռանում դեպի զուգարան՝ հենց որ մոտեցող ոտնաձայներ էին լսվում: Արտաքնոցի փակ դռան ետեւում նա կարող էր կարդալը շարունակել: Այդտեղ տոթ էր ու գարշահոտ, բայց դա նրա միակ ապաստարանն էր եւ վերջին պատվարը՝ ընդդեմ ներխուժման ու նաեւ ընդդեմ տարերքի: Քանի որ երբ եղանակը վատն էր լինում, նա ստիպված էր իր ամբողջ ճամնակն անցկացնել արտաքնոցի փակ դռների ետեւում:

Դպրոցի ղեկավարության համար երկար չտեսեց, որպեսզի հասկանալիս, որ կարող են Տա Տունգի ծառայություններն ավելի արդյունավետ օգտագործել, քան նրան պարզապես այգեպանի օգնական կարգելն է: Դպրոցի հիմնադրումից ի վեր միսիոներներն անընդհատ դժվարությունների էին հանդիպում չինարեն սովորեցնող լավ մասնագետներ ձեռք բերելու հարցում: Իրենց հարգող չինացիների մեծ մասը չէր ցանկանա ընդհանուր ոչինչ ունենալ օտարերկրացիների կողմից ղեկավարվող դպրոցի հետ, այդ իսկ պատճառով առաքելությունը պետք է ստանձներ նա, ում կարող էին գտնել քրիստոնյաների մեջ, որոնց մեծամասնությունը, դժբախտաբար, չինական դասականներին քաջատեղյակ չէր՝ համապատասխան կրթություն չունենալու պատճառով: Այդ ժամանակ միայն մեկ մարդ կարող էր ուուցանել չինական դասական գրականություն, որի ժամանակը չափազանց սուղ էր, քանի որ խիստ զբաղված էր երկու դպրոցների թե՛ տղաների, թե՛ աղջիկների շարադրություններն ստուգելով: Չինարեն առարկաների երկու այլ ուսուցիչներ կային, բայց նրանք շատ հեռու էին փորձառու մասնագետ լինելուց, եւ նրանց համար բավականին դժվար էր երեխաներին Չինաստանի պատմություն ու աշխարհագրություն սովորեցնելը, առարկաներ, որոնցից իրենք էլ շատ քիչ գիտելիքներ ունեին: Կար նաեւ պարոն Վանը, որը, չնայած ծանրաբեռնված էր դպրոցի աշխատանքներով, ստիպված էր մի քանի դասարանների ուսուցանել, ինչը նա շատ դժվարին մի աշխատանք էր համարում: Շուտով ակնհայտ դարձավ, որ Տա

Տունը շատ ավելի բան գիտե պատմությունից ու աշխարհագրությունից, քան ուսուցիչները: Բացի այդ, նա կարող էր բանիմաց կերպով չհնարեն սովորեցնել կրտսեր դասարանների երեխաներին: Բայց պարոն Սային բնավ դուր չէր գալիս այն միտքը, որ ինքնաձայնաձայնակա սովորող գեղջուկ տղան ուսուցանելու համար դասեր ստանձներ: Այդ իսկ պատճառով նա միայն համաձայնեց թողնել Տա Տունգին, որ ստուգի շարադրություններն ու մյուս փաստաթղթերը՝ չհնարենի ուսուցչին օգնելու համար:

Տա Տունգի նոր՝ ուսուցչական պարտականությունները հեշտ էին ու թեթև եւ նրա համար ամեն շաբաթ մի փոքր հանգիստ էին ապահովում, քանի որ այժմ արդեն նա ազատ էր իր ձեռքի աշխատանքից, որ կատարում էր այգում: Օգտվելով առիթից՝ նա առաջին հերթին փորձեց տեսնել իր հորեղբոր կնոջն ու ընկերներին գյուղում եւ կեսօրից հետո այցի գնաց տիկին Վուին, երբ նրա երկրորդ ազատ օրն էր: Լուտոսի Բուրմունքին էր, որ ուզում էր տեսնել, բայց Շիաո Մինը եւ նրա մայրն էլ էին այդտեղ: Տիկին Վուն, որ արդեն շատ ծեր էր, բայց դեռ իշխում էր տանը, զարմացավ տեսնելով տղային:

«Տա Տունգ, իսկ ես կարծում էի, թե դու բանտում ես»:

«Ոչ, տատիկ,- պատասխանեց Տա Տունգը:- Ես դպրոց եմ գնացել, միսիններական դպրոց»:

«Ծիծաղելի մի՛ լինի, մայրիկ,- միջամտեց Լի Մինի այրին:- Նրա հորեղբայր Կանն էր, որ մի քանի օր բանտարկված էր, դու միշտ նրանց խառնել ես քո մտքում»:

«Հա՛ որ: Մոռացել եմ,- ասաց տիկին Վուն:- Հիմա միսիններական դպրոցում ես»:

«Դա մի տեղ է, ուր «բարբարոս սատանաները» սովորեցնում են տղաներին ափիոն ծխել»,- ասաց նրա դուստրը:

«Իրո՞ք: Ինչպիսի՞ խայտառակություն»,- բացականչեց տիկին Վուն :

«Չէ՛,- բողոքեց Տա Տունգը:- Ծիշտ է, որ այնտեղ մի քանի օտարերկրացի կա, բայց նրանք բարբարոս չեն, եւ ոչ ոքի էլ թույլ չեն տալիս ծխել դպրոցում, անգամ նարգիլե , էլ ուր մնաց՝ ափիոն»:

«Բայց ես հիշում եմ, որ քո... Շիաո Մինի հայրն ինձ ասում էր՝ երբ բարբարոս բրիտանացի սատանա առեւտրականների պատվիրակն ուզում էր, որ մենք թողնենք իր մարդիկ գան Չինաստան, մեր իշխան Գունը նրան ասել է. «Եթե քո մարդիկ չեն գալիս որպես միսիններներ, որոնք ափիոն են վաճառում, ապա ողջունում ենք նրանց»...»:

«Ոչ,- ուղղեց Տա Տունգը:- Ես նույնպես հիշում եմ: Իշխան Գունն ասել

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Է. «Եթե քո մարդիկ չեն գալիս որպես միսիոներներ կամ ափիոն վաճառողներ, ապա ողջունում ենք նրանց»: Միսիոներներն ամենեին հավանություն չեն տալիս ափիոն ծխելուն: Միայն անզիացի վաճառականներն են, որ ափիոնի առետրով են զբաղվում»:

«Միսիոներները,- ասաց տիկին Վուն:- Կարծում եմ գիտեմ, թե ինչ են նրանք: Նրանք բարբարոս հեթմներ են, որ մարդկանց բուժում են խորհրդավոր ու անհասկանալի միջոցներով, ապա հանում են մեռած մարդկանց ակնախնձորները, որպեսզի դրանք օգտագործեն իրենց բժշկության մեջ»:

«Ոչ,- շտապով ասաց նրա դուստրը:- Նրանք ակնախնձորներն օգտագործում են, որպեսզի կապարից արծաթ ստանան: Նրանք երեք հարյուր երեսուն թաեյ են տալիս յուրաքանչյուր չինացու, ով համաձայնում է «կրոն ուտել» եւ քրիստոնյա դառնալ, եւ երբ այդ մարդը մեռնի, բարբարոս միսիոները կգա ու կհանի նրա ակնախնձորները»:

«Լրիվ տուտ է,- ասաց Տա Տունգը:- Ես «կրոն եմ կերել» ու հիմա քրիստոնյա եմ եւ գիտեմ, որ դա կատարյալ անհեթեթություն է»:

«Հո չե՞ս ուզում ասել, որ «կրոն ես կերել» եւ դարձել ես քրիստոնյա», - միաբերան զարմանքով հարցրեցին բոլորը, որ գտնվում էին միջնասենյակում:

«Այո,- ասաց Տա Տունգը:- Եվ մի՛ հավատացեք այդպիսի ծիծաղելի պատմությունների: Հանել ակնախնձորնե՛րը, որպեսզի կապարից արծաթ ստանան: Գիտականորեն դա անհնար բան է»:

Հասարակ մարդիկ կրոնափոխ լինելը սովորաբար անվանում են «կրոն ուտել»: Թերեւս այս արտահայտությունն իր ծագումն ու բացատրությունն ունի, որովհետեւ որոշ վաղ չինական քրիստոնյաներ այնպիսի մարդիկ էին, որ չէին կարողանում ապրուստ վաստակել, եւ երբ դարձել էին քրիստոնյա, հանկարծ տեսել էին, որ «ուտելու բրինձ ունեն»:

Մեծ դժվարությամբ կարողացավ Տա Տունգը նրանց հասկացնել, որ օտարերկրացիները, չինացիների նման, ողջամիտ մարդ արարածներ են, վատագույն դեպքում ունեն իրենց բնորոշ սովորույթներն ու ավանդույթները: Բայց նրանց տարօրինակ տեսքը եւ արտառոց կենսակերպը անտեղյակներին թերահավատ էր դարձնում: Չինական ունետր ընտանիքների կանայք, ովքեր հազվադեպ հնարավորություն ունեն տեսնել օտար մարդկանց, հազիվ թե կարող էին հույս ունենալ, թե կհանդիպեն օտարերկրացու: Այդպիսի ծիծաղելի մարդկանց նկարագրությունը նրանց տեսած մարդկանց կողմից՝ լսողների համար գրեթե անհավատալի էր թվում:

Տիկին Վուն հավաստիացումներ էր ուզում Տա Տունգից, որն այժմ անմիջականորեն էր տեղեկացված նրանց մասին:

«Այո բարբարոս մարդիկ իրո՞ք կարմիր մազեր ունեն», - հարցրեց նա:

«Այո,- պատասխանեց Տա Տունգը:- Տիկին Մայի մազերը դեղնակարմիր են, իսկ պարոն Մայինը՝ ավելի շուտ դարչնագույն են»:

«Ինչ տարօրինակ է,- բացականչեց տիկին Վուն:- Իսկ նրանց աչքերը կանա՞ջ են»:

«Ես կասեի՝ կապտականաչ»:

«Եվ ամբողջովին մազաճա՞ծկ են, ինչպես գորիլլան»:

«Դե, նրանց ձեռքերը կարծես թե մերիկից ավելի մազոտ են, բայց նրանց մարմնի մյուս մասերի մասին չգիտեմ»:

«Իսկ ուտելիքի՞ մասին ինչ կասես, Տա Տունգ,- հարցրեց Լի Մինի կինը:- Իսկապե՞ս նրանք տավարի հում միս են ուտում մե՞ծ կտորներով»:

«Ոչ այնքան: Տավարի մսի մե՞ծ շերտեր, այնքան էլ շատ չկարմրեցրած...»:

«Եվ սկզբում ապո՞ր են ուտում, փոխանակ մեզ նման վերջում ուտեն»:

«Այո»:

«Եվ փայտիկների փոխարեն էլ դանակ ու մկրա՞տ են գործածում»:

«Դանակ ու պատառաքաղ»:

«Եվ տղամարդը շրջազգեստ է հագնում, իսկ կինն անդրավարտիք ու երկար խալա՞թ»:

«Պարոն Ման հիմնականում վերարկու է անդրավարտիք է հագնում, բայց երբեմն հագնում է վանդակավոր գործվածքից շրջազգեստ: Նա շուտ-լանդացի է: Տիկին Ման միշտ երկար զգեստ է հագնում, ոչ այնքան մեր խալաթների նման, եւ շատ հազվադեպ՝ կարճ տաբատ»:

«Եթե ասողը դու չլինեիր, դժվար թե հավատայինք»:

Մի կարեւոր բան էլ կար նրա մտքում, որ ուզում էր պարզել:

«Քանի որ նրանք ամեն ինչում մեր հակապատկերն են, արդյո՞ք ծիծաղում են, երբ տխուր են, եւ արտասվում են, երբ ուրախ են»:

«Իհարկե ոչ: Գուցե՞ս տեսչով փոքր-ինչ տարբեր են մեզնից, բայց հոգու խորքում այնպիսին են, ինչպիսին մենք»:

«Մենք չգիտենք ինչ կա նրանց սրտում ու հոգում: Օրինակի համար, մեր հոգեւորականները եւ կրոնավորները հասարակ մարդկանց խրախուսում են ու քարոզում բարիք գործել, իսկ այդ միսիոներները պաշտպանում ու թաքցնում են գողերին ու խարդախներին, եւ դա անվանում են կրոն»:

«Դա այնքան էլ ճիշտ չէ: Միսիոներները մտահոգված են նրանով, որ

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

մարդկանց քրիստոնյա դարձնեն բարի մտադրություններով: Բայց նրանց մեջ կան որոշ անբարեխիղճ անծինք, որոնք հույս ունենալով ավելի շատ մարդկանց համոզել, որ իրենց մոտ գան, փորձում են պաշտպանել նրանց՝ նույնիսկ երբ նրանք խախտում են օրենքը: Ամեն անգամ, երբ դատական գործընթացներ են լինում քրիստոնյաների եւ ոչ քրիստոնյաների միջեւ, այդպիսի միսիոներները, բնականաբար, շտապում են օգնության հասնել իրենց նորադարձներին եւ ամեն ինչ անում են նրանց պաշտպանելու համար: Ֆրանսիացի կաթողիկոսներն այնքան հեռուն են գնում, որ նստում են դատավորների կողքին, եթե հարցը վերաբերում է իրենց կրոնն ունեցող որեւէ մեկին»:

«Հիմա երբ դու «կերել ես կրոն» ու դարձել քրիստոնյա, կարո՞ղ է դատավորը դարձյալ քեզ ձերբակալել», - միջամտեց Լուտոսի Բուրմուկը:

«Իհարկե ոչ, - պատասխանեց նրա մայրը: - Նա հիմա բարբարոսների թվին է պատկանում»:

«Զգիտեմ, - ասաց Տա Տուկը: - Նրանք երեւի ինձ բանտից կհանեն, բայց ես չգիտեմ պատկանո՞ւմ եմ արդյոք նրանց թվին»:

«Ինչպե՞ս դարձար քրիստոնյա», - Լուտոսի Բուրմուկը հրճվալից հուզմունք էր ապրե՞լ լսելով, որ Տա Տուկը կարծես թե ազատ էր չինական օրենքից:

«Շատ պարզ ու հասարակ: Պարզապես մկրտվելով»:

«Արդյոք նրանք քեզ լողացրե՞լ են մե՞ծ ջրավազանում»:

«Ոչ...», - սկսեց Տա Տուկը, բայց Լի Մինի այրին ավելի լավ գիտեր:

«Նրանք կապում են աչքերդ եւ տանում ջրափոսի ափ: Վանահայրը... այսինքն՝ բարբարոս սատանան... ինչ-որ հմայիչ խոսքեր է արտաբերում եւ քեզ հրում է ջրի մեջ»:

«Ո՛չ, - բողոքեց Տա Տուկը: - Ամենեւին այդպես չի եղել: Նրանք...»:

«Բայց ես մի կնոջ գիտեմ, որ այդպես է մկրտվել: Ի դեպ, նա դրանից հետո շոտով մահացավ, որովհետեւ մկրտությունը ձմռան օրով էր եղել, եւ նա սարսափելի մրսել էր»:

«Ճիշտ չես ասում...», - Տա Տուկը փորձում էր բացատրել:

«Նա ճիշտ է, - ասաց տիկին Վու: - Բոլոր բարբարոս սատանաները մե՞ծ ջրափոս ունեն իրենց տներում: Հիշում եմ ինձ ասել են, որ նրանք լողանք են ընդունում այդ ջրափոսերում... եւ տղամարդիկ ու կանայք միասին են գնում ու լողանում: Անամոթ արարածներ են դրանք»:

«Նրանք միասի՞ն են գնում ու լողանում, - հետաքրքրվեց Շիաո Մինը: - Ինչ զվարճալի՛ է»:

«Ո՛չ,- ասաց Տա Տունգը:- Այդ ճապոնացիներն են, որ խառն են լողալու, ոչ թե եվրոպացիները»:

«Եթե ճապոնացիներն այդպես են անում, նրանք բոլորը պետք է որ այդպես անեն,- բացականչեց տիկին Վուն:- Դրանք բոլորն էլ բարբարոսներ են»:

Տա Տունգն ստիպված էր գրոյցի թեման փոխել՝ խոսելով դասարանների ու դասերի մասին եւ ասաց նրանց, որ ուսուցման համակարգը շատ լավն է: Նա ասաց, որ այդտեղ չիւարեն, անգլերեն, գիտություն, պատմություն ու աշխարհագրություն ուսուցանելու հետ մեկտեղ ուսուցանում են նաեւ երաժշտություն, նկարչություն, խաղեր եւ ֆիզիկական պատրաստվածություն: Տարեցները շատ չէին տպավորված, բայց երկու երիտասարդների՝ Շիաո Մինի եւ Լոտոսի Բուրմունքի համար դա կարծես հայտնություն էր: Շիաո Մինը, որը դեռ շարունակում էր յուրաքանչյուր տարեկանի մասնավոր նոր ուսուցիչ ունենալ, հատկապես շատ էր հետաքրքրված այդ դպրոցով: Ուսումնական ծրագրում ընդգրկված երաժշտությունը, խաղերը եւ նկարչությունը ճշմարտություն լինելու համար չափից դուրս լավ էին հնչում: Դառնալով մորը՝ նա ասաց. «Ինձ դուր է գալիս այդպիսի դպրոցը: Փոխանակ մյուս տարի մասնավոր ուսուցիչ վարձելու, ինչո՞ւ չի կարելի թույլ տալ, որ Տա Տունգի հետ սովորեմ նրա դպրոցում»:

«Հիմարություն, տղաս,- ասաց տիկին Վուն:- Մենք չենք ուզում, որ դու «կրոն ուտես» եւ դառնաս զգվելի քրիստոնյա»:

«Բայց դպրոց ընդունվելու համար քրիստոնյա լինելու կարիք չկա,- միջամտեց Տա Տունգը:- Ես ստիպված էի քրիստոնյա լինել, որովհետեւ հնարավորություն չունեի վճարելու ուսման վարձը: Մեր դպրոցում հարուստ աշակերտների մեծ մասը քրիստոնյա չէ: Հենց որ կարողանամ որոշակի գումար վաստակել եւ վճարել իմ վարձը, կհրաժարվեմ իմ քրիստոնեությունից»:

«Իրո՞ք կարող էիր դպրոց ընդունվել առանց քրիստոնյա լինելու, Տա Տունգ,- հարցրեց Լոտոսի Բուրմունքը:- Ո՛նց կուզեի, որ այդպիսի դպրոց լիներ աղջիկների համար»:

«Այո,- ասաց Տա Տունգը:- Կա: Տիկին Ման մասնավոր մի դպրոց է դեկավարում այդտեղից ոչ հեռու»:

«Ես ուզում եմ միսիոներական դպրո՞ց գնալ: Ես ուզում եմ միսիոներական դպրո՞ց գնալ»,- միաձայն բացականչեցին Շիաո Մինն ու Լոտոսի Բուրմունքը:

Սկզբում նրանց խնդրանքները խիստ կտրուկ մերժում ստացան, բայց

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

երբ Տա Տուկը բացատրեց տիկին Վուին, որ դպրոցն իրականում այնքան վատը չէ, որքան իրենք են պատկերացնում, և երբ Լուտոսի Բուրմունքի մայրը, որը սովորաբար լուռ էր, ասաց, որ դա կփրկի երեխաներին իրենց թանկարժեք ժամանակը տանը գուր վատնելուց, տիկին Վուին վերջապես համաձայնեց գնալ և տեսնել այդ դպրոցները նախքան որոշելը, թե ինչ են անելու: Երբ Տա Տուկը հրաժեշտ էր տալիս նրանց, Շիաո Մինը շուկով հարցրեց նրան. «Տա Տուկ, ասա ինձ, ինչպես տղամարդը տղամարդուն, ստո՞ւմ էիր, երբ ժխտեցիր, որ ձեր դպրոցում խառն են լողանում»:

Տիկին Վուի ցանկությունը՝ այցելել դպրոց իր թոռներին այնտեղ ուղարկելու նպատակով, Տա Տուկը փոխանցեց պարոն Մային, և հաջորդ օրը տիկին Ման բարեկամական մի հրավեր ուղարկեց տիկին Վուին և նրա ամբողջ ընտանիքին:

Քանի որ նման այցը դժվար թե պատշաճ լիներ առանց տղամարդու ուղեկցության, տիկին Վուին պատվիրեց իր որդուն, որ ղեկավարի այդ մեծ շրջագայությունը: Ծածկապատգարակների երկար շքախումբը դպրոցի պահակին վերափոխեց շատ քաղաքավարի ու սիրալիր մի անձնավորության: Նա ընտանիքին ուղեկցեց ընդունարան և շտապեց պարոն Մային ու տիկին Մային հայտնել այցելուների ժամանման մասին: Տիկին Վուին կարծում էր, թե մինչ օտարերկրացիների գալն իրենք թաքուն պետք է գննեին դպրոցները, ու իրենց տեսածը հաստատելու էր այն, ինչ կասկածում էին, և կարող էին տուն գնալ՝ առանց այդ բարբարոս ամուսինների կողմից ընդունելության անցանկալի արարողության: Բայց մինչ կհասցնեին ինչ-որ բան անել, պարոն Ման և Տիկին Ման արդեն եկել էին: Երբ տիկին Ման փորձեց սեղմել տիկնանց ձեռքը, նրանք շատ զարմացան և հրաժարվեցին: Սակայն տիկին Վուի որդու համար կարծես թե չափազանց հաճելի էր այս բարբարոսական ողջույնը, և տիկին Ման ստիպված էր մեծ ուժ ու ջանք գործադրել՝ իր ամուր սեղմված ձեռքը ետ քաշելու համար: Երբ պարոն Ման առաջ մեկնեց իր մեծ ձեռքը, իսկ այն, իրոք, շատ մազոտ էր, կանայք քիչ մնաց ուշաթափվեին, և տիկին Վուին որդուն պատվիրեց՝ պարոն Մայի հետ ձեռքսեղմումի ամբողջ արարողությունը կատարել ողջ խմբի փոխարեն: Տիկին Վուին զարմացած էր՝ տեսնելով, որ օտարերկրացի զույգը սահուն խոսում է չինարեն, թեև տարօրինակ առոգանությամբ: Նա ափսոսաց դրա համար, քանի որ արդեն չէր կարող բարձրաձայն արտահայտել իր անկեղծ կարծիքը՝ առանց վիրավորելու իրենց հյուրընկալող ամուսիններին: Տիկին Ման շատ հյուրընկալ էր և համառորեն խնդրում էր, որ խումբը թեյի իր տանը՝ նախքան դպրոցներին ծանոթանալը: Տիկին

Վուն կնախընտրեք ամենեւին չընդունել այդ հրավերը, բայց ստիպված էր հետեւել իր որդուն, որն արդեն տանտիրուհու հետ կողք կողքի քայլում էր դեպի տուն: Ստեյվը նրանց առանձնատան փոքրիկ հյուրասենյակ՝ տիկին Վուն լսեց, թե ինչպես է իր որդին բարձրաձայն հռհռում: Տանտիրուհին շփոթված էր ու տարակուսած եւ հարցրեց, թե որն է այդ ուրախության պատճառը, իսկ տիկնայք ներս մտան եւ խիստ ամաչեցին ու շփոթվեցին՝ տեսնելով, որ պարոն Վուն տիկին Մային մատով ցույց է տալիս երկու մեծ աթոռների թիկնակներին զգված կանացի մի անդրավարտիք ու մի շրջազգեստ՝ երկուսն էլ գեղեցիկ, զուսավոր ատլասից, ճաշակով ու նրբակար ասեղնագործված:

«Ինչո՞ւ եք ծիծաղում», - հետաքրքրվեց տիկին Ման:

Ծիծաղից խեղդվելով՝ պարոն Վուն շարունակ զգեստներն էր ցույց տալիս:

«Մի՞թե լավը չեն: Ձերոնք ձեռքի սքանչելի աշխատանքներ ունեն»:

«Դրանք կանանց զգեստներ են՝ մարմնի ներքնամասի համար: Պատշաճ չէ դրանք այդպես ցուցադրել հանրությանը», - պարոն Վուն հաջողվեց զսպել ծիծաղը, երբ տեսավ, որ տանտիրուհին իրեն է կայում առանց ժպտի:

«Օ՛, դուք տարօրինակ պատկերացումներ ունեք: Մենք դրանք համարում ենք արվեստի գործեր, եւ ես հատուկ եմ այստեղ դրել, որպեսզի ձեզ հաճելի լինի», - ասաց տիկին Ման իր հյուրերին:

Չին կանայք շատ անհարմար էին զգում այդտեղ մնալու ընթացքում, երբ տեսնում էին այդ զգեստները՝ լրիվ ցուցադրված: Նրանք արագ ավարտեցին թեյախմությունը՝ մեն մի կում անելով եւ առանց դիպչելու թխվածքներին ու մյուս բաներին: Շնորհակալություն հայտնելով տանտիրուհուն ու տանտիրոջը՝ նրանք խնդրեցին, որ իրենց տանեն դպրոցները տեսնելու:

Չնայած թեյախմությունն այնքան գոհացուցիչ չէր, ինչպես տիկին Ման էր կարծում, տիկին Վուն չկարողացավ դպրոցների հետ կապված որեւէ թերություն գտնել: Երեխաներն ինչ-որ նախազգացումով ու վախով լրգարաններն էին փնտրում, եւ, ի թեթեւացում Լոտոսի Բուրմուկից, ինչպես նաեւ ի հիասթափություն Շիաո Մինի, դրանք ամենեւին այն չէին, ինչ որ կարծում էին՝ թե պիտի լինեին: Երբ խումբը եկավ տղաների դպրոց, Տա Տունգին հանձնարարեցին միանալ խմբին, որպեսզի բացատրություններ տար իր ազգակիցներին: Երբ Տա Տունգը ճանապարհել էր այցելուներին, նկատեց, որ դպրոցի պահակն առաջին անգամ ժպտում է իրեն:

Որպես այդ ընդունելության արդյունք՝ պարոն Ման եւ տիկին Ման ու-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

րախ էին՝ իմանալով, որ հաջորդ կիսամյակում կունենան լրիվ վարձավճար մուծող երկու սովորող: Եվ իր հարուստ ազգականների շնորհիվ դպրոցի ղեկավարները Տա Տունգին թույլատրեցին պատմություն եւ աշխարհագրություն ուսուցանել ամենացածր դասարանում: Այս լրացուցիչ ծառայության համար նա առատ վարձատրվում էր բարձր աշխատավարձով, որը, եթե շատ ինկամքով ծախսվեր, երիտասարդին հնարավորություն կտար հորեղբոր կնոջից գրպանի փող չվերցնել: Նա շատ գոհ էր առաջ-քաշումից եւ շտապեց հորեղբորը գրել այդ մասին:

Երբ նոր կիսամյակն սկսվեց, եւ՝ Շիաո Մինը, եւ՝ Լուտոսի Բուրմունքը գնացին իրենց համապատասխան նոր դպրոցները: Նրանք պարտաճանաչ կերպով գրանցվեցին հենց բացման օրը ոչ այն պատճառով, որ չէին կարող ուշացման համար տուգանք վճարել, այլ՝ որ շատ էին ձգտում ինչ-որ նոր բան սկսել: Թեեւ Լուտոսի Բուրմունքն իր դպրոցական կյանքից բավականություն էր ստանում նույնիսկ ավելի շատ, քան սպասում էր, Շիաո Մինի համար այն բավականին հիասթափեցնող էր: Նախ՝ նա վիրավորված էր՝ իմանալով, որ պետք է սկսի ամենասկզբից,- նրան աշակերտ էին նշանակել դպրոցի ամենացածր դասարանում,- եւ ապա՝ ուղղակի ցնցվեց, երբ իմացավ, որ մի քանի առարկայի իր ուսուցիչը Տա Տունգն էր լինելու: Միսիոներական դպրոցում բավականին յուրահատուկ ձեւով են դասացուցակ կազմում: Չինաստանում այդպիսի դպրոցներում սովորություն է եղել՝ հատուկ ուշադրություն դարձնել այն երկրի լեզվին, որին պատկանում է միսիոներական ներկայացուցչությունը, միևնույն ժամանակ՝ երեխաների մայրենի լեզուն, միշտ համարվում է ոչ ավելի, քան օժանդակ լեզու: Առավոտյան՝ օրվա ամենալավ ժամանակ, անգլերեն կամ ֆրանսերեն, որ լեզվով որ միսիոներն է խոսում, եւ մաթեմատիկա կամ գիտություն են ուսուցանվում լավ վճարվող ուսուցիչների կողմից, կեսօրից հետո չինարեն եւ այլ թեթեւ առարկաներ են սովորեցնում օգնականները եւ վերջերս դպրոցն ավարտած ինքնաձախսաձեռնվումով սովորածները:

Շիաո Մինը շատ ջանասեր աշակերտ չէր, իսկ տաք կեսօրին, անմիջապես այն բանից հետո, երբ մի լավ ճաշել էր, Տա Տունգի դասերին գալու ժամանակ միշտ քնկոտ էր ու թմրած եւ գերադասում էր մի փոքր ննջել, քան դասերին ուշադրություն դարձնել: Տա Տունգը համարձակություն ուներ խորհուրդ տալու Շիաո Մինին, որ իրեն պատշաճ պահի դասարանում, բայց երբ նրա այդ խոսքերն ազդեցություն չունեցան, նա այնքան աներբանկատ եղավ, որ խոսեց խիստ տոնով: Իհարկե, Շիաո Մինը չէր վախենում թշվառ ձկնորսի որդուց եւ, բնականաբար, մեծապես վիրավորված

զգաց իրեն, երբ մտածեց, որ ինքը՝ լրիվ վարձավճար մուծող ուսանողը, ստիպված է լսել ինքնաձախսածաձկումով սովորողի նախատիկը: Քանի որ հնարավորություն չկար դրա համարժեք պատասխանը տալու դասարանում, նա որոշեց իրենց հաշիվը մաքրել խաղահրապարակում, որտեղ կարող էին հանդիպել «ինչպես տղամարդը տղամարդու հետ»: Ընտրյալ մարդկանց վայել չէր խառնվել ամենացածր խավի ներկայացուցիչների հետ, բայց Շիաո Մինը դա արեց նպատակադրված, որպեսզի վեճ ու կռվի մեջ մտնի իր թշնամու հետ:

Միսիններական նմանատիպ դպրոցների չգրված օրենքներն այսպիսին են. երբ լրիվ վարձավճարով սովորողը վիճում է կես վարձավճարով սովորողի հետ, կապ չունի, թե ով է մեղավոր, կես վարձավճարով սովորողը պետք է պատժվի: Բայց երբ նա վիճում է ինքնաձախսածաձկումով սովորողի հետ, ապա վա՛յ ինքնաձախսածաձկումով սովորողին: Քանի որ Տա Տունգի համար գործնականում անհնար էր խուսափել Շիաո Մինից և նույնիսկ առավել անհնար էր չպաշտպանել ինքն իրեն, երբ հարձակման էր ենթարկվում, Տա Տունգը պարոն Վանի կողմից գնահատվեց որպես դպրոցի անպատվություն:

Կյանքը դպրոցում անտանելի կլիներ Տա Տունգի համար, եթե նա միթարություն չգտներ Լոտոսի Բուրմունքին շաբաթը մեկ տեսնելով մատուռում կիրակի օրերին, ինչպես նաև ուղղելով չինարեն գրված նրա թղթերը, ինչը միշտ էլ հաճույք էր տղայի համար: Լոտոսի Բուրմունքը նույնպես վայելում էր իր կիրակնօրյա առավոտները մատուռում, ոչ այն պատճառով, որ ընդհանրապես սիրում էր «մեր Հորը, որ յերկինս է», այլ նրա ուշքումիտքը միշտ մնում էր երկրի վրա և հատկապես շենքի ետեվի մասում, որտեղ կոշտ նստարաններ էին: Բացի կիրակի օրերից, Լոտոսի Բուրմունքի համար Տա Տունգի հետ շփվելու միակ այլ հնարավորությունը շաբաթ օրը կեսօրից հետո տնօրենի առանձնատանն անցկացվող «սոցիալական» կոչվող հավաքույթների ժամանակ էր: Դա տիկին Մայի մտահոգումն էր, որ աղջիկները պետք է վերապատրաստվեին, որպեսզի հյուրընկալ լինեն, և ամեն շաբաթ օր թեյախմության մի փոքրիկ հավաքույթ էր կազմակերպվում, որի ժամանակ ավելի մեծ աղջիկները պետք է լինեին տանտիրուհիներ: Ինքնաձախսածաձկումով սովորողներն, իհարկե, պետք է գային ոչ որպես հյուրեր, այլ որպեսզի օգնություն ցուցաբերեին այդ նրբագեղ երիտասարդ օրիորդներին, որոնք սովոր չէին ամենաչնչին իսկ լարումի: Նման դեպքերում Լոտոսի Բուրմունքը, որը միշտ հավաքույթի ոգին էր, և որի զարդանկարը դարձել էր տիկին Մայի հյուրասենյակի

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

գլխավոր հմայքը, բավարարվում էր Տա Տունգի հետ մի քանի բառ փոխա-
նակելով, բայց մշտապես դժվարին դրության մեջ էր հայտնվում՝ լսելով վի-
ճաբանությունը պարոն Սայի եւ տիկին Սայի միջեւ. ամուսինը կարծում էր,
որ Լոտոսի Բուրմունքի հայրը անկիրթ անձնավորություն է, մինչդեռ կինն
ասում էր, թե նա պարզապես սքանչելի է: Պարոն Սան ասում էր, որ չի
հասկանում, թե ինչու պիտի տղամարդն այդքան գռեհիկ ձեռով ծիծաղի
ևրբագեղ ասեղնագործած շրջագգեստի եւ անդրավարտիքի վրա, իսկ կի-
նը բացատրում էր, թե նա պետք է որ հումորի շատ ուժեղ զգացում ունե-
նա:

ՉԼՈՒԽ 7

*Մենք բարձր ենք գնահատում մեր սեփական գրվածքները,
Բայց նախընտրում ենք այլոց կանանց:*

Կուանզ Սյուի իշխանության քսաներեքերորդ տարում (1897-ին), երբ Շիաո Մինը տասնյոթ, իսկ Լոտոսի Բուրմունքը տասնվեց տարեկան էր, տիկին Վուն սկսեց մտածել, որ ցանկալի կլիներ երկու երիտասարդների ամուսնությունը: Նա իր մոտ կանչեց դստերը, որդուն ու հարսին եւ հայտնեց նրանց իր ցանկության մասին: Շիաո Մինի մայրը, թեեւ նրան դուր չէին գալիս Լոտոսի Բուրմունքի ծննդյան ու բախտացույցի արտառոց տվյալները, սկսել էր քնքշագին սեր տաձել աղջկա հանդեպ: Ովքեր տեսել էին Լոտոսի Բուրմունքին եւ հատկապես նրանք, ովքեր ճանաչում էին նրան, չէին կարող այլ կերպ վարվել: Հասակ առնելու հետ՝ նրա մանկական անհնազանդ ու չարաճճի պահվածքը վերաճել էր ուժեղ եւ հաստատակամ բնավորության: Նա իր բռնակալ տատի նման եռանդուն էր ու սրտաբաց եւ մոր նման հանդուրժող ու մտերմիկ: Տասնվեցամյա հասակը, որ հայտնի է որպես «երկու ութերի տարիք», աղջկա համար կյանքի ոսկե շրջանի սկիզբն է: Եվ տասնվեց տարեկանում ակնհայտ դարձավ, որ Լոտոսի Բուրմունքն արտաքնապես ժառանգել է իր նրբագեղ մայրիկի դասական գեղեցկությունը եւ արժանապատիվ տատիկի հիացմունքի արժանի վարքուբարքը՝ ավելացրած իր անձնական հմայքն ու թարմությունը: Միայն գեղեցիկ տեսքն ու ձեւը չէ, որ նշանակություն ունեն, քանզի մարդիկ շատ չեն հետաքրքրվում գեղեցկությամբ, որն ընդամենը մակերեսային մի բան է: Դրա օրինակ կարող է հանդիսանալ Փոքրիկ Ծիածանը, շատ սիրունատես մի աղախին, որ մի քանի տարի առաջ էր եկել այդ ընտանիքում ծառայելու, երբ Կապույտ Մարգարիտն ամուսնացել էր: Նա ընդամենը մի քանի տարի էր Լոտոսի Բուրմունքից մեծ եւ շատ առումներով ասես իր երիտասարդ տիրուհու նմանակը լիներ, այնքան, որ հեռվից մարդիկ չէին կարողանում մեկին մյուսից զանազանել եւ միայն հագուստով էին տարբերում: Նրա այտերն ասես սեխի երկու սերմ լինեին, աչքերը՝ աշնանային ջրով լի երկու լճակ, հոնքերը՝ ուռեւու մի գույգ տերեւ, իսկ բերանը՝ երկու մասի բաժանված հասուն մի բայ: Ուտերը կամարածեւ վար էին սահում, եւ իրանը սլացիկ էր ու դյուրաթեք: Նրա բազուկների եւ դաստակների յուրաքանչ-

յուր շարժումը սրբազան էր, իսկ մատները նման էին գարնան դալար հնդկե-
 դեզի մատողաշ ընծյուղների: Բայց մինչ Լոտոսի Բուրմունքը, որքան էլ որ
 երիտասարդ լիներ, իր ամեն ինչով լավ ընտանիքից ելած հրաշագեղ մի
 օրիորդ էր, Փոքրիկ Ծիածանը ծնունդով եւ դաստիարակությամբ մինչեւ
 ուղնուծուծն անկիրթ էր ու անտաշ: Սկզբում, երբ Շիաո Մինը դեռ սոր վաղ
 հասունացման շրջանում էր, նրան գրավում էր այդ աղախնի գեղեցկու-
 թյունը, եւ այդ աղջկա սանձարձակ բնույթը շատ բանով նպաստեց իր եւ
 տղայի միջեւ որոշ ժամանակ գոյություն ունեցող ոչ պատշաճ կապին:
 Բայց լինելով գիտակ` Շիաո Մինը շուտով հասկացավ, որ ինքն իրակա-
 նում Լոտոսի Բուրմունքի նման մեկին է ցանկանում, եւ սկսեց խուսափել
 աղախնու հետ հանդիպելուց` այդ ընթացքում սիրահետելով իր սրտի երի-
 տասարդ տիրուհուն: Ցավոք, Լոտոսի Բուրմունքը չափազանց երիտա-
 սարդ էր, որպեսզի գնահատեր ուշադրության այդպիսի նշանները: Այդ
 պատճառով էլ միակ խելամիտ բանն այն էր, որ Լի Մինի այրին լիովին ան-
 տեսեր թաքուն պայմանավորվածությունը, որին համաձայնություն էր
 տվել, երբ իր ամուսինը ողջ էր, եւ նա պատրաստակամորեն ասաց իր մո-
 րը, որ ոչինչ իր համար ավելի հաճելի չի լինի, որքան Շիաո Մինի եւ Լոտո-
 սի Բուրմունքի շուտափույթ հարսանիքը: Բացի այդ, նա միայն չափա-
 զանց մեծ ցանկություն ուներ թոռ տեսնելու, եւ պիտի առաջարկեր նույն
 բանը, եթե իր մայրն անտեսած լիներ այս կարեւոր հարցը: Նա գիտեր, թե
 որքան շատ է որդին տենչում Լոտոսի Բուրմունքին: Նրա եղբայրը ժպտաց
 եւ կարծես խիստ գոհ էր, որ իր դուստրն այդքան ցանկալի է: Բայց Լոտո-
 սի Բուրմունքի մայրը մի տեսակ անհանգիստ ու տազնապաճ նայեց տա-
 լին եւ շփոթահար էր Շիաո Մինի մոր հանկարծակի փոխված վարմունքից:
 Որոշ վարանումից հետո նա ստիպված էր տալին հիշեցնել. «Բայց այդպես
 շտապելու կարիք չկա: Աղջիկս դեռ շատ երիտասարդ է եւ, գուցե, ավելի
 լավ է սպասել, մինչեւ երեք երեխաներն ավարտեն դպրոցը: Կարծում եմ
 տալս այլ պայմանավորվածություններ ունի...»:

«Երեք երեխանե՞րը: Տիկին Վուն զարմացած էր: Եվ ի՞նչ այլ պայմա-
 նավորվածություններ ունի, ասացե՛ք խնդրեմ: Չհամարձակվե՛ն մյուս
 անգամ այդ լակոտի մասին ինձ հիշեցնել»:

Լի Մինի այրին նշան արեց հարսին` մոռանալ այլ պայմանավորվածու-
 թյունների մասին, իսկ պարոն Վուն հավելեց. «Ես դա ընդունել եմ որպես
 կատակ: Իհարկե, մենք արդեն վաղուց մոռացել ենք իմ պատվարժան հա-
 նգուցյալ եղբոր այդպիսի անհեթեթ քմահաճույքը»:

«Այդուհանդերձ, Լոտոսի Բուրմունքը հազիվ տասնվեց տարեկան է,

մենք պետք է սպասենք մի քանի տարի...»,- շարունակեց պնդել նրա կինը:

«Շատ լավ, թող ամուսնությունը տեղի ունենա մեկ տարվա ընթացքում: Նույնիսկ դա չափից դուրս շատ ժամանակ է ինձ համար: Եվ այնուհետև չսե՛մ պատճառաբանություններ», - խոսքը եզրափակեց տիկին Վուն: Նա հարսի առարկությունը վերագրեց գավակի հանդեպ ունեցած մոր բնական սիրուն եւ ասաց, որ լիովին կարող է հասկանալ, որ մայրը չի ուզում ամուսնացնել իր միակ դստերը: Այնպես որ պատվիրեց Լի Մինի այրուն՝ երեխաների ծննդյան տվյալները տալ բախտացույց-գուշակին եւ խնդրել նրան, որ հաջորդ տարվա մեջ բարենպաստ մի օր ընտրի երջանիկ իրադարձության համար:

Երբ աստղագուշակը քննեց տվյալները, Շիաո Մինի մորն ասաց, որ աղջկան ամուսնացնելու ամենանպաստավոր ամիսը տարվա 12-րդ ամիսը կլինի: Շիաո Մինի մայրը, որը շատ էր ուզում արարողությունը շուտ կատարվի, ասաց, որ սպասելը շատ երկար կտեւի, դրա համար էլ որոշեցին հարսանիքն անել ոչ թե հաջորդ, այլ այդ տարի: Աստղագուշակը, շատ գրքեր ամենայն ուշադրությամբ կայելուց եւ տղայի ու աղջկա ծնոյան տվյալներն ուսումնասիրելուց հետո, այդ կնոջն ասաց, որ տվյալ տարվա 12-րդ լուսնի 24-րդ օրը շատ հարմար կլինի: Քանի որ ապագա հարսնուհիեսան, աստղագուշակության լեզվով ասած, որոշ չափով յուրահատուկ «դասավորություն» ունեին, այն օրը, որ հայտնի էր որպես Փոքր Նոր տարվա օր, միակ օրն էր, երբ կարելի էր հարսանիքն անել՝ առանց վնաս պատճառելու երկու ընտանիքների անդամներին: Շիաո Մինի մայրը բավարարված էր, եւ աստղագուշակն ըստ այդմ ամսաթիվը գրի առավ մի կտոր կարմիր թղթի վրա: Կինը մեծ ինամքով վերցրեց այն եւ աստղագուշակի ծառայությունների համար վճարելուց հետո գնաց, որ հայտնի մորը:

«Մայրիկ, շնորհավորանքներս: Ահա երեխաների հարսանիքի համար բարենպաստ օրը»:

Տիկին Վուն վերցրեց թուղթը եւ աղջկանից հարցրեց հարսանիքի օրը, քանի որ չէր կարող սպասել, մինչեւ ակնոցը գտնի, որպեսզի կարդա:

«12-րդ լուսնի 24-րդ օրը, մայրիկ»:

«Բայց դա շատ ուշ կլինի: Համարյա երկու տարի հետո: Չէ՞ր կարող ավելի շուտ մի օր գտնել մյուս տարվա մեջ»:

«Չէ, ասաց, որ չի կարող: Բայց ես նրան ասացի, եթե դա պետք է լինի տարվա վերջին լուսնի ժամանակ, լավ կլինի, որ մյուս տարվա փոխարեն այս տարի արվի, այնպես որ իրականում ամսաթիվը այս տարվա 12-րդ լուսնի 24-րդ օրն է եւ այնքան էլ շատ ուշ չէ, ինչպես կարծում էինք: Եվ կար-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ծում եմ, մայրիկ, երիտասարդ զույգը կրկնակի երջանիկ կլինի, երբ միավորումը լինի անմիջապես Նոր տարվա տոնից առաջ»:

«Ինձ դուր չի գալիս ամսաթիվը: Գիտես, որ դա Փոքր Նոր տարվա օրն է, այն օրը, երբ բոլոր աղքատ ընտանիքներն ամուսնացնում են իրենց երեխաներին: Դա, փաստորեն, միակ օրն է ամբողջ տարվա մեջ, երբ չես կարող վախենալ, թե որտե՛ս չար ոգի իր ազդեցությունը կգործի այդ ժամանակ: Դրա համար էլ աղքատ մարդիկ, որ հնարավորություն չունեն աստղագուշակին դիմելու, իրենց երեխաներին միշտ հենց այդ օրն են ամուսնացնում: Այդ մարդը քեզ խաբել է: Օրն ինձ ամենեւին դուր չի գալիս»:

«Բայց, մայրիկ, վախենամ, որ նա ամենայն ուշադրությամբ զննեց իր բոլոր գրքերը, եւ ինձ ասաց՝ դա միակ հնարավոր օրն է, որ ինքը կարողացավ գտնել՝ հաշվի առնելով հարսի ու փեսայի ծննդյան տվյալները»:

«Օ, վատ է: Իրոք, շատ վատ է,- մտազբաղ ասաց տիկին Վուն:- Դե, քանի որ թվում է արդեն որոշված է, ուրեմն շտապենք նախապատրաստություն տեսնել»:

Երբ Լոտոսի Բուրմունքի մայրը լսեց այս մասին, նորից փորձեց, ավելի հուսահատ, քան երբեւէ, տարհամոզել նրանց: Քանի որ նա հասկացավ, որ հնարավոր չէ հարսանիքն անվերջ հետաձգել, մեկ անգամ էլ խնդրեց սպասել զոնե մի քանի տարի, որովհետեւ երեխաները դեռ շատ երիտասարդ էին ամուսնանալու համար: Բայց նրա խոսքերը ոչ մի ազդեցություն չունեցան, եւ սկեսուրը խիստ տոնով ասաց. «Նետաքրքիր է՝ հասկանում ես, որ ես համարյա ութունչորս տարեկան եմ, եւ հիմա շատ հաճախ եմ զգում հողի բույրը: Սա նշանակում է, որ գերեզմանս կանչում է ինձ: Ես չեմ ուզում մեռնել այս երեխաների երջանիկ ամուսնությունը չտեսած: Էլ այս մասին որտե՛ս առարկություն չսե՛մ»:

Քանի որ Լոտոսի Բուրմունքի մայրը չէր կարող վիճել սկեսրոջ հետ, միակ բանը, որ մնում էր անել, դստերը հայտնելն էր, որ երբ Լի Սինը ողջ էր, թաքուն պայմանավորվածություն կար, որ Լոտոսի Բուրմունքը պետք է նշանվեր Տա Տունգի հետ: Աղջիկն, այս լուրը լսելով, բողոքեց եւ լաց եղավ տատի առջեւ, բայց քանի որ լավ ընտանիքի երիտասարդ օրիորդների համար ամենեւին պատշաճ չէր անկեղծորեն ասել, թե ում հետ կուզեին ամուսնանալ, ի՞նչ կարող էր անել տասնվեցամյա աղջիկը: Նա անընդհատ երդվում էր, որ երբեք չի ամուսնանա, այլ կմնա պառաված օրիորդ: Բայց երիտասարդ ամաչկոտ աղջիկները միշտ այդպես են վարվում: Երբեք էլ իրենց ասածը նկատի չունեն:

Տիկին Վուն մեծամասշտաբ ու կարեւոր անելիք էր ծրագրավորում, եւ

Նրա խորհրդով էր, որ դուստրը մի հողակտոր գնեց մոտերքում ու նախատեսում էր այդ հողակտորի վրա նոր տուն կառուցել երիտասարդ զույգի եւ ապագա երեխաների համար: Տիկին Վուին հաջողվեց նույնիսկ հասնել այն բանին, որ իր անառակ որդին մի քանի ամսով տանը մնա իրենց օգնելու համար, եւ թվում էր, թե բոլորը երջանիկ են, բացի Լոտոսի Բուրմուլընցի եւ նրա մորից:

Տառի հետ մի քանի սարսափելի վեճ ու կռվից հետո աղջիկը հանկարծ դարձավ բավականին լռակյաց, եւ ասում էին, թե ապագա հարսնացուն արդեն տվել է իր լրիվ համաձայնությունը, ինչպես սովորաբար վարվում են բոլոր ընդվզող երիտասարդ օրիորդները:

Երբ նոր շենքի հիմնակմախքն արդեն պատրաստ էր, մի բարեհաջող օր ընտրեցին, որպեսզի տան ամենաբարձր հեծանը տեղադրեն: Որպես կանոն՝ ատաղձագործների եւ որմնադիրների պատվին խնջույք է տրվում, եւ հատուկ արարողություն է կատարվում: Բարեկամներն ու հարազատները եկան իրենց նվերներով, եւ տիկին Վուին մեկն էր երջանիկ հյուրերից, որոնք այդտեղ էին, որպեսզի տեսնեին արարողությունը եւ շնորհավորեին տանտիրոջը: Հենց որ մայրու փայտից պատրաստված հեծանը տեղադրվեց, երկու կաշաղակ ցած իջան ու թառեցին հեծանին եւ սկսեցին անընդմեջ կանչել. «Չըք, չըք, չըք»: Չինաստանում կաշաղակները հայտնի են որպես «երջանկության թռչուններ»:

«Նայի՛ր, մայրիկ,- ասաց հպարտ դուստրը:- Երջանկության թռչունների զույգ է եկել իմ տուն բարեպատեհ ժամանակ: Կարծում եմ՝ մյուս տարի հաստատ տատիկ եմ դառնալու»:

«Քշե՛ք դրանց, հեռո՛ւ քշեք,- գոչեց տագնապած պառավը: - Դրանք վատ նախանշան են բերում»:

«Ախ, մայրիկ, դու հաստատ ծերությունից մանկամիտ ես դարձել,- հանդիմանեց երջանիկ դուստրը:- Ագռավներն են վատ նախանշան բերող թռչուններ: Իսկ սրանք կաշաղակներ են: Սրանք երջանկություն են բերում»:

«Չէ, աղջիկս,- լուրջ ու մռայլ ասաց տիկին Վուին:- Դու չես հասկանում, որ այսպիսի դեպքում ագռավն է ցանկալի, քանի որ կանչում է «դա, դա» (որ նշանակում է «երկարածգել»), իսկ կաշաղակը ցանկալի չէ, քանի որ կանչում է «չըք, չըք» (որ նշանակում է «ավերել»):»

Ծեր կինը ճիշտ էր. կաշաղակի ձայնն այս դեպքում որոշակիորեն նշանակում էր «ավերել, ավերել»: Նրանք հեռու քշեցին թռչուններին, բայց հպարտ տանտիրուհուն գցեցին փոքր-ինչ վիատ ու ընկճված վիճակի մեջ:

Կա չինական հայտնի մի ասացվածք.

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Աշխարհիկ գործերի հստակ ըմբռնումը ակադեմիական գիտելիքի արժեք ունի,

Մարդկանց հետ շփվելու հարուստ փորձառությունը հավասարազոր է գրագետի իմացության»:

Շիաո Մինն այսպիսի ուսմունքների խիստ հետետորդ էր: Ի տարբերություն Տա Տուևգի, որին ևս համարում էր անօգուտ գրամուլ, գրքի որդ, որ կուրորեն կրծում է հատոր հատորի ետեւից, Շիաո Մինն իր աչքերը լայն բացած էր պահում կյանքի հնարավորությունների առջեւ և մեծ գիտելիք ու կենսափորձ էր ձեռք բերել, ինչը Տա Տուևգը երբեք չէր կարող հուսալ, թե ձեռք կբերի կարդալով: Քանի որ Շիաո Մինը հասակ էր առել ու դպրոցում մտերմացել էր քաղաքի ամենահարուստ և ազդեցիկ ընտանիքների որդիներից մի քանիսի հետ, ևս շատ երջանիկ, հետաքրքիր և, ինչպես ինքը հույս ուներ, օգտակար կյանքով էր ապրում: Երիտասարդ ընկերները, որ շատ փող ունեին և շատ քիչ բան ունեին անելու ամեն օր ժամը չորսից հետո, սովորաբար դպրոցի մոտակայքում հետազոտում էին գաղտնի վայրերը, որտեղ միայն փողը կարող էր ճամփա բացել: Դպրոցի ղեկավարները գոհ էին, երբ տեսնում էին, որ նրանք այդքան կրոնասեր են, միշտ հաճախում են կիրակնօրյա ժամերգությանը, և չէին էլ պատկերացնում, որ դա տղաների միակ արդարացումն էր շաբաթվա ազատ օրերին տուն չվերադառնալու համար: Մինչ ծնողներն ուրախ էին իմանալ, որ նրանք Աստծո առաջնորդությամբ մաքրում են իրենց միտքը, չգիտեին անգամ, որ այդ երիտասարդ փիլիսոփաները, բացի այդ, «սոցիալական խնդիրներ էին քննարկում», ինչպես իրենք՝ երիտասարդներն էին անվանում աղքատ ընտանիքների թեթև վարքի տեր աղջիկների հետ այնքան սքանչելի հանդիպումները: Հարուստ աշակերտների զվարճանքը վաղուց ի վեր վերաճել էր բավականին ծաղկուն մի զբաղմունքի՝ միսիոներական դպրոցի հարեւանությամբ: Այդ փոքրիկ գաղտնի միջոցառումն, ըստ էության, բոլորին էր հայտնի, քանի որ դրա մասին գիտեին պահակը, խոհարարները, այգեպանը, ծառաները, լվացքատան աշխատողները, մանրավաճառներն ու դպրոցի մոտակայքում ապրող առետրականները: Նրանք ուրախ էին տեսնել, որ այս կերպ վերանում են սոցիալական տարբերությունների արհեստական արգելքները, և ի սրտե ողջունում էին գաղտնի կապերը, որպեսզի իրենց սովորական վաստակածից մի քիչ ավելի շատ դրամ կորզեն: Միայն դպրոցի ղեկավարների և Տա Տուևգի նման անհասկացող ուսանողների համար չէր հետաքրքիր այդ գաղտնիքը, և նրանք լիովին անտեղյակ էին այդ հարուստ երիտասարդների զբաղմունքից:

Շիաո Մինն աշխարհ էր եկել բարեգործության հետեւանքով, եւ ինքն էլ հետեւաբար ավելի մեծ բարերար էր, քան իր հայրը: Նա իր փողն այնպես առատաձեռն էր ծախսում, որ դրանից հայրը կցնցվեր, եթե ծերունին դեռ ողջ լիներ: Եվ զարմանալի չէ, որ շրջակայքի բոլոր աղջիկներն ուղղակի պաշտում էին այդպիսի բարի ու գեղեցիկ տղային: Գեղեցիկ սեռի շրջանում այդքան ընդունված լինելով՝ նա չէր կարողանում հասկանալ, թե ինչու Լոտոսի Բուրմունքը, որի հանդեպ նա տիրապետելու բուռն ու ջերմ ցանկություն էր տածում, իրեն երբեք մի փոքր անգամ մոտ չէր թողնում: Չնայած աղջիկը քաղցր ու սիրալիկ էր իր բոլոր ընկերուհիների հանդեպ եւ Լույսիսկ բարեհամբույր էր տղաների նկատմամբ՝ տիկին Մայի տանն անցկացվող «սոցիալական» հավաքույթների ժամանակ, Շիաո Մինի հանդեպ սառույցի պես պաղ էր ու խիստ: Երբ տանն էին լինում, այն օրից, ինչ արդեն որոշակիորեն նշանաձևեր էին համարվում, աղջիկն սկսել էր խուսափել նրանից, ինչպես թույնից են խուսափում: Շիաո Մինը մի անգամ այդ առիթով բողբոջեց տատին, եւ ծեր կինը դա բացատրեց համաձայն է հին ավանդական պատվիրանի՝ «տղամարդն ու կինը չպետք է դիպչեն մեկմեկու»:

Լսելով, որ Շիաո Մինի եւ Լոտոսի Բուրմունքի հարսանիքի պատրաստություններն ընթացքի մեջ են, Տա Տունգը դարձել էր ավելի լռակյաց ու բավականին մտախոհ: Ի՞նչ էր անելու, ի՞նչ կարող էր անել: Հիշելով այն սառը վերաբերմունքը, որ իր հորեղբայրն ուներ Լոտոսի Բուրմունքի նկատմամբ, Տա Տունգը սկզբում փորձում էր մոռանալ աղջկան՝ մի քիչ ավելի երկար զբաղվելով ընթերցանությամբ: Ավելի ու ավելի հաճախ էր նա տեսնում, թե ինչպես է աղջկա պատկերը հայտնվում իր գրքում, եւ հատկապես գիշերը, որ նա համարում էր պարապելու համար իր ամենալավ ժամանակը, նա զգում էր, որ Լոտոսի Բուրմունքի մասին վշտայի մտքերն անընդհատ շեղում են իր ուշադրությունը: Ամեն անգամ, երբ չէր կարողանում կենտրոնացնել իր միտքը գրքի վրա, գիրքը ցած էր դնում եւ փոխարենը նամակներ էր գրում: Նա գրում էր իր հորեղբորը՝ Լի Կանին, որ Կան-չոու քաղաքում էր, շատ ավելի հաճախ, քան նախկինում, եւ որքան կարող էր՝ ավելի շատ նամակագրական կապեր էր ունենում հորեղբոր ընկերների հետ: Այդ ժամանակ արդեն փոստային ծառայությունը հաստատվել էր, եւ հեռու վայրեր ուղարկվող նամակների համար վճարվող գինը մեծապես նվազել էր, միեւնույն ժամանակ՝ դրանց տեղ հասնելու արագությունն անհամեմատ մեծացել էր: Նա շուտով այդ ընկերներից իմացավ, որ նրանցից շատերն այդ պահին մայրաքաղաք Պեկինում են, եւ թվում էր, թե Ընդհանուր բարեփոխումների ժամանակը հասունանում է: Նա գրեց Լի

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Թի-Սո-Թային, որպեսզի հարցնի այդ մասին, եւ անզլիացին նրան ասաց, որ դա շատ հավանական է, եւ որ նա ինքը կարող է լինել մայրաքաղաքում մյուս տարվա հենց սկզբին: Լի Թի-Սո-Թայը շատ էր ուզում աջակցություն ցուցաբերել այդ շարժմանը:

Տա Տունգն իրավունքի եւ սահմանադրության վերաբերյալ գրքեր էր ուսումնասիրել, եւ այժմ խորապես հետաքրքրված էր կառավարման տարբեր ծեսերով: Պետք է հիշել, որ Չինաստանը հազարավոր տարիներ կառավարման միայն մեկ ծես է ունեցել միշտ՝ միապետությունը: Քանի որ Տա Տունգն սկսել էր խորասուզվել քաղաքականության մեջ, շատ շուտով գգաց, որ Լոտոսի Բուրմունքի գալիք ամուսնության մասին միտքն աստիճանաբար մոռացվում է: Այդուհանդերձ, պատահում էր, որ ինքն ու Լոտոսի Բուրմունքը ստիպված էին հանդիպել, եւ աղջկա՝ իրեն ուղղված թովիչ ու կանչող գաղտագողի հայացքը խիստ տրտմեցնում ու տակնուվրա էր անում Տա Տունգին: Եվ տղան միայն ցանկանում էր, որ Լույնպիսի հաջողությամբ կարողանար խուսափել Լոտոսի Բուրմունքից, ինչպես աղջկն էր խուսափում Շիաո Մինից: Քանի հարսանիքը մոտենում էր, Տա Տունգն անում էր ամեն հնարավորը, որպեսզի հեռու մնա Լոտոսի Բուրմունքից, երբ իրենք գտնվում էին միեւնույն սենյակում:

Պատահեց այնպես, որ տիկին Մայի տանն անցկացվող թեյի շաբաթօրյա հավաքույթներից մեկի ժամանակ, երբ Լոտոսի Բուրմունքը թեյ էր մատուցում երիտասարդ հյուրերին, Շիաո Մինը, որ այդ հյուրերից մեկն էր, աղջկան իր հերթական հեգնախառն հաճոյախոսություններից էր անում, եւ աղջիկը նեղված ու շփոթված էր ու նաեւ խիստ գայրացած: Փորձելով իր գրոյցով զբաղեցնել Շիաո Մինին՝ տիկին Ման հրահրիչ ծաղրով նշեց, որ ինքը լսել է, թե Շիաո Մինը պատրաստվում է ամուսնանալ, եւ ինքը հույս է հայտնում, որ տղան երջանիկ կլինի ու կհիշի դպրոցում ստացած քրիստոնեական ուսմունքի դասերը եւ հարձեր չի պահի, ինչպես անում են շատ հարուստ հեթանոսներ: Շիաո Մինը ծիծաղեց եւ սուր ու բազմանշանակ ասաց. «Իսկ ինչո՞ւ ոչ: Հին ասացվածքն ասում է. «Կինը երբեք հարճի պես լավը չէ, իսկ հարճը երբեք սիրուհու պես լավը չէ...»:

«Օ՛,- տիկին Ման ցնցված էր:- Ա՛խ դու չարածճի տղա: Եթե ես չին աղջիկ լինեի, այնքան կողմնակի ամուսիններ կունենայի, որքան որ հարճեր կունենար իմ ամուսինը»:

«Շատ լավ, տիկին Մա, ես ոչ մի առարկություն չունեմ այդ մտադրության դեմ,- Շիաո Մինը ծիծաղեց:- Բայց մենք այս առավելությունն ունենք ձեր նկատմամբ. Աստված մեզ այնպես է ստեղծել, որ երբ մենք շատ երե-

խաներ ունենանք, ես կկարողանամ ասել, թե ո՞ր երեխան ո՞ր մորից է, մինչդեռ Լոտոսի Բուրմունքը չի կարողանա տարբերել, թե ո՞ր երեխան ո՞ր հորից է»:

Մինչ աղջիկներն ամոթից ու շփոթմունքից կարմրեցին, իսկ տղաները հագիվ էին կարողանում ծիծաղները զսպել, Լոտոսի Բուրմունքը հեկեկալով արտասովեց: Նա շրջվեց դեպի տիկին Ման, ներողություն խնդրեց եւ շտապ պատրաստվեց տուն գնալ: Տիկին Ման փորձեց հարթել վիճակը՝ պահանջելով, որ Շիառ Մինը ներողություն խնդրի, սակայն տղան շարունակեց միայն ծիծաղել: Երբ տիկին Ման տեսավ, որ այլևս չէր կարող համոզել Լոտոսի Բուրմունքին մնալ, եւ աղջիկը սրտակեղեք հեկեկում է, Տա Տունգին, որն, ինչպես միշտ օգնում էր հավաքույթի ժամանակ, ասաց, որ աղջկան տուն ուղեկցի: Քանի որ Տա Տունգն ազգակցական կապի մեջ էր աղջկա հետ, տիկին Ման կարծում էր, թե իր ընտրությունը շատ լավն է. նա երբեք մտքով իսկ չէր անցկացնի, որ Շիառ Մինը չարացած ու թշամանքով է կայում իրեն: Տա Տունգը գործը թողեց եւ դժկամությամբ դպրոցից դուրս ուղեկցեց Լոտոսի Բուրմունքին: Երբ քայլում էին դպրոցից դեպի գլխավոր փողոց տանող երկար անցուղով, Տա Տունգը մտքում անիծում էր տիկին Մային եւ իրեն: Նա ամեն ջանք թափել էր, որպեսզի դուրս գա այդ խառնաշփոթ ու դժվարին վիճակից, եւ ահա՝ նորից նույն վիճակում էր հայտնվել: Լոտոսի Բուրմունքը շարունակ աչքերն էր սրբում եւ Տա Տունգին էր կայում քնքշանքով ու կշտամբանքով: Հանկարծ մոտեցող ոտնաքայլերի ձայն լսվեց: Տա Տունգը շուրջը կայեց եւ տեսավ, որ Շիառ Մինը վազում է իրենց ետեւից:

«Հե՛յ,- ձայն տվեց Շիառ Մինը՝ հեասպառ եւ զայրույթով:- Էդ ո՞ւր ես գնում կնոջս հետ»:

Տա Տունգը որոշեց չվիճել նրա հետ եւ տոկուն կերպով կրեց անվանարկումը:

«Ծիծաղելի մի՛ լինի, Շիառ Մին: Դու գիտես, որ նա տուն է գնում, եւ որ տիկին Ման է ինձ խնդրել ուղեկցեմ...»:

«Ինչո՞ւ տիկին Ման քեզ ընտրեց էդքան մարդուց...»:

«Վե՛րջ տուր, Շիառ Մին,- ընդհատեց նրան Տա Տունգը:- Ես դասեր ունեմ պարապելու: Դե որ եկել ես, տղամարդ եղիր, ինչպես միշտ ձեռացրել ես, եւ տուն ուղեկցիր նրան»:

Այս խոսքերն ասելով՝ Տա Տունգը ետ դարձավ՝ չհամարձակվելով կայել Լոտոսի Բուրմունքի աչքերին: Բայց աղջիկը բողբոցեց. «Չէ՛, Տա Տունգ: Հետս արի»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Ցավում եմ, Լոտոսի Բուրմունք, բայց պետք է գնամ»,- Տա Տունգը գիտեր՝ կամ հիմա, կամ երբեք: Եվ որոշեց՝ ավելի լավ է՝ «հիմա»:

Շիաո Մինը մոտեցավ Լոտոսի Բուրմունքին, և մինչև ևս կկարողանար շարժվել, ամուր գրկեց իր բազուկներով ու երկու այտու էլ բռնի համբուրեց: Աղջիկը ճչաց և լաց լինելով գոչեց. «Օգնի՛ր, Տա Տունգ: Օգնի՛ր: Օգնի՛ր»:

Տա Տունգն այժմ հասկացավ, որ ի վերջո ամենալավն այն է, որ լինի «երբեք»: Անկախ այն բանից, թե ինքը որքան քարսիրտ էր, ևս համոզվեց, որ չի կարող զսպել իրեն և չօգնել մի կնոջ, էլ չենք ասում, որ այդ կինը մեկն էր, ում ինքը թաքուն սիրում էր: Եթե Լոտոսի Բուրմունքը կշտամբե՝ լիս լիներ իրեն, կարծում էր, որ երեւի կհակառակվեր նրա ասածին: Բայց երբ տեսավ, որ ևս փորձանքի մեջ է և իրենից օգնություն է խնդրում, անսիրտ պետք է լիներ, որպեսզի հեռու մնար: Տա Տունգն անսիրտ չէր և առաջ նետվեց, որպեսզի միջամտի:

«Ձեռքերդ հեռու՛ նրանից, սրիկա՛»:

«Ես իմ կնոջն եմ համբուրում: Քո ի՞նչ գործն է: Դու՛, ձկնորսի՛ լակոտ»,- հակադարձեց Շիաո Մինը:

Այդ պահին Լոտոսի Բուրմունքը դուրս պրծավ Շիաո Մինի գրկից և վազեց Տա Տունգի կողմը:

«Դու՛, կեղտո՛տ խոզ: Ո՛վ է քո կինը: Կեղտո՛տ խոզ»:

«Հեռու՛ մնա նրանից, թե ուզում ես կաշիդ փրկել, սրիկա՛»,- Տա Տունգն առաջ թողեց Լոտոսի Բուրմունքին և քայլեց նրա ետեւից՝ որպես հետևապահ:

Շիաո Մինը հայիոյում ու վիրավորական խոսքեր էր ասում նրանց որքան կարող էր, բայց իրեն պահում էր նրանցից անվտանգ հեռավորության վրա: Հենց որ Տա Տունգը Լոտոսի Բուրմունքին տուն ճանապարհեց, հանկարծ ետ դարձավ դեպի Շիաո Մինը: Երիտասարդը հանկարծակիի եկավ. Տա Տունգը նրան դաժան ծեծի ենթարկեց: Նա ամբողջ ուժով գոռում ու ճչում էր, բայց երբ մարդիկ եկան օգնության, միայն տեսան նրան կապտուկներով ծածկված. հարձակվողն անհետացել էր:

Երբ Լոտոսի Բուրմունքը տատին պատմեց դպրոցում Շիաո Մինի ակնարկների և փողոցում նրա վարքագծի մասին, տիկին Վուն ասաց, որ Լոտոսի Բուրմունքը չպետք է կատակները չափազանց լուրջ ընդունի, և որ ինքը երբեք չի արդարացնում լավ ընտանիքների այն աղջիկներին, որոնք իրենց «ցուցադրում են» փողոցում: Ապա հավելեց, որ աղջիկն ինքն է մեղավոր, քանի որ տուն չէր եկել ծածկապատգարակով: Լոտոսի Բուրմունքն ըմբռնում և սփոփանք կարողացավ գտնել միայն մոր մոտ, որը, ցավոք,

ոչինչ չէր կարող անել դստեր համար, այլ միայն գրկել էւ դառն արտասովել նրա հետ:

Այդ պահից սկսած՝ Տա Տունգն իր պարտքն էր համարում հոգ տանել Լոտոսի Բուրմունքի մասին: Աղջիկը համառ էր եւ պնդում էր, որ երկուշաբթի օրը քայլելով գևան դպրոց , իսկ կիրակի օրը, մատուռում ժամերգությունից հետո, քայլելով տուն գևան: Լոտոսի Բուրմունքի համառությունը գուցե մի տեսակ քողարկված մարտավարություն էր, քանի որ ևս կարծես բավականություն էր ստանում Տա Տունգին ասելով, թե ինքն ինչ վտանգի է ենթարկվում, որովհետեւ գիտեր՝ Շիաո Մինն, անշուշտ, փորձելու էր կրկին վիրավորել իրեն: Բայց Տա Տունգը շաբաթական այդ զբոսանքներից բավականություն չէր ստանում: Եւ դա անում էր հուսահատ հնազանդությամբ:

Այդուհանդերձ, Լոտոսի Բուրմունքն անարդար էր վարվում Շիաո Մինի հանդեպ՝ կարծելով, թե տղան կփորձի կրկին վիրավորել իրեն փողոցում: Եւ այնպիսի իսկական երիտասարդ ջենտլմեն էր, որ կարող էր նույնիսկ բավականին մեծահոգի լինել եւ ներել Տա Տունգին, որն այնքան դաժանորեն ծեծել էր իրեն: Թեւ Տա Տունգը նրա հանդեպ այնքան կոպիտ էր իրեն պահում, որ անգամ չէր խոսում հետը կամ հայացք իսկ չէր զգում նրա ուղղությամբ, մի օր ևս մոտեցավ Տա Տունգին եւ շատ սիրալիր ասաց. «Տա Տունգ, լսել եմ որ ընկերներիցդ մի քանիսի մոտ ակնարկել ես, թե ուզում ես գևալ Պեկին, որտեղ նոր համալսարան է հիմնադրվելու: Կարծում եմ քեզ նման փայլուն գիտնականը պետք է ընդունվի բարձրագույն ակադեմիական հաստատություն, փոխանակ արժեքավոր ժամանակը վատնելու այս հին միսիոներական ծակուռում: Չես ուզում, չէ՞, այդ ծեր աքիս Վանի հետքերով գևալ եւ ամբողջ կյանքում մնալ այստեղ: Ինձ ասել են, որ ևս դեռ իր գիտահետազոտական աշխատանքն է շարունակում այստեղ, բացի այդ՝ համարյա չի աշխատում դպրոցում: Արժանացել է արվեստների բակալավրի աստիճանի եւ այժմ ծոգում է արվեստների մագիստրոսի աստիճանի՝ պարոն Մայի ղեկավարության ներքո»:

«Կրտսեր եղբայր, ավելի հեշտ է ասել, քան անել,- Տա Տունգը զարմացած էր՝ տեսնելով, որ Շիաո Մինն իր հանդեպ ոխ եւ չարություն չունի:- Դու գիտես, որ երկու տարի ինձ հաջողվեց սովորել այստեղ, որովհետեւ ինքնաձախսաձածկումով եմ սովորում: Առաքելական ներկայացուցչության բարեգործությունից կախված լինելը մի բան է, որից ես խորշում եմ: Եվ որքան էլ որ շատ կցանկանայի գևալ Պեկին, ի՞նչ կարող եմ անել դրա համար: Հորեղբայր Կանը մի բարվոք վիճակում չէ, եւ ես երդվել եմ ձեռք չտալ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

մեծ դժվարությամբ վաստակած նրա աշխատավարձին»:

«Եթե միայն գումարի հարցն էր, Տա Տուզ ,ես կարող էի քեզ օգնել»:

«Դու շատ մեծահոգի ես, կրտսեր եղբայր, բայց ես չեմ կարող ընդունել որեւէ մեկի օգնությունը»:

«Ինչո՞ւ ոչ: Մենք եղբայրներ ենք, եւ դու իրավունք ունես որոշ գումար ստանալ հորս՝ ինձ թողած փողերից: Սկզբի համար հարյուր թաւել բավական է»:

«Ավելի քան բավարար է: Բայց ինչպե՞ս կարող եմ վերցնել քո փողերը»:

«Համարի՞ր որպէս վարկ, որը կարող ես մարել քեզ հարմար ցանկացած ժամանակ: Իսկ հետո կարող ես էլի գումար ունենալ»:

«Վա՞րկ: Կմտածեմ»:

Բայց երբ Շիաո Մինն ուզում էր մի բան արվի, նա չէր թողնում այդ գործը, մինչեւ որ հիմնավորապէս չարվեր դա: Հաջորդ շաբաթ երեկոյան նա դպրոցի մոտակա ռեստորանում հրաժեշտի հավաքույթ կազմակերպեց իր կաթնեղբայր Տա Տուզի համար: Երկու երիտասարդների ընկերներն էլ հրավիրված էին, եւ պարզվեց , որ Շիաո Մինը գերազանց հյուրընկալ տանտեր է: Նա գինու բազմաթիվ գավաթներ դատարկեց իր հյուրերի հետ եւ կրկին ու կրկին մաղթեց, որ Տա Տուզին մշտապէս համընթաց քամի ուղեկցի ամբողջ ճանապարհին, ու նա մեծ հաջողություններ ունենա իր ձեռնարկած նոր գործում: Բոլորը շատ ուրախ էին, եւ Տա Տուզն զգաց, որ իրեն այլ ընտրություն չի մնացել, քան երախտագիտությամբ ընդունել Շիաո Մինի բարի առաջարկը: Բայց ինքնաձախսաձածկումով սովորող ընկերներից մեկը մի բան հիշեցրեց: Նշվեց, որ դպրոցի ղեկավարները կարող էին թույլ չտալ, որ Տա Տուզը գնա: Տա Տուզը երկու տարի անվճար կրթություն էր ստացել միսիոներներից, եւ պարտավորված էր դպրոցին կամ միսիոներական առաքելությանը որոշակի ծառայություն մատուցել նախքան նրանցից հեռանալը, այլապէս նրանք կպահանջեին ուսման եւ օթեանի վճարները, որոնցից ազատված էր: Բայց Շիաո Մինն ասաց, որ դա նշանակություն չունի: Թող սկզբում Տա Տուզը թաքուն հեռանա, իսկ ինքը պատասխանատու կլինի վարձավճարները մուծելու համար:

«Ոչ,- ասաց Տա Տուզը,- ես չեմ կարող քեզ ներդրություն պատճառել: Կգնամ եւ կխոսեմ այդ մասին պարոն Մայի հետ նախքան հեռանալս»:

«Եվ եթե նա առարկի, ես կվճարեմ քո փոխարեն»:

«Կտեսնենք», - Տա Տուզն այլեւ ոչինչ չասաց:

Մի օր Լոտոսի Բուրմուկը դասերից հետո Տա Տուզի հետ իր զբո-

սանքից ուշ վերադարձավ: Երբ տեսավ, որ մայրն այդ պահին սենյակում մենակ է, աղջիկն աղի արցունք թափեց: Տիկինն ափով թփթփացրեց դստեր թիկունքին եւ մեղմորեն ասաց. «Ասա, սիրելիս, ի՞նչ է պատահել»:

«Ախ... մայրիկ... մայրիկ: Այդ անասունը: Իսկական անասուն է»:

«Շիտո Մինն էլի վիրավորե՞լ է քեզ, սիրելիս»:

«Չէ: Շիտո Մինը չէ... Տա Տունգն է... անասո՛ւնը»:

Մայրը տխուր ժպտաց եւ փիլիսոփայորեն նկատեց. «Բանի տեղ մի՛ դիր, անուշիկս: Գիտես, որ բոլոր ագռավներն այս աշխարհում հավասարապես սեւ են»:

«Չէ՛,- բողոքեց դուտորը:- Դու չես հասկանում, մայրի՛կ»: Եւ բարձրաձայն հեկեկաց:

«Դե հանգստացիր, սիրելիս: Ասա տեսնեմ՝ ի՞նչ է արել քեզ Տա Տունգը»:

«Չէ... մայրիկ... Էդ անասո՛ւնը... Ոչինչ չի արել»:

«Հիմա՛ր երեխա: Ի՞նչ էիր սպասում, որ անի»:

«Ես նրան ասացի... որ... քանի չի գնացել, ինձ էլ հետը տանի... Ես սարսափելի մի բան կանեմ: Ասացի, որ հենց միայն Շիտո Մինի նման ամուսին ունենալու միտքը... ինձ հուսահատության մեջ է գցում: Իսկ ես փորձում էր բոլորովին ուրիշ բանի մասին խոսել»:

«Գուցե ես շատ խոհեմ է եղել: Ո՛ր կարող էիք գնալ»:

«Ես եսասեր եր: Ես գիտեի, որ ինքն ուզում է մենակ Պեկին գնալ եւ ինձ այստեղ թողնել՝ ամուսնանալու այդ սրիկայի հետ»:

«Բայց ես չգիտե...»,- մայրը կտրուկ լռեց:

«Ի՞նչ չգիտե»:

«Չգիտե, որ դու այդքան շատ ես իրեն սիրում...»:

«Բայց ես գիտե՛: Ես ասել եմ իրեն, որ իր ետեւից կգնամ մինչեւ աշխարհի ծայրը եւ Երկնքի սահմանը, եւ ինձ ամենեւին չի հետաքրքրում, որ ինքն աղքատ է...»:

«Ախ իմ անուշիկ: Իրո՞ք այդքան սիրում ես նրան»:

«Իհարկե, մայրիկ: Ես նրան շատ ավելի եմ սիրում, քան ինքը, այդ անասո՛ւնը»:

«Դու իրո՞ք մտածում ես, որ երջանիկ կլինես նրա հետ, եթե պատրաստվում ես աղքատ լինել... շատ աղքատ... զոհաբերելով պերճանքի այն բոլոր առարկաներն ու հաճույքները, որոնց սովոր ես...»:

«Իհարկե: Իհարկե, մայրի՛կ: Ես արդեն զոհաբերել եմ դրանք: Ես քայլում եմ, փոխանակ ծածկապատգարակով զբոսնեմ: Եվ խնայել եմ գրպա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ևիս ողջ փողը նրա համար»:

«Կուզեի քեզ փող տալ, անուշիկս, բայց կանխիկ ոչինչ չունեմ»:

«Գիտեմ, մայրիկ: Կարծում եմ՝ կմեռնեմ: Անասունը, լրիվ անտարբեր մնաց, երբ ասացի, որ կմեռնեմ»:

«Ղու չպե՛տք է մեռնես, սիրելի՛ս: Երբեմն մեռնելը միակ ելքն է թվում, իսկ երբեմն էլ մարդ չպետք է մեռնի, որովհետեւ պարտականություններ ունի, որոնց պետք է հետեւի»:

«Ի՞նչ նկատի ունես, մայրիկ»:

Մայրը չլսեց դստեր հարցը եւ շարունակեց. «Տատը շատ համար է: Նա պնդում էր, որ դու պետք է ամուսնանաս Շիաո Մինի հետ, չնայած ես անընդհատ բողոքում էի: Այս ամսի 24-ին դու ամուսնանալու ես նրա հետ: Ի՞նչ կարող եմ ես անել»:

Նսելով ամսաթիվը, որը շատ մոտ էր, Լուտոսի Բուրմունքն ուղղակի ապշեց: Նա միշտ հույս էր փայփայել, թե հնարավորություն կլիսի նշանդեքը չեղյալ համարել, բայց հիմա կարծես թե շատ քիչ օրեր էին մնացել, որ պատահեր ամենավատը, եւ դա կլիներ անդառնալի քայլ: Բայց ինչպե՞ս կարող էր ասել տատին, որ ինքն ամուսնու իր սեփական ընտրությունն է կատարել: Որոշ ժամանակ աղջիկը լուռ էր: Մայրը, ընդունելով դա որպես նշան, որ իր դուստրն այժմ ստիպված է համաձայնել այդ անցանկալի ամուսնությանը, այն զգացողությունն ունեցավ, ասես հազարավոր նետեր միաժամանակ խոցեցին իր սիրտը: Ինչքան շատ էր մայրը մտածում այդ մասին, այնքան զարհուրում էր, եւ բարձրաձայն հեկեկոցով լաց եղավ: Աղջիկը, տեսնելով մորն արցունքներով ողողված, չկարողացավ զսպել իր հույզերը, եւ երկուսով միասին դառնորեն լաց եղան: Միմյանց հետ սրտակից զրույցից հետո, մինչ մայրը դեռ արցունք էր թափում, Լուտոսի Բուրմունքը հուսահատ ասաց. «Մայրիկ, կարծում եմ ամենաճիշտն այն կլինի, որ տատիկին ուղղակի ասես, թե ես չեմ սիրում Շիաո Մինին եւ չեմ կարող ամուսնանալ նրա հետ: Ես Տա Տունգին եմ սիրում եւ պետք է նրա հետ ամուսնանամ: Տիկին Ման ինձ ասել է, որ Արեւմուտքում երիտասարդները լիովին ազատ են ամուսնանալիս: Նույնիսկ ծնողները չեն կարող ստիպել նրանց: Տարիներ շարունակ ես միշտ վախեցել եմ Շիաո Մինից եւ չեմ կարող ասել, թե ինչու եմ իմ զգացմունքները նրա հանդեպ այդպիսին»:

«Ձավակս, Չինաստանը չի կարող համեմատվել Արեւմուտքի ոչ մի երկրի հետ: Մենք պետք է նախ մտածենք պատշաճության մասին: Եթե աղջիկը բացեիքաց հայտարարում է, թե ինքն ում է սիրում եւ ում չի սիրում, նա հասարակության կողմից կդատապարտվի՝ որպես անամոր: Ես

չեմ կարող տատիդ ասել այդ մասին: Բացի այդ, եւ շատ բարի է եղել իմ նկատմամբ, եւ հորաքույրդ նույնպէս շատ բարյացակամ է իմ հանդէպ»:

«Բայց մի՞թէ չենք կարող ուրիշ մի բան մտածել»:

«Ոչ»:

Ինչ վերաբերում է Տա Տունգին, եւ դեռ զուր ժամանակ էր վատնում քրիստոնեւոյան հետ: Մատուռ էր գնում պարզապէս նրա համար, որ պարտավոր էր դա անել: Երբեք ուշադրոյթուն չէր դարձնում պարոն Մայի քարոզներին, որոնք միշտ համարում էր անմտոյթուն: Ոչ էլ լրջորէն ուսումնասիրել էր Աստվածաշունչը: Այժմ եւ սկսել էր տեսնել, որ այդ գրքում ավելի շատ ընդհանուր բաներ կային կոնֆուցիական ուսմունքների հետ, քան կարծում էր, եւ հաճախ այդ գրքից որոշակի հատվածներ էր կարդում կրկին ու կրկին: Մի կիրակի առավոտ եւ լսեց, որ պարոն Ման ամենայն հոգատարությամբ քարոզում է: Քանի որ Լոտոսի Բուրմունքն անցած մի քանի շաբաթը մատուռ չէր եկել, եւ ամենայն ուշադրությամբ լսեց քահանային: Դա ճարտասանության մի սքանչելի կտոր էր, եւ թեման հետեւյալն էր. «Վարվիր այնպէս, ինչպէս կուզես քեզ հետ վարվեն»: Տա Տունգն այդ ուսմունքն ավելի կառուցողական համարեց, քան կոնֆուցիականը, որն ավելի շատ բացասական էր, քան դրական. «Մի՛ վարվիր ուրիշների հետ այնպէս, ինչպէս չես ուզի քեզ հետ վարվեն»:

Պարոն Ման շեշտեց, որ քրիստոնեայի պարտականոյթունն է՝ օգնել իր նման արարածներին, երբ նրանք կարիքի ու դժբախտության, սոսկալի ծանր վիճակի մեջ են: Ասես իմանալով, որ Տա Տունգը հատուկ ուշադրությամբ լսում է իրեն, եւ ասաց, թէ քանի դեռ մարդ իրեն ուրիշի տեղը չի դրել, որն օգնության խիստ կարիք ունի, եւ պատրաստ չէ վտանգի ենթարկելու իրեն ու զոհողոյթունների գնալու, եւ մարդ կոչվելու արժանի չէ: Տա Տունգը խորապէս հուզված էր եւ մնաց մատուռում, մինչեւ որ բոլորը գնացին: Եւ գնաց պարոն Մայի մոտ, եւ խօսեց քահանան կիեռանար, եւ խնդրեց նրան, որ մի քանի խոսք ասի: Ոչ թէ պարոն Ման չէր ուզում իր թանկարժէք ժամանակը վատնել ինքնաձայնաստեղծութիւնով սովորողների վրա, այլ շատ կարեւոր մի մարդուց այդ օրը ճաշի հրավեր ունէր: Եւ հարցրեց Տա Տունգին, թէ արդոյք չէ՞ր կարող մեկ ուրիշ անգամ խոսել իր հետ, քանի որ տիկին Ման սպասում է դրսում՝ մատուռի մոտ, եւ ինքը չպետք է նրան այնտեղ երկար սպասեցնել տա: Տա Տունգն ասաց, որ խոստովանոյթուն ունի անելու, եւ որ ինքը նույնպէս ուզում է հոգեւոր խորհուրդ ստանալ: Հոգեւորականը գրեթէ կշտամբանքի մեղմ բացականչոյթուն արձակեց, բայց հարցրեց Տա Տունգին, թէ չի՞ կարող արդոյք շատ

ԱՅՈՒՆ ՇԻՒ

կարճ ասել: Յավոք, Տա Տուկը հույս ուներ հարցն ամբողջ խորությամբ քննարկել պարոն Մայի հետ եւ պատրաստ չէր ամեն ինչ ներկայացնել երկու կամ երեք նախադասությամբ: Եւ տատանվեց մի փոքր ու չզիտեր ինչպես սկսել: Պարոն Ման շատ անհամբեր դարձավ:

«Շտապի՛ր, երիտասարդ: Ի՞նչ ես ուզում խոստովանել»:

«Դե, ինչպես ասացիք հենց նոր...»:

«Կարելու չէ, թե ես ինչ ասացի հենց նոր: Ասա ինձ, թե ինչ ես արել, որ ուզում ես ապաշխարել»:

«Չէ, ես այնպիսի բան չեմ արել, որի համար զոջամ...»:

«Լավ, արագ, երիտասարդ, ասացիք, որ խոստովանելու բան ունես: Ի՞նչ է դա: Արտահայտվի՛ր»:

«Ես... ես... Ես սիրում եմ մի աղջկա...»:

«Օ՛: Պատանեկան հրապուրանք: Հորթի սեր: Ուրիշ անգամ կասես ինձ: Ես պետք է գնամ»:- Պարոն Ման փորձեց արագ հեռանալ, բայց Տա Տուկը կանգնեցրեց նրան:

«Խնդրում եմ, պարոն Մա, ուրիշ անգամ կարող է չլինել, հնարավոր է, որ ես այլեւս այստեղ չլինեմ»:

«Հիմար մի՛ լինի, երիտասարդ: Ինչ էլ որ լինի, մի՛ անիր դա: Ես հիմա իրոք պետք է գնամ»,- ևս դուրս եկավ մատուռից:

«Խնդրում եմ, պարոն Մա, բայց դուք չզիտեք, թե ինչ է դա...»,- Տա Տուկը նրա ետեւից դուրս եկավ եւ տեսավ, որ տիկին Ման ներս է մտնում տեսնելու, թե ինչն է ետ պահում ամուսնուն:

«Ներիր, Մերի, բայց այս տղան շատ երկար պահեց ինձ: Իսկ հիմա գնանք»:

«Ի՞նչ է ուզում, Տու»,- հետաքրքրվեց կինը:

«Օ՛, - բացականչեց Պարոն Ման անփութորեն,- հորթի սեր, եթե ուզում ես իմանալ»:

«Օ՛: Ի՞նչ ցնցող է, Դեյվիդ,- բացականչեց կինը ժպտալով, երբ տեսավ մոտեցող տղային:- Մի օր դու պետք է պատմես ինձ ամբողջ պատմությունը»:

«Խնդրում եմ, տիկին Մա: Մա իրոք լուրջ է,- տղան վերջին մի խնդրանքով դիմեց քահանայի կնոջը:- Ես գուցե չտեսնեմ Ձեզ նորից: Ձեր խորհուրդն եմ ուզում»:

«Ավելի լավ է՝ հետո, տղաս: Գնանք, Մերի, թե չէ կուշանանք»:- Պարոն Ման գնաց: Բայց տիկին Ման, որ ավելի բարի էր, հմայիչ ու սիրալիք ասաց. «Ի՞նչ հուզիչ է: Շատ եմ ուզում իմանալ, թե ով է այդ աղջիկը: Այսօր

երեկոյան իննիս եկ մեր տուն, եւ մի գավաթ սուրճ կըմպենք ու կընկարկենք դա»: Նա հետեւեց ամուսնուն:

Այդ երեկո ժամը իննիս Տա Տունը թակեց պարոն Սայի եւ տիկին Մայի առանձնատան դուռը: Դուռը նրա առջեւ բացեց ինքը՝ տիկին Ման եւ ուղեկցեց նրան աշխատասենյակ, որտեղ պարոն Ման, գրասեղանի մոտ նստած, մի քանի նամակ էր գրում: Ակնոցը նրա քթարմատի ներքեւի մասում էր, եւ նա որքան կարող էր ցած թեքեց գլուխը, որ կայի Տա Տունգին: Տիկին Ման տղային խնդրեց, որ նստի իր հետ թեյի փոքրիկ սեղանի մոտ, իսկ սուրճը պատրաստվում էր:

«Այժմ, Դեյվիդ, դու պետք է պատմես մեզ քո սիրո պատմությունը: Ես այնքան շատ եմ ուզում իմանալ...»:

«Մերի, խնդրում եմ,- ասաց պարոն Ման լուրջ ու խիստ:- Դեյվիդ, դու նորից մտածել ես այդ մասին եւ գիտակցե՞լ ես քո հիմարությունը»:

«Ես անընդհատ մտածել եմ այդ մասին, եւ այդտեղ հիմարություն չկա, պարոն Մա», - պատասխանեց տղան:

«Հիմարություն չկա? Ասա ինձ, Դեյվիդ, քանի՞ տարեկան ես»:

«Մյուս տարի գարնանը տասնութ կլինեմ»:

«Սեւ՛ն ես սիրում, թե՞ սպիտակը»:

«Խնդրեմ սպիտակը, տիկին Մա»:

«Եվ ասացիր, որ մի աղջկա՞ ես սիրում»:

«Այո, պարոն Մա: Բայց ես տասնինը տարեկան եմ ըստ չինական հաշվարկման մեթոդի...»:

«Շաքա՞ր»:

«Այո, խնդրեմ, տիկին Մա»:

«Իսկ ինձ թվաց, թե դու հեռանալու մասին ես մտածում... այդ աղջկա պատճառով, ենթադրում եմ»:

«Այո, տիկին Մա: Բայց նա...»:

«Սե՞կ, թե՞ երկու կտոր, Դեյվիդ»:

«Խնդրեմ երեքը, տիկին Մա»:

«Եթե ամառ լիներ, կկարծեի, թե արեւի հարված ես ստացել, բայց քանի որ հիմա դաժան ու ցուրտ ձմռան կեսն է, պարզապես չեմ կարող քեզ հասկանալ»:

«Բայց, պարոն Մա, նա...»:

«Բավական՛ն է, երիտասարդ: Ես դա թույլ չեմ տա»:

«Տո՛ն,- ընդհատեց նրան կինը,- թույլ տուր, խնդրում եմ, իմանալ, թե ով է նրա սրտի աղջիկը: Չես թողնում, որ խեղճ տղան ավարտի իր նախադա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

սությունը. դա արդար չէ նրա հանդեպ եւ արդար չէ նաեւ ի՛մ հանդեպ: Ես այնքա՛ն շատ եմ ուզում իմանալ այդ հետաքրքիր ու հուզիչ սիրո պատմությունը»:

«Շատ բան չկա պատմելու սիրո պատմությունից, տիկին Մա,- ասաց Տա Տունգը:- Աղջիկը, որին սիրում եմ, նշանված է եւ պիտի ամուսնանա մեկի հետ, որին ինքը չի սիրում...»:

«Ի՛նչ ցնցող ու խճճված պատմություն է: Դու պետք է ինձ ավելի շատ բան ասես այդ մասին, Դե՛յվիդ», - բացականչեց տիկին Ման՝ այժմ իսկապես հուզվելով:

«Սա խայտառակ բան է, երիտասարդ: Հուսով եմ, հիմա պատրաստվում ես ապաշխարել», - ասաց պարոն Ման:

«Ոչ, պարոն Մա...»:

«Ի՛նչ: Ասացիր ո՞չ»:

«Այո, պարոն Մա, ասացի ոչ,- համարձակորեն պատասխանեց Տա Տունգը:- Ոչ մի վատ բան չկա դրա մեջ, եւ ես պատճառ չունեմ ապաշխարելու»:

«Դու սիրում ես մեկի կնոջը... հարսնացուին, ենթադրաբար՝ ընկերոջդ հարսնացուին, այնպես չէ՞»:

«Այո, պարոն Մա»:

«Եվ չե՞ս ապաշխարում»:

«Բայց, պարոն Մա, դուք չգիտեք փաստերը: Աղջիկը մեծ դժբախտության ու վշտի մեջ է, պարոն Մա»:

«Գրողի ծո՛ցը նրա վիշտն ու դժբախտությունը: Ես ոչնչով չեմ կարող օգնել այն աղջկան, որը սիրախաղով է զբաղվում պատահած ամեն երիտասարդի հետ: Դա խայտառակությունն է»:

«Բայց, պարոն Մա, Ձեր քարոզում այս առավոտ ասացիք, որ մենք մեզ պետք է դնենք նրանց տեղը, ովքեր դժբախտության մեջ են եւ մեր օգնության կարիքն ունեն...»:

«Դա չի՛ վերաբերում սեթեւեթ սիրախաղերով զբաղվողներին ու թեթեւաբարո կանանց: Նա անպատվությունն է հասարակության համար»:

«Ես երկմտում ու չեի կողմնորոշվում այս առավոտ: Բայց Ձեր խոսքերն ինձ ուժ եւ վճռականություն հաղորդեցին, եւ ես եկա Ձեզ մոտ...»:

«Ուրեմն, ցավում եմ այս առավոտ իմ ասածների համար, երիտասարդ: Երբեք մտքովս չէր անցնի, որ դա կարող է այսպիսի վատ հետեւանքներ ունենալ»:

«Ձեր քարոզը լսելուց հետո կարծեցի կհասկանաք: Ուզում եմ, որ ինձ

խորհուրդ եւ ուղղություն ցույց տաք ու կա եւ ուզում եմ ասել Ձեզ, որ եթե ստիպված լինեմ հանկարծակի հեռանալ, խոստանում եմ, որ կծառայեմ առաքելությանը երկու տարի՝ վաղ թե ուշ...»:

«Իմ խորհուրդը քեզ, երիտասարդ, սա է՝ ուշքի ել: Իսկ եթե ինձ չսես, առաքելությունը կիրաժարվի քեզնից եւ քո երաշխավորներին կստիպի ամբողջովին վճարել վարձավճարներդ, ինչը տեղի կունենա հենց այն պահից, երբ առանց իմ թույլտվության հեռանաս: Բոլոր դժոխային...»:

«Հըմ.. հըմ... Տո՛ն: Կիրակի օրո՞վ», - ընդհատեց կինը:

«Ներողություն եմ խնդրում, Մերի,- պարոն Ման զապեց զայրույթը:- Բժիշկ Լի Թի-Սո-Թայը նույնպես պատասխանատու է քեզ համար: Նա աներեակայելի հիմար է: Ստաճել, որ քահանան դրդում է այդպիսի անբարոյական...»:

«Ներողություն եմ խնդրում, պարոն Մա: Մա անբարոյականություն չէ, եւ պարոն Լի Թի-Սո-Թայն այս մասին ընդհանրապես չգիտե: Սկզբում ես մտածում էի Պեկին գնալու մասին, որպեսզի միանամ Քաղաքական բարեփոխում շարժմանն ու աշխատեմ նրանց համար, բայց վերջերս...»:

«Գրողի ծո՛ցը բարեփոխման շարժումը,- զայրացած գոչեց պարոն Ման:- Բժիշկ Լին շուտով կզգա դրա բոլոր վատ հետեւանքները: Իրականում նա արդեն մի անգամ զգացել է դա, եւ հիմար է նա, ով նույնիսկ սեփական փորձից օգուտ չի քաղում: Իրեն հարգող ո՛չ մի հոգեւորական չի խառնվի հեթանոս քաղաքականությանը: Նա պարտավոր է սահմանափակել իր աշխատանքն Աստծուն ծառայելով»:

«Բարեփոխումը մարդկության բարօրության համար է, հետեւաբար կա եւ ծառայություն է Աստծուն»:

«Մարդկություն: Իրոք մարդկություն կլինեք, եթե քեզ էլ, բժիշկ Լին էլ մի լավ ծեծ տային»:

«Տո՛ն,- կրկին բացականչեց կինը:- Դու չես կարող...»:

«Ինձ մենա՛կ թող, Մերի: Ես գիտեմ ինչ եմ ասում: Ժամանակ չունեմ քեզ վրա ծախսելու, Դեյվիդ: Բայց թող ասեմ, որ թույլ չեմ տա այդպիսի անհեթեթություն իմ դպրոցում: Ես չեմ կարող քեզ ուժով ետ պահել, բայց հիշ-իր՝ ինչ-որ մեկը պետք է պատասխանատու լինի քեզ համար, եւ ես պատրաստվում եմ անմիջապես գրել քո երաշխավորներին եւ Բժիշկ Լին...»:

«Տո՛ն: Այդքան դաժան մի՛ լինի: Տղան ընդամենը երեխա է, եւ ես համոզված եմ, որ սա իր առաջին սիրավեպն է: Իսկ հիմա, Դեյվիդ, ինձ ավելի շատ բան պատմիր քո սիրո պատմությունից...»:

«Մերի, եթե վերջ չտաս այս անհեթեթությանը, պետք է խնդրեմ, որ

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

լքես իմ աշխատասենյակը: Ես կամակեր ունեմ գրելու»:

«Կներեք,- ասաց Տա Տունգը դառնությամբ:- Սա սխալմունք է: Ես պետք է գնամ: Շնորհակալություն, պարոն Սա»:

«Մի օր դու պետք է ինձ ավելի շատ բան պատմես այդ մասին, Դեյվիդ,- տիկին Ման վեր կացավ, որպեսզի ճանապարհի տղային, միևնույն նրա ամուսինն ամբողջովին արհամարհեց իր այցելուին:- Դյումայի ռոմանտիկ ու արկածային սիրավեպի նման է հնչում: Հենց այն ժամանակ, որ պետք է ամուսնանայի, տեսչում էի մեկին, որն անհույս կսիրահարվեր ինձ: Բայց նման հնարավորություն չունեի: Մեր գյուղում միայն փոստատարն էր, բայց շատ տարիքով էր եւ կին ուներ, երեք հոգուց բաղկացած ընտանիք: Իսկ երբ մենք սկսեցինք մեր մեղրամիսը, ես փորձեցի հուսադրել մի շատ լավ սպասավոր տղայի. նա մի քիչ շատ էր երիտասարդ, գիտեմ, բայց ընտրություն չունեի: Խեղճը չէր համարձակվում նույնիսկ նայել ինձ: Կուզեի դու այնտեղ լինեիր, Դեյվիդ: Բարի գիշեր, Դեյվիդ, եւ թող բախտը քեզ ժպտա մյուս անգամ»:

Բայց Տա Տունգն արդեն դուրս էր եկել տնից:

ԳԼՈՒԽ 8

*«Օտողներիդ խիստ որոշումները պետք է հարգել
Եվ հետևել խնամիներիդ վստահելի խորհուրդներին»:*

Թաղումներն ու հարսանիքները երկու կարեւոր արարողություններ են, որ երբեք չպետք է անտեսվեն: Նույնիսկ այն ընտանիքներում, որոնք ծայրահեղ աղքատ են ապրում, նման հանգամանքը որոշակի ծախսեր է պահանջում: Այդպիսի ընտանիքի համար պատշաճ է եւ տեղին՝ բավականին մեծ վարկ վերցնել իրենց հարուստ հարազատներից, որպեսզի ծախսեն հենց այդ մի օրը: Հասարակական կարծիքը կաջակցի պարտապանին եւ պատրաստ կլինի դատապարտել ցանկացած հարուստ ազգականի, որն այնքան անխոհեմ կարող է լինել, որ վարկ տրամադրելուց հրաժարվի:

Վու ընտանիքը հարուստ էր, եւ տիկին Վուն շատ լավ հայտնի էր այդպիսի կարեւոր արարողություններ անցկացնելու իր ունակությամբ: Նրա ղեկավարության ներքո հարսանեկան նախապատրաստություններն ընթանում էին ամբողջ թափով: Ինչպես ծրագրեր կազմող գլխավոր հրամանատար՝ նստած դաշտի իր փոքրիկ վրանում, որ մեծածավալ զորաշարժ է նախատեսում, տիկին Վուն հազար բան էր ղեկավարում, հրամայում, պատվիրում ու ծրագրում, մինչ ինքը հարմարավետ նստած էր սենյակի իր բազկաթոռին: Քանի որ Լի Սինը մեռած էր, իր դուստրը շատ էր կախված իրենից, որդին կատարելապես անպետք էր ու անօգուտ, իսկ հարսը՝ բոլորովին անփորձ, տիկին Վուն պետք է հոգար եւ՝ հարսի, եւ՝ փեսայի ընտանիքների գործերը եւ չորս անձի պարտականություն էր ստանձնել: Նա պատվիրեց անկողնու երկու մետաքսե եւ երկու շղարշե վարագույր, բամբակով լցունված ութ ներքնակ, բամբակյա ութ մզդակած վերմակ ու չորս զույգ բարձ, որ ծածկված էին կարմիր կամ կանաչ ատլասով եւ նկարազարդված ասեղնագործ թռչուններով ու ծաղիկներով: Բոլոր նյութերն ու նախշերն ընտրել էր ինքը: Ապա ութ բամբուկե եւ ութ ծղոտե ներքնակներ էին ու չորս զույգ ծղոտե բարձ: Օժիտը պատրաստելու համար տասներկու դերձակ էին տքնաջան աշխատել, որ գալիս էին ամեն առավոտ եւ աշխատում տանը գրեթե յոթ ամիս անընդմեջ՝ տիկին Վուի հսկողության ներքո: Զգեստները հիմնականում մետաքսից ու ատլասից էին եւ դրված էին վառ կարմիր լաքապատ կաշվե տասնվեց մեծ տուփերի մեջ: Նա պատվիրեց նաեւ կահույքի ամբողջական հավաքածու միջնասենյակի եւ երկու ննջա-

ԱՅՈՒՆ ՇԻՒ

րանների համար: Ամբողջն էբենոսափայտից էր, դրվագագարդված սահափով, եւ բերվել էր Շանհայից: Սա եւս մեկ անգամ ընտրվել էր, ըստ նրա ճաշակի, իսկ նրա վճիռը, հայտնի էր, որ միշտ անքննելի է: Սակայն հարսանեկան մահճակալը բացառվեց, որովհետեւ այդ մեկը, տեղական ավանդույթի համաձայն, պետք է ապահովի փեսայի ընտանիքը: Դա, շատ դեպքերում, ընտանիքից ժառանգված արժեք էր, որ փոխանցվում էր փեսայի նախնիների կողմից, եւ այդպիսով միշտ հույս ունեին, որ դա իրենց ընտանիքներում աշխարհ կբերի ավելի շատ սերունդներ:

Հարսանիքից երեք օր առաջ կատարվեց նշանդրեթի պաշտոնական արարողությունը՝ նվերների փոխանակմամբ: Լի ընտանիքը թանկարժեք զարդեր ուղարկեց՝ ութ կտոր ոսկի եւ ութ կտոր նեֆրիտ, հինգ հարյուր քաթթի հարսանեկան տորթեր,- դրանք փոքր կլոր կտորներ էին՝ ամեն մի քաթթիին չորս կտոր,- եւ հարյուր քաթթի շաքար ու կույնքան թեյ՝ երկուսն էլ փոքրիկ տուփերի մեջ: Բացի թանկարժեք զարդերից, այդ ամենը նրա համար էր, որպեսզի Վու ընտանիքը բաժանի ընկեր-բարեկամներին ու հարազատներին: Կային նաեւ հավեր, բաղեր եւ սագեր՝ մաքուր ճերմակ փետուրները կարմիր գունավորած, չորս գույգ խոզ եւ չորս գույգ այծ: Հաջորդ օրը Վու ընտանիքը նորակառույց տուն ուղարկեց կահույքը, սպասքն ու օժիտը եւ երկար մի թափոր՝ քառասունութ բաց տուփերից բաղկացած, որոնք տանում էին ինստունվեց մարդ: Ընդամենը մի քանի դուռ էր մի տնից մինչեւ մյուսը, բայց տիկին Վուն հանձնարարեց մեծ թափորին, որ երկար շրջանածեւ երթուղով գնա, այնպես, որ ամբողջ քաղաքը կարողանար տեսնել եւ հիանար այդ ամբողջ շքեղությամբ:

Նախորդ օրն ապագա հարսը պետք է հրաժեշտ տար ընտանիքին: Թեեւ դա երջանիկ իրադարձություն էր, բայց մթնոլորտը, ինչպես սովորաբար ընդունված է տան համար, որը պատրաստվում է զրկվել աղջկանից, հանդիսավոր էր ու տխուր: Երկու կին էին վարձել, որպեսզի քանդեն Լոտոսի Բուրմունքի մագերի երկար հյուսը եւ ապա այն կրկին վերականգնեն զլիսի ետեւի մասում մեծ օվալածեւ փնջով: Այդ ժամանակ էր եւ միայն այդ ժամանակ, որ որոշ փոքրիկ ավելորդ մագերի հեռացվեցին, եւ նրանք Լոտոսի Բուրմունքին դարձրին կատարելապես նուրբ ու հմայիչ փոքրիկ մի կին: Խնամքով գծվեցին նրա հոնքերը, իսկ շուրթերին առատորեն կարմրաներկ քսվեց: Դեմքին ու պարանոցին շապար եւ կարմրաներկ քսեցին, եւ անուշագոծեցին մուշկի ու ջրաշուշանի խունկով: Երբ նրան ամբողջովին իր նախահարսանեկան հանդերձները հագցրին, երկու կանայք նրան առաջնորդեցին դեպի միջնասենյակ՝ խոնարհվելու եւ ծնկի իջնելու

նախնիների հուշատախտակներին: Այդ արարողության ընթացքում փոքրիկ մի նվագախումբ էր նվագում, եւ Լոտոսի Բուրմունքը կարող էր բարձրածայն հեկեկալ՝ առանց լսվելու: Ապա նա պետք է հրաժեշտ տար իր տատին՝ խոնարհումով, իսկ հետո նույնն աներ հոր եւ մոր հետ: Նրա մայրը հիմա փաստորեն «արտասվող կին էր», որ գրկեց դստերը եւ չէր թողնում, որ հեռանա իրենից: Սա միանգամայն սովորական երեւոյթ կլինէր, երբ ո՛չ մայրը, ո՛չ դուստրը չիմանային, թե խեղճ աղջիկն ինչպիսի ամուսին է ունենալու: Բայց քանի որ տիկին Վուն մտածում էր, որ երիտասարդ զարմիկը լավ ընտանիքից է, խելացի եւ հարուստ, նա համարում էր, որ իր հարսը մի քիչ չափազանցնում է:

Ապագա հարսնացուն այժմ պետք է գլխավորեր տոնակատարությունը, եւ մեծ դժվարությամբ կարողացան դստերը մորից բաժանել:

Արարողության ընթացքում Լոտոսի Բուրմունքը նստած էր գլխավոր սեղանի մոտ չորս փոքրիկ աղջիկների հետ,- քառակուսի սեղանի աջ ու ձախ կողմերում՝ երկու աղջիկ,- եւ ոչ մի ուտելիքի կամ ըմպելիքի ձեռք չտվեց ու շարունակում էր լուռ հեկեկալ: Որպես կանոն՝ չորս աղջիկներն ամեն բան անում են, որպեսզի հարսին համոզեն, որ մի բան ուտի, երբ նա պարզապես ոտքի է կանգնում, որ երախտագիտությամբ ընդունի պատիվը, բայց մերժում է ուտելիքը, որն սկսում է կուտակվել նրա ափսեում: Ապա հյուրերն են ներս մտնում՝ կենացներ առաջարկելու, եւ նա ևս ևս ևս մերժում է բոլորին: Չինաստանում, երբ կենաց է ասվում, անծը, որին վերաբերում է կենացը, պետք է խմի, բայց համեստության պատճառով նա կարող է հրաժարվել, այնպես որ՝ Լոտոսի Բուրմունքի՝ կենացներից հրաժարվելը միանգամայն պատշաճ էր:

Երբ հյուրերը գնացել էին, տիկին Վուն պատվիրեց, որ Լոտոսի Բուրմունքի համար շատ լավ եւ սննդարար ուտելիք բերեն, բայց աղջիկը կրկին հրաժարվեց դիպչել դրան: Ծեր կինն, իսկապես, ինչ-որ չափով անհանգստացավ եւ կշտամբեց աղջկան համար ու քմահաճ լինելու համար: Նա ասաց, թե լիովին հասկանում է, որ լավ ընտանիքի աղջիկը ձեռք չի տալիս ուտելիքին ու խմիչքին, երբ հարյուրավոր զույգ աչքեր կենտրոնացված են իր վրա, բայց հիմա, երբ մենակ է իր տատիկի հետ, ինչո՞ւ չի ուտում, չէ՞ որ ամաչելու ոչ մի պատճառ, իրոք, չունի: Ապա ավելացրեց, որ ամեն աղջիկ վաղ թե ուշ պետք է ամուսնանա, եւ որպես ծանր փորձություն, որ մեկ անգամ տեղի է ունենում ամեն հարգարժան կնոջ կյանքում, նա պետք է կանխատեսի եւ պատրաստ լինի դրան որոշակի քաջությամբ:

Հարսի տանն այդ օրը ամենաբազմազբաղ օրն էր: Որովհետեւ հար-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

սանիքի օրը շատ բան չկար անելու, բայց դստերը պետք է հանձնեին այլ ընտանիքի, որը լինելու էր այդ «երջանկության գործի» կենտրոնը:

Երբ մութն սկսեց ընկնել, տիկին Վուն զգաց, որ շատ լարված օր էր իր համար: Նա թեև ութսունչորսն անց էր, բայց դեռ բավականին եռանդուն էր: Քանի որ նա չափազանց շատ էր ուզում տեսնել իր սիրելի թոռների միությունը, սենյակների մի ամբողջ շարք էր պահել Լի ընտանիքի հետ, որտեղ պիտի իր գլխավոր նստավայրը հիմներ հարսանիքի օրվանից: Սովորական դեպքերում հարսի ընտանիքի ներկայացուցիչները այդ կարևոր առիթով չեն երեւում մյուս տանը: Բացառությամբ այն կարճ ժամանակահատվածի, երբ «երջանկության ծածկապատգարակը» գալիս է հարսի ետեւից, երբ նրա տան ներկայացուցիչները պետք է զբաղված լինեն, հարսի ընտանիքի բոլոր անդամները սովորաբար բավականին միայնակ օր են անցկացնում: Բայց քանի որ տիկին Վուն մոր կողմից տղայի մեծ ծնողն էր, իսկ նրա որդին փեսայի մոր եղբայրն էր, որոշվեց, որ ծեր տիկինն ու իր որդին պետք է այդտեղ լինեին այդ օրը, որպեսզի ղեկավարեին մեծ արարողությունը: Քանի դեռ չէին հայտնվել արարողության սրահում, երբ հարսանեկան ծիսակարգն էր կատարվում, նրանք ավանդույթին հակառակ ոչինչ չէին անում: Որպեսզի կարողանային գնալ Լի ընտանիք առավոտ շատ վաղ, տիկին Վուն այդ երեկո շուտ պառկեց ընելու եւ որդուն էլ արգելեց ուշ ժամի արթուն մնալ: Բայց երբ պարոն Վուն տեսավ, որ տանը հանգիստ է տիրում, սովորականի պես՝ աննկատ դուրս սողոսկեց, որպեսզի այցելի իր ընկերներին, որոնց հետ, որպես կանոն, մնում էր միևնույն լույսը բացվի: Միաժամանակ՝ Լի ընտանիքն էլ ավելի զբաղված էր լինում իրենց նորակառույց տանը: Անընդհատ շտապում էին, որպեսզի զարդարեն հարսի սենյակը, քանի որ հարսի ընտանիքից իրեն այդտեղ բերվեցին միայն մեծ իրադարձությունից մեկ օր առաջ: Քանի որ տիկին Վուն թոռնուհուն ուղարկած իրեն այդքան նուրբ էին ու բազմաքանակ, ավելի շատ ձեռքեր եւ ավելի շատ ինամբ ու հոգատարություն էր պահանջվում, որպեսզի դասավորեին եւ ցուցադրեին դրանք պատշաճ կերպով: Շիաո Մինի մայրն անչափ երջանիկ էր, իսկ մեր փեսան անհամբերությամբ իր նախապատրաստություններն էր տեսնում: Նա հատուկ անուշազոծ լոգանք ընդունեց, ինչպես պահանջվում էր ծիսակարգով, սափրվեց եւ մետաքսե կարմիր ծոպերով հյուսեց իր մազերը: Նրա բոլոր հին զգեստները դեն զցեցին, որպեսզի փոխարինեն նորերով, եւ նրան էլ կանչեցին հանդիսության գլխավոր սեղանի մոտ, երբ իր հարգանքի տուրքն էր մատուցել մորը եւ նախնիների հուշատախտակներին: Այդ ամենը ծիսակարգի հա-

մածայն էր, որպեսզի նախնիներին տեղեկացվեր, որ նա պատրաստվում է կին ունենալ: Նա նստեց պատվո գահաթոռին չորս երիտասարդ տղաների հետ՝ ամեն կողմում երկուսը: Բայց, ի տարբերություն խեղճ աղջկա, նա կերավ եւ խմեց մեծ բավականությամբ:

Մեծ օրվա վաղ առավոտյան հարսանեկան դատարկ գահաթոռը տեղափոխվեց միջնասենյակ, որտեղ խնկի ծողիկներ ու կարմիր մոմեր էին այրվում նախնիների որմնախորշի առջեւ, իսկ գլխավերելում գեղազարդ լապտերներ էին կախված: Հնչեց երաժշտությունը: Երկու կին, հատուկ հրավիրված այդ նպատակի համար, հարգանք մատուցեցին միմյանց, երկու երկար մոմ վառելով՝ սկսեցին նայել բոլոր անկյունները եւ, փաստորեն, դատարկ աթոռի շուրջբոլորն ամենուր՝ այնպես, որպեսզի ապահով լինեին, որ ինչ-որ տեղ չար ոգիներ չեն թաքսված: Դա յուրատեսակ, շարժումներով ու դիմախաղով արտահայտված մի ներկայացում էր, եւ երկու մոմակիրների յուրաքանչյուր շարժումը պետք է նրբագեղ լիներ ու փոխհամաձայնեցված: Ապա, երաժշտության հնչյունների եւ ճայթռուկների աղմուկի ներքո, փեսան, ծի հեծած, աթոռը հասցրեց մինչեւ հարսի տուն, որը հարսանիքի այդ օրը համեմատաբար խաղաղ մի վայր էր դարձել: Նրան ընդունեցին ճայթռուկների բարձրածայն ու անընդմեջ կրակոցներով, բայց, որպեսզի ցույց տային, որ ընտանիքում չեն ցանկանում բաժանվել իրենց աղջկանից, նա երկար ժամանակ սպասեց դրսում, փակ դարպասի առջեւ: Երբ նրա նվագախումբը երեք տարբեր մեղեդի նվագեց, դարպասի դռները բացվեցին, եւ երիտասարդին ուղեկցեցին ընդունարան, մինչ հարսանեկան գահաթոռը տեղափոխվեց միջնասենյակ, որը նույնպես զարդարված էր կարմիր մոմերով ու լապտերներով: Աթոռն այստեղ կրկին մոմերով զննվեց երկու կանանց կողմից, եւ դժկամ հարսը հրաժարվեց դուրս ելնել իր ներքնասենյակի ամուր փակված դռների ետեւից, քանի դեռ նվագախումբը երեք մեղեդի չէր նվագել: Ապա, ճայթռուկների ձայնի ներքո, մայրը բացեց դուռը եւ դուրս հանեց հարսին, որի գլուխը, ավանդույթի համաձայն, ծածկված էր քառակուսի, ասեղնագործ, մետաքսե կարմիր մեծ գործվածքով, եւ հարսին ուղեկցեցին դեպի գահաթոռը: Այն անմիջապես կողպվեց արծաթե փոքրիկ կողպեքով եւ կնքվեց կարմիր թղթի երկու երկար կտորով: Առաջինը դուրս եկավ նվագախումբը, ապա փեսան իր ձիով՝ տանելով նաեւ հարսանեկան գահաթոռը: Նրանք մեկ այլ երկար երթուղով գնացին դեպի նոր տուն: Երբ փեսան մտավ հարսանեկան սենյակ սպասելու, աթոռը դրված էր միջնասենյակում: Արարողապետը, հաջող ելույթից հետո, երկու երիտասարդ տղայի կարգադրեց պա-

հանջել, որ երջանիկ տղամարդը ներկայանա: Թեև նա պիտի որ ամենաշատը ցանկանար գալ, բայց ստիպված էր խոնարհվել սուրհանդակներին և մի քանի անգամ հրաժարվել դուրս գալ իր սենյակից, մինչև որ գային և հորդորեին երրորդ անգամ: Ապա նա դուրս ելավ երկու տղաների հետ՝ ուշադիր հետեւելով արարողապետի հրահանգներին, պոկեց կնիքը, բացեց աթոռի կողպեքը և դուրս թողեց հարսին: Այդ պահին բոլոր ներկաներն առաջ նետվեցին, որպեսզի առաջին անգամ տեսնեն հարսին, թեև գիտեին, որ ոչինչ էլ չէր երեւալու, բացի նրա հագուստից: Քանի որ Լի ընտանիքի կողմից պատրաստված հարսանեկան զգեստները Սուլժոուի ամենահայտնի լավագույն ասեղնագործողների ձեռքի գործն էին, և առասպելական գումար էին արժեցել, նրանք զգացին, որ կրած բոլոր անհանգստություններն ու դժվարություններն արժեին այդ ամենին: Նրանք տեսան մի բան, որ գեղեցիկ ասեղնագործած ատլասի փաթեթի էր նմանվար ու պայծառ, շլացուցիչ գույներով: Հարսանեկան զգեստը երկար էր և ազատ, իսկ հարսի գլուխը ծածկող կարմիր ասեղնագործ գլխաշորը չափազանց մեծ էր: Եվ այն մեծ հաջողությամբ բոլորից ծածկում էր հարսի դեմքը, ու ոչ ոք չէր կարող նրա կզակի կամ պարանոցի նշույլն իսկ տեսնել: Հարսը լրիվ ծածկված մնաց ամբողջ արարողության ընթացքում, որի ժամանակ նա խոնարհվեց Երկնքին և նախնիների հուշատախտակներին, ապա նաև փեսային, որը փոխադարձաբար խոնարհվեց նրան: Դրանից հետո նրանք խմեցին «հարսանեկան գավաթներից»՝ խառնելով երկու գավաթների գինին, և դա արվում էր մի քանի անգամ գավաթները փոխանակելով: Ապա «միացյալ և ներդաշնակ հանգույցը» կապվեց ու արծակվեց: Այս արարողությունը կատարվեց կարմիր մետաքսի կտորի վրա մի մեծ, ինքն իրեն քանդվող հանգույց ստեղծելով, և երիտասարդ զույգն ուղղեց այն՝ երկու ծայրերից բռնելով ու քաշելով: Այս ծիսակարգերից հետո եկավ այն պահը, որին անհամբեր սպասում էին բոլորը, ովքեր գտնվում էին սրահում, փեսան հարսի գլխից հեռացնելու էր մեծ գլխաշորը: Բոլոր հյուրերը մեկ անգամ էլ առաջ նետվեցին: Մինչ բոլորը շունչները պահել էին, Շիաո Մինը, անհամբեր ձեռքերով, հեռացրեց մետաքսի կտորը: «Օ»,- հեալով հառաչեց Շիաո Մինը՝ և հայացքով իզուր փնտրեց իր մորը: Բոլոր հյուրերը, որ նախկինում տեսել էին Լոտոսի Բուրմուկներին, խիստ ապշած էին: Հարսանեկան խալաթն ու կիսաշրջագգեստը հագին՝ փեսայի առջև կանգնած էր սիրունիկ աղախնուհին՝ Փոքրիկ Ծիածանը: Արարողապետը, որը չգիտեր տարբերությունը, շարունակեց իր պարտականության մնացած մասը կատարել: Նա երգեց իր բարեպատեհ պոեզիայի չորս

տողերը եւ հայտարարեց, որ փեսան պետք է իր հարսին ուղեկցի հարսանեկան սենյակ: Չկարողանալով մորը գտնել՝ Շիառ Մինը, կատարյալ տղամարդը, վարանեց միայն մեկ վայրկյան, երբ նայեց ներկաների տարակուսած ու տազնապած դեմքերին: Նա հեզնական ժպտաց եւ հարսին փոխարինողին սկսեց ուղեկցել դեպի սենյակ: Հարսնասենյակի դռան մոտ նա կանգ առավ: Նա գործեց ճիշտ այնպես, ինչպես պատշաճ էր, որովհետեւ, սովորական դեպքերում, հարսին պետք է թողնեին իր սենյակում, որտեղ նրան օգնելու էին փոխել հագուստը, վերահարդարել մազերը եւ մի փոքր հանգստանալ՝ նախքան դուրս ուղեկցելը, որպեսզի իր հարգանքը մատուցի իր նոր ընտանիքի անդամներին եւ հյուրերին:

Թողնելով հարսին՝ Շիառ Մինը նետովեց դեպի տիկին Վուն: Նա տեսավ, որ մայրը հենց նոր իրենից առաջ է հասել այդտեղ եւ դռն հեկեկալով պատմում է իր ծեր մորը, թե ինչ խաղ են խաղացել իր եւ որդու գլխին: Տիկին Վուն սաստիկ զայրացած էր, բայց զարմանալիորեն զսպեց զգացմունքները: Հանգիստ տոնով նա հորդորեց. «Լաց մի՛ լինի, աղջիկս, եւ անմիջապես վերադարձիր հյուրերի մոտ միջնասենյակ: Ձեւացրու, թե ոչինչ էլ չի եղել, եւ շարունակիր ամեն բան անել այնպես, ինչպես կանեիր, եթե աղջիկը Լոտոսի Բուրմունքը լիներ: Եթե հյուրերից որեւէ մեկը, որ նկատել է տարբերությունը, հարցնի քեզ այդ մասին, ասա, որ Լոտոսի Բուրմունքը հանկարծակի հիվանդացել է, եւ ես կարգադրել եմ աղախնուն, որ ներկայանա արարողությանը իր երիտասարդ տիրուհու փոխարեն: Պաշտոնական արարողությունը կկատարվի հենց որ Լոտոսի Բուրմունքը լավ զգա: Ինչ էլ որ պատահի, մենք պետք է մեր դեմքը փրկենք: Գնա եւ ժպտա քո հյուրերին,- նա ձեռքի շարժումով ճանապարհեց դստերը եւ նայեց զայրացած տղային:- Ճիշտ արեցիր, Շիառ Մին: Հիմա դու պետք է Փոքրիկ Ծիածանին քո հարճը դարձնես: Ծարունակիր արարողությունը, մինչեւ որ ես ու աներդ գնանք տուն եւ պարզենք, թե ինչ է նշանակում այս ամբողջ անստություն»: Տիկին Վուն որդուն ուղարկեց՝ կարգադրելու, որ ծածկապատգարակները պատրաստ լինեն իրենց տանելու: Նույնիսկ այդպիսի անհարմար պահին նա ամեն ինչով մնաց մեծ տիկին: Արժանապատվությունը նրան ստիպում էր, որ ծածկապատգարակով գնա թեկուզեւ ընդամենը մի քանի տուն այն կողմ:

Բայց հենց այդ պահին երկու կարետր հյուր ժամանեցին: Դրանք տեր եւ տիկին Մա-Կե-Լաոներն էին: Տիկին Վուն գրեթե անիծեց օտարերկրացիների այդ անժամանակ ժամանումը ստիպված էր պատվիրել որդուն, որ մնա եւ դիմավորի «բարբարոսներին», իսկ ինքը գնաց մենակ: Չնայած

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

բավականին շփոթված էր անհարմար իրավիճակի պատճառով, բայց պարոն Վուն սպասում էր նրանց այցին: Նա հյուրերին ուղեկցեց ընդունելության սենյակ, որ հատուկ նրանց համար էր պատրաստված: Դռան մոտ պարոն Ման կտրուկ ետ շրջվեց եւ ասաց. «Ներեցե՞ք, պարոն Վու, դուք պետք է որ սխալ թույլ տված լինեք»:

«Ոչ, պարոն Մա,- պատասխանեց պարոն Վուն:- Այս սենյակն ինքս եմ ձեռավորել ձեզ դիմավորելու համար»:

«Պետք է որ ինչ-որ սխալ լինի: Ես հենց նոր մի բան տեսա, որ չպիտի տեսած լինեի»:

Պարոն Ման կնոջը շնջաց.«Նայիր, Սերի, ի՞նչ են գցել դեպի դուռը նայող երկու մեծ աթոռների թիկնակներին»: Առանց շրջվելու նա ցույց տվեց իր ետեւում գտնվող սենյակի ուղղությամբ:

«Օ», - բացականչեց տիկին Ման եւ մի պահ հանկարծակիի եկած ընկրկեց: Երկու աթոռների բարձր թիկնակներին կանացի վարդագույն մետաքսե ժանեկավոր մի վարտիք եւ մի սեղմիրան էին ցուցադրված՝ ամբողջ տեսքով:

«Մի՞թե լավը չեն, տիկին Մա», - ասաց տանտերը ժպիտով:

Տիկին Ման փորձեց ժպտալ, բայց խիստ շփոթված էր: Նա առաջ անցավ ասելով. «Այո: Բայց կարծում եմ դրանք հարսի նոր ներքնազգեստներն են: Թույլ տվեք տանել նրա մոտ»:

Պարոն Ման հայացքը բարեկրթորեն երկինք էր հառել:

«Ախ չէ՛, տիկին Մա: Նրանք չեն: Ես դրանք պատվիրել եմ Շանհայից հատուկ Ձեզ համար», - ասաց պարոն Վուն:

«Քեզ համա՞ր, Սերի,- գոչեց պարոն Ման:- Ի՞նչ նկատի ունեք»: Նա մարտահրավեր նետող հայացքով նայեց կնոջը, փոխանակ նայել վիրավորողին:

«Չգիտեմ էլ, թե ինչ նկատի ունի», - բացականչեց կինը՝ որոշակիորեն զարմացած:

Անմեղ տանտերն էլ ավելի էր զարմացած, քան իր հյուրերը:

«Ինչո՞ւ, ես կարծում էի Ձեզ դուր են գալիս այդ իրերը: Երբ Ձեր տուն եկանք, Դուք նույն կերպ մեր պատվին ցուցադրել էիք կանացի շրջազգեստ եւ կանացի անդրավարտիք, եւ հիմա, երբ ես հատուկ ջանքեր եմ գործադրել, որ էլ ավելի թանկարժեք բաներ ճարեմ Ձեզ գոհացնելու համար, Դուք չեք էլ նայում դրանց: Մի՞թե արդար է»:

«Ուրեմն սա կշտամբա՞նք է: Բայց Դուք պատճառ չունեիք վիրավորելու հոգեւորականի եւ նրա կնոջը...»:

«Ո՛չ, իհարկե, ես ամենեին մտադրություն չունեի ձեզ վիրավորելու: Մի՞թե Դուք փորձում էիք վիրավորել ինձ, երբ ցուցադրում էիք շրջագագեսուն ու անդրավարտիքը»:

«Ե՛կ, Մերի, գևանք, թողնենք այս խելագարին», - ասաց պարոն Սան՝ որքան կարող էր կատաղությունը զսպելով: Նա փորձեց կնոջը քաշելով հեռու տանել:

«Հանգիստ, Տոն,- շնչաց կիևը:- Չեմ կարծում, թե նա դիտավորյալ է գոռեհիկ եղել: Ես կստիպեմ նրան ներողություն խնդրել...»:

«Ո՛չ, Մերի: Դու չափազանց անմիտ ես, որ թույլ ես տալիս նրան քեզ հանդարտեցնի: Դու նրան ասացիր, որ հմայիչ է, եւ հիմա տեսնում ես, թե ինչպես է իրեն թույլ տալիս, չարաշահելով քո հաճոյախոսությունը, պատասխանել դրան»:

«Ե՛կ շնորհավորենք երջանիկ սկեսրոջը եւ բախտավոր երիտասարդ զույգին, Տոն, իսկ հետո հեռանանք առանց տոնակատարությանը մնալու», - աղաչեց տիկին Սան:

«Ո՛չ, Մերի», - պարոն Սան հրաժարվեց փոխզիջման գևալ:

Այդ ժամանակ գործող հարսը հանգիստ էր առել եւ ենթարկվում էր ծիսակարգի այն կարեւոր մասին, երբ իր առաջին հարգանքն էր մատուցելու, կանգնած կամ ծնկած՝ փեսայի հետ կողք-կողքի, իր նոր ընտանիքի անդամներին, հարազատներին ու հյուրերին: Աթոռները տեղափոխվել էին միջնասենյակի կենտրոն, եւ Շիատ Միևի մորը բերել էին, որպեսզի նստի եւ առաջինը հարգանք ու պատիվ ստանա: Լի Կանի կիևը հաջորդն էր, որ պիտի նստեր պատվո աթոռին, եւ մեկ առ մեկ բոլոր այդ ներկաները պատրաստվել էին, որպեսզի ստանան նոր ամուսնացող զույգի հարգանքի տուրքը: Հոգևեցուցիչ գործ էր դա, բայց երիտասարդ զույգի ջանքերն անվարձահատույց չէին մնում: Որովհետեւ յուրաքանչյուրն, ով պատիվ էր ստանում, գրպանի ծախսի համար մի քիչ դրամանվեր պետք է տար նրանց: Հարուստները տասը թաել արծաթի չափ գումար էին տալիս, եւ շատ քչերն էին, որ երկու թաելից պակաս էին տալիս: Ավելի աղքատ ընտանիքներում սովորաբար միայն շատ քիչ կանխիկ դրամ էին տալիս, իսկ հետո ամենափոքր գումարն իջնում էր մինչեւ հարյուր կտոր կանխիկ, որը միայն արծաթե թաելի մեկ տասներորդից մի քիչ ավելի էր կազմում: Հյուրերից մեկը սովորաբար կամավոր հանդես էր գալիս որպես պատվավոր գանձապահ եւ ստանում էր նվիրատված գումարներն ու դրանք գրանցում կարմիր թղթից պատրաստված գրքում: Հարգանք մատուցելու այդ կարեւոր արարողությունից հետո հյուրերը շնորհավորելու էին, բայց ոչ թե

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

փեսային կամ հարսին, այլ սկեսրոջը:

Յանկացած հյուր, որ հեռանում էր Լախքան իրեն հարգանք կմատուցեին, կդատապարտվեր՝ որպես մեկը, որը չի ցանկանում բացել իր քսակը: Քանի որ պարոն Ման եւ տիկին Ման մինչ այդ եղել էին չինական այլ հարսանիքների, գիտեին, որ հազիվ թե լավ դիտվեր, եթե իրենք հեռանալին այդ պահին: Հետեւաբար, երբ Լրանք լսեցին, որ երիտասարդ զույգն այդ պահին իր հարգանքի տուրքն է մատուցելու հյուրերին, պարոն Ման դադարեց ասել, թե իրենք պետք է գնան, եւ տիկին Ման փորձեց ամեն կերպ ժպտալ ու հանգստացնել Լրան:

«Համոզված եմ, որ չէիք ուզում մեզ վիրավորել: Դա պարզապես սխալմունք էր: Որպեսզի ցույց տանք, որ վատ չենք տրամադրված Ձեր հանդեպ, մենք կգնանք միջնասենյակ եւ մեր անկեղծ շնորհավորանքները կմատուցենք ձեզ բոլորիդ»:

«Բայց... բայց...», - պարոն Վուն վախենում էր Լրանց բերել, որ հարսին տեսնեն: - ... Լրանք դեռ իրենց հարգանքն են մատուցում հյուրերին...»: Նա բնագործար փակում էր ամուսինների ճանապարհը:

«Ինչո՞ւ: Մի՞թե արժանի չենք Լրանց հարգանքն ստանալու», - պարոն Ման Լորից հարձակման անցավ:

«Իհարկե, արժանի եք: Ես միայն մտածեցի, թե դուք չեք հոգացել...»:

«Ինչո՞ւ ոչ, - պարոն Ման հանեց իր քսակը: - Մենք գիտենք ավանդույթը եւ պատրաստվել ենք դրան»:

Պարոն Վուն չգիտեր, որ պարոն Ման շոտլանդացի է, եւ չէր կարող իմանալ, թե ինչ կարող է անել իր հյուրը: Այդուհանդերձ, ստիպված էր առաջնորդել Լրանց դեպի միջնասենյակ, եւ Լրանց անմիջապես առաջարկեցին Լստել հատուկ այս արարողության համար Լախատեսված բազկաթոռներին: Երբ Լրանք Լայեցին հարսին, ապշեցին՝ Լոտոսի Բուրմունքի փոխարեն մեկ ուրիշին տեսնելով Լրա տեղում: Ըփոթված ու դժկամորեն ստանալով ողջույնը՝ պարոն Ման վեր կացավ, Լշան արեց տանտիրոջը եւ բացատրություն պահանջեց: Պարոն Վուն շտապեց առաջ գալ եւ շշջաց. «Ամեն ինչ կարգին է, պարոն Մա: Դա մեր աղախինն է՝ Փոքրիկ Ծիածանը, որ Լերկայանում է իր երիտասարդ տիրուհու փոխարեն: Խեղճ դուստրս՝ Լոտոսի Բուրմունքը, հանկարծակի հիվանդացել է»:

«Բայց, մա՞րդ Աստծո, մի աղջիկ հանդես է գալիս մեկ ուրիշի փոխարեն՝ որպես հա՛րս: Ծաղրո՞ւմ եք, ի՞նչ է»:- Պարոն Ման զգաց, որ սա արդեն չափազանց է:

«Ամեն ինչ կարգին է, պարոն Մա, - տանտերը փորձում էր եւս մեկ անգ-

ամ հավաստիացնել նրան:- Մենք Փոքրիկ Ծիածանին որպես հարճ ենք տալու Շիաո Մինին: Ամեն բան կատարյալ կարգով կանոնով է»:

Սա վերջին կաթիլն էր:

«Մերի, այն իսկ պահին հեռանանք այս գժանոցից: Երբեք այլևս մոտ անգամ չեմ գնա հեթանոսական որեւէ հարսանիքի»: Նա պատվավոր գանձապահի ձեռքից արագ ետ քաշեց կարմիր ծրարը՝ այդտեղ դրված փողի հետ միասին, որ նախատեսված էր որպես դրամական նվիրատվություն հարսին ու փեսային, եւ կնոջը վեր քաշեց բազկաթոռից: Նախքան հնարավոր էր ինչ-որ բան անել, նրանք արդեն լքել էին տունը՝ տարակուսած ամբոխի լսելի շուկների ներքո: Պարոն Վուն շատ չէր զարմացած նրանց հեռանալով: Նա գիտեր, որ օտարերկրացիները չեն ընդունում իրենց՝ հարճեր ունենալու առավելությունները, բայց երբեք չէր պատկերացնի, թե այդպիսի միությունը չափազանց է, որպեսզի հոգեւորականը փորձի ընդդիմանալ: Չէր կարողանում հասկանալ նաեւ, թե ինչու օտարերկրացիների մոտ չին կնոջ «անպատշաճ» հագուստի ցուցադրությունը բարձր է գնահատվում, մինչդեռ օտարերկրացի կանանց ներքնազգեստի ցուցադրումը անհանդուրժելի էր համարվում:

Պառնանք տիկին Վուին. նա հասավ իր տուն եւ տեսավ, որ ո՛չ իր հարսը, ո՛չ թոռնուհին այնտեղ չէին: Ծառաներն ասացին, որ իրենք Լոտոսի Բուրմունքի այդտեղ չլինելուն չէին կասկածում, բայց երբ Լոտոսի Բուրմունքի մայրը դուրս էր եկել իր ծածկապատգարակով հարսանեկան աթոռը տանելուց հետո, իրենք նկատել էին, որ աղախինը՝ Փոքրիկ Ծիածանը, ոչ մի տեղ չկա: Տիկին Վուն այդ ցնցումն ընդունեց գրեթե անհավանական հանդարտությամբ: Նա ասաց, որ ինքը որոշ չափով հանգիստ է՝ իմանալով, որ իր հարսը դուրս է ելել պատշաճ կերպով՝ ծածկապատգարակով: Տիկին Վուն մտավ նրանց սենյակները՝ ստուգելու եւ տեսավ, որ իր հարսը թողել է իր բոլոր իրերը առանց ձեռք տալու, մինչդեռ Լոտոսի Բուրմունքը գրեթե ոչ մի հագուստ իր հետ չի վերցրել: Շուտով աթոռակիրները ետ եկան, եւ Տիկին Վուն անմիջապես նրանցից պահանջեց, որ ասեն, թե ուր են տարել իրենց երիտասարդ տիրուհուն:

«Երիտասարդ տիրուհին ասաց, որ ուզում է խունկ ծխեցնել Հավասարակշիռ մտքի կուսանոցում՝ Արժանապատիվ մուտքի դարպասներից դուրս: Մենք նրան տարանք այնտեղ, եւ մեզ ասացին, որ չպետք է պասենք, այլ պիտի տուն գնանք»,- ասաց առաջին աթոռակիրը՝ վատ կանխազգացումներով լի:

Տիկին Վուն մի ակնթարթ լուռ էր, ապա հեկեկացող ձայնով ասաց.

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Ինչքան պարտաճանաչ է իմ հարսը: Հարսանիքի պատճառով ես մոռացել էի, որ այսօր իմ ամուսնու մահվան քսաներորդ տարեկիցն է: Խուճկ ու մոմեր եւ թղթադրամներ պատրաստեցեք. ես գնում եմ Հավասարակշիռ մտքի կուսանոց՝ միանալու հարսիս՝ իմ խեղճ հանգուցյալ ամուսնու հիշատակին հարգանքի տուրք մատուցելու»:

Նա անմիջապես կարգադրեց, որ ծածկապատգարակները պատրաստ լինեն: Հենց որ զոհաբերության համար օգտագործվող իրերը բերեցին նրա մոտ, նա մտավ իր ծածկապատգարակը եւ ճանապարհ ընկավ դեպի Հարավային քաղաքի դարպասը, իսկ նրան հետեւում էր սպասուհին՝ մեկ այլ ծածկապատգարակում: Բուդդայական Հավասարակշիռ մտքի կուսանոցը գտնվում էր ինամքով ընտրված բարձրադիր մի վայրում՝ շրջապատված բամբուկի պուրակով, քաղաքից չորս լի հեռավորության վրա: Կուսանոցի առջեւի բակում սոճու մի քանի ծառ կար՝ բարձր ու վեհաշուք: Ելնելով Նանչան քաղաքի խիտ բնակեցված արվարձանից՝ հեռու հեռվից կարելի էր տեսնել այդ վայրը՝ որպես մուգ կանաչ մի շերտ: Ավելի մոտենալիս՝ ծառերի միջից աստիճանաբար հայտնվում էր Սին դինաստիայի ճարտարապետության բարձրաբերձ կառույցը: Կարելի էր տեսնել, որ այդ վայրը մշտապես պահպանվում էր գերազանց ու ևորոգ տեսքով: Անցած հարյուրավոր տարիներն այդ շինությանը միայն հնություն ու պատկառանք էին հաղորդել, որի հետ ոչ մի ժամանակակից կառույց, ինչքան էլ հոյակերտ լիներ, չէր կարող երբեք համեմատվել: Տիկին Վուս անտրամադիր էր, որպեսզի գնահատեր կուսանոցի գեղեցկությունը: Նա պատգարակակիրներին ասաց, որ անցնեն բակի միջով եւ գնան ուղիղ գլխավոր սրահ: Սպասուհին առաջինն էր իջել, եւ կույսերը, որոնք նշանակված էին ընդունելության ծառայություն մատուցելու, շտապեցին դիմավորելու եւ ողջունելու նրան: Տիկին Վուս նրանց ձեռքով հեռանալու նշան արեց՝ ասելով, թե ինքն ով է եւ որ ուզում է միայն տեսնել մայրապետին՝ կարելու որ հրատապ գործով: Այդ լսելով՝ ընդունարանի կույսերից մեկը նրան ուղեկցեց հատուկ հյուրասենյակ, իսկ մյուսը գնաց տեղեկացնելու մայրապետին:

«Ամիտաբհա»:

Շատ ծեր մի միանձնուհի, որի գլխի մազերն ամբողջովին սափրված էին, մտավ սենյակ՝ երիտասարդ մի աղջկա ուսին հենված: Նա գորշ պատմունճան էր հագել, որն այնքան լայն էր իր հագին, որ երբ նրբագեղորեն առաջ էր սահում, ստեղծվում էր մի պատկեր, ասես դանդաղ ճախրում է ամպերի միջով: Մայրապետը խոր գլուխ տվեց տիկին Վուսին, երբ արտաբերեց Բուդդայի սուրբ անունը:

«Այս խոնարհ միանձնուհին իր հարգանքի տուրքն է մատուցում պատվափոր տիրուհուն: Խնդրեմ նստեցեք»:

«Իմ ծերունագարդ անձը փոխադարձում է մեծ մայրապետի հարգանքները,- տիկին Վուն երբեք չէր մոռանում պատշաճ վարվելակերպը:- Ինձ հենց նոր տեղեկություններ են հասել, որ իմ խոնարհ եւ անմիտ հարսն այստեղ է եկել... »:

«Այո, նա այստեղ է, Ամիտաբհա: Բայց պատվարժան տիրուհին պետք է ներողամիտ լինի այս խոնարհ միանձնուհու հանդեպ...»,- մայրապետը մի պահ վարանեց՝ նայելով տիկին Վուն բավականին շփոթված:

«Ցավում եմ, որ մեծ մայրապետը պետք է ներդություն կրի իմ համեստ ընտանիքի մանրուքների համար: Իմ անմիտ հարսը սիրահարի վեճ է ունեցել անպիտան որդու հետ եւ իր երեխայական բնավորության պատճառով զայրացել է ու եկել Ձեր հոյակապ կուսանոցը: Բարի չէի՞ք լինի ուղարկել նրան ինձ մոտ, որպեսզի տուն տանեմ ինձ հետ: Նրանք հասել են միջին տարիքի, բայց դեռ երեխաների պես են պահում իրենց: Պետք է անհապաղ ուշքի գան»:

Մայրապետը, սրտառուչ ժպիտով, իր մեծ թեզանիքի միջից մի ծրար հանեց եւ երկու ձեռքով հանձնեց տիկին Վուն:

«Վախենամ, որ Ձեր ասածից շատ ավելի հեռուն է գնացել, պատվարժան տիրուհի: Ձեր հոյակապ հարսը պարզապես կտրել է իր «հոգս ու անախորժության երեք հազար թելերը» ու մտել «Դատարկության դռներից» ներս եւ ինձ մեծ պատիվ է արել՝ դառնալով իմ հետետորդը: Ահա նրա մազերը, որ խնդրել է վերադարձնել Ձեզ: «Ոսկորը, միսը, կաշին ու մազերը պատկանում են ծնողներին,-ասում է իմաստունը:- Եվ դու չպետք է հանկարծ պատահաբար վնասես դրանք»: Նրա ծնողները մահացած են, Ամիտաբհա, եւ նա ուզում է, որ Դուք՝ իր սկեսուրը, վերցնեք սա Ձեզ հետ»:

«Օ՛, ո՛չ,- տիկին Վուն սկսեց կորցնել ինքնատիրապետումը: - Ո՛ր է նա: Ես... Ես պետք է... տանեմ... նրան տուն... Ես պե՛տք է: Փոքրիկ մի վեճ...»:

«Տիմա արդեն շատ ուշ է, պատվարժան տիրուհի: Նա ինձ ասաց, որ ոչ մի վեճ չի եղել, որ ինքն իր դստերն ամուսնացրել է մեկի հետ, որին Դուք չէիք սիրում, եւ որ ինքը կհանդիպի Ձեզ ու թողություն կխնդրի Ձեզնից միայն Մեծ Անդրաշխարհի դեղին աղբյուրների մոտ, Ամիտաբհա»:

Տիկին Վուի համար մայրապետի հանգիստ, բայց հաստատուն բառերը հնչեցին ավելի բարձր եւ ավելի կործանարար, քան ամպրոպն ու որոտը, եւ երբեմնի սառնասիրտ ու ինքնատիրապետումը չկորցնող տիկինն զգաց, որ Երկինքը փոփ է գալիս, եւ երկիրը ցնցվում է: Աստղեր պար եկան

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Նրա աչքերի առջեւ, եւ գլուխն սկսեց պտտվել՝ հետզհետեւ ավելի ու ավելի արագ: Սպասուհին, տեսնելով, որ իր ծեր տիրուհին տարօրինակ տեսք ունի, նետվեց առաջ, բայց կարողացավ միայն բռնել նրան, երբ գետնին էր տապալվում:

Սայրապետն իր միանձնուհիներին կարգադրեց տիկին Վուին պառկեցնել թախտին եւ իսկույն բժիշկ կանչել: Տիկին Վուն կամաց ուշքի եկավ, եւ երբ բժիշկն արդեն ժամանեց, նա իրեն բավականին լավ էր զգում, որպեսզի պահանջեր, որ իրեն անմիջապէս տուն տանեն: Բժիշկը չկարողացավ տարհամոզել, եւ նրան իր ծածկապատգարակով տուն տարան:

Այդ ամբողջ ժամանակ մայրապետը ոչ ոքի թույլ չտվեց, որ հարսին տեղյակ պահեն տիկին Վուի ներկայության մասին: Երբ կինը «թողել է իր տունը եւ ծածկվել Դատարկության դռներից անդին», նա այլեւս չի համարվում այս աշխարհինը, որը լի է հոգս ու ցավով:

«Յոթանասուն տարեկանին երբեք մի՛ պահիր, որ մնա ճաշելու,

Եվ ութուն տարեկանին երբեք մի՛ պահիր, որ մնա թեյելու»:

Այս ասացվածքը ցույց է տալիս, թե որքան կարեւոր է, որ մարդ տանը մեռնի: Տիկին Վուն, որ ութունչորսն անց էր, գիտեր՝ այս հարվածն ստանալուց հետո իր վախճանը մոտ է: Ողջ կյանքում նա միշտ սեփական գործելակերպն էր ունեցել ամեն ինչում: Ոչ միայն տասնյոթ երկարուձիգ տարիներ փայփայած իր մեծագույն ցանկության խորտակումը ճակատագրական եղավ, այլ նաեւ հեղինակությունը կորցնելը, որը մշտապէս ջանացել էր բարձր պահել. սա այնպիսի հարված էր, որ նա այլեւս չէր կարող տանել: Նա տուն հասավ մթնշաղին: Բոլոր հյուրերը գնացել էին՝ տեսնելով, որ ինչ-որ բան խորապէս սխալ է: Որդին, դուստրը եւ Շիառ Սինը շտապեցին նրա մոտ, եւ սպասուհին նրանց պատմեց այն ամենն, ինչ լսել էր ու տեսել: Տիկին Վուն նրանց միայն թույլ ու կամացուկ հարցրեց. « Այդ... ձկնորսի... լակոտը... եղե՞լ է... այստեղ... ընդհանրապէս»:

«Ոչ»,- եղավ պատասխանը:

Այլեւս կարիք չկար քննել ու պարզել, թե ինչ է եղել: Բոլորն էլ շատ լավ գիտեին՝ ինչ պետք է տեղի ունեցած լիներ: Լի Սինի ցանկությունն ի վերջո կատարվել էր:

Տիկին Վուն վախճանվեց հաջորդ օրը: Եվ ինչ էլ որ արեցին, նրա աչքերը մնացին լայն բացված:

Լի ընտանիքի հարսանիքին հետեւեց Վու ընտանիքի թաղումը: Շատ ցավալի է, որ մարդ չի կարողանում սեփական թաղման պատասխանատվությունը վերցնել իր վրա, հակառակ դեպքում՝ տիկին Վուի թաղումը, լի-

նելով նրա կյանքի ամենաքիչ կարեւոր գործառնայթը, կլիներ մեծագոյն ներկայացումը, որ Նանչան քաղաքը երբեւէ տեսել էր:

Մոր մահանալով եւ կնոջ հեռանալով պարոն Վուս տեսավ, որ թեւէ պետք է միայնակ լիներ, բայց թեթեւացման մի զգացում կար, որ նախկինում երբեք չէր ունեցել: Որպեսզի խուսափի ամբողջ քաղաքում բամբասանքի առարկա դառնալուց, նա որոշեց թողնել Նանչանի իր տունը եւ ապրել Շանհայում, որտեղ շատ ընկերներ ուներ: Շիաո Մինը, լսելով իր աներոջ այս մտադրոյթան մասին,- քանի որ պարոն Վուսն նա դեռ իր աներն էր համարում,- ինքն էլ մտադրվեց միանալ թեթեւաբարո ծերունուն: Իր տանը եւ Վուս ընտանիքում տեղի ունեցած վերջին դեպքերի պատճառով նա ստիպված էր թաքնվել ընկերներից ու հարազատներից, որպեսզի խուսափի անհարմար վիճակից: Նա այցելեց թեթեւաբարո աղջիկների բուլոր տները այդ փոքրիկ գավառական մայրաքաղաքում եւ, լինելով շատ նրբաճաշակ երիտասարդ, եկավ այն համոզման, որ այդ վայրերից ոչ մեկն արժանի չէ իր կողմից երկրորդ, կամ, լավագոյն դեպքում, երրորդ այցելույթան: Քանի որ երես չունէր երեւալու միսիոներական դպրոցում, մտածեց, որ ավելի լավ կլինի ընկերակցի աներոջը եւ մոռանա իր խղճի խայթը՝ ճամփորդոյթան մեկնելով Շանհայ: Հարսանիքի եւ թաղման, ինչպես նաեւ իրենց հետագա գիշերային այցերի պատճառով նրանք շատ հաճախ էին տեսնում մեկմեկու եւ իրար բավականին մոտիկից էին սկսել ճանաչել: Բացի այդ, երկուսն էլ իրենք իրենց համարում էին չափազանց զգայուն, հատկապես կանանց վերաբերող հարցերում: Քանի որ երկուսն էլ կին էին կորցրել, նրանք զգում էին, որ այժմ շատ ավելի սերտորեն են կապված իրար, քան նախկինում: Նրանք ընդհանուր շատ բան ունեին:

Երբ Տա Տունգը հարյուր թաւէ ստացավ Շիաո Մինից, որը նրան խորհուրդ էր տվել հնարավորինս շուտ հեռանալ Պեկինից, քանի որ տարեվերջին ճանապարհային փոխադրամիջոցները վատ էին լինելու, նա դեռ լիովին չէր կողմնորոշվել, թե ինչ անի: Հոգեւոր խորհրդատվոյթունը, որ նա փնտրում էր պարոն Մայի մոտ, շատ ծանր էր ու հուսալքող, եւ նա սարսուռում էր, երբ մտածում էր տիկին Մայի ասածների մասին: Այդքան շատ գումար ունենալով իր ձեռքին առաջին անգամ նա իրեն միլիոնատիրոջ նման էր զգում: Նա հիշում էր, որ մեծ հորաքոյրը հրաժարվել էր Լի Կանից ընդունել իրենից պարտք վերցված փողերի ետվճարումը, որովհետեւ գիտեր, որ նա դրանք ձեռք է բերել իր բռնձի դաշտերի վաճառքից: Քանի որ պարտքը մինչ այդ դեռ հատուցված չէր, որովհետեւ Լի Կանի աշխատավարձը շատ քիչ էր ավելի, որպեսզի ընտանիքը կերակրելուն բավարարեր,

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Տա Տունգն այժմ տեսնում էր, թե ուր է գնալու իր արծաթի մի փոքր մասը: Նա գնաց գյուղ, եւ հորեղբոր կինը շատ ուրախ էր նրան նորից տեսնել: Նա կարծում էր, թե տղան եկել է, որ Նոր տարվա արծակուրդը տանն անցկացնի: Առաջին իսկ հնարավորության ժամանակ Տա Տունգը մեծ հորաքրոջ սենյակում մի անկյուն քաշեց նրան եւ հանձնեց երեսուն թաել արծաթադրամ: Իհարկե, մեծ հորաքույրը պահանջեց ասել, թե որտեղից է այդ գումարը, եւ Տա Տունգն ամեն ինչ հայտնեց նրան: Մեծ հորաքույրը հեգնալից ծիծաղեց:

«Հա՛: Դա քո սեփական փողն է, որ այժմ օգտագործվում է քեզ կաշառելու համար, որպեսզի հեռու մնա Լոտոսի Բուրմունքից, որն իրականում քո՛ նշանածն է: Լի Սինի կինը քանիցս մեզնից շատերի մոտ ակնարկել է՝ քանի որ Լոտոսի Բուրմունքն ուներ ծննդյան ու բախտացույցի շատ արտառոց տվյալներ, իրականում քե՛զ հետ են նշանել աղջկան, եւ Լի Սինի ծրագիրն է եղել՝ զիջել ձեր տիկնոջը, քանի դեռ նա ողջ է, բայց աղջկան ամուսնացնել քեզ հետ, երբ նա մահանա: Մվ կարող էր մտածել, թե Լի Սինն իր զոքանչից առաջ կմահանա: Հիմա, երբ Լի Սինը մեռած է, նրա այրին, ակնհայտորեն, միտքը փոխել է: Ինչ էլ որ լինի, աղջիկն իր մորը համապատասխան չէ: Ես չեմ ուզում անհանգստանալ այդ երկու ընտանիքների համար: Քաղաքի հարուստ ընտանիքները միշտ խառնաշփոթի մեջ են: Աղջկա մասին էլ չեմ մտածում: Նա չափազանց գեղեցիկ է, եւ ես դեռ չեմ հավատում, որ Վու ընտանիքի անառակ որդին ի վիճակի է երեխա ունենալու: Լոտոսի Բուրմունքն ամենեւին նման չէ իր հորը»:

«Բայց նա ճիշտ իր մոր կրկնօրինակն է»:

«Կարող է այդպես լինել: Թեւեւ երբեք չեմ տեսել մորը, բայց շատ եմ լսել նրա մասին Լի Սինից եւ ուրիշներից: Ինչպիսին մայրն է, այնպիսին աղջիկն է: Նրանցից ոչ մեկին ես չեի վստահի: Թե ինձնից խորհուրդ կուզեիր, ընդհանրապես նրանց մոտ մի՛ գնա: Սիրուն կինը միշտ կարող է խաբել տղամարդկանց եւ ստիպել նրանց, որ թե՛ կյանք, թե՛ գործ զոհաբերեն իրենց ամենաչնչին քմահաճույքներին»:

«Ես հաստատակամ եմ, եւ ոչ ոք չի կարող ինձ ստիպել իմ կամքին հակառակ մատուցել անգամ շարժելու: Բայց նա կարծես թե մեծ փորձանքի մեջ էր եւ ուզում էր, որ ես իրեն հեռու տանեմ Շիաո Սինից: Չպե՛տք է օգնեմ նրան իր սոսկալի դժբախտության մեջ»:

«Գրողի ծո՛ցը սոսկալի դժբախտությունը: Այս աշխարհում սխալ ու ճիշտ չկա: Դու ինքդ նախ պետք է մտածես քո մասին: Նրանք սխալ էին՝ քեզ զրկելով քո օրինական նշանադրությունից, բայց դա լավ պրծնել կլի-

նի: Եկատի ունեցիր՝ ես ամենեին չեմ հավատում նրա ծննդյան ու բախտացույցի ահավոր տվյալներին: Ես ունեմ լավագույն «ուժ խորհրդանշանները», որ կարող է ունենալ կինը, ես ահա այստեղ եմ՝ առանց չնչին իսկ դրամի ու անժառանգ: Բայց դու նրա ստրուկը կլինես քո ամբողջ կյանքում, եթե շատ զգույշ չլինես ու չխուսափես նրանից: Քիչ եմ տեսել նրան, բայց գիտեմ, թե ինչպիսի աղջիկ է նա: Մի՛ կարծիր, թե հաստատակամ ես: Դատապարտված կլինես, եթե հեռու չմնաս այդպիսի կնոջից»:

Տա Տունգն այս հարցով չվիճեց նրա հետ: Գիտեր՝ վախենալու ոչինչ չունի: Բայց երբ ծեր կինը հրաժարվեց փողից, նա վճռական էր: Պարզապես ցած դրեց թղթադրամները եւ դուրս եկավ՝ չստելով անգամ, թե ինչ է ասում մեծ հորաքույրը: Տա Տունգը հետեւեց նրա խորհրդին եւ ամեն ինչ արեց, որպեսզի հեռու մնա Լոտոսի Բուրմուռից: Բայց ասված է՝

«Թե տղամարդիկ կարող են նավերը մոտեցնել ափին,

Կանայք կարող են ափը մոտեցնել նավերին»:

Տա Տունգն, իհարկե, շատ ավելի քիչ էր ամուր ու հաստատ, քան ափը, եւ շուտով զգաց, որ պատրաստակամորեն մոտենում է Լոտոսի Բուրմուռին: Այն բանից հետո, երբ նրանք միասին քննարկել էին, այլեւս անհրաժեշտություն չկար հարցնել արդյունքի մասին: Երբ Տա Տունգը գյուղ գնաց հրաժեշտ տալու հորեղբոր կնոջը, Տա Յուին եւ վերջապես մեծ հորաքույրը, վերջինս նրան մի կողմ քաշեց եւ խոստով ծայրով ասաց. «Դու՛, անող-նաշար տղա: Ե՞րբ ես պատրաստվում թաքուն փախչել այդ ահավոր աղջկա հետ»:

Տա Տունգը կարմրեց եւ ոչ հերքում, ոչ էլ հաստատում էր նրա մեղադրանքը:

«Օգուտ չունի ինձնից թաքցնել: Հորեղբայրդ մի անգամ ինձ պատմեց փիլիսոփայի եւ իր ճայերի պատմությունը»:

Տա Տունգը գիտեր այդ պատմությունը եւ չէր կարող չծիծաղել ինքն իր վրա: Փիլիսոփան ճայերի սիրահար էր: Թռչուններն իջնում, թառում էին նրա ձեռքին, որ ձեռքի ափից կեր վերցնեին, մինչդեռ հեռու էին փախչում, երբ որեւէ մեկը փորձում էր անգամ մոտենալ նրան: Նրա ծեր հայրը, որ երբեք տնից դուրս չէր գալիս, չէր հավատում, որ այդպես է, եւ կարգադրեց բռնել թռչուններից մեկին, որպեսզի ապացուցի դա: Քանի որ չէր կարող հորը չստել, մարդը գնաց ծովի ափ, որ թռչուններից մեկին բռնի: Բայց այս անգամ բոլոր թռչունները հեռու թռան, երբ տեսան, որ նա մոտենում է:

«Ես ստիպված էի համաձայնել, որ նրան Շիաո Մինից հեռու պահեմ: Մի բան կա, որ դուք չգիտեք...»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Շատ լավ: Ոչ մի արդարացում չեմ ուզում: Ես պետք է իմանայի, որ ևս քեզ ստիպելու է լուծը կամավոր վիզդ գցել: Ահա այս բաճկոնը քեզ համար եմ պատրաստել: Այն լցունված է չմշակված մետաքսի կտորներով եւ հատուկ հարմարեցված է հյուսիսի ցուրտ եղանակի համար: Քանի որ իմ սեփական ձեռքերով եմ կարել, խոստացիր, որ երբեք չես բաժանվի դրանից»:

«Խոստանում եմ», - Տա Տունգը շնորհակալությամբ ընդունեց բաճկոնը:

«Եվ եթե սկսես զգալ, որ այն կարծես թե քեզ ավելի քիչ շերմություն է տալիս, քան առաջ, պետք է բացես կարերը, հանես գործվածքի շերտը, փոխարինես նոր շերտով եւ նոր մետաքսե կտորներ լցնես: Կարծում եմ Լոտոսի Բուրմունքը լավ կարուծել անող կին է: Մետաքսե կտորներն ուրիշ ոչ ոքի չվստահե՛ս»:

«Նա ասել ու մկրատ շատ լավ է գործածում, ևս եւ շատ լավ չափում է ոտքով»:

«Մի՛ գովաբանիր նրան իմ առջեւ: Ես դա չեմ կարող տանել: Ինչպե՞ս եք գնալու, ավարտե՞լ եք նախապատրաստական ամեն բան»:

«Ոչ, ոչ այնքան: Մտածում էինք սկզբում նավակ վարձել...»:

«Վաղուց ժամանակն է, որ այդպես արած լինեիք: Մի քանի օր է միայն մնացել»:

«Բավականին վտանգավոր է: Վախենում եմ գաղտնիքը բացահայտվի»:

«Դա թող ինձ: Սկզբում ո՞ր եք գնալու»:

«Կիու-Կիանգ»:

«Դա հեշտ է: Նավակը կսպասի ձեզ այստեղ՝ Երկնային կամրջի մոտ, եթե կարծում ես, որ քաղաքի մոտից մեկնելը շատ վտանգավոր է»:

«Մեծ հորաքույր, շատ շնորհակալ եմ...»:

«Պևա, երիտասարդ: Հեռացիր, քանի չեմ գայրացել»:

Ամեն բան գաղտնի պայմանավորված էր, եւ հարսանիքին նախորդող գիշերը Տա Տունգը պետք է Լոտոսի Բուրմունքին փախցներ: Քանի որ բուրդը շուտ էին քնելու, հարցերը պետք շատ պարզ լինեին:

Կեսգիշերից դեռ շատ առաջ բոլոր մարդիկ արդեն անկողնում էին եւ խորը քնած էին, բացի Լոտոսի Բուրմունքից եւ մորից: Հրաժեշտ տալով մորը սրտակեղեք հեկեկանքներով՝ աղջիկը հեռացավ Տա Տունգի հետ: Նա միանիվ ձեռնասայլակ էր բերել, որը հրելու համար մի անձանոթի էր վարձել. վերջինս Լոտոսի Բուրմունքին սպասում էր տան անկյունում:

Նրանք պետք է քաղաքից դուրս գային Արեւմտյան դարպասով, քանի որ դա միակ դարպասն էր, որ չէր փակվում գիշերվա այդ ժամին: Երբ գյուղ հասան, մեծ հորաքոյրը Լոտոսի Բուրմունքին միացավ՝ նստելով սայլակի մյուս կողմում, եւ շարժվեցին դեպի նավակը: Տունկա առագաստանավակի տախտակամածին կարմիր մոմեր եւ խնկի ձողիկներ էին այրվում, եւ մեծ հորաքոյրը գործում էր որպէս արարողապետ ու խնամի, ինչպէս նաեւ երկու կողմերի ծնողների անունից՝ ամուսնությունը հաստատելու համար: Տեսնելով, որ Տա Տունգն ու Լոտոսի Բուրմունքը խմել են «հարսանեկան գավաթները» եւ կապել ու քանդել «միացյալ եւ ներդաշնակ հանգույցը», մեծ հորաքոյրը բարեմաղթեց ու հրաժեշտ տվեց նրանց:

«Համընթաց քամի, բարի բախտ, հաջողություն եւ երջանկություն ձեզ: Լավ վարվիր նրա հետ, Տա Տունգ, թեեւ նա դրան արժանի չէ: Ես քեզ ուզում եմ անիծել ձեր կնոջն անկողնուց հանելու համար գիշերվա այս ժամին, բայց պետք է ձեզ իմ օրհնանքները տամ: Գրիր հորեղբորդ՝ հենց որ հասնես նպատակակետիդ, իսկ ես կասեմ հորեղբորդ կնոջը: Սարսռում եմ այն մտքից, թե ինչ կասի նա»:

Լուսադեմին, երբ Լի ընտանիքը սկսում էր զբաղվել հարսանիքի գործերով, իսկական հարսն արդեն Նանչանից հեռու էր նավարկել:

ԳԼՈՒԽ 9

*«Պարզ կերակուրով ու սառը ջրով, փափուկ բարձի տեղ՝ թեև
գլխիս տակ՝
Դեռ երջանկություն կարող եմ գտնել, ինչքան էլ լինի վիճակս
իմ դժվար:
Հարստությունն ու պատիվն աշխարհում թե՛ ձեռք չեն բերվում
ճամփեքով շիտակ,
Ինձ համար դատարկ, չևչին են ևույնքան, որքան երկնքի
ամպերն հողմավար»:*

Հարավում եղանակը ծնունդը շատ ցուրտ չէ: Տարվա այդ ժամանակ հզոր Յանցզիի վտակներից մեկով ուղեորությունը կարող է շատ հաճելի լինել: Տա Տունգի առագաստանավակը փոքր էր եւ պետք է գետի ափին բավականին մոտ նավարկել: Թե՛ն հոսանքով ներքե էին գնում, բայց նավարկում էին դեպի հյուսիս եւ հիմնականում հանդիպակաց քամիների էին հանդիպում: Նավակն առաջ էր շարժվում բավականին դանդաղ: Պա, իհարկե, այն անբարենպաստ վիճակն էր ստեղծում, որ հնարավորություն չէր տալիս հասնել վերջնականապես այնքան շուտ, որքան իրենք կուզեին, բայց մեկ առավելություն կար՝ գյուղական վայրի գեղեցիկ բնապատկերը տեսնել:

Գարունը Յանցզիի հարավում շատ ավելի վաղ է սկսվում, քան հյուսիսում: Ամբողջ ճանապարհի երկայնքով ծառերի վրա երևում էին սալորենու ծաղիկների մուգ կարմիր բողբոջները: Փոքրիկ եւ բարեհարմար տեսք ունեցող ագարակատները, ծղոտե տանիքներով եւ կավե պատերով, երեք կամ չորս տներից բաղկացած խմբերով, ընկած էին սոճիների եւ մայրիների միջեւ, որոնք կանաչ էին մնում, մինչդեռ մյուս ծառերը մերկ էին ու տերեւագուրկ: Բրնձի դատարկ արտերն ամառի տեսք ունեին: Ոչ մի ջրահաց չէր աշխատում: Կարելի էր ժամանակ առ ժամանակ հատուկենտ գոմեշներ տեսնել, որ ծույլ ու դանդաղ թափառում էին դաշտերում եւ երբեմն արհամարհական հայացք նետում բազմազբաղ անցորդների վրա: Կարող էր երեւալ նաեւ տավարած մի տղա, որ կովերի նախրին է հետետում հեռվից՝ հնդկեղեգի պարզ սրիւնգով իր իսկ ստեղծած մեղեդիները նվագելով: Ամենուր գոհունակության, երջանկության եւ ազատ ժամանակի ու հանգստի պատկերն էր տիրում:

Երբ անցնում էին տխրահոշակ Բո-Յան լճով, որի մասին ասում են, թե «ալիքներն առնվազն երեք ոտնաչափ բարձրություն ունեն, երբ քամի չկա», տեսան, որ իրենք բավականին լավ կարող են ել կարող են առանց անհանգստության դիմանալ կամակի թեթեւ ճոճումներին: Թվում էր՝ նրանք այդտեղ կորել են սոսկ ջրից ու օդից բաղկացած անձայրածիր աշխարհում: Հորիզոնը հազիվ էր զանազանվում հեռվում: Երկնքի ստորին մասն ասես տարրալուծվում էր ջրի մեջ: Տարբեր չափերի առազաստներ՝ նոր ու հին, կարկատած ու պատառոտված, անցնում էին նրանց կողքով՝ արագ հաջորդելով մեկը մյուսին: Շուտով թվաց, թե Լու լեռը, որի իսկական դեմքը ոչ մի մահկանացու չգիտե, նկատեց փախչող զույգին՝ անտարբերության թաքուն ժպիտով: Չորս օր անց նրանք հասան Հու-կոու կամ «լճաբերան» եւ ջրի մեջ կարող էին տեսնել բնական սահմանագիծը, որ նշում էր Կան գետի վերջն ու Յանցզիի շրջանը: Հեռվից այդ սահմանագիծը հստակ գծագրված էր թվում: Կան գետի ջուրը կանաչ է, իսկ Յանցզիինը՝ թեթեւ շագանակագույն: Տրերը հանդիպում են, բայց ամենեւին չեն խառնվում: Երբ կամակը սահելով հասավ դրանց հանդիպման հենց սահմանագծին, ջրերը դեռ կարելի էր զանազանել, ասես հավիտենական մի ձեռք կավիճով ուղիղ գիծ էր գծել դրանց մակերեսային, եւ տարրերն ստիպված էին ենթարկվել դրան:

Նրանք ամենեւին չհապաղեցին Կիու-Կիանգ փոքրիկ կավահանգստում: Տեղափոխվելով շատ ավելի մեծ մի կավակ՝ մեծ Յանցզիի հոսանքն ի վար կավարկեցին դեպի Շանհայ: Այնպես պատահեց, որ եղանակը վատացավ, եւ տարվա այդ վերջին մի քանի օրվա ընթացքում կավակները շատ քիչ էին, իսկ ուղեւորները, հետաձգելով գործերն ու շտապելով իրենց ընտանիքներին միանալ Նոր տարվա տոներին, լեփլեցուն էին դարձրել կավարկող ամեն կավակ: Դա ստիպեց երիտասարդ սիրահարներին որոշում կայացնել եւ Շանհայ չգնալ, այլ եւս մեկ անգամ տեղափոխվել ավելի փոքր կավակ եւ Մեծ ջրանցքով կավարկել դեպի հյուսիս՝ երկրի խորքը: Յին-Յզյանում, որտեղ Յանցզին եւ ջրանցքը հատվում են միմյանց հետ, նրանք մի փոքրիկ ջոնկա վարձեցին, որն ուղեւորվում էր դեպի հյուսիսային Տունչժոու: Այդ փոփոխությունը շատ բարեհաջող դուրս եկավ: Երբ նրանք դանդաղ շարժվում էին դեպի հյուսիս, կլիման ավելի ու ավելի մեղմ էր դառնում, եւ նեղ ջրանցքի երկու կողմերում ամեն ինչ սկսել էր կյանքի նշաններ ցուցաբերել ու գեղեցկանալ: Լսելի էր վաղ գարնան թռչունների երգը, ափերի երկայնքով ձգվող տներից կարելի էր լսել շների հաչոցն ու աքաղաղների կանչը: Էինելով կավակի միակ ուղեւորները՝ նրանք մեծ հո-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

գատարության էին արժանանում նավավարի ու նրա կնոջ կողմից, ասես նրանց ընտանիքի անդամներ լինեին: Տուրք դեռ ծանծաղ էր, եւ նավավարը շատ հաճախ ստիպված էր ավելել, որպեսզի նավակը ավի քարշուղուց երկար պարանով քարշակեր, իսկ նրա կինը մնում էր նավակում, որ հետեւեր դեկին:

Մինչ դանդաղ նավարկում էին ջրանցքի երկայնքով,- եթե դա կարելի է նավարկություն անվանել,- երիտասարդ գույզն ըստ էության վայելում էր այդ ամբողջ նավարկությունը, եւ ժամանակն անցնում էր շատ արագ: Երբ հասան Դեղին գետին՝ Շանդուն նահանգի արեւմտյան մասում, արդեն Նոր տարվա (1898) երկրորդ լուսնի երկրորդ կեսն էր: Տերմաստիճանը հյուսիսում շատ տարբեր է հարավի ջերմաստիճանից: Շուտով սառնամանիքն ու ձյունը հաճախ այցելող հյուրեր դարձան, եւ ջրանցքն սկսեց նավարկության համար անանցանելի լինել սառույցի հաստության կամ ջրի՝ բավարար չափով խորը չլինելու պատճառով: Նրանք պետք է թողնեին նավակը եւ միանային վաճառականների խմբին, որոնք շարժվում էին դեպի հյուսիս՝ բեռնակիր անասունների հետ: Հյուսիսում կանայք բավականին վարժված են ծի, ջրի կամ ավանակ հեծնելուն, եւ Լոտոսի Բուրմուկը, հետեւելով նրանց օրինակին, չհամաձայնեց ճանապարհի մյուս մասն անցնել ջրու սայլակառքում փակված: Տա Տունգն ստիպված էր երկու ծի վարձել, ու պարզվեց, որ աղջիկը ծի քշելիս շատ հմայիչ է: Ձիով ճամփորդելով՝ նրանք չէին կարող խուսափել քամուց ու փոշուց, բայց շատ արագ էին առաջ գնում եւ երկու օրից արդեն հասել էին Շանդունի ու Մայրաքաղաքային նահանգի միջուկ ընկած սահմանին եւ ընդամենը մի 500 լի էին հեռու մայրաքաղաքից: Եթե շարունակեր լավ եղանակ լինել, հույս ունեին իրենց վերջնականատակին հասնել չորս կամ հինգ օրում:

Փորձելով մի քիչ ավելի ժամանակ շահել՝ նրանք անցան սովորական իջեւանատան մոտով եւ մթնշաղին դեռ ճանապարհին էին՝ հաջորդ փոքր քաղաքից մի որոշ հեռավորության վրա: Հանկարծ քառատրոփ սլացող ձիերի սմբակների եւ բարձր ու հաճախակի հեշող զանգերի՝ շատ արագ մոտեցող ձայն լսվեց: Ճամփորդներից մեկը՝ մի ծերունի, տազնապով ձայն տվեց խմբին. «Արագ, թաքցրեք ձեր փողն ու թանկարժեք իրերը: Ավազակները»:

Չանգերի ձայնն ավելի ու ավելի բարձր եւ մոտիկից էր լսվում: Ճամփորդներից մի քանիսն իջան ձիերից եւ բացեցին իրենց հակերն ու խուրջիները, բայց ապահով տեղ չէին կարող գտնել, որպեսզի թաքցնեին փողն ու թանկարժեք իրերը: Տա Տունգն արագ հանեց իր փողը եւ թաքց-

րեց զուպաների մեջ, իսկ Լոտոսի Բուրմունքը մի զույգ ապարանջան հանեց և փորձում էր ավելի լավ տեղ թաքցնել: Կողոպտիչները նրանց առջեւ հայտնվեցին հանկարծակի, ասես երկնքից էին ընկել: Դրանք մեկ տասնյակից ավելի էին՝ ծանրաքաշ ու թխադեմ հյուսիսցիներ՝ բոլորն էլ միևեկ ատամները զինված: Պայքար կամ դիմադրություն չեղավ, քանի որ անիմաստ էր, և ամբողջ բեռը՝ բոլոր իրերն ու տուփերը, արագ գործիմացորեն ու արդյունավետ խուզարկության ենթարկվեցին: Ավազակները գրպանեցին ու յուրացրին այն ամենն, ինչ արժեքավոր էր և հեշտ էր տանել, և ապա սկսեցին խուզարկել իրենց զոհերին: Բոլորի վրա էլ փող և զարդեղեն գտան, իսկ Տա Տուևն ու Լոտոսի Բուրմունքն ամենամեծ ավանդն ունեցան: Երբ կողոպտիչները բավարարվեցին իրենց ավարով, սուլեցին, ապա հեռու սլացան և մի ակնթարթում անհետացան:

Երբ զանգերի ձայնը մարել էր արդեն, զոհերն սկսեցին հավաքել իրենց իրերը և տեսնել, թե ինչ են կորցրել: Փաստորեն թանկարժեք ամեն բան, նաև փողը տարել էին, և նրանք հարցնում էին իրար, թե ինչ պետք է արվի: Տա Տուևին թվում էր, թե բոլորն իրենց դժբախտությունը բավականին հեշտությամբ են կրում: Ոչ ոք ակնարկ իսկ չարեց կողոպուտի մասին իշխանություններին հայտնելու վերաբերյալ: Նրանք միայն շատ լավ գիտեին մեկ բան. քանի որ այդ վայրը երկու ևսահանգների սահմանին էր, Շանդունի իշխանություններն ասելու էին, որ գնան և հայտնեն Սայրաքաղաքի ևսահանգային յամենում, մինչդեռ այդ ևսահանգի իշխանություններն ասելու էին, որ դիմեն Շանդունի ևսահանգային յամենին: Ոմանք նույնիսկ նշում էին, թե իրենք լիովին պատրաստ էին դրան: Ոչ ոք իր հետ շատ գումար կամ զարդեղեն չէր վերցրել: Այն քիչն էլ, որ վերցրել էին, կենսուրախ կատակով անվանում էին «կյանք փրկող միջոցներ», որոնք, ինչպես ասում էին, ճամփորդը պետք է իր հետ կրի և պատրաստ լինի առաջարկել կողոպտիչներին, այլպես նրանք խիստ կբորբոքվեն և կվնասեն կամ նույնիսկ կսպանեն: Այդ ճամփորդների մեծ մասն ասում էր, որ գործարար կապեր ունի Հո-Կիան-Ֆուում հաջորդ մեծ քաղաքում: Ոմանք ասում էին, թե պետք է մնան հաջորդ իջեւանատանը, որպեսզի գրեն, որ իրենց շատ փող ուղարկեն: Մի քանիսն ասում էին, թե իրենց ուղեբեռը բավական է, որպեսզի մնացած ճամփորդության համար անհրաժեշտ ծախսերը հոգան: Բայց Տա Տուևը հասկացավ, որ այդ լուծումներից ոչ մեկն իր և կնոջ համար կիրառելի չէր: Նրանք ոչ ոք չունեին ո՛չ հաջորդ, ո՛չ էլ ճամփին գտնվող որեւէ այլ քաղաքում: Փողի համար ոչ ոքի չէին կարող գրել: Ինչ վերաբերում է ուղեբեռին, նրանք գրեթե ոչինչ չունեին: Հեշտ էր հասկա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ևալ, որ Տա Տուզը, վախենալով դպրոցի ղեկավարության կողմից կասկածի ենթարկվելուց, իր հետ ոչինչ չէր վերցրել, բացի առաջին անհրաժեշտության մի քանի սովորական իրերի փոքրիկ կապոցից, իսկ Լոտոսի Բուրմուլըն էլ ավելի հիմնավոր պատճառ ուներ՝ շատ ավելի թեթև ուղեբեռով ճամփորդելու համար: Տա Տուզն իրոք կորցրել էր իրեն եւ չգիտեր ինչ անել: Նա մտամոլոր ու տխուր սրտով մտեցավ Լոտոսի Բուրմուլընի եւ ասաց. «Ի՞նչ ենք անելու: Ի՞նչ ենք անելու»:

«Նրանք ամբողջ փողն են տարել», - հարցրեց աղջիկը:

«Ամբողջ ունեցածս: Կոշիկներս ու գուլպաներս հանեցին...»:

«Ի՞նչ վատն են դրանք իրենց վարքուբարքով, - ասաց Լոտոսի Բուրմուլընը: - Ամբողջ զարդեղենը ևույնպես տարել են: Իմ նկատմամբ ավելի քաղաքավարի էին եւ ձեռք չտվեցին, բայց ստիպված էի նրանց հանձնել այն ամենն, ինչ կար ինձ վրա: Գնանք, Տա Տուզ, օգուտ չկա լացել ջարդված ծաղկամանի վրա: Օգնիր հեծնեմ ձիս»:

«Ինչպե՞ս կարող ենք այսուհետ շարունակել մեր ճանապարհը», - հանաչեց Տա Տուզը, երբ օգնում էր աղջկան ձի նստել:

«Բայց կարծում եմ այս կամ այն կերպ մի բան պետք է անենք...»:

«Որտե՞ւ միջոց չեմ տեսնում, թե ինչպես: Նրանք վերցրին մեր ամբողջ գումարը...»:

«Չէ, մեր փողը չէ, Տա Տուզ: Դա Շիառ Մինի փողն էր, եւ ես ուրախ եմ, որ դու երեսուն թաել թողեցիր մեծ հորաքրոջ համար: Պետք է հասկանաս, որ այդ փողը քեզ տրվել էր այն հասկանալի պայմանով, որ դու ինձ մենակ թողնեիր, այնպես որ՝ ես պետք է ամուսնանայի նրա հետ: Այժմ, երբ հավատարիմ չես մնացել գործարքին, միակ ճիշտն այն էր, որ կողոպտիչները վերցնեին փողը»:

«Կատակի ժամանակը չէ՛, - հուսահատ գոչեց Տա Տուզը: - Ամբողջ զարդեղենը ևույնպես...»:

«Այո, շա՛տ ափսոս: Մի մասը մորս զարդերն էին, եւ ես այնքան շատ էի ուզում միշտ մոտս պահել: Բայց մնացածը Լի ընտանիքից ստացած նշանի նվերներն էին: Դրանք պետք է պատկանեին Շիառ Մինի հարսին՝ Փոքրիկ Ծիածանին: Մենք, ըստ էության, այդ զարդերի հանդեպ ոչ մի իրավունք չունենք: Դրանք պարզապես մեկ ավագակի ձեռքերից անցան մյուսին, բացի մի փոքրիկ կտոր զարդից՝ ոսկե փոքրիկ ապարանջանից, որ պետք է պարտք վերցվի, որպեսզի մեզ ուղեկցի մինչեւ Պեկին: Ի՞նչ պետք է արվի դրանից հետո, չգիտեմ»:

«Պետք է պա՛րտք վերցվի: Ի՞նչ նկատի ունես», - Տա Տուևը լի էր հույս ու սպասումով:

«Փևտրիք ցեխի ու ձիու փթիրի փոսի մեջ: Կարծում եմ այդտեղ կգտնես մի բան, որը ես պատահաբար ձեռքիցս գցեցի: Վախենում եմ, որ ձեռքերդ կկեղտոտես, այնպես որ՝ դրանից հետո չհամարձակվե՛ս դիպչել ինձ»:

Չարաճճի մի ժպիտ հայտնվեց նրա դեմքին, երբ սկսեց հետեւել ճանապարհին գտնվող մյուս մարդկանց:

Աղջկա նշած ցեխի փոսի մեջ Տա Տուևը գտավ գանձը: Պա շատ չէր, բայց, ակնհայտորեն, միանգամայն բավական էր, որ նրանց օգնեք հասնել մինչեւ մայրաքաղաք: Սի պահ Տա Տուևն այնքան էր ուրախացել իր այս հայտնագործությամբ, որ բոլորովին մոռացել էր, որ այս ամբողջ եղածի հետ իրենք հավանաբար շատ շուտով ստիպված են դիմակայել քաղցին: Փոքրիկ ապարանջանը վաճառվեց հաջորդ քաղաքում, որը շատ փոքր էր: Այդ մարդը կա՛մ բավականին ազնիվ չէր, կա՛մ նախկինում ոսկե ապարանջանների հետ երբեք գործ չէր ունեցել: Որովհետեւ այն գինը, որը նա համաձայնեց վճարել, արտասովոր կերպով ցածր էր: Տա Տուևն ստիպված էր վերցնել այն, ինչ առաջարկվել էր, քանի որ ուրիշ ոչ մեկի մոտ չէին կարող գնալ:

Հինգ օրից նրանք հասան Պեկին: Արդեն ուշ էր, օրվա երկրորդ կեսին, երկրորդ լուսնի ավարտին: Գարնան արեւի մարող ճառագայթները, տանիքներին ընկնելով, հեռավորության վրա այն տպավորություն էին ստեղծում, ասես դրանք ոսկուց են: Սոսկալի ցուրտ, բայց գեղեցիկ չոր օր էր, եւ քաղաքն իրավամբ կարելի էր անվանել «Փոշու քաղաք», փոշի, որ կողմնակի փողոցներում հասնում էր մինչեւ ոտնակոճերը: Պալատները, տաճարները եւ մյուս մեծ շենքերն ու առանձնատները վեհաշուք էին եւ տպավորիչ, իսկ փողոցներում մեծ եռուզեռ էր: Թվաց՝ եւս մեկ անգամ նրանք մոռացան իրենց աղքատության մասին՝ գեղեցկության ու շքեղության այդ տեսարանին կայելով: Երբ ձիերը վարգով գնացին դեպի քաղաքի դարպասների վեհ ու վիթխարի աշտարակը, նրանց սրտերն անհանգիստ տրոփում էին: Տարօրինակ մի զգացում էր համակել նրանց: Ասես Պրախտ էին եկել: Բայց Պեկինը դրախտ է բազմաթիվ ծածուկ ու մութ անկյուններով: Փոքրիկ իջեւանատունը, որտեղ որոշեց մնալ երիտասարդ զույգը, այդպիսի անկյուններից մեկն էր:

Քաղաք մտնելիս նրանք մի վայրկյան կանգ առան եւ գլուխները շրջեցին, որպեսզի մեկ անգամ էլ կայեն քաղաքային աշտարակի հսկայական

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

կառույցին, որի տակով հենց նոր էին անցել: Հանկարծ շրջապատվեցին հյուրանոցային գործակալների բազմությամբ, որոնք պայքարում էին իրար դեմ, որպեսզի հասնեն նրանց և խնդրեն, որ լսեն իրենց: Տա Տուևգի և Լոտոսի Բուրմունքի համար անհնար էր որեւէ բան լսել, երբ բոլորը բղավում էին ձայները գլուխները գցած և միաժամանակ ամբողջ եռանդով կարմիր թղթի մի կտոր էին թափահարում Տա Տուևգի դեմքի առջև: Տա Տուևգը նրանցից մեկից վերցրեց թղթի կտորը, և մնացածները միանգամից ցրվեցին: Ամեն բան իսկույն նորից խաղաղվեց: Հյուրանոցային գործակալը, որի թուղթը վերցրել էր Տա Տուևգը, իր նոր հաճախորդներին ասաց, որ կարող է նրանց տեղավորել մի շարք հոյակապ հյուրանոցներում, որոնց անունները տպագրված էին թղթի վրա: Տա Տուևգը նայեց թղթին և տեսավ, որ այդ հյուրանոցներից յուրաքանչյուրի նկարագրությունն ու գինը շատ հեռու էին իր համեստ քսակի պարունակությանը համապատասխանելուց: Մի փոքր կարմրելով՝ նա այդ մարդուն խնդրեց մատչելի վճարով պատշաճ տեղ առաջարկել, և վերջինս ծիծաղեց՝ կարծես ուզում էր ասել, թե այդ երկուսը հազվադեպ են միասին լինում: Այդուհանդերձ նրանց տարավ մի փոքրիկ խաղաղ իջեանատուն, որ գտնվում էր խուլ փողոցներից մեկում: Տեղեկանալով գնի մասին՝ Տա Տուևգը շնորհակալ էր, երբ տեսավ, որ իր ամբողջ կարողությունը փոքր-ինչ ավելին է, որպեսզի բավականացնի գիշերն այդտեղ հանգիստ առնելու համար: Նա գործակալին այնքան թեյավճար տվեց, որքան թույլ էր տալիս այդ օրվա իր ունեցածը:

Ավելի քան երկու ամիս էր, ինչ Լոտոսի Բուրմունքը հարմարավետ վայրում հանգիստ չէր առել, և հյուրանոցի նրանց փոքրիկ սենյակը, թեև սառն ու աղքատիկ, մեծ թեթևացում էր հոգևած աղջկա համար: Նրանք ամեն ինչ անում էին, որպեսզի զգային իրենց ինչպես տանը, և երբ մատուցվեց առաջին, պարզ, բայց ախորժահամ, կերակուրը՝ Պեկինում, հաճույքով վայելեցին այն: Ծառան, որը միաժամանակ հանդես էր գալիս մատուցողի, բեռնակրի և սպասուհու դերում, տեսնելով, որ երեկոյան դուրս չէին ելնելու, հարցրեց, թե արդյոք կրակ չէի՞ն ցանկանա, քանի որ գիշերը սաստիկ ցուրտ է՝ հյուսիսային սուր ու թափանցող քամիներով: Որքան էլ շատ ցանկանար Տա Տուևգը կրակ ունենալ իր երիտասարդ կնոջ համար, գիտեր, սակայն, որ միջոցներ չունի՝ լրացուցիչ վճարելու, և ստիպված էր «ոչ» ասել: Երբ պառկեցին գիշերելու, սովորականից շատ ավելի վաղ, մտածում էին, թե ամենայն հավանականությամբ քունը վրա կհասնի գլուխները բարձին դնելուց առաջ: Քանզի մեծապես հոգնել էին իրենց եր-

կարատել, ծանր ու լարված ճամփորդության ընթացքում եւ հանգստի խիստ կարիք ունեին: Անկողնում զգացին, որ բամբակե մզակված վերմակը կոշտ է ու սառը: Նույնիսկ երբ Լոտոսի Բուրմունքի մորթե մուշտակը զգեցին վերմակի վրա, դարձյալ չտաքացան: Դժբախտաբար, Տա Տուևը մորթե վերարկու չուներ, իսկ մետաքսով լցունված նրա բաճկոնն ամենեւին օգուտ չէր տալիս: Ու թեեւ սեղմվել էին իրար, բայց դողում էին ցրտից: Նրանց ոտքերն աստիճանաբար փայտանում էին, եւ ի վերջո տեսան, որ ամենին չեն զգում դրանց գոյությունը: Չկարողանալով քնել՝ Տա Տուևն ստիպված էր վեր կենալ ու եռացրած ջուր պատվիրել, որ տրվում էր անվճար եւ մատակարարվում էր ցերեկվա ու գիշերվա բոլոր ժամերին: Նրանք ոտքերն ընկղմեցին տաք ջրով լի տաշտի մեջ եւ զգացին, որ դրանք աստիճանաբար կյանք են ստանում: Բայց տաք ջուրն էլ շուտով սկսեց սառչել: Եվ չէին կարող գնալ ու հաճախակի պարբերականությամբ կրկին պատվիրել, այնպես որ՝ այդ շատ հարուստ քաղաքում նրանք գրեթե հարմարություն չգտան եւ ոչ էլ կարգին հանգստացան իրենց առաջին գիշերը: Անկողնում շուռումուռ գալով՝ Տա Տուևը ծրագրում էր, թե ինչ պետք է անի հաջորդ օրը:

Առավոտ շատ վաղ նրանք կերան իրենց համեստ նախաճաշը՝ հագիվ մի տասը բառ փոխանակելով: Տա Տուևը կնոջն ասաց, որ պետք է դուրս գա, որպեսզի այցելի եւ դիմի մի քանի ընկերների, որոնց հետ երկար ժամանակ նամակագրական կապի մեջ է եղել: Քանի որ կարճատես էր եւ շատ դժվար էր կարողանում ճանապարհը գտնել, ամբողջ օրը նա դրսում անցկացրեց: Ետ եկավ, երբ մութն ընկնում էր: Սենյակ մտնելիս զգաց, որ այդտեղ մեկ այլ մթնոլորտ է տիրում: Այժմ սենյակում մաքուր էր, տաք ու հարմարավետ: Սենյակի մեջտեղում մի բաց «աճխագնդի» վառարան էր դրված, եւ Լոտոսի Բուրմունքը, բամբակով լցունված տնային փքուն մի վերարկու հագին, բարձրացավ կրակի կողքի աթոռից՝ դիմավորելու նրան:

«Հոգևած ես երեւում, Տա Տուև: Եկ նստիր կրակի մոտ: Եվ մի՛ նայիր ինձ այնպես, ասես նախկինում երբեք չես տեսել: Դեռ բան չե՞ս կերել»:

«Չէ: Բայց դեմ չեմ ...»:

«Պետք է որ քաղցած լինես: Ես կհոգամ, որ իսկույն մի բան ուտես»:

Եթե Լոտոսի Բուրմունքն ավելի ուշադիր նայեր Տա Տուևին, փոխանակ խուսափեր նրա աչքերին նայելուց, կտեսներ այն հոգևածությունը, քաղցն ու հուսահատությունը, որ դաջված էին նրա դեմքին: Բայց աղջիկը զնաց դեպի դուռը եւ ծառային կարգադրեց, որ արագ ուտելիք բերի իր ամուսնու համար: Տա Տուևը զարմացավ՝ նրա ձայնի մեջ որսալով այն

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

հնչողությունը, որ կա փոքրիկ Մանդարինի ծայրի հնչերանգում, եւ որին ինքը հազիվ թէ կարողանար հասնել:

«Ինչպե՞ս կարողացար մեկ օրվա մեջ Պեկինի հնչերանգը յուրացնել: Իմ գնալուց հետո պետք է որ անընդհատ խոսելիս եղած լինես»:

«Համարյա,- աղջիկը ժպտաց:- Տեսնում ես, ստիպված էի որոշ գնումներ կատարել»:

«Գնումներ՞ը»:

«Այո: Չե՞ս նկատել իմ նոր, բամբակով լցունված վերարկուն»:

«Բայց որտեղի՞ց ես գումար գտել դրա համար»:

«Պե, ես շատ բան ունեմ քեզ պատմելու: Կեսօրին մոտ հյուրանոցի կառավարիչը եկավ ինձ հարցնելու, թե արդյոք շարունակելու՞ ենք մնալ: Նա նաեւ ավելացրեց՝ քանի որ մենք վճարել էինք միայն մեկ օրվա համար, պետք է տեղափոխվեինք մինչեւ ժամը տասներկուսը կամ վճարեինք մյուս օրվա համար: Եթե մեզ հետ ուղեբեռ ունենայինք, նշեց նա, ապա չէր խնդրի նախապես վճարել, բայց գիտես, որ ուղեբեռ չունենք: Դրա համար էլ ես որոշեցի, որ պետք է մի քիչ փող ճարեմ: Հիշելով, որ շենքի հենց անկյունում մի գրավատուն եմ տեսել, երբ գալիս էինք այստեղ, գնացի այդ գրավատունը եւ գրավ դրեցի մորթե մուշտակս: Գրավատան տերը դեմքը ծամաճոռելով ինձ նայեց: Երբ ես նրան դիմում էի քսան բառով, նա երկու բառով էր ինձ պատասխանում: Այդպիսի կոպիտ մարդկանց տեսած չես լինի: Կարծեցի՞ ինձ շատ գումար չի տա մուշտակի համար, բայց խիստ զարմացա՞ լսելով, որ նա առաջարկում է քսանհինգ թաթի արծաթադրամ: Քանի որ մրտում էի, իսկույն համաձայնեցի: Վերցնելով գումարը՝ նրանից հետաքրքրվեցի, թե որտեղ կարող եմ բամբակով լցունված վերարկու գնել: Նա պարզապես պատասխանեց. «Երկնային կամուրջ»: Լսե՞լ ես, արդյոք, Տա Տունգ, Երկնային կամուրջ Պեկինում»:

«Այո, ես նույնպես զարմացած էի»:

«Բայց դա սոսկալի՞ վայր է: Եվ օգտագործված հագուստի հարյուրավոր խանութներ կան այդտեղ: Այդ խանութներում մարդիկ չափազանց հյուրասեր են եւ շատախոս: Նրանք ինձ թեյ եւ անվճար խորհրդատվություն առաջարկեցին: Ինձ ասացին, որ գնեմ այս վերարկուն, նախքան կհասկանայի, թե ինչ եմ անում: Հիմա տեսնում եմ, որ ինձ այնքան էլ չի սազում: Հյուսիսի կանայք շատ ավելի խոշոր են, քան մենք: Բայց վերարկուն տաք է ու հարմարավետ: Եվ քանի որ մենք փող ունենք, որպեսզի կրակ վառենք, ես անմիջապես պատվիրեցի այդ կրակը: Տեսնում ես, որ այսօր բավականին շատ փորձառություն եմ ձեռք բերել՝ խոսելով պեկին-

յան առոզանությամբ»:

Տա Տունգը լուռ էր, ասես կորցրել էր խոսելու ընդունակությունը:

«Ինձ այդպես մի՛ նայիր ու լռիր: Չայրացած ես ինձ վրա: Մենք ստիպված էինք մի քիչ փող վերցնել ինչ-որ բան վաճառելով, իսկ ես չեմ ուզում մորթե մուշտակ ունենալ, երբ դու վերարկու չունես»:

«Չայրացած քեզ վրա՞: Ինչպե՞ս կարող էի զայրացած լինել: Ես միայն զարմանում էի, թե ինչո՞ւ են Երկնային կամրջի մարդիկ այդքան հյուրընկալ եղել քո հանդեպ, երբ այդքան կոպիտ էին իմ նկատմամբ»:

«Դու է՛լ ես այնտեղ եղել»:

«Այո: Գրավատան մարդն ինձ ասաց, որ գնամ այնտեղ»:

«Գրավատան մա՛րդը: Ի՞նչ էիր գրավ դնելու»:

«Մետաքսե բաճկոնը: Բայց նա չնայեց էլ դրա վրա: Եվ երբ նրան հարցրի, թե որտեղ կարող եմ խանութ գտնել, որը կվերցնի այն, նա նույնպես կարճ պատասխանեց՝ «Երկնային կամուրջ»»:

«Ահա՛ թե ինչո՞ւ ես գնացել այնտեղ: Բայց դու խոստացար մե՞ծ հորաքրոջը, որ երբեք չես բաժանվի դրանից»:

«Ես հիմա պարտավոր եմ պահել իմ խոստումը: Երկնային կամրջի խանութպանները շատ ցածր կարծիք ունեին այս հրաշալի հանդերձի մասին: Նրանք զրուցասեր էին, բայց իրենց բառերը գործածում էին միմիայն իմ սիրելի մե՞ծ հորաքրոջ այս ուշագրավ վարպետությունը վարկաբեկելու համար: Ես համարյա վիճեցի նրանցից մի քանիսի հետ: Նրանց ասացի, որ հարկ չկա վատաբանել բաճկոնի որակը, երբ չես ուզում այն գնել: Վերջապես գտա մի խանութպանի, որն առատածեռն առաջարկ արեց՝ ութ հազար կտոր կանխիկ...»:

«Ութ հազա՛ր: Վատ չէ: Իմ վերարկուն ինձ համար արժեցավ երեք թաեղ, որն ընդամենը երկու հազար է»:

«Գիտեի, որ դու էլ ինձ նման կմտածես: Դրա համար էլ նրան տվեցի բաճկոնը, եւ ի՞նչ ես կարծում ինչքա՞ն վճարեց նա իրականում»:

«Զգիտեմ: Ե՛տ կանգնեց իր առաջարկից»:

«Նա ինձ ութ հարյուր տվեց: Կարծեցի՞ սխալ է թույլ տվել, բայց նա ինձ ասաց, փող հաշվելու մանջուրիական համակարգն այդպիսին է: Ութ հարյուրը ութ հազար են անվանում: Ստիպված էի բաճկոնը ետ վերցնել»:

«Հիմա հիշում եմ մայրս մի անգամ ասաց, որ Պեկինի ժողովուրդը միշտ «շուռ-տա-հուա, յուն-շիառ-չիեն», «մտածում են մե՞ծ թվերով, ծախսում փոքր գումար»: Ահա թե ինչ նկատի ունեմ»:

««Մտածել մե՞ծ թվերով, ծախսել փոքր գումար»»: Դա շատ լավ քաղա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

քականություն է մեզ համար»,- Տա Տունգը փիլիսոփայորեն ժպտաց: Նա հանդիպել էր մի քանի ընկերների, որոնք կապված էին Բարեփոխման շարժման հետ, եւ տեսել էր, որ նրանցից ոչ մեկը որեւէ կարեւոր դիրք չի զբաղեցնում: Ոչ միայն անհնար էր նրա համար այդ մարդկանց մոտ առաջադրել իրեն որպէս ընդունակ, շնորհալի ու խանդավառ մի երիտասարդ, որը կարող է եւ պատրաստակամ է տքնաջան աշխատել, այլ նաեւ նրանց համար անհնար էր որեւէ աշխատանք գտնել, եթե անգամ նա քաջություն ունենար դա անել: Բարեփոխման շարժումը դեռեւս շատ էր օդի մեջ: Թեւեւ երիտասարդ մտավորականների շրջանում մեծաքանակ հետեւորդներ կային, բայց նախարարներն ու իշխանության մյուս պաշտոնյաները պահպանողական էին եւ ամենեւին չէին ձգտում բարեփոխումների: Տա Տունգի ընկերներից ոմանք հույս ունեին, որ անգլիացին՝ Լի-Ռի-Սո-Ռայը, հնարավորինս արագ կգա մայրաքաղաք, քանի որ նա մի շարք հարցազրույցներ էր ունեցել կառավարական ամենաազդեցիկ պաշտոնյաների հետ, եւ Վեն Տուն-Հոն՝ վարչապետն ու կայսերական խորհրդատուն, բավականին ընդունում էր նրա անկեղծությունն ու ակիրավածությունը: Թվում է, թե անգլիացու խոսքերը մեծ կշիռ ունեն իշխանությունների մոտ:

Տա Տունգը գիտեր, որ համալսարան ընդունվելու իր հույսերը ցնդել էին իր փողերի հետ մեկտեղ, բայց հույս էր փայփայել, որ մի փաքիկ աշխատանք կգտնի՝ կապված Բարեփոխման շարժման հետ: Այժմ, երբ տեսել էր իր բոլոր ընկերներին, հասկացավ, որ ոչինչ չէր մնում անելու, բացի սպասելուց, թե երբ կժամանի իր անգլիացի հորեղբայրը:

«Ստաձել մեծ թվերով, ծախսել փոքր գումար» -ի քաղաքականությունը լավ էր հնչում, բայց երբ դրվում էր գործնական կիրառման մեջ, արծաթադրամներն ու կանխիկ թղթադրամներն անհետանում էին նույնքան արագ, ինչպէս միշտ: Լոտոսի Բուրմունքը գիտեր ինչպէս տնտեսել: Նա առաջինն էր, որ առաջարկեց կրճատել ուտելիքի իրենց տեսականին, ինչին Տա Տունգը պատրաստակամորեն համաձայնեց: Երբ կերակուրը հասցրին նվազագույնի՝ մեկ ափսե (բանջարեղեն) ու մեկ թաս (ապուր) եւ դրանց արանքում սովորական բրինձ, այլեւս հնարավոր չէր որեւէ սահմանափակում: Անգամ այս դեպքում հազիվ էին կարողանում իրենց հարգանքը պահպանել հյուրանոցի ծառաների մոտ: Քանի որ դեռ ոչ մի նորություն չկար քաղաքական իրավիճակի որեւէ զարգացման մասին, որոշեցին այսուհետ, իրենց օրվա ծախսերը նվազեցնելու համար, հյուրանոցում չսնվել: Դա բավականին էական խնայողություն էր, որովհետեւ պարզեցին, որ միայն խորոված քաղցր կարտոֆիլ կամ թխվածք ուտելով կարող էին օր-

վա մեջ շատ քչով բավարարվել: Կարտոֆիլն արժեր կանխիկ քսան կտոր, մինչդեռ մեկ թխվածքն արժեր փոքր-ինչ ավելի: Նրանք ստիպված էին դուրս գալ ուտելիքը մատուցելուց անմիջապես առաջ՝ ասելով, թե հրավիրված են որոշ ընկերների կողմից, եւ քանի որ չէին ուզում փողոցներում ուտել, ստիպված քայլում էին մոտ մեկ ժամի չափ, մինչեւ որ այնպես էր թվում, ասես իրենց ուտելիքն ինչ-որ մի տեղ կերել վերջացրել են: Ապա գնում էին խորոված կարտոֆիլ կամ թխվածք եւ խնամքով փաթաթած տուն բերում, այնպես, որ ոչ ոք չսկստի: Փակ եւ սողնակը զգած դրների ետեւում լուռ եւ շտապով ծամում ու կուլ էին տալիս կերակուրը: Դժվար էր արագ ուտել այդպիսի չոր զանգվածը, եւ նրանք չէին համարձակվում այդպիսի ժամերին ջուր խնդրել, որպեսզի թեյ պատրաստեն, որովհետեւ դա կասկածի տեղիք կտար: Նրանք ստիպված կում-կում սառը թեյ էին խմում, որն ուտելուց առաջ էր պատրաստված, կամ սպասում էին մեկ ժամի չափ, մինչեւ որ խելամիտ էին համարում տաք ջուր պատվիրել: Իրենց կանոնավոր զբոսանքների ընթացքում, որ տեղի էին ունենում օրը երկու կամ երեք անգամ, Տա Տունգը հայտնաբերեց այն փողոցը, որտեղ օգտագործված գրքերի գրավաճառանոցներն էին: Ամեն ուտելուց առաջ նրանք իրենց մեկ ժամն այդտեղ էին անցկացնում: Այդ գրավաճառանոցները մի քանիսն էին: Տա Տունգը եւ Լոտոսի Բուրմունքն այդտեղ այցելում էին հերթականությամբ: Ժամանակ առ ժամանակ, երբ աղջիկը նկատում էր, որ գրավաճառն իրենց կասկածով է հետեւում, արմունկով թեթեակի հրում էր Տա Տունգին, որպեսզի հեռանան կամ կանխիկ մի քանի մանրադրամ ծախսեն՝ զնելու համար բացարձակապես անիմաստ եւ էժան մի գրքույկ:

Գրեթե երկու ամիս զույգը շատ խնայողաբար ապրում էր այդ հյուրանոցում՝ սպասելով Բարեփոխման շարժման առաջնորդների՝ իշխանության գալուն, ինչպես նաեւ Լի-Ռի-Մո-Ռայի ժամանելուն: Նրանք ավելի էժան մի սենյակ գտան հյուրանոցում եւ անմիջապես տեղափոխվեցին այդ սենյակ: Տեսնելով, որ կենվորներից ոմանք լվացքն այդտեղ են անում Լոտոսի Բուրմունքն սկսեց լվալ իրենց հագուստի մի քանի մանր-մունր պարագաներ, գուլպաներ ու թաշկինակներ: Ավելի ուշ որոշեց, որ կարող է լվալ իրենց բոլոր ներքնաշորերը: Տա Տունգը սովորություն ուներ երկու շաբաթը մեկ վարսավիրի մոտ գնալ: Հիմա նա այնտեղ չէր եղել շուրջ մեկ ամիս: Թեյի տերեւները բավականին փոքր գումար արժեին, բայց նրանք հրաժարվեցին թեյից՝ ջրից բացի ոչինչ չխմելով: Լոտոսի Բուրմունքն այլեւս չէր վախենում գրավաճառների հարցախույզ հայացքներից: Նա կարող էր Տա Տունգին ակնարկել, որ հեռանան, երբ զգում էր, որ գրավա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ճանն սպառնացող հայացքով է նայում, բայց երբեք չէր առաջարկի, որ փող ծախսեն գրքույկների վրա:

Չորրորդ լուսնի ավարտին Կայսերական հրամանագիր արձակվեց՝ հռչակելով Գլխավոր բարեփոխման մասին: Դա հրաման էր կայսրությունում ապրող բոլոր մարդկանց, նախարարներից, իշխաններից ու դուքսերից մինչև հասարակ ժողովուրդ, որ կոչ էր անում հրաժարվել իրենց հին, քարացած եւ անարդյունավետ սովորություններից ու կենսակերպից եւ ընդունել այն ամենն, ինչ լավ է ու նոր: Բարեփոխման շարժման հետեւորդների ուրախությանը չափ ու սահման չկար, երբ այդ նորություններն իմացան, իսկ Տա Տունգը նույնիսկ ավելի երջանիկ էր, քան նրանցից որեւէ մեկը, որովհետեւ իմացել էր, որ իր անգլիացի հորեղբայրը եկել է հյուսիս՝ Բարեփոխման առաջնորդներին գաղտնի այցելելու համար: Միաժամանակ ամենավայրի ու անհավանական լուրերն էին շրջում մայրաքաղաքում, եւ հավանաբար դրանք տարածվում էին բարեփոխման կողմակիցների հակառակորդների կողմից: Ասում էին, որ Կառավարությունը աննախադեպ քայլ է պատրաստվում ձեռնարկել՝ Երիտասարդ կայսեր կողմից նոր վարչապետի նշանակում, եւ այդ պաշտոնի համար հավանական թեկնածուներն էին համարվում կամ Սարկիզ Իտոն՝ ճապոնացի բարեփոխիչը, կամ Լի-Ռի-Մո-Ռայը՝ անգլիացի միսիոները, կամ Կան Յու-Վեյը՝ Բարեփոխման ընկերության առաջնորդը: Թեեւ խելագարություն էր թվում հավատալ, թե Չինաստանի վարչապետ կարող է լինել ճապոնացի մի ազնվական կամ անգլիացի մի հոգեւորական կամ առանց նախկինում պաշտոնական աստիճան չունեցած սովորական մի մարդ, բարեփոխումը շատերի կողմից դիտվում էր որպես արմատական փոփոխություն, որ հազիվ թե խենթության պակաս ուներ: Լի-Ռի-Մո-Ռայի հանկարծակի ժամանումը Պեկին Տա Տունգին ստիպեց մտածել, որ ասեկոսների մեջ որոշակի ճշմարտություն կա: Քանի որ շատ էր փափագում հանդիպել իր անգլիացի հորեղբորը, իսկույն վճռվեց, որ նրան պետք է ընդունենի Grand Hotel des Wagon Lits-ում հենց այդ կեսօրին: Լոտոսի Բուրմունքը պակաս հուզված ու ոգեւորված չէր այդ նորությունից, քան ամուսինը: Նա խոզանակեց եւ մաքրեց Տա Տունգի մետաքսե բաճկոնը եւ հյուրանոցի կառավարչի կնոջից խնդրեց տաք արդուկը, որպեսզի արդուկի ամուսնու թաշկինակները: Դրանցից մեկը ծալեց ու դրեց մետաքսե բաճկոնի գրպանը եւ կրկին ու կրկին ասում էր Տա Տունգին, որ չպիտի անպետք թողա փևտրի՝ ինչչելու եւ քիթը սրբելու համար: Հրաշալի օր էր, եւ առիթը նշելու համար որոշեցին գնալ մի լավ նախաճաշելու փոքրիկ ու էժան ռեստորաններից մեկում, որի

վրա երկար ժամանակ աչք ունեին: Իմանալով ճանապարհը կորցնելու Տա Տունգի սովորությունը՝ աղջիկը ցանկացավ, որ երեքն անց կեսին դուրս գան: Նա զգում էր, որ ժամացույցը սովորականից ավելի դառնալ է աշխատում: Երեքն անց տասնհինգին ևս շտապեցրեց Տա Տունգին, որ գնան, ասելով, թե խելամիտն այն է, որ ավելի դառնալ քայլեն եւ ավելի վաղ սկսեն: Այդպիսով շատ ժամանակ կունենան:

Grand Hotel des Wagon Lits-ը եվրոպական հաստատություն էր եւ Պեկինի ամենաթանկ հյուրանոցը: Այն գտնվում էր Տուն Չիաո Սին Սյանի արեւելյան ծայրամասին մոտ, կամ Պատմական առաքելության փողոցում եւ մի այնպիսի վայր էր, որտեղ Տա Տունգը ևսխկինում երբեք չէր եղել, բայց որի մասին շատ էր լսել: Փառահեղ շենքի առջեւ լայն ու խոր մի խանդակ էր, գրեթե փոքրիկ մի գետ: Այդ ջրային ուղու երկու կողմերի երկայնքով ձգվող մայթերին սփռված էին ափերին տնկված ծառերի ծաղիկներից թափված ծաղկաթերթերը: Ամիջապես ձախ կողմում Թարթար քաղաքի պարիսպն էր, որ փակուղի էր դարձնում դեպի այդ կողմ տանող ճանապարհը: Շրջակայքը նմանվում էր զբոսայգու խաղաղ ու գեղատեսիլ մի անկյան: Այդուհանդերձ շատ հարմար էր այդտեղից հասնել քաղաքի բաՆուկ մաս, քանի որ այդ վայրը փաստորեն գտնվում էր Շին Մենի եւ Հաթա Մենի միջեւ: Մուտքի մոտ հապաղելուց հետո, որպեսզի համոզվի, որ դա հյուրանոցն է, Տա Տունգը քայլերն ուղղեց դեպի օտարերկրյա այդ շենքը եւ ներս մտավ: Դա բոլորովին տարբեր էր չինական ցանկացած մեծ հյուրանոցից, որ ևս երբեւէ տեսել էր: Նախասրահում ուղեբեռներ կամ ճամպուրակներ չէին կիտված: Նախասրահի մուտքի մոտ չէիր տեսնի պատվերների սպասող բեռնակիրների ու մատուցողների: Տա Տունգը գնաց դեպի այցելուների գրանցման խաղաղ սեղանը եւ խնդրեց բժիշկ Թիմոթի Ռիչարդին: Հյուրասենյակի մեծ ու հարմարավետ բազմոցին նստած, սպասելով Լի-Թի-Մո-Թային՝ Տա Տունգն սկսեց պատկերացնել, թե ինչ է տեղի ունենալու շուտով: Թվում էր՝ ևս տեսնում է, որ այս նշանավոր միսինները ամեն առումով բացարձակապես տարբերվում է Նանչանի պարոն Մա-Կե-Լաոյից թե՛ արտաքինով, թե՛ բնավորությամբ: Նա համոզված էր, որ Լի-Թի-Մո-Թայն աշխարհիկ մարդ էր, փոխանակ լիներ նեղմիտ ու սահմանափակ քարոզիչ, որի օձիքը, կոստյումը, ձեռքերը, աչքերը, ձայնը, ժպիտներն ու բառերը բոլորն էլ մեկ իմաստ ունեն. «Ես եկել եմ այստեղ, որպեսզի փրկեմ բոլոր չին հեթանոսների կորուսյալ հոգիները»: Նա պատկերացնում էր, որ Լի-Թի-Մո-Թայի դիմագծերն ազնիվ ու բարեհոգի տեսք էին ունենալու՝ պարոն Մայի խորամանկ դիմագծերի փոխարեն, որ ևս ավելի շատ

ԱՅՈՒՆ ՇԻՒ

պետք է հետաքրքրված լինի Չինաստանին ու մարդկությանն իր ծառայությունները մատուցելով, քան բացառապես միայն իր առաքելության մասնավոր շահերն առաջ մղելով: Իրեն պատկերվող տեսլականում նա տեսնում էր, որ Լի-Ռի-Սո-Ռայը լուսավորություն է բերում Կայսրին ու նրա նախարարներին, իշխանություն՝ Բարեփոխման առաջնորդներին եւ իրական երջանկություն՝ չին ժողովրդին: Ինչ վերաբերում է իրեն, Տա Տուևը երագում էր, որ ինքն ու Լոտոսի Բուրմունքն այլևս չտառապեին անբավարարությունից կամ անհարմարությունից իրենց սևվելու ընթացքում, որ Լոտոսի Բուրմունքն այլևս կարիք չունենար լվացք անելու, որ ինքը կարողանար վարսավիրանոց գնալ այնքան, որքան ցանկանում է, եւ որ կարողանար իր տեսած բոլոր լավ գրքերը ձեռք բերել հորեղբոր՝ Լի Կանի համար: Մինչ Տա Տուևն այսպիսի երագանքներ էր փայփայում, Լի-Ռի-Սո-Ռայը մտավ հյուրասենյակ: Տղան տեսավ մի բարձրահասակ, շատ տպավորիչ անգլիացու, ճերմակին տվող մազերով եւ մորուքով, որ մոտենում էր իրեն՝ մեծ, բարի ու ամուր ձեռքն առաջ մեկնած: Նրա անձն այնքան ազդեցիկ էր ու ծանրակշիռ, որ Տա Տուևն անմիջապես զգաց՝ ինքը դեմառդեմ կանգնած է մի շատ հայտնի մարդու առջեւ: Եվ ճիշտ էր. անգլիացին բարի ու լայնախոհ էր երեւում, եւ նրա աչքերի յուրահատուկ փայլը բոլորին ստիպում էր հավատալ ու սիրել այդ մարդուն: Նրա հագին սովորական եվրոպական կոստյում էր, ոչ թե հոգեւորականի՝ օձիքով զգեստ, որի հանդեպ Տա Տուևի մոտ անբացատրելի հակակրանք էր ձեւավորվել: Անգլիացու ձայնը ջերմ էր, սիրալիր ու հուսադրող: Տա Տուևին թվաց, թե հորեղբոր հետ է խոսում:

«Որքա՛ն երջանիկ եմ, որ վերջապես հանդիպում եմ զարմիկիս: Աստուծո ողորմածությամբ՝ հուսով եմ ամեն ինչ լավ է»:

Նա ամուր սեղմեց Տա Տուևի ձեռքը, եւ տղան այդ ձեռքսեղմումից ջերմություն ու անկեղծություն զգաց: Խոր երջանկության տվյալ պահին նա չկարողացավ լսել այդ բարի խոսքերը, բայց ձայնն ու այն տոնը, որով ասվեցին դրանք, առավել քան մխիթարիչ էին: Ուղջույնի մի քանի խոսքերի նախնական փոխանակումից հետո, ինչը Տա Տուևի մոտ այնքան էլ լավ չէր ստացվում, տղան սկսեց պատմել անգլիացուն այն բուռն ցանկության մասին, որով բոլոր բարեփոխիչներն սպասում էին նրա օգնությանն ու հրահանգներին:

«Բայց ես ընդամենը մեկն եմ շատերից, որոնք պատրաստ են այս գործին տալ ամբողջ կարողությունն ու եռանդը, որ ունենք: Առանց կտրուկ բարեփոխումների Չինաստանը շատ շուտով կկործանվի: Մի ազգ երբեւէ

չի կարող դիմանալ ու գոյատևել ներկայիս առաջադիմող աշխարհում միայն իր անցյալի փառքերի շնորհիվ: Մենք պետք է զարգանանք ու առաջ գնանք ժամանակի ընթացքին համապատասխան: Հին պաշտոնյաներն ու մանդարինների դասը երկիրը կործանման են տանում: Փոխանակ փորձի լայն զանգվածների աչքերը բացել, կառավարությունը դեռ իր հին քաղաքականությունն է հետապնդում՝ թույլ տալով, որ մարդիկ շարունակեն մնալ տգետ եւ ընտրեն քչերին, որպեսզի իրենց կառավարեն հին, իր դարն ապրած քննական մեթոդներով»:

«Միանգամայն ճիշտ ես, տղաս: Վերջերս մի հուշագիր եմ ուղարկել Կայսերական իշխանությանը, Վարչապետին ու Կայսերական խորհրդականին, եւ թվում է՝ շատ գոհ են դրանից: Այդ հուշագրում ես ներկայացրել եմ հետեւյալը. նախ՝ ստեղծել Կրթության խորհուրդ, որպեսզի ժամանակակից դպրոցներ եւ վարժարաններ հիմնադրվեն ամբողջ կայսրությունում»:

«Հենց դա է, որ ես համարում էի ամենակարեւորը»:

«Այո: Եվ երկրորդ՝ խելամիտ մամուլի ստեղծում՝ արտասահմանյան փորձված լրագրողներով, որպեսզի օգնեն չին խմբագիրներին՝ լուսավորելու ժողովրդին»:

«Այո՛, այո՛»,- Տա Տունգը հավանություն էր տալիս ամեն բառին:

«Քեզ նման՝ նոր գիտելիքներով զինված երիտասարդները շատ օգտակար են այս առումով: Մենք խիստ զգում ենք ձեր կարիքը»:

Տա Տունգն անկարագրելի երջանիկ էր:

«Եվ երրորդ՝ երկաթուղիների անհապաղ կառուցում եւ հանքերի ու գործարանների բացում»:

«Այո, ազգի հարստությունը պետք է զարգացնել»:

«Եվ չորրորդ՝ արժույթի անմիջական բարեփոխում ու ֆինանսների ստեղծում ամուր եւ հուսալի հիմքի վրա: Եվ երբ ազգային ֆինանսների հետ ամեն բան կարգին լինի, այդժամ հինգերորդ՝ համարժեք բանակի ու նավատորմի ստեղծում երկրի պաշտպանության համար»:

«Գերազանց է, գերազանց»,- Տա Տունգն զգաց, որ այս անգլիացին առնվազն Չինաստանի փրկիչն է: Որքան տարբեր էր նա պարոն Մա-Կե-Լաոյից եւ մյուս նեղմիտ միսիոներներից, որոնք, բացի հեթանոսների հոգին փրկելուց, այլ բանի մասին չէին խոսում:

«Եվ վեցերորդ՝ ութ նախարարների կաբինետի ստեղծում՝ մի կեսը մանջուրներ եւ չիներ եւ մյուս կեսը՝ օտարերկրացի պաշտոնյաներ, ովքեր տեղյակ կլնեն աշխարհի զարգացման ու առաջընթացի մասին»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Մի կեսը մանջուրներ եւ չիւներ եւ մյուս կեսը՝ օտարերկրացի պաշտոնյաներ»:

«Եվ յոթերորդ՝ այդ կաբիւնետից վեր՝ Գահի երկու օտարերկրյա խորհրդականների նշանակում»:

«Օտարերկրյա երկու խորհրդականներ»:

«Երբ այս ամենն արվի, հնարավոր կլինի իրականացնել չորս մեծ ձեռնարկում՝ կրթական բարեփոխում, տնտեսական բարեփոխում, ներքին եւ միջազգային խաղաղություն եւ հոգեւոր վերածնունդ Չինաստանում»:

«Արդյո՞ք Չինաստանին անհրաժեշտ է հոգեւոր վերածնունդ օտարերկրյա միսիոներների ղեկավարության ներքո»:

Բայց պարոն Լի-Ռի-Սո-Ռայը չէր լսում նրան:

«Աստված աչառություն չի ցուցաբերում որեւէ ազգի նկատմամբ, արեւելյան լինի թե արեւմտյան: Այն ազգը, որ հնազանդվում է Աստծուն, բարգավաճում է, իսկ այն ազգը, որ չի հնազանդվում, կործանվում է, համաձայն անխախտ օրենքի»:

Անգլիացին ինչ էլ որ ասեր դրանից հետո, Տա Տունգը չէր լսում: Նա համաձայնել էր ամեն մի խոսքին մինչեւ հիւզերորդ առաջարկը: Երբ բաւեր հասավ վեցերորդին, կասկածեց, թե արդյո՞ք իմաստուն կլինէր թողնել, որ կառավարությունը ղեկավարէին օտարերկրացիները, որոնք չէին կարող հասկանալ չինական մտակերտվածքն ու հոգեբանությունը: Ապա գալիս էր յոթերորդ առաջարկը օտարերկրյա խորհրդականների մասին, որ անմիջապէս ուղղակի Գահին էին ենթակա լինելու եւ վեր էին լինելու ութ նախարարներից, ինչը, եթե ընդունվէր, Չինաստանը կախյալ վիճակի մեջ էր դնելու: Երբ հիշատակվեց Չինաստանի հոգեւոր վերածնունդը, Տա Տունգի աչքերն սկսեցին մթազնել, եւ Լի-Ռի-Սո-Ռայի բարեհոգի կերպարն արագ խամրեց նրա հայացքի առջեւ: Չինաստանի եւ իր հորեղբոր բարեկամի փոխարեն նա տեսավ իր առջեւ կանգնած մի շատ նեղմիտ մարդու, որ տառապում էր գերարժեքության բարդոյթով եւ փորձում էր հավաստիացնել, թե քանի դեռ եվրոպացիները չեն եկել եւ ստանձնել երկրի կառավարումը, Չինաստանն անհույս վիճակում կլինի: Անօգուտ էր: Նա այլեւս չէր կարողանում ընկալել ասվածը: Ինչպիսի՞ հոյակերտ դրամ էր կառուցել օդում, եւ հիմա, երբ այն խորտակվելով հազարավոր կտորների էր բաժանվել, զգաց, որ գրեթէ անտանելի է: Որոշ ժամանակ նա լուռ էր, ապա ցրված ու անուշադիր՝ շտապ հրաժեշտ տվեց եւ հեռացավ: Ու այդպէս էլ չիմացավ, թե իր անսպասելի մեկնումը ինչ վիճակում էր թողել իրեն հյուրընկալողին:

Երբ Լոտոսի Բուրմուկը վերադարձավ հյուրանոց, զգաց, որ ոչինչ չի կարող անել: Նա աչքի անցկացրեց սենյակի մի քանի հին գրքերը եւ ստիպված էր դրանք հավաքել ու մի կողմ դնել: Առաջ, երբ կարոտում էր տանը, բանաստեղծություն էր կարդում, որը մշտապես գրավում էր նրան: Բայց հիմա, երբ քթի տակ կիսածայն արտասանում էր, միտքը Տա Տուկի հետ էր. ուզում էր իմանալ, թե ինչպես է անցնում հանդիպումը: Նա լի էր սպասումներով ու նախազգացումներով: Ստաճում էր, որ ինչ էլ լինի, ամուսինն այլես ժամանակ չի վատնի եւ հանդիպումից մեծ օգուտ կքաղի՝ ծառայելով երկրին ու հասարակությանը: «Ենց որ ոտնածայներ էին լսվում բակում, դուռը բացում էր ու նայում: Սպասումը շատ երկար չտևեց: Տա Տուկը վերադարձել էր: Ասում են՝ կանայք արտահայտություններն ու տրամադրություններն ավելի լավ են ընկալում, քան տղամարդիկ: Լոտոսի Բուրմուկը իր կանացի էությանը միանգամից զգաց, որ Տա Տուկի տրամադրության անկումը մեկ բան է նշանակում՝ հիասթափություն:

«Այնքան լավ չէ՞ր, որքան հույս ունեինք», - հարցրեց աղջիկը:

Երբ Տա Տուկը տեսավ նրա կարեկցող ու մխիթարիչ համակրելի ժպիտը, հասկացավ, որ իր ժամանակավոր տուն է հասել:

«Շատ ավելի լավ կլիներ, եթե նրան հանդիպած չլինեի»:

«Նա ընդհանրապես չուզե՞ց քեզ օգնել»:

«Անծամբ իմ հանդեպ շատ լավ վերաբերմունք ուներ: Մեր ժողովրդի մասին նրա կարծիքն էր, որ ինձ համար անընդունելի էր: Չինաստանում խառնաշփոթ է միայն այն պատճառով, որ ներկայիս կառավարությունն այլասերված է ու կաշառված: Բայց դա չի նշանակում, թե ոչ ոք չունենք, որ երկիրը կրկին ոտքի կանգնեցնի: Թողնել, որ եվրոպացիները մեզ կառավարեն, նշանակում է Չինաստանին վերաբերվել որպես ոչ քաղաքակիրթ վայրենիների երկրի: Ինձ չի անհանգստացնում, թե ինչ է պատրաստվում նա անել ինձ օգնելու համար: Մենք պետք է ընկերությանը հրաժեշտ տանք: Ավելի լավ է սովամահ լինեմ, քան աշխատեմ նման մարդկանց հետ»:

Լոտոսի Բուրմուկը այս ամենն ընդունեց հնարավորինս հանգիստ, թեև արցունքները ներքուստ հոսում էին, եւ նա ստիպված էր կուլ տալ դրանք: Նա լիովին գիտակցում էր, որ իրենց ներկա նյութական պայմանները քիչ կամ ընդհանրապես ոչ մի ընտրություն չէին թողնում որեւէ աշխատանք գտնելու, բայց կարծում էր, որ ամուսնու ընտրությունը ճիշտ է: Այդուհանդերձ, իսկույն ստուգեց իրենց նյութական վիճակը եւ տեսավ, որ իրենք ընդամենը մի քանի թաղ ունեն:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Ասում են՝ որքան խիստ կարիքի մեջ է մարդ, այնքան ավելի կծեացնի, թե ապահովված է: Նրանք որոշեցին, որ լավ կլինի միանգամից ևախապես վճարեն սենյակի վարձը, թեև պայմանավորվածությունը միևնույն վաղը չէ մյուս օրն էր: Վերցնելով մի քանի կտոր արծաթադրամ՝ Տա Տուկը գնաց տեսնելու կառավարչին: Սովորաբար, երբ ևս վճարում էր վարձը,- իսկ դա միշտ լինում էր մեկ կամ երկու օր առաջ, թեև հիմա, երբ կառավարիչն արդեն ավելի լավ էր ճանաչում նրանց, երբեք չէր դիմի վարձը մուծելու հարցով, եթե անգամ ուշացնեին,- Տա Տուկը միշտ ձեռացնում էր, թե լիքը փող ունի: Նա երբեք չէր մոռանում ժպտալ կառավարչին, երբ բաժանվում էր իր արծաթից: Բայց կոնկրետ այս դեպքում ևս չհիշեց, որ պետք է իրեն ստիպի ժպտալ, միևնույն որ արդեն շատ ուշ էր: Հանկարծ ևս գիտակցեց, որ ինքը պետք է շատ ճնշված տեսք ունենար, եւ փորձեց մեծ ճիգ գործադրել, որպեսզի ժպտա: Հարկ է նշել, որ այդ ժպիտը շատ ավելի վատ էր, քան եթե ամենեւին չժպտար...

Կառավարիչը, որ հաշիվներն էր կազմում եւ աշխատում էր համրիչով՝ ևավթի լամպի լույսի տակ, Տա Տուկին խնդրեց ևստել եւ գրուցել իր հետ:

«Պարոն Լի, երկար ժամանակ է՝ մի բան եմ ուզում քննարկել Ձեզ հետ»:

Նրա մատները, թողնելով համրիչի հատիկները, սկսեցին մորուքը շոյել:

«Ավելի քան երեսուն տարի է՝ աշխատեցնում եմ այս հյուրանոցը եւ առանց պարծենալու ասեմ՝ իմ աչքերի առջեւ եկել ու անցել, մտել ու դուրս են ելել հազարավոր հյուրեր, որ հարավից եկել, հյուսիս են գնացել՝ գարնանը կամ ամռանը, աշնանը կամ ձմռանը: Ծեր ու երիտասարդ, հարուստ ու աղքատ, ազնիվ ու անազնիվ՝ նրանք հազվադեպ են վրիպում իմ ուշադրությունից: Ես անում եմ ինչ որ կարող եմ բոլոր հաճախորդներին համար, եւ իմ կյանքում ոչ մի անգամ որեւէ մեկը դեռ չի դժգոհել իմ ծառայությունից: Ձեր եւ Ձեր բարի տիկնոջ պահվածքից գիտեմ,- երկուսդ էլ լավ ընտանիքներից ելած պատվավոր մարդիկ,- որ ինչ-ինչ չնախատեսված հանգամանքների պատճառով դուք ներկայումս հարմարավետ պայմաններում չեք գտնվում: Ճիշտ չե՞մ արդյոք»:

Տա Տուկը չէր ուզում համաձայնել, բայց չէր էլ կարող ժխտել:

«Այն, որ երբեք ձեզ թույլ չեք տվել ուշացնելու վարձավճարը, պարզորոշ ցույց է տվել, որ չեք ուզում մարդիկ իմանան, որ դժվարին վիճակում եք: Ես լիովին կարող եմ հասկանալ ձեր զգացմունքները: Միշտ մտել եմ ուրիշների վիճակի մեջ: Եթե ես լինեի Ձեր փոխարեն, պարոն Լի, ճիշտ

նույն կերպ կվարվեի: Մարդ բնականաբար ամաչկոտ է այդ հարցերում: Բայց հավաստիացնում եմ՝ ես Ձեզ հետ խոսում եմ լավագույն մտադրություններով: Եթե նույնիսկ չեմ կարող օգնել Ձեզ, գուցե այս քննարկումն ու իմ խորհուրդը կարող են որեւէ ձեռով օգտակար լինել: Ես քառասուն տարի է՝ գործ եմ ունենում մարդկանց հետ, եւ բավականին փորձառություն եմ ձեռք բերել: Այնպես որ՝ եթե Ձեր ճամփորդական քսակը ժամանակավորապես դատարկվել է, չպետք է ամաչեք անկեղծորեն ինձ ասել: Ամեն անգամ, երբ Ձեզնից ստացել եմ վճարը, փոքր-ինչ անհարմար եմ զգացել: Բանի որ այդքան հարգարժան մարդիկ եք, ինչո՞ւ չեք ինձ ասում, որ ուզում եք տեղափոխվել ձեր հայրենի համքարության իջեանատուն-հանրակացարաններից մեկը: Նրանք վարձ չեն վերցնում, եւ դա ձեզ շատ կօգնի»:

«Ի՞նչ: Վարձ չե՞ն վերցնում»:

«Ի՞նչ է, չգիտեի՞ք: Եվ բացի այդ՝ այդտեղ կարող են լինել շատ անվանի ու ազդեցիկ մարդիկ ձեր գավառից, Լահանգից, եւ նույնիսկ ձեր շրջանից, որ շատ հաճախ են այցելում այդ վայրերը, եւ նրանք գուցե կկարողանան որեւէ հարմար աշխատանք գտնել Ձեզ համար»:

«Մենք չգիտեինք, որ այդպիսի համքարային իջեանատուն-հանրակացարաններ կան: Ո՞վ է դրանք հիմնադրել եւ ինչի՞ համար են դրանք»:

«Հարուստ եւ հաջողակ մարդիկ ամեն շրջանից, երախտապարտ իրենց հաջողակ բախտի համար, մեծահոգաբար եւ առատածեռն՝ միջոցներ են տրամադրում այդպիսի հաստատությունների, եւ դրանք Լախատեսված են որպեսզի ազատ սենյակներ տրամադրեն այն թեկնածուներին, որոնք Պեկին են գալիս իրենց հայրենի շրջաններից՝ պետական ավարտական քննությունները հանձնելու: Այդ ուսանողների մեծ մասն ապահովված չէ, եւ ոմանք ընտանիքներն իրենց հետ են բերում: Երբ մեկ տարի ձախողվում են՝ կտրվելով, ստիպված են մնալ երկու կամ երեք տարի ավել՝ հաջորդ քննության համար: Եթե ես լինեի որեւէ վատահամբավ իջեանատան ազահ կառավարիչ, երբեք սա չէի առաջարկի Ձեզ»:

Տա Տունգն առավել քան երախտապարտ էր տարեց կառավարչին եւ շատ կարճ պատմեց նրան ճամփորդության ժամանակ ավազակների հետ իրենց հանդիպման մասին: Նա նորից ու նորից շնորհակալություն հայտնեց կառավարչին իր բարության համար եւ մի քանի հասցե վերցնելուց հետո որոշեց տեղափոխվել համքարության հանրակացարաններից մեկը հենց հաջորդ օրը: Կառավարիչն ստիպեց նրան փողը ետ վերցնել եւ բարի գիշեր մաղթեց: Տա Տունգը գրեթե վազելով գնաց իր սենյակ՝ Լոտոսի

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

Բուրմունքին պատմելու անսպասելի լավ տրոության մասին, եւ երիտասարդ զույգն սկսեց հուզվել: Տա Տունգը բարձր տրամադրությամբ ասաց. «Արի անմիջապէս հավաքենք իրերը, որպէսզի վաղն առավոտյան շուտ տեղափոխվենք համքարության հանրակացարաններից մեկը»:

«Բայց, իմ սիրելի երիտասարդ պարոն եւ տեր, հավաքելու ի՞նչ կա»:

Տա Տունգը նայեց շուրջը՝ գրեթէ դատարկ սենյակին եւ չկարողացավ չժպտալ իր դժբախտության վրա, որն այժմ, պարզվեց, մեծ առավելություն է: Նա փչեց հանգցրեց նավթի լամպը, եւ երկուսով պառկեցին քնելու՝ իրենց խիստ երջանիկ գգալով:

ԳԼՈՒԽ 10

*«Վատը երբեմն փոխվում է լավի,
Չար բախտն էլ չար է ու միշտ կդավի:
Եվ կտր տարին՝ ձմեռ թե գարուն,
Երկինքն է որբին միայն սատարում»:*

Հասարակական վայրերի լավ դռնապանների համար ոսկե կանոնը պճնամոլությունն է, եւ Յգյանսի Լահանգի համքարային հանրակացարանի դռնապանը մայրաքաղաքի լավագույն դռնապաններից մեկն էր: Եւ կարիք չունէր երկու անգամ Լայելու Տա Տունգին, որպեսզի որոշեր, որ այդ երիտասարդը պետք է որ ծառա լինի: Եւ Լույսիսկ մտածեց, որ այդպիսի ծառա ունենալով, Լրա տերն, անկասկած, շատ երկրորդ կարգի մեկն է: Եւ սովորաբար հմայիչ ժպիտ ուներ առաջին կարգի այցելուների ու բնակիչների, սովորական տեսք՝ երկրորդ կարգի եւ թթված ու դժգոհ դեմք՝ սովորական մարդկանց համար: Դեմքի այն արտահայտությունը, որով Լա դիմավորեց Տա Տունգին, անհետ է թողնի վրա Լկարագրել: Երբ լսեց Տա Տունգի հարցուփորձը համքարային այդ հանրակացարանի սենյակների մասին, Լա չոր ու ճարճատող հնչյունների մի շարան արտաբերեց, որոնք պետք է որ ծիծաղ Լշանակեին, եւ կարճ ու կտրուկ ասաց, որ շենքի հիմնումից ի վեր այն երբեք մինչ այդ բնակեցված չի եղել որեւէ մեկի կողմից, որն առկազն «ընտրված մարդ» չի եղել՝ այնպիսին, որ հաջողությամբ անցել է միջանկյալ պետական քննությունը, կամ էլ այնպիսի պետական պաշտոնյայի կողմից, որի աստիճանը յոթերորդ դասից ցածր լիներ: Զգալով, որ Տա Տունգն արդեն պետք է բողոքի, Լա շտապով հավելեց, որ բոլոր դեպքերում Լերկայումս ոչ մի ազատ սենյակ չկա, եւ Լրան ասաց, որ փորձի դիմել Լանչանի Լահանգային համքարային հանրակացարան, որը Լույն փողոցում էր, քիչ ավելի Լերքեւ: Լուտոսի Բուրմունքը մեկ քայլ էր գտնվում, բայց Լա եկավ ժամանակին, որպեսզի լսեր դռնապանի խոսքի վերջին մասը: Մինչ Տա Տունգը տրամադրված էր պահանջելու, որ տեսնի այդ տեղը եւ հանդիպի այն մարդու հետ, որը հանրակացարանի պատասխանատուն է, աղջիկը հանգիստ քաշեց Լրա թեւից եւ Լշան արեց, որ լավ կլինի հեռանալ: Գլխավոր փողոցի երկայնքով Լրանք քայլեցին դեպի հարավ՝ Շուն Յգի Մենից դուրս եւ երկու հարյուր յարդ անցնելուց հետո հասան Լանչանի Լահանգային համքարային հանրակացարան: Այս հաստա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

տության դռնապանը նրանց սառն ընդունեց, ինչպես նաև տեղեկացրեց երիտասարդ զույգին, որ ընդունվելու համար համապատասխան որակավորումներ ու տեղեկանքներ են անհրաժեշտ, և որ ներկայումս բոլոր սենյակներն զբաղեցված են: Այս մարդը փոքր-ինչ ավելի քաղաքավարի էր և բարի, քան այն մյուսը, և նրանց խորհուրդ տվեց փորձել Նանչանի շրջանային համաքարային հանրակացարան դիմել, որտեղ ոչ մի սահմանափակում չկա, և որը գտնվում է Շիեն Սենից դուրս՝ դեպի արեւելք: Ոչինչ չէր մտում անել, քան գնալ այնտեղ, և նրանք ստիպված էին մի քանի անգամ ճանապարհը հարցնել, քանի որ այն գտնվում էր մի քանի խուլ փողոցների միջև ընկած խուլ մի նրբանցքում: Ծերունի Հոուն՝ այդ շենքի պահապանը, շատ սիրալիր մի անձնավորություն էր: Կնոջ և որդու հետ նա հոգում էր հնարավոր բոլոր պարտականությունները, որ պահանջվում էին հանրակացարանում: Ըստ էության նա եւ՛ կառավարիչն էր, եւ՛ գանձապահը, եւ՛ ծառայապետը, եւ՛ անձնական սպասավորը, եւ՛ պահակը, եւ՛ այգեպանը, եւ՛ գլխավոր խոհարարը, եւ՛ հսկիչ խնամատարը, եւ՛ դռնապանը, նրա կինը տնային տնտեսուհի էր, հյուրասենյակի սպասուհի, աղախին և խոհարարի օգնական, իսկ նրանց երիտասարդ որդին ծառայում էր որպես սպասավոր և ցրիչ: Ծերունի Հոուն, թեև ծնունդով Պեկինից էր և իր ամբողջ կյանքում երբեք չէր եղել Նանչանում, իրեն համարում էր նանչանցի և ջերմորեն ընդունեց նրանց: Լսելով, որ նախկինում երբեք չէին իմացել այդպիսի համաքարային հանրակացարանի գոյության մասին և երկու ամիս մնացել են հյուրանոցում նա անմիջապես արձագանքեց՝ գոչելով. «Շա՛տ ափսոս: Վաղուց պետք է այստեղ եկած լինեիք: Մենք միշտ քիչ ծանրաբեռնված ենք լինում տարվա առաջին ու վերջին մի քանի ամիսներին և կկարողանայինք տեղավորել ձեզ:

«Արդյո՞ք բոլոր սենյակներն են զբաղված հիմա», - անհանգիստ հարցրեց Լուտոսի Բուրմունքը:

«Վախենամ, որ այո, երիտասարդ տիրուհի»:

«Օ», - միաժամանակ բացականչեցին Տա Տունգն ու Լուտոսի Բուրմունքը և հուսահատ իրար նայեցին:

«Բայց հարավային սենյակները վերջերս դատարկվել են», - տիկին Հոուն տարօրինակ մի հայացքով նայեց ամուսնուն:

«Ի՞նչ հարավային սենյակներ», - հարցրեց վերջինս:

«Նրանք, որ ներքին բակում են»:

Հիմա էլ ամուսինը տարօրինակ հայացքով նայեց կնոջը և անվճռակալորեն պատասխանեց. «Ախ, հա՛, մոռացել էի դրանց մասին: Առաջինը

դու գևա այևտեղ եւ տես ամեն ինչ կարգի՞ն է»:

«Լիովին: Երեկ եմ ավելի եւ փոշիները սրբել: Պևանք ինձ հետ, երիտասարդ տիրուհի»:

«Ե՞րբ եք ուզում տեղափոխվել»:

«Հիմա, եթե ամեն ինչ կարգին է»,- պատասխանեց Տա Տունգը:

«Ձեր ուղեբեռը դրսո՞ւմ եք թողել: Ո՞վ է կայում դրան»:- Ապա դառնալով իր որդու կողմը՝ պարոն Հոուն ասաց. «Պևա, ուղեբեռը ներս բեր»:

«Խնդրում եմ մի՛ անհանգստացեք,- Լոտոսի Բուրմուկըն արագ ետ պահեց տղային:- Մենք ուղեբեռ չունենք, բացի մեր ձեռքի այս երկու փոքրիկ կապոցները: Մենք... մենք ճանապարհին ավազակների հանդիպեցինք...»:

«Սուկալի է, երիտասարդ տիրուհի,- բացակասչեց ձերուհի Հոուն:- Հուսով եմ ձեզ չեն վնասել»:

«Ոչ, շնորհակալություն,- պատասխանեց Տա Տունգը:- Նրանք միայն մեր փողը վերցրին»:

«Եվ իհարկե մեր ամբողջ ուղեբեռը»,- շտապով հավելեց Լոտոսի Բուրմուկընը:

«Պետք է որ սարսափելի վախեցած լինեք, երիտասարդ տիրուհի»,- ասաց տիկին Հոուն, երբ հրելով բացում էր դռներն ու նրանց ուղեկցում դեպի հարավային սենյակներ: Պա երկու սենյակի հավաքակազմ էր: Պրսի սենյակում մի փոքրիկ քառակուսի սեղան էր եւ չորս փոքրիկ աթոռ. դա ձառայում էր որպես հյուրասենյակ եւ ճաշասենյակ, իսկ ներսինում, որ ննջասենյակն էր, տախտակե չոր մի մահճակալ կար եւ երկարավուն սեղան ու երկու աթոռակ: Նրանց ուղեբերի տակ հատակ չկար: Խոնավ տոփանած հող էր: Այս ու այնտեղ պատռված՝ պատի պաստառին ջրի հետքեր կային: Կահույքի մի քանի պարագաները տզեղ ու կուպիտ տեսք ունեին: Թղթապատ պատուհանները ճաքճաք էին եւ դեղնագորշ գույն էին ստացել: Այդուհանդերձ երկուսն էլ՝ Տա Տունգն ու Լոտոսի Բուրմուկըն, ասես նոր մայրցամաք էին հայտնաբերել եւ չափազանց գոհ էին: Այնուհետեւ տիկին Հոուն նրանց ցույց տվեց, որ կավե երկու փոքրիկ վառարաններ կային եւ ջրի մի սափոր՝ դրսի միջանցքում: Պա նրանց խոհանոցն էր, եթե ցանկալային ինչ-որ բան պատրաստել իրենց համար, կամ էլ կարող էին ճաշել ձերուհի Հոուի մոտ՝ շատ մատչելի գևով, որ հաշվարկվում էր աստիճանաբար՝ ուտելիքից ուտելիք: Լոտոսի Բուրմուկըն ասաց, որ ինքը կպատրաստի իրենց կերակուրը: Նախկինում նա երբեք որեւէ բան չէր պատրաստել խոհանոցում, բայց մտածում էր, որ նույնիսկ եթե ամենավատը լիներ, ին-

քը միշտ կարող էր ապավինել քաղցր կարտոֆիլին ու թխվածքին:

Երբ արդեն առանձնացել էին, Լոտոսի Բուրմունքն սկսեց կազմել այն բաների ցուցակը, առանց որոնց պարզապես չէին կարող ապրել: Պա երկար մի ցուցակ էր, եւ նրանք նորից ու նորից կրճատում էին այն, մինչեւ որ թղթի վրա մնացին միայն՝ «անկողնու սպիտակեղեն, լամպ, կերակրի փայտե ձողիկներ, վառելիքայտ, բրինձ, ձեթ եւ աղ, բանջարեղեն»: Տա Տունգը պետք է դուրս գար եւ գներ այդ ամենը, իսկ դրանք կարծեսային իրենց ամբողջ ունեցածի կեսից ավելին:

Երբ տիկին Հոուն տեսավ, թե նրանք ինչ են գնել, հասկացավ, որ դեռ շատ բանի պակաս ունեն: Քանի որ գիտեր նրանց բաժին հասած դժբախտության մասին, ուղարկեց նրանց ինչ որ պետք էր եւ Լոտոսի Բուրմունքին սովորեցրեց, թե ինչպես պետք է պատրաստի: Լոտոսի Բուրմունքն այժմ իմացավ, որ խոհարարական ընդունակությունը բավականին բարդ արվեստ է եւ պահանջում է մեծ փորձառություն: Պարզ բրնձե կերակուր պատրաստելը նրա համար չափազանց դժվարին մի բան էր: Նույնիսկ խստորեն հետեւելով տիկին Հոուի տված խորհուրդներին՝ նա չէր կարողանում բրինձ պատրաստել ինչպես հարկն է: Տուրը կամ չափազանց շատ էր լինում, կամ չափազանց քիչ, կրակը կամ շատ ուժեղ էր լինում, կամ շատ թույլ: Արդյունքն այնպիսին էր լինում, որ մինչ բրինձը կաթսայի հատակում այրվում էր, վերելում բավականին շատ ջուր էր մնում, իսկ մեջտեղում բրինձը դեռ հում էր: Թեեւ բրնձով պատշաճ կերակուր ունենալը շատ քիչ էր թանկ, քան կարտոֆիլն ու թխվածքը, բայց նրանք բավականին շատ խնդիրներ ունեցան, մինչեւ որ Լոտոսի Բուրմունքը սովորեց պատրաստել ինչպես հարկն է:

Շուտով իմացան, որ շենքում մոտ մեկ տասնյակից ավելի կենվորներ կային, եւ շատ տնական միջավայր էր ստեղծվել: Նրանք իրենց շատ ավելի զգացին տանը, երբ լսեցին, որ հարեանները խոսում են Նանչանի առձանությամբ, որը չէին լսել իրենց հայրենի քաղաքը լքելուց ի վեր: Սկզբում թվում էր, թե հանրակացարանի բոլոր մարդիկ մեծապես զարմացած էին՝ տեսնելով որ հարավային սենյակներն զբաղեցված են, եւ փորձում էին խուսափել այդ վայրով անցնելուց: Վերջապես մի շատ համեստ ու լռակյաց երիտասարդ, որն ապրում էր դեմ դիմաց, մի առավոտ մոտեցավ եւ զրուցեց նրանց հետ: Նա բավականին ամաչկոտ էր երեւում, բայց այդուհանդերձ հիմնականում խոսում էր Լոտոսի Բուրմունքի հետ: Ազգանունը Տինգ էր, դպրոցական անունը՝ Հո-Սան: Թեեւ նանչանցի էր եւ խոսում էր հարազատ առձանությամբ, բայց ծնվել էր Հայ-Վնում՝ Սեմանի շրջանի

մերձակայքում, որտեղ իր հայրը մի ժամանակ դատավոր էր եղել: Կրթություն էր ստացել Կանտոնում եւ երբեք չէր եղել Նանչանում: Պեկին էր եկել, որպեսզի համալսարան ընդունվեր: Տա Տունգի համար Տինգ Հո-Սանը կարդացած էր համակրելի մի անձնավորություն էր: Նա այդքան չէր խոսում Տա Տունգի հետ, որքան Լոտոսի Բուրմունքի հետ, որովհետեւ կարծում էր, թե Կանտոնի առողջանությունը տղամարդու լեզու է, իսկ Նանչանինը՝ կանանց:

Մանկության տարիներին տեսել էր, որ իրենց տան բոլոր կանայք՝ մայրը, հորաքույրը, դայակն ու աղախինը, որոնք բոլորն էլ Նանչանից էին, խոսում էին Նանչանի առողջանությամբ, միևնույն հայրը, ուսուցիչը եւ տեղի տղամարդ ծառաները բոլորը խոսում էին Կանտոնի առողջանությամբ: Դրա համար նա սովորություն էր ձեռք բերել՝ մի առողջանությամբ խոսել կանանց հետ եւ մյուսով՝ տղամարդկանց: Դա այնքան խորն էր արմատավորվել նրա գիտակցության մեջ, որ հիմա ամենեւին չէր կարողանում Նանչանի առողջանությամբ խոսել իր ընկերների հետ: Քանի որ տղամարդկանցից ոչ ոք համբարային հանրակացարանում չէր կարողանում խոսել Կանտոնի առողջանությամբ, նա շատ միայնակ էր միևնույն Լոտոսի Բուրմունքի ժամանելը, որի հետ կարող էր խոսել Նանչանի առողջանությամբ: Նա Լոտոսի Բուրմունքին ասաց, որ իր ձևողները երկուսն էլ մահացել են, եւ նրան այնպես էր նայում, ասես իր ընտանիքի մի անդամ լիներ:

Լոտոսի Բուրմունքն զգում էր, որ տարօրինակ մի բան կա՝ իրենց զբաղեցրած սենյակների հետ կապված, եւ, տեսնելով, որ Տինգ Հո-Սանը ճշմարտախոս մարդ է, հարցրեց նրան, թե ինչու են մարդիկ մի տեսակ խուսափում անցնել իրենց դռան մոտով:

«Չէ: Այդ մասին ոչինչ մի՛ իմացեք: Խնդրել են չպատմել ձեզ»:

«Ուրեմն գիտե՞ս, որ ինչ-որ բան այն չէ: Ասա, խնդրում եմ»:

«Ոչ, պետք չէ, այլապես մահու չափ կվախենաք»:

«Մահու չափ կվախենա՞նք: Սենյակներում ուրվականներ՞ը են շրջում»:

«Չէ, ընդամենը մի քանի օր առաջ է մեռել»:

«Ո՞վ է մեռել»:

«Այն մարդը, որ այս սենյակներն էր զբաղեցնում»:

«Ես ուրվականներից չեմ վախենում», - կտրուկ ու վճռական ասաց Լոտոսի Բուրմունքը:

«Գիտե՞ս ինչն էր նրա մահվան պատճառը, - տազնապով հարցրեց Տա Տունգը: - Արդյո՞ք թոքախտը»:

«Ոչ: Ծեր տարիքը: Ութսուն տարեկան էր: Քառասունից ավելի տարի-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ներ այստեղ էր ապրում: Հույս ուներ պաշտոնական դիրք ստանալ: Փող չուներ: Հավանաբար տան հետ կապը կորցրել էր»:

«Դժբախտ արարած: Դեմ չենք սենյակները կիսել նրա հետ», - Տա Տու-նզը բավականին թեթևացած էր:

«Խեղճ մարդ: Հույս ունեմ, որ չեմ հետեւի նրան», - գոչեց Տիւզ Հո-Սա-նը:

Մյուս կենվորներից մի մարդ կար, որը Տա Տունզին շատ անգամ էր հանդիպել մուտքի սրահում, բայց միայն գլխով թեթևակի ողջունել էր նրան: Նա փառահեղ տեսք ուներ եւ չափազանց զբաղված էր թվում հավանաբար ամեն օր ճաշի մի քանի հրավեր ունենալով: Տիւզ Հո-Սանն ասում էր, որ այդ մարդը մի փոքրիկ գրասենյակ ունի մայրաքաղաքի բազմաթիվ անիմաստ յամեններից մեկում, բայց նրան թյուրիմացաբար ասել են «Մեծ պաշտոնյա», որովհետեւ սովորություն է ունեցել միշտ ասել մարդկանց, թե ինքը միակն էր, եւ մեծ բավականություն էր ստանում, երբ իրեն այդ մականունով էին անվանում:

Մի օր ծեր մարդը, որն ապրում էր արտաքին բակում գտնվող սենյակներից մեկում, այցելեց Տա Տունզին: Դեմքի դժգոհ արտահայտությամբ նա ասաց. «Արժանավոր իմ զարմիկ, թող ծեր հորեղբայրդ մի փոքրիկ խորհուրդ տա քեզ: Որքան կարող ես՝ շուտ տուն գնա: Պեկինն այնպիսի մի վայր չէ, որտեղ ճանապարհները ոսկով են պատված, եւ տներն էլ ոսկե տակիքներ ունեն: Կարծում ես այստեղ բախտդ կբերի? Ո՛չ, սխալվում ես, ինչպես ես տարիներ առաջ: Երբ հեռվից տեսա դեղին կոմիսիոները, կարծեցի իրոք ոսկուց են: Բայց այդ օրվանից երբեք չեմ տեսել այդ մետաղի որեւէ հատիկ, բացի խանութի ցուցափեղկում տեսածս: Ո՞վ է հայրդ: Ես կգրեմ նրան եւ կխնդրեմ, որ քեզ տուն տանի»:

«Ես հայր չունեմ, - կտրուկ համառությամբ պատասխանեց Տա Տունզը :- Եվ շնորհակալ եմ ինձ իզուր տրված խորհրդի համար»:

Ծերունին խիստ զայրացած հեռացավ, իսկ Տիւզ Հո-Սանն ասաց Տա Տունզին, որ պետք չէ մտածել այդ տարօրինակ մարդու մասին: Նա հայտնի էր որպես «մեծ հորեղբայր» ու սովորություն ուներ հանրակացարանում բոլորին քարոզ կարդալու եւ իր զոհին դիմում էր «արժանավոր զարմիկ» բառերով: Տիւզն էլ էր իր անվճար խորհուրդն ստացել, երբ առաջին անգամ ժամանել էր:

Բոլոր մյուս հարեանները բարեհաճ էին եւ՛ Տա Տունզի , եւ՛ նրա կնոջ հանդեպ: Նրանցից ոմանք դժվարին վիճակում հայտնված «քնտրված մարդիկ» էին, որ սպասում էին այստեղ, որպեսզի մասնակցեին պետա-

կան քննությանը, իսկ ոմանք էլ աշխատանք էին փնտրում: Դրանցից մեկը՝ պարոն Չենգը, շատ էր սիրում Տա Տունգին, որովհետև ինքն էլ բարեփոխման կողմնակից էր: Նա ծանոթացրեց պարոն Վեն Տին-Շիի հետ, որը ժամանակին կայսերական հարճերի ուսուցիչ էր եղել, սակայն կորցրել էր այրի կայսրուհու բարեհաճությունը իր արմատական գաղափարների պատճառով: Երբ Լոտոսի Բուրմունքը լսեց, որ Տա Տունգը գնում է տեսելու կայսերական հարճերի պաշտոնաթող ուսուցչին, ասաց. «Օրերը տաքանում են, իսկ քո՝ մետաքսով լցնված բաճկոնը հաճախ է ըեզ քրտնեցնում: Բացի այդ, երբ բոլորը մեկ աստառով վերարկու են հագնում, հազիվ թե լավ նայվի քո լցնված բաճկոնը: Հիմա, երբ պատրաստվում ես պատրաստվում ես պաշտոնական այց կատարել անձանոթ մեկին, մենք պետք է ըեզ համար մեկ աստառով վերարկու ձեռք բերենք...»:

«Խնդրում եմ չանհանգստանալ: Ես դեռ կարող եմ բաճկոնը հագնել: Մենք այն վիճակում չենք, որ նոր հագուստ գնենք»:

«Մենք չենք պատրաստվում որեւէ բան գնել: Ես մտածում էի հանել իմ վերարկուի բամբակի շերտերը եւ քո բաճկոնի մետաքսի շերտերը: Այս գիշեր դու պետք է շուտ քնես, այնպես, որ ես կարողանամ աշխատել բաճկոնիդ վրա»:

«Չէ՛: Ես սիրում եմ տաք լինել: Հիմարություն է ուրիշ մարդկանց համար հագնվելը»:

Երբ Տա Տունգը հաջորդ օրը վազելով տուն եկավ պարոն Վենի տնից, Լոտոսի Բուրմունքն իմացավ, որ լավ նորություն կա: Նախքան դրսի սենյակ մտնելը Տա Տունգն ասաց. «Պարոն Վենը սքանչելի մարդ է: Նա կարծում է, որ մենք փառավոր ապագա ունենք»:

«Ինչ լավ է»:

«Նա ասաց, որ մի քանի ամսվա ընթացքում Չինաստանը կարող է դառնալ արդիական պետություն: Տա Տունգն այնքան էր հուզված ու ոգեւորված, որ ստիպված էր ճակատից սրբել քրտինքի մեծ կաթիլները: Մենք կունենանք նոր բանակ, նոր նավատորմ եւ նոր...»:

«Եվ նոր վերարկու՝ մեկ աստառով, այս քրտինք արտադրող շորի փոխարեն,- ասաց Լոտոսի Բուրմունքը ժպիտով: Նույն ունեմ, որ նա ըեզ համար մի աշխատանք կգտնի»:

«Ա՛հ, դա ինձ է հիշեցնում: Ես մի բանաստեղծություն հորինեցի պարոն Վենի տանը,- քանի որ նա մեծ բանաստեղծ է, դու գիտես,- եւ դա այնքան էլ վատ չի հնչում»:

«Հապա ասա, լսեմ այն»,- Լոտոսի Բուրմունքը միշտ շատ էր ուզում լսել

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

Նրա բանաստեղծությունները:

«Թեման, որ նա ինձ տվեց, «Աղքատություն» էր, քանի որ նա միշտ դժվարին վիճակի մեջ է: Հայտնի է, որ մինչև բանաստեղծը դժվարին կյանք չի ունենում, նրա բանաստեղծությունները երբեք չեն կարող կատարյալ լինել: Իմ ոտանավորն այսպիսին է.

«Վառելափայտը, բրինձն ու ձեթը, աղ-համեմունքը, քացախն ու թեյը,
Ամենուր դրանք շատ են, առատ են, դրանցից միայն մեր տանը
չունենք:

Թե ինչ-որ մի բան այնպես չէ կյանքում, անհանգստանալ
պետք չէ երբեք,
Լուսնի լույսի տակ փորենք միասին եւ սալորագույն ծաղիկներ
տնկենք»»:

«Աստվածային է,- Լոտոսի Բուրմունքը հմայված էր:- Փորենք միասին բակում այս գիշեր եւ ծաղիկներ տնկենք»:

«Իսկապե՞ս քեզ դուր եկավ: Պարոն Վենն այնքան գոհ էր դրանից, որ ասաց, թե պատրաստվում է ինձ ուղարկել բարեփոխիչ գեներալ Յուան Շի-Կայի մոտ, զինված ուժերի տեսուչի, որ մասնավոր առանձնատուն ունի Պեկինում եւ քարտուղար է փնտրում: Դա շատ դժվար աշխատանք է, որովհետեւ նա այնպիսի մի մարդու է ուզում, որը եւ՛ դասական գրականության գիտակ լինի, եւ՛ լավ կրթված՝ նոր գիտելիքներին տիրապետելու առումով: Նրան առաջարկված մյուս մարդիկ կամ լավ գրագետներ են եղել, ովքեր անգլերեն չեն իմացել, կամ արտասահմանում կրթված անծինք, ովքեր հազիվ թե կարողանան չինարեն մեկ տառ գրել: Նա կարծում է, որ ես հենց այն մարդն եմ, ով պետք է: Եվ ուզում է, որ ես վաղը գնամ ու տեսնեմ գեներալ Յուանին: Ահա նրա նամակը, որով ինձ ներկայացնում է գեներալին... ահա... հը... Էս ի՞նչ եղավ»:

Տա Տունգը նայեց գրպանում, բայց չկարողացավ գտնել այն: Ճակատն ավելի քրտնեց, եւ նա շոշափելով թեի միջից ճմռված թղթի մի կտոր հանեց, որ քրտինքը սրբի:

«Թաշկինակդ նորից կորցրե՞լ ես: Ինչո՞վ ես սրբում քրտինքը»:

«Հը՞: Վա՛յ, նամակն է»:

«Աստված իմ: Վնասվե՞լ է»:

«Չէ, չեմ կարծում: Ծրարի վրայի բառերն են մի քիչ կեղտոտել»:

«Եվ ճմռել-կտրելով գնդակ ես դարձրել»:

«Կարող ես արդուկել ու նորից հարթեցնել»:

«Եթե թողած լինեիր, որ բաճկոնդ նորոգեի, այդքան շատ չէիր քրտնի,

նամակն էլ այս օրն ընկած չէր լինի»:

«Լա՛վ, դու հաղթեցիր: Ընթրիքից հետո կհանեմ եւ շուտ կպառկեմ քնելու: Այս գիշեր բակում չենք կարող փորել»:

Իհարկէ, այդ գիշեր չէին կարող բակում փորել: Երբ Լուտոսի Բուրմուսը տիկին Հոուից մկրատ խնդրեց եւ կտրեց մետաքսե բաճկոնի կտրերը, բացականչեց. «Վա՛յ, Տա Տունգ, մենք հարո՛ւստ ենք: Մեծ հորաքոյրը երեք հարյուր թաւէլ արծաթը թղթադրամի է վերածել եւ բաճկոնի մեջ պահել քեզ համար»:

«Ի՛նչ», - Տա Տունգը նետվեց դեպի դրսի սենյակ:

«Տե՛ս: Շատ են ճմռթված, բայց դեռ պիտանի են»:

«Մենք հարո՛ւստ ենք: Իմ լա՛վ ու բարի մեծ հորաքոյր», - Տա Տունգն ուրախությունից պար էր գալիս:

«Ամփջապես տե՛ղդ մտիր: Չես հասկանո՞ւմ, որ կարգին հազնված չես»:

Նրանք երանելի գիշեր անցկացրին, իսկ հաջորդ առավոտյան Տա Տունգը գնաց Պեկին՝ գեներալ Յուանի մասնավոր առանձնատուն: Նամակը, թեւ խիստ ճմռթված ու կեղտոտված, թալիսմանի դեր ունեցավ, եւ լաքապատ ներսի դարպասները լայն բացվեցին, որպեսզի նրան ջերմ ընդունելություն ցուցաբերվեր: Մաշված, անխնամ ու հին համազգեստով տանտերը մոտեցավ դարպասներին, որպեսզի հյուրին ուղեկցի մի քանի բակի եւ միջնասենյակի միջով դեպի մասնավոր ընդունարան: Տա Տունգը հիշեց, որ հորեղբայրը մի անգամ ասել է իրեն՝ եթե մարդը կարճ մարմին ունի երկար ոտքերով, նա պարտավոր է լինել հանձնարարություններ կատարող տղա, մինչդեռ եթե ունի երկար մարմին, բայց կարճ ոտքեր, հաստատ յամենում ամենակարեւոր տեղը կզբաղեցնի: Յուանը համապատասխանում էր երկրորդ նկարագրությանը: Երբ նա քայլում էր իր հյուրի հետ կողք-կողքի, նա շատ ավելի կարճ էր, քան Տա Տունգը: Բայց երբ Լստեցին, Տա Տունգին թվաց, թե իր հյուրընկալ տանտերը կես գլուխ ավելի բարձրահասակ է իրենից: Յուանի գրեթե քառակուսի գլուխը, շատ լայն ուսերը եւ բարձր ձայնը նրա վրա խոր տպավորություն գործեցին: Տա Տունգի մտապատկերում նա ավելի կամ պակաս չափով Նապոլեոնի կերպարն էր: Նա Տա Տունգին ասաց, որ ինքն ընդամենը սովորական զինվոր է, եւ որ մեծ պատիվ է իր համար, որ իրեն այցելել է այդպիսի փայլուն մի զինակալ, որին այդքան բարեհաճորեն առաջարկել է իր հարգարժան բարեկամ պարոն Վենը: Տա Տունգը խիստ շփոթվեց ու ամաչեց այդ հաճոյախոսություններից, հատկապես այդպիսի մեծ մարդու կողմից արված, եւ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

իմանալով նրա համակրանքը բարեփոխման հանդեպ՝ սկսեց խոսել Լի Թի-Մո-Ռայի հետ իր գրույցի մասին: Նա ասաց, որ ինքը հիասթափված է ոչ միայն այն պատճառով, որ անգլիացին առաջարկում էր, թե օտարերկրացիները պետք է նշանակվեն կառավարության գլուխ, որպեսզի երկիրը դեկավարեն, այլ նաեւ այն պատճառով, որ կրոնը ներգրավում էր քաղաքականության մեջ:

«Մենք բարեփոխում ենք ուզում, որովհետեւ ուզում ենք զարգանալ ու առաջ գնալ ժամանակի հետ, իսկ Լի Թի-Մո-Ռայը վճռել է մեզ ետ տանել միջնադար՝ կրոնն ու քաղաքականությունը դարձնելով անբաժան: Ես ոչ մի առարկություն չունեմ քրիստոնեության դեմ մասնավոր անձանց պարագայում: Նույնիսկ հավատում եմ, որ որոշ մարդկանց դա բարիք կբերի: Բայց Չինաստանում կրոնական բարեփոխում մտցնելը նշանակում է անհանգստություն ու խառնաշփոթ առաջացնել: Ինչո՞ւ չեն կարողանում դաս քաղել կրոնական տարբերությունների ու հալածանքների պատճառով տեղի ունեցած կոտորածներից»:

«Լի Թի-Մո-Ռայի նման մարդիկ օգտակար են, երբ գզուշորեն ու խնամքով զսպվում են, թեեւ բավականին վտանգավոր են, եթե թողնում ենք իրենց ուզածով շարժվել: Նրանց հետ վարվիր որպես քո գործիքների, ոչ թե որպես տերերի կամ նույնիսկ գործընկերների: Մեր մեծագույն անհրաժեշտությունն այս պահին լավ զինված ժամանակակից բանակն է: Դրանով մենք կարող ենք անել ինչ որ ուզում ենք: Պարոն Վենն ասում է, որ Դուք դասական գրականության, ինչպես նաեւ ժամանակակից գրականության մասնագետ եք: Ես ամենից շատ կուզեի լսել Ձեր մշտական ցուցումները: Գուցե այնքան բարի լինեիք, որ հարկ համարեիք ընդունել իմ բոլոր գրագրություններում ինձ ուղղություն ցույց տալու փոքրիկ պաշտոնը»:

Տա Տունգը հիացած էր բարեհաճ վերաբերմունքից, որով այդ մեծ զինվորականը նշեց, որ ուզում է իրեն աշխատանքի վարձել որպես անձնական քարտուղարի: Նրան թվում էր, թե դա չափազանց լավ բան է, որպեսզի ճշմարիտ լինի, եւ բառեր չէր կարողանում գտնել պատասխանելու համար: Երեւում էր՝ Յուանը գիտե, թե ինչ է կատարվում երիտասարդի գիտակցության մեջ, եւ ոտքի կանգնեց հաստատելու համար իր առաջարկն ու ցտեսություն ասելու:

«Եթե ուզում եք մեկ կամ երկու օր մտածել նախքան այդ փոքրիկ պաշտոնն ընդունելու շնորհն ինձ անելը, կուզեի Ձեզ ասել, որ անհամբերությամբ կսպասեմ Ձեր շուտափույթ դրական պատասխանին: Միաժամանակ, կգրեմ իմ հարգարժան բարեկամ պարոն Վենին, որպեսզի շնորհա-

կալություն հայտնեմ Ձեզ հետ ծանոթացնելու համար, եւ նա անկասկած Ձեզ կհամոզի, որ բարեհաճեք օգնել ինձ»:

Նա գլուխ տվեց Տա Տունգին եւ սենյակից դուրս ուղեկցեց:

Ուղքով երկար ճանապարհ էր Յուանի առանձնատանից, եւ երբ Տա Տունգը հասավ Նանչանի համքարության հանրակացարան, զգաց, որ շատ քաղցած է: Նա անհամբեր սպասում էր, որ առատ կերակուր կվայելի, եւ կարծում էր, թե Լոտոսի Բուրմունքի խոհարարական արվեստն այժմ գրեթե կատարելագործված կլինի: Բայց վերին աստիճանի հիասթափվեց, երբ տեսավ, որ կինն այդտեղ չէր, կերակրի կաթսաները դատարկ էին, իսկ վառարանն էլ սառն էր: Չէր կարողանում հավատալ դրան: Երբեք նախկինում կինը դուրս չէր եկել, երբ ինքը տանը չէր, բացի մեկ անգամ, եւ դա էլ այն ժամանակ, երբ գրավ էր դրել իր մորթե մուշտակը: Նա տիկին Հոուին հարցրեց՝ չգիտե՞ արդյոք, թե կինն ուր է գնացել, եւ տիկին Հոուն պատասխանեց, որ թեթեւակի լսել է՝ ինչպես էր երիտասարդ տիրուհին խնդրում պարոն Տինգին՝ իրեն վաղ առավոտյան տանել Տինգ Ան Հուկա:

Երբ մարդ սպասում է մեկին, ժամանակը դանդաղ է անցնում: Տա Տունգի համար թույն տարվա չափ երկար էր թվում, իսկ քաղցն աճում էր ամեն թույն: Թվաց՝ տարիներ անցան, մինչեւ լսեց, որ Լոտոսի Բուրմունքը վերադառնում է Տինգ Հո-Սանի ընկերակցությամբ: Կյանքում առաջին անգամ Տա Տունգն իրեն խեղճ ու լքված զգաց, երբ կինը ներսի սենյակ մտավ բարձր տրամադրությամբ: Նա հայացքը կնոջից մի կողմ շրջեց եւ սառն ասաց. «Հասկանո՞ւմ ես, թե ժամը քանիսն է հիմա: Եթե դու նախաճաշել ես, ես դեռ չեմ նախաճաշել»:

«Ես նույնպես չեմ նախաճաշել: Բայց երբ մարդ մի քիչ գնումներ է կատարում, ժամանակն ուղղակի թռչում է...»:

«Մոռանակց մի պահ քո գնումները եւ ուտելիքի մասին հոգանք: Ես կրակը կվառեմ եւ բրինձը կվվամ»:

Տա Տունգն արդեն գնում էր միջանցք՝ վառարանի մոտ, բայց Լոտոսի Բուրմունքը կանգնեցրեց նրան. «Չէ, նախ ուզում եմ քեզ ցույց տալ, թե ինչ եմ գնել: Նայիր այստեղ...»:

«Թող սեղանին առայժմ: Հետո կնայեմ»: Տա Տունգը փորձեց անցնել կնոջ կողքով՝ առանց նրա կողմը հայացք գցելու:

«Բայց ուզում եմ նախ փորձես, տեսնենք՝ համապատասխան է քո աչքերին: Այն մարդն ասաց, որ կարճատեսի համար է ակնոցը, ուրեմն պետք է որ քեզ հարմար լինի: Խոստացավ փոխել, եթե այդքան կարճատես չիլես...»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Տա Տուևը ակնոցը վերցրեց քար լռության մեջ եւ ցրված ու մտամուրթ փորձեց: Ապա կայեց կնոջը եւ մնաց անշարժ:

«Քեզ ի՞նչ է եղել, Տա Տուև: Դու չէի՞ր վաղուց ուզում ակնոց ունենալ, քանի որ տեսողությունդ այդքան վատացել է՝ շատ կարդալու հետեանքով... այնտեղ... գիշերով: Հիմա, երբ մի քիչ փող ունենք, եւ դու հավանաբար պետք է շատ կարդաս ու գրես, սա շատ պետքական ու անփոխարինելի կլինի»:

Երկար դադարից հետո Տա Տուևը խոր հոգոց հանեց եւ ասաց. «Իհարկե, միշտ էլ ցանկացել եմ ակնոց ունենալ: Բայց չէի կարող չնկատել, որ դու երբեք մեկ անգամ իսկ չես մտածել կախ ըն մասին, եւ որ ըն փոքրիկ միտքը միշտ ինձնով է տարված: Ինձ վերաբերող կոչված ամենափոքրիկ բանը երբեք չի վրիպում ըն ուշադրությունից: Իսկ ես քիչ եր մնում զայրանալի քեզ վրա»:

«Չայրանալի՞ր: Կարծում եմ քաղցած ես: Դրանք միշտ միասին են լինում»:

«Այո, սարսափելի քաղցած եմ: Գեներալ Յուանը, այդ անիրավը, ինձ միայն առաջարկեց լինել իր քարտուղարը, բայց մոռացավ առաջարկել, որ մնալի կախաճաշելու»:

Լոտոսի Բուրմուկըն անչափ ուրախացավ այդ կորուստից, եւ նրանք անմիջապես սկսեցին պատրաստել իրենց կախաճաշը:

Երկու օր անց պարոն Վեն Տին-Շին եկավ հանրակացարան՝ փոխադարձ այցելության եւ ասաց, որ Յուանը գրել է իրեն ու խնդրել, որ համոզի Տա Տուևին ընդունել իր համեստ առաջարկը: Շատ համոզելու կարիք չկար, եւ պարոն Վենն առաջարկեց աշխատանքն սկսել հաջորդ ամսվա մեկից: Տա Տուևը համաձայնեց եւ շնորհակալություն հայտնեց նրան իր բարության համար: Թողնելով Տա Տուևին եւ Լոտոսի Բուրմուկին, որին խնդրեց երբեմն այցելել իր կնոջը, նա այնուհետեւ գնաց պարոն Չենգի սենյակ՝ շտապ կարճատե այցելության, որից հետո մեկնեց: Թեւ պարոն Վենն այժմ ապրում էր աղքատության ու անհայտության մեջ, բայց շատ մեծ հեղինակություն ուներ: Եվ Տա Տուևին նրա այցելությունը հանրակացարանի խոսակցության առարկան դարձավ: Շենքում ապրողները շուտով իմացան Տա Տուևի հաջողության մասին՝ գեներալ Յուանի հետ կապված, եւ ուրախ էին նրա համար: Բայց ծեր հորեղբայրը եկավ նրան կոր մի քարոզ կարդալու:

«Արժանավոր իմ զարմիկ,- սկսեց նա իր ավանդական ձեռով,- թող ծեր հորեղբայրդ օգտակար մի խորհուրդ տա քեզ: Մի՛ կարծիր, թե հաջողու-

թյան կհասնես այնպիսի նենգ մարդու հետ, ինչպիսին Յուան Շի-Կայն է: Ինձ վիճակվել է ճանաչել նրան՝ որպես հարբեցողի եւ անառակի: Միայն վերջերս նա մի հարձ է վերցրել, որ տխրահոռչակ կախկին թեթևաբարո աղջիկ է եղել: Ասում են՝ Շանհայից մի երիտասարդ, ցանկանալով պաշտոնն ձեռք բերել, աղջկան ներկայացրել է նրան, եւ խորամանկ ծեր աղվեսն ընդունել է աղջկան, բայց խեղճը մնացել է ձեռնուռայն եւ մինչեւ հիմա մերկ ու սոված է: Ասում են՝ այդ մարդը ութ հազար թաեւ արծաթադրամ է վճարել մարմնավաճառի համար: Չգույշ եղիր, արժանավոր իմ զարմիկ, եւ մի՛ կապվիր այդպիսի սարսափելի մարդկանց հետ, այլ տուն գնա: Դու դեռ երիտասարդ ես եւ չգիտես, թե անբարո ու փչացած հասարակությունն ինչպիսին...»:

«Այո, այդ հասարակությունը լի է տհաճ մեծ հորեղբայրներով, որոնք զոռով անցանկալի խորհուրդներ են տալիս ուրիշներին: Բարի գիշեր եմ մաղթում քեզ...»:- Տա Տունգը դուրս ուղեկցեց զայրացած ծերունուն՝ առանց հետագա վիճաբանության:

Տա Տունգը գրեց գեներալ Յուանին՝ շնորհակալություն հայտնելով իրեն ընդունելու բարեհաճության համար, ինչպես նաեւ պարոն Վենի բերած տեղեկության համար: Նա պաշտոնապես ընդունեց իրեն առաջարկված աշխատանքը, եւ շուտով Յուանը նրան մի շատ քաղաքավարի նամակ ուղարկեց, որով հաստատում էր, թե հաջորդ ամսվա մեկին կսպասի Տա Տունգի պատվարժան ներկայությանը, որը կլուսավորի իր համեստ աշխատասենյակը: Նամակում նշում էր նաեւ, թե հույս ունի, որ սպիտակ ոսկու,- որն անշուշտ նշանակում էր արծաթ,- քսան թաեւ թշվառ ու աղքատիկ գումարը, որպես իր համեստ ներդրում Տա Տունգի վառելափայտի ու ջրի ամսական ծախսերի համար, չի համարվի խիստ անընդունելի:

Հաջորդ ամսվա նախօրեին Տա Տունգի հարեւանը՝ այսպես կոչված «մեծ պաշտոնյան», հրավեր ուղարկեց Տա Տունգին՝ խնդրելով ճաշի մասնակցել Արեւելյան քաղաքի հայտնի ռեստորաններից մեկում: Տա Տունգը հրաժարվեց, եւ այդ մարդն անմիջապես եկավ, որպեսզի անձամբ խնդրի:

«Պարոն Լի, ես Ձեր գրական տաղանդի երկրպագուն եմ եղել երկար ժամանակ եւ շատ եմ ուզում այս երեկո ճաշի հրավիրել Ձեզ: Մի քանի մեծ պաշտոնյաների խնդրել եմ փոքրիկ մի խմբով ընկերակցել, եւ Դուք պետք է պատիվ անեք ինձ: Ես ճանաչում էի գեներալ Յուանի վերադաս պաշտոնյային՝ փոխարքա Ժուն Լուին, երբ նա Կայսերական գվարդիայի փոխնախագահ էր, եւ կարծում եմ պարոն Վենը նույնպես ճանաչում է ինձ, թեեւ ես իրեն չեմ ճանաչում: Տարիներ առաջ, երբ նա փոքրիկ մի գրասենյակ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ուներ Ցզուն Լիի յամենում , իր վերադաս պաշտոնյան շատ հաճախ էր այցելում ինձ: Այնպես որ՝ ներկա հանգամանքները մեզ ավելի են մոտեցրել, քան պատկերացում ենք...»:

«Ներեցեք, որ չեմ ընդունում Ձեր սիրալիր հրավերը, բայց ես այս երեկո ճաշելու եմ մի շատ բարձր պաշտոնյայի հետ»,- պատասխանեց Տա Տունգը ժպտալով:

«Օ՛: Ո՞վ է այդ մեծ պաշտոնյան»:

«Ոչ այլ ոք, քան Նեի-Վու-Ֆու Ցզուն-Կուանը (Կայսերական տնտեսության մեծ պահապանը)»:

Մեծ պաշտոնյան ցնցված էր, բայց շարունակեց. «Օ՛, պետք է որ մեծ խնջույք լինի՝ շատ հյուրերով: Հավանաբար Ցզուն-Կուանը Ձեր բացակայությունը չի նկատի»:

«Ոչ, ոչ: Ես միակ հյուրն եմ եւ խոստացել եմ, որ շուտ կներկայանամ»:

Մեծ պաշտոնյան թերահավատորեն նայեց, բայց ստիպված էր ետ կանգնել իր հրավերից եւ հեռանալ:

Կայսերական տնտեսության մեծ պահապանի կողմից կազմակերպված խնջույքին մեկ ուտեստ էր նախատեսված: Դա խոզի շոգեխաշած միս էր, եւ այդ իսկ պահից «մեծ պահապանը» կռացած էր վառարանի ու կաթսայի վրա ու խռոնում էր նրա միջի բաղադրիչները: Տա Տունգը հավատարիմ էր իր խոստմանը եւ, հրաժեշտ տալով մեծ պաշտոնյային, շտապեց օգնության ձեռք մեկնել «մեծ պահապանին»: Լոտոսի Բուրմունքը, որ լսել էր անհեթեթ ու ծիծաղելի զրույցի ամեն մի բառը, գոչեց. «Տա Տունգ, դու չպետք է սուտ ասեիր՝ ազատվելու համար մեծ պաշտոնյայից»:

«Բայց ես փորձում եմ արդար լինել: Դու այնքան ես Կայսերական տնտեսության մեծ պահապան, որքան որ նա մեծ պաշտոնյա է»:

Խելացի աղջիկը միշտ կարող է սովորել հիանալի խոհարար լինել՝ անհրաժեշտ գործելակերպով ու փորձով: Չնայած Լոտոսի Բուրմունքը երբեք խոհանոցին մոտ իսկ չէր եկել տանը՝ Նանչանում եղած ժամանակ, հիմա արդեն կարող էր մի քանի ուտեստ պատրաստել, որոնք , թեեւ գիտակների աչքերի համար խիստ անընդունելի, այդուհանդերձ բավականին ինքնատիպ էին: Դրանք իրենց ուրույն ոճն ունեին եւ համուռուրդ, իսկ Տա Տունգը Լոտոսի Բուրմունքի պատրաստածի հմուտ գիտակն էր: Երբ նա զբաղված էր լինում միջանցքում, որ խոհանոցն էր, Տա Տունգը նրան ընկերակցում էր՝ փորձելով օգնել՝ ափսեները դրսի սենյակ բերելով: Հարկ է նշել, որ Տա Տունգը միայն փորձում էր օգնել աղջկան, որովհետեւ շատ դեպքերում ափսեն զգուշորեն երկու ձեռքով բռնած՝ գնում էր դրսի սենյակ

Եւ Լորից մտնում Լերսի սենյակ, երբ հիշում էր, որ ինչ-որ բան ունի ասելու Լրան, ապա Լորից վերադառնում էր միջանցք՝ ափսեւն դեռ ձեռքերում պահած: Լոտոսի Բուրմուկը երբեք չէր մոռանում գնահատել Լրա հաճելի, արժանապատիվ եւ մտածված քայլը, բայց երբ տեսնում էր, որ Լա փսեւները Լերս ու դուրս, դուրս ու Լերս է տանում-բերում անընդմեջ, ընդհատում էր Լրան, ինչ էլ որ ասելիս լիներ, եւ բացակասչում. «Դու չես օգնում ինձ, այլ պարզապէս փորձեր ես կատարում՝ պատրաստվելով հանդիսավոր զոհաբերության հաջորդ արարողությանը, որ տեղի է ունենալու Կոնֆուցիուսի տաճարում»:

Տա Տունգը սիրում էր խոզի շոգեխաշած միսը, բայց քանի որ փող չուներին, երկար ժամանակ չէր ճաշակել: Այս կարեւոր առիթով Լոտոսի Բուրմուկը որոշել էր ուժերը փորձել եւ խոզի մսի մի շատ լավ կտոր էր գնել: Տիկին Հոուն ասել էր Լրան, թե ինչ համաչափությամբ գինի, սոյայի սոուս, աղ ու ջուր խառնել մսին, ու երբ բոլոր բաղադրիչները լցվեն կաթսայի մեջ, կափարիչը պետք է դրվեր եւ հասցվեր եռման աստիճանի, որից հետո պետք է եփ գար, մինչեւ որ իրոք շատ հաճելի բուրմուկը արձակել: Ասվել էր, որ պետք է ուշադիր հետեւել ցուցումներին: Քանի որ եփելը երկար էր տեւելու, պետք էր խուսափել կաթսայի կափարիչը անընդհատ բացելուց՝ տեսնելու համար, թե ինչպէս է եփվում: Երբ գոլորշին սկսեց ելնել եռացող կաթսայից, աղջկա ձեռքերը քոր էին գալիս, որ բարձրացնի կափարիչն ու աչք գցի, թե ինչպէս է եփվում: Բայց հիշեց տիկին Հոուի հրահանգները եւ զգաց, որ չպետք է փչացնի խոզի շոգեխաշած մսի իրենց առաջին ուտեստը:

«Փոխանակ այստեղ սպասելու, գնանք սենյակ: Տիկին Հոուն ասաց՝ ինչքան երկար եփ գա, այնքան ավելի համեղ կլինի: Գնանք սեղանը պատրաստենք: Վերջերս իմ խոհարարական կարողությունները բարելավվել են: Ես կարծես շատ արագ հմուտ խոհարար եմ դարձել: Երբ տուն գնալու մեր ժամանակը գա, ես կատարյալ մի խնջույք կսարքեմ մայրիկիս համար, եւ Լա խիստ կգարմանա»:

«Ես Լույնպէս հոյս ունեմ, որ գեներալ Յուանը շուտով բարեփոխման շարժումը հաջողության կհասցնի, եւ երբ հիմնավոր կհաստատվենք Պեկինում, պետք է հորեղբորս մայրաքաղաք հրավիրենք՝ որոշ ժամանակ մեզ մոտ մնալու: Հարկ չկա, որ Լա այլեւ աշխատի Կանչոունում, եւ ես Լրան պետք է տանեմ տեսնելու պարոն Վենի գրադարանը: Այն շատ մեծ չէ, բայց բոլոր գրքերը հոյակապ հրատարակություններ են եւ հոյակապ կազմեր ունեն: Իսկ քանակի համար Լա պետք է այցելի գեներալ Յուանի

ԱՅՈՒՆ ՇԻՒ

տուն: Նրա նստավայրում ես անցել եմ գրապահարաններով լի հինգ մեծ սենյակներով: Թեև հորեղբորս հավաքածուն լավագույններից մեկն է Յգյանսի նահանգում, բայց չի կարող համեմատվել ո՛չ պարոն Վենի, ո՛չ էլ պարոն Յուանի գրադարանի հետ»:

Լոտոսի Բուրմունքը սեղանին դրել էր երկու զույգ կերակրվելու ծողիկներ, երկու գդալ եւ բրնձի երկու թաս եւ, քանի որ ամբողջ կեսօրին զբաղված էր եղել, որոշեց նստել ու մի քիչ հանգստանալ:

«Ես խիստ հիացած եմ հորեղբորդ գիտելիքներով ու բնավորությամբ: Բայց չեմ հասկանում, թե ինչու պիտի ավելի շատ նախընտրեր հազնել հին ու մաշված, քան նոր ու վայելուչ հագուստ, որպեսզի կարողանար հավաքել լավ հրատարկությունների եւ լավ կազմերով գրքեր: Հրատարակությունների ու կազմերի մեջ ոչ մի իմաստ չկա: Մենք կարող ենք նույնքան օգուտ քաղել էժան տպագրված եւ էժան կազմով գրքից, որքան որ ավելի լավ հրատարակության գրքից»:

«Դա պարզապես անձնական ճաշակի հարց է: Օրինակի համար՝ ցանկացած կին ճիշտ նույնքան օգտակար է որպես կողակից, որքան մեկ ուրիշը: Ինչո՞ւ պետք է ես շատ տարիներ առաջ վճռեի, որ եթե չլիներ այնպիսի խելացի, բարի ու սիրուն կին, ինչպիսին դու ես, կնախընտրեի ամուրի մնալ իմ ամբողջ կյանքում: Դա անհնարին մի հույս էր, բայց արդյունքն այն է, որ պարզվում է՝ ոչ միայն իմ կինը քեզ նման մեկն է, այլ փաստորեն հենց դու ինքդ ես»:

«Ի՛նչ: Ինձ գրքերի հե՞տ ես համեմատում,- Լոտոսի Բուրմունքի ձայնը վիրավորված հնչեց:- Ուրեմն դու ինձ շարժական գո՞ւյք ես համարում, մեկը շարժական այն ունեցվածքներից, որոնք կարող ես մի կողմ նետել կամ փոխանակել ուրիշների հետ ուզածդ ժամանակ: Երբեք մտքովս իսկ չէր անցնի, թե դու ինձ կնայես որպես շարժական մի առարկայի»:

«Օ՛, ոչ,- Տա Տունգը տազնապած էր:- Դա՛ նկատի չունեի: Ես մտածում էի, որ գրքերը, լինելով խելքի եւ գիտելիքի ամենաբարձր ձեւն աշխարհում, իրոք ավելի կարեւոր դիրք են գրավում աշխարհում, քան ցանկացած մարդ: Ը... ը... եթե քեզ դուր չի գալիս, որ քեզ համեմատում եմ գրքերի հետ, կարող ես ինձ համեմատել գրքի որդերի հետ: Մի՞թե դո՛ւ չես հաճախ ասել, թե ես գրքի որդ եմ»:

«Ի՛նչ: Դու գրքի ո՞րդ ես,- Լոտոսի Բուրմունքը հազիվ կարողացավ քրքիջը զսպել:- Նկատի ունես, որ ուզում ես ուտե՞լ ինձ»:

«Չէ, չէ՛... ը... ը... նկատի չունեմ...»:

«Հե՛յ, վեճը դադարեցրե՛ք,-, դռան մոտ դրսից ձայն տվեց Տիևզ Հո-Սա-

նը: - Ծովսը դո՛ւրս է հորդում: Ինչ-որ բան է այրվում: Ահավոր հո՛տ է գալիս»:

«Մեր շոգեխաշած խոզի միսը փչացա՛վ», - Լոտոսի Բուրմունքը վատ նախազգացումով կայեց Տա Տունգին:

Նրանք գնացին խոհանոց եւ տեսան, որ խոզի միսը զզվելի մի մոխրակույտի է վերածվել: Աղջիկն ասաց. «Երբ մյուս անգամ պատրաստեմ, չհամարձակվե՛ս հետս խոսել: Ո՞վ ասաց, որ կարդացող ու գրող մարդը չի կարող խելացևոր լինել»:

«Հոգ չէ, մենք էլ ձվով պատրաստված բրինձ կուտենք: Ես դա շատ եմ սիրում», - ասաց Տա Տունգը հեզ ու անտրտունջ:

«Միասին գնանք Շին Մենի մոտ գտնվող փոքրիկ ռեստորան, - առաջարկեց Տինգ Հո-Սանը: - Հենց նոր լավ նորություն եմ լսել: Պեկինի համալսարանն է հիմնադրվում: Շատ շուտով այնտեղ եմ գնալու»:

Թեեւ Տա Տունգը նախանձում էր իր ընկերոջը բարձրագույն կրթության համար, որն ինքը ստիպված էր թողնել, բայց իրեն որոշ չափով մխթարված էր զգում, երբ Յուան Շի-Կայը՝ զինված ուժերի տեսուչը, պաշտոնական զգեստը հագած՝ հանդիսավոր ընդունեց իրեն: Մինչ նա տպավորիչ էր մաշված, անխնամ ու հին համազգեստով, նույնքան արժանապատիվ թվաց իր երկար զգեստով ու բաճկոնով: Նա սպասում էր Տա Տունգին մուտքի մոտ եւ, ուղեկցելով նրան ներսի միջնասենյակ, խոր գլուխ տվեց եւ առաջնորդեց դեպի գեղեցիկ կահավորված աշխատասենյակ: Էբենոսափայտե գրասեղանին, որ արվեստով ու վարպետորեն փորագրված էր գանազան նախշերով, դրված էին գրասենյակային ամենաընտիր պարագաներ: Սենյակի մի կողմում դրված էին նույն փայտից պատրաստված եւ նույնատիպ նախշերով փորագրված երկու փոքրիկ գրապահարաններ, իսկ խնամքով ընտրված պահարանը, արվեստի նուրբ ու սքանչելի բազմաթիվ առարկաներով, մյուս կողմում էր: Աթոռ առաջարկելով գրասեղանի մոտ՝ Յուանը երկրորդ անգամ գլուխ տվեց Տա Տունգին: Ապա լռությունը խզվեց, երբ Յուանը, ժամանակավորապես հրաժեշտ տալով Տա Տունգին եւ հույս հայտնելով, որ ամեն ինչ նրա ճաշակով կլինի, շտապեց դուրս գալ՝ օրվա իր պաշտոնական այցերը կատարելու:

Միայնակ մնալով՝ Տա Տունգն ուշադրությամբ գնեց աշխատասենյակը: Այո, ինչ կասկածներ որ ուներ, ճիշտ էին: Սենյակը հատուկ նախատեսված էր իր համար, եւ ոչնչով չէր երեւում, թե այն նաեւ տանտիրոջ համար է: Չկար այդտեղ ոչինչ, որ հիշեցներ, թե սենյակն անձնապես Յուանին է պատկանում, իսկ պահարանների գրքերը կամ ընդհանուր գրականու-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

թյան գրքեր էին, կա՛մ դասականներից քաղվածքներ: Շուտով մի սպասավոր ներս մտավ ևամակների փոքրիկ մի կոյտով՝ բոլորն էլ բացված ու խնամքով դասավորված, իսկ վերետում դրված էր թղթի փոքրիկ մի կտոր, որի վրա, ըստ երեսույթին Յուանի ձեռքով, գրված էր. «Խնդրում եմ որոշել եւ պատասխանել», եւ ստորագրված էր «Կայ» բառով: Տա Տուևզն աչքի անցկացրեց դրանք: Գրեթե բոլորը սովորական ողջույնի ևամակներ էին, իսկ մի քանիսին կցված էին մեկ կամ երկու բանաստեղծություն՝ խնդրանքով, որպես կատն, որ Յուանը խիստ ու կտրուկ շտկման ենթարկի դրանք, եւ այդ խնդրանքը ձեւակերպված էր այսպես. «Խնդրում եմք՝ Ձեր կացնով կտրելով ճիշտ տեսք ու ձեւ տալ»: Տա Տուևզը գիտեր, որ պատշաճ կլինի այդ ևամակներին պատասխանել դասական գրական ոճով: Ինչ վերաբերում է բանաստեղծություններին, ևս պետք է դրանք հանգավորեր եւ տեսքի բերեր: Կար նաեւ երկու անգլերեն ևամակ, եւ երկուսն էլ գրված էին անգլիացի միսիոներների կողմից, որոնք ընդունելություն էին խնդրում: Առավոտից մինչեւ կեսօր ընկած ժամանակի միայն կեսն անցավ, եւ ևս արդեն պատրաստել էր պատասխանները, իսկ երբ ավարտեց, անելու բան չուներ: Սպասավորը քիչ ավելի ուշ եկավ թեյ ու ևսխաճաշիկ մատուցելու եւ երբ տեսավ, որ բոլոր ևամակների պատասխանները պատրաստ են, Տա Տուևզին ասաց, որ Պարոնն ասել է, թե այլեւս անելու բան չկա, եւ ևս կարող է օրը տնօրինել իր հայեցողությամբ: Սակայն Տա Տուևզը մնաց՝ հուսալով, թե Յուանը շուտով կվերադառնա, ու թերեւս էլի աշխատանք կլինի իր համար: Բայց ճաշի ժամին խոսք եղավ, որ Պարոնն իր ընկերների հետ ճաշում է դրսում, եւ միեւնույն ժամանակ ճոխ մի ճաշկերույթ մատուցվեց միայն Տա Տուևզի համար:

Ճաշից հետո Տա Տուևզն աչքի անցկացրեց աշխատասենյակի գրքերը, եւ նկատեց որ ամբողջ օրն անցավ, մինչ ինքը խորասուզված էր գրականության մեջ: Սպասավորը կրկին նշեց, երբ թարմ թեյ ու կազդուրիչ խմիչք էր բերում, որ այդ օրն այլեւս անելու բան չկա, եւ Տա Տուևզն սկսեց գիտակցել, որ եթե ինքը տուն գնա, ապա սպասավորը նույնպես այդ օրն ազատ կլինի: Նրան ասելով, որ պատասխանների ևսխորինակները ներկայացնի Պարոնին, Տա Տուևզը գնաց տուն՝ այն տպավորությամբ, թե ինքը ձեռք է բերել ամենահեշտ եւ լավագույն վարձատրվող աշխատանքն աշխարհում: Երբ Լոտոսի Բուրմունքին պատմեց այդ մասին, աղջիկն ասաց, որ ինքը կուզենար այդպիսի մի աշխատանք ունենալ եւ դրա համար վճարել՝ աշխատավարձ ստանալու փոխարեն:

«Դե, քանի որ դու այդքան առատաձեռն ես փողի առումով, Լոտոսի

Բուրմունք, կարո՞ղ եմ ես երկու թատել ունենալ, քանի դեռ խանութները չեն փակվել այս գիշեր»,- ասաց Տա Տունգը ծայրի բավականին անհանգիստ տոնով:

«Իհարկե: Բայց դու չպետք է այն վատնես ինձ համար նախատեսված ինչ-որ բանի վրա»:

«Մի՛ անհանգստանա»:

Փողն ստանալուն պես նա անմիջապես անհետացավ:

«Ի՞նչ է սա»,- հարցրեց աղջիկը, երբ Տա Տունգը վազելով ետ եկավ: Նա հետում էր եւ քրտնել էր, իսկ ձեռքին խնամքով փաթաթած փոքրիկ մի կապոց էր:

«Բո Ցզոյ-իի բանաստեղծությունների հիանալի մի հրատարակություն, որ շատ էի ուզում գնել հորեղբայր Կանի համար»:

ՉԼԻԿ 11

*«Վագրի նկարն անելիս՝ կարող ենք լույս պատկերել
նրա մորթին, ո՛չ երբեք ոսկորները իր ամուր,
Մարդու հետ գործ բռնելիս՝ կարող ենք դեմքն իր տեսել,
բայց երբեք իր մտքի մեջ մենք չենք լինի խորամուխ»:*

Մարդ արարածի բնույթն է միշտ եղել՝ ձգտել այն տաղանդ ու շնորհքին եւ գիտելիքներին, որոնց պակասն առավել շատ է զգում: Գրականությամբ զբաղվող տղամարդը սիրում է խոսել գիևվորական ռազմավարության մասին եւ ավելի լավ է զգում, երբ որեւէ մեկը քծնանքով գովաբանում է իրեն՝ ասելով, թե մեծ գորավար կարող էր դառնալ, քան պարզապէս անվանելով գիր ու գրականության մարդ: Սյուն կողմից՝ հայտնի գիևվորական իր գիևվորական տաղանդն ու շնորհքը գովաբանելը համարում է անտեղի ու ավելորդ, բայց, որպէս կանոն, թուլություն ունի պոեզիայի հանդէպ, եւ ոչինչ նրան ավելի հաճելի չէ, որքան իրեն որպէս բանաստեղծի վերաբերվելը:

Յունան Ըի-Կայը հանրահայտ էր՝ որպէս իր ժամանակի ամենակարող գիևվորական: Թեւէ մանջուր չէր, բայց նրան հանձնարարվել էր նոր բանակի նախապատրաստությունը Ըիան-Չանում՝ Պեկինից եւ Տյանցզիից ոչ հեռու: Չին տղամարդու համար, որ դեռ քառասուն տարեկան չկար, այդպիսի կարեւոր գիևվորական պաշտոն վարելը բավական էր՝ ցույց տալու, որ մանջուրական արքունիքը նրա հանդէպ շատ բարձր հարգանք ունի: Հետեւաբար ներելի էր, որ նա անկասկած պետք է իրեն համարեր գիևվորական հանճար եւ համարեր, թե միայն գրական աշխարհում կարող էր հետագա նվաճումներ ունենալ: Եթե անգրագետ լիներ, ամեն բան հեշտ կլիներ նրա համար: Սովորական գրագիրն այդ դէպքում կլիներ այն, ինչ ինքն էր պահանջում: Նա չէր կարողանա այդպիսի քարտուղարի եւ փայլուն գիտակի գրվածքների միջեւ տարբերությունը գանազանել: Բայց պատանեկության տարիներին նա դասական կրթություն էր ստացել, եւ հետեւաբար՝ նրա համար շատ դժվար էր հարմար անձնական քարտուղար գտնել: Նրա կարծիքով՝ իր նախկին քարտուղարներից ոչ մեկի գիրը, որոնք պետք է իրենց դժգույն հորինվածքներն ստորագրեին իր անունով, ամենեւին իր ուզածը չէին: Հիմա, երբ ամենուր բարեփոխության մասին խոսակցություն էր տարածվում, եւ ինքն էլ շատ շուտ էր ցուցաբերել իր

պատրաստակամ համակրանքը նոր շարժման երիտասարդ առաջնորդների հանդեպ, նրան այնպիսի մեկն էր պետք որպես քարտուղար, որը կունենար նոր գիտելիքներ, որպեսզի կարողանար օգնել իրեն այնպիսի հարցերում, որ ինքը երբեք նախկինում չէր լսել, բայց շատ էր ուզում իմանալ: Վենի կողմից Տա Տունգի առաջադրումը բարեբախտություն էր երկու կողմերի համար էլ: Մինչ Տա Տունգը շատ էր ուզում պատշաճ աշխատանք գտնել, որ գերադասելի էր՝ ինչ-որ ձեռով կապված լինել բարեփոխության հետ, Յուանը, հանձին Տա Տունգի, ձեռք էր բերում հենց այն մարդուն, որին փնտրել էր, բայց չէր կարողացել գտնել: Տա Տունգի դասական գրական ոճն ուներ իր ուրույն թարմությունը, և Յուանին այն ավելի էր դուր գալիս, քան ուրիշ մեկի ոճը, որովհետև նա կարծում էր, որ դա այն է, ինչին հասած կլինել ինքը, եթե մի քիչ ավելի ժամանակ ունենար: Տա Տունգի՝ անգլերենի իմացությունն ու այդ լեզվով նամակները կարդալու և դրանց պատասխանելու ունակությունը մեծապես գոհացնում էին նրան: Այժմ նա կարողանում էր գրել բարբարոսներին՝ այդ վայրենիների սեփական լեզվով, ճիշտ այնպես, ինչպես որ Տան կայսերական ժամանակաշրջանի մեծ բանաստեղծ Լի Բուն էր արել,- պատմության և գրականության մեջ աչքի ընկնող մի սխրագործություն, որ ինքը երբեք չէր երագել՝ թե մեկ անգամ էլ կկատարվի իր կողմից, կամ, ավելի ճիշտ, իր անունից հանդես եկող մեկի կողմից: Նա այնքան երջանիկ էր Տա Տունգի գալով, որ դրանից հետո իր ամբողջ նամակներն ու թղթակցությունը, բացառությամբ որոշ կարեւոր և գաղտնի նամակների, լրիվ թողեց իր նոր քարտուղարի տնօրինությանը:

Քանի օրերն անցնում էին, Տա Տունգը տեսնում էր, որ Յուանը հազվադեպ է լինում տանը, և որ քարտուղարական բոլոր գործերն ստիպված է ինքնուրույն կատարել, երբ նա տանը չէ: Շուտով բավականին հմտացավ իր պարտականություններում, որ հիմնականում բանաստեղծություններ ու երկտող ոտանավորներ հորինելն էր, ծննդյան օրերի շնորհավորանքների կամ թաղումների համար ակնարկներ գրելը և այլն: Կային նաև մեծ թվով մարդիկ, որ Յուանին ուղարկում էին մեծ չափի թղթեր կամ ծալովի հովիարներ, որոնց վրա խնդրում էին դնել իր գեղագրության մի քանի նմուշ: Տա Տունգը պետք է աներ այս ամենը, ստորագրեր Յուանի անունից և կնքեր նրա որոշ կնիքներով, որ հատուկ փորագրվել-պատրաստվել էին հենց այսպիսի նպատակների համար: Թույլ տալ, որ մեկի քարտուղարը նամակներ ու այլ գրություններ դրոշմի և ստորագրի տիրոջ փոխարեն, բավականին տարածված երեւոյթ է: Այստեղ կեղծիք կատարելու հան-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ցանքի կամ անպատշաճության մասին խոսք լինել չի կարող: Մինչդեռ դրամական գործարքներն ու գաղտնի փաստաթղթերը միշտ հատուկ կնիքներ են պահանջում, որ տերը միշտ իր մոտ է պահում: Մեծ մարդը, որը սովորաբար զբաղված է, ժամանակ չունի աչքի անցկացնելու իր սոցիալական թղթակցությունները, եւ նրա վստահությունը վայելող գաղտնի քարտուղարն ազատ է այդ ամենի մասին հոգալու:

Յուանի յամենը Տյանցզինում էր, որտեղ պարտավոր էր ներկա գտնվել ի պաշտոնե: Բացի այդ, նրա անվանական մասնավոր նստավայրը նույնպես այնտեղ էր: Թեեւ նրա կինը Հոնանում էր՝ իր ծննդավայրում, բայց գրեթե բոլոր հարճերը, իրենց երեխաներով, Տյանցզինում էին: Յամենում իր հոգնեցուցիչ աշխատանքից, ինչպես նաեւ տան հոգսերից խուսափելու համար, նա սիրում էր ժամանակ առ ժամանակ մի քանի օրվա արձակուրդ պոկել ու գնալ Պեկին, որտեղ ապրում էր նրա ամենավերջին ձեռքբերումը՝ ութերորդ հարճը, որ կոչվում էր «Տիկին համար 9»:

Քանի որ կարեւոր մարդկանց մեծ մասը մայրաքաղաքում էր, Պեկինում լրացուցիչ առանձնատուն ունենալու Յուանի քաղաքականությունը շատ օգտակար էր: Դա նրան հնարավորություն էր տալիս մշտական կապ պահպանել արքունիքի բոլոր ազդեցիկ տարրերի հետ: «Տիկին համար 9»-ը, խիստ գեղեցիկ եւ կրթված մի աղջիկ, մեծ օգնություն էր ամուսնուն: Բացի իր տան շնորհալի տանտիրուհի լինելուց, նա ուղղակի սքանչելիք էր սոցիալական շփումներում եւ անում էր այն ամենն, ինչ Յուանը կարող էր հուսալ, Պեկինում նրա ընկերներին հյուրընկալելու եւ զբաղեցնելու գործում: Երբ Յուանը հեռու Տյանցզինում էր լինում, աղջիկն այնպիսի կատարյալ վիճակում էր պահում մեծ տնտեսությունը, որ ոչ ոք չէր զգում տանտիրոջ բացակայությունը, բացի միայն իրենից: Իմանալով, որ իր ամուսնու համար Տա Տունգը սիրելի հայտնագործություն է՝ նա երիտասարդի հանդեպ շատ ուշադիր էր եւ հոգատար: Թեյը, զովացուցիչ ըմպելիքներն ու մրգերը տարվա համապատասխան եղանակին մատուցվում էին հաճախակի պարբերականությամբ, եւ նա հաճախ անձամբ էր հետեւում մաքրությանն ու կարգուկանոնին Տա Տունգի աշխատասենյակում, որտեղ վերջինս, ցավալի սովորության համաձայն, մշտապես խառնաշփոթ էր ստեղծում: Նա ոչ միայն պետք է տեսներ, որ ամեն ինչ կրկին իր տեղում է, այլ նաեւ պետք է վերջնական հարդարման լրացուցիչ շտկումներ աներ, ինչը հնարավոր է կատարել միայն ճաշակով եւ բարեկիրթ կնոջ ձեռքերով: Խնամքով ընտրված վրձիններն ու գրիչները փոխարինում էին հներին՝ նախքան դրանց լրիվ մաշվելը: Թանաքի կտորները նո-

րացվում էին, երբ հները կհսով չափ էին դեռ օգտագործված լինում կամ էլ կեղտոտված էին երեսում: Տա Տունգի գրասեղանի վրա գրասենյակային զանազան պարագաների տեղերը մի քանի օրը մեկ փոխվում էին, այնպես, որ միշտ թարմության մթնոլորտ տիրեր այդտեղ: Նուրբ ու ճաշակով ծաղկամաններում դրված գեղեցիկ ծաղիկները մշտապես զարդարում էին սենյակը:

Կա՛մ որովհետև շատ կարճատես էր, կա՛մ էլ՝ անուշադիր ու ցրված, Տա Տունգը կարծես երբեք չէր սկստում եւ գնահատում տիկնոջ այս հատուկ ուշադրությունը: Նա հազվադեպ էր հայացք գցում ծաղիկների կողմը եւ նույնիսկ դժգոհում էր, թե գրչակալի ու թանաքի կտորի փոփոխությունը շատ նյարդայնացնող է: Ասում էր, որ գրչակալները միշտ պետք է լինեն աջում, իսկ թանաքի կտորները՝ ձախում, եւ եթե ոչ ճիշտ տեղում էին լինում, նրա համար շատ անհարմար էր լինում: Մի օր, սակայն, շատ զարմացավ՝ տեսնելով, որ իր գրասեղանը փոքր-ինչ մի կողմ էր տարված, եւ ճենապակե մի մեծ ջրաման, ջնարակված գեղեցիկ բաց կապույտով, որ հայտնի էր որպես «անձրեւից հետո երկնագույն», դրված էր գրասեղանի կողքին՝ Էբենոսափայտե պատվանդանի վրա: Վեցերորդ ամիսն էր, եւ լոտոսի երկու նորաբաց վարդագույն ծաղիկ, իրենց լայն ու փարթամ դեղնավուն-կանաչ տերեւներով, վեր էին խոյանում ջրամանի ջրի միջից: Երբ նստեց բազկաթոռին, մաքուր, նուրբ մի բուրմունք թեթեւ հոսանքով դիպավ ռունգերին: Նա նայեց ծաղիկներին, ջրամանին եւ ջրի մեջ: Գույնը, բույրը եւ ծաղկի անունը նրա աչքերի դեմ բերեցին կնոջ՝ Լոտոսի Բուրմունքի պատկերը, որ հայտնվեց ջրի մեջ: Նայելով պատկերին՝ նա մտքով ետ գնաց դեպի այն ժամանակը, երբ քիչ էր մնում զայրանար կնոջ վրա եւ հանկարծ տեսավ , որ իր համար գնել է առաջին ակնոցը: Տա Տունգը խորապես զգացված էր իր հանդեպ նրա նվիրումից ու հոգատարությունից: Ապա հիշեց կնոջ կայտառությունը, երբ հյուրանոցում ապրում էին սոսկալի, ծայրահեղ աղքատության մեջ, ու նաեւ նրա հաղթական ժպիտը, երբ իրեն ասաց, որ ոսկե ապարանջանը կարելի էր գտնել կեղտ ու թրիքով լի փոսում: Մտքերն էլ ավելի ետ սլացան դեպի այն օրերը, երբ Լոտոսի Բուրմունքը դեռ փոքրիկ աղջնակ էր: Նա իր առաջին եւ միակ ընկերն էր: Հիշեց՝ միշտ նա էր, որ ժպտում էր իրեն, եւ առաջինն էլ նա մոտեցավ: Երբ միասին էին լինում, միշտ նա էր ապահովում խոսակցության մեծ մասը: Թեեւ ինքը միշտ ուզում էր նրան մոտ լինել, բայց նաեւ շարունակում էր միշտ պատշաճ հեռավորություն պահպանել նրանից: Երբեք չէր կարողանում մոռանալ ուշ գարնան այն վաղ առավոտը, երբ նստած էին լճակի մոտ ու

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ջրին էին նայում, եւ նրան հաջողվեց առաջին անգամ այդքան մոտենալ իրեն: Երկյուղալի մի փորձ էր դա, բայց այդուհանդերձ սարսուռեցնող էր եւ արբեցուցիչ: Կյանքում առաջին անգամ նուրբ ու քնքուշ, քաղցր մի բույր էր թափանցել իր ռուկերից ներս: Դրանից ինքն անհանգիստ էր ու շփոթված, իսկ սիրտն արագ տրոփում էր: Ամեն անգամ, երբ վերհիշում էր այդ երկնային ջրնաղ դրվագը, մշտապես թվում էր, թե մեկ անգամ էլ կարող է զգալ այդ նուրբ բուրմունքը, եւ սիրտն էլի արագ տրոփում էր: Հիմա, երբ նստած էր ջրամանով ծաղիկների կողքին, որ իր հիշողության մեջ քնքշորեն արթնացրին այդ փոքրիկ տեսարանը, սիրտը բաբախում էր արագ եւ ուժգին, ու քաղցր մի բույր մեղմ զեփյուռի հետ դարձյալ ռուկերից ներս էր թափանցում: Այդ բույրն ավելի ու ավելի անուշահոտ եւ իրական էր դառնում, եւ վերջապես խիստ արբեցնող օձանելիքի անուշահոտությունն սթափեցրեց ու ետ բերեց նրան անուրջների գրկից: Նա աստիճանաբար զգում էր, որ օդի ջերմ մի հոսանք է մոտենում իրեն ետեւի կողմից: Երբ շրջվեց նայելու, տեսավ, որ հրաշագեղ մի տիկին է կանգնած իր բազկաթոռի մոտ:

Համար 9 տիկնոջ՝ տանտիրուհու մասին շատ էր լսել: Բայց առաջին անգամ էր, որ տեսնում էր նրան: Կինը բարձրահասակ էր, սլացիկ ու բարեկամ, վառ եւ հրապուրիչ դիմագծերով, ինչը հատուկ է հյուսիսցուն: Բայց դեմքի գույնն ու նուրբ մաշկը բացահայտում էին նրա հարավային ծագումը: Ասում են՝ հյուսիսցու դիմագծերով հարավցին կամ հարավցու դիմագծերով հյուսիսցին անպայման վեր կբարձրանա, եւ Համար 9 տիկինն, անկասկած, երկնային բարձունքի էր հասել: Նա այնպես էր հագնված, ասես անմահների ոլորտից էր եկել, մի շատ նուրբ ու թափանցիկ, մետաքսե բաց կանաչ զգեստով, որ ի ցույց էր դնում այն ամեն գեղեցիկն, ինչ կար նրա մեջ: Տեսքից դատելով՝ չէիր ասի, թե քսան տարեկանից ավելին է, թեւեւ, հավանաբար, շատ ավելի մեծ տարիք ուներ: Քանի որ բավականին արտառոց մի բան էր տանտիրուհու համար՝ աշխատասենյակում հայտնվել այդ տեսքով, առանց նախապես զգուշացնելու, Տա Տունգն ապշած նրան էր նայում եւ չգիտեր ինչ ասել: Կինը ժպտաց եւ նստեց՝ հույս ունենալով, որ դա Տա Տունգին կազատի շփոթմունքից:

«Խնդրում եմ ներողամիտ եղեք ներխուժմանս համար, պարոն, Լի: Եկել եմ հարցնելու՝ արդյոք Ձեզ դո՞ւր են գալիս ծաղիկները: Քանի որ գիտեմ՝ Դուք նուրբ ճաշակի տեր մարդ եք, որ գնահատում է գեղեցիկ բաները, համարձակվեցի հանձնարարել, որ դրանք այստեղ դրվեն՝ զարդարելու համար Ձեր աշխատասենյակը: Կասկած չկա, որ դրանք կարող են Ձեզ

գեղեցիկ մտքեր ոգեշնչել, եւ Դուք կկարողանաք էլ ավելի գեղեցիկ բանաստեղծություններ ստեղծագործել: Ես շատ անիրագույն եմ և չկրթված մի աղջիկ եմ, որը միայն տարրական գիտելիքներ ունի պոեզիայից: Կուզեի իմանալ՝ արդյո՞ք այնքան բարի կլինեիք, որ որ ինձ սովորեցնեիք բանաստեղծելու արվեստը, որի ջերմ երկրպագուս ու ևսկիայալ եմ: Կընդունե՞ք, արդյոք, այդպիսի անգետ մեկին որպէս Ձեր անարժան ուսանող, պարոն Լի»:

Այդ կնոջ պերճախոսությունն ու համեստությունն էլ ավելի զարմանք պատճառեցին Տա Տունգին, քան նրա գեղեցկությունը: Տա Տունգն ուզում էր կտրուկ մերժել, բայց այսպէս թէ այնպէս մտածեց, որ չափազանց դժվար է դա անել: Ի վերջո ստիպված էր համաձայնել:

«Համեստություն մի՛ արեք, Տիկին համար 9: Հնարավոր է, որ Ձեր բանաստեղծությունները շատ ավելի լավն են, քան իմոնք: Այնուամենայնիվ, եթէ հաճեիք թողնել, որ կարդամ դրանցից մի քանիսը, ինձ մեծ բավակալություն պատճառած կլինեիք»:

«Դուք շատ սիրալիր եք, պարոն Լի: Ես իմ խզբզած ձեռագիրը աղախնիս միջոցով Ձեզ կուղարկեմ, եւ հուսով եմ, որ անողորմաբար կբանեցնեք Ձեր կացիւնը դրա հանդէպ»:

«Կարո՞ղ եմ դրանք տանը կարդալ: Իմ ժամանակն այստեղ պետք է միայն ևսկիրված լինի գեներալ Յուանի աշխատանքին»:

«Իհարկէ, պարոն Լի: Բայց չէի՞ք կարող այստեղ մնալ սովորական աշխատանքային ժամանակից հետո եւ աչքի անցկացնել դրանք: Ես կկարգադրեմ, որ թեթեւ ընթրիք պատրաստեն Ձեզ համար»:

«Ոչ, շնորհակալ եմ: Ես այսօր տեսակցություն ունեմ»:

«Այդ դեպքում վերցրեք Ձեզ հետ, պարոն Լի: Միայն թէ ուրիշ ոչ ոքի ցոյց չտաք, ինչպէս եմ»:

Բանաստեղծությունների սովոր հատորը, գրված կնոջ ձեռքով՝ կոկիկ ու նրբագեղ, գեղեցիկ, ծյունաճերմակ թղթի վրա, կեսօրին փոխանցվեց Տա Տունգին: Կազմը նրբին էր եւ անուշ բոյր ուներ: Տունգարծի ճանապարհին Տա Տունգն սկսեց կարդալ այն, երբ քայլում էր փողոցներով, որոնք իր համար աստիճանաբար հարազատ էին դարձել: Այո, հիանալի է. առաջին բանաստեղծությունը լավագույններից մեկն էր, որ երբեւէ կարդացել էր: Թեւէ գրված էր կնոջ կողմից, բայց դրանում այնպիսի կրակ եւ ուժ կար, որին քիչ տղամարդիկ կարող էին տիրապետել: Նա շտապեց ավելին կարդալ եւ գլխովին խորասուզվեց դրա մեջ: Քանի շարունակում էր կարդալ, զգում էր, որ բանաստեղծուհին շատ բազմակողմանի է, բա-

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

Լաստեղծություններ է գրում տարբեր ոճերով և տարբեր թեմաներով, մեկում ռոմանտիկ է, մյուսում հերոսական, մի երրորդում՝ փիլիսոփայական: Իսկապես, Լախկինում Լա դեռ չէր հանդիպել մի բանաստեղծի, որ այդքան տարաբնույթ լիներ իր գրվածքներում: Այդուհանդերձ, բավականին հաճախ, Լա գտնում էր Լաեւ վատ գրված մի քանի բանաստեղծություն և ամոթալի էր համարում, որ դրանք մնային այդպիսի լավ ժողովածուի մեջ: Եթե ինքը լիներ հեղինակը, մեկ րոպե իսկ չէր վարանի ոչնչացնել այդպիսի վատ ոտանավորները: Ի վերջո, հասկացավ, որ մարդ չի կարող երբեք իր սեփական գործերի լավ քննադատ լինել: Որքան շատ էր կարդում, այնքան ավելի վատ ոտանավորներ էր գտնում հատորում: Վերջին երկու բանաստեղծություններն ամենից վատն էին: Նրան թվում էր, թե բանաստեղծուհին Լաման է բրնձի դաշտերի միջեւ ընկած ևեղ արահետով մութ գիշերով քայլող մի մարդու: Նա երբեք չէր կարող իր քայլերին վստահ լինել և ոտքն անպայման ժամանակ առ ժամանակ ստիպված էր դնել ցեխաջրի մեջ: Տա Տունգն ինքն էլ ճիշտ Լույն վիճակում էր: Կարճատես աչքերը գրքի վրա կենտրոնացրած՝ Լա երբևիտ քայլերով անցնում էր ցեխոտ խուլ փողոցներով, բաց թողնում մի քանի շոջադարձ և հեռու էր իր տևից: Երբ սկսեց մթնել, Լա հասկացավ, որ իր տունն անցած պիտի լինի, և սկսեց ետդարձի ճամփան գտնել:

Երբ տուն հասավ, Լոտոսի Բուրմունքն անհամբեր նրան էր սպասում բակում:

«Ինչպես միշտ՝ ուշացած, Տա Տունգ: Բայց չէի՞ր հիշում, որ պարոն Վենն ու տիկին Վենը մեզ ճաշի են հրավիրել և սպասում են, որպեսզի հանդիպենք տեղ և տիկին Յուներին»:

«Կներես, որ սովորականից ուշ եմ եկել: Պանք անմիջապես: Տիկին համար 9-ի բանաստեղծություններն էի կարդում, և ճանապարհս կորցրի»:

«Նորի՞ց կորցրիր ճանապարհդ: Ավելի լավ է՝ Լախ մի բան կեր: Ես ստիպված էի ասել նրանք բանքերին, որին ուղարկել էին մեզ կանչելու, թե դու գործի պատճառով ես մնացել, և որ այնտեղ կլինենք ճաշից անմիջապես հետո»:

«Տեղ և տիկին Յուները Ամերիկայից են վերադարձել և մեզ երբեք չեն Լերի, եթե շատ ուշանանք: Եկ հիմա գնանք: Հետո կընթրենք, երբ ետ կգանք»:

«Արդեն ասել եմ, որ չսպասեն: Եվ եթե տեսնենք, որ դեռ ճաշում են, պետք է ասենք, որ մենք էլ ենք ճաշել: Լավ չի դիտվի, եթե նրանք մտածեն,

որ փորձում ենք զևալ ճաշի՝ այն բանից հետո, երբ արդեն ուշացել ենք»:

«Իհարկե, կասեմ այն, ինչ դու ես ասում, որ ասեմ»:

Ճիշտ ինչպես Լոտոսի Բուրմուլքն էր մտածել: Երբ երկու ուշացողները եկան, ճաշը համարյա ավարտվել էր, բայց տանտերն ու տանտիրուհին եւ հյուրերը դեռ սեղանի մոտ էին: Քանի որ ոչ պաշտոնական սեղան էր, նրանց առաջարկեցին միանալ իրենց: Լոտոսի Բուրմուլքը մի հիանալի արդարացում բերեց՝ ասելով, թե իրենք ուշացել են, որովհետեւ Տա Տուկը պետք է ավարտեր անհետաձգելի մի առաքում գեներալ Յուանի համար, եւ երկուսն էլ շատ լավ ճաշել են ու հիմա չեն կարող մեկ պատահ իսկ ուտել: Տա Տուկը պատրաստակամորեն հաստատեց ասվածը, բայց, այնուամենայնիվ, նրանց ստիպեցին Լոտոսի եւ որոշ ուտեստներ ճաշակել, որոնք, ինչպես տանտիրուհին էր ասում, այնքան էլ վատը չէին: Ծառան նրանց բրինձ մատուցեց: Մինչ Լոտոսի Բուրմուլքը հրաժարվեց՝ ասելով, թե չի կարող մի պատահ ուտել, Տա Տուկը ցրված ընդունեց այն եւ սկսեց կով տալ ապշեցուցիչ արագությամբ: Կինը զայրացած հայացք գցեց նրա վրա, բայց ապարդյուն, եւ կարճ ժամանակում Լա կերավ երկրորդ բաժինը, ապա արդեն սկսել էր երրորդ բաժին բրինձն ուտել: Մինչ Տա Տուկը լռեցայն իր կերակուրն էր վայելում, կինը խիստ անհարմար էր զգում այն գիտակցումից, թե այս ամենը տեսնելով՝ մյուս մարդիկ համոզվում էին, որ Լա քաղցած է: Լոտոսի Բուրմուլքը հուսահատ փորձեր էր անում ստիպելու, որ դադարեցնի ուտելը, եւ աչքի պոչով նրան էր նայելով՝ ոտքով թեթեւակի դիպավ նրա սրունքին: Տա Տուկն զգաց դա, շտապով ետ քաշեց ոտքը եւ շարունակեց իր բրինձն ուտել: Կինն ստիպված էր ևս իրից բզեց նրան եւ այս անգամ ավելի ուժեղ:

«Ինչո՞ւ ես ոտքով սրունքիս խփում», - անմեղորեն հարցրեց Տա Տուկը:

Տիկին Յունը, որ վերջերս էր ամուսնու հետ վերադարձել Միացյալ Նահանգներից, շատ շփվող ու մարդամոտ անձնավորություն էր: Որպեսզի ծիծաղը զսպի եւ մյուսների ուշադրությունը ցրի, Լա արագ ասաց. «Պարոն Լի, ես համոզված եմ՝ Դուք ուտեստների ավելի լավ գիտակ եք, քան մենք՝ կիսաօտարերկրացիներս: Այս հիանալի ուտեստները տիկին Վենն ինքն է պատրաստել, եւ ես կուզեի, որ մեզ ասեիք, թե դրանցից ո՞րն եք համարում լավագույնը»:

Տա Տուկն ուշադիր զննեց վարպետորեն ու խնամքով պատրաստված տարատեսակ ուտեստները: Տապակած հավ, խորոված բադ, թռչնաբլի ապուր, շնածկան շոգեխաշած լողակներ, - ևս շատ բան էր չէին. դրանցից բա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

վականին կերել էր, իսկ արդեն գոլ ժամանակ դրանք այնքան էլ համեղ չեն: Այդ պահին ևս սառը վարունգ էր համտեսում, եւ այդպիսի շոգ եղանակին կեղեղ մաքրած վարունգը նրան ամենահամեղը թվաց մնացած բոլոր ուտեստներից: Եվ անկեղծորեն պատասխանեց. «Կարծում եմ սառը վարունգն ամենից լավ ուտեստն է»:

«Ինչո՞ւ», - տիկին Յունն ականջներին չէր հավատում:

«Քանի որ նրա գույնն այնքան գեղեցիկ է»: Եվ կոպ տվեց երկրորդ պատասխանը:

«Ղուք ամենախնքնատիպ մարդն էք, որ ես երբեւէ հանդիպել եմ, պարոն Լի», - տիկին Յունին կատարելապես զարմացրին ու զվարճացրին Տա Տունգի խոսքերը:

Մինչ երեք տղամարդիկ գնացին խոսելու բարեփոխման մասին, որի ջերմ կողմակիցն էր պարոն Յունը, որն առատածեռն ներդրում էր կատարել շարժման մեջ, կանայք հեռացան տանտիրուհու սենյակ, որտեղ Լոտոսի Բուրմունքը փորձում էր ամեն կերպ ներողություն հայցել Տա Տունգի ցրվածության համար: Տիկին Վենը նկատեց, որ երբ մարդ իր ուշադրությունը շատ է կենտրոնացնում կարելու հարցերի վրա, բնական է, որ անուշադրության կմատնի մանր բաները: Ասաց նաեւ, որ իր ամուսինը՝ պարոն Վենն էլ որոշ չափով այդպիսին է եւ հաճախ մոռանում է վճարել իր գնած գրքերի համար: Երեւում էր՝ տիկին Յունին շատ էր դուր եկել երիտասարդ զոյգը. Տա Տունգը նրան դուր էր գալիս, ինչպես ինքն ասաց, ինքնատիպության պատճառով, իսկ Լոտոսի Բուրմունքը՝ որովհետեւ այդքան անուշիկ էր: Նա պնդեց, որ իրենք Լոտոսի Բուրմունքին պետք է վերաբերվեն որպես քրոջ, հնարավորինս հաճախ գնան նրան տեսնելու, եւ ավելացրեց՝ պետք է նրան հիշեն, երբ ընկերոջ կարիք զգան: Քանի որ այդ երեկո պետք է մաջոնգ խաղալու, և ներողություն խնդրեց եւ ամուսնու հետ հեռացավ: Տա Տունգը, հիշելով, որ Լոտոսի Բուրմունքը գրեթե ոչինչ չէր կերել, ևույնպես հրաժեշտ տվեց Վեն ընտանիքին, շնորհակալություն հայտնեց նրանց ճաշի համար եւ Յուն ընտանիքին ծանոթացնելու համար եւ կնոջ հետ տուն գնաց: Նա կնոջն ասաց, որ ինքը ճոխ ու հիանալի սևվել է, եւ կարծում է, թե պարոն Յունն իրեն երբեւէ հայտնի ամենալավ մարդն է:

Հաջորդ օրը նորից Տա Տունգն ուշ տուն եկավ, եւ այդպես շարունակվեց հետագա մի քանի օրը ևույնպես: Ասում են՝ ոչ ոք ավելի լավ չգիտե մարդուն, քան իր կողակիցը: Լոտոսի Բուրմունքն իսկույն զգաց, որ ամուսինը փոքր-ինչ այլ է դարձել, քան նախկինում էր: Տա Տունգը լուռ էր ու

մտախոհ: Կարող էր անսպասելի ժպտալ կնոջը եւ ասել, որ Տիկին համար 9-ի գրած այս մի բանաստեղծությունն աստվածային է, իսկ այն մյուսը՝ ահավոր: Մի օր, երբ թվում էր՝ ինչ-որ մտքով է տարված, Լուտոսի Բուրմունքն անհանգստացավ եւ հարցրեց, թե ինչ է եղել:

«Օ՛, ոչինչ,- փորձեց ժպտալ Տա Տունգը:- Ես ուղղակի կուզեի իմանալ՝ հնարավո՞ր է, արդյոք, մի մարդու համար, որ նրա անձը երկակի բնույթ ունենա: Մարդու բնույթի քո ինտուիտիվ իմացությունը երբեմն ապշեցնում է ինձ: Ասա ինձ, կարո՞ղ է մեկը լինել ազնիվ ու վսեմ անձնավորություն մի պահի, եւ շատ անազնիվ ու ցածր արարած՝ մեկ այլ պահի»:

«Ինչո՞ւ հանկարծ սկսեցիր այդպես հետաքրքրվել դրանով: Ո՞վ է այդ մարդը, որին ուզում ես վերլուծել»:

«Առանձնապես ոչ ոք,- շփոթված պատասխանեց Տա Տունգը:- Օրինակի համար՝ ես գիտեմ, որ մի բանաստեղծ մի պահի կարող է լինել աստվածային գրող եւ մեկ այլ պահի՝ սարսափելի հանգաթուխ...»:

«Կամ ավելի շուտ՝ բանաստեղծուհի? Տա Տունգ, դու չպետք է շատ մտածելս Տիկին 9-րդ համարի մասին, հատկապես, երբ ինձ հետ ես»:

«Բայց, անկեղծ ասած, երբեմն, երբ ես տեսնում եմ քեզ, ես չեմ կարող չհիշել նրան: Մինչեւ նրան հանդիպելս, ես չէի կարող հավատալ եւ, թե մի կին, որ քեզնից տարբերվում է ամեն առումով, կարող է գեղեցիկ լինել...»:

«Ինչքան աննրբանկատ ես, Տա Տունգ: Կնոջդ առջեւ գովաբանում ես տանտիրոջդ հարճի գեղեցկությունը»:

«Դու խանդոտ չես, չէ՞»:

«Արդյոք չպե՞տք է լինեմ»:

Բայց մեկ այլ անձնավորություն կար, որը սարսափելի խանդում էր Տիկին 9-րդ համարի հետ Տա Տունգի ընկերությանը: Մի օր, երբ Տա Տունգը Յուանի համար մի քանի նամակ էր մշակում, սպասավորը ներս մտավ ասելու, որ տանտերն անցանկալի հյուր ունի եւ ուզում է, որ նա ընդհատի այդ այցելությունը, որը կոչվում էր «պաշարումը թեթեացնել»։ Դա Լույնպես Տա Տունգի պարտականություններից էր: Ամեն անգամ, երբ Յուանին տանը բռնացնում էր նրա առավել մտերիմ ընկերներից մեկնումեկը, որի հետ նա չէր ցանկանում վատնել իր ժամանակը, փոխանակ պատճառ բռնելու, թե «տանը չէ», ինչը կիմանային, որ այդպես չէ, նա սովորաբար ընդունում էր այցելուին եւ Տա Տունգին հրահանգներ էր տալիս գալ ընդունելության սենյակ ու թեթեացնել պաշարումը: Գրասեղանից որոշ թղթեր վերցնելով եւ դրանք դնելով գրությունների թղթապանակի մեջ՝ Տա Տունգն շտապով գնաց ընդունելության սենյակ: Այնտեղ տեսավ, որ Յուանը նս-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

տաճ է եւ բավականին մտերմիկ տոնով գրուցում է մեկի հետ, որը թվաց, թե Շիաո Մինն է: Այո, դա Շիաո Մինն էր: Բայց, որքան էլ տարօրինակ էր, Շիաո Մինն ամենեւին էլ չզարմացավ տեսելով նրան, այլ ամբողջ ժամանակ հանգիստ պահեց իրեն: Մինչդեռ Տա Տոււզը ցնցված էր, ու թեւեւ անմիջապես էլ վերագտավ իրեն, Յուանն արդեն նկատել էր նրա դեմքի տարօրինակ արտահայտությունը: Մինչ կհասցնէր իր սովորական ընդհատող խոսքն ասել, Յուանը նկատեց.

«Դուք գիտե՞ք իմ բարեկամ պարոն Լի Շիաո Մինին »:

«Այո,- պատասխանեց Տա Տոււզը:- Մենք... մենք...»:

«Մենք միեւնույն նահանգից ենք. երկուսս էլ Յոյանսիից ենք»,- հավելեց Շիաո Մինը:

«Եթե խոսենք Յոյանսիի տղամարդկանց մասին,- ուրախ սրտաբացությամբ ասաց Յուանը,- պետք է ասեմ, որ թեւեւ Յոյանսին տվել է մեր լավագույն գիտնականներից ու փիլիսոփաներից մի քանիսին, ինչպես, օրինակ, Տաո Չիենը, Վան Ան-Շին, Օու Յան Սյուն եւ Վեն Տյան Սյանը, բայց չի կարող պարծենալ գեթ մեկ գիտնորականով: Գեներալ Չժան Շունը մեր ամենավատ ռազմագետներից է եւ, չնայած Յոյանսիից է, իր բոլոր շարքայիները Հունանից ու Սիչուանից են: Ասում են, որ նրա բանակում միայն մեկ տղամարդ կա Յոյանսիից, եւ նա էլ փաստորեն Յոյանսիի հպատակ էր դարձել, բայց ըստ էության Գույչժոուից էր»:

Նա նայեց Տա Տոււզին, որը գիտեր, թե ինչ նկատի ունի, եւ ասաց. «Ներեցե՞ք, որ ընդհատում եմ, բայց մի քանի հրատապ հաղորդագրություններ են հենց նոր եկել Տյանցզինի յամենից...»:

«Անտանելի՛ է,- Յուանը շինծու հուսահատությամբ ձեռքերն աջ ու ձախ տարածեց:- Մարդ մի թույլ ազատ ժամանակ չունի, որ ընկերներին նվիրի: Ինձ կներե՞ք, այնպես չէ՞, Շիաո Մին: Բայց գնալու հարկ չկա: Հավանաբար երկուսով խոսելու բան կունենաք ձեր հրաշալի նահանգի վերաբերյալ»:

Նա գլուխ տվեց եւ հեռացավ Տա Տոււզի վիճակը շատ ավելի թերեւացնելով:

«Ե՞րբ ես Պեկին եկել, կրտսեր եղբայր: Չգիտեի, որ եկել ես»:

Շիաո Մինը նախկինի պես սիրալիր տեսք չունեց: Նրա ձայնի մեջ հեզվանք կար:

«Բայց ես գիտեի՞ երբ ես Նանչանից Պեկին մեկնել ու նաեւ գիտեմ, թե որտեղ ես հիմնել քո «ոսկե առանձնատունը՝ թաքցնելու համար քո գեղեկուհի... »»:

«Մի՛ հեզկիր, կրտսեր եղբայր: Ես երկար մի կամակ եմ գրել իմ հորեղբայր Կանին՝ նրան մանրամասն պատմելով Պեկին կատարած մեր ուղեորության մասին: Սորաքույր Վուս դրան լիովին հավանություն է տվել...»:

«Ինչպիսի՛ հնազանդ զարմիկ ես իդեալական փեսա: Բայց մի՞թե չգիտես, որ քո բարի զոքանչն այնքան գոհ էր ձեր փախուստով, որ գնաց միանձնուհի դառնալու Հավասարակշիռ մտքի կուսանոցում, իսկ քո մեծ զոքանչը մահացավ հաջորդ օրը»:

Տա Տուսզը որոշ ժամանակ լուռ էր, ապա ասաց. «Այլ պատճառներ կան մորաքույր Վուսի՝ միանձնուհի դառնալու որոշման հետ կապված: Ես վախենում էի, որ տատիկը չի դիմանա ցնցումին»:

«Շատ լավ ես կանխատեսել: Եվ Վուս ընտանիքին լավ ծառայություն ես մատուցել: Աներդ պետք է հպարտ լինի քեզնով»:

«Թողնենք դա: - Թվում էր՝ Տա Տուսզը շատ բան ուներ նրան ասելու, բայց շատ դժվար էր բացատրելը: - Մեր ընտանեկան մասնավոր գործերում եղած բարոյությունները չպետք է խանգարեն մեր գործունեությանը: Մենք հիմա հասուն մարդիկ ենք: Պետք է մոռանանք այդ ամենը եւ փորձենք ծառայել հասարակությանն ու երկրին: Դու ինձնից ավելի շնորհալի ես եւ պետք է հեռուն գնաս: Կուզեի, որ իմ ունեցած դառը փորձառությունների մի մասն ունեցած լիներիր»:

Շիառ Մինի կուրծքը պայթում էր զայրույթից:

«Դառն փորձառություն՞ն: Կարծում էի՝ քաղցր սիրավեպ է եղել»:

«Հիմարություններ դուրս մի՛ տուր...»:

«Անհեթեթություն մի՛ բարբաջիր: Կարծում էի ազնվական տղամարդ ես, բայց տեսնում եմ կեղծավորի մեկն ես: Կրտսեր եղբորդ կնոջ հետ փախչելուց հետո՝ եկել ես այստեղ, որ գողանաս քո տիրոջ սիրելի հարճին»:

«Փակի՛ր կեղտոտ բերանդ»:

«Ի՞նչ օգուտ: Այս տանը բոլորը դա գիտեն: Տիկին համար 9-ը խելթի պես սիրում է զեղեցիկ երիտասարդ քարտուղարին...»:

«Անհեթեթ բաներ ես դուրս տալիս: Տիկնոջ հետ իմ հարաբերությունները զուտ գրական բնույթի են: Պոեզիայից բացի ուրիշ ոչ մի բանի մասին չենք խոսում»:

«Պոեզիան եւ նրա մոր մերկ ո՛տքը: Նա չգիտե, թե ինչպես պետք է գրել կես տող պոեզիա, որ փրկի իր թանկարժեք կյանքը: Ես գիտեմ՝ ով է նրա համար բանաստեղծություններ գրում»:

ԱՅՈՒՆ ՇԻՒՒ

«Բայց ես նրա հարյուրավոր բանաստեղծություններն եմ կարդացել...»:

«Այո, նրա նախկին սիրեկաններն ստիպված են եղել կատարել իրենց ներդրումները: Նրանցից ոմանք օրվա հայտնի բանաստեղծների շարքին են դասվում: Նա պարզապես պատճենում է դրանք իր ձեռքով եւ ասում, թե իր գործերն են: Ինչպես ես էի ստիպված՝ հորինել մի քանի բան ոչ շատ վաղուց, հասկանում եմ, որ հիմա քո հերթն է...»:

«Ախ, հա՛: Ճի՛շտ ես: Վերջին երկու բանաստեղծությունը պետք է որ քո ձեռքի գործը լինեն,- ծիծաղեց Տա Տունգը:- Ի՛նչ հիմարն եմ եղել: Ես պետք է ճանաչեի իմ կրտսեր եղբոր ոճը: Հիմա հասկանո՞ւմ եմ»:

«Ուզում եմ քեզից պահանջել, Տա Տունգ , ինձ չանվանել կամ չհիշատակել որպես կրտսեր եղբայր: Գիտես, որ եղբայրդ չեմ եւ երբեք չեմ եղել: Չնայած այնքան հաջողակ չեմ, ինչպես դու, սիրային գործերում կամ հասարակության մեջ...»:

«Բայց դու միշտ սիրված ես: Ահա ինչո՛ւ գեներալ Յուանը քեզ վերաբերվում է որպես իրեն հավասարի, միևնույն ես ընդամենը նրա աշխատակիցներից մեկն եմ»:

«Ես տասը հազար թանկից ավելի եմ ծախսել նրա պատճառով, եւ նա դեռ չի կատարել իր խոստումը՝ ինձ փոքրիկ մի պաշտոն տալ: Իսկ դու նրա վստահելի քարտուղարն ես, եւ նրա ամենասիրելի հարձը բավականին մտերիմ հարաբերությունների մեջ է քեզ հետ...»:

«Դա ճիշտ չէ...»:

«Բողոքելն իմաստ չունի: Նախկինում, երբ ամուսինը տնից հեռու, Տյանցզինում էր լինում, նա միշտ կարողանում էր մի փոքր ժամանակ գտնել հանդիպելու իր հին ընկերոջը, բայց ինչ դու եկել ես, ես գրեթե չեմ տեսել նրան»:

«Եթե համառորեն շարունակես անհեթեթ բաներ խոսել, ես պետք է թողնեմ քեզ, քանի որ շատ գործեր ունեմ անելու»:

«Ի՛նչ կատարյալ երեսպաշտն ես դու: Մնաս բարով, իմ զբաղված Մեծ քարտուղար: Ես չեմ ուզում քեզ մերկացնել, ոչ թե քո հանդեպ ունեցած իմ սիրո պատճառով, այլ որովհետեւ չեմ ուզում իմ սեփական դեմքը կորցնել, եւ դրանից դու ես օգուտ քաղում՝ պահպանելով առաքինության քո դիմակը...»:

Տա Տունգն արդեն դուրս էր եկել ընդունելության սենյակից եւ չլսեց խոսքի մնացած մասը:

Երբ այդ գիշեր կնոջը տեսավ, նրան նայեց քնքշորեն ու երկար եւ չէր

կարողանում ոչինչ ասել:

«Քո պահվածքն ինձ օրեցօր ավելի ու ավելի է անհանգստացնում, Տա Տունգ: Ի՞նչն է քեզ այդպես մտահոգում»:

«Էական ոչ մի բան չկա»:

«Ինչ-որ բան այն չէ: Ասա ինձ եւ լավ կզգաս»:

«Ես իմացել եմ, որ բանաստեղծը կարող է երկու տեսակի բանաստեղծություն գրել...»:

«Նորի՞ց այդ կինը»:

«Ռոդ բացատրեմ: Հիմա ես գիտեմ, որ գեղեցկությունն ու խելքը հազվադեպ են միասին լինում: Նա չի կարող բանաստեղծություն գրել»:

«Քո բացատրությունները միշտ շատ ավելի վատն են, քան ոչ մի բացատրություն: Բավական է այդ կնոջն ինձ մոտ գովաբանես»:

«Ոչ: Դա քե՛զ է վերաբերում»:

«Ի՞նձ»:

«Այո: Գիտե՞ս թե այդ անշնորհքությունն ով էր հորինել նրա համար»:

«Ինձ համար մեկ է: Մի՛ ասա, խնդրում եմ»:

«Շիաո Մինը»:

«Ի՞նչ»:

«Ես պարզեցի, որ Շիաո Մինը նրա նախկին սիրեկանն է եղել, կամ, ավելի ճիշտ, նրա նախկին մշտական հաճախորդներից մեկը, որ նա ամենեւին էլ բանաստեղծ չէ, որ ինձ ցույց տված նրա բոլոր բանաստեղծությունները գրված են եղել իր բանաստեղծ ընկերների կողմից, եւ որ վերջին երկու ահավոր կտորը Շիաո Մինի ներդրումն են:

«Եվ նա ի՞նչ ասաց, որտե՞ղ է Շիաո Մինը»:

«Նա՛ չասաց: Այլ Շիաո Մինն է այստեղ»:

«Այստե՞ղ»:

«Այսօր երեկոյան կողմ նա եկել էր տեսնելու գեներալ Յուանին»:

Լոտոսի Բուրմունքը երկար ժամանակ լուռ էր:

«Հիմա հասկանում եմ: Ծեր հորեղբայրը ճիշտ էր: Շիաո Մինն այն երիտասարդն էր Շանհայից, որ պաշտոն էր փնտրում: Կարծում եմ՝ եկել է ժամանակը, որ հրաժարվես քո աշխատանքից»:

«Ինչո՞ւ պետք է հրաժարվեմ: Ես նրանից չեմ վախենում»:

«Սա ինձ դուր չի գալիս: Նա պետք է որ Յուանի հետ մտերիմ հարաբերությունների մեջ լինի»:

«Այո: Նա ինձ ասաց, որ ավելի քան տասը հազար թափել է ծախսել դրա համար, եւ այն ամենն, ինչ ձեռք է բերել, գեներալ Յուանի բարեկամու-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

թյունն է: Բայց Յուանը շատ վատ կարծիք ունի նրա մասին»:

«Դու նրան հարցրի՞ր, թե ինչ վիճակ է տանը: Ինչ-որ լուր ունի՞»:

Տա Տունգը մի պահ լուռ էր, ապա կամացուկ ասաց. «Տատը մահացել է մեր՝ Նանչան մեկնելու հաջորդ օրը... իսկ...»:

«Իսկ՞ ի՞նչ», - հարցրեց Լոտոսի Բուրմունքը թույլ ձայնով եւ վատ կանխազգացումով լի:

«Իսկ մայրիկը գնացել է միանձնուհի դառնալու Հավասարակշիռ մտքի կուսակցում»:

«Ա՛խ, մայրիկ,- աղջիկը դառնորեն հեկեկաց:- Իմ խեղճ սիրելի մայրիկ»:

Երկու տարբեր լուրեր նրա սիրելիների հետ կապված, մեկը մահվան մասին, մյուսը՝ կյանքի, չափազանց ծանր ու դաժան հարված էին նրա համար: Բնականաբար, նա սգում էր տատի մահվան առիթով, որն այդքան շատ էր սիրում իրեն: Բայց այն լուրը, որ մայրը դեռ ապրում է, սակայն ապրում է կուսակցում, նրան շատ ավելի հուզեց, քան նախորդը: Դատարկության դռներից ներս մտնել նշանակում է ամբողջությամբ կտրված լինել աշխարհից, ընտանիքից եւ երեխաներից: Ապրել եւ հավիտենապես բաժանված լինել՝ նույնքան վատ է, որքան այն աշխարհ գնալը: Լոտոսի Բուրմունքն զգաց, որ ինքն այժմ ըստ էության որբացել է, թեեւ ձեռակառուցել իր երկու ձնողներն էլ ողջ էին: Տա Տունգն ամեն կերպ փորձում էր մխիթարել նրան:

«Երբ մեր նամակին պատասխան չստացանք, դու միշտ սարսափում էիր, թե մայրիկը մահացել է: Հիմա, երբ գիտենք, որ նա ողջ է, թեեւ կուսակցում, դա ավելի լավ է, քան կարծում էինք, եւ դու պետք է դա հանգիստ տանես: Թերեւս դա լավ էլք է: Դու պետք է հասկանաս, թե որքան դժվար կլիներ նրա համար աշխարհի երեսին նայել մեր մեկնելուց հետո: Ինչ վերաբերում է տատին՝ նա ութսուներորս տարեկան էր, հետեւաբար զգալի տարիքի էր հասել: Չսպիր վիշտդ, եւ գուցե մի օր դեռ մայրիկին կտեսնենք»:

Որոշ ժամանակ հեկեկալուց հետո Լոտոսի Բուրմունքն անդրադարձավ այն բանին, թե ինչ էր ասում իրեն Տա Տունգը, եւ ասաց. « Ի սեր մայրիկի, թո՛ղ ու հեռացիր գեներալ Յուանի տնից եւ Շիաո Մինից ընդհանրապես...»:

«Դու այլեւս չպետք է անհանգստանաս դրա համար: Ես գիտեմ որտեղ ենք մենք: Շիաո Մինը ոչ մի ազդեցություն չունի գեներալ Յուանի վրա»:

«Բայց Տիկին համար 9-ը...»:

«Այդ մասին էլ անհանգստանալու հարկ չկա...»:

«Շիտո Մինը նրա մշտական հաճախորդն է եղել ու հովանավորը եւ գուցե դեռ սիրեկանն է»:

«Չէ: Տիկին համար 9-ի համար նա հիմա ոչինչ չի նշանակում, այլապես նա կօգտագործեր իր ազդեցությունը գեներալ Յուանի վրա Շիտո Մինի համար»:

«Համենայն դեպս, ես չեմ ուզում, որ դու շփում ունենաս նրանց հետ»:

«Դու չես հասկանում»:

Տա Տունգի վարքագիծն օրերով շարունակում էր տարօրինակ ու խորհրդավոր լինել, եւ Լոտոսի Բուրմունքն սկսել էր ավելի ու ավելի անհանգիստ զգալ, երբ նա տանը չէր ու տուն չէր գալիս մինչեւ ուշ գիշեր: Քանի որ շատ էր մենակ ու ինքնուրույն, վերջերս բավականին հաճախ էր այցելում տիկին Վենին եւ տիկին Յունին: Նա առանձնապես լավ էր զգում տիկին Յունի հետ, քանի որ, միսիներական դպրոցի սովորող լինելով, կարող էր նրա հետ խոսել Ամերիկայի եւ Եվրոպայի դեպքերի մասին: Բայց տիկին Յունը միշտ զբաղված էր մաջուկի իր հանդիպումներով, եւ նրանք չէին կարողանում միմյանց տեսնել այնքան հաճախ, որքան կուզեին: Տղամարդկանց նա շատ չէր տեսնում: Նրանք երկուսն էլ թվում էին նույնքան զբաղված եւ անհասանելի, որքան իր ամուսինը:

Ութերորդ ամսվա ութին Յուանն ընդունելության արժանացավ կայսեր կողմից, եւ նրա աստիճանը բարձրացավ, ու նա անկախ դարձավ իր նախկին վերադաս Չժուն Լուից՝ մայրաքաղաքի նահանգի փոխարքայից: Կայսերական արքունիքի ավանդույթի համաձայն, նա պետք է հաջորդ առավոտ ընդունելության ներկայանար՝ անձամբ շնորհակալ լինելու կայսրին եւ խնդրելու Նորին մեծությանը, որ իրեն հրաժեշտի հրահանգներ տա նախքան իր հեռանալն ու նոր պաշտոնին անցնելը: Տրամաբանական էր, որ Տա Տունգը սովորականից շատ ավելի զբաղված պետք է լիներ: Բայց երրորդ օրը, երբ Տա Տունգը տուն չեկավ մինչեւ ուշ կեսգիշեր, Լոտոսի Բուրմունքը խիստ անհանգստացավ: Տիկն Հո-Սանն առաջարկեց գնալ Յուանի նստավայր առանձնատուն՝ տեղեկանալու նրա մասին, եւ Լոտոսի Բուրմունքը շատ երախտապարտ էր: Հասնելով Յուանի տուն՝ Տիկն Հո-Սանը տեսավ, որ կողքի դռնից մի սովեր դուրս ելավ, եւ երբ ինքը հասավ դրան, տեսավ, որ դա ոչ այլ ոք է, քան Տա Տունգը: Նա Տա Տունգին ասաց, որ Լոտոսի Բուրմունքն անհանգստանում է նրա համար, եւ երկուսով տուն շտապեցին: Աղջիկն ամուսնուն հարցրեց, թե ի՞նչն է այդքան երկար պահել նրան, բայց նա ոչինչ չասաց:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Ամսի վեցի առավոտյան, կեսօրին մոտ, երբ Տա Տուևը գնացած էր, պարոն Հոուն հանկարծ հայտնեց, որ ոմն պարոն Լի այցի է եկել Լոտոսի Բուրմուլքին անհետաձգելի գործով: Աղջիկը խիստ ապշած էր, երբ տեսավ, որ բակից ներս է գալիս Շիաո Մինը:

«Օ՛», - ծանր շնչեց ևա եւ անշարժ նստեց տեղում: Շիաո Մինը կանգնեց դռների մեջ եւ, խոր գլուխ տալով, մնաց այդտեղ՝ առանց առաջ գալու: Կիսով չափ քմծիծաղելով եւ կիսով չափ ժպտալով՝ ևա ասաց. «Ներիր, որ ավելի շուտ չեմ տեղեկացրել իմ այցի մասին: Բայց չեմ կարող չասել: Տեսնում եմ՝ իմ այցը ցնցել եւ շփոթեցրել է քեզ, Լոտոսի Բուրմուլք, բայց ավելի վատ բաներ կան, որոնց մասին քեզ պետք է տեղյակ պահեմ: Տա Տուևին ծերբակալել են»:

«Ի՞նչ»: Աղջիկն զգաց, որ դա ճիշտ է, բայց հարցրեց. «Կատակո՞ւմ ես: Չեմ կարող հավատալ: Ի՞նչ է արել ևա: Դո՞ւ ես մատնել»:

«Դա ինձ հետ ոչ մի կապ չունի: - Շիաո Մինի դեմքին գրեթե հաղթական ժպիտ էր: - Նա ծերբակալվել է կայսերական պահակազորի կողմից, եւ ես լսել եմ, որ մեղադրվում է պետական դավաճանության համար: Եթե այդքան խելացի աղջիկ ես, զարմանում եմ՝ ինչո՞ւ չէիր խորհուրդ տալիս նրան, որ փախչեր, քանի դեռ չէր կալանավորվել»:

«Հիմարությունն է: Նա անմեղ է», - լավեց աղջկա թույլ պատասխանը: Նրան թվաց՝ հոգին գրեթե լքեց իրեն:

«Անիմաստ է դա ինձ ասել: Ես նրա դատավորը չեմ: Եթե ևա պետական դավաճանությունն չի գործել, ապա պետք է որ մեկ այլ բան գործած լինի: Իսկ գուցե գեներալ Յուանը բացահայտել է նրա սիրային գաղտնի կա՞պը 9 համարի Տիկնոջ հետ: Քանի որ գեներալ Յուանը վերջերս պաշտոնի բարձրացում է ունեցել, կարող էր մեղադրել նրան պետական դավաճանության համար, եւ մեղադրանքն էլ ընդունված կարող է լինել»:

«Տիմարություն»:

«Հանուն իր աշխատանքի եւ հանուն քեզ՝ ևա չպետք է դիպչեր այդ կնոջը: Ես նրան Պեկին բերեցի Շանհայից, եւ որովհետեւ երդվել էի ուրիշ ոչ մի կնոջ հետ չամուսնանալ, բացի քեզսից, հրաժարվեցի նրանից՝ հոգուտ գեներալ Յուանի»:

«Խնդրում եմ այլեւս ինձ նման բաներ չասել»:

«Բայց դու պետք է իմանաս, որ ես միշտ նվիրված եմ քեզ, անկախ նրանից, թե ինչ է եղել եւ ինչ է լինելու ... »:

«Լռություն, - գայրացած գոչեց Լոտոսի Բուրմուլքը: - Մեր միջեւ ամեն բան ավարտված է... Այդ ամենը մեր... մեր... միմիայն քո հանրոն էր, որ

պատճառ դարձավ այդ ամբողջ անխորժության»:

Նա քիչ էր մնում ավելին ասեր, բայց հանկարծ զսպեց իրեն: Ստածեց մոր մասին, թվաց՝ տեսնում է նրան՝ իր առջեւ կանգնած, բուդոյայական գորշ խալաթը հագին, ծեռքին համրիչ, եւ աչքերն արցունքով լի, որն իրեն հորդորում է լռել: Նա նայեց լուսամուտից դուրս անսահման տարածությանը եւ մրմնջաց. «Ա՛խ, մայրիկ, իմ խեղճ մայրիկ»:

«Ես ապրում եմ Խնկարկման ճամբարների առաջին նրբանցքում: Եթե գտնես, որ կարող եմ որեւէ կերպ օգտակար լինել, ինձ տեղյակ պահիր...»:

Լոտոսի Բուրմուկը չսեց նրա խոսքերը: Շիտո Սինը տեսավ, որ անօգուտ է այլեւս մնալ այդտեղ, խոր գլուխ տվեց եւ դուրս եկավ առանց ավելորդ աղմուկի: Երբ գնաց, աղջիկը փորձեց հանդարտվել եւ մտածել, թե ինչ պետք է արվի: Ամենից առաջ պետք է տեսնի Յուանին, եւ նա անմիջապես գնաց այնտեղ, ուր ապրում էր Յուանը:

Տունը կարծես հանգիստ ու խաղաղ էր, եւ դուռնապանն ասաց, որ տանտերը Տյանցզինում է: Նա ստիպված էր տեսակցություն խնդրել տանտիրուհու հետ: Տիկին համար 9-ը սառն ընդունեց նրան եւ ավելի շատ հետաքրքրված էր իր այցելուի հագի շորերով, նրա սանրվածքով եւ այն բաՆով, թե ինչպես կարող է առանց դիմահարդարման եւ այդքան հասարակ հագնված աղջիկն այդքան գեղեցկատես լինել, քան մտահոգված էր Տա Տունգի ծերբակալությամբ:

«Տիկին Լի, քանի որ ծերբակալությունը տեղի է ունեցել մեր առանձնատանը, Դուք պետք է գիտակցեք, որ եթե հնարավոր լիներ ինչ-որ բան անել նրա համար, մենք արած կլինեինք առանց Ձեր խնդրելու: Իմ տերն անհետաձգելի գործով գնացել է Տյանցզին: Նույնիսկ եթե նա այստեղ լիներ, ի՞նչ կարող էր անել պետական դավաճանության համար մեղադրանքի եւ կայսերական հրամանագրի իրականացման դեմ: Բացի այդ, պարոն Լին շատ հպարտ ու մեկուսի անձնավորություն է, ոչ ոք չէր կարող նրան հինգ քայլից ավելի մոտենալ: Մենք, իրոք, չգիտեինք, թե ինչ կար նրա մտքում: Ես կարեկցում եմ Ձեզ, բայց ոչինչ չունեմ ասելու նրա համար»:

Այդպիսի սառն խոսքերը ոչ մի կասկած չթողեցին, որ նա մատն իսկ չէր շարժի Տա Տունգի համար: Արդյո՞ք Յուանն իրոք Տյանցզինում էր, թե՞ պարզապես խուսափում էր Լոտոսի Բուրմուկից, դժվար էր ասել, բայց աղջիկն այժմ հասկացավ, որ ուրիշ տեղ պետք է գնա օգնության համար: Դուրս գալով Յուանի տնից՝ նա ժամանակ չկորցրեց՝ գնալ ու տեսնել պարոն Վենին եւ տիկին Վենին: Սոսկալի վշտի մեջ՝ նա ինքն իրեն չհարցրեց՝ արդյո՞ք Տիկին համար 9-ի խոսքերը պետք է ընդունի եւ հավատա այն

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

պատմությանը, որ Տա Տունը ձերբակալվել է պետական դավաճանության մեղադրանքով, թե՛ հավատ ընծայի Շիաո Մինի հերյուրանքին եւ մտածի, որ Տա Տունը Յունի խանդի եւ զայրույթի թիրախ է դարձել: Նրան մեկ բան էր միայն մտահոգում` ինչպե՞ս ազատել Տա Տունգին :

Ինչ մտավախություն որ ուներ, այդպես էլ եղավ. Վեն ըստանիքի անդամները տանը չէին, եւ Լույնիսկ նրանց միակ ծառան, ինչպես երեւում էր, տանը չէր: Ի՞նչ էր անելու: Չգալով, որ երկինքը փոփ է գալիս, երկիրը՝ ցնցվում, արեւը՝ խավարում, խարխափելով շարժվեց դեպի պարոն Յունի եւ տիկին Յունի տուն: Եթե նրանց չկարողանար գտնել, մտածում էր, պետք է գնար Արգելված պալատ՝ տեսնելու կայսրին:

Երբ տիկին Յունը ողջունեց նրան գրկաբաց, համակրող ու կարեկից հայացքով, Լոտոսի Բուրմունքը հասկացավ՝ ճիշտ տեղ է եկել, բայց Լաեւ գիտակցում էր՝ Տա Տունգի վիճակը պետք է որ շատ լուրջ լինի: Ինչպես փոքրիկ աղջիկն է ձգտում դեպի մոր գիրկը, երբ տխուր է ու հուսահատ, նա հեկեկում էր տիկին Յունի գրկում, մինչ տիկինը քնքշորեն գրկել էր նրան:

«Իմ սիրելի Լոտոսի Բուրմունք, չափից դուրս մի՛ անհանգստանա: Իհարկե, մենք կանենք այն ամենն, ինչ կարող ենք, որպեսզի օգնենք նրան: Ամուսինս, լինելով ամերիկահպատակ, որպես Ամերիկայի քաղաքացի՝ այս պահին հանդիպում է Ամերիկյան հյուպատոսի հետ Պեկինում, որպեսզի նրան խնդրի օգտագործել իր ազդեցությունը՝ նրանց ազատ արձակելու համար: Եթե փողը կրողանա օգտակար լինել այս դեպքում, լինի տասը թե քսան հազար, Լույնիսկ հիսուն կամ հարյուր հազար թաել, մենք այն չենք խնայի: Վերջերս մաջոնգում ես մեծ կորուստներ ունեցա, եւ համարենք, որ այդ ամենը կորցրել եմ: Մենք պարզապես պետք է փրկենք նրանց կյանքը»:

«Փրկենք նրանց կյանքը»:

«Այո: Բավականին շատ մարդ է ձերբակալվել: Եթե ամուսինս Ամերիկայի քաղաքացի չլիներ, ես ավելի լավ վիճակում չէի լինի, քան դու»:

«Դա բարեփոխման շարժումն է, ի վերջո, այնպես չէ՞»:

«Իհարկե: Ուրիշ էլ ի՞նչ կարող էր լինել: Բայց արյունարբու Այրի կայսրուհին դա համարում է պետական դավաճանություն»:

«Չեմ կարող հասկանալ, թե ինչո՞ւ պիտի նրանք ձերբակալվեն երկիրը բարեփոխման միջոցով փրկել փորձելու համար»:

«Բայց Այրի կայսրուհին կարող է հասկանալ: Եթե բարեփոխման քաղաքականությունը գործի դրվի, նա այլեւս չի կարող ամբողջ կայսրու-

թյունն իր ձեռքում պահել: Նա իշխանությունից կզրկվի: Իսկ եթե իշխանությունից զրկվի, ամենայն հավանականությամբ շատ վտանգավոր վիճակում կհայտնվի»:

«Տա Տունգն այդ մասին ինձ բառ իսկ չի ասել»:

«Իսկ ես կարծում էի, թե առանց քեզ հետ նախապես խորհրդակցելու նա երբեք որեւէ բան չի անում»:

«Այո, բայց միայն փոքր հարցերում, կարելու որեւէ գործի ժամանակ երբեք չի խորհրդակցում: Նա շատ համառ մարդ է: Ի վերջո, մարդ պետք է կախված լինի իր հաստատուն որոշումից, որպեսզի մեծ գործեր կատարի: Մենք չենք կարող մարդկանց կամ դեպքերը դատել նրանց հաջողությունից կամ ձախողումից ելնելով»:

Օրվա երկրորդ կեսին պարոն Յունը վերադարձավ լուրերով, որ ոչ միայն բարեփոխման կողմակիցների եւ առաջնորդների մեծ մասն է ձերբակալվել, այլ նաեւ երիտասարդ կայսրն է բանտարկված Օվկիանոսի Սանդղավանդում, որ Չմեռային Պալատի նեղլիկ մի կղզի է Հարավային ծովում: Նա եղել էր Ամերիկյան հյուպատոսարանում, բայց հյուպատոսը Պեկինում չէր եղել: Լի Թի-Սո-Թայը, որ մի քանի օր առաջ էր եկել կայսեր կողմից շնորհված հատուկ ընդունելությանը մասնակցելու, եղել էր Բրիտանական հյուպատոսարանում, եւ նրան կտրուկ ասել էին, որ Բրիտանական հյուպատոսն ընդհատել է արձակուրդը Փեյ-Թայ-Հոում եւ ետդարձի ճանապարհին է, եւ որ բոլոր դեպքերում իրենք չեն կարող միջամտել Չինաստանի ներքին քաղաքականությանը: Եթե Այրի կայսրուհին չի սպանել կայսրին, ինչի մասին այս պահին ասեկոսեսներ են շրջում, նրանք չեն կարող որեւէ բան անել: Չինաստանի որոշ բարեկամներ անկեղծ ու սրտացավ համակրանք կարող են ունենալ բարեփոխիչների հանդեպ, բայց չեն կարող նրանց ոչինչ առաջարկել, բացի բարոյական աջակցությունից:

Իրականում, բացի Այրի կայսրուհուց եւ մի քանի պահպանողական պնդածակատ նախարարներից, ամբողջ երկիրը գործնականում սատարում էր այս շարժմանը: Երիտասարդ կայսրը խիստ համակրում էր շարժմանը: Նա գիտեր, որ չի կարող պայքարել իր մորաքրոջ դեմ, որն արդեն ազատվել էր երկու կայսրերից եւ իրեն էր դրել գահին՝ որպես խամաճիկ: Բարեփոխումը եւ սահմանադրությունը Աստծո կողմից ուղարկված պարգեւ կլինեին՝ պաշտպանելու իր ժողովրդին, ինչպես նաեւ հենց իրեն, կայսրուհուց: Երբ շարժումը հասներ իր գագաթնակետին, նա վճռել էր անել այն ամենն, ինչ կարող էր, որպեսզի դա կատարվի: Բարեփոխիչների խորհրդով նա արձակում էր հրովարտակ հրովատակի ետեփց՝ ի կատարում

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

րումն բարեփոխության քաղաքականության եւ ստեղծել էր մի շարք նոր ու օգտակար կազմակերպություններ: Նա նաեւ վերացրել էր մեծ թվով անօգուտ ու հնացած յամեններ, եւ դա ճակատագրական հարված եղավ երկու առումով: Շարժման հակառակորդների համար ճակատագրական էր, որովհետեւ մանչուրական անպետք պաշտոնյաների մեծ մասին գործից դուրս էր շարտում, եւ ճակատագրական էր իրենց՝ բարեփոխիչների համար, քանի որ ստիպեց նրանց հակառակորդներին վճռականորեն միավորվել՝ անողորմ եւ մահացու վրեժ լուծելու համար: Պալատական խարդավանքները շարունակվեցին, եւ այդ ճակատագրական օրվա՝ Կուանգ Սյու կայսեր 24-րդ տարվա 8-րդ ամսվա 6-ի առավոտյան (1898 թ. սեպտեմբերի 21ին), երբ Նորին Մեծությունը գնացել էր Այրի կայսրուհուն բարի լույս մաղթելու, մի սովորույթ, որը նա բարեպաշտորեն պահպանում էր, նրան ասացին, որ Նորին Մեծություն կայսրուհին արդեն գնացել է իր մասնավոր պալատ, եւ ինդրեցին սպասել նրա վերադարձին: Քանի որ դա տարօրինակ էր հնչում, նա հարցրեց ներքինիներին, թե ինչ է պատահել: Նա կարող էր հստակ տեսնել, որ մթնոլորտում ինչ-որ բան այն չէ, մի վատ բան է կատարվում:

«Դուք պետք է ինքներդ իմանաք, Չերդ Մեծություն», - ասաց ներքինիներից մեկը: Այրի կայսրուհու հետետրոդների աչքում կայսրը կարեւոր դեմք չէր: Նրանք բոլորը գիտեին՝ ում պիտի հարգեն, ումից վախենան եւ ում չպիտի հարգեն ու ումից չվախենան:

«Եթե փոխարքա Չժուն Լուն Տյանցզինից չվերադառնար եւ չզգուշացներ Ծեր Բուդդային, մենք բոլորս, հավանաբար, պետք է մեռնեինք Չեր ձեռքում կամ բարեփոխիչների, Չերդ Մեծություն», - սառն նկատեց մեկ ուրիշը:

«Չայնդ կտրի՛ր, - ասաց երրորդը: - Եթե Ծեր Բուդդան իմանա, որ շատախոս ես եղել, գլուխդ ուտերիդ երկար չի մնա, բարեփոխում լինի թե ոչ»:

Այնպիսի զգացողություն ունենալով, ասես դույլով սառը ջուր լցնեին գլխին, կայսրը կանգնել էր այդտեղ եւ դողում էր ամբողջ մարմնով: Նա փորձում էր մտածել, եւ շատ էր ջանում, բայց չէր կարողանում կենտրոնանալ: Թեեւ ոտքերով ամուր կանգնած էր գետնին, բայց նրա հոգին ըստ էության ավելի ու ավելի վեր էր սավառնում, մինչեւ զգաց, որ ինքը շատ վեր է պալատի տանիքներից: Հետո նորից ընկնում էր, բայց ոչ գետնին, այլ դեռ անշարժ մնում էր օդի մեջ, ապա նորից սկսում էր սվառնել ավելի բարձր: Որոշ ժամանակ շարունակում էր այս զգացողությունն ունենալ, երբ հանկարծ շրխկոցով հայտնվեց գետնին. լսեց ինչ-որ մեկի շշուկը:

«Օ՜ր Բուդդան վերադարձել է»:

Նա դեռ կիսագիտակից վիճակում էր, բայց կարող էր տեսնել, թե ինչպես են սեւեռուն իրեն նայում մի զույգ եռանկյունաձև աչքեր: Չնայած ինքը շատ լավ ծանոթ էր այդ աչքերին, բայց երբեք չէր դադարում իր սիրտն զգալ իր բերանում, երբ տեսավ դրանք: Խորաթափանց աչքերն այնքան սուր էին ու ծակող, որ գետնին գամեցին նրան: Նա չէր կարող կորից սավառնել:

Առաջին հայացքից Նորին Մեծություն կայսրուհի Յի Սին ահարկու անձնավորություն չէր: Նա միջահասակ էր, բայց հյուսիսի կնոջ համար՝ փոքրամարմին: Համաչափ դիմագծերը նրան միանգամայն գեղեցիկ էին ներկայացնում ևույնիսկ հիմա, երբ վաղուց վաթսուներեք էր: Երիտասարդ ժամանակ պետք է որ չափազանց համակրելի եղած լիներ: Դա էլ էր շփոթեցնող: Քանզի դժվար է հմայքը համատեղել վախի հետ: Այդուհանդերձ, նրա արտաքին տեսքը,- լավ կարված եւ գեղեցիկ մետաքսե զգեստները, գերազանց ընտրված արդուզարգի պարագաները, նուրբ ու ճաշակով կարմրաներկ քսած եւ շպարված դեմքը, ինամքով սանրված ու հարդարված վարսերը,- մարդկանց երբեք չէին ներշնչում ջերմություն ու բարյացակամություն: Նրա ներկայությունից կանայք անհանգստություն ու տհաճություն, իսկ տղամարդիկ սառնություն էին զգում: Նա ուներ գրավիչ երաժշտական ձայն, բայց նրա խոսքերը երբեք համոզիչ ու հուսադրող չէին:

«Ձեր սենյակներում, այլ հետաքրքիր հողվածների ու գրքերի մեջ ես գտա մեր հավատարիմ Մարկիզ Յզեն Գո-Ֆանի մի շարք աշխատանքներ: Չեմ կարծում, թե դրանցից որեւէ մեկը կարդացել եք : Բայց դա նշանակություն չունի: Ե՛կ,- Նա շրջվեց դեպի սպասուհիներից մեկը:- Ինձ տուր գիրքը: Ահա, ես նշել եմ այս էջը»: Նա բացեց գիրքը եւ ցույց տվեց էջը: «Տուր կայսրին: Ես ուզում եմ, որ Դուք կարդաք այս երկտողն ինձ համար»:

Կայսրը գիրքն ընդունեց երկու ձեռքով: Թեեւ այն հանձնվել էր սպասուհու կողմից, նա պետք է դա համարեր որպես անմիջապես Այրի կայսրուհուց ստացած մի բան: Միայն մեկ ձեռքով վերցնելն աններելի հանցանք կլիներ:

Նշված երկտող բանաստեղծությունը կարճ ներածական գրառում ուներ, որն ասում էր, թե այն գրված է, որպեսզի արժանին մատուցվի մարկիզի հանգուցյալ ստևտու դայակին: Երկու տողերն այնպես ինամքով ու ճշգրիտ էին կազմված, որ կատարելապես զուգահեռ ներկայանան.

«Քանի որ ևույնիսկ անվճար ճաշի բարեգործությունը միշտ պետք է

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

հիշել, եւ Դուք, Ձեր մայրական հոգսերով, անհանգստություններով, գրկախառնություններով ու զգվանքներով գրեթէ փաստացի իմ մայրն եք եղել, բացի ինձնով հոյ լինելու տասն ամիսներից,

Ինչպե՞ս կարող էր տասը հազար կտոր ոսկեդրամների վարձատրությունը բավարար համարվել, երբ ես, իմ որդիական բարեպաշտությամբ, պարտականությամբ, խղճով եւ բանականությամբ, լինելով գրեթէ Ձեր որդին, արյուն-արցունք պետք է թափեմ Ձեզ համար երեք տարի շարունակ»:

Կայսրը կարդաց սա եւ լուռ մնաց:

«Մարկիզի խոնարհ դայակն ավելի բախտավոր կին էր, քան ես: Ես քեզ դայակ եմ եղել գրեթէ երեսուն տարի, կրթել եմ քեզ, քեզ կին եւ հարճեր եմ տվել, դրել եմ քեզ Վիշապի գահին, եւ հիմա դու ուզում ես ազատվել ինձնից՝ Յուան Շի-Կայի տոր բանակի օգնությամբ»:

Կայսրը լուռ էր մնում:

«Դու ապո՛ւշ ես: Այսօր ես գևամ վաղը դու այստեղ չես լինի»:

Կայսրը լուռ էր մնում:

«Ի՞նչ ունես ասելու»:

Կայսրը լուռ էր մնում:

«Վագրին կրծքով կերակրիր, եւ երբ մեծանա, քեզ կսպանի: Կարծում էի՝ գառան եմ կերակրել, բայց պարզվում է՝ վագր է, որը փորձում է ինձ սպանել»:

Նա թեթեակի վեր բարձրացրեց նուրբ ձեռքը եւ ասաց իր ներքինիներին. «Մոտեցե՛ք»:

Չորս ներքինի առաջ եկան՝ երկուսը բռնեցին կայսրի ձեռքերից, մինչ երկուսը կանգնեցին նրա ետևում: Թվում էր՝ հստակ գիտեին, թե ինչ է ուզում այրի կայսրուհին: Ակներեաբար, նրանք նախապես էին հրահանգներ ստացել: Չնչին պայքար իսկ չեղավ: Կայսրը լուռ էր մնում:

«Գնացե՛ք», - հանգիստ, բայց կտրուկ ասաց Այրի կայսրուհին՝ իր բարձրացրած ձեռքը նրբագեղորեն շարժելով դրան ուղղությամբ: Դեռ լուռ մնալով՝ կայսրը տեղափոխվեց կղզու իր բանտը:

Բարեփոխման շարժման հենց ղեկավարից ազատվելով՝ նա այնուհետեւ հրամաններ արձակեց վերացնել մյուսներին: Պեկինի բոլոր քաղաքային դարպասները փակվեցին այդ օրը, եւ հայտարարվեց ռազմական դրություն: Տյանցզին մեկնող գնացքը կանգնեցրին եւ խուզարկեցին: Չնայած նման հիմնավոր, մանրակրկիտ միջոցառումներին, երկու ղեկավար «ապստամբները», ինչպես նրանց անվանում էին, Կան Յու-Վեյը եւ

Լյան Ցի-Չան, դեռ ազատության մեջ էին: Կանը Պեկինից հեռացել էր Տյանցզին մեկնող վերջին գնացքով, ապա սավով մեկնել հարավ, իսկ Լյանն ապաստան էր փնտրում Ճապոնիայի դիվանագիտական ներկայացուցչությունում: Շատ քիչ մարդիկ էին վտանգի հոտն զգացել եւ փրկվել, իսկ Վեն Տին-Շին մայրաքաղաքը լքել էր առավոտյան: Այնուամենայնիվ, մի շարք ձերբակալություններ կատարվեցին, եւ Տա Տունգը ձերբակալվածների մեջ էր: Նրան ուղարկեցին Պատիժների խորհրդի մեծ բաւտ, որտեղ բանտարկված էին բոլոր պետական կալանավորները:

Հենց որ Լուտոսի Բուրմունքն իմացավ ստույգ իրավիճակը, որոշեց վերադառնալ համբարային հանրակացարան, որտեղ ասաց, որ պետք է իր շտաբն ստեղծի, որպեսզի աշխատանք տանի Տա Տունգին ազատ արձակելու համար: Նա գիտեր, որ գրեթե ոչինչ չի կարող անել, բայց հույսը չէր կորցնում եւ չէր ուզում բեռ լինել Յուն ընտանիքի համար: Համբարային հանրակացարանի բոլոր բնակիչներն անհանգիստ ու մտահոգ էին նրա եւ Տա Տունգի համար, բացի պարոն Չենգից, որը նույնպես անհետացել էր: Տինգ Հո-Սանը մայրաքաղաքում շրջող առավել հուսահատեցնող խոսակցություններ էր լսել: Նա ասաց, որ ձերբակալվածները մեղադրվել են կայսրին արտասահմանյան հաբերով թունավորելու համար եւ որ նրանք պետք է պատժվեն իրենց բոլորի ընտանիքների վերացմամբ, յուրաքանչյուրում ամբողջությամբ ինը սերունդ, այսինքն՝ չորս սերունդ իրենցից վեր եւ չորս սերունդ իրենցից ցած՝ իրենց սերնդի հետ միասին, որ ձգվելու էր միևնույն չորրորդ զարմիկներ: Այս ասելուց հետո նա գիտակցեց, որ իր խոսքերն ամենեւին օգուտ չեն բերում, դրա համար էլ առաջարկեց գնալ եւ տեսնել պարոն Սուն Չիա-Նային՝ Պեկինի համալսարանի պրեզիդենտին՝ ազդեցիկ մի պաշտոնյայի, որը կարող էր օգնել բարեփոխիչներին:

Երբ մեծ պաշտոնյան ետ եկավ իր յամենից եւ լսեց Տա Տունգի ձերբակալության մասին, նա նույնպես եկավ մխիթարելու Լուտոսի Բուրմունքին:

«Տիկին Լի, Դուք խելացի կին եք եւ չպետք է վշտանաք Ձեր ամուսնու ճակատագրի, նրա հետ պատահած այս դժբախտ դեպքի առիթով: Պետական դավաճանության խաղ խաղալը շատ վտանգավոր հետեւանքներով է հղի: Եթե մարդ հաջողության է հասնում, նա մեծ հերոս կդառնա, իսկ եթե ձախողվում է, պետք է հատուցի դրա համար: Քանի որ ամեն ինչ չի շտկվել, եւ նա ժամանակին չի խուսափել վտանգից, պետք է համարեք, որ նրա կյանքն ամբողջությամբ իր թշնամու ողորմածությունից է կախված: Ես կուզեի օգնել Ձեզ: Եթե սա սովորական մի դեպք լիներ, կասկած չկա, որ կկարողանայի օգտագործել որոշ մեծ պաշտոնյաների վրա ունեցած իմ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ազդեցությունը: Բայց քանի որ սա բարեփոխման ապստամբների ընդհանուր ճշում է, իմ կողմից որեւէ բան անելն օգուտ չունի: Լսել եմ, որ գեներալ Յուանը փախել է Տյանցզին եւ թաքնվել արտասահմանյան կոնցեսիոն ձեռնարկությունում: Նա կշտրհագրվի: Նրա նման դիրք ունեցող մարդը չպետք է միանար ապստամբներին»:

Ծեր հորեղբայրը շատ էր ցավում երիտասարդ գույգի համար, եւ տանձ ու խաղող էր բերել Լոտոսի Բուրմունքին: Նա ասաց. «Արժանավոր իմ զարմուհի, ահա մրգեր, որ քո ծեր հորեղբայրը բերել է քեզ համար: Ստաճիր քո մասին եւ մի քիչ տանձ ու խաղող կեր: Վաղը մի քիչ էլ բանտ ուղարկիր իմ արժանավոր զարմիկի համար: Ասա նրան, որ եթե լսեր իմ խորհուրդը եւ ետ վերադառնար, փոխանակ ընկերակցելու այդ սարսափելի մարդկանց, բանտում չէր լինի»:

Տինգ Հո-Սանը վերադարձավ իրիկնադեմին: Նա ճնշված ու ընկճված տեսք ուներ:

«Չկարողացա գտնել պարոն Սուն Չիա-Նային կամ որեւէ մեկին: Վաղը համալսարանը փակելու են: Չգիտեմ, թե ե՛ս ինչ եմ անելու: Ուզում եմ բանտ գնալ՝ Տա Տունգի փոխարեն»:

Լոտոսի Բուրմունքը շտրհակալություն հայտնեց նրան բարեսրտության համար, բայց ասաց, որ չպետք է դա անի:

Տիկին Հոուն ուտելիք էր պատրաստել Լոտոսի Բուրմունքի համար, բայց նա մի պատահ իսկ չկերավ ամբողջ օրը: Նա շարունակում էր լուռ արցունք թափել: Տիկին Հոուն մնաց նրա հետ, որ գիշերն ընկերակցի:

Ութ օր ոչ մի պաշտոնական լուր հնարավոր չէր ստանալ: Լոտոսի Բուրմունքն ամեն առավոտ գնում էր մեծ բանտի մոտ, բայց նրա խնդրանքը՝ տեսնել ամուսնուն գոնե մեկ րոպեով, միշտ մերժվում էր: Աջուձախ զանազան խոսակցություններ էին տարածվում, եւ երբ էլ դրանք նրա ականջով էին ընկնում, չէր հրաժարվում էր դրանց հավատալ: Այդուհանդերձ, նա իրեն զգում էր ինչպես մի մրջյուն տաք ու այրող ջեռոցում, եւ մեկ րոպե անգամ միտքը հանգիստ չէր առնում: Նրա անկողինն ասես ծակծկող խոզաններից հյուսված խսիրով էր ծածկված, աթոռը՝ փշատերեւով լի բարձով, իսկ կերակուրը հող ու ցեխի համ ուներ: Գրեթե չէր հանգստանում եւ շատ քիչ էր ուտում: Աչքերը կուլ էին գնում, եւ հայացքը մթնում էր: Տիկին Յունը գրեթե ամեն օր գալիս էր Լոտոսի Բուրմունքին տեսնելու, բայց նա եւ իր ամուսինը չկարողացան թույլտվություն ձեռք բերել պետական բանտարկյալների կանանց համար, որ նրանք այցելեն արգելված բանտ: Ամեն մի օրն անցնում էր դանդաղ, ինչպես տարի:

13-րդ օրվա առավոտյան երկինքը մութ ամպերով էր պատված, եւ շուտով սկսեց հորդ անձրեւ տեղալ: Լուրեր եկան, որ բարեփոխման շարժման ներկայացուցիչ շատ ապստամբների մահապատիժը արդէն իրականացվել է Երկնային կամրջի մոտ: Որոշ մարդիկ, որ տեսել էին դա, ասում էին, թե զոհերից մեկը երիտասարդ մի տղամարդ էր, որն իր մահվանն ընդառաջ գևաց նահատակի հերոսական ոգով: Մահապատժից անմիջապես առաջ նա գոչեց՝ դիմելով այն պաշտոնյային, որ մահապատիժն ի կատար ածելու պատասխանատուն էր. «Դուք ինձ կսպանեք, բայց երբեք չեք սպանի այս շարժումը: Մեկն ընկնում է, իսկ նրա ետեւից հարյուրն է բարձրանալու»:

Սա լսելով՝ Լուտոսի Բուրմուկը դողաց ամբողջ մարմնով: Նա եղել էր Երկնային կամրջի մոտ Պեկինում: Գիտեր, որ դա չոր վայր է, ոչ թե իրոք կամուրջ գետի վրա: Նա աղոտ հիշեց, որ ինչ-որ մեկն ասել էր, թե բախտագուշակը կանխատեսել էր, որ Տա Տունգը մեռնելու է մի վայրում, որտեղ ջուր պետք է լիներ, բայց իրականում ջուր չկա: Այդ սարսափելի մարգարեությունը պետք է որ իրականացած լիներ: Երբ կրկնեցին երիտասարդ զոհի՝ մահից առաջ ասված խոսքերը, նա լաց լինելով բացականչեց.«Ա՛խ, իմ Տա Տունգ»: Այն զգացողությունն ունեցավ, ասես պայթելով հազար կտոր է եղել, եւ ամեն մի կտորը կախված է օդում: Շուրջբոլորն ամեն ինչ սկսեց պտտվել, եւ շուտով նա ո՛չ տեսնել կարող էր, ո՛չ լսել: Ի վերջո լրիվ գիտակցությունը կորցնելով ուշաթափվեց:

Երբ ուշքի եկավ ու ևորից բացեց աչքերը, տեսավ, որ իր անկողնու առջեւ կանգնած է եւ իր ձեռքը բռնել է ոչ այլ ոք, քան իր սիրելի ամուսինը՝ Տա Տունգը:

ԳԼՈՒԽ 12

*«Թե աղմուկ հանեն հազար լեզուներ, հզոր կլինի ձայնն այդ հիրավի,
Թե միավորվեն բյուրավոր մտքեր, շուրջը կամքի պատ կծեալորվի»:*

Մարդիկ գովաբանում են «ձյան մեջ դողացողներին փայտածուխ տալու» սկզբունքը, բայց հավատարիմ են մնում «դիպակի մակերեսային ասեղնագործ նկարագարում ավելացնելու» սովորույթին: Երբ կայսր Կուանգ Սյուն եւ իր կողմնակիցները բանտարկվեցին, եւ բարեփոխման շարժումը ճնշվեց այրի կայսրուհի Յի Սիի կողմից, ազդեցիկ մանդարիններից գրեթե ոչ ոք օգնության ձեռք չմեկնեց նրանցից որեւէ մեկին, ովքեր բավականին դժբախտ եղան դրանում ներգրավված լինելու: Պարոն Յունը եւ տիկին Յունը հասկանում էին, իսկ Լոտոսի Բուրմունքը վախենում էր, որ Տա Տունգին կամ կալանավորված բարեփոխիչներից որեւէ մեկին բանտից հանելու համար առնվազն հրաշք էր պահանջվում: Նրանք ևս եւ հասկանում էին, իսկ Լոտոսի Բուրմունքը ևս եւ վախենում էր, որ տասնիններորդ դարում, ամենայն հավանականությամբ, ոչ մի հրաշք էլ տեղի չի ունենա: Բայց իրականում մի քանի արտառոց իրադարձություն, որոնք կարող էին գրեթե հրաշքեր համարվել, արդեն տեղի էին ունեցել մի քանի օրվա ընթացքում: Նախ՝ գեներալ Յուան Շի-Կային, որ բարեփոխման շարժման ամենաջերմեռանդ եւ ազդեցիկ կողմնակիցն էր, ինչպես ևս երիտասարդ կայսեր ամենաանկեղծ ու հավատարիմ հետետորդը, ազատության մեջ էին թողնել, մինչդեռ իր ընդհատակյա ընկերներին ձերբակալել էին: Երկրորդ՝ փոխանակ իր արձակուրդը Պեկինում անցկացնելու, ինչպես միշտ էր արել, եւ տքնաջան աշխատելու Տյանցզինում, որտեղ իր յամենն էր, Յուանը, երբ սկսվել էր պետական հեղաշրջումը, գնացել էր Տյանցզին՝ մի քանի օրով հանգստանալու: Եվ վերջապես՝ երբ Պեկին էր վերադարձել Տյանցզինում անցկացրած իր կարճատեւ արձակուրդից հետո ու լսել էր, որ Տա Տունգը բանտարկված է եւ պետական հանցագործության համար դատապարտված մահապատժի, անմիջապես գնացել էր իշխանությունների մոտ եւ մեկ ակնթարթում ազատել տվել նրան: Ոչ ոք իրականում չգիտեր էլ, թե ինչու Յուանը որոշեց այդպես անհապաղ ազատ արձակել տալ Տա Տունգին, բացի 9-րդ համարի տիկնոջից, որն այն քիչ կանանցից մեկն էր, որ կարողանում են խոսել հոնքերով եւ լսել աչքերով: Երբ ևս ամուսնուն ասաց, որ ստիպված է եղել հանդուրժել այդ հանդուզն

երիտասարդ ապստամբի կնոջ անտանելի այցելությունը, վերջիս բացական էր. « Կինը պետք է որ նյարդայնացած լիներ: Ուզում էր, որ օգնեմ իր ամուսնուն, երբ նա այդպիսի լուրջ հանցանք էր գործել»:

«Խեղճ կին: Չեմ կարծում, թե այդ մասին որեւէ բան գիտեր, մինչև մի փոքր չպատմեցի: Ակնհայտ է, որ ամուսինը նրան ոչինչ չի ասել...»:

«Երեւի հիմա՞ր կին էր»:

«Ոչ, ընդհակառակը»:

«Հըմ: Շատ հազվադեպ է լինում իր խելացի կնոջից գաղտնիք պահող տղամարդ»:

Յուանը մի պահ լռեց, եւ Տիկին համար 9-ը գիտեր, որ ինքն ակամա մի կյանք է փրկել:

Ամսի 13-ին, երբ հայտնի դարձավ Պատիժների խորհրդի մեծ բանտում, որ մահապատիժը տեղի է ունենալու այդ օրը եւ որ յոթ բանտարկյալներ, որոնցից մեկը Տա Տունգն էր, դուրս են բերվել իրենց պատժացներից, թվում էր՝ նրա կյանքն արդեն վերջացած է: Բայց մինչ մյուս վեցին տարան մի տեղ, որ կոչվում էր «նախապատրաստական սենյակ», որպեսզի շղթայակապ անեին ու պիտակ փակցնեին օրհասական այդ առիթով, Տա Տունգին տարան բանտապետի մոտ: Այս փոքրիկ պաշտոնյան հանկարծ դարձել էր չափազանց սիրալիր անձնավորություն եւ Տա Տունգին ասաց, որ արքունի պալատում մեծ ազդեցություն ունեցող մեկը նրա համար ներում է ձեռք բերել այրի կայսրուհուց: Տա Տունգին ստիպեցին ստորագրել մի տեսակ զոջման թուղթ, որը, ինչպես բանտապետն ասաց, զուտ ձեւակալության համար էր: Այնուհետեւ այս սիրալիր պաշտոնյան շնորհավորեց նրան արտակարգ բարեհաջող ճակատագրի համար եւ հրաժեշտ տվեց: Երբ մեծ բանտի դարպասները մեկը մյուսի ետեւից բացվեցին, որպեսզի նա անցնի, եւ երբ վերջապես նա ինքն իրեն գտավ կանգնած գլխավոր մուտքից դուրս, հազիվ էր հավատում, որ երազ չի տեսնում: Լոտոսի Բուրմուկը նույնպես չէր կարողանում հավատալ, որ երազ չի տեսնում: Նրա համար Տա Տունգի ազատվելն ու վերադարձն իր փոքրիկ սենյակը վերածել էին հնետրոգ երկնքի: Եվ նրա երջանկությունը պսակելու համար մի շատ ճոխ խնջույք կազմակերպվեց համքարության հանրակացարանում՝ գեներալ Յուան Շի-Կայի հրամանով: Եթե խնջույքին ժամանե՞ր՝ գեներալ Յուանը ոչ մեկի համար կասկած չէր թողնի, որ ինքն էր այն մարդը, որ ազատ արձակել էր տվել Տա Տունգին: Քանի որ Լոտոսի Բուրմուկը շատ էր ուզում նշել ամուսնու անսպասելի տունդարձը եւ քանի որ ինքն անկարող էր ինչ-որ բան պատրաստել, որովհետեւ դեռ բավա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

կանին թույլ էր, այս պատեհաժամ ընծան կրկնակի ցանկալի էր ու ողջու-
նելի: Նրան թվում էր, թե Յուանը ոչ միայն շատ խորամիտ, այլև նաև շատ
բարեկիրթ է: Համառոտ մի գրությամբ, որն ուղեկցում էր այս հյուրասիրու-
թյանը, գեներալը ներողություն էր խնդրում, որ չի կարող իր պարտակա-
նությունը կատարել՝ անձամբ ներկա գտնվելով, ինչպես պարտավոր է
անել հյուրընկալողը, որովհետև մի քանի նախկին պարտավորություններ
խանգարում են այդ անել: Հետեւաբար, նա ստիպված էր «գիտու թասերն
ու գավաթները տեղափոխել իր տնից պատվո հյուրի տուն, որի հրահանգ-
ները շատ կուզեր լսել»: Նա հույս էր հայտնում, որ այս չափազանց անհա-
ճո հյուրասիրությունն այն «վախը մեղմելուն» է ծառայելու, որ հնարավոր
է ապրած լինել Տա Տունգը, երբ փակված էր բանտում: Թվում էր՝ Տա Տու-
նգն անտարբեր էր այն պատվի հանդեպ, որ Յուանն էր իրեն շոայյում: Եթե
Լոտոսի Բուրմունքը ժամանակին չկանխեր, նա պետք է հրաժարվեր հյու-
րասիրությունն ընդունել: Նա ասում էր, որ միևն մյուս բարեփոխիչները հե-
տապնդման զոհ էին դարձել, հարկ չկար, որ ինքը զվարճանար: Սակայն
երբ մատուցվեցին ախորժատես ոտեստները, նրա քաղցն ավելի սրվեց,
քան ինքը կարող էր դիմանալ: Անցած ութ օրերին պատշաճ կերակուր չէր
կերել: Երբ սկսեց պատմել Լոտոսի Բուրմունքին, թե ինչ էր արել Յուանը
բարեփոխման շարժման հանդեպ, աստիճանաբար մոռացավ իր որոշու-
մը՝ չդիպչել այն ուտելիքին, որ իրեն տրվել է մի մարդու կողմից, որը, ինչ-
պես ինքն էր ասում, դավաճանից պակաս չէ: Կերակրի փայտիկներն ավե-
լի ու ավելի արագ էին շարժվում նրա ձեռքին, եւ, ի վերջո, չէր կարողանում
մեկ նախադասություն իսկ ավարտել առանց նախապես երկու-երեք պա-
տառ կուլ տալու:

Երբ բարեփոխիչներն զգացել էին, որ հաստատ հանդիպելու են շարժ-
ման դեմ ուղղված վճռական հակազդեցության, հասկացել էին, որ առանց
ռազմական աջակցության պարզապես դատապարտված են: Երիտա-
սարդ կայսրը պարզապես ձեռական ղեկավար էր, ուրիշ ոչինչ: Այրի կայս-
րուհին միայն ձեռակառն էր պաշտոնաթող: Ամեն բան դեռ նրա ձեռ-
քում էր: Կայսրը ոչ միայն զուրկ էր իշխանությունից, այլև նաև չափազանց
թույլ էր ու երկչոտ: Ամեն անգամ, երբ նրա հզոր մորաքույրը բարձրացնում
էր ճկույթը, նա դողում էր: Շարժման կողմնակիցների մեջ Յուանը նրանց
միակ հույսն էր: Ուժեղ մի տղամարդ, մայրաքաղաքին բավականին մոտ
տեղակայված լավ սպառազինված բանակով, նա պետք է գործուն մաս-
նակցություն ունենար պետական հեղաշրջմանը, որպեսզի կանխեր իրենց
հակառակորդների կողմից ցանկացած հնարավոր գործողություն: Կա-

նում եւ Լյանում բազմաթիվ խորհրդակցություններ էին լինում գիշերը, ահա թե ինչու Տա Տունը միշտ ուշ էր տուն գալիս: Երբ նրանց հաջողվել էր կայսրին համոզել, որ Յուանին արագ առաջ քաշի ծառայության մեջ, որոշվել էր, որ Այրի կայսրուհին պետք է զրկվի իշխանությունից, որ մայրաքաղաքային ևահանգի տեղապահ Չժուն Լուն, որը կայսրուհու զարմիկն էր, ինչպես ևաւ դրածոն, պետք է ձերբակալվի, մահապատժի ենթարկվի եւ փոխարինվի Յուանով: Ամսի 3-ի գիշերը նրանք սա մանրամասն քննարկեցին եւ ծրագրեցին Յուանի ևստավայրում մինչեւ հաջորդ առավոտ ժամը երեքը: Չնայած այն բանին, որ ևա Չժուն Լուի ևախկին ենթական էր, Յուանի հավաստիացումները բարեփոխիչներին եւ նրա հավատարմությունը միապետին ոչ մի կասկած չէին թողել որեւէ մեկի մտքում: Քանի որ ևա առաջ էր քաշվել Չժուն Լուին հավասար եւ նրանից անկախ աստիճանի, բնական էր ենթադրել, որ նրա հայտարարություններն անկեղծ են: Ամսի 5-ի առավոտյան կայսրի մոտ իր վերջին ընդունելության առիթով նրա խոսքերը ինչու էին այնպես, ասես սրտի խորքից էին բխում: Նա երդվում էր, որ կսատարի Նորին Մեծությանը մինչեւ արյան վերջին կաթիլը, որ եթե անգամ իր յարդը եւ ուղեղը ճզմեին, կոխկրտեին գետնի վրա, ինքը չէր համարի, թե բավարար չափով է իր երախտագիտությունն արտահայտել Նորին Մեծության հանդեպ: Որպեսզի նետովի հուր ու ջրի մեջ, հավելել էր ևա, իրեն անհրաժեշտ է Նորին Մեծության ընդամենը մեկ բառը: Այն ժամանակ, երբ ևա գնացել էր Տյանցզին՝ այնտեղ, ինչպես ասում էր, ամրացնելու իր ռազմական պատրաստությունները, Չժուն Լուն գաղտնի եկել էր Պեկին եւ Այրի կայսրուհուն Ամառային պալատից բերել էր Արգելված քաղաք: Եթե Յուանը չէր հայտնել նրանց, ուրիշ էլ ո՞վ կարող էր մատնած լինել: Ու հիմա բարեփոխման առաջնորդներից վեցը մահապատժի էին ենթարկված, եւ շատ ուրիշներ դեռ բաւտում էին: Չինաստանի ապագան մութ էր, քան երբեւէ:

«Ես մասամբ մեղավոր եմ քեզ Պեկին բերելու եւ հետեւաբար՝ Բարեփոխման շարժման մեջ ներգրավելու համար: Առաջ դու ավելի շատ հակված էիր հետեւելու բժիշկ Սուն Յաթ-Մենի հեղափոխությանը, քան հետեւելու պարոն Կան Յու-Վեյի Բարեփոխման շարժմանը: Ասում էիր, որ բարեփոխումը բավական չէ»:

«Յուանի եռանդուն աջակցությամբ թվում էր, թե կարող ենք հաղթահարել մեր ճանապարհին ցանկացած խոչընդոտ: Բարեփոխումն, ի վերջո, ավելի լավ է, քան դրա բացակայությունը: Ո՞վ կմտածեր, թե Յուանը երկու երես ունեցող մարդ է»:

«Ե՛ս: Նա, ով չափազանց պատրաստ է քաղցր խոսքեր ասել, ամենայն հավանականությամբ քեզ դառն հիասթափություն կպատճառի: Բացի այդ, Յուանը փորձված գայլ է քաղաքականության մեջ եւ, անկասկած, կշեռքին էր դրել իր անձնական առավելություններն ու թերությունները: Նա պետք է որ առաջին հերթին ինքն իրեն հարցրած լինի. «Ի՞նչ եմ ձեռք բերում կամ կորցնում, եթե հավատարիմ մնամ բարեփոխիչներին, եւ ի՞նչ եմ ձեռք բերում կամ կորցնում, եթե խաբեմ նրանց ու դավաճանեմ»: Պատասխանը պարզ էր: Եթե նա հավատարիմ մնար շարժմանը, կա՛մ առաջ-խաղացում կունենար, կա՛մ գլուխն ուներին չէր մնա: Բայց եթե դավաճաներ նրանց, միեւնոյն է առաջխաղացում կունենար, միայն մեկ տարբերությամբ, որ դա կաներ Այրի կայսրուհին՝ կայսրի փոխարեն: Եվ ոչ մի բան կորցնելու վտանգ էլ չէր լինի իր համար...»:

«Իսկ իր պատի՞վը»:

«Երկու դեպքում էլ դա կորցնելու էր: Բարեփոխիչներին հավատարիմ մնալով՝ նա, պահպանողականների աչքում, դավաճանում էր իր նախկին վերադասին՝ Չժուն Լուին: Սակայն դա էական չէր: Ոչ մի պաշտոնյա իր պատիվը փետուրից ավելի կարեւոր չի համարում: Յուանն զգույշ ու շրջահայաց մարդ է, նա պետք է նախ եւ առաջ անվտանգություն ապահովի: Տիրահոչակ վարչապետ Յաո Յաոյի նման նա մտածում է՝ «ավելի ապահով է դավաճանել ամբողջ աշխարհին, քան որեւէ հնարավորություն թողնել, որ ինչ-որ մեկը դավաճանի քեզ»: Պետք է մտածե՞իք այս մասին»:

«Մենք մտածում էինք միայն երկրի ապագայի մասին»:

«Այսքանն ասում եմ ոչ թե նրա համար, որ սիրում եմ մարգարեանալ, երբ արդեն մի բան տեղի է ունեցել, այլ, որ չպետք է այս ամբողջ գործն ինձնից գաղտնի պահե՞իք: Երբեմն կողմնակի մարդը, դեպքերի խառնարանից դուրս լինելով, կարող է ավելի սառը դատել եւ հստակ պատկերացում ունենալ ամբողջ գործի մասին, քան նրանք, ովքեր խորությամբ թաղված են դրա մեջ»:

«Թվում է՝ դու ավելի լավ ես հասկանում Յուանին, քան մեզնից որեւէ մեկը: Իսկ ինչո՞ւ պետք է նեղություն կրե՞ր՝ ինձ բանտից հանելու»:

«Այս պահին չեմ կարող ասել: Բայց խնջույքն այդպես անհապաղ կազմակերպելը հստակ նշան է այն բանի, որ նա ուզում է իմանաս, թե ով է քեզ բանտից ազատել: Ակնհայտ է, որ քեզ հետ կապված ծրագրեր ու մտադրություններ ունի: Երբ մի մարդ փորձում է կաշառել քեզ բարեհաճությամբ, զգուշացիր»:

«Նա շատ միամիտն է, եթե կարծում է, որ ես կարող եմ կաշառվել, երբ

իմ ընկերները գլխատված են»:

«Միամիտն է, եթե այդքանով բավարարվի»:

Մինչ Տա Տունգն արագ խժռում էր Յուանի ճաշատեսակները, Լոտոսի Բուրմունքը գրեթե ոչինչ չէր ուտում: Հիմա նա ասում էր, որ հիշելով քաղաքական այս փոթորկից տուժածներին՝ համարյա ամբողջությամբ կորցրել է ախորժակը: Նա չէր կարող արցունք չթափել, ինչպես ինքն էր ասում արցունքները հոսում էին, երբ մտածում էր այդ օրը նահատակ դարձած բարեփոխիչների կանանց եւ երեխաների մասին:

Երեկոյան ավելի ուշ Սան Հո-Տիկզը ետ եկավ եւ տիկին Հոուից իմացավ, որ Տա Տունգն ազատ է արձակվել: Նա նետվեց ողջունելու իր բարեկամին:

«Երբեք չէի մտածի, թե Ձեզ կորից կտեսնեմ, Տա Տունգ»:

«Ես նույնպես երբեք չէի կարծում, թե ինձ կխնայեն»:

«Ոչ միայն դա: Վաղը մեկնում եմ: Չէի կարողանա Ձեզ տեսնել, եթե վաղը դուրս գայիք»:

«Այդքան անսպասելի մեկնո՞ւմ ես: Դու նույնպե՞ս սեւ ցուցակում ես»:

«Չգիտեմ: Պետք է որ լինեմ: Հեռանալու եմ այսպես թե այնպես: Էլ ոչ մի համալսարան: Այստեղ անելու բան չկա: Այսօրվա մահապատժին եմ ներկա եղել: Շատ ահավոր էր: Հետո ուսանողների զանգվածային հակահավաքներ: Հարյուրավոր ներկաներ կային: Պահակազորի զինվորները խոչընդոտեցին: Որոշել եմ Կանտոն գնալ: Միանալ հեղափոխականներին»:

«Ասա, շա՞տ մարդ է հետդ գալիս»:

«Հազարավոր: Բայց ոչ ինձ հետ: Երկրի բոլոր ծայրերից: Հազարավորներ ու բյուրավորներ: Միայն մեկ պահանջով՝ «Կորչեն մանջուրները»: Միայն մեկ նպատակով՝ «Չինաստանի վերածնունդ»: Միգուցե չտեսնենք դա մեր ժամանակներում, բայց պետք է փորձել: Շատ ուրիշներ կհետեւեն մեզ, եթե մենք անհաջողության մատնվենք»:

«Դա ժամանակ կպահանջի, բայց երբեք չի մարի»:

«Նորից Պեկին կգամ, եթե հաջողության հասնենք»:

«Ո՞ր եք գնալու, եթե անհաջողության մատնվեք, պարոն Տիկզ», - միջամտեց Լոտոսի Բուրմունքը:

«Ձկնորս կլինեմ ամայի մի կղզում: Հա-Անի փերի մոտ: Չինաստանի ամենահարավային մեծ կղզու: Ամենագեղատեսիլ վայրն է աշխարհում: Հրաշալի մեղմ եղանակ է ամբողջ տարին: Դրախտ՝ երկրի վրա: Ո՛չ հասարակություն, ո՛չ օրենք, ո՛չ պաշտոնատար անձինք: Կարծում էի, որ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

հարեան շրջաններից շատ մարդիկ են գալիս այդտեղ: Ոչ ոք չի համարձակվում այդտեղ մնալ: Ամենահիմար անհեթեթություն է: Մի անգամ եղել էմ այդտեղ, երբ տղեկ էի: Ինքնաշեն լաստով էի գնացել: Մնացի մեկ շաբաթ: Սրգերով ու ձկով էի ապրում: Քնում էի քարանձավում: Շատ ավելի սրտառուչ էր, քան անմահ մարդու կյանքը: Օտողներս ամեն տեղ փնտրել էին: Դաժան ծեծ կերա, երբ վերջապես գտան ինձ»:

«Պետք է որ աստվածային վայր լինի»:

«Հա, արժե, որ դրա համար ծեծ ուտես: Մնաք բարով երկուսդ էլ: Իրերս պետք է դասավորեմ»:

Եվ նա դուրս նետվեց սենյակից:

Տա Տունգը լուռ էր: Լուտոսի Բուրմունքը որոշ ժամանակ հետետում էր նրա դեմքի արտահայտությանը:

«Այդ կղզին քո տեղն է, Տա Տունգ»:

«Այո: Բայց ես կգնամ այնտեղ միայն այն ժամանակ, երբ մանջուրները գահընկեց կարվեն»:

«Իսկ եթե դա քեզ չհաջողվի, ո՞ր ես գնալու»:

«Ոչ մի տեղ, բայց փորձելու եմ նորից ու նորից, մինչև որ գահընկեց լինեն»:

Նախքան կգնային հանգստանալու, մեկ այլ այցելու հայտնվեց: Պարոն Յունը, լսելով, որ Տա Տունգն ազատվել է, եկել էր այցելելու երիտասարդ զույգին: Նա չափազանց ուրախ էր՝ կրկին տեսնելով Տա Տունգին, բայց շատ էր ցավում՝ իմանալով, որ Լուտոսի Բուրմունքը լավ չի զգում: Նա շատ ափսոսեց, որ իր կինը չի կարողացել գալ եւ տեսնել Լուտոսի Բուրմունքին, որովհետեւ մաջուկի երեկոյթում զբաղված էր: Իմանալով, որ պարոն Յունը մարդկայնորեն հնարավոր ամեն ինչ արել է օգնելու համար բանտարկված բարեփոխիչներին, Տա Տունգը շնորհակալություն հայտնեց նրան եւ հարցրեց, թե ինչ կարող է լինել մյուսների հետ:

«Գործերը շատ վատ են ներկայումս: Բացի այն վեց ընկերներից, որոնք գործի համար իրենց կյանքերը զոհաբերեցին այսօր, շատ ուրիշներ աքսորվելու են սահմանակից նահանգներ կամ ամբողջ կյանքում փտելու են բանտերում: Կանը քիչ էր մնում բռնվեր Շանհայում: Հասանելի լինելով՝ Բրիտանական հյուպատոսն այդտեղ օգնեց նրան եւ անմիջապես ուղարկեց Հոնկոնգ: Լյանը Պեկինից գաղտնի հեռացավ ճապոնական դիվանագիտական առաքելության օգնությամբ եւ այժմ Ճապոնիայի ճանապարհին է: Զգիտեմ որտեղ են Վեն ընտանիքի անդամները: Բոլոր մյուսները կամ թաքնվել են Տյանցզինի օտարերկրյա կոնցեսիոն ձեռնարկու-

թյուններում՝ սպասելով հեռանալու հնարավորության, կամ արդեն փախել են հարավ: Դուք միակն եք բարեփոխիչներից, որ այստեղ եք՝ վագրի բերանում: Իմ խորհուրդն է Ձեզ՝ հեռացեք այստեղից, քանի դեռ հնարավորություն ունեք դա անելու»:

«Բայց ո՞ր»:

«Ճապոնիա՝ միանալու Լյանին, կամ Հոնկոնգ՝ միանալու Կանին...»:

«Եթե կարողանամ հասնել Հոնկոնգ, մեկ այլ կազմակերպություն կա այնտեղ, որին կուզեի միանալ...»:

«Բժիշկ Սուն Յաթ-Սենի Շին Չուն Հո՞ւյը՝ Չինաստանի վերածննդի ընկերակցությունը»:

Տա Տունգը չպատասխանեց: Նրա լռությունն իր համաձայնությունն էր:

«Ես նրա հետ ծանոթացել եմ երկու տարի առաջ Նյու Յորքում: Նա լավագույն բանախոսն է, որին երբեմն լսել եմ: Որոշ մարդիկ ծիծաղում էին նրա վրա եւ դիմում էին մականունով՝ «Սուն, մեծ թնդանոթ»՝ կարծելով, թե շատ է պարծենում: Բայց ես հավատում եմ նրան: Նա ինձ ասում էր, որ բարեփոխումը բավարար չէ Չինաստանը փրկելու համար: Եթե լսեի նրա խորհրդին, Պեկին եկած չէի լինի: Երբ ժամանեցի Հոնկոնգ, նա դեռ Լոնդոնում էր: Հետո կինս հիվանդ էր, այնտեղի կլիման նրա համար բարեւաաստ չէր: Դրա համար էլ, երբ հիվանդանոցից դուրս գրվեց, մենք նավով մեկնեցինք հյուսիս, որպեսզի միանանք բարեփոխման շարժմանը: Կարծում եմ՝ Սուն Յաթ-Սենը դեռ արտասահմանում է, ինչպես նաեւ Ճապոնիայում, ներկայումս... »:

«Իսկ ո՞վ է ընկերակցության պատասխանատուն, եթե նա դրսում է»:

«Ոմն պարոն Յան, Ֆուցզյանից, ընկերակցության ձեւական նախագահն է: Նրա գլխավոր գրասենյակը Հոնկոնգում է: Դա որպես առեւտրային ընկերություն քողարկված մի վայր է, որ կոչվում է Չինե Հան Հոնգ, Սթանթոն փողոցում, եւ գաղտնիք չէ, որ այնտեղ սիրով ընդունում են բոլոր հեղափոխական երիտասարդներին: Բրիտանական իշխանությունները հանդուրժում են նրանց, քանի դեռ նրանք չեն խաթարել հասարակական անվտանգությունը նավահանգստում: Եթե որոշել եք նրանց միանալ, գնացեք անմիջապես: Եվ եթե ինձ հիշատակեք որպես Ձեր բարեկամի, կտեսնեք, որ դա կօգնի»:

«Բաներ կան, որոնք ավելի հեշտ է ասել, քան անել»:

«Եթե Ձեր դժվարությունը փողի հետ է կապված, խնդրում եմ բնավ չանհանգստանալ: Ես դեռ այդքան չեմ սևանկացել...»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Ես չեմ կարող Ձեզնից փող վերցնել: Հետո չեմ կարողանալու վերադարձնել: Բացի այդ՝ կիսս այնքան էլ լավ չե...»:

«Ոչ մի լուրջ բան չկա,- ասաց Լուտոսի Բուրմուռը:- Շուտով լավ կլինեմ»:

«Ուրեմն ձեզ շուտափույթ փող է հարկավոր: Թույլ տվեք տեսնեմ, թե ինչ ունեմ ինձ մոտ»:- Երբ նա իր դրամապանակից թղթադրամների փոքրիկ մի կույտ հանեց, շարունակեց կատակով. «Չգիտեք, թե որքան կուզեի, որ այնքան հեշտությամբ թողնեի՞ իմ կիսն ունենար Ձեր կնոջ որոշ հիվանդություններ, որքան ես եմ թողնում, որ Դուք ունենաք իմ փողերի մի մասը: Ափսոս, որ երբեմն մարդ չի կարող մի քիչ հիվանդություն փոխ առնել իր բարեկամներից: Գարնանը, երբ կիսս այնքան լավ չէր, ստիպված էր մնալ հիվանդանոցում մի քանի շաբաթ: Եվ դա ինձ համար այն ժամանակ ավելի քան երեք հազար թանգի խնայողություն եղավ: Բժիշկները, բուժքույրերը եւ մյուս ծախսերն ընդամենը ութ հարյուր թանգ արժեցան ինձ համար, բայց նա երկու ամիս չէր կարողանում մաջուկ խաղալ կամ խառնություն գնումներ կատարել: Ես միշտ համարում եմ, որ բախտս խիստ բերել է, եթե նա ամիսը երկու հազարից ավելի չի ծախսում»:

Չնայած Տա Տունգի համառ եւ Լուտոսի Բուրմուռի թույլ բողոքներին՝ նա հինգ հարյուր թանգի չափ թղթադրամ թողեց նրանց, բարի գիշեր մաղթեց եւ գնաց:

«Էլ քեզ պահող ոչինչ չկա, Տա Տունգ,- վճռականորեն ասաց Լուտոսի Բուրմուռը: - Գիտեի, որ կուզեիր միանալ պարոն Տինգին, եթե բավարար չափով գումար ունենայիր, եւ այժմ պարոն Յունը տրամադրել է այդ գումարը»:

«Բայց հիմա դու չես կարող ճամփա ընկնել...»:

«Ես չեմ գալիս: «Տղամարդու ձգտումը չի սահմանափակվում տարածությամբ», եւ ամեն մի հնազանդ ու բարեխիղճ կին փորձում է բեռ չդառնալ իր ամուսնու գործունեությանը: Ես այն կանանցից չեմ, որոնք չեն դիմանում իրենց տղամարդու կարճատեւ բացակայությանը, անգամ երկարատեւ բացակայությանը կդիմանամ, եւ հավատում եմ, որ մանջուրների վարչակարգը չի կարող շատ երկար տեսնել: Գուցե շատ շուտով կկարողանանք հանդիպել Հայ-Անի ափի մոտ գտնվող այն ամայի կղզում»:

«Եթե միանամ հեղափոխականներին, չեմ կարողանա պաշտպանել քեզ, իսկ մեր ունեցած փողը շուտով կսպառվի»:

«Բավականին զավեշտալի է, որ մինչ դու փորձում էիր գահընկեց անել Այրի կայսրուհուն, ես փորձում էի ծառայության մտնել իր մոտ: Լսած

պետք է լինես, որ ես իրեն շատ արվեստապաշտ անձնավորություն է համարում եւ սիրում է նկարել ու գծանկարել: Վերջերս ես մի շատ լավ տիկնոջ է վարձել, նկարչուհու՝ տիկին Սյառյին, որ հարավից է, վարձել է, որպեսզի ես վերահսկի Արգելված եւ Ամառային պալատների բոլոր պալատական լամպերի նորոգումը: Շին Սենից դուրս գտնվող՝ բոլոր լամպերների ու լամպերի խանութների նկարիչները հրավիրվել էին ներկայացնելու իրենց աշխատանքը, եւ նրանցից միայն մի քանիսն էին որակյալ: Քանի որ շատ նկարիչներ էին պետք, նրանք ամենուր փնտրում էին, որպեսզի ավելի շատ որակյալ նկարիչներ գտնեն: Իմ ոճը կարծես թե տիկին Սյառյի հավանությանն էր արժանացել, այնպես որ՝ որոշվել էր, որ կընդունեն իմ նկարածները: Մեկ թաել են վճարում, եւ ինձնից մեկ օր էլ չի պահանջվում մի գործի համար: Հազարավոր լամպեր ու լամպերներ պիտի նորոգվեն յուրաքանչյուր մի քանի ամիսը մեկ, այնպես որ՝ մեր եկամուտը որոշ ժամանակ ապահովված է, իհարկե, եթե դուք՝ ժողովուրդը, նրան շատ շուտ չտապալեք»:

«Ե՞րբ ես այդ բաներն արել: Ես ընդհանրապես չգիտեի»:

«Իհարկե չգիտիր: Դա գաղտնիք էր, եւ իմ նկարները ներկայացվել են իմ օրիորդական ազգանունով: Համենայն դեպս դու չափից ավելի ուշադրություն ես դարձնում 9 համարի տիկնոջը... եւ 9 համարի տիկնոջ բանաստեղծություններին»:

«Գիտես, որ դա ճիշտ չէ»:

«Դա, բոլոր դեպքերում, քո պատրվակն էր: Դու ինձ հետ խոսում էիր ոչ թե բարեփոխման, այլ բանաստեղծության մասին»:

«Երկուսն էլ՝ եւ՛ բարեփոխումը, եւ՛ 9 համարի տիկնոջ բանաստեղծությունները, այժմ պատրանք են դարձել, եւ կարծում եմ պալատական լամպերների նկարչի քո աշխատանքը կարող է ավելի երկար տեւել, քան մենք կցանկանայինք»:

«Այդ դեպքում լավ քաղաքականություն է՝ երկու կողմի վրա էլ խաղաղորոյք կատարել,- Լոտոսի Բուրմունքը փորձեց ժպտալ:- Եթե տանով տաս մեկ կողմում, կհաղթես մյուսում: Ես այսպիսի քստմեյի աշխատանքի կարիքը չեմ զգա, երբ կարողանամ քեզ միանալ Հարավային ծովի այդ կողմում»:

Ռեւե խելամիտ երիտասարդ կանանց համար միանգամայն սովորական երեսույթ է Չինաստանում անձնվեր ամուսիններին ուղարկել հեռու՝ հետամուտ լինելու իրենց գործերին, եւ քանի որ այդպիսի բաժանումը տարիներ կարող է տեւել, մարդկային է նաեւ, որ նրանց համար անտանե-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

լի պիտի լինի սրտակեղեք բաժանման անհրաժեշտությունը: Ի սեր կնոջ՝ ամուսինը փորձելու էր հետաձգել բաժանումը, եւ ի սեր ամուսնու՝ կինը փորձելու էր համոզել նրան, որ գնա: Տա Տունգի եւ Լոտոսի Բուրմունքի պարագայում առիթը հրատապ էր, եւ Տա Տունգը հասկանում էր, որ անկախ այն բանից, թե ինչպիսի դժկամությամբ է ինքն ստիպված թողնել կնոջը, պետք է հնարավորինս արագ հեռանա: Ժամանակը սուղ էր եւ շտապել էր պետք:

«Ես քեզ համար մի լավ բժիշկ կգտնեմ,- առաջարկեց Լա:- Հենց որ քեզ լավ զգաս, կփորձեմ Շանհայում կապվել Տինգ Հո-Սանի հետ»:

«Չէ: Դու պետք է վաղը գնաս նրա հետ: Ես իսկապես լիովին առողջ եմ, միայն մի փոքր քունս է տանում եւ երբեմն հոգնում եմ: Կարծում եմ ինձ հիմնականում չքնելն է տանջում, որ, հավանաբար, ստամոքսի թեթեւ խանգարումից է: Լուրջ բան չկա: Հաստատ համոզված եմ, որ շատ շուտով ևորից լավ կլինեմ եւ կվայելեմ ուտելիքս: Երբեք ինձ չեմ ների, եթե դու ևորից վազրի բերանն ընկնես իմ պատճառով»:

«Ծայրահեղ դեպքում, պետք է սպասեմ, մինչեւ հետո մնացող մեկին գտնես...»:

«Ինչո՞ւ պետք է մեկը հետս մնա»:

«Դու վախենում ես ուրվականներից, իսկ այս սենյակը...»:

«Ո՛չ, չեմ վախենում»:

«Չես կարող ինձ խաբել: Երբեք ոչ մի անգամ մութ ժամանակ մենակ չես գնացել ներսի սենյակ...»:

«Դե, խոստովանեմ, որ... մի փոքր... սկզբում»:

«Մի փոքր չէ՛...»:

«Ուրեմն, ոչինչ, փաստորեն, ուշադրությունիցդ չի վրիպում, չնայած ցրված ու անուշադիր ես թվում»:

«Մարդ պետք է իմանա իր կողակցին: Եվ այն սարսափած հայացքը, որ ունեիր, երբ Տինգ Հո-Սանն ասաց, որ այս սենյակներում մարդ է մահացել մեր տեղափոխվելուց մի քանի օր առաջ: Դու անհոգ պատասխանեցիր, որ ուրվականներից չես վախենում: Ոչ ոք, եթե իրոք չի վախենում, այդպես ասելու կարիք չունի»:

«Մենք այլընտրանք չունեինք: Ստիպված էինք տեղափոխվել, եթե նույնիսկ ուրվականն իրոք երեսար այդտեղ»:

«Ես գիտեի եւ ոչինչ չասացի, իմ սիրելի Լոտոսի Բուրմունք: Եվ երբ բանտում էի, մտածում էի մթությունից քո վախի մասին...»:

«Բայց ես այլեւս չեմ վախենում մութ տեղը մենակ մնալուց: Իրոք, վեր-

ջին մի քանի գիշերը ես խնդրել եմ տիկին Հոուին, որ ներդրումն չքաշի՝ գալ եւ ինձ ընկերակցել »:

«Այդ ինչպե՞ս»:

«Չգիտեմ: Կարծում եմ՝ դա պարզապես մանկական վախ էր, որից այժմ ազատվել եմ: Վերջերս Լույսիսկ երբ ոչ ոք չկար ամբողջ բակում, ես չեմ էլ զգացել, որ մենակ եմ: Թե ինձ չես հավատում, դուրս եկ, իսկ ես կմնամ այստեղ մթնում»:

«Շատ լավ: Կգնամ Տիկն Հո-Սանին այս մասին ասելու»:

«Հա, գնա: Դա ճամփորդության ժամանակ ընկեր ունենալու միջոց է»:

Նրան փորձելու համար Տա Տունգը, Լախըն Լեթս մտնելը, Տիկնին կատարած կարճատեւ այցելությունից վերադառնալիս մի փոքր սպասեց դրսում, լուսամուտի մոտ: Լոտոսի Բուրմունքը լամպը չէր վառել: Լուսամուտից ներս ընկնող՝ լուսնի աղոտ լույսի ներքո ևս ամուսնու իրենք էր դասավորում: Եվ վախի չնչին Լշույլ իսկ չէր ցուցաբերում: Շատ բան չկար դնելու: Տարվա այդ ժամանակ ճամփորդելը շատ հարմար է նրանց համար, ովքեր գրեթե ուղեբեռ չունեն, եւ Տա Տունգի Լախուկակետը՝ Կանտոնը, Գուանդունի Լահանգային Լստավայրը, այնպիսի մի վայր է, որտեղ մի ձեռք շորը միանգամայն բավարար է՝ ամենացուրտ ձմեռներն անցկացնելու, քանի որ ամբողջ տարին այդտեղ տաք եղանակ է: Ժողովուրդը հյուսիսում եւ Լույսիսկ Չինաստանի կենտրոնական մասում համարում է, որ ծայր հարավում ձմեռ չկա: Տա Տունգին ընդամենը մի շատ փոքրիկ կապոց էր պետք իր հետ տանելու, թեեւ կինը գուր փորձում էր համոզել, որ մի քիչ ավելին տանի: Ինչ վերաբերում է փողին, նրանք գրեթե վիճեցին այդ հարցով: Տա Տունգը կարծում էր՝ երկու հարյուր թաեյն ավելին է, քան իրեն անհրաժեշտ է, իսկ Լոտոսի Բուրմունքը պնդում էր, որ ևս կլոր հինգ հարյուր պետք է վերցնի՝ ասելով, թե իրենք որոշ խնայած գումար ունեն եւ, հետեւաբար, իր մոտ դեռ հարյուր թաեյից ավելի գումար կմնա, որը կարող է պահել նեղ օրվա համար:

«Ավելի լավ է դժվար լինի տանը, քան ճանապարհին»,- պնդում էր ևս, բայց Տա Տունգը վճռականորեն մտադրվել էր նրա համար ավելի շատ գումար թողնել, քանզի համոզված էր, որ հետո շատ երկար ժամանակ չի կարողանալու նրան ընդհանրապես փող ուղարկել: Ի վերջո ստիպված էր հարյուր թաեյ ավել վերցնել: Լոտոսի Բուրմունքն ասաց, որ դա արդար համաձայնեցում է, քանի որ իրենց ունեցածն ըստ էության հավասար էին բաժանում՝ փոքր-ինչ կնոջ օգտին: Վաղ աշնան գիշերը կարճ է, բայց այդ գիշերների գիշերը՝ Կուանգ Սյուի 24-րդ տարվա 8-րդ ամսվա 13-ի գիշերը,

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

թվաց, թե ակնթարթի պես անցավ: Դեռ իրար կեսն էլ չէին ասել այն ամենի, ինչ ուզում էին ասել, եւ ամենեփն աչք չթին փակել, արեւելքում հայտնվեց այն դալուկ գույնը, որ Չինաստանում սովորաբար «ծկնաճերմակ» են անվանում: Թեւեւ վառ էր զգում, Լոտոսի Բուրմուլքն շտապ վեր կացավ՝ շուտափույթ ճոխ նախաճաշ պատրաստելու, որին խնդրեց մասնակցել նաեւ Տինգին: Տինգը միակ մարդն էր, որ վայելեց կերակուրը:

Աշնան երկինքը գորշ ամպերով էր ծածկված, թեւեւ անծրեւ չէր գալիս: Գետնին սփռված թռչնած տերեւները, արեւմտյան մեղմ քամուց թշվելով, խշռոցի ընդհատ-ընդհատ ձայներ էին արձակում: Նույնիսկ Շիեն Մենի բարձրաբերձ աշտարակը, որ կարծես մինչ այդ անտարբեր էր բոլոր անցորդների նկատմամբ, ողջունեց երիտասարդ գույզին դեմքի վշտալի արտահայտությամբ: Նրանք աջ թեքվեցին եւ մտան Արեւելյան երկաթուղային կայարան՝ համարձակվելով նորից նայել քաղաքի դարպասի աշտարակին:

Երրորդ կարգի բոլոր վագոնները, ինչպես միշտ, լեփեցուն էին: Ուղեւորներն ստիպված էին ժամեր առաջ գալ, որպեսզի տեղ զբաղեցնեին: Տինգը, որ ընդմիշտ էր հեռանում մայրաքաղաքից, բավականին շատ ուղեբեռ ուներ եւ չգիտեր ինչ անել: Տա Տունգն օգնեց նրան մեկ առ մեկ դնելու իր բոլոր իրերը գնացքի կենտրոնական կամփջակին՝ հարուցելով մյուս ուղեւորների դժգոհությունը: Կայարանում կանգնած, ուղեւորներով ծանրաբեռ գնացքում օդը հեղձուցիչ էր ու վանող: Մեղմ ու սառն առավուտը փոխվում էր տոթ ու խեղդուկ օրվա: Ե՛վ Տա Տունգը, ե՛ւ Տինգը քրտնում էին ու շատ կուզեին դուրս ելնել եւ միանալ կառամատույցին կանգնած Լոտոսի Բուրմուլքին, բայց չէին համարձակվում դա անել՝ վախենալով կորցնել իրենց կանգնելու տեղը: Տա Տունգն աչքի անցկացրեց վագոնի ներսը: Նա կարողացավ այդտեղ խմբված մոտ հարյուր մարդ տեսնել: Բոլորն էլ բանվոր դասակարգին էին պատկանում: Առաջին գնացքով էին գնում, որովհետեւ ուզում էին շուտ հասնել իրենց ուզած տեղը, որպեսզի աշխատելու համար ամբողջ օրն իրենց առջեւում լինեն: չեշտ ու անհոգ կյանքով ապրող մարդիկ միշտ ավելի ուշ մեկնող գնացքով են գնում:

Առաջին անգամն էր, որ գնացք էր նստում: «Շոգեշչակի», ինչպես այն անվանում էին, հաճախակի շաչյունը նրա մտքերը խճճում էր, ինչպես կանեփի մի կապուկ: Հազար ու մի բան կար, որունց մասին կուզեր խոսել Լոտոսի Բուրմուլքի հետ, բայց չգիտեր որից սկսել: Թաքուն նայեց նրա կողմը՝ վախենալով որսալ հայացքը, եւ աչքերն արագ մի կողմ փախցրեց:

Քանի որ գնացքի մեկնելու ժամանակը մոտենում էր, Լոտոսի Բուր-

մունքը կանգնեց պատուհանի տակ եւ նայեց Տա Տունգին: Սիրտն արագ ու աղմուկով բաբախում էր, եւ նա հաշվում էր թռչող յուրաքանչյուր վայրկյանը: Որքան կուզեր, որ ժամանակը մի փոքր էլ կանգ առներ իր համար: Ինքն էլ շատ բան ուներ ասելու Տա Տունգին, բայց որոշեց ոչինչ չասել:

Երբ ազդանշան տվող տղամարդը թափահարեց իր կանաչ դրոշը եւ սուլիչը փչեց, Լոտոսի Բուրմունքը գրեթե կորցրեց ինքնատիրապետումն ու հագիվ էր զսպում արցունքները: Մինչ կառամատույցին կանգնած որոշ մարդիկ սկսեցին խոնարհվել եւ հրաժեշտ տալ գնացքում գտնվողներին, նա զգաց, որ բերանը չորացել է եւ կուլ տալը դժվարացել: Գրեթե հիվանդ էր, ռունգերը գրգռված էին: Եվ ինքն իրեն հաղթահարելով՝ բացական էր հայտնաբերում: «Տա Տունգ, ուզում եմ քեզ ասել, որ դու...»:

Շնչակի բարձրաձայն ու երկար շայունն ընդհատեց նրա խոսքերը, եւ գնացքն սկսեց փնջացնել ու շարժվել:

«Ի՞նչ ես ասում, Լոտոսի Բուրմունք»:

«Չէ, ոչինչ, պարզապես սասցի՝ շուտ-շուտ պիտի գրես ինձ»:

«Իհարկե»:

Աղջիկը մի քանի վայրկյան հետեւեց գնացքին, բայց շուտով չկարողացավ հասնել նրա ետեւից: Մեծ ու սեւ վիշապի նման, կրակ ու ծուխ դուրս փչելով, գնացքը սուզվեց-կորավ հեռվում՝ իր հետ տանելով նրա սիրելիին: Արցունքները գլորվեցին նրա այտերն ի վար, երբ գնացքն անհետացավ հեռվում, թեթեւ մշուշի մեջ:

Գեներալ Յուանը փոքր-ինչ զարմացած էր, որ Տա Տունգը չէր եկել իրեն շնորհակալություն հայտնելու ազատ արձակվելու հենց երեկոյան, բայց միանգամայն վստահ էր, որ կայցելի հաջորդ օրը: Նա իսկապես այնքան համոզված էր, թե Տա Տունգը կայցելի, որ այդ առավոտ մնաց տանը եւ ծառաներին կարգադրեց անմիջապես ներս ուղեկցել պարոն Լիին, հենց որ նա հայտնվի: Ավելի ուշ ծառան ներս հրավիրեց պարոն Լիին: Բայց այն պարոն Լիի փոխարեն, որին սպասում էր նրանց տերը, սա այն պարոն Լին էր, որին նա չէր ցանկանում տեսնել: Շիաո Մինը, լսելով խոսակցությունները, որ Տա Տունգին ներում է շնորհվել, շտապել էր Յուանի մոտ՝ համոզվելու:

«Ախ, այդ դուք եք, Շիաո Մին: Լսե՞լ եք այն լավ տորությունը, որ Ձեր համաքաղաքացի Տա Տունգը երեկ ազատ է արձակվել»:

«Ուրեմն դա ճիշտ է,- բացական էր Շիաո Մինը :- Ինչպիսի՞ բարի արարք Ձերդ Գերագանցության կողմից: Բայց, մյուս կողմից, ինչպիսի՞ անշրջահայաց արարք Ձերդ Գերագանցության կողմից»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Ասեք, խնդրեմ, ինչո՞ւ»:

«Որովհետեւ երբ բացում ես վանդակդ եւ թողնում վագրը վերադառնալուն իր բույնը, չես սպասում, որ գազանը նորից ձեռքդ կընկնի: Երբ վիշապին թողնում ես, որ վերադառնա օվկիանոսի իր տունը, հույս չես ունենալու, թե հրեշը մեկ անգամ էլ կհայտնվի ծանծաղուտի ջրերում: Դուք շատ բարի ու ողորմած գործ եք արել, Ձերդ Գերագանցություն, բայց այդպիսի անշնորհակալ եւ վտանգավոր մարդիկ, մեկ անգամ ձեռքիցդ դուրս պրծնելով, հետո անախորժություն են պատճառելու»:

Յուանը լուռ էր, անվրդով դեմքով: Շիաո Մինը չէր ուզում իր բարի մտադրություններով հարուցել Յուանի դժգոհությունը: Նա զգուշորեն հավելեց. «Ի վերջո, վստահ չեմ, թե արդեն չի գնացել: Լավ կլինի մեկին ուղարկեք, կամ ավելի լավ է՝ երկու կամ երեք հոգու, որպեսզի տեղեկանան: Եվ եթե նա դեռ Պեկինում է, համոզվեք, որ այստեղ է գալու մայրաքաղաքից հեռանալուց առաջ»:

«Անհրաժեշտություն չկա մեկից ավելի բաներ ուղարկելու: Եթե այստեղ է, կգա, իսկ եթե այնտեղ չէ, ի՞նչ իմաստ ունի շատ մարդ ուղարկելը»:

Յուանն ի վիճակի էր շատ բան տանել: Երբ բանբերից իմացավ, որ Տա Տունգը գնացել է, եւ միայն Լոտոսի Բուրմունքն է այնտեղ, միանգամայն փիլիսոփայորեն ընդունեց իր հիասթափությունը: Իսկույն մարդ ուղարկեց Շիաո Մինի ետեւից: Նրան հազար թաել արծաթ տալով թղթադրամներով Յուանն ասաց. «Այնքան ուրախ եմ, որ Տա Տունգը քաղաքականությունը զարշնչի բան է համարում եւ որոշել է առաջին իսկ հնարավորության դեպքում հեռանալ այդ հորձանուտից: Այդուհանդերձ խորապես մտահոգված եմ, որ նա կնոջն այստեղ է թողել, եւ վերջինս պետք է որ բավականին դժվարին պայմաններում լինի: Չէի՞ք տանի այս փոքրիկ գումարը նրան՝ շնորհ անելով ինձ, եւ չէի՞ք ասի, որ եթե հետագայում օգնության կարիք ունենա, պատիվ կլինի ինձ համար, եթե հարկ համարի տեղյակ պահել»:

«Իհարկե կանեմ դա»:

«Քանի որ Դուք նրա համաքաղաքացին եք, այդ նուրբ առաքելությունը Ձեզ եմ վստահում՝ հույս ունենալով, որ այնքան նրբանկատորեն կանեք դա, որ նա չի վիրավորվի իր անձնական գործերին իմ միջամտությունից: Հավաստիացրեք նրան, որ ես ինքս կգայի, եթե պատիվ ունենայի նրան նախկինում ճանաչելու»:

«Ձերդ Գերագանցությունը միշտ այդպես ողորմած է»:

Յուանը մեկ անգամ էլ հիասթափվեց: Լսելով, որ բանբեր է եկել եւ հետաքրքրվել իր ամուսնով, Լոտոսի Բուրմունքը հեռացել էր համքարային

հանրակացարանից՝ առանց որեւէ մեկին,- այդպես խոստովանեցին ու Լույսիսկ երդվեցին ծերունի Հոռնու եւ Լրա կինը,- իր Լոր հասցեն տալու: Շիառ Մինը խիստ թերահավատ էր այդ խոսքերի հանդեպ: Նա Յուանին ակնարկեց, թե Հոռուի կինն այնքան պատրաստակամորեն էր արդարաւում, որ հաստատ գիտե՞ որտեղ է Լոտոսի Բուրմունքը: Նա Լույսիսկ մտածում էր, թե աղջիկը հավանաբար դեռ թաքնվում է հանրակացարանում: Ինչ էլ լինէր, Լա չէր կարող շատ հեռու գնացած լինել, եւ ուշադիր որոնելու դեպքում անկասկած կգտնէին: Շիառ Մինն ասաց, որ իր սպասավորին թողել է մոտակայքում, որպեսզի հետեւի շենքի մուտքին:

«Ոչ, Շիառ Մին, հրամայեք Ձեր մարդուն ետ գալ,- Յուանը ժպտաց:- Դուք այսօր ինձ ցույց տվեցիք, որ շատ շնորհալի անձնավորություն եք եւ Ձեր գործը կատարում եք հիմնավորապես: Բայց որոշ դեպքերում այդպիսի արդյունավետության ու հիմնավորության անհրաժեշտությունը չկա: Այդուհանդերձ, ես անչափ գոհ եմ Ձեզնից եւ չեմ թողնի գնաք առանց ճոխ պարզելի»:

Վախենալով, որ Յուանն իրեն ազատ կարծակի դրամական պարզելով եւ որ հավանաբար Յուանի նկատի ունեցածը հազար թաւել է, Լա շտապ հայտնեց իր միտքը: Ինքը տասը հազար թաւելից ավելի էր ծախսել Յուանի վրա եւ պարզապես իր սեփական փողի մեկ տասներորդը ետ ստանալը շատ վատ գործարք էր: Շիառ Մինը հավակնոտ եւ փառամոլ էր:

«Ոչ, Ձերդ Գերազանցություն: Եթե ես պարզեմ ստանալու հույս փայփայելի, միացած կլինեի առետրական շրջանակներին: Ես մեկն եմ Ձեր ամենանվիրված ծառաներից եւ ակնկալում եմ ծառայել Ձերդ Գերազանցությանը իմ համեստ կարողություններով, ինչ գործ էլ որ հանձնարարեք: Ձերդ Գերազանցությունը կտեսնի, որ ես երբեք Ձեզ երբեք հուսախաբ չեմ անի»:

Յուանը մի պահ լուռ էր, ապա սիրալի ժպիտով ասաց. «Լավ, ինձ դուր է գալիս Ձեր նվիրումը, եւ, ինչպես ասացի, գիտեմ, որ Դուք մի երիտասարդ եք, որն իր գործն անում է արդյունավետ եւ հիմնավորապես: Շատ եմ ցավում, որ այս պահին Ձեզ վայել աշխատանք չունեմ: Բայց համարձի մի փոքրիկ թափուր տեղ կա, եւ եթե չեք կարծում, թե այն չափազանց նվաստացուցիչ է Ձեզ համար, կարո՞ղ եմ խնդրել Ձեր բարեհաճությունը՝ քնդունել այդ պաշտոնը»:

«Ինձ համար մեծ պատիվ է, Ձերդ Գերազանցություն,- Լա մի քանի անգամ խոնարհ գլուխ տվեց Յուանին:- Եվ շատ շնորհակալ եմ պաշտոնի համար»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

«Ես կհեռագրեմ Տյանցզին, որպեսզի ուղարկեն Ձեր նշանակման պաշտոնական փաստաթղթերը, բայց կուզեի, որ ինձ մոտ Պեկինում մնալիք առայժմ»:

«Ձեր ծառան երախտապարտ կլինի Ձեզ, եթե նրան արտոնություն է տրված սպասարկել պատմության այդպիսի անմահ գործչին»:

Յուանը շոյված էր: Ժպտալով Շիաո Մինին՝ նա ասաց. « Իմ բախտը չբերեց, որ կորցրի Ցզյանսիից եկած շնորհալի մի մարդու, բայց մյուս կողմից բավականին բախտավոր եմ ընդունելով Ցզյանսիից եկած մեկ այլ մարդու ծառայությունները, որը, կարծում եմ, առկազն ավելի խելամիտ է»:

«Եվ ավելի հավատարիմ, Ձերդ Գերագանցություն»:

Տա Տունգի մտքով երբեք չէր անցնի, որ Պեկինից իր փախուստը կհանգեցնի Շիաո Մինի փառասիրական նկրտումների իրականացման: Ըստ էության, մի քանի առիթով նա փորձել էր Շիաո Մինի համար բարեխոսել Յունի մոտ: Գնացքով Տյանցզին ուղեորվելիս, երբ նա կանգնած էր լեփ լեցուն վագոնում և անհաղորդ նայում էր իր նման ուղեորների դեմքերի դատարկ արտահայտությանը, մտքերը Լոտոսի Բուրմունքի հետ էին, և մեկ-երկու անգամ էլ Շիաո Մինին հիշեց: Շատ էր ափսոսում, որ իրեն չհաջողվեց Յուանին առաջարկել՝ նրան ընդունել նախքան պետական հեղաշրջումը: Թերևս մի քիչ եսասիրություն կար խորթ եղբոր համար իր մտահոգության մեջ: Նա կարծում էր, որ եթե ինքը Շիաո Մինի համար մի լավ պաշտոն ապահոված լիներ, դա կնշանակեր Լոտոսի Բուրմունքի համար ավելի քիչ հոգս և անհանգստություն:

Տյանցզինում նրանք տոմսային գործակալություններում հետաքրքրվեցին հարավ մեկնող շոգենավերի համար: Այդ գիշեր երկու նավ Շանհայ էին նավարկելու, մեկը պատկանում էր չինական առետրային նավային ընկերության, մյուսը՝ անգլիական մի ընկերության: Քանի որ չինական նավն ավելի մեծ էր և ավելի արագընթաց, իսկ ուղեորավարձն էլ փոքր-ինչ ավելի էժան էր, բնականաբար, նրանք ցանկացան այս նավի տոմսերը գնել: Նրանց ասացին, որ այդ շոգենավերի վրա հինգ կարգ գոյություն ունի: Առաջին կարգը կոչվում էր «սալոն նավասենյակ» կամ օտարերկրացիների կարգ: Բարբարոսները, որոնք Մեծ Բրիտանիայից կամ «Շերտավոր դրոշից» էին, ինչպես նաև մյուս օտարերկրացիները, որպես կանոն, այդ կարգով էին ճամփորդում, և նրանց բարբարոսական կերակուր էր մատուցվում: Հաջորդ կարգը կոչվում էր «մանդարինի նավասենյակներ»։ այդտեղ չինական լավ կերակուր էր մատուցվում, ինչպես չին պաշտոնյա-

ներն էին միշտ գերադասում: Երրորդ կարգը կոչվում էր «մասնավոր ևավասենյակներ», որն առավել նախընտրում էին վաճառականները, եւ կերակուրն էլ բաղկացած էր երեք մսի եւ երեք բանջարեղենի ուտեստներից: Չորրորդը կոչվում էր «ընդհանուր ևավասենյակ», որտեղ բոլոր ուղեւորները մնում էին մեկ մեծ սենյակում՝ իրար կապված կախովի անկողիններով ու քսատախտակամածներով: Հինգերորդը կոչվում էր «ամպիովանու կարգ», որ հավասար էր տախտակամածային ուղեւորների տեղերին եւ ուր ուղեւորներն ստիպված էին քնել որտեղ պատահի՝ անցումներում ու միջանցքներում կամ նույնիսկ բաց տախտակամածին, հնարավոր ցանկացած տեղում, միայն թե չխանգարեին անցուդարձին: Նրանք, ովքեր վերջին երկու կարգերով էին ճամփորդում, ուրիշ այլ կերակուր չէին ստանում, բացի օրը երկու անգամ սովորական չմշակված բրնձից:

Բաց տախտակամածը Տա Տունգին եւ Տինգին փոքր-ինչ վտանգավոր թվաց, այնպես որ՝ նրանք երկուսն էլ համաձայնեցին ճամփորդել ընդհանուր ևավասենյակում: Տոմսերը լրացնող մարդը, տեսնելով նրանց անփորձ լինելը՝ «գետերի եւ լճերի շուրջ ճամփորդությունում», անփութորեն նկատեց, որ հուսով է՝ նրանք արտասահմանյան դեղորայք ծխողներ կամ մաջուկ խաղացողներ չեն, ովքեր չեն հասկանում, որ այս ևավի վրա նման բաներն արգելված են, միևնույն այլ ևավերի վրա լիակատար ազատություն էր թույլատրված: Նա անկեղծորեն խոստովանեց, որ անգլիական ընկերությունը քանի որ տոմսային գործակալություններին ավելի լավ լիազորություններ է թույլ տալիս, ինքն ուզում է հնարավոր ամեն բան անել, որպեսզի մի քիչ ավելի գումար աշխատի:

«Ինչո՞ւ այդ տարբերությունը կա», - հետաքրքրվեց Տինգը:

«Որովհետեւ սա չինական ևավ է եւ հետեւաբար ենթակա է չինական օրենքներին: Զինվորներն ու ոստիկանները ցանկացած ժամանակ կարող են տախտակամած բարձրանալ: Մյուս ևավը պատկանում է Մեծ Բրիտանիային, եւ Մեծ Բրիտանիայի մարդկանց չի հետաքրքրում, թե ինչ ենք մենք անում տախտակամածի վրա»:

«Իսկ չին մարդիկ չինական օրենքներին ենթակա չե՞ն միթե, եթե նրանք անգլիական ևավի տախտակամածին են հայտնվում», - հարցրեց Տա Տունգը:

«Ոչ: Մեծ Բրիտանիան թույլ չի տալիս միջամտություն չինական զինվորների կամ ոստիկանների կողմից»:

«Բայց ևավը չինական ջրերո՞ւմ է ևավարկում»:

«Ղա կարող է լինել: Բայց Մեծ Բրիտանիայի համար միեւնույն է»:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Տիկզը զայրոյթից պայթեց:

«Վերջ տուր քո այդ «Մեծ»-ին: Դու չիս ես, չէ՞»:

«Իհարկէ,- մարդը չէր հասկանում, թե ինչու է Տիկզը զայրանում:- Այլապես չէի անհանգստանա, թե որ կա՛վով եք գնում»:

«Մենք մեր միտքը փոխեցինք եւ ճամփորդում ենք մյուս կա՛վով»,- ասաց Տա Տունգն այդ մարդուն ժպտալով:

«Ի՞նչ»,- գոչեց Տիկզը:

«Խնդրեմ ընդհանուր կա՛վասեղանակի երկու տոմս անգլիական կա՛վի համար»:

«Միայն մե՛կը,- բողոքեց Տիկզը:- Ես չե՛մ գնա անգլիական փոքր կա՛վով: Ո՛չ ես»:

«Ես սիրում եմ երբեմն ափիոնի ծխամորճ ծխել, իսկ ընկերս մաջունգի սիրահար է»:

«Ո՛չ»:

«Ընկերս հայրենասեր է եւ կգերադասեր ենթարկվել ձերբակալվելու վտանգին, քան օտարերկրյա կա՛վի հաճախորդ լինել: Արդյոք զինվորներն ու ոստիկանները երբեմն ձերբակալում են ուղեւորներին, քանի որ նրանք խախտել են օրենքը»:

«Նրանք քիչ ուղեւորների չեն ձերբակալել հենց այնպես, առանց պատճառի: Ասում են, որ կասկածվում են «բարեփոխման ապստամբներ» լինելու համար»,- պատասխանեց մարդը:

«Իրո՞ք բարեփոխման ապստամբներ են»:

«Ի՞նչ, եթե «բարեփոխիչներ» են: Բարեփոխումն ապստամբություն չէ, եւ ես ավելի շատ կուզեի ապստամբություն տեսնել, քան այդ պառավ կնոջը, որ երկիրը կործանման է տանում»:

«Զգուշացեք Ձեր ասածից: Դա պետական դավաճանություն է»:

«Ո՛չ Մեծ Բրիտանիայի կոնցեսիոն ձեռնարկությունում»:

Տիկզը լուռ էր: Նա տեսնում էր, որ այդ մարդն իր պես հայրենասեր է, բայց չէր կարող հասկանալ, թե ինչու պիտի նա գործածի «Մեծ» բառը, երբ ամեն անգամ հիշատակում էր Բրիտանիան:

Հենց որ տոմսերը ձեռք բերեցին, ընտրեցին Տակոյի կա՛վը եւ անմիջապես բարձրացան անգլիական շոգենավ: Տեսան, որ ոչ շատ հեռվում չի-նական կա՛վն է կառանել, իսկ կա՛վամատուցում համազգեստով բազմաթիվ մարդիկ կային: Շատ երախտապարտ զգացին տոմսային գործակալության մարդու հանդեպ, որն ակնհայտորեն փորձում էր զգուշացնել իրենց: Այո, այդ մարդը շատ ճիշտ էր ասում: Անգլիական կա՛վի վրա ոչ ոքի

հոգը չէր, թե ինչ է տեղի ունենում ուղեւորների շարքերում: Մարդիկ անկողին էին պատրաստում ամենուր ու որտեղ պատահի, եւ ընդհանուր նավասենյակում, որտեղ քնատեղ ունենալու համար նրանք ստիպված էին լրացուցիչ գումար վճարել ուղեկցորդներին, ճամփորդներին ոմանք ափիոն էին ծխում: Տա Տունգի եւ Տիւզի համար գնացքում օրը ծանր էր, բայց շոգենավի ընդհանուր նավասենյակում հազար անգամ ավելի ծանր էր ու հեղձուցիչ: Մի ուղեկցորդ, տեսնելով, որ նրանք չեն կարող ափիոնի հոտը տանել, ասաց, որ կարող են կախովի անկողինների փոխարեն զբաղեցնել մասնավոր նավասենյակների նախասրահում գտնվող մեծ թախտը, որի համար պետք է միայն մի փոքր ավելի վճարեին: Ապա ավելացրեց, որ մասնավոր նավասենյակներում ուղեւորներն ավելի օրինավոր են ու հարգալից, եւ նախասրահում ափիոնի հոտ չի գալիս: Այս առաջարկն ընդունվեց ամենայն պատրաստակամությամբ, եւ նրանք անմիջապես հարմարավետ տեղավորվեցին նախասրահի մեծ թախտի վրա: Նրանց ընտրությունը, սակայն, շատ իմաստուն մի բան չէր: Թեեւ խուսափեցին ափիոնի հոտից, բայց մաջունգի աղմուկի մեջ ընկան: Հենց որ նավը շարժվեց, նախասրահում մի սեղան դրվեց մաջունգի համար, եւ չորս առետրական, որ զբաղեցնում էին մասնավոր նավասենյակները, անընդմեջ խաղում էին: Քանի որ հաջորդ օրը Միջաշնանային տոնն էր, նրանք խաղացին ամբողջ գիշեր, մինչեւ լույսը բացվելը: Տա Տունգը եւ Տիւզն ամենեւին չկարողացան քնել:

Երիտասարդ մի ուղեկցորդ, որն այժմ սպասարկում էր նրանց, շատ բարեհոգի էր ու ընդառաջող եւ նրանց համար ծալովի երկու աթոռ տեղադրեց, որպեսզի մի փոքր հանգստանան համեմատաբար խաղաղ մի անկյունում՝ առետրական միջնորդի սենյակին մոտ: Նա ասաց, որ աղմուկն ավելի քիչ է լինում միայն վաղ առավոտյան, քանի որ նավի վրա աղմկարարների մեծ մասն այդ ժամանակ խոր քնած է:

Երբ արդեն մոտ էր նախաճաշը մատուցելու ժամը, ամբողջ նավն ասես գյուղական տոնավաճառի վերածվեց: Ամենուր խմբված էին զբաղված ու երջանիկ մարդիկ, որ կամ խմում էին, ծխում, զրուցում, ծիծաղում, երգում, վիճաբանում, կամ մոլեխաղով էին զբաղվում: Փոքր-ինչ հանգիստ գտնելու միակ միջոցը նավի տախտակամած ելնելն էր, որի շատ փոքր մի մասն էր հատկացված չին ուղեւորների համար, որպեսզի շունչ առնեին մի քիչ: Շատ մարդիկ չէին հաճախում այստեղ, եւ ճաղաշարքին հենվելով ու երկնքին կամ ծովին նայելով՝ մարդ կարող էր շոգենավի վրա տիրող աղմուկ-իրարանցումից փոքր-ինչ խուսափել:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Մինչ ամբողջ կազմ շատ ուրախ ժամանակ էր անցկացնում Միջաշխարհային տոնի ընթացքում, Տա Տունը և Տինը օրն անցկացրին գրեթե լուռ: Երեք օր ու երեք գիշեր նրանք իրենց ժամանակի մեծ մասն անց էին կացնում կապի տախտակամածին, որտեղ ընկերացել էին մի քանի հոգու հետ: Իրենք թեև շատ զգուշավոր էին և երբեք չէին համարձակվում առաջինը որեւէ ակնարկ անել քաղաքականության մասին, բայց խոսակցությունը միշտ տարվում էր բարեփոխման և վերջին պետական հեղաշրջման շուրջ, և բոլորն, ում հետ խոսում էին, անփոփոխ կերպով խիստ դժգոհություն ու ատելություն էին հայտնում ներկա կառավարության հանդեպ: Թվում էր, թե անգլիական կապի վրա ամեն ոք ազատության իր պոռթկումն ունի և երբեք չի վարանում իր միտքն արտահայտել բարձրաձայն:

Երբ քիչ թե շատ պարզ դարձավ, որ նրանք քաղաքական փախստականներ են, որոնք փախել են Պեկինում հալածանքների ենթարկվելուց, ի զարմանս իրենց տեսան, որ երիտասարդ ուղեկցորդը հեղափոխական ընկերության անդամ է, այն կազմակերպության, որին ուզում էին միանալ: Երբ վերջինս աշխատանքային ծառայության մեջ զբաղված չէր լինում, միանում էր նրանց կապի տախտակամածի վրա և, մեկուսի մի անկյունում, պատմում էր, որ տարբեր գաղտնի կազմակերպությունների անդամների մեծ մասը Շանհայում և Յանցզի գետի մյուս կողմից անցնող ճանապարհով, աստիճանաբար անդամագրվում է հեղափոխական Շին Չուն Հոյ կազմակերպությանը, որ նրանցից շատերը երդվել են սպանել բոլոր բարձրաստիճան մանջուր պաշտոնյաներին առաջին իսկ հնարավորության դեպքում, և որ ամբողջ Յանցզիի հովտում նրանք տասնյակ ու հարյուր հազարներ են: Իմանալով, որ Տա Տունը և Տինը Շանհայում բարեկամներ չունեն, նրանց խորհուրդ տվեց մնալ ֆրանսիական կոնցեսիոն ընկերության փոքրիկ մի հյուրանոցում: Նրանք Շանհայ ժամանեցին չորրորդ օրվա իրիկնադեմին:

Շանհայը, որ կոչվում էր «օտարերկրյա դաշտերի տասը լի տարածք» Չինաստանում, հայտնի էր իր շողշողացող ու շլացուցիչ շքեղությամբ: Բազմազբաղ և մարդաշատ կազմակերպություններով լուսավորված էր միլիոնավոր էլեկտրական շողշողուն լույսերով: Հեռվից թվում էր, թե կազմակերպության մի աշխարհի է մոտենում: Երբ ավելի մոտեցան, տեսան, որ Վամպու գետի կեսը գրավել էին շոգենավերը, ջոկա առագաստանավերը, փոքր բարկասներն ու կապակները, իսկ Բունդը լեփլեցուն էր մարդկանցով և փոխադրամիջոցներով: Երբ կազմ կառանում էր, հարյուրավոր բեռնակիրներ և հյուրանոցային գործակալներ նետվեցին կապի տախտակա-

մա՞ծ՝ հրմշտելով իրար, որպեսզի առաջ անցնեն: Ամեն կողմից ողջույնի ճիչեր, բացականություններ, հայհոյանքի ու ծիծաղի ձայներ էին լսվում: Ամբողջ նավը փաստորեն նմանվել էր ազատ արձակված դժոխքի: Ուղեկցորդներն իսկույն կողպեցին նախասրահի եւ մասնավոր նավասենյակների բոլոր դռները, եւ դռների թակոցը, դրանց ոտքերով խփելը, հրելն ու գոռով բացելը շարունակվեցին որոշ ժամանակ՝ առանց ներսից որեւէ մեկի կողմից ուշադրության արժանանալու: Ճաղերով արգելափակված պատուհանների ետեւից Տա Տունգը եւ նրա ճանապարհի ընկեր ուղեւորներից ոմանք լուռ դիտում էին: Հարայիրոցը շարունակվեց կես ժամի չափ, եւ երբ իրարանցումն սկսեց հանդարտվել ու աղմուկը նվազել, երիտասարդ ուղեկցորդը գտավ ինչ-որ մեկին, որ վերցնի Տա Տունգի ուղեբեռը, եւ նրանց ափ իջեցրեց:

Նավակայանում տղամարդիկ դեռ շատ զբաղված էին: Կիսամերկ բեռնակիրները, որ նավից ծանր ու խոշոր պարկեր ու արկղեր էին կրում, դանդաղ եւ զգուշորեն առաջ էին շարժվում՝ բարձրածայն մոթմոթալով բեռնակրի իրենց երգերն ու կրկներգերը՝ յուրահատուկ միալար բամբ ձայնով: Մի քանի տասնյակ ոտնաչափ այն կողմ, գեղեցիկ սալարկված ճանապարհին, կառքերը հոսանքի պես արագ դեսուդեն էին սլանում, եւ ձիերը եռանդուն վազում էին վերուվար, ինչպես սիգարշավ վիշապներ:

Բարգավաճման ու բարեկեցիկ հարստության այսպիսի պատկեր նրանք նախկինում երբեք չէին տեսել: Շքեղ հագնված եւ հրաշալի խնամված եվրոպացիներ ու չինացիներ, մեծ մասամբ ազնվական տղամարդիկ, ինչպես նաեւ մի քանի տիկնայք, սլանում կամ քայլում էին այնպիսի բարձր տրամադրությամբ, որ մարդ դժվար թե կարողանար գիտակցել, թե այս հրաշալի աշխարհում մարդկային կյանքում կան տառապանքներ: Տա Տունգի սիրտը ցավեց, երբ անցավ ծայրաստիճան տառապանքի ու թշվառության տեսարանի միջով եւ մեկ րոպե հետո, այդտեղից ընդամենը մեկ քարընկեց հեռավորության վրա, հանդիպեց շքեղության ու երջանկության այս երանելի պատկերին: Անցնելով հաճելի բույր արձակող այս ընդարձակ ծառուղիների երկայնքով, նա աստիճանաբար մոտենում էր ավելի ու ավելի քիչ աչքի ընկնող վայրերի, մինչեւ որ վերջապես ժամանեց իր հյուրանոց՝ Թայ Լայ Տյան, որ գտնվում էր ձկան մեծածախ առեւտրի փոքրիկ խանութների շարքում, նեղիկ մի նրբանցքում, Le Quai d'Est-ի (Արեւելյան ափի) մոտակայքում: Այս շրջանում բոլոր փողոցները թաց էին,- ըստ էության դրանք ամբողջ տարին թաց էին,- եւ ձկան սուր հոտ էր տարածված:

Նրանց հատկացվեց հաստատության լավագույն սենյակը՝ «Առաջին

դասի մանդարինի թիվ մեկ սենյակը», ինչպես որ նշված էր: Քանի որ չէին պատրաստվում երկար մալ Շանհայում, ոչինչ չասացին: Ավելի վատ սենյակներ երբեք չէին տեսել: Բայց շենքի թշվառությունն ավելի քան փոխհատուցվեց կառավարչի և նրա մշտական հաճախորդներից մի քանիսի հյուրընկալությամբ ու բարեհաճությամբ: Նրանց ականջին հասել էր, որ Տա Տունգը և Տինգը մանջուրական արքունիքի զոհեր են, և որ «գնում են Հոնկոնգ», մի արտահայտություն, որի նշանակալի լինելը բոլորը գիտեին, և դա նրանց շատ հանրահայտ էր դարձրել ամբողջ փողոցում: Մարդիկ գալիս էին նրանց սենյակ,- իսկ դրանց մեծ մասը բանվորներ էին ու մանր առևտրականներ, որոնք կրթություն չէին ստացել,- և ատամները սեղմելով կամ կրճտացնելով՝ դատապարտում էին այրի կայսրուհուն և նրա հետետրոդներին ամենազզվելի ու անարգ արտահայտություններով, որ մարդ կարող է պատկերացնել: Տա Տունգի համար պարզ էր, որ եթե ճիշտ ղեկավարություն լինի, նրանք բացեիբաց ապստամբության կելնեն ներկա կառավարության դեմ: Այդ մարդկանց համար բավականին տարօրինակ էր լսել, թե ինչպես են այս աղքատ երիտասարդները հայտարարում, որ ամենեւին մտադրված չեն եղել ապստամբ համարվել: Տարօրինակ էր, որովհետեւ իրենք ապրում և աշխատում էին օտարերկրյա կոնցեսիոն ընկերությունում: Հետեւաբար գտնվում էին օտարերկրյա պաշտպանության ներքո, և մարջուրական իշխանությունները նրանց ոչինչ չէին կարող անել: Այդուհանդերձ շարունակում էին դատապարտել կառավարությանը՝ չկարողանալու համար ազատել երկիրը օտարերկրյա բարբարոսներից և փրկագնելու բոլոր այն տարածքները, որ վարձակալության էին տրվել կամ հանձնվել եվրոպական և ճապոնական զավթիչներին:

Երեկոյան ընթրիքից հետո Տինգն առաջարկեց դուրս գալ և տեսնել, թե ինչպիսին է Շանհայը գիշերով՝ հանրահայտ միջազգային նավահանգիստը դիտելու ամենալավ ժամանակը, ինչպես շատերն էին համարում: Տա Տունգը նրան համոզեց մենակ գնալ, իսկ ինքը գնաց հոգալու Հոնկոնգ մեկնելու իրենց գործերը: Իր համար էլ անհայտ ինչ-որ պատճառով Տա Տունգն սկսել էր ատել Շանհայը՝ նախքան նրա մի փոքր մասն իրականում տեսնելու: Ինչքան ավելի շուտ կարողանային հեռանալ այստեղից, այնքան նա ավելի լավ կզգար: Եվ, բարեբախտաբար, տեղեկացավ, որ հենց հաջորդ օրն իսկ Հոնկոնգ մեկնող նավ կար: Երրորդ կարգի տոմսերը թանկ չէին, և Տա Տունգն իսկույն երկու երկու կախովի անկողին պատվիրեց Հոնկոնգ մեկնելու համար: Ստուգելով իր կյուբական վիճակը՝ տեսավ, որ այն բավականին բարվոք է: Տինգը կվերադարձներ իր կողմից նախա-

պես վճարված ճամփորդության գումարը, եւ նա հաշվեց ու տեսավ, որ վերջնական նպատակակետին հասնելու ժամանակ իրեն կմնա հարյուր կամ հարյուր հիսուն թաւ: Լավ հայտնի էր, որ կենսական ծախսերը վճարվում էին, եթէ մեկը միանում էր Շին Չուն Հոյին, այնպէս որ՝ նա հոյս ուներ իր փողի մնացած մասն ուղարկել Լոտոսի Բուրմունքին: Նա շտապեց ետ դառնալ հյուրանոց, եւ գիշերային շրջագայությունից Տիւզի վերադարձին սպասելու ընթացքում երկար մի ևս մակ գրեց՝ Լոտոսի Բուրմունքին պատմելով իր ճամփորդության մասին: Մի ևս մակ էլ ուղարկեց հորեղբայր Կանին:

Արդեն կեսգիշերն էլ անց էր, երբ ավարտեց իր ևս մակը, իսկ Տիւզից դեռ լուր չկար: Շանհայի մասին ամեն տեսակի սարսափելի բաներ լսած լինելով՝ նա սաստիկ անհանգստացավ: Նստած սպասեց մինչեւ առավոտյան ժամը երեքը, բայց ավաղ, իզուր էր սպասում: Ի վերջո ստիպված էր հայտնել հյուրանոցի տիրոջը, որը նույնպէս անհանգստացավ: Մինչ հյուրանոցի տերը գնացել էր խուզարկու գտնելու, Տա Տունգը մտածեց, որ լավ կլինի տեղեկացնել ֆրանսիական քաղաքային խորհրդի ոստիկանությանը:

Շուտով մի քանի համազգեստավոր չինացիներ եւ օտարերկրացիներ եկան, որպէսզի Տա Տունգից տեղեկություններ ստանան Տիւզի անհետացման վերաբերյալ, ու թվում էր, թէ հոյս ունեին, որ Տա Տունգը կգտնի նրան իրենց համար: Երբ հյուրանոցի տերը ետ եկավ եւ տեսավ, որ իր հյուրանոցը լի է ոստիկաններով, մագերը պոկեց՝ գոչելով, թէ ինքը շուտով կկործանվի: Ոստիկանները կարծես թէ վճռել էին որոշ ժամանակ այդտեղ մնալ եւ սկսեցին իրենց զգալ ինչպէս տանը: Հյուրանոցի տերն ստիպված էր թեյ, սիգարետներ, գինի եւ ըմպելիք հյուրասիրել: Այն ամենն, ինչ անում էին նրանք, հյուրանոցից հեռախոսով զանգելն էր ոստիկանության տարբեր բաժիններ, եւ նրանց հեռախոսագրոյցի թեման խստորեն չէր սահմանափակվում երիտասարդի անհետացման փաստով: Հաջորդ օրը կեսօրին մոտ Տիւզը կառքով եկավ, եւ ոստիկանները, իմանալով, թէ ով է նա, անմիջապէս ասացին, որ պետք է նրան տանեն իրենց գրասենյակ, որպէսզի անբողջ դեպքի մասին զեկուցեն իրենց պետին: Տա Տունգը բողբեց դրա դեմ, բայց ապարդյուն: Հյուրանոցի տերը նրան թաքուն ասաց, որ ոստիկանների ուզածը փող է, որն ի վերջո Տա Տունգն ստիպված էր տալ: Մինչեւ նրանցից յուրաքանչյուրը տասը թաւել չստանար, այդ հարցի մասին չէին լռի: Հենց որ նրանք գնացին, եկավ սերժանտն իր երկու ծառայողներով: Եվ դարձյալ նույն պատմությունը: Նա պետք է Տիւզին իր

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

հետ տաներ, որպեսզի ամբողջ դեպքի մասին զեկուցեր իր պետին, եւ երեսուն թաւից պակաս ոչինչ չէր վերցնի: Տիկզը ետ էր եկել կանխիկ ոչ մի գումար չունենալով: Նա ստիպված էր խնդրել հյուրանոցի տիրոջը, որ վճարի կառքի համար: Թե որտեղ էր եղել, եւ ինչ էր պատահել իր հետ, այդ մասին ոչինչ չասաց: Հյուրանոցի տերն ըմբռնումով կայեց նրան՝ զլովիչ տարուբերելով եւ բացականչեց. «Երիտասարդ, դուք պետք է ավելի զգույշ լինեք»:

Տա Տունգն արագ հյուրանոցի տիրոջը վճարեց հաշիվը եւ Տիկզին քարշ տվեց դեպի կավը: Նա գիտեր, որ եթե մի փոքր էլ երկար մնան այլեւս չի կարողանա փակել հետագա ծախսերը, որոնք անխուսափելիորեն աճելու էին: Նրա քսակն արդեն գրեթե դատարկ էր, եւ երբ արդեն Հունկոնգ հասան, արծաթե կամ պղնձե ոչ մի դրամ չունեին:

ԳԼՈՒԽ 13

*«Նշտ է դիպուկ կրակելը,
Դժվարը լավ թիրախ ընտրելն է»:*

Ո՛չ Հոնկոնգի իշխանությունները, ո՛չ էլ Բրիտանական կառավարությունը մտադրություն չունեին թաքցնել այն մարդկանց, որոնք ծրագրում էին հեղափոխություն անել Չինաստանում: Ափիոնային պատերազմին հաջորդած՝ Նանկինյան պայմանագրի ստորագրումից հետո Հոնկոնգի կղզին հանձնել էին անգլիացիներին, որոնց միակ նպատակն էր այն գարգացնել ու վերածել բարգավաճող առևտրային նավահանգստի եւ Բրիտանական կայսրության հզոր ռազմածովային առաջապահ ուղեկալի: Այդ ժամանակից սկսած՝ տասնյակ հազարավոր մարդիկ էին լցվել այս կղզի: Թեեւ այն զբաղեցնում է մոտ քառասուն քառակուսի մղոն տարածք, եկածների համար այստեղ ըստ էության բնակության շատ սահմանափակ պայմաններ էին: Ամբողջ կղզին գրեթե մի գառիվայր լեռ էր: Միայն նեղիկ մի տարածք էր այս լեռան ստորոտի հյուսիսային կողմում քիչ թե շատ բնակելի: Այդուհանդերձ, հնարավոր չէր այստեղ փողոցների շատ շարքեր կառուցել առանց յուրաքանչյուր հաջորդ փողոցի համար գետնի մակարդակը բարձրացնելու գրեթե անհասանելի բարձրության: Նետեաբար, մինչ նավահանգստի հյուսիսային ափերի երկայնքով ձգվող զարգացած մի քանի փողոցներ լեփ-լեցուն են մարդկանցով,- Հոնկոնգ չհնարեն նշանակում է «Բուրավետ նավահանգիստ»,- կղզու մնացած մասը գրեթե ամայի է:

Բրիտանական գաղութային առաջամարտիկներն Արեւելքում մի հոյակապ հատկանիշ ունեին՝ իրենց ինքնակենտրոնացվածությունը՝ բառի լայն եւ նեղ իմաստով: Նենց այս ուշագրավ առանձնահատկությունն էր, որ հնարավորություն տվեց կառուցել Բրիտանական կայսրությունը: Իրենց այն էին, ինչ կային, եւ մյուս ազգերի մարդիկ պետք է իրենց ընդունեին այնպիսին, ինչպիսին կային: Մյուս կողմից՝ բոլորը, ովքեր կարողանում էին խոսել սրանց լեզուն, հագնել սրանց զգեստը, հավատալ սրանց կրոնին եւ հասկանալ սրանց քաղաքականությունը, սրանց համար արժանի էին ճանաչման: Սրանց համար միայն երկու տեսակի մարդիկ կային՝ այն մարդիկ, ովքեր կարող էին մտածել ու ապրել անգլիական ձեռով եւ սրանք, ովքեր ամենեւին չէին կարող մտածել ու չգիտեին ինչպես ապրել: Չինաս-

տանը նրանց համար մի մեծ անախորժություն էր: Որովհետեւ չորս հարյուր միլիոն մարդ կար այդ հսկայական երկրում եւ, բացառությամբ սակավաթիվ առեւտրական կոմպրադորների, գրասենյակային ծառայողների, ծառայապետների, աղախիւնների, դայակների եւ այլ ծառաների, բոլորն էլ պատկանում էին վերջին խմբին: Նրանց համար միակ մարդկային բանն էր ունենալ շատ ավելի բարձր հարգանք աղախնու կամ դայակի հանդեպ, որն աշխատել էր անգլիական ընտանիքում մի քանի տարի եւ կարող էր մի քիչ խոսել անգլերենի ու չիւարենի խառնուրդ «փիջին ինգլիշ» լեզվով, քան այն բանի հանդեպ, ինչը կարող էր համարվել «տեղական փրիտսփա»: Չինական կրոնները նրանց համար հեթանոսական հավատալիքներ էին, իսկ չինական քաղաքականությունը՝ պարզունակ կռիվներ: Իջնել այդպիսի բաները քննելու եւ իմանալու աստիճան՝ կնշանակեր նսեմացնել իրենց արժանապատվությունը եւ հետեւաբար վնասել Բրիտանական կայսրության հեղինակությանը: Բարեփոխման վեց առաջնորդների մահապատիժը, որ ցնցել էր ամբողջ ազգը, նրանցից ոմանց համար ավելին չէր, քան Ֆարսը, իսկ այլոց համար էլ ողբերգություն էր, որ ընդամենը վեց կյանք արժեցավ: Սույնիսկ բրիտանական նախարարը, որն ստիպված էր ընդհատել իր արձակուրդը ծովափին, երբեք չէր լսել Կան Յու-Վեյ անունը, նախքան Փեյ-Ռայ-Հոյից Պեկին վերադառնալը: Ներքի է, որ մարդիկ, որոնք եկել էին Հոնկոնգ առեւտուրը խթանելու, պետք է լիովին անտարբեր լինեին Շին Չուն Հոյի հանդեպ: Բայց չինական կառավարության պահանջով այդ գաղտնի կազմակերպությունն արգելվեց Հոնկոնգում, եւ նրա հետ որեւէ գործ ունեցած ցանկացած ոք ենթակա էր ձերբակալման: Չինական մանր պաշտոնյաները, որոնք աշխատում էին Հոնկոնգի ոստիկանական ուժերում, որոշակիորեն գիտեին, թե ինչի համար է Չինե Հան Հոնգը: Բայց նրանք լավ կրթված մարդիկ չէին, որ կարողանում են հասկանալ այդպիսի գաղտնի կազմակերպության հնարավոր հետեւանքի լրջությունը, եւ ո՛չ ի վիճակի էին, ո՛չ էլ բավականաչափ մտահոգ՝ այնքան հեռուն գնալ, որ բացատրեին այդ ամբողջ բարդ խնդիրը իրենց բրիտանացի վերադասներին: Քանի դեռ այդ խենթ արկածախնդիրները ենթարկվում էին բրիտանական օրենքին եւ ոչ մի խախտում չէին անում բրիտանական տարածքում, այստեղ նախընտրում էին հանդուրժել նրանց՝ մեկ աչքը բաց եւ մյուսը փակ պահած: Իրականում այդ գաղտնի կազմակերպության հետ կապված մարդիկ ո՛չ միայն ոստիկանության հետ խնդիրներ չունեին, այլ նաեւ իրենց շարքերն էին ներքաշում մեծաքանակ վտանգավոր տարրերի եւ ստիպում վերջիններին՝ ապրել օրենքի շրջանակներում: Քանի որ Հոն-

կոնգր հռչակված էր որպես մի նավահանգիստ, որտեղ կարելի է ոսկի հավաքել, շատ անգործ ու անպիտան մարդիկ, ինչպես նաև արագ հարստանալ ցանկացող դատարկագործներ այդտեղ էին եկել հարստանալու: Նրանք վատ աշխատողներ էին եւ գլխացավանք էին դարձել տարբեր հաստատությունների աշխատողների համար, ինչպես նաև բեռ էին ուստիկանության համար: Աստիճանաբար, մեկ առ մեկ, ևրանցից գրեթե բոլորը մղվեցին դեպի Շին Չուն Հոյը՝ միակալով նրան, եւ ուստիկանությունը գիտեր, որ շնորհակալ պիտի լինի Չին Հան Հոնգին՝ իր վրայից հասարակության այդ անախորժ տականքների բեռը վերցնելու համար:

Հոնկոնգ ժամանելուց անմիջապես առաջ Տա Տունգն ասաց Տինգին. «Հիմա, երբ մեզ մոտ փող չի մնացել, պետք է շուտափույթ կապի մեջ մտնենք հեղափոխական ընկերության հետ: Ո՞ւմ ես պատրաստվում հանդիպել»:

«Բնավ որեւէ մեկին չգիտեմ: Երբեք չեմ հոգացել այդ մանրամասների մասին: Ասել եմ, որ միայն շատ ուրախ կլինեն ինձ տեսնելու»:

«Տեղը գիտե՞ս»:

«Ի՞նչ տեղ»:

«Շին Չուն Հոյի, իհարկե»:

«Շին Չուն Հոյ է կոչվում: Կարծում էի՝ պարզապես կոչվում է հեղափոխական ընկերություն»:

«Շին Չուն Հոյը հատուկ անուն է: Տեղը, որ պետք է գտնենք, առեւտրային ընկերակցություն է, որ «Չին Հան Հոնգ» ցուցանակի ներքո է՝ Սթանթոն փողոցում: Ես շատ վատ եմ կարողանում ճանապարհը գտնել եւ հույսս պետք է քեզ վրա դնեմ»:

«Շուտ կգտնեմ այդ տեղը»:

«Զգույշ եղիր եւ միայն հուսալի մարդկանց հետ խոսիր: Երանի կարողանայի Կանտոնի բարբառով խոսել»:

«Սի՛ վախեցեք: Ամեն ինչ թողեք ինձ»:

Քանի որ չէին կարող իրենց թույլ տալ բեռնակիր ունենալ, Տա Տունգն ու Տինգը երկուսն էլ ստիպված էին իրենց իրերը տանել այնքան, որքան կարող էին, դեռ մի բան էլ ավելի: Ճամպուրակներով, արկղերով, զամբյուղներով, փաթեթներով ու ծանրոցներով ծանրաբեռնված՝ նրանք անշնորհ շարժումներով քայլում էին Թագուհու կենտրոնական փողոցի ուղղությամբ: Տա Տունգը, որ բավականին ետ էր մնում իր շատ ավելի ծանր եւ ավելի դժվարաշարժ ուղեբեռով, զարմացավ՝ տեսնելով, որ Տինգը մոտենում է առաջին իսկ պատահած ուստիկանին:

ԱՅՈՒՆ ՇԻՒ

«Չէի ցանկանա անհանգստացնել Ձեզ,- ասաց նա:- Կարո՞ղ եք ինձ ցույց տալ Չիեն Հան Հոնգը Սթանթոն փողոցում»:

«Չիեն Հան Հոնգը»,- մարդը նայեց նրա կողմը:

«Կամ Շին Չուն Հոյը»,- անմիջապես հավելեց Տիկզը:

«Ի՞նչ»,- ուստիկանը չէր կարողանում հավատալ իր ականջներին:

Տա Տունգն շտապեց ընդհատելու Տիկզին, բայց սարսափից քարացավ՝ լսելով այդ օրհասական բառերը, որոնք, թեև կանտոնյան բարբառով էին ասվել, ինքը չէր կարող չհասկանալ:

«Ե՛կ ինձ հետ անմիջապես»,- ուստիկանը բռնեց Տիկզի թեւից եւ գրեթե քարշ տվեց իր ետեւից:

Տա Տունգը հուսահատ վիճակում էր: Նա համոզված էր, որ ուստիկանը ձերբակալելու է իրենց: Բայց նրանք մտան մի խաղաղ ծառուղի, եւ ուստիկանը ցուցամատը հայրաբար մեկնեց Տիկզի կողմը:

«Տիմա՛ր ջահել: Ինչպե՞ս կարող էիր ինձ հարցնել՝ որտեղ է Շին Չուն Հոյը: Եթե ես ձեզ չձերբակալեմ, ինձ գործից կազատեն...»:

«Օ՛», - Տիկզն իրեն կորցրեց՝ չիմանալով ինչ պատասխանի:

«Բարեբախտաբար կողքիս ոչ ոք չկար, որ ասածդ լսեր: Իսկ հիմա փախիր այստեղից եւ Շին Չուն Հոյի մասին ոչ ոքի մոտ բան չասես այլևս: Ու հիշիր՝ դա ընդհանուր ոչինչ չունի Չիեն Հան Հոնգի հետ: Հարցրու ցնցոտիներ հագած եւ այս կողմերում թրեւ եկող որեւէ մեկին, եւ նա ձեզ կտանի այնտեղ»:- Եվ ուստիկանը շրջվեց ու հեռացավ՝ առանց նրանց կողմը նայելու:

Նրանք որեւէ դժվարություն չունեցան իրենց ուզած տեղը գտնելու, որովհետեւ Հոնկոնգի փողոցները լեփ-լեցուն էին ցնցոտիավոր թափառականներով, որոնք շատ պատրաստակամ էին նրանց այնտեղ տանելու: Երբ նրանց տանում էին այդ հեղափոխական կազմակերպության գաղտնի շտաբը, Տա Տունգը հարցնում էր ինքն իրեն՝ արդյո՞ք այդտեղի ղեկավարը կընդունի իրենց այնպես, ինչպես կներկայանան եւ թույլ կտա միանալ կազմակերպությանը՝ առանց կասկածելու, թե իրենք մանջուրական արքունիքի լրտեսներ են, եւ, եթե նույնիսկ իրենց թույլ տրվեր միանալ նրանց, արդյո՞ք այդպիսի գաղտնի կազմակերպության մեջ ընդունվելու արարողությունը չէր լինի հանդիսավոր եւ նույնիսկ երկյուղալի: Նա ժպտաց այն մտքի վրա, որ հիմա ինքը ստիպված է ամեն ինչում ուշադիր լինել Տիկզի հանդեպ, հոգալ նրա մասին, մինչդեռ սկզբում Լոտոսի Բուրմունքն ակնարկել էր, թե Տիկզը կարող է օգտակար ուղեկից եւ ընկեր լինել:

Տա Տունը հագիվ էր կարողանում հավատալ, որ խանութի նեղիկ ցուցափեղկը Չիեն Հան Հոնգի ճակատային մասն է: Քայլելով դեպի ներս՝ նա տեսավ, որ սրահը լեփ-լեցուն է կանգնած, քայլող, նստած եւ նույնիսկ հատակին կիսապառկած մարդկանցով, որոնք նման էին մուրացիկների խմբի: Լսելով, որ նրանք նորեկներ են, բոլոր այս մարդիկ աչքները հառեցին Տա Տունգի եւ Տիւնգի ու հատկապես՝ Տիւնգի ուղեբեռի վրա:

«Պեսցեք վերեւ եւ տեսեք պարոն Յանին», - անփութորեն ասացին նրանցից մի քանիսը:

Երբ վեր էին բարձրանում, մեկը կանգնեցրեց նրանց եւ հարցրեց. «Այդ իրերը պարոն Յանի մո՞տ եք տանում: Եթե ոչ, թողեք դրանք այստեղ»:

Տիւնգը նայեց այդ մարդուն եւ վարանեց: Բայց նա կռահեց Տիւնգի միտքը:

«Ձեր ուղեբեռը կարող եք վստահել ինձ: Ես գնդապետ Պեյն եմ: Ես պատասխանատու կլինեմ դրա համար»:

Նրանք շատ ուրախ էին բեռից ազատվելու համար եւ քանիցս շնորհակալություն հայտնեցին գնդապետ Պեյնին, որն օգնեց այդ ամենը մուտքի մոտ կիսելու:

Վերելի հարկի մեծ սենյակը, ուր առաջինը մուտք գործեցին, լի էր ճամբարային մահճակալներով, եւ դրանցից մի քանիսում դեռ մարդիկ կային, թեեւ ուշ կեսօր էր: Նրանց տարան ներսի սենյակ, որտեղ հինգ-վեց մարդ կար ընդամենը: Պարոն Յանը՝ շատ կենսուրախ ու ջերմ մի անձնավորություն, որը կարծես ի ծնե առաջնորդ էր եւ հեշտությամբ կարող էր առանձնանալ, եթե անգամ կանգնած լիներ մի մեծ ամբոխի մեջ, սրտանց ողջունեց նրանց՝ մեջքներին թփթփացնելով: Ապա նրանց մի մեծ գիրք տվեցին, եւ խնդրեցին դրա մեջ նշել իրենց անունը, ստորագրել, գրել հասցեն, տարիքը, ծննդավայրը, ծնողների անունները, կրթությունը, մասնագիտությունն ու աշխատանքային փորձը: Նրանք համեստորեն ոչինչ չգրեցին վերջին երկուսի դիմաց: Չունեին նաեւ հասցե, քանի որ հենց նոր էին նավից իջել: Պարոն Յանն աչքի անցկացրեց գրառումները եւ գիրքը փոխանցեց պարոն Կունին՝ խնդրելով նրան, որ երկու անդամատուն տա: Դառնալով Տա Տունգի եւ Տիւնգի կողմը՝ նա ասաց. «Դուք հասցե չունեք, ընկերներ: Քնելու տեղ ուզո՞ւմ եք»:

Այս հարցը թեեւ շատ ցանկալի էր եւ ողջունելի, բայց փոքր-ինչ զարմացրեց Տա Տունգին: Նա կարծում էր՝ ավելի կարեւոր հարցեր կային տալու: Այնուամենայնիվ դրական պատասխան տվեց:

«Մենք չափից դուրս շատ ենք հավաքված այստեղ, քան սովորաբար

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

լինում է, բայց ձեզ համար տեղ կգտնենք: Ընկեր՝ Շի,- դիմեց նա աշխույժ ու գեր մի տղամարդու,- այս երկու նոր ընկերները բարձր կրթություն ունեցող մարդիկ են: Դու պետք է նրանց վերցնես ձեզ մոտ»:

«Լավ գիտեք, որ արդեն ինձ մոտ են գնևերալ Տաուն և ծերունի Չուն...»,- բողոքեց Շին:

«Եվս երկուսը վնաս չեն տա: Դու սիրում ես լավ ընկերությունը»:

«Ահավոր՝ է: Լավ, եթե պետք է անեմ, ուրեմն պետք է անեմ»: Ապա դառնալով Տա Տունգին և Տիկգին՝ ծիծաղելով ասաց. «Չմեղադրեք ինձ, իմ հրաշալի ընկերներ, եթե ստիպված լինեք կանգնած ընել: Իսկ ձեզ համար վերմակ ունե՞ք»:

«Ես մեկն ունեմ»,,- պատասխանեց Տա Տունգը:

«Մի քանիսն ունեմ»,,- հավաստիացրեց Տիկգը:

«Հիանալի՛ է»,,- գոչեց պարոն Յանը:

«Մեկն ինձ տվեք պարտքով»,,- ձայն տվեց մի մարդ նրա ետևում:

«Ես երկուսով կարող եմ բավարարվել»,,- իսկույն վրա բերեց մեկ ուրիշը:

«Ո՞ր են դրանք: Ես էլ եմ մեկն ուզում»:

Պարոն Կունը տվեց նրանց անդամատոմսերը և ներքե ուղեկցեց: Մյուս երկու տղամարդիկ նույնպես ներքե իջան:

Բայց ուղեբեռը չկար: Չկար նաև գնդապետը: Երբ Տա Տունգը հարցրեց այնտեղ գտնվող մարդկանց ուղեբեռի մասին, վերջիններս ծիծաղեցին և ասացին, որ իր իրերը նա կարող է գտնել մոտակա գրավատանը: Կունը և մյուս երկու տղամարդը նույնպես ծիծաղեցին՝ բացակասելով, որ նրանց բախտը չի բերել, ու այդ մասին չափազանց ուշ են իմացել:

«Պետք է գտնենք գնդապետին»,- Տիկգը գրեթե հուսահատ էր և վշտաբեկ, որ կորցրել էր իր բոլոր իրերը, որոնք նրա երկրային ամբողջ հարստությունն էին:

«Նրա ստվերն իսկ չեք կարող տեսնել, միևնույն ամբողջ փողը չսպառվի»,,- Կունը ժպտաց և վեր բարձրացավ:

«Էդ երկու միամիտը դեռ ոչինչ չե՞ք կերել»,,- ցած իջնելով և ժպտալով հարցրեց Շին:

«Չէ»:

«Այդպես էլ կարծում էի: Չնայած և ձեր տոմսերը ցույց տվեք Հարստության աստծուն ու ստացեք ձեր օրապահիկը»:

Նա առաջնորդեց երկուսին դեպի մի փոքրիկ ետնասենյակ, և պարոն Լյանը՝ գանձապահը, դրոշմակնիք խփեց նրանց քարտերի վրա ու յուրա-

քանչյուրին տվեց արձաթե քսան սենթանոցներ:

«Այժմ, իմ հարուստ ընկերներ, վազեք եւ կանխիկացրեք ձեր ոսկին Նախքան Հարստության աստվածը դուրս կգա բանկից»:

Նրանք չէին կարող սա հասկանալ, եւ Շին ստիպված էր ասել, որ այդ արձաթադրամների մի մասը կարող էր կեղծ լինել, այդ պատճառով էլ ավելի ապահով էր դրանք անմիջապես վերածել պղնձե դրամների՝ հարեւանությամբ գտնվող փոքրիկ դրամատանը: Եթե պիտանի չլինեին, կարող էին ետ բերել գանձապահի մոտ եւ փոխարենն ուրիշը վերցնել: Բացի այդ, ծանր պղնձեդրամները մարդու գրպանից դուրս չէին սահի, միևնույն ավելի փոքր արձաթադրամը երբեմն կորչում է, իսկ դա կնշանակեր ամբողջ օրը քաղցած մնալ:

Պղնձեդրամներն ապահով դրամ իրենց գրպաններում՝ նրանք Շիի հետ գնացին մոտակա թեյարան եւ լավ ընթրիք պատվիրեցին: Շին ինքն իրեն հրավիրել էր՝ որպես նրանց հյուր:

Տա Տունգը չգիտեր ինչ մտածել այդ օրն իր տեսած բաների մասին: Անհավատալի էր, որ ինչ-որ մեկն առանց Նախապես ծանոթ լինելու կամ ներկայացվելու կարող էր ընդունվել այդ կազմակերպության մեջ, որն այդքան սուրբ գործ ուներ անելու առաջիկայում: Ո՛չ պարոն Յանը, ո՛չ էլ ուրիշ որեւէ մեկը նրանց ոչ մի հարց չտվեցին: Իսկ եթե իրենք կառավարության լրտեսներ՝ լինեին կամ պարզապես դատարկապորտներ, որոնք գալիս են սոսկ օրը քսան սենթ շորթելու: Նրան թվում էր, թե այս հայտնի ընկերությունն ավելի չէ, քան խարդախների մի հրոսակախումբ: Ինքը չէր նշել, որ աշխատել է բարեփոխման շարժման համար, որովհետեւ հեղափոխականները, Նախ, հավանություն չէին տալիս բարեփոխմանը եւ, երկրորդ, չէր ուզում ցույց տալ, որ Տինգից ավելի շատ փորձառություն ունի: Նա պատրաստ էր պատմել պարոն Յունի հետ իր ծանոթության մասին այն դեպքում, եթե հարցնեին իրեն կազմակերպությանը միանալու անկեղծության վերաբերյալ, բայց խիստ զարմացավ, որ իրենց իսկույն ընդունեցին: Ընթրիքի ժամանակ Տա Տունգը Շիին նրբորեն ակնարկեց այս խնդիրների մասին, եւ այդ կենսուրախ մարդը ծիծաղեց. «Վախենալ պետք չէ, թանկագին ընկեր, մենք գիտենք, թե ովքեր են լրտեսներ: Գործողություններ, ո՛չ թե բառեր ենք ուզում տեսնել: Ապավինիր նրան, ինչ քեզ ասում են, եւ թանկագին գլուխդ մի օր կարող է լքել օրհնյալ ուսերդ: Ի՞նչ է մասնագիտությունը: Ի՞նչ է փորձառությունը: Ծան քամի: Պղնձե դրամ իսկ չարժեն: Փառահեղ անցյալ ունեցող մարդիկ երկչուտ են եւ ոչնչի համար պիտանի չեն, միևնույն երիտասարդ սրիկաները հրաշքներ կարող են գործել: Մենք

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

ժամանակի ընթացքում ճանաչում ենք այդ բոլոր թշվառ սատանաներին: Իմաստ չունի դատել կեղտոտ արտաքինին նայելով կամ մեղրածոր բառերը լսելով»:

«Գործողություն,- միջամտեց Տիկզը:- Ցանկացած ժամանակ պատրաստ եմ գործողության»:

«Դեռ ոչ, իմ անհամբեր ընկեր: Որոշակի հմտություն է պետք: Կարո՞ղ ես վերցնել Բրաունինգի ատրճանակը եւ թիրախին խփել քսան քայլ հեռավից: Ո՞րն է եղել քո նախորդ զբաղմունքը: Ինձ համար թքած: Բայց նախկինում ատրճանակ տեսե՞լ ես»:

«Չէ: Ես Պեկինի համալսարանի ուսանող եմ եղել»:

«Մատուցողի տեսք ունես, իմ գիտուն ընկեր: Եվ գիտեմ, որ ես էլ մուրացկանի տեսք ունեմ, բայց ես Շանհայի ամենահարուստ մարդկանցից մեկն էի, քանի դեռ բորսայում ոսկու գործով չէի զբաղվել: Ծաղկուն հարստությունս մի գիշերվա մեջ կորցրի: Այստեղ եկա ոչ թե աղքատության պատճառով, այլ ընկերներիս ու հարազատներիս լողկալի եւ չար հայացքների պատճառով, երբ իմացան, որ մեկ պղնձեղրամ իսկ չունեի, որ ապրուստս հոգայի: Կուզեի չհիշել, թե ինչպես էին հմայիչ ժպտում, երբ փողի մեջ լող էի տալիս»:

Ընթրիքն ավարտելուց հետո ևս Տա Տունգին եւ Տիկզին տարավ այնտեղ, ուր պետք է քնեին: Դա մի փոքրիկ ետնասենյակ էր քաղաքի խուլ անկյունի հետնախորշային մի տան վերին հարկում, ձիարշավարանից ոչ հեռու: Առաջին եւ երկրորդ հարկերն օգտագործվում էին որպես չորացրած ու պահածոյացված սևնդի պահեստարաններ, եւ ողջ տարածքից այդտեղ պահված ապրանքի յուրահատուկ հոտն էր գալիս: Մահճակալներ չկային, բոլորը քնում էին հատակին: Տա Տունգն ստիպված էր Շիի վերմակից օգտվել, իսկ Տիկզը՝ գետերալի վերմակից: Շուտով գետերալ Տաուն ինչպես նրան անվանում էին, ներս եկավ: Մի շատ փոքրիկ մարդ՝ քսան տարին չէր բոլորած: Եթե հին ասացվածքը՝ «Նրա ուժը չի հերիքում անգամ հավ կապելու», կարող էր բառացի իմաստով ճիշտ լինել, գետերալ Տաուն հենց այն մարդն էր, որի մասին ասվում է այդտեղ: Նա եկել էր Միչուանից եւ խոսում էր այդ վայրին հատուկ տարօրինակ մի առոգանությամբ: Չնայած շատ վատ բանախոս էր, բայց չափազանց շատախոս մեկն էր: Կեսգիշերից դեռ շատ առաջ ևս լորեկներին արդեն ամեն բան պատմել էր իր մասին, ինչպես ևաեւ իր ընտանիքի ամբողջ պատմությունը:

«Հայրս տասը երեխա ուներ, որոնցից ամենակրտսերը ես եմ: Նա ուզում էր իր բոլոր որդիները զինվորականներ դառնան, ձգտում, որ մի ժա-

մանակ ինքն էր ունեցել երիտասարդ տարիքում: Նա բարձրահասակ էր, մարմնեղ եւ մեծ ուժի տեր: Չիավարության, կետածգության, թիավարության եւ սուսերամարտի վարպետ էր: Բոլոր եղբայրներս ժառանգել են իր ֆիզիկական տվյալները, միայն ես հուսախաբ արեցի նրան: Այդուհանդերձ, որքան էլ տարօրինակ է, մայրս ինձ ծննդաբերել է հղիության տասնմեկերորդ ամսում, եւ հայրս կարծում էր, որ ես հաստատ մեծ գեներալ կդառնամ: Ասում են՝ երբ ծնվեցի, նրա բռունցքից մեծ չէի: Իսկ հայրս վաղաժամ է ծնվել՝ ընդամենը յոթ ամսական հղիությունից հետո: Մարդիկ կարծել են, թե հնարավոր չի լինի նրան մեծացնել»:

«Մեծացրե՞լ են ի վերջո», - հարցրեց Տիևզը:

«Ձայնդ կտրի՞ր, ապու՛շ», - բղավեց Շին:

«Նա ինձ ամեն տեսակի ռազմական արվեստ սովորեցրեց, ինչպես ավագ եղբայրներիս էր սովորեցրել: Մայրս ուզում էր, որ ես գրականությամբ զբաղվեմ, եւ հայրս մշտապես վիճում էր նրա հետ, մինչեւ որ մայրս վշտից մահացավ: Երբ բոլոր ավագ եղբայրներս մեծացան, եւ նրանցից ոչ մեկին չհաջողվեց հանձնել առաջին պետական ռազմական քննությունը, հայրս նույնպես վշտից մահացավ: Իրենից հետո որպես ժառանգություն՝ նա հսկայական հարստություն թողեց, եւ ավագ եղբայրներս մեկը մյուսի դեմ դատական գործեր հարուցեցին՝ պահանջելով ավելի մեծ ժառանգություն: Այդ ամենը տարիներ տեւեց, մինչեւ որ ընտանիքի ամբողջ գույքը վաճառքի հանվեց, եւ էլի դա բավարար չէր իրավական ծախսերը հոգալու համար:

Սանկությունից եղբայրներս ինձ «գեներալ» մականունով էին կոչում վատառողջ լինելուս համար պարզապես ինձ ծաղրելով: Իսկ հորս մահից հետո իմ կյանքը տանն ավելի անտանելի դարձավ: Նրանք հաճախ էին ինձ խփում ու քաշքշում եւ բռնցքահարում ականջներս»:

«Պետք է պատասխան հարվածը տայիք: Ինչո՞ւ էիք թողնում դա անեն»:- Տիևզն այնպես էր զգում, ասես իրեն էին վիրավորել:

«Ձայնդ, ապու՛շ», - հրամայեց Շին:

«Իմ ճակատը նրանցից յուրաքանչյուրի ճակատից մեծ է, եւ դրա համար իրենց մատնակրեքով շատ ծանր հարվածներ են հասցրել ինձ: Հետաքրքիր է՝ արդյոք դրանից չէ՞ իմ վաղաժամ ճաղատությունը»:

«Դու գանգամաշկի հիվանդություն ունես, իմ լավ ընկեր», - քմծիծաղ տվեց Շին:

«Ավագ եղբայրներս ինձ օգտագործում էին որպես իրենց գործերի համար վազվզող կամակատարի, որպեսզի փոխարենն ինձ կերակրեին:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Ամեն մեկը պարտավորվել էր մեկ ամիս կերակրել: Յուրաքանչյուր ամսվա վերջին ինձնից ազատվող եղբայրս միշտ շատ ուրախ էր լինում, եւ յուրաքանչյուր ամսվա սկզբում այն եղբայրս, որ պետք է ինձ վերցնէր, միշտ այնպիսի տեսք ուներ, ասես հիվանդ էր: Անցյալ տարի ինձ ուղարկեցին հարեան գյուղից մի քիչ փող հավաքելու, եւ երբ այնտեղից հեռացա, մութ էր: Ես շատ էի վախենում շներից, ու երբ փորձում էի տուն վազել, մի մեծ գելխեղդ գամփռ հետապնդեց ինձ: Ես ընկա եւ մթան մեջ փողս կորցրի: Դե, ինչպես գիտեք, անգն էի»:

«Իսկ շունը զինված էր միևնույն ատամներով», - հարցրեց Շին:

«Նրանք ինձ այնքան ծեծեցին, միևնույն կիսամեռ եղա, եւ դուրս գցեցին: Ոչ ոք ինձ նորից ետ չվերցրեց: Գիշերը բաց դաշտում անցկացնելուց հետո որոշեցի ընդմիշտ հեռանալ նրանցից: Հաջորդ առավոտյան, երբ անցնում էի այն գյուղով, որտեղ այցելել էի նախորդ օրը, մեծ գելխեղդ շունը նորից մոտեցավ ինձ, իսկ բերանին փողի այն փոքրիկ կապոցն էր, որը կորցրել էի մթության մեջ: Նա նախկինի պես կատաղած չէր, այնպես որ՝ ես վերցրի փողը եւ եկա այստեղ»:

«Եվ այս պատմությունն ինձ համար կրկնել ես առնվազն հիսուն անգամ», - ավելացրեց Շին:

Ծերունի Չուն եկավ կեսգիշերից շատ ուշ: Տեսնելով, որ սենյակում երկու մարդ ավել են, բարձրաձայն հայհոյեց եւ գնաց քնելու՝ ոչ մեկի հետ չխոսելով:

Սկզբում Տա Տունգը փոքր-ինչ հիասթափված էր: Նրանք շարունակում էին ոչինչ չանել, բացի քսան սենթի իրենց «օրապահիկն» ստանալուց՝ իրենց «տոմսերը» դրոշմակնքման ներկայացնելով «բանկում», ինչպես շտաբն էին անվանում: Իրենց նման մի քանի հարյուրը կային, եւ նրանցից գրեթե բոլորը պարապ-սարապ թափառում էին փողոցներում: Շին եւ Տաուն լավ ընկերներ էին եւ նրանց զբաղեցնում էին՝ իրենց անցյալի փորձառությունից հետաքրքիր ու զվարճալի պատմություններ պատմելով: Ծերունի Չուն բանաստեղծ էր եւ հազվադեպ էր խոսում, բացառությամբ երբ զայրացած էր եւ հայհոյում էր:

Նրանք իրենց ուղեբեռն այլես երբեք չտեսան: Գնդապետ Պեյին մի անգամ էլ հանդիպեցին երկու շաբաթ անց: Այդ մարդը պարզապես ասաց, որ նրանց իրերը ավելորդ են հեղափոխականի համար եւ վերաձվել են փողի, որը ծախսվել է ողջամիտ ձեռով՝ բարի եւ արդար գործի համար:

Տա Տունգն իրեն դժբախտ ու ողորմելի էր զգում: Չնայած այն բանին, որ Տինգն իրեն կարծես թե ավագ եղբայր էր համարում եւ ոչինչ չէր անում

առանց նախապես իր թույլտվությունն ստանալու, նա նկատել էր, որ երիտասարդն ուրիշների ընկերակցությունն ավելի է նախընտրում, քան իրենը: Այս նոր կյանքը, տարօրինակ ու անհոգ մարդկանցով լի, որոնք ոչինչ չունեին անելու, բացի փողոցներում թրեւելուց, Տիևգի համար յուրատեսակ հմայք ուներ: Եվ հետո՝ Տիևգը սիրում էր կանտոնյան բարբառով գրուցել այդ բարբառով խոսողների հետ: Տա Տուևգը չէր կարող տանել, որ, քանի օրերն անցնում էին, նրանք սկսում էին կորցնել իրենց հետաքրքրությունը քաղաքականության հանդեպ, եւ որ երիտասարդի միտքն աստիճանաբար թուլանում էր կանանց ու անառակության մասին չափից դուրս շատ գրուցելով նրանցից ոմանց հետ, ովքեր չափից դուրս սանձարձակ բնույթ ունեին: Ինչ վերաբերում է իրեն, նա ամեն առավոտ կանոնավոր կերպով գնում էր թերթերի խմբագրությունների գրասենյակներ՝ կարդալու այն թերթերի պատճենները, որ փակցված էին պատին, որպեսզի հասարակությունը կարդա: Թերթերի միջոցով ամբողջ աշխարհի վիճակի մասին քաջատեղյակ լինելուց բացի նա նաեւ բարելավում էր իր անգլերենը՝ ուշադիր զննելով անգլիական թերթերը: Ամեն անգամ, երբ նամակ էր գրում Լոտոսի Բուրմուկին, ստիպված էր մի քանի նախադասությունից հետո նամակն ամփոփել: Ասելու բան չուներ նրան, եւ այնքան շատ բաներ կային, որոնք չպետք է թողներ, որ նա իմանա: Ավելի ու ավելի քիչ էր գրում նրան, բայց ավելի ու ավելի հաճախ՝ հորեղբայր Կանին: Միակ բանը, որ չէր կարողանում հասկանալ, այն էր, որ բացարձակապես քաղաքական քննարկումներ չէին լինում անդամների ու ներկայացուցիչների միջեւ: Նա տարբեր առիթներով փորձում էր թեման շոշափել կամ իր ավելի մոտիկ ընկերների հետ, կամ գրեթե օտար մարդկանց հետ «բանկում»: Երբ լսում էին, որ քաղաքականության մասին է ակնարկում, Շին հռհռում էր եւ ուրիշ բաների մասին էր խոսում, ծերունի Չուն՝ բանաստեղծը, ծաղրական քմծիծաղում էր եւ հեռանում, զեներալ Տաոն պարզապես ասում էր, որ իզուր ժամանակ է վատնում, իսկ մյուսներն էլ մշտապես նայում էին նրան օտարոտի հայացքով, շրջվում ու հեռանում: Սկզբում նա կասկածում էր, թե ինչ-որ բան այն չէ, բայց ի վերջո հաշտվեց այն մտքի հետ, որ մարդիկ, ովքեր միացել էին այս կազմակերպությանը, հաստատվել էին որպես հեղափոխականներ, որոնք պետք է որ բավականին քննարկած լինեին այդ թեման, եւ հիմա հետագա ցանկացած գրույց համարում էին որպես մի ձգտում՝ մեծ տպավորություն գործել, փոխանակ հաստատելու իրենց վճռականությունը: Ի վերջո ասված է՝ ով խոսում է, չի գործում, իսկ ով գործում է, չի խոսում: Նա թաքուն հարցրեց Տիևգին, թե ինչ

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Է մտածում այս մասին, բայց Տիևզն ասաց, որ իր մտքով իսկ չի անցել, թե քաղաքականության վերաբերյալ քննարկումն այդքան կարետոր է: Այնուամենայնիվ նա գիտեր, որ բոլորը պատրաստվել են ամեն բան անել տապալելու համար մանջուրների վարչակարգը, և դա արդեն բավականին լավ էր իր համար:

Տարեվերջին պարոն Յանը մի օր հանկարծ հարցրեց Տա Տունգին, երբ նա իր «օրապահիկն» էր հավաքում «բանկում», թե չի՞ ուզում, արդյոք, թիրախին կրակելու փորձ ծեռք բերել:

«Իհարկե, պարոն Յան»:- Տա Տունգի ուրախությանը չափ չկար: «Վերջապես գործողություն»,- անցավ նրա մտքով:

«Ծերունի Չուն մեկն է նրանցից, ովքեր պատրաստվում են վերահսկելու, և ընդամենը մի քանի թափուր տեղ կա: Ստածեցի՞ թերեւս դու ևս ընկերո՞՞ Տիևզը, կուզեիք գալ»:

«Ես նրան իսկույն կգտնեմ»:

«Չէ, պետք չէ, քանի դեռ ինքը պատրաստակամ չէ: Չպետք է ստիպես նրան»:

Երբ Տա Տունգն այդ մասին ասաց Տիևզին, վերջինս անչափ երջանիկ էր: Նրանք միայն ուզում էին, որ Շին և Տանն էլ գնային:

Նրանց տվեցին Հոնկոնգի քարտեզի կոպիտ ուրվագիծը, իսկ բլրի մեջտեղում, մի քանի ճանապարհների միջեւ խաչ էր արված, և ներքեում գրված էր «Liu Garden»: Ասացին, որ Liu Garden-ում լինեն 12-րդ լուսնի 23-ին:

Դժվար էր նեղ և ուղղածիզ արահետով վեր բարձրանալ և ճամփան գտնել, նույնիսկ քարտեզի օգնությամբ հեշտ չէր դա: Տա Տունգը տեսավ, որ Տիևզն իրենից շատ ավելի վատ է կարողանում գտնել ճամփան: Սակայն նրանց հաջողվեց տեղ հասնել ուշ առավոտյան, և տեսան, որ Liu Garden-ը գեղեցիկ ու մեկուսի մի ամառանոց է՝ լայնատարած պարսպով: Այն շքեղ կահավորված էր, բայց սենյակները տարօրինակ տեսք ունեին, քանի որ կահույքը տեղափոխված էր դեպի անկյուն, և տարածքի մի մեծ մաս ազատ էր թողնված: Դիմավորող ոչ ոք չկար, բայց տեսան, որ ուրիշ մարդիկ էլ են շարունակում գալ: Երբ ճաշի ժամն եկավ, ճաշասենյակում ու հյուրասենյակում պարզ կերակուր մատուցվեց: Շուրջ վաթսուն մարդ կար այդտեղ, բոլորն էլ վատ հագնված և ակնհայտորեն՝ կազմակերպության անդամներ: Բոլորը նստած իրենց կերակուրն էին ազահաբար կով տալիս: Կեսօրին ոչինչ չկար անելու, բայց երեկոյան ընթրիքից հետո ծերունի Չուն հավաքեց նրանց ու էլի ուրիշ չորս հոգու և տարավ այգի, որտեղ թիրախ-

ների մի շարք էր կանգնեցված: Ամեն մեկին մեկ Բրաունինգ ինքնածիզ ատրճանակ տրվեց, եւ ծերունի Չուն սկսեց բացատրել, թե գենըն ինչ կառուցվածք ունի եւ ինչպես է աշխատում:

Մթնշաղին, երբ կղզու վրա ամեն մի տուն, չինական դարավոր ավանդույթի համաձայն, ճայթռուկներ էր արձակում՝ երկրպագելու համար իրենց խոհանոցային աստծուն, փամփուշտներ բաժանվեցին, եւ նրանց սովորեցրին թիրախներին նշան բռնել: Սկսվեցին հրածգութայան պարապմունքները, որոնք երբեմն ընդհատվում էին վարժեցնողի հրահանգներով: Վարժեցնողները տասն էին, որոնցից ամեն մեկն ուներ վեց ենթակա: Թիրախները լուսավորված էին եւ պարզ երեւում էին մթության մեջ: Կեսգիշերին մոտ, երբ ճայթռուկների ձայներն սկսեցին լռել, նրանք կույնպես դարձրեցրին պարապմունքները եւ գնացին քնելու: Քնեցին այն սենյակների հատակներին, որտեղ կահույքը մի կողմ էր տարված:

12-րդ լուսնի 24-ից գրեթե ամեն օր ամբողջ կոր տարվա ընթացքում տուն է մինչեւ 1-ին լուսնի 15-ը, որը Լապտերների տունն է: Երբ ճայթռուկներն արձակվում էին բոլոր տներում օրվա բոլոր ժամերին, նրանք կարող էին շարունակել իրենց պարապմունքները՝ թիրախներին կրակելով՝ առանց որեւէ մեկի կողմից նկատվելու: Ծերունի Չուն փութաջան վարժեցնող էր եւ անվրեպ կրակող: Իրականում սովորելու շատ բան չկար: Պահանջվում էր միայն մի փոքր բացատրություն եւ շատ աշխատանք: Երեք-չաբաթյա անընդմեջ պարապմունքներից հետո բոլորն էլ դարձան բավականին լավ հրածիզներ:

Տարբեր մարդկանց հետ մեկ վերմակի տակ քնելով՝ Տա Տունգը ծանոթացավ շատ ընկերների, որոնցից ոմանք լավ կրթություն էին ստացել, թեւ լիովին մուրացկանի տեսք ունեին: Հենց պարապմունքների անցկացման այդ կարճատեւ ընթացքում էլ նա ավելի մոտիկից եւ ավելի լավ ճանաչեց ծերունի Չունին: Բացի այն, որ խիստ զարմացած էր՝ տեսնելով, թե ինչպիսի լավ հրածիզ է Չուն եւ որքան լավ է հասկանում տարբեր գենքերից, Տա Տունգը նաեւ հնարավորություն ունեցավ նրա բանաստեղծական գրվածքներն այժմի անցկացնելու եւ դրանց մասին պատկերացում կազմելու, որոնց վերաբերյալ որեւէ մեկի կողմից ակնարկ իսկ չէր լսել: Նախկինում, թեւ մի սենյակում էին մնում, նրանք հազվադեպ էին հանդիպել եւ խոսել միմյանց հետ: Երբ Տա Տունգն անկողին էր մտնում, եթե հատակը կարող էր անկողին համարվել, ծերունի Չուն դեռ դրսում էր: Իսկ երբ առավոտյան արթնանում էր եւ գնում «բանկ», ծերունի Չուն միշտ դեռ խորը քնած էր լինում: Liu Garden- ում նա նկատեց, որ ծերունի Չուն միշտ

ԱՅՈՒՄԻ ՇԻՒՒ

մոմոում է քթի տակ եւ երբեմն շտապով մի տող կամ արտահայտություն է գրում հին, ճմռթված ու պատահողոված թղթի կտորների վրա, որոնցով լի էին նրա գրպանները: Նա բավականին շատ էր ծխում եւ այդ թղթերն օգտագործում էր ծխախոտը վառելու համար: Մի օր Տա Տունգը սենյակի հատակին թղթի մի կտոր գտավ, որի մի մասն այրված էր: Դրա վրա բանաստեղծություն էր գրված, բայց, ցավոք, միայն կեսն էր մնացել: Առաջին երկու տողերն այս տեսքն ունեին.

«Գլուխս եմ բարձրացնում եւ հարցնում Երկնքին, բայց Երկնքն
անհաղորդ է այնպես,
Հայացքս խոնարհած՝ Երկրին եմ ես կայում, եւ Երկիրն է լռում
անտարբեր»:

Տա Տունգը հիացած էր այս տողերով եւ ուզում էր եզրափակիչ տողերը լսել: Նա խիզախեց թուղթը տալ ծերունի Գուրն՝ մտադիր լինելով հարցնել նրան այդ մասին: Բայց վերջինս անփութորեն վերցրեց այն եւ անմիջապես դրանով վառեց իր ծխախոտը՝ առանց բառ իսկ ասելու: Հետագայում Տա Տունգը մի քանի անգամ փորձեց գրույցի բռնվել նրա հետ, բայց նա միայն մի քանի հայիոյանք հնչեցրեց եւ հեռացավ:

Հրածգության պարապմունքներից հետո նրանք Նորից վերադարձան իրենց Նախկին տեղերը, եւ կյանքն առաջվա պես առանց իրադարձությունների էր անցնում: Բայց թվում էր՝ Տա Տունգը բացահայտել է կազմակերպության գաղտնի հոգին, եւ նա սկսեց իր ամենօրյա ընկերների սովորական, չսափրված ու կոշտուկոպիտ դեմքերը նոր լույսի տակ տեսնել: Տեսավ, որ նրանցից մի քանիսը լավագույն հրածիզներ են, որ իր մտքով իսկ չէր անցնի, եւ երբ Նորից ետ եկան՝ Հոնկոնգի փողոցներում իրենց թափառական կյանքը վերսկսելու, երբեք չէին հիշատակում իրենց պարապմունքների ու ձեռքբերումների մասին, այլ առաջվա պես շարունակում էին խմել, դեսից-դենից բաներ պատմել, կատակել ու հայիոյել:

Մի օր էլ պարոն Յանը հարցրեց Տա Տունգին եւ Տինգին, թե արդյոք չէին՞ բարեհաճի գնալ Կանտոն՝ աշխատելու քիմիական լաբորատորիայում, եւ շուտով նրանց ուղարկեցին Շա-Միենի բրիտանական կոնցեսիոն ձեռնարկություն, որն սկզբում ավագոտ ծանծաղուտ է եղել, ինչպես չինարեն բառիմաստն էր ակնարկում, Կանտոնի հարավ-արեւմուտքում: Ճամփորդությունը Հոնկոնգից մոտավորապես ութսուն մղոն էր, իսկ ջրային ճանապարհով շոգենավը կարող էր տեղ հասնել մի քանի ժամում:

Փոքր դեղատան ետեւում, որն աշխատեցնում էր մի իռլանդացի, մի փոքրիկ սենյակ կար առաջին հարկում, մի մեծ սենյակ՝ նկուղում, եւ երկու

փոքր սենյակներ վերելում՝ բոլորն էլ պայթուցիկ պատրաստելու համար նախատեսված կյուբերով ու սարքավորումներով լի: Մոտ երեսուն ընկերներ հավաքվեցին այդտեղ, իսկ իռլանդացին կավիճը ձեռքին սկսեց գրատախտակին նկարելով բացատրել պայթուցիկների սկզբունքների, տարբեր մասերի եւ բաղադրիչների մասին: Նա խոսում էր իռլանդական շեշտված առողանությամբ, եւ ընկերներից մեկը, որին Տա Տուևզը մեկ տարի առաջ հանդիպել էր Հոնկոնգում, բայց երբեք իրար հետ չէին խոսել, մյուսների համար թարգմանում էր չիևարեն: Երբ հետագայում պարզվեց, որ Տա Տուևզը նույնպես կարող է ազատ անգլերեն խոսել, նրան խնդրեցին թարգմանել: Մյուս թարգմանիչը նույնքան զարմացած էր Տա Տուևզի անգլերենի իմացությունից, որքան որ Տա Տուևզն էր նրա իմացությունից զարմացած: Պարզ բացատրությունից հետո նրանք սկսեցին սովորել, թե ինչպես միանգամից պայթուցիկներ պատրաստել: Մի քանի շաբաթ աշխատում էին գիշեր ու ցերեկ, եւ կիրառում բոլոր մասերը քանդելու եւ հավաքելու տարբեր ձեւեր: Նրանք տարբեր չափերի բավականին շատ ռումբեր պատրաստեցին, եւ երբ իռլանդացին գոհ էր, որ բոլորն էլ վարպետորեն յուրացրել են հմտությունները, նրանց տարան Կանտոն քաղաքի հյուսիսային դարպասներից դուրս գտնվող բլուր, որպեսզի փորձեն իրենց արտադրածը թերթաքարի հանքում: Երբ գնացին, մեկ այլ խումբ եկավ, եւ Տա Տուևզին պահեցին այնտեղ, որպեսզի մյուս թարգմանչի գործը թերթեացնի, որից հետո նրանք հերթով փոխաչինում էին միմյանց: Երբ մեկն իռլանդացու հետ էր, մյուսը գնում էր Հոնկոնգ թափառելու:

Տա Տուևզը հիմա հասկացավ, որ հեղափոխական ընկերությունը, որը թվում էր անկազմակերպ եւ անգործունյա նույնիսկ իրենց՝ կազմակերպության անդամներին, ըստ էության իրականացնում էր իր հիմնական աշխատանքը գաղտնի, առանց ավելորդ աղմուկի: Վերապատրաստման հարյուրավոր կենտրոններ էին գործում նահանգի բոլոր մասերում, եւ կազմակերպության անդամներն ուղարկվում էին տարբեր թաղամասեր, որպեսզի մարզվեին ձիավարժության, վազքի, պատ բարձրանալու, ցատկի, ձողացատկի, թիավարման եւ նավարկելու գործում՝ հմուտ վարժեցնողների ղեկավարությամբ: Կուանգ Սյու կայսեր գահակալման 21-րդ տարում (1895) Կանտոնը գրավելու իրենց ձեռնարկման ձախողումից եւ շատ ընկերների կյանքի զոհաբերումից հետո նրանք իրենց առաջին դասն ստացել էին դառն փորձով, եւ կազմակերպության ամեն մի անդամ մանրակրկիտ ու հիմնավոր նախապատրաստվում էր՝ նախքան որեւէ գործի նշանակվելը: Կազմակերպության գործելաոճը նույնպես կտրուկ փոփոխության էր են-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

թարկվել: Ծանուցումներով պարբերաբար գրավոր պայմանավորվածությունների եւ այլ ձեւական հայտարարությունների փոխարեն նրանք այժմ որդեգրել էին այս ամենաարտասովոր եւ յուրօրինակ աշխատանքը: Փորձառության տարիները բարելավել էին աշխատանքը կարգավորելու նրանց թվացյալ պատահական, չկանխամտածված գործելակերպը, եւ կարելի էր ասել, որ լուրջ աշխատանքն առավել արդյունավետ իրականացվում էր ոչ աշխատանքային, տոնական ոգով: Մինչ բոլորին թվում էր, թե իրենց ամբողջ ժամանակն անցկացնում են արձակուրդում, առանց աշխատանքի,- քանի որ հեղափոխության տարբեր արհեստներում վարժվելն ու հմտանալը նման էր կիրակնօրյա դպրոց հաճախելու կամ գյուղական հավաքույթի մասնակցելու,- կազմակերպության յուրաքանչյուր անդամ մարզվում եւ կատարելագործվում էր, որպեսզի կարողանար պայքար մղել մեծաքանակ զինվորների դեմ: Ընդհանուր բարեկամական մթնոլորտը կազմակերպության անդամների միջեւ ձեռք էր բերվում միայն տարիների ուշադիր ու զգուշավոր փորձառությունից եւ եռանդուն գործունեությունից հետո: Ընկերությունը պողպատյա կարգապահություն էր պահպանում տարիներ շարունակ, եւ հիմա արտաքսնապես կարգապահության լիակատար բացակայությունն ըստ էության քողարկում էր նրա կատարյալ կարգապահությունը: Թղթի վրա գրված կանոններին ենթարկվելը սոսկ մանկան խաղ էր՝ համեմատած հազարավոր մարդկանց կողմից բարեպաշտորեն պահպանվող ավանդական ոգու ողջամիտ կենսակոչման հետ: Սկզբում Տա Տունգը զարմանում էր, թե ինչպես կարող է այս անկարգապահ կարգապահությունը շարունակաբար տեսել, քանի որ կարծես թե ոչ մի պատիժ չէր սահմանված, բայց շուտով իմացավ, որ ըստ էության «տոմսով» եւ իր «օրապահիկը բանկից» ստացող անդամը փաստացիորեն չէր գրանցվում, մինչեւ հետո ի վիճակի չէր լինում ապացուցել, որ պահպանում է ավանդական ոգին՝ առանց կարգապահական միջոցների կիրառման: Իրականում շատ անդամներ հեռացվում էին շատ ավելի վաղ, քան կասկածի նշույլ իսկ կունենային ընկերության գործունեության վերաբերյալ:

Տա Տունգին աստիճանաբար պարզ դարձավ, որ պարոն Յանը՝ ընկերության նախագահը, արտաքուստ կենսուրախ եւ անհոգ մի անձնավորություն, իրականում շատ խորաթափանց եւ գործնական մարդ էր: Նա ուշագրավ մի շնորհով էր օժտված. մեկ անգամ մարդուն հանդիպելով՝ հիշում էր նրա դեմքը: Քարտուղարը՝ պարոն Կունը, բացի գիր ու գրականության մարդ լինելուց, ձեռագրի փորձագետ էր եւ չափազանց շատ կարդացած

մարդ: Միջոցները, որ անսպառ էին թվում անդամների «օրապահիկների» և վերապատրաստման տարբեր կենտրոններում բազմաթիվ ծախսերի համար, առատածեռնորեն նվիրաբերվում էին աշխարհի բոլոր ծայրերի հայրենասերների կողմից՝ Նյու Յորքից, Չիկագոյից, Սան Ֆրանցիսկոյից, Փարիզից, Սինգապուրից, Հոնայից, Բատավիայից, Բոմբեյից, Շահայից և, իհարկե, Հոնկոնգից: Ի դեպ, տեղական բանկիրը, որ գործարքներ էր կատարում անգլիացի բոլոր խոշոր վաճառականների հետ, ամսական գգալի ներդրում կատարելուց բացի, պարտավորվել էր անսահմանափակ վարկ տալ պարոն Յանին՝ լիակատար վստահությամբ, որ նա մեկ պղնձեղրամ իսկ երբեք չի ծախսի առանց անհրաժեշտության, և որ արտասահմանից միշտ ներդրումներ ու աջակցություններ կլինեն՝ ընկերության ծախսերը հոգալու համար: Բժիշկ Սուն Յաթ-Սենի արտասահմանյան ուղեւորությունն ու նրա ճարտասանական արվեստը շատ ոսկեհանքեր էին բացել կազմակերպության համար:

Կուանգ Սյու կայսեր գահակալման 26-րդ տարվա(1900) զարնանը Յանցզիի հովտի և Ֆուցզյան ու Գուանդուն նահանգների գաղտնի կազմակերպությունների բոլոր առաջնորդները հավաքվեցին Հոնկոնգում հավատարմության իրենց երաշխիքը տալու Շին Չունգ Հոյին, և բժիշկ Սուն Յաթ-Սենն ընտրվեց այդ բոլոր կազմակերպությունների գլխավոր նախագահ: Իրադարձությունը փոքր-ինչ շատ էր ցուցադրական, և Հոնկոնգի կառավարությունը որոշեց մերժել բժիշկ Սունի՝ նազ ստեղծելու թույլտվությունը, երբ նա արտասահմանից վերադարձավ 5-րդ ամսին: Միեւնույն ժամանակ մանջուրական արքունիքը պատերազմ էր հայտարարել բոլոր օտարերկրյա պետություններին, և իշխան Տուանի ու Մեծ քարտուղար Կան Յիի՝ երկու պնդածակատ պահպանողական մանջուրների ենթակայության ներքո գտնվող Բոնցքամարտիկների զորքերը սկսեցին գրոհել Պեկինի օտարերկրյա բոլոր դիվանագիտական ծառայությունների վրա:

8-րդ լուսնին, երբ Պեկինն ընկել էր, և այրի կայսրուհին կայսեր հետ փախել էր Շանսի, Տանգը՝ աքսորված, վտարանդի բարեփոխիչների հետ սերտորեն կապված ընկերներից մեկը, նախապատրաստվում էր Հանկոնում հեղափոխություն սկսել: Բայց փոխարքա Չժան Չժի-Պունը, որը գաղտնի կապեր ուներ Տանգի հետ, հանկարծ որոշեց հավատարիմ մնալ փախչող կայսրուհուն և մահապատժի ենթարկեց Տանգին ու սկսեց բնաջնջել բոլոր հեղափոխականներին Հունան և Հուպեյ երկու նահանգներում: Բժիշկ Սունը, թեև ի վիճակի չէր ինքն անձամբ մասնակցելու որեւէ բանի, պատվիրել էր ապստամբություն բարձրացնել Գուանդունում:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Պրա համար էլ պարոն Յանն իր գաղտնի զինված ուժերի մեծ մասը հավաքեց Վայչժոուում՝ Կանտոնից մոտ յոթանասուն մղոն արեւելք ընկած ռազմավարական մի քաղաքում: Նա հրաման տվեց Չեն անունով մի ընկերոջ, իսկ բժիշկ Սունը կազմակերպում էր գենքի շարունակական մատակարարումը Ճապոնիայից: Գեներալ Տաոյին, ծերունի Չուին և Տիւգին՝ երեքին էլ կարգադրված էր միանալ Վայչժոուի այդ ապստամբությանը: Բուն Կանտոնում տղամարդկանց միայն մի փոքր խումբ տեղաբաշխվեց, ներառյալ Տա Տունգը և Շին, որովհետև փոխարքա Թեի Շոուն, փոխարքա Չժան Չժի-Դունի օրինակից նախազգուշացած, նախապես կանխարգելիչ միջոցներ էր ձեռնարկել, որպեսզի տեսնի, որ ապստամբներ չկան իր մայրաքաղաքում: Վայչժոուի ընդվզումն սկիզբ առավ նախնականորեն 8-րդ ամսին, և քանի որ բոլոր մարդիկ նախապատրաստված էին, նրանք շուտով գրավեցին հարեան բոլոր շրջանները և հնարավորություն ստացան հասնել Հարավային ծովին՝ սպասելով Ճապոնիայից գենքի առաքմանը, որպեսզի առաջ գնան: Փոխարքա Թեի Շոուն հրամայեց Կանտոնում ուժեղացնել խուզարկումները:

Տա Տունգին հանձնարարված էր քաղաքում խուճապ արթնացնել և տարածել, երբ Վայչժոուի հեղափոխական զորքերը մոտենային: Ամեն օր նրանք լսում էին իրենց Վայչժոուի ընկերների հաղթանակների մասին, և մյուսներն էլ մեծ ցանկություն ունեին սկսելու, բայց Տա Տունգն ամեն բան անում էր, որ զսպի նրանց և ստիպի սպասել իրենց ժամանակին: Քաղաքի դարպասները հսկողության տակ էին: Հետևաբար անհնար էր նրանց ավելի շատ հրազեն մատակարարել, իսկ հետո հնարավոր չէր նույնիսկ պայթուցիկներ պատրաստելու համար նյութեր անցկացնել: Այն ամենն, ինչ ունեին, մոտ երեսուն փոքր պայթուցիկներ էին, որ շուտափույթ հավաքել էին Կանտոնում, և Տա Տունգն ու իր ընկերները նայում էին դրանց՝ չիմանալով ինչ անել: Շին առաջարկեց անպայման ռմբակոծել Արեւելյան մեծ դարպասը, որպեսզի Վայչժոուի իրենց ըմկերները քաղաք մտնելիս դժվարությունների չհանդիպեն:

«Ոչ, ընկերներ»։ Տա Տունգն ավելի լավ միտք էր հղացել: «Ասում են՝ թշնամուդ կրակելիս ավելի լավ է առաջինը նրա ծիուն կրակես, իսկ ավագակախմբին բռնելիս ավելի լավ է նրանց ղեկավարին բռնես: Կարծում եմ բոլոր զինվորներին և ոստիկանությանը կարող ենք հաղթել, եթե միայն կարողանանք ազատվել մանջուր փոխարքա Թեի Շոուից: Այժմ եկեք ամեն մեկս մի ռումբ վերցնենք,- կուզեի, որ դրանք այնքան էլ նկատելի չիլեն, և գնանք դեպի Փոխարքայի յամենը»:

«Ես ներս կխուժեմ՝ ձեռքիս երկու ռումբ, եւ ով համարձակվի ինձ կանգնեցնել, առաջինը նա կստանա», - գոչեց Շին:

«Ոչ: Դու ստիպված ես մղոններ գնալ, մինչեւ որ կարողանաս մոտենալ փոխարքային, որն ապրում է յամենի ամենախորքում: Կսպառնեք մեր բոլոր ռումբերը նախքան երկրորդ կամ երրորդ ներքնաբակին հասնելը: Մենք գնալու ենք յամենի ետևամասով գիշերը, եւ մեկ կամ երկու ռումբով ետեւի պարսպի մեջ բավականին լայն անցք ենք բացելու, որտեղից կարողանանք ներս մտնել: Փոխարքայի մասնավոր բնակարանը չի կարող այդտեղից հեռու լինել, եւ մեզնից մեկը պետք է վճռի իր ռումբը պահել Նորին մեծնության համար, անկախ այն բանից, թե ինչ կլինի»:

«Շահ՛տ լավ,- բացականչեց Շին:- Այդ մեկը ե՛ս կլինեմ: Ե՞րբ ենք սկսում»:

«Այս գիշեր: - Տա Տունգը ճակատը կնճռոտեց:- Վայժժուի մեր ընկերները դիմացել են մեկ ամսից ավելի, ու թեեւ ամեն ինչ լավ են անում, բայց ինչ-որ տեղ պետք է որ խանգարող մի բան լինի: Այլապես վաղուց այստեղ էին լինելու: Մենք պետք է մեր անելիքն անենք, եւ հնարավոր է՝ դա կօգնի նրանց»:

«Ուրեմն դադարեցնենք խոսելը եւ սկսենք հենց որ մուրն ընկնի»:- Շին անհամբեր էր:

«Չէ: Հնարավորինս այնքան ուշ, որքան որ կարող ենք փողոցներում թափառել առանց կասկած հարուցելու: Եթե շատ շուտ սկսենք, Նորին գերազանցությունը կարող է դեռ տուն վերադարձած չլինել, եւ մենք նրան իր բնակարանում չենք գտնի»:

«Տասին տասնհինգ պակաս, հենց պարետային ժամից առաջ կհետեւեք ինձ»:

«Չէ: Մենք պետք է այնտեղ սողոսկենք մեկ առ մեկ եւ տարբեր ճանապարհներով: Եկեք հիմա քարտեզագրենք»:

Նրանցից ոչ մեկը չէր կարողանում գծել քաղաքի փողոցների լավ եւ ճշգրիտ քարտեզը: Յուրաքանչյուրը մի բան արեց, ու վերջապես բավականին հուսալի եւ կոպիտ մի ուրվագիծ ստացվեց, որ պատկերում էր դեպի յամեն տանող բոլոր հնարավոր ճանապարհները: Ամեն մեկն ընտրեց մի ճանապարհ, եւ պայմանավորվեցին հանդիպել շենքի ետեւի պարսպի մոտ տասին տասնհինգ պակաս, ինչպես առաջարկել էր Շին: Ընթրիքից հետո սկսեցին դուրս սողալ փողոց՝ ամեն մեկի մոտ՝ լրագրի կամ դարչնագույն թղթի մեջ փաթաթված մի ռումբ: Տա Տունգն ընտրել էր ամենակարճ ճանապարհը, որտեղից մինչեւ նշանակետին հասնելը յոթ րոպեից ավել

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

չէր տեսի: Գիտակցելով սեփական թերությունները՝ ևս դուրս եկավ ինն անց կեսին, որպեսզի ապահով լինի, հետը վերցնելով ուրվագծային քարտեզը: Երկու շրջադարձից հետո ևս տեսավ, որ փողոցները լրիվ տարբեր էին եւ այնպիսին չէին, ինչպիսին կարծում էր՝ թե պիտի լինեին: Քարտեզից օգուտ չկար: Եւ դա անգիր գիտեր, բայց փողոցների իրական դասավորությունը շատ ավելի բարդ էր, քան ուրվագծված էր թղթի վրա: Բացի այդ՝ ևս չէր կարողանում կարդալ դա՝ փողոցային լամպերի աղոտ լույսի տակ: Ստիպված էր օգտվել կողմնորոշվելու իր զգացողությունից, որն, ավաղ, միշտ սխալական էր:

Մինչ ևս դեսուդեն էր վազվզում, մեկը մյուսի ետեւից սխալ շրջադարձեր կատարելով, հանկարծ բարձր պայթյուններ լսեց, իսկ քիչ անց՝ հրացանների կրակոցի ձայն: Եւ առաջ նետվեց դեպի այն կողմը, որտեղից գալիս էր աղմուկը, համոզված, որ այդպես սխալ ուղղությամբ չի կարող գնալ: Շուտով մարդիկ սկսեցին վազել բոլոր ուղղություններով, եւ փողոցները մեկեն ամայացան: Երբ առաջ էր սլանում, դեմառդեմ հանդիպեց մի ոստիկանի: Փորձեց խուսափել համազգեստավոր այս մարդուց, որին իր թշնամին էր համարում: Բայց ոստիկանը հասավ նրան եւ դարչնագույն փաթեթն արագ խլեց նրա ձեռքից: Դնելով այն ճամփեզրին գտնվող ջրամբարի մեջ՝ ոստիկանը շատ արագ ասաց. «Տուն գնա: Ամեն ինչ վերջացած է: Փոխարքայի մարդիկ դուրս են եկել եւ կրակելու են բոլոր նրանց, ում տեսնեն: Շատ շուտով այստեղ կլինեն»:

Հասկանալով, որ այդ մարդը բարեկամաբար է տրամադրված, Տա Տունգը հարցրեց. «Մենք հասն՞լ ենք փոխարքային»:

«Ո՛չ: Եւ երբեք քաղաքում չի քնում»:

«Իսկ ի՞նչ եղան մեր մարդիկ»:

«Բոլորին ստիպեցինք խաղաղ տուն գնալ ևսխալ պահակախմբի գործի դուրս գալը, բացի մեկից, որն ուղիղ դեպի յամեն էր սլանում: Ստիպված էինք ձերբակալել նրան: Շատ վատ կդիտվեր, եթե չձերբակալեինք»:

«Ինչո՞ւ դուք՝ մարդիկդ, մեր կողմը չանցաք եւ չզինաթափեցիք փոխարքայի թիկնապահներին»:

«Մեզ թվով գերազանցում են: Եթե Վայջժուուի հեղափոխականներին հաջողվեր մոտենալ քաղաքին, այլ կերպ կլիներ: Չարմանում եմ, թե ինչու չեն գալիս»:

«Ես նույնպես»:

«Բարի գիշեր, եւ զգույշ եղիր»:

«Շնորհակալ եմ: Հուսով եմ կրկին կհանդիպենք»:

Երբ ևս վերադարձավ իրենց կացարանը, տեսավ, որ բոլորը վիատված ետ են եկել, բացի Շիից, որը, չնայած բարեկամաբար տրամադրված ոստիկանի հորդորներին, նետվել էր առաջ եւ գերի ընկել: Խեղճ Շի, ևս իր կյանքը զոհոբերեց, իսկ մահափորձի իրենց ձեռնարկումն անհետք վախճան ունեցավ: Այն ամենն, ինչի հասան, փոխարքայի յամենի ետևապարսպի մի զգալի մասի ավերումն էր եւ մոտ քսան մանր պաշտոնյաների ու ծառաների մահը:

Նրանք վերադարձան Հոնկոնգ, հենց որ ամեն բան խաղաղվեց: Տա Տունգը տեղեկացավ, որ Վայջժոուի ընդվզումը նույնպես ավարտվել է պարտությամբ, քանի որ նրանց՝ հեղափոխությունն սկսելուց տասն օր հետո ճապոնական կաբինետը ենթարկվել էր փոփոխության, եւ գեներալ ոչ մի խմբաքանակ չէր ուղարկվել իրենց: Ավելի քան մեկ ամսվա հերոսական պայքարից հետո, երբ նրանց ասացին, որ ճապոնական նոր կաբինետը այլ քաղաքականություն է վարում Չինաստանի հանդեպ, ստիպված էին ցրվել եւ գաղտնի մեկնեցին Հոնկոնգ: Ինչպես նախկինում, մի շարք ընկերներ գրկվել էին կյանքից:

Տա Տունգը գիտեր, որ հեղափոխությունը երբեք հաջողության չի հասնում առանց մեծ զոհաբերության, բայց Շիի մահը խիստ ծանր հարված էր իր համար: Նա տազնապահույզ սպասում էր Վայջժոուի իր ընկերներին, եւ իրեն իսկապես երախտապարտ էր զգում, երբ Տիւնգն ու Տաոն ողջ-ամողջ ետ եկան: Հարցրեց ծերունի Չուի մասին, որն, ինչպես ասացին, թեթեւ վիրավորվել էր, բայց արագ ապաքինվում էր եւ շուտով ճամփա կընկներ: Այժմ ևս ապահով ձեռքերում էր: Երկու շաբաթ անց ծերունի Չուն վերադարձավ՝ դեմքին մի սպի:

Շուտով պարոն Յանը եւ մյուս առաջնորդները համեստ մի ճաշկերույթ կազմակերպեցին նրանց համար, ովքեր պատասխանատու էին Վայջժոուի եւ Կանտոնի հեղափոխությունների համար: Հանդիսավորությամբ կատարվեց գինին հողի վրա հեղելու՝ նահատակների հիշատակին նվիրված ավանդական արարողությունը: Ապա ծերունի Չուն, որի կատարած աշխատանքը բարձր էր գնահատվում Վանչժոուի բոլոր ընկերների կողմից, խզեց լուծությունը. «Մաղթում եմ, որ ունենանք ավելի շատ գեներալ: Մաղթում եմ, որ ունենանք ավելի լավ քարոզչություն»: Այս նախադասություններից հետո ևս այլևս ոչ մի բառ չասաց ամբողջ ճաշկերույթի ընթացքում:

Տա Տունգն էլ ճիշտ այդ մտքին էր, բայց նրա բառերն ավելի լուսաբանող էին ու կառուցողական. «Մեր բոլորի կյանքերը, բացի ընկեր Շիից, փրկվեցին ոստիկանների՝ մեր հանդեպ ցուցաբերած համակրանքի շնոր-

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

հիվ: Նրանք լիովին պատրաստ էին անցնելու մեր կողմը, եթե մենք ավելի մեծ ուժ ունենայինք թշնամուն պարտության մատնելու համար: Եթե մենք կարողացանք նրանց աջակցությունը ձեռք բերել առանց հատուկ քարոզչության, անշուշտ կկարողանանք ձեռք բերել զորքի աջակցությունը, եթե ունենանք բավարար չափով հրապարակայնություն: Նրանցից շատերը կարծում էին, թե մենք պարզապես ավագակներ ու կողոպտիչներ ենք»:

«Այո,- համաձայնեց պարոն Յանը:- Երբ ես իմացա, որ ճապոնական նոր կառավարությունը հանկարծ արգելք է դրել իր գեներ-գիևամթերքի արտահանման վրա, ամեն տեղից փորձեցի գեներքի պաշարներ հայթայթել: Լավագույն ծրագիրն էր՝ սահանգային գիևամթերքի պահեստի գիևվորներին համոզել, որ անցնեն մեր կողմը: Երբ մեր ընկերներից ուղարկեցինք, որպեսզի մոտենան նրանց, նրանք ասել էին, թե երբեք չեն լսել Շին Չունգ Հոյի մասին, եւ իրենց ասել են, որ Վանչժոուի ապստամբները ոչ այլ ինչ էին, եթե ոչ բռնցքամարտիկներ եւ երկարամազ հրոսակախմբեր»:

«Բացի Հոնկոնգում եւ Շանհայում հրատարակչական մեր օրգաններն ունենալուց, որպեսզի մարդկանց տեղեկացված պահենք,- շարունակեց Տա Տունգը,- մենք պետք է ևս եւ ստեղծենք եւ կատարելագործենք մեր շարժական հրատարակչական մեքենան, որը հնարավոր կլինի հավաքել կամ քանդել շատ կարճ ժամանակում: Դա մեզ կօգնի զանգվածներին տեղեկացնել մեր նպատակների մասին եւ աշխատել այնտեղ, որտեղ հարված ենք հասցնելու: Պարզվեց, որ մեր հիմնական վերապատրաստումն անբավարար էր եւ ոչ պիտանի: Օրինակի համար՝ սովորել ենք, թե ինչպես պետք է ռումբեր պատրաստել, բայց ստիպված ենք ամբողջությամբ կախման մեջ լինել Եվրոպայից եւ Ամերիկայից եկող նյութերից: Եթե կարողանայինք օգտագործել տեղական հումքը, կկարողանայինք ունենալ բավականաչափ շատ ռումբեր Կանտոնում, որպեսզի պայթեցնեինք փոխարքայի ամբողջ յամենը: Մենք Կանտոնում սպասեցինք մեկ ամսից ավելի եւ ոչինչ չէինք կարողանում անել»:

«Մենք սովորում ենք թանկ գնով եւ ծանր փորձով»,- տխուր ասաց Յանը:

«Քարտեզ ուսումնասիրելը եւ կազմելը նույնպես հրատապ է: Մենք կարծում ենք, թե գիտենք տեղանքը, բայց կարող են շատ փողոցներ ու նրբանցքներ լինել, որոնցից կկարողանայինք օգտվել, եթե մանրակրկիտ իմանայինք դրանք»:

Յուրաքանչյուր ձախողումից հետո նրանք սովորում էին կենսական նշանակության որոշակի բաներ, եւ միշտ այդ պատրաստակամության

շնորհիվ էր, որ բարելավում էին վերապատրաստման իրենց գործելակերպը: Տա Տուևգի առաջարկով տպագրություն եւ վիմագրություն սովորեցրին խմբի որոշ անդամների, եւ հատուկ ուշադրություն դարձվեց թերթերի ու փաստաթղթերի բազմացմանը ամենաարագ կերպով եւ ամենապարզ սարքավորումներով: Պայթուցիկների արտադրությունը, Տա Տուևգի մտահղացումներին հետեւելով, սկսեց արտառոց ձեւեր ընդունել: Ռումբերի սովորական, ընդունված ձեւի փոխարեն փորձարկեցին պայթուցիկների պատրաստումը ծաղկի մեծ թաղարներում, ծաղկամաններում ու ծանր թեյամաններում, կավե մեծ կժերում, գիւու փոքրիկ գավաթներում եւ տնային տարաբնույթ անոթներում: Նաեւ սովորեցին որպէս բաղադրիչներ օգտագործել հնարավորինս շատ տնային կյութեր՝ որպէս արտասահմանյան քիմիական կյութերի փոխարինիչներ: Ապա սկսեցին հավաքել եւ կազմել Չինաստանի բոլոր գլխավոր քաղաքների փողոցների ամենամանրամասն ու ժամանակակից հատակագծերը, եւ անդամներից յուրաքանչյուրը պետք է ստուգեր դա այն բնակավայրում, որտեղ ինքը ծնվել կամ հասակ էր առել, որպէսզի տեսներ՝ ճիշտ է արդյոք եւ արդյո՞ք պետք է հետագա լրացումներ կատարեր քարտեզում:

Ժամանակը թռչում էր, ու տարբեր քաղաքներում տարբեր փորձարկումներ էին կատարվում՝ այն անփոփոխ արդյունքով, որ իրենց ընկերներից դարձյալ ոմանց կորցնում էին եւ դեռ առաջվա նման կարիք ունեին ավելի զգուշավոր ու խնամքով նախապատրաստվելու:

Ոչ միայն շատ եղբայրների կորցրին, այլ նաեւ իրենց գլխավոր առաջնորդներից մեկին՝ պարոն Յանին: Մինչ նրանց չհաջողվեց սպանել փոխարքա Թեհ Շոուին, իրեն՝ Թեհ Շոուին հաջողվեց մի մարդասպանի ուղարկել Հոնկոնգ, որպէսզի սպանի պարոն Յանին: Քանի որ պարոն Յանը հեշտ հասանելի էր, բոլորն էլ գիտեին, որ նա վտանգի տակ է: Դրանից հետո մի շարք սպանություններ եւ սպանությունների փորձեր կատարվեցին նրանց անդամների ու նոր անդամագրվածների կողմից, եւ փոխարքաների ու նահանգապետերի կյանքը խաղատախտակին դրված չնչին բան դարձավ գաղտնի ընկերությունների ձեռքում:

Տա Տուևգը եւ իր ընկերները բազմաթիվ անհաջողություններ ունեցան, բայց յուրաքանչյուր պարտություն նրանց ավելի վճռական էր դարձնում՝ հասնելու իրենց ձգտումներին: Նրանք կարծում էին, որ մակցուրական արքունիքը կխորտակվի Բոնցքամարտիկների պատերազմից հետո, բայց արյունարբու Այրի կայսրուհին ապրեց մինչեւ Կուանգ Սյու կայսեր գահակալման 34-րդ տարին (1908), երբ երկուսն էլ մեռան երկու օրվա մեջ:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Համաձայն նրա հետմահու հրամանի՝ Վիշապի գահին նշանակվեց մեկ այլ անչափահաս կայսր՝ Սյուան Տունը, և երկիրն ավելի ու ավելի վատթար վիճակի մեջ ընկավ:

Յուանը կայսերական բարեհաճություն էր վայելել, քանի դեռ Այրի կայսրուհին ողջ էր: Առաջ քաշվելով՝ նա նշանակվել էր Լահանգապետ, փոխարքա և վերջապես մեծ խորհրդական: Բայց կայսրուհու մահից հետո նա անմիջապես շնորհագրվեց և շուտափոյթ հեռացավ իր հայրենի Հոնանի շրջանը:

Թեև Տա Տունգը և Լոտոսի Բուրմունքը չէին կարողանում իրար հանդիպել այդքան տարիներ, և նրանց Լամակները հաճախ կորչում էին, նրանք ասես պահպանել էին հոգետր կապը միմյանց հետ: Տա Տունգը գիտեր, որ Լոտոսի Բուրմունքը Պեկինում լավ է, չնայած որ վերջինս շատ քիչ բան ուներ իրեն ասելու: Պալատում տասը տարվա շարունակական ծառայությունը լավ վարձատրությամբ էր ապահովել նրան: Լոտոսի Բուրմունքն էլ գիտակցում էր, թե ինչպիսի դժվարությունների է հանդիպել Տա Տունգը, և լիովին հասկանում էր, որ նա չէր կարող գրել իրեն այն վայրերի մեծ մասից, որտեղ գտնվում էր, և երբ կարողանում էր գրել իրեն, այդ գրածն ավելին չէր, քան սիրո կարճ մի Լամակ: Ինքը միայնակ չէր, և Տա Տունգն էլ դժբախտ չէր, թեև երկուսն էլ անհամբեր սպասում էին այն օրվան, երբ կկարողանային մեկ անգամ էլ միասին լինել: Մարդիկ խոսում են զինվորի ոգու ուժի և տոկունության մասին, բայց պետք է իմանան, որ զինվորի կնոջ ոգու ուժն ու տոկունությունը հավասարապես մեծ են, եթե ոչ ավելի մեծ:

ՉԼՈՒԽ 14

*«Ով Ազատության համար է կռվում,
Ոչինչ չի շահում չարիքից բացի,
Իսկ ով ապրում է նրա սովերում,
Ո՛չ հոգև է եղել, ո՛չ կմտածի»:*

Մարդ կարող է փորձել տեղաշարժել երկինքն ու երկիրը, որպեսզի կայսր լինի, երբ լիովին գիտակցում է, որ ամենաչնչին հույսն իսկ չունի ինչ-որ մեկը լինելու: Մինչդեռ երբեմն իսկական գահաժառանգը կարող է ծնվել գահից խույս տվող եւ պատրաստակամ լինել ամեն բան տալու, որպեսզի խուսափի այդպիսի ծանր փորձությունից: Երեք տարեկան խեղճ արքայազն Հենրի Պու-Յին, որ պետք է դառնար իր հանգուցյալ դժբախտ հորեղբայր Կուանգ Սյուի ժառանգորդը՝ որպես Յին թագավորական տոհմի 12-րդ կայսր, ոտքերը թափահարելով եւ ճչալով, հրաժարվում էր կարելորդ արարողության միջոցով գահին բարձրանալուց: Նրա հայրը՝ ժամանակավոր կառավարիչ իշխան Չունը, ստիպված էր ամուր պահել նրան իր ծեռքերում եւ փորձելով կտրել երեխայի անպատշաճ ծայքը, ասաց. «Մի՛ լա, տղաս: Շուտով ամեն ինչ կվերջանա»:

Ճակատագրապաշտների կարծիքով՝ սա վատ նախանշան էր, որն, իրոք, ինչպես երեւաց, իրականացավ, երբ երեք տարի էլ չէր անցել, սակայն ոչ ոք չհիշեց բազմաթիվ բարենպաստ բաները, որոնք նույնպես հնչեցին նույնքան պատահաբար ու ակամա, բայց որոնք որեւէ ազդեցություն չգործեցին:

Ասում են՝ երբ սեխը հասած է, այն ինքնիրեն կպոկվի ցողունից:

Երբ, Սյուան Տունի գահակալման 3-րդ տարում, Տա Տունգին հանձնարարվեց միանալ Հանկոուում Շին Չուն Հույի կողմից նախապատրաստվող հեղափոխությանը, որն այժմ վերակազմակերպվել էր վերանվանվել էր Տուն Մին Հույ կամ Չինաստանի միացյալ ընկերություն, իսկ հետագայում հայտնի դարձավ որպես Կուո Մին Տան (Գոմինդան) կամ Ազգային կուսակցություն, ժամանակը հասունացել էր մանջուրների անկման համար: Բայց մի բուռ մարդկանցից բաղկացած գաղտնի ընկերության համար ավելի քան երկուսուկես դար լայնարձակ ու խելամիտ Չինական կայսրության վրա իշխող գահատոհմին տապալելը նշանակում էր ոչնչով պայքար սկսել ամեն ինչի դեմ: Քանի դեռ մի հրաշք չէր պատահել, հաջողության

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

հույս ունենալ՝ նշանակում էր անհնարին հույսն ունենալ: Սակայն երբ կայսրության ամբողջ բնակչությունը, սկսած իշխող տան երբեմնի հավատարիմ հպատակներից, աստիճանաբար դարձան նրանց թշնամիները և, ինչն էլ ավելի վատ էր, դարձան նոր գործի համակիրներն ու աջակիցները, այնժամ երկու կողմերը տեղերով փոխվեցին, և ստացվեց այնպես, որ ամեն ինչը պայթարում էր ոչնչի դեմ: Կարելի էր համարել, որ հրաշք տեղի ունեցավ, և դա մի հրաշք էր, որ տեղի ունեցավ գիտական սկզբունքների խիստ որոշակի սահմաններում: Անհնարին այժմ դարձավ անխուսափելի:

Տա Տունգը եղել էր բազմաթիվ նախորդ անհաջողությունների մասնակից, որոնք այդպիսի արդյունքի էին հանգեցրել ոչ թե խիզախության և վճռականության բացակայության պատճառով, թեև ավելի վաղ ընդվզումներից մի քանիսն իսկապես ծրագրման և նախապատրաստման կատարելությունից զուրկ էին: Իրոք, յուրաքանչյուր պարտությունից հետո հեղափոխականները ժամանակ չէին կորցնում կրկին համախմբվելու, ավելի վճռական և ավելի վստահ լինելու, քան երբեք, որպեսզի հաջողության հասնեին հաջորդ անգամ, և մեծապես շտապում էին մեկ այլ հարվածի համար պատրաստվելու: Վերջին քսան տարվա ընթացքում ոչ պակաս, քան քսանյոթ փորձ էր եղել, որոնցից շատերի ժամանակ «արյունը հոսում էր գետի պես, իսկ դիակներն իրար վրա էին կիտվում լեռան նման», և այդ փորձերից ամեն մեկը հերոսական մի մաքառում էր ընդդեմ ճնշող ու անհաղթահարելի ուժերի, որպեսզի հետագա սերունդները հիշեին, ողբային և երգեր հյուսեին:

Մի քանի անգամ Տա Տունգը վիրավորվել էր: Տիկզը, որ հնարավորությունը բաց չէր թողնում գնալու այնտեղ, ուր Տա Տունգն էր գնում, նույնիսկ գնդակ էր ընդունել իր ձախ բազկի մեջ, որը դեռ մնում էր բազկի մեջ: Ընկերների շրջանում Տա Տունգին հիմա «իդեալիստ» մականունով էին կնքել, թեև նա կտրուկ առարկում էր, թե ինքը շատ գործնական մարդ է: Դա նրա այն առաջարկության պատճառով էր, թե հատուկ ուշադրություն պետք է դարձնել հրապարակայնությանը, և որ շարժական մի մեծ մամուլ, մասնագետների մեծ անձնակազմով, ամրակցված էր յուրաքանչյուր շտաբի, որը մտադիր էր ուժով իշխանություն գրավել: Տա Տունգը մի քանի տարի եղել էր այդ բաժնի ղեկավարը, և հրապարակայնության նրա ղեկավարման ձեռն անկասկած արդարացնում էր «իդեալիստի» իր մականունը: Նա պնդում էր, թե ամեն բան, որն արժանի է արվելու, արժանի է, որ լավ արվի: Եվ դա պարզապես այն պատճառով չէր, որ ուզում էր որոշակի թղ-

թեր, որոնք հանձնարարում էր նրանց տպագրել, արագ բազմացվեին մեծ քանակով, այլ նաեւ այն պատճառով, որ ինքը հաստատապես հավատում էր, թե արժանավայել ձեռով տպագրված ամեն բան հասարակ ժողովրդին հարգանք կներշնչի, որը դրանք կհամարի հեղինակավոր տեղերից եկած: Միանգամայն ճշմարիտ էր այն միտքը, թե Թայ Փինի ապստամբությունը մասամբ ձախողվեց այն պատճառով, որ իր բոլոր պաշտոնական փաստաթղթերն ու ծանուցումները գրված էին բոլորովին անընթեռնելի ոճով: Մարդիկ տեսնում էին, որ նրանք, ովքեր պատասխանատու են դրանց համար, պիտանի չեն ղեկավարելու համար: Նա չպետք է միեւնոյն սխալը գործեր: Եթե Տա Տուկը կարողանար իր գործունեությունը բացեփբաց ծավալել, այդպիսի քաղաքականությունը դժվարություններ չէր ներկայացնի: Բայց այն ամենն, ինչ ուզում էին տպագրել, պետք է գաղտնի արվեր եւ շատ արագ, եւ այդ պատճառով էլ, երբ տեսան, որ ոչինչ չի կարող ետ պահել նրան՝ համառորեն իր սկզբունքները պահպանելուց, թուքումուր էին անում նրա հասցեին եւ անվանում «իդեալիստ»:

Մի շատ ընդունակ եւ խելացի ընկերոջ՝ Սուև Կուին, վստահված էր Հանկոուում գործերը ղեկավարելու կարելուր առաջադրանքը: Սուևը բազմաթիվ մարտերի փորձ ունեցող վետերան մարտիկ էր: Նա իր շտաբը հիմնադրել էր ռուսական կոնցեսիոն ընկերությունում, եւ նրա ղեկավարությամբ մեծաքանակ ռումբեր ու ձեռքի նռնակներ էին պատրաստվում, ինչպես նաեւ շատ զենք ու զինամթերք էր կուտակվել, որպեսզի օգտագործեին ապստամբության ժամանակ: Նա Տա Տուկի հանդեպ մեծ հարգանք ուներ, որի առաջարկը, թե ռումբերը պետք է այնպես պատրաստվեին, որ նմանվեին տնային ամեն տեսակի առարկաների, ոչ միայն հիացրել էր նրան, այլ նաեւ անհապաղ սկսել էր դա ի կատար ածել: Նրա սենյակում ոչ ոք չէր համարձակվում ինչ-որ բան տեղաշարժել առանց նախապես համոզված լինելու, թե դա քողարկված պայթուցիկ չէ:

Երբ Տա Տուկը եկավ Հանկոու, տեսավ, որ այն շենքը, որում Սուևն իր շտաբն է հիմնել, այնքան էլ մեծ չէ իր աշխատակազմն ու սարքավորումները տեղավորելու համար: Որպեսզի անգլիական ընկերությունից լավ թուղթ եւ այլ նյութեր մատակարարելն ավելի հարմար լինի, նա տեղափոխվեց բրիտանական կոնցեսիոն ընկերությունում գտնվող մի տուն: Քանի որ այս անգամ նպատակադրվել էին վճռական փորձ ձեռնարկել Հոնկոնգի բոլոր անդամներին հանձնարարված էր միանալ: Տիկը, բնականաբար, կնախընտրեր աշխատել Տա Տուկի հետ, բայց քանի որ վերջերս հայտնաբերել էր, որ գրեթե բոլոր կրթություն չստացած մարդիկ, որոնք աշխա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

տում էին բրիտանական ընկերությունների համար, Անգլիան մշտապես անվանում էին Մեծ Բրիտանիա, եւ որ Լույսիսկ հայրենասերներն այլ կերպ չէին վարվում, քան այդպիսի վերամբարձ բառով բնորոշելն էր այդ փոքրիկ կղզու վրա գտնվող երկիրը, որոշեց մալ ռուսական կոնցեսիոն ընկերությունում եւ Սունի ղեկավարությամբ ռումբեր պատրաստել:

Այդ ժամանակ ամբողջ կայսրությունը աղաղակում էր՝ խնդրելով Լոր բարեփոխումներ ու Լոր ուղիներ: Հասարակական կարծիքի ճնշման ներքո կառավարությունն ստեղծում էր Լոր բանակ, որ ամեն ինչ ընդօրինակել էր Շիաո-Չանում Յուան Շի-Կայի կողմից հատուկ վերապատրաստված բանակից: Այդ Լոր բանակի մի ստորաբաժանում գեներալ Չժան Պիաոյի ղեկավարած անգլիական դիվիզիան, հավաքագրվեց եւ տեղաբաշխվեց Յանցզի գետի հարավային ափին գտնվող Հուպեյի Լահանգային մայրաքաղաք Վու-Չանում ու Լրա շուրջը եւ ձեռավորելով Վու-Հանի եռյակ քաղաքների ամենառազմավարական մասը (Դրանք են՝ Հանկոուն, Վու-Չանը եւ Հան-Յանը): Ծերունի Չուն, որը շատ ավելի վաղ էր եկել, քան մյուսները, իր հրաշալի դիպուկ Լշանառության շնորհիվ այս Լոր բանակում կապիտանի կոչման էր արժանացել: Այդտեղ էր Լաեւ Լրա հին գործընկերը՝ գեներալ Տաոն, որն այժմ ծառայում էր որպես մասնավոր խոհարար մեկ այլ զորախմբում:

Սկզբում որոշվեց հարված հասցնել Սիչաշնանային տոնի գիշերը, երբ լիալուսին կլինի: Բայց քանի որ Լահապատրաստական աշխատանքները մեծ ծավալ էին ընդգրկում, մի քանի կարետոր գործեր անխուսափելիորեն հետաձգվել էին: Հետեւաբար բոլորը համաձայնեցին հետաձգել տասն օրով: Բայց այսպես թե այնպես իշխանություններին լուրեր էին հասել այդ մասին, եւ Լահորդ Լմանատիպ շատ օրինակներից ահաբեկված՝ փոխարքա Ժուի Չենը Լահագգուշական որոշակի միջոցներ ձեռնարկեց: Նա Յանցզիի Լավատորմն ուղարկեց գիշեր-ցերեկ պարեկություն անելու Հանկոունի եւ Վու-Չանի միջեւ ընկած ջրերում, ինչպես Լաեւ Լահանարքեց անգլիական դիվիզիայի հրամանատար, գեներալ Չժան Պիաոյին՝ հետեւակների իր տասնվեցերորդ զորախումբը, որը բաղկացած էր Լոր բանակի ամենավտանգավոր տարրերից եւ որոնցից մեկն էլ ծերունի Չուի ընկերությունն էր, տեղաշարժել դեպի Հուպեյի եւ Սիչուանի սահմանները՝ որոշ ժամանակ այնտեղ տեղակայվելու համար: Իր պոտենցիալ աջակիցների անսպասելի մեկնումը տագնապեցրեց Սունին: Դա մեծապես ազդեց Լրա մեծ ռազմավարության վրա: Հետեւակների մնացած՝ տասնհինգերորդ զորախումբում միայն մի քանի ընկերներ կային: Գեներալ Տաոն,

թեև մասնավոր կարգավիճակում, հեղափոխության համար հավաքագրում կատարելիս հրաշքներ էր գործում: Բայց, ցավոք, նա ավելի վաղ չէր միացել բանակին: Լինելով խոհարար՝ նա հնարավորություններ ուներ շփվելու գրեթե բոլոր «շարքային եղբայրների» հետ, երբ նրանք հանգստանում էին, եւ դա իդեալական ժամանակ էր, որպեսզի վերջիններիս պատմեր մանջուրներին տապալելու հրատապ անհրաժեշտության մասին: Տառն շատ լավ հռետոր չէր, բայց նրա ներկայությունը մեծ օգնություն էր: Երբ խոսում էր հասարակ մարդկանց թշվառությունների եւ մանջուրների կողմից նրանց կրած ճնշումների մասին, ինքը գոհի հենց պատկերն էր ներկայացնում: Նա «այրված գանգամաշկի եւ սպիավոր ճակատի» մարմնավորումն էր, իսկ նրա ողբերգական ժպիտը, որ ձեռք էր բերել իր եղբայրների հետ եղած ժամանակ, անմիջական համակրանք էր ներշնչում: Նրա խորապես հուզիչ ձայնը միայն բավականին ազդեցիկ էր, որպեսզի շատ սրտեր շարժեր:

Տա Տունգը մեծապես ողջունեց հարվածը հետաձգելու Սունի որոշումը: Նա այժմ բավականին ժամանակ ուներ շարունակելու իր աշխատանքը՝ իրեն հատուկ սովորական փութաջանությամբ: Նա մշակեց եւ պատրաստեց բազմաթիվ պաստառներ ու հայտարարություններ, եւ Լույսիսկ գերագանցեց իր բոլոր նախորդ ջանքերը՝ կազմելով «Ազատության հռչակագիր» դասական լավագույն գրական ոճով, որը ցանկացած գրագետ մարդ հպարտ կլիներ ունենալ: Այդտեղ նա հիշեցնում էր մանջուր դեկավարների կատարած բոլոր անմտությունները եւ ցույց տալիս, որ միշտ չին հասարակ ժողովուրդն է ստիպված եղել վճարել դրա համար: Ափիոնային պատերազմը, չին-ճապոնական հակամարտությունը եւ բուցքամարտիկների կատարյալ ձախողումը, դրանք բոլորը Լույս պատմությունն էին: Կուպիտ սխալներ էին գործում ժողովրդի հաշվին եւ ի վնաս ժողովրդի: Հիմա եկել էր ժամանակը, որ գանգվածներն իրենց ձեռքը վերցնեին ամեն բան:

Հեղինակի հպարտությամբ, որը գոհ է իր ոգեշնչված աշխատանքից, նա որոշել էր դա գրել իր սեփական ձեռքով ու վիմագիր տպագրությամբ ունենալ լավ թղթի վրա եւ մեծ քանակությամբ: Երբեք նախկինում նա հնարավորություն չէր ունեցել ձեռք բերել այդքան հիանալի թուղթ եւ տպագրական կյութերի այդպիսի առատ պարագաներ, ինչպես մի քանի դուռ այն կողմ գտնվող անգլիական ձեռնարկությունից էր կարողանում ձեռք բերել: Նախկինում երբեք նա չէր ունեցել այդքան շատ ժամանակ՝ տեսնելու, որ ամեն ինչ արվել է կատարյալ ձեռով: Նրա ներսում գտնվող բանաստեղծը Լույսպես մղում էր նրան տպագրել բանաստեղծությունների

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

տասնվեց էջանոց գրքույկ, որոնք ժամանակ առ ժամանակ հորինել էր իր հեղափոխական գործունեության ընթացքում: Դրանք գրեթե բոլորը գրվել էին ի հիշատակ իր ընկերների, որ իրենց կյանքն էին տվել չին ժողովրդի ազատագրության գործի համար, եւ ևս կարճ բանաստեղծությունների այդ փոքրիկ ժողովածուն վերնագրել էր «Ազատության երգեր»: Դա մի բան էր, որն ինքը միշտ ձգտում էր անել, բայց ժամանակի եւ նյութական սղության պատճառով նրա հույսերը չէին արդարացել մինչեւ այժմ, երբ մտածեց, որ պատեհ ժամանակն է այդ անելու: Ապստամբության հետաձգման պատճառով ևս մի փոքր ազատ ժամանակ ուներ, որպեսզի տրվեր նման բաների, եւ անգլիական ձեռնարկության կառավարիչը, իմանալով, որ ևս ճաշակով մարդ է, նրան ներկայացրել էր որոշակիորեն շատ գեղարվեստական այնպիսի անգլիական ձեռագործ թուղթ, որը ևս երբեք չէր տեսել ևսխկինում եւ կարծում էր, որ իդեալական կլինի այս փոքրիկ գրքույկի հրատարակման համար: Քանի որ նրա գրեթե բոլոր ընկերները Հանկոուում եւ նրա շրջակայքում էին, ևս Միջաշնասային տոնի առթիվ գրքույկը տարածեց նրանց շրջանում, ովքեր լավ պոեզիան գնահատելու ճաշակ ունեին:

Տոնից երեք օր հետո, երբ Սունը խիստ զբաղված էր իր ևսխապատրաստական աշխատանքներով ռուսական կոնցեսիոն ընկերության իր շտաբում, Տիևգին խնդրեց գալ իր սենյակ եւ օգնել իրեն: Շատ շոգ օր էր, եւ առավոտյան տասնմեկից նրանք անդադար աշխատեցին մինչեւ կեսօրից հետո ժամը երեքը՝ առանց ընդմիջման: Սունը մարմնի անհավատալի լավ կազմվածքով էր օժտված, ինչպես հեղափոխության առաջնորդների մեծ մասը, եւ կարող էր անտրտուն շարունակել աշխատանքը եւս հինգ ժամ: Բայց Տիևգն սկսեց ծարավել ու քաղցել եւ շուրջը ևայեց՝ սենյակում ուտելու եւ խմելու ինչ-որ բան գտնելու համար: Նրա որոնող աչքերը կանգ առան սենյակի ներսի անկյունում գտնվող սեղանին դրված մի արկղի վրա, որի մեջ երեք փոքր ձմերուկ կար: Բերանում ջուր հավաքվեց: Նա գնաց ուղիղ դեպի սեղանը, եւ քանի որ երկար ևստած էր եղել իր գրասեղանի մոտ՝ առանց ոտքերն առաջ մեկնելու, թմրածություն էր զգում ու քայլում էր երերալով: Սեղանին թեքվելով՝ ևս ձեռքը մեկնեց դեպի ձմերուկները եւ հարցրեց. «Ձմերուկ կուզեի՞ք: Ես մի պատառ պիտի ուտեմ»:

«Օ՛, ո՛չ», - բացականչեց Սունը՝ տեղից վեր ցատկելով, որպեսզի ետ պահի նրան:

Բայց մինչ Տիևգին ետ կպահեին, ևս իր դողացող ձեռքով վերցրել էր դրանցից մեկը: Այն չափազանց ծանր էր ձմերուկի համար, եւ իր սովորա-

կան անփութությամբ Տիկզը գցեց սեղանին: Չմերուկն սկսեց պտտվել սեղանի վրա եւ մեկ վայրկյան հետո կընկներ գետնին:

«Բռնիր: Օ՛, ո՛չ: Պառկիր գետնին»,- խելահեղ ձայնով գոչեց Սունը եւ ինքը ցած նետվեց ու պառկեց գետնին: Շատ ուշ էր բռնելու համար, եւ Տիկզի ինքնապահպանման բնագոյային զգացումը ստիպեց նրան պառկել գետնին հենց այն ժամանակ, երբ ռումբը պայթեց խլացուցիչ դողողով: Մեկ պայթյունին հաջորդեցին եւս երկուսը, եւ սենյակը վերածվեց ավերակների կոյտի: Տարօրինակ է ասել, բայց Տիկզը, որն ավելի մոտ էր պայթուցիկին, խուսափեց մեծ վնասվածքից՝ ստանալով միայն բազմաթիվ թեթեւ կտրվածքներ ու կորցնելով երեք մատը, միւսներն Սունը, որը շատ ավելի հեռու էր, շատ ծանր վիճակում էր: Եւ ժամեր շարունակ անգիտակից էր, եւ ընկերները նրան շտապով տարան մոտակա մի առանձնատուն, որ պատկանում էր իր ռուս ընկերներից մեկին: Մինչ շտապում էին վերացնել կարեւոր փաստաթղթերը մասամբ ավերված շենքից, ոստիկանությունը ժամանեց, եւ երեք ընկեր ձերբակալվեցին: Շուտով նրանց հաջորդեցին փոխարքայի մարդիկ, եւ ամբողջ գույքը բռնագրավվեց: Պա ներառում էր նրանց փողի մեծ մասը՝ թղթադրամներով ու արծաթով, ամբողջ փոքր հրազենը, դեռ չբաշխված զինամթերքը եւ անդամության գրանցամատյանները:

Բռնագրավված փաստաթղթերից հայտնաբերեցին մի քանի այլ գաղտնի գրասենյակների հասցեներ, եւ դրանց մեջ՝ Տա Տունգի հրատարակչական արտադրամասը: Ծառայողական աշխատանքները բրիտանական իշխանությունների կողմից անմիջապես փոխանցվեցին փոխարքայի մարդկանց, եւ չինական զորքերի մի ուժեղ պահակախումբ, բրիտանական կոնցեսիոն ընկերությանը պատկանող չին ոստիկանների ուղեկցությամբ, նետվեց դեպի Տա Տունգի տպարան ու շրջապատեց տեղանքը: Բայց այն արդեն դատարկ գտան: Տա Տունգն ու իր մարդիկ հասցրել էին փաթեթավորել իրենց կարեւոր փաստաթղթերը եւ լքել շենքը պահակախմբի ու ոստիկանության ժամանումից անմիջապես առաջ: Բայց ի մեծ ցավ Տա Տունգի՝ նա ստիպված էր թողնել ամբողջ տպագրված կոնքը, եւ այն պիտի բռնագրավեին: Երբ շենքը խուզարկվում էր իշխանությունների կողմից, շրջակայքի գրեթե ամբողջ ժողովուրդը եւ համարյա բոլոր անցորդները հավաքվել էին դիտելու տեսարանը: Պահակախումբն ու ոստիկանները, որոնք հիմնականում անգրագետ էին, խաղում էին՝ տպագրված թղթերի կոյտերն իրար վրա շարելով ու փլուզելով: Այդ թղթերի մի մասն իրենց հետ վերցնում էին, որպեսզի դրանց մասին զեկուցեին իրենց պե-

տին, իսկ մյուսներին խփում էին ոտքերով եւ մի կողմ նետում: Շենքի դիմացի փողոցում թղթեր էին թափված, եւ երեխաներն սկսեցին գետնից հավաքել դրանք: Այս ամենը կողքից դիտողների մեջ կային մարդիկ, որ հեղափոխականներ էին, եւ որոնց հանձնարարված էր խառնվել ամբոխին, որպեսզի հետեւեին պահակախմբի զինվորներին ու ոստիկաններին, երբ վերջիններս խուզարկում էին շենքը: Երբ տեսան, որ խուզարկությունն ավարտված է, ու միայն մեկ մարդ է նշանակված այնտեղ, որպեսզի հսկի, վերադարձան՝ Տա Տունգին պատմելու, որ նրա սքանչելի աշխատանքն այժմ առ ոչինչ է: Մինչ նա գրեթե հուսահատ վիճակում էր, իր ընկերներից ոմանք համոզված չէին, թե արդյո՞ք սրտի խորքում գոհ չեն՝ տեսնելով հրապարակայնության ապահովման գործում կյուբեր նախապատրաստելու Տա Տունգի անմտության այս պարզորոշ ապացույցն այսպիսի անհեթեթ ու արտառոց վիճակում:

Տասնվեցերորդ հետեակային զորախմբի եւ նրանց հետ ծերունի Չուի քայլերը, որից այնքան բան էր կախված, բավականին ծանր հարված էր հեղափոխականներին, եւ ռումբի հետ կապված պատահարը, որ տեղի ունեցավ նրանց՝ հարվածի պատրաստվելուց ընդամենը մեկ շաբաթ առաջ, նրանց նվիրական հույսի կործանումն էր: Նրանց առաջնորդ Սուն Վուն դեռ կոմայի մեջ էր, եւ այժմ իրենք ո՛չ փող ունեին, ո՛չ զենք: Բոլոր պատասխանատու անդամները հավաքվել էին ռուս համակրի տանը եւ խորհրդակցում էին ու մեկը մյուսին հարցուփորձ էին անում Սունի անկողնու մոտ: Ի՞նչ պետք է արվեր: Նրանք լույսիսկ բավարար միջոցներ չունեին, որպեսզի հեռանային, եթե հետագայում իրենց վրա ճնշում գործադրվեր: Նախկինում երբեք նրանց վիճակված չէր եղել դիմակայելու ավելի վատ պայմանների, եւ ամեն մեկն իրեն փակուղում էր զգում: Տա Տունգը, որ վերուվար էր անում սենյակում, վերջապես ասաց. «Մենք դժվարին վիճակում ենք, ինչպես բոլորս ենք գիտակցում: Բայց ինձ թվում է՝ ավելի մեծ բաներ են վտանգված, քան պատկերացնում ենք: Մեր կյանքը փոքր բան է՝ համեմատած հեղափոխության ապագայի հետ: Ես վշտանում եմ ձեզ հետ, եւ գուցե ավելի, քան ձեզնից որեւէ մեկը, մեր զենք ու զինամթերքի, մեր փողի, եւ, ամենից շատ մեր տպագրական կյուբերի ամբողջ պաշարի կորստյան համար...»: Նա նայեց իր ընկերներից մի քանիսին, որովհետեւ թվաց, թե մի երկու փոթկոց լսեց, երբ տպագրական կյուբերն էր հիշատակում: - Բայց ամենալուրջ եւ ճակատագրական կորուստը մեր անդամների գրանցամատյանի կորուստն է: Նոր բանակի ութերորդ դիվիզիայում մեր հավաքագրած բոլոր նոր անդամների անուններն այժմ փոխարքայի ձեռ-

քին են, եւ հնարավոր է, որ բազմահազար մեր նոր եղբայրներ ծերբակալվեն, հենց որ փոխարքայի հրամանը հասնի Հուլայի եւ Սիչուանի սահման... »:

«Երկու կամ երեք հարյուր մարդ կա տասնհինգերորդ զորախմբում, որոնց հիմնականում հավաքագրել է գեներալ Տաոն: Նրանք բոլորը ՎուՉանում են»,- ասաց մեկը, որ լավ գիտեր գրքերը:

«Եվ գեներալ Տաոն դեռ աշխատում է դրա վրա: Գրագ կգամ, որ հենց այս պահին գրանցում է նրանց՝ չիմանալով, որ ամեն ինչ կորած է»,- ասաց մեկ ուրիշը, որ գրառումներ էր կատարել Տաոյի ցուցակից:

«Բայց երբեք չպետք է ասենք՝ ամեն ինչ կորած է, քանի դեռ վերջին մարդուն չենք կորցրել»:

«Այժմ մեզ համար ընտրության հնարավորություն չեն թողել: Մենք պետք է հնարավոր ամեն բան անենք, ամեն ջանք թափենք, որպեսզի վերականգնենք այն մատյանները, որոնք հիմա պետք է որ փոխարքայի ձեռքում լինեն: Եկեք գրոհենք նրա յամենի վրա, քանի դեռ մեր բոլոր մարդիկ միասին են: Ես կարող եմ ասել մեր եղբայրակիցներին, որ մի քանի ժամից պատրաստ լինեն: Եթե մեզ հաջողվի ներխուժել յամեն եւ բռնել նրան, ամեն ինչ լավ կլինի, այլապես... չէ՛, ո՛չ մի այլապես չկա»:

«Բայց ո՞ր է մեր զինամթերքը»,- հարցրեց մեկը:

«Սպիտակ թելկապները, որ պիտի տայինք մեր մարդկանց, բռնագրավվել են», - ասաց մեկ ուրիշը:

«Մենք մեր բրաունինգներն ունենք, եւ յուրաքանչյուրս մի քանի անգամ պատրաստվել ենք կրակելու...»,- ասաց Տա Տունգը:

«Իսկ յամենում պահակախմբի զորքերն իրենց հրացանների համար փամփուշտների անվերջ պաշարներ ունեն: Ստաճիր մի փոքր, իդեալիստ»,- բացականչեց ինչ-որ մեկը:

«Դա գիտեմ: Բայց հիմա մտածելու ժամանակը չէ: Այլ բան չենք կարող անել: Ինչ վերաբերում է թելկապներին, փոխարենը պետք է օգտագործենք սպիտակ թաշկինակներ: Չենք կարող մեր անդամներին տեղեկացնել, թե քանի որ թելկապները կորել են, մենք չենք կարող պայքարել, եւ ուրեմն իրենք պետք է փախչեն: Իսկ եթե դա անենք, մեր գործը կորած է: Ոչ ոք, ինչքան էլ խորն ատի մանջուրներին, չի համարձակվի այլեւ մեզ հավատալ: Ժողովուրդը մեզ կանիժի անգամ մեր մահից հետո, իսկ պատմաբանները կդատապարտեն»:

Մյուսները լուռ էին:

«Եկեք տեսնենք, թե քանի մարդ կարող ենք հավաքել եւ դեռ քանի

ԱՅՈՒՆ ՇԻՒ

ատրճանակ ու փամփուշտ ունենք»:

Նրանք գիտեին, որ ամեն մեկն իր մոտ ատրճանակ ունի, եւ փամփուշտների մի շարք արկղեր հեռացվել ու պահվել էին իրենց կազմակերպության տարբեր գաղտնի մասնաճյուղերից՝ Նախքան այդտեղ կներխուժեին ու կխուզարկեին: Հաշվելով յուրաքանչյուր մարդու, որոնցից շատերը վատ հրաձիգներ էին դուրս եկել, իսկ ոմանք շատ վատ մարտիկներ, տեսան, որ մոտ հարյուր ուժեղ մարդ ունեն: Քանի որ նրանցից շատերին հանձնարարված էր ցրվել ապահովության համար, մինչեւ հաջորդ առավոտ մեծամասնության հետ հաղորդակցվելու ոչ մի ճանապարհ չկար: Այդ պատճառով որոշվեց փոխարքայի յամենի վրա գրոհել հաջորդ երեկո, երբ մութն ընկնի: Տա Տունգին առաջադրեցին եւ ընտրեցին ժամանակավոր առաջնորդ, եւ նա միանգամից սստեց գծագրելու իրենց գլխավոր գործողությունները:

Դա մի շատ պարզ ձեռնարկում էր: Նրանք պարզապես պետք է իրենց հետ կրեին բոլոր փամփուշտները եւ ուղիղ գնային իր յամենում գտնվող փոխարքայի վրա: Դա միակողմանի շարժում էր լինելու. հենց որ սկսվեր, այլեւս նահանջ չէր լինելու: Պետք է գրավեին եւ գերեին փոխարքային ու ստիպեին, որ ամբողջ նահանգը ենթարկվի իրենց, կամ էլ պետք է կործանվեին: Ոչ համալրման ճանապարհ կար, ոչ էլ նահանջը ծրագրելու ուղի: Տա Տունգը հմուտ քարտեզ ընթերցող էր, եւ առավոտյան սահմանափակ ժամերի ընթացքում նա եւ իր ընկերներն ընտրեցին յամենին մոտենալու ինք տարբեր ճանապարհներ: Խոսք եղավ նաեւ, որ գեներալ Տաոյի ետեւից մարդ ուղարկեն՝ հանձնարարելով նրան տեղեկացնել իր բոլոր նորագիր անդամներին, որ մթնշաղը գործողությունն սկսելու ժամանակն է, եւ ակնկալվում է, որ նրանք հնարավորինս շուտ կմիանան: Ինչ վերաբերում է տասնվեցերորդ գորախմբի անդամներին, հնարավոր չեղավ նրանց նախապես տեղյակ պահել: Եթե յամենի վրա հարձակումը հաջողվեր, շատ ուշ չէր լինի հրաման արձակել, որ բոլոր տղամարդիկ հավաքվեին, եւ անհրաժեշտություն չէր լինի ինչ-որ բան մատակարարելու, եթե ձախողվեին: Երբ նախապես երդվելուց հետո՝ մեռնել կամ ապրել միասին, նրանք բաժանվում էին, Տա Տունգը չկարողացավ չնշել. «Կուգեի, որ մի քանի պաստառ եւ թուղիկներ ունենայինք տարբեր տեղերում փակցված եւ բաժանված, երբ սկսեինք մեր անելիքը: Դրանք հասարակությանը մեր կողմը կգրավեին»:

Երբ մենակ էր, Տա Տունգը մի նամակ գրեց Լոտոսի Բուրմունքին: Չասաց, թե հնարավոր է՝ դա իր վերջին նամակը լինի, բայց պատմեց նրա

հանդեպ իր անվախճան սիրո մասին, ասաց, որ երկրի վրա ոչ մի ուժ չի կարող այդ սերը կործանել: Ավելին չկարողացավ գրել: Շատ կարճ մի ևս մակ էր դա: Ինչպես միշտ, ևամակի ծրարի վրա նշեց, որ հանձնեն համբարային հանրակացարան՝ տիկին Հոուին: Իր հորդքայր Կանին, որը Նանչան էր վերադարձել Կան-չոուից, ևս պարզապես չորս բառից բաղկացած մի գրություն ուղարկեց. «Յու Յու Վան Շույ» (Կեցցե Ազատությունը):

Վաղ առավոտվա խաղաղ լռության մեջ ևս նստել էր մենակ եւ մտորում էր իր ապրած կյանքի մասին: Իր կարծիքով՝ այդ կյանքն այնքան էլ հարուստ չէր իրադարձություններով: Մինչեւ հիմա ոչևչի չէր հասել: Եւ հավակնոտ էր, բայց ո՛չ բառի նեղ իմաստով: Իր հույսն ու ծգտումն էր՝ տեսնել այն ամենի կործանումը, ինչի հանդեպ ատելություն ուներ, եւ հաստատումն այն բանի, ինչի հանդեպ սեր էր տածում: Դա իր համար շատ մեծ հավակնություն էր եւ ծգտում: Թերեւս երբեք չէր տեսնի այն օրը, երբ դա տեղի կունենար: Այդուհանդերձ, հավատում էր, որ ճիշտ ուղի է ընտրել, համոզված էր, որ շատ ուրիշներ կհաջորդեն, երբ ինքը մեռնի: Նախկինում, երբ վտանգավոր մի գործ էր ձեռնարկում, չէր կարողանում չխղճալ կնոջը, ցավ չապրել նրա համար, ում շատ քիչ երջանկություն, բայց բավականին հոգս ու անհանգստություն էր պատճառել, ինչպես ինքն էր կարծում: Ժամանակ առ ժամանակ ևս նույնիսկ մտածում էր ամեն բան մի կողմ դնել եւ փախչել Հարավային ծովի հեռավոր ափին գտնվող այն ամառյալ կղզին, ապրել բացարձակ ազատ ու մեկուսի կյանքով Լոտոսի Բուրմունքի հետ: Բայց հետո խիղճը տանջում էր, մեղքի զգացում էր ունենում: Ինքը դասալիք կլիներ: Ո՛չ ևս, ո՛չ կինը մեկ րոպե իսկ հանգիստ չէին լինի, եթե ինքն իրեն զգար որպես դասալիք:

Նա գնաց տեսնելու Տինգին, որը նոր էր լսել որոշման մասին եւ շատ ուրախ էր դրա համար: Վերջինս ասաց Տա Տունգին. «Շատ ավելի ուժեղ եմ ինձ զգում: Թույլ տվեք միանալ ձեզ»:

«Չէ: Շատ արյուն ես կորցրել: Հանգստացիր այստեղ եւ մի շարժվիր»:

Շատ բան ուներ ասելու Տինգին, բայց տեսնելով նրա դեմքի զուստությունը՝ մի պահ լուռ նայեց նրան եւ հեռացավ:

Դիտողները երկար ժամանակ մնացին դրսում՝ Տա Տունգի շտաբի մոտ, որոնող խմբի գնալուց հետո: Նրանցից ոմանք, ովքեր լավ կրթված էին, չէին կարող չհիանալ «Ազատության հռչակագիր» գրքույկի աննախադեպ լավ գեղագրությամբ եւ գրական գերազանց ոճով: Մյուսները, որ ավելի քիչ էին կրթված, սկսեցին գնահատել տպագրության որակը, թղթերը եւ թերթիկների գրավչությունը: Ովքեր կարող էին կարդալ, շատ թե քիչ

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

հուզված էին դրա բովանդակությամբ, իսկ ուժեր չէին կարող կարդալ, մյուսներին հարցնում էին գրվածի իմաստի մասին: Վերջոյն էին ևս Տա Տունգի բանաստեղծությունների գրքույկի մի քանի օրինակ, որոնք աչքի էին անցկացնում դրանք հասկացողներն ու գնահատողները: Ճաշակով մարդիկ բարձրաձայն գովում էին դրանք, եւ այդ թղթերն անմիջապէս դարձան քաղաքի ամենաթանկարժէք գրական գործերը: Այդպիսի լուրը բերնեբերան էր անցնում, եւ գրքեր հավաքողները, գրական այրերը, ուսուցիչներն ու աշակերտները սկսեցին ուղեւորվել դեպի բրիտանական կոնցեսիոն ընկերություն՝ տեսնելու այդ թղթերը: Քանի որ շենքում դրանցից շատ կար, ուստիկանը, որ հսկում էր տարածքը, թույլ տվեց մարդկանց ազատ օգտվելու թղթերից, եւ հռչակագրի մեծաթիվ օրինակներ այդ կերպ տարածվեցին: Բազմաթիվ այլ մարդիկ էլ գալիս էին հատուկ բանաստեղծությունների գրքույկի համար, եւ քանի որ այն շատ քիչ քանակի էր, շուտով սպառվեց: Ի բարեբախտություն ուստիկանի՝ հազվագյուտ գրքերի վաճառքով զբաղվող մեկը նրան փոքրիկ կաշառք առաջարկեց եւ խնդրեց գտնել շենքում մնացած՝ գրքույկի բոլոր օրինակները: Ուստիկանը խորամանկ ու գործից հասկացող մարդ էր, եւ դրանց կեսը մի կողմ դրեց՝ միայն մի մասը տալով գրավաճառին, այն էլ այնպիսի օրինակներ, որ ոտքերի տակ տրորվել էին, եւ դրանցից շատերը ցեխոտվել էին ու կեղտոտվել: Դրանից հետո ցանկացած այցելուի, որը հատուկ գրքույկի համար էր գալիս, ուստիկանը հրավիրում էր բարեկամական զրույցի եւ մինչեւ կլորիկ մի գումար չէր ստանում, ոչինչ չէր տալիս, այլ միայն ժպտում էր եւ ասում. «Շատ դժվար է հիմա մի օրինակ գտնել: Մարդիկ դրանց համար բարձր գներ են վճարում հազվագյուտ գրախանութներում»:

Քանի որ մարդիկ դրանք չէին կարողանում գտնել, արժէքն իսկույն սկսեց բարձրանալ: Շուտով գրավաճառը երկրորդ անգամ այցելեց այդտեղ եւ խնդրեց ուստիկանին ուշադիր նայել, թե արդյոք չէ՞ն գտնվի այլ օրինակներ: Նա առաջարկեց յուրաքանչյուր օրինակի համար մի քանի սենթ: Ուստիկանը գիտեր ինչպէս են գիրք վերավաճառողներն իրենց գործն անում: Նրանք հազվադեպ են հինգ հարյուր տոկոսից ավելի շահույթ ստանում, դրա համար էլ ամեն օրինակի համար հիսուն սենթ ուզեց, ինչին անմիջապէս համաձայնություն տրվեց: Քանի որ հռչակագիրը ևույնպէս մեծ պահանջարկ ուներ, թեեւ ոչ ոք դեռ մինչ այդ դրա համար գումար չէր առաջարկել, նա տեսավ, որ կարող է դրանից էլ փոքր-ինչ օգուտ ստանալ, եթե զգույշ ու թաքուն գործի: Եվ անմիջապէս դադարեց մարդկանց ձրի օրինակներ տալ: Փոխանակ իրեն դիմող ամեն մեկին ակնարկելու, որ վճարեն

դրա համար, ևա գործարք կնքեց փողոցի անկյունի թերթավաճառ տղայի հետ: Տղան հանձն առավ ոստիկանի համար դրանք վաճառել ամեն օրինակը մեկ պղնձեդրամով եւ ստանալ դրա քսան տոկոսը: Դա դեռ միայն առեւտրի սկիզբն էր: Գործարքը շուտով այնքան հաջող ընթացք ունեցավ, որ տղան ստիպված էր գործընկերներ գտնել, որպեսզի իրեն օգնեն: Հաջորդ առավոտ արդեն տասնյակից ավելի լրագրավաճառ տղաներ վազվզում էին մեծաձախ գետվ վաճառողի մոտ՝ լրացուցիչ խմբաքանակ ձեռք բերելու: Ամբողջ քաղաքն սկսեց խոսել այդ մասին, եւ մարդիկ այժմ ուզում էին ոստիկանի ուզած գնից տասն անգամ ավելի բարձր գին վճարել:

Բոլոր լրագրերը հաղորդել էին ռուսական կոնցեսիոն ընկերությունում տեղի ունեցած դժբախտ պատահարի ու հեղափոխականների տարբեր շտաբների որոնման մասին եւ ծածուկ ակնարկել էին հրաշալի տպագրված Ապստամբության հռչակագրի մասին, ինչպես այն պաշտոնապես անվանվում էր: Քանի որ այդպիսի խռովարար փաստաթղթերի բովանդակությունը բնականաբար ենթարկվում էր գրաքննության, մարդիկ խիստ ձգտում էին դրա մեկ օրինակն ունենալ: Դա վավերական փաստաթուղթ էր եւ հետեւաբար ավելի հավաստի ու արժեքավոր, քան որեւէ լրագիր, որն ամենաշատը կարող էր ընդամենը տեղեկություն տալ այդ մասին եւ հղումներ անել:

Փոխարքան լսեց այդ ամենի մասին եւ մարդ ուղարկեց պահակախմբի զորքերի կապիտանի մոտ, որը բռնագրավել էր այդ թղթերի մի մասը, որպեսզի մեկ օրինակ բերեն իր համար: Երբ տեսավ, թե ինչ է, անմիջապես արգելք դրեց դրա վրա: Այդ արգելքը կատարյալ գովազդ էր եւ, իհարկե, արդյունավետ չէր Հանկոուի օտարերկրյա կոնցեսիոն ձեռնարկություններում, միչեւ որ տարբեր երկրների հյուպատոսություններին տեղյակ չպահեցին եւ չխնդրեցին ի կատար ածել փոխարքայի ցանկությունը, եւ վերջիններս չհամաձայնեցին դա անել, բայց մինչ այդ՝ եղածն արդեն վաճառվել էր: Չնայած արգելքին՝ շատ օրինակներ հասան Վու-Չան, որտեղ տեղի տպագրիչներն ինքնագլուխ վերահրատարակեցին այն եւ գաղտնի վաճառեցին՝ մեծ շահույթ ստանալով:

Միչեւ օրվա վերջը այդ երեք քաղաքներում քիչ մարդիկ կային, որ չուներին դրա օրինակներից: Նույնիսկ փոխարքայի յամենի տիկնայք ծառաներին ուղարկում էին իրենց համար գնելու:

Տա Տունգը կյանքում չէր էլ երագել, որ իր բանաստեղծությունները կվաճառվեին այդպիսի բարձր գնով, եւ որ իր գրքույկն այդքան ժողովրդականություն կվայելեր:

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Այդ ընթացքում թերթերը տեղեկացրին, թե բոլոր «ապստամբների» անունները հայտնի են փոխարքային, որը կարող էր ամեն բույե հրամայել ձերբակալել նրանց: Փաստորեն նա ուզում էր բոլոր ապստամբներին անմիջապես ձերբակալել, եւ գրանցամատյանում աչքի անցկացնելով նրանց տվյալները՝ միաժամանակ եւ՝ կատաղած էր, եւ՝ սարսափած՝ տեսնելով, թե այդտեղ նոր բանակի շարքայիների ինչքան սովոր մի խումբ կա: Նա մարդ ուղարկեց գեներալ Չան Պյաոյի ետեւից՝ պահաջելով, որ անհապաղ մաքրի իր բանակն ապստամբներից: Փոխարքան գիրքը շարտեց գեներալի ուղղությամբ՝ արտահայտելով իր դժգոհությունը գրույցի վերջում:

Գեներալ Չանն չէր կարող ձերբակալել իր մարդկանց կեսին տասնհինգերորդ գորախմբում: Նույնիսկ իր տասնհինգերորդ գորախմբում ապստամբների թիվը չափազանց մեծ էր, որպեսզի նրանց հնարավոր լիներ ձերբակալել մեկ օրում: Գեներալը չգիտեր ինչ անել եւ հաջորդ օրն իր սպաներին հավաքեց խորհրդակցության: Դեռ չէր մտածել, թե ինչ է ասելու նրանց: Այն հեղափոխականների մեջ, որոնց արդեն ձերբակալել էր, պատահականորեն ընտրեց երեք հոգու եւ մահապատժի ենթարկեց՝ որպես մյուսներին նախազգուշացում:

Գեներալ Տանն՝ մասնավոր խոհարարը, խիստ զբաղված էր հավաքագրման իր գործով ընդհուպ մինչեւ այն ժամանակը, երբ բոլոր թերթերում տեղեկացվեց, որ Չինական միացյալ ընկերության բոլոր շտաբները խուզարկվում են իշխանությունների կողմից, որ անդամության գրանցամատյանը հայտնաբերվել է, եւ կատարվել են շատ ձերբակալություններ: Նա ապշած էր եւ իր նոր ընկերներին նայում էր խոժոռ ու թթված դեմքով: Իր գլխավոր հրամանատարի նման ինքն էլ չգիտեր ինչ անի: Երբ երեք հեղափոխականներին մահապատժի ենթարկելու մասին լուրը հայտնի դարձավ վերջերս ընկերությանն անդամագրված մարդկանց, ամեն մեկն զգում էր, որ շուտով իր հերթը կգա:

Ամսի 19-ի միջօրեին (1911 թվականի հոկտեմբերի 10-ին, որ ավելի ուշ հայտնի դարձավ՝ որպես Կրկնակի տասներորդ տոնի օր) հարյուր մարդ հավաքվեցին միասին երդում տալու հեղափոխությունն սկսելուց առաջ: Տա Տունզը տեսավ, որ անհույս է Սուն Վուից ակնկալել, թե նա բավարար չափով կառողջանա՝ գլխավորելու համար այս հանդիսավոր իրադարձությունը: Նա երկու ընկերոջ հանձնարարել էր մնալ եւ հոգ տանել Սունի ու Տինգի մասին եւ հետագայում, երբ Սունի վիճակը լավանար, բերել նրանց Շանհայ, որտեղ բավականին շատ անդամներ կային:

«Ընկերներ, մենք հիմա պատրաստվում ենք վտանգավոր մի ճամփորդություն ձեռնարկել,- սկսեց Տա Տունգը:- Ճամփորդություն, որ մեզնից շատերի համար բավականին սովորական մի բան է: Բայց այս անգամվա եւ Լախորդ անգամների միջեւ այսպիսի տարբերություն կա: Չախողվելու դեպքում՝ Լախիկիում մենք միշտ կարողացել ենք Լահանջել: Այս անգամ պատրաստվում ենք մարտնչել «մեր թիկունքները դեպի ջուրը», ինչպես մեր հնագույն գեներալ Հան Շին: «Կյանքը ձեզ մոտ է գալիս միայն այն ժամանակ, երբ մահն այրում է ձեր կրունկները»,- ասել է Լա իր մարդկանց: Նրա անմահ «թիկունքը դեպի ջուրը» ճակատամարտը կատարյալ հաղթանակ էր: Մենք շուտով պատրաստվում ենք անցնելու Յանցզի գետը, եւ ետ դառնալու ճանապարհ չկա: Եթե հաղթենք, ամեն ինչ լավ կլինի, իսկ եթե պարտվենք, մեր գործը չի կորչի: Մեր եղբայրներն ու հետևորդները կկարողանան բարձր պահել իրենց գլուխները եւ հպարտ լինել մեր գոհաբերությամբ: Եթե մեզնից մեկ մարդ անգամ հանձնվի կամ փախչի, մեր թշնամին կկարողանա ասել. «Բոլորն էլ նրա նման կանեին, եթե հնարավորություն ունենային խուսափելու»: Հիշե՛ք՝ մեր հայրերի, մայրերի, եղբայրների, քույրերի եւ մյուս սիրելիների ազատությունը մեզնից է կախված: Այստեղ գտնվող բոլորիդ կոչ եմ անում երդվե՛նք եւ գնանք»:

Ոմանք գնում էին ծանր սրտով, իսկ ոմանք ժպտում էին եւ սովորականի պես կենսուրախ էին, բայց բոլորն էլ գիտակցում էին, որ ողջ ետ դառնալու շատ քիչ հնարավորություն կա, կամ ոչ մի հնարավորություն չկա: Դա նշանակում էր «հաղթել կամ մեռնել», եւ մեռնելը հարյուր անգամ ավելի հավանական էր: Այդուհանդերձ, չնայած լիովին համոզված էին դրանում, իրենց բարոյապես պարտավորված էին զգում գնալ մինչեւ վերջ, եւ որքան շուտ, այնքան լավ:

Ստիպված էին գնալ առավոտ վաղ, քանի որ գետն անցնելը որոշակի ժամանակ կխլեր, եւ պետք է պատրաստ լինեին տարբեր տեղերում ազդանշանի սպասելու: Որպեսզի խուսափեին ոստիկանության կողմից կասկածի ենթարկվելուց, պետք է տարբեր ժամանակներում լաստանավ նստեին՝ երեք կամ հինգ հոգուց բաղկացած փոքր խմբերով: Տա Տունգն առաջիններից մեկն էր, որ գնաց: Նա եւ երեք այլ ընկերներ բարձրացան հանրահայտ Դեղին կռունկի աշտարակը եւ տեղավորվեցին այնտեղ՝ իբր վերնահարկի ռեստորանում թեյ կամ գինի խմող հաճախորդներ: Վայրն այնքան մարդաշատ չէր, ինչպես միշտ, եւ ամենուր պատերին փակցված էին մի շարք հայտարարություններ՝ այս չորս հիերոգլիֆներով՝ «Մու Տան Կուո Շի» («Մի խոսեք պետական գործերից»․ պետական գործեր՝ նշանա-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

կում էր քաղաքականություն): Նրանց սպասարկող մատուցողը շատախոս ու կենսուրախ անձնավորություն էր, եւ Տա Տունգը հարցրեց նրան՝ մատնացույց անելով տգեղ հայտարարությունները. «Պա ի՞նչ է նշանակում, ընկեր»:

«Պա փակցված է մեր տիրոջ կարգադրությամբ, պարոն: Շատերը, պարոն, մեկ կամ երկու գավաթ թույլ գինուց հետո, գլուխները կորցնում են եւ խոսում այնպիսի բաներից, որոնց մասին չպետք է խոսեն հասարակության մեջ, պարոն: Այստեղ քաղաքացիական հագուստով պահակախմբի զինվորներ են հաճախ այցելում, պարոն...,- եւ նա շուրջը նայեց՝ համոզվելու համար, որ այդ զինվորներից մոտակայքում չկային այդ պահին,- եւ շատ մարդիկ վերջերս ձերբակալվել են այստեղ, պարոն»:

«Ինչպե՞ս ես վերաբերվում դրան, ընկեր»:

«Ես համակրում եմ այդ խեղճ մարդկանց, պարոն, բայց ինքս չեմ խոսում...»:

«Բայց հիմա դու խոսում ես, ընկեր»:

«Ձեզ հետ, պարոն, գիտեմ, որ ամեն բան կարգին է»:

«Մենք կարող ենք քաղաքացիական հագուստով մարդկանցից լինել, ընկեր...»:

«Ո՛չ, պարոն, մենք նրանց դեմքով ճանաչում ենք...»:

«Լավ: Խնդրում ենք ասել մեզ, երբ նրանք ներս կմտնեն, ընկեր: Մենք ուզում ենք այս գիշեր այրել փոխարքայի յամենը, եւ ոչ ոք այդ մասին չպետք է իմանա նախապես»,- կատակով ասաց Տա Տունգը:

Մատուցողը բարձրաձայն ծիծաղեց:

«Մի՛ ծիծաղիր, ընկեր: Տե՛ս, ահա գալիս է մեր կերոսիկը»:- Նա ցույց տվեց երկու մարդու, որ հենց նոր էին ներս մտել: Այդ մարդկանց մոտ, փայտե երկարավուն արկղի մեջ կերոսիկի երկու քառակուսի թիթեղյա անոթ կար: Նորեկները միացան կատակին եւ սկսեցին ծիծաղել՝ նստելով դրամարկղի կողքի սեղանի մոտ:

«Այդ բաներն անող մարդիկ դրանց մասին չեն խոսում, պարոն»:

Մտուցողն շտապեց իր գործին, քանի որ ուրիշների պետք է սպասարկեր:

Առաջներում այդտեղ մինչեւ ուշ գիշեր բազմամարդ էր լինում, բայց քանի որ, հաշվի առնելով հեղափոխականների կողմից սպառնացող ճգնաժամային իրավիճակը, կիրառվում էր վերջերս ուժի մեջ մտած՝ տասժամյա պարետային ժամի օրենքը, սակավաթիվ հաճախորդներն սկսեցին ցրվել մութն ընկնելուց շատ առաջ: Տեսնելով, որ Տա Տունգի խումբը եւ մի

քանի ուրիշներ հեռանալու ոչ մի մտադրություն կարծես թե չունեին, այլ նստած ուտում, խմում ու կատակում էին, գանձապահն սկսեց անհանգստանալ և մատուցողին ուղարկեց, որ շտապեցնի նրանց: Մատուցողը ներողություն խնդրեց գանձապահի համար՝ ասելով, թե ծերունին ուզում է տուն գնալ իր կնոջ և երեխաների մոտ նախքան մութն ընկնելը, և խնդրեց հիմա վճարել հաշիվը: Նա ասաց, որ ինքը դեմ չէ՝ ավելի երկար մնալ և տաք ջուր մատուցել թեյի համար, եթե ցանկություն չունեն շուտ գնալու: Ինչ-որ պետք էր, արվեց, և ծերունին ուրախ էր, որ կարող է անմիջապես հեռանալ:

Լիալունից հետո երեք օր էր անցել, և լուսինն այժմ ասես նոր ամուսնացած կույսի պես ամոթխած էր ու չէր ցանկանում իր հրապուրիչ դեմքը ցույց տալ մարդկանց: Մինչ արեւելյան հորիզոնի ետեւից գաղտագողի կնայեր բարի երկրին և արծաթե հզոր գետին, Տա Տունը ու նրա մարդիկ բացում էին կերոսինի իրենց թիթեղյա անոթները և դրանց պարունակությունը ցողում ամբողջ ռեստորանով մեկ:

«Հէ՛յ, էդ ի՞նչ եք անում, այ՛ մարդ»,- ձայն տվեց մատուցողը:

«Կրակի ենք մատնում այս վայրը, որպեսզի մեր եղբայրներն իմանան, որ սկսելու ժամանակն է», - պատասխանեց Տա Տունը:

«Իսկապե՞ս պատրաստվում եք հարձակվել փոխարքայի յամենի վրա»:

«Իհարկե»:

«Ես ձեզ հե՛տ եմ,- վճռական գոչեց մարդը:- Երբ այս առավոտ կարդացի Ազատության հռչակագիրը, հասկացա, որ շուտով ինչ-որ բան է տեղի ունենալու: Ուզեցի միանալ ձեզ, բայց չգիտեի ինչպես: Կուզեի նայել տիրոջս դեմքին, երբ նա սա տեսի»:

«Ինչպե՞ս ես հաջողացրել իմ հռչակագրի օրինակն ունենալ», - Տա Տունը զոր էին եկել նրա ասած բառերը:

«Օ՛, բոլորն են դա տեսել, պարոն: Հազարավոր օրինակներ են վաճառվել»:

«Վաճառվել է: Հա՛...», - Տա Տունը զգաց, որ իններորդ երկնքում է:

«Դե, ինչպես գիտեք, գաղտնի, պարոն: Փոխարքան արգելել է այն»:

Մատուցողն օգնեց նրանց, որ այդ վայրը հրի մատնեն:

Նրանք աստիճաններով ցած սլացան, ամեն մեկն իր երկու թեփն սպիտակ թաշկինակ կապեց և հանեց ատրճանակը: Տա Տունը տեսավ, որ լրացուցիչ զենք չունեն մատուցողի համար, և ասաց. «Երկու թեփո՛ւ էլ թաշկինակ կապիր, ինչպես մենք, և արի՛ ինձ հետ, ընկեր: Եթե ընկնեմ,

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

վերցրու իմ ատրճանակը: Այս փամփուշտները հետո բե՛ր ինձ համար»:

Մարդը բարձրացրեց աչ թեւը՝ ցույց տալու համար, որ մի մեծ կրակ-խառիչ ունի իր ձեռքին:

«Մի՛ անհանգտացե՞ք, պարոն: Ինձ մոտ սա՛ կա», - գոչեց նա եւ երկու թեւին էլ թաշկինակ կապեց:

Տա Տունգն իր հետ տասներեք մարդ ուներ, իսկ մատուցողի հետ մի-ասին՝ բոլորով դարձան տասնհինգ հոգի: Արագ նայելով իր փոքրիկ խմբին, որպեսզի տեսնի, թե բոլո՞րն են այդտեղ, նա ծայն տվեց. «Դեպի փոխարքայի յամենը: Առա՛ջ»: Նա փոթորկի պես առաջ նետվեց, եւ նրան հետեւեցին մյուսները:

«Սպանե՛լ: Սպանե՛լ»: Մատուցողը ոգետրությունից հարբել էր:

«Սպիտակ թաշկինակ կապե՞ք ձեր թեւերին եւ հետեւե՞ք մե՛զ», - գոչեց մատուցողը:

Սկզբում մի բուռ խենթեր էին միայն առաջ սլանում գլխավոր փողոցով, որ դեռ լի էր անցորդներով, անընդհատ բղավում էին, կրակում պահակախմբի զինվորների վրա, որոնք հսկում էին այս ու այնտեղ, բայց միայն հատուկեւտ կրակոցներով էին պատասխանում կրակոցներին: Շուտով, սակայն, շատ մարդիկ հետեւեցին նրանց. բոլորի թեւերին էլ թաշկինակներ էին կապված, եւ բոլորն առաջ էին սլանում մեծ արագությամբ: Մարդկանց մի մասը կարող էին նրանք լինել, ովքեր կարողացել էին հռչակագիրը եւ համակրում էին ապստամբներին, բայց հրապարակային այդ փաստաթղթերի ազդեցության գերազնահատում կլինե՞ր՝ մտածել, թե բոլոր մարդիկ առանց վարանելու անմիջապես վտանգի կենթարկեին իրենց կյանքը՝ թղթի վրա պարզապես մի հայացք գցելուց հետո: Անհանգիստ փողոցում, երբ նրանք բղավում էին ու վազում, մի քանի մարդ էր աննկատ հեռացել, իսկ շատ ուրիշներ առաջ էին նետվել, որպեսզի պարզեին, թե ինչն ինչոց է: Գլխավերելով սուրացող՝ աջուծախ արծակված մի քանի փամփուշտ որոշ մարդկանց ետ էին պահում, բայց նրանց թիվն ամենեւին չէր նվազում: Փաստն այն էր, որ քանի գոռալով առաջ էին վազում, այնքան ավելի ու ավելի շատ մարդիկ էին միանում նրանց: Ամբոխը պահակախմբին չէր սիրում, եւ նրանց միջամտությունից բոբբոքված՝ մարդիկ, առաջ նետվելով, սկսեցին գոռալ. «Սպանե՛ք պահակախմբի զինվորներին»:

Մեկուսացած ոստիկաններն ու զինվորները, այսպիսի վայրի ու անզուսպ իրավիճակը տեսնելով, մի կողմ նետեցին իրենց զենքերը եւ թաքնվեցին, իսկ շատերն էլ ճնշվեցին անգն, միայն մերկ ձեռքերով առաջ խո-

յացող մարդկանց կողմից: Քանի ամբոխն ավելի ու ավելի էր աճում, ավելի ու ավելի բարձր աղաղակում, եւ զգում, որ ավելի ու ավելի է ուժեղանում զինաթափելով եւ սպանելով իր ճանապարհին հայտնված պահակախմբի զինվորներին ու ոստիկաններին, այնքան մարդիկ սկսում էին կորցնել ողջամտությունն ու անվտանգության զգացումը եւ ծայրահեղ անզուսպ ու անկառավարելի էին դառնում:

Միեւնույն ժամանակ հրդեհ էր բռնկվել ութ տարբեր այլ վայրերում, եւ ամբողջ երկինքը բոցավառվում էր բոսոր գույներով: Կրակոցներ էին լսվում տարբեր կողմերից: Պահակագործներից եւ ոստիկաններից խլված հրացաններով ու փամփուշտներով ամբոխը խելահեղ գնդակոծում էր աջուձախ՝ սլանալով ուղիղ դեպի փախարջայի յամենը: Մոլեգին ալիքների, փլվող ձյունահյուսքի, ավազահողմի նման՝ մարդիկ առաջ էին խոյանում՝ իրենց ճանապարհին սրբել տանելով ամեն արգելք ու խոչընդոտ: Թեեւ մարդկանց մեծամասնության ձեռքին հիմա արդեն այս ու այնտեղից խլված տարբեր տեսակի զենք կար, քանի որ, երբ անցնում էին կենցաղային պարագաներ վաճառող որեւէ խանութի մոտով, ազատորեն օգտվում էին այն ամենից, ինչը կարելի էր գործածել իրենց թշնամուն ջարդ տալու համար, կամ եթե անցնում էին որեւէ դարբնի արհեստանոցի կամ պղնձագործի խանութի մոտով, դրանք անմիջապես դատարկվում էին, այնուամենայնիվ շատ տղամարդիկ դեռ դատարկ ձեռքերով էին: Բայց շատ ոստիկանների ու պահակագործի զինվորների էին սպանել, եւ ամեն մարդ իրեն անպարտելի էր զգում: Այսպես նրանք քիչ դիմադրության հանդիպեցին, քանի չէին մոտեցել յամենին:

Ութ այլ վայրերից ութ նմանատիպ ամբոխներ, ճիշտ նույն կերպ սկիզբ առած ու ձեւավորված, բոլորն էլ սլանում էին դեպի միեւնույն նպատակակետը: Քանի որ հեռավորությունները լավ էին ընտրված, նրանք բոլորը յամենին մոտեցան համարյա նույն ժամանակ: Այս ամբոխները միավորվեցին նախքան յամենի արտաքին պարսպին հասնելը եւ, զոռզոռալով ու կրակելով, նետվեցին դեպի ընդարձակ բակը: Այդտեղ տեղակայված պահակագործի զինվորները, որ պաշտպանելու էին յամենը, հրաման էին ստացել կրակ բացել այն ժամանակ, երբ բակը կիսով չափ լիքը կլիներ մարդկանցով: Երբ ազդանշանը տրվեց, գնդակների համազարկեր արձակվեցին, եւ մարդիկ տասնյակներով մեռած գետնին էին թափվում: Առջեւում գտնվողները փորձեցին ետ դառնալ, բայց անօգնական առաջ էին հրվում ետեւից եկող իրենց բազմաթիվ աջակիցների կողմից, եւ դիակը դիակի վրա էր դարսվում, մինչեւ որ բակը նմանվեց սարդինաձկներով

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

լի տուփի: Եվ այնուամենայնիվ մարդիկ դեռ առաջ էին շարժվում՝ մարմինները տրորելով, գայթելով ու ընկնելով մեռած կամ կիսամեռ մարմինների վրա: Երբ պահակախմբի զինվորները տեսան, որ ակնհայտորեն ոչինչ չի կարող կանգնեցնել ամբոխին, շտապով ետ քաշվեցին՝ ևահանջելով դեպի յամենի ներսը եւ փակեցին ու բարիկադավորեցին դարպասները: Երբ ապարոյուն փորձում էին հրել ուժեղ, վիթխարի դարպասները, ամբոխի ճնշումն աստիճանաբար վերափոխվեց մի տեսակ դիրքային պատերազմի: Յամենի առջեւի պատի վերելում այս ու այնտեղ հայտնվում էին առանձին գլուխներ, եւ եզակի կրակոցներ էին արձակվում դեպի ամբոխը: Ուժքեր հրազեն ունեին, անհապաղ պատասխան կրակ էին արձակում, ու թեեւ ամբոխից արձակված կրակոցների մեծ մասը նշանակետին չէր դիպչում, հեղափոխականներից ոմանք շատ դիպուկ էին կրակում իրենց ատրճանակներից: Շուտով երկու կողմից էլ կրակոցները դարձան ավելի ու ավելի չափավոր, եւ թվաց՝ ժամանակավոր հրադադար էր: Մինչ նրանք, ուժքեր ճակատամուտքի տակ էին, լավ պաշտպանված լինելով տանիքով՝ շարունակում էին փորձել ճնշում գործադրել դարպասների վրա, բակում գտնվողները սկսեցին պատի վրայից արձակված կրակոցներից պատուպարվելու տեղեր փնտրել: Նրանք կռանում էին կամ պառկում դիակների տակ եւ կրակոցներ փոխանակում պատի վրա գտնվող թշամու հետ: Կարճ ժամանակ անց հեղափոխականներից ոմանք գիտակցեցին, որ շուտով մնալու են առանց փամփուշտների, եւ սկսեցին դրանք գործածել ավելի խնայողաբար, մինչդեռ նրանց թշամին, ընդհակառակը, ուժեղացնում էր կրակոցը, քանի որ ավելի ու ավելի շատ մարդիկ էին հայտնվում պատի վրա: Թվում էր՝ ոչ մի կերպ հնարավոր չէ տապալել դարպասները, որոնք պաշտպանված էին երկաթե սալիկներով եւ հրակայուն էին: Ամեն բան շուտով կորած կլիներ: Եվ մտածել, որ այդքան շատ կյանքեր գոհաբերվեցին:

Երբ Տա Տունգը մի կողմ նետեց դատարկ ատրճանակն ու վերցրեց իր մեռնող զինակիցներից մեկի՝ գետնին ընկած դանակը, իրեն շատ հանգիստ էր զգում, քանզի գիտակցում էր, որ վերջը պետք է մոտ լինի: Նա շատ էր ցավում, որ իր հռչակագիրը արտակարգ հաջողությամբ տարածված լինելով հանդերձ, - ինչը թերեւս որոշ չափով պատճառ դարձավ այդքան մեծ հետեւորդների, որ ունեցան,- իրենք կրկին անհաջողության էին մատնվելու: Բայց ինքը գոհ էր: Ինքը եւ իր ընկերներն արել էին այն, ինչ պարտավոր էին անել: Թերեւս մի օր ուրիշները հաջողություն կունենան այնտեղ, որտեղ ինքն ու իր ընկերները ձախողվեցին:

Հենց այդ ժամանակ որոտի ձայն լսվեց: Տե՛ր Աստված: Մի՞թե հրետա-
նու կրակոց էր: Այո, դա ճիշտ էր: Թնդանոթային արկերը սուլոցով անցան
եւ ընկան մոտակայքում: Ա՛յ թեզ բան, այդպես էր, ևորից ու ևորից, եւ ամեն
անգամ արկերն ընկնում էին յամենին ավելի մոտիկ: Դա չափազանց լա՛վ
էր, որպեսզի ճշմարիտ լիներ: Տասնհինգերորդ գորախմբի հրետանին
պետք է որ միացած լիներ նրանց:

Հրետանու կրակոցի ձայնը ամբոխին նոր համարձակություն պա-
րզեւեց: Այդ ընթացքում մոտակայքից սանդուղքներ էին ճարել եւ արդեն
պատրաստվում էին բարձրանալ պատի վրա: Միեւնույն ժամանակ բակում
գտնվող մարդիկ սկսեցին ձայն տալ պաշտպաններին, որ հանձնվեն:
Բայց ի պատասխան՝ կրակոցներն ավելի ուժեղացան: Լուսնի պայծառ
լույսի տակ Տա Տունգը տեսավ առաջին մարդուն, որն աստիճանով վեր էր
մագլցում: Ի՛նչ խիզախ մարդ է: Նա արդեն թեւից վիրավորվել էր, քանի որ
մեկ ձեռքով էր վեր մագլցում, իսկ մյուսը թուլացած կախվել էր ցած: Երբ
նրա կերպարանքը հայտնվեց պատի վերեւում, Տա Տունգին թվաց ճանա-
չում է այդ մարդուն, որ շատ մտերիմ մեկին էր հիշեցնում: Այո, դա Տիւզն
էր, իր լավ ընկեր Տիւզ Հո-Սանը, որին թողել էին Հանկոուում՝ վերջերի
պատճառով: Երբ պատի վրա էր բարձրանում, գնդակներից մեկը խոցեց
Տիւզին, եւ նա մեջքով ընկավ իր ետեւից եկող մարդու վրա՝ հարվածելով
ու վերջինիս ոտքերը գրեթե դուրս սահեցնելով աստիճաններ միջից: Տա
Տունգն առաջ նետվեց՝ ձայն տալով սանդուղքի վրայի մարդկանց, որ
նրան զգուշորեն փոխանցելով ներքեւ իջեցնեն:

«Հո-Սան, Հո-Սան,- կանչեց Տա Տունգը, երբ օգնում էր նրան պառ-
կեցնել պատի տակ:- Ինչո՞ւ եկար»:

«Ավելի... երջանիկ եմ... որ ... այստեղ եմ... քան... թե... մնայի»:

Հենց այդ պահին հաղթանակի եւ ուրախության աղաղակների ընդհա-
նուր պոռթկումի ձայն լսվեց կրակոցների աղմուկի միջից: Տա Տունգը գի-
տեր, որ անսպասելի ինչ-որ բան է տեղի ունեցել: Նա զգաց, որ պիտի թող-
նի իր տառապող ընկերոջը եւ իր պարտականությանը հետեւի: Շուրջը նա-
յեց եւ տեսավ, որ մինչ իր մարդիկ դեռ փորձում էին բարձրանալ պատի
վրա, դարպասները բացվել էին, իսկ պահակախմբի զինվորներն անձնա-
տուր էին եղել: Չնայած շարունակվող հրետանային ուժբալկոծություննե-
րին, մարդիկ սկսեցին նետվել դեպի յամեն՝ անզուսպ գոչելով. «Սպանե՛ք
մանջուրներին: Սպանե՛ք մանջուրներին»:

Բայց փոխարքան գնացել էր: Նա փախել էր կողքի դռնից՝ դեռ ճակա-
տամարտի սկզբնական շրջանում, փախել էր նաեւ նրա ընտանիքը: Նրա

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

բացակայությունն իմանալու պատճառով էր մասամբ, որ զինվորներն անձնատուր եղան: Պահակախումբը մեծ կորուստներ չէր կրել:

Տա Տունգը, որն ուզում էր քաղաքում անմիջապես վերականգնել կարգուկանոնը, սպաներին ասաց, որ հասնել իրենց ուսադիրները եւ բոլորը՝ սպաներն ու մյուս տղամարդիկ, երկու թեւերին էլ սպիտակ թաշկինակներ կապեն: Նրանց ստիպեցին հավատարմության երդում տալ հեղափոխությանը, եւ խոստացան, որ նրանց հանդեպ վրեժխնդրության պահանջ չի լինի:

Միեւնույն ժամանակ զենքի եւ զինամթերքի պահեստը, նահանգային բանտը, պետական բանկը եւ բոլոր մյուս պետական հաստատությունները վերցվեցին, եւ ձերբակալված բոլոր ընկերներն ազատ արձակվեցին: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ ինժեներների ութերորդ գումարտակը, որի ծառայողների մեծ մասն ընկերության անդամ էր, վախենալով, թե կձերբակալվեն եւ մահապատժի կենթարկվեն դրանից մեկ օր առաջ տեղի ունեցած միջադեպի պատճառով, քաղաքում բռնկված կրակը տեսնելով՝ խռովություն էին բարձրացրել: Այդ ժամանակ տասնհինգերորդ զորախմբի գրեթե բոլոր հետեւակայիները, սպանելով իրենց սպաների մեծ մասին, նույնպես միացել էին խռովությանը: Հրետանավորներն իսկույն սկսել էին արկերով հրետակոծել փոխարքայի յամենը: Գլխավոր հրամանատար գեներալ Չան Պյանոն այդ ընթացքում անհետացել էր, այնպես որ նրանք իրենց վերանվանեցին «Ժողովրդական բանակ», եւ չունեին ոչ մի այլ տարբերանշան՝ սպիտակ թաշկինակից բացի:

Այն ժամանակ, երբ Տա Տունգը պահակագործի զինվորներին տանում էր, որպեսզի հրշեջներին օգնեն հանգցնելու այս ու այնտեղ դեռ վառվող կրակը, «Ժողովրդական բանակի» առաջնորդները, շատ ցանկանալով ունենալ այնպիսի գլխավոր հրամանատար, որը հարգանք կվայելեր եւ միաժամանակ բարի կլիներ, գնացին Լի Յուան-Հունի՝ տասնհինգերորդ զորախմբի բրիգադի գեներալի առանձնատուն՝ խնդրելու նրան, որ միանա հեղափոխությանը: Նրա մականունը «Լի Բուդդա» էր, նա ճանճին անգամ չէր վնասի եւ, անկասկած, ամենաբարեհոգի մարդն էր, որ երբեք ծառայել էր բանակում: Գեներալը, արդեն քաղաքացիական հագուստներով քողարկված, պատրաստվում էր փախուստի դիմել, երբ ներխուժեցին նրա տուն: Նա թաքնվեց իր հարճի մահճակալի տակ, բայց իր բարի կամեցողները դուրս քաշեցին, որպեսզի առաջարկեն «Ժողովրդական բանակի» գլխավոր հրամանատարի եւ միանգամից ստեղծվող՝ ռազմական կառավարության ղեկավարի պաշտոնը: Չնայած հետագայում նա դարձավ Չինաստանի

տանի Հանրապետության փոխնախագահը, իսկ ավելի ուշ՝ նախագահը, բայց չափազանց համեստ էր եւ բացարձակապես անհավակնոտ ու փառասիրությունից զուրկ: Իր իսկ բառերով ասած՝ նրան «պահանջում էր զինվորների մի խումբ, որը շրջապատեց եւ խուզարկեց տունը»: Նրան «գերեվարեցին եւ գլխին քարոզ կարդացին՝ զենք ու հրացաններով շրջապատած»: «Եթե չենթարկվեի,- գրում էր նա իր նախկին ուսուցչին, որն ուղարկվել էր մանջուրների կողմից, որպեսզի պայքարի իր դեմ, եւ որին ինքը փորձում էր համոզել հանձնվել,- գլուխս մարմնիցս անմիջապես կբաժանվեր: Հունն ստիպված էր համաձայնել ժամանակավորապես»:

Չինաստանի միացյալ ընկերության անդամներն անհանգստացան դրանից: Նրանք բոլորը կարծում էին, որ Տա Տունգից բացի ոչ ոք չպետք է լինի այդ կառավարության ղեկավարը: Ուզում էին վիճել զինվորների հետ եւ «Լի Բուդոյաի» ընտրությունը չեղյալ հայտարարել՝ որպես անվավեր: Փորձեցին գտնել Տա Տունգին, բայց այդ մասին լսելով նա անհետացել էր:

Սարսափի գիշերից հետո նոր օրը բացվեց խաղաղ ու հանգիստ: Փողոցներում ընկած մարմիններն արագ հավաքեցին եւ հուղարկավորեցին Թուֆակի կղզյակում գտնվող հանրային գերեզմանում: Կարգուկանոն անմիջապես վերականգնվեց: Մարդիկ առաջվա պես գնում էին իրենց գործին, ասես ոչինչ էլ չէր եղել, իսկ արտասահմանյան շատ երկրներում մամուլը տեղեկացնում էր, թե Չինաստանում անարյուն հեղափոխություն է տեղի ունեցել: Քանի որ օտարերկրացիները չէին տեսել դիակների կույտերը, ոչ էլ գիտեին, որ քաղաքում բոլոր դագաղներն առավոտյան սպառվել էին, եւ այն ամենն, ինչ տեսան, մաքուր մաքրված փողոցներն ու այրված մի քանի տների մնացորդներն էին, ընդունեցին, որ իրենց լսածը ճշմարտություն է: Այդուհանդերձ, կային մի քանի օտարերկրացիներ, որոնք գիտեին, թե որքան արյուն է թափվել այս՝ թյուրիմացաբար «անարյուն» կոչվող հեղափոխության ժամանակ: Բայց այդ մարդիկ պատկանում էին Չինաստանում իրենց առաքելությունն անցկացնողների լռակյաց տեսակին: Միսիներական հիվանդանոցների բժիշկներն ու բուժքույրերը շատ ծանր ու լարված ժամանակ անցկացրին, եւ, ինչպես միշտ, արեցին այն, ինչ կարող էին անել մարդկանց բազմության համար, իսկ խոսակցությունները թողեցին մյուսներին: Այդ հրաշալի մարդիկ կարծում են, թե գործն ավելի խոսուն է, քան բառերը, բայց, ավա՛ղ, 20-րդ դարն աղմուկի դար է, եւ հաղթում է նա, ով ամենաբարձրն է խոսում: Հանրությանը սփրված եւ անձնագրի այդ տղամարդկանց ու կանանց բազմաթիվ անգնահատելի

ԱՅՈՒՆ ՇԻՒ

արարքների մասին ոչինչ չպատմեցին ու չերգեցին: Նրանց արածների մասին գրվածը կգտնեինք միայն այն մարդկանց սրտերում, որոնց իրենք բուժել էին ու փրկել կամ փորձել էին բուժել:

Բժիշկների ու բուժքույրերի հետ, որոնք մեծ մասամբ Անգլիայից ու Ամերիկայից էին, տարբեր ազգությունների մարդկանց կողմից հիմնադրված Վու-Չանի Միջազգային կարմիր խաչի հիվանդանոց եկավ ևս: Տա Տունգը, որին գրեթե ողջ քաղաքն էր փնտրում: Նա վիրավոր չէր, բայց զբաղված էր ապարդյուն որոնումներով: Եղել էր քաղաքի բոլոր մյուս հիվանդանոցներում տեսելու, թե արդյոք Տիևգն այդտե՞ղ է: Հույսը երբեք չկորցնելով՝ նա հարցրեց այստեղի տնտեսվարուհուն. «Այստեղ այնպիսի մի երիտասարդ չունե՞ք, որի աջ ձեռքի երեք մատը չկա, իսկ ձախ ուն էլ գնդակը ծակել անցել է»:

Բարեհամբույր տիկինը նայեց բոլոր գրանցումները եւ վերջապես գտավ մի գրառում, որտեղ այդպես էր նշված:

«Այո, եկեք ինձ հետ: Բայց վախենամ նրա վիճակն անհույս է: Չափից դուրս շատ արյուն է կորցրել»:

Նա Տիևգին գտավ ընդհանուր մի հիվանդասենյակում շրջապատված բազմաթիվ այլ սպանվածներով ու վիրավորներով: Տիևգը պառկած էր սոճեփայտի երկու նեղ տախտակից հապճեպ պատրաստած մահճակալներից մեկի վրա: Նա արդեն դիակի էր նման:

«Հո-Սան...», - ձայն տվեց Տա Տունգը:

«Այդքան բարձր մի՛ բղավեք,- զգուշացրեց տնտեսվարուհին:- Նա երկար ժամանակ գտնանում էր, նոր է հանգստացել: Մահը շատ հեռու չէ»:

Տա Տունգը հագիվ կարողացավ նայել Տիևգին: Աչքերը փակ էին, այտերը փոս ընկած, մաշկը չորացել էր: Շնչում էր, բայց շատ թույլ: Նա շուրթերը թեթևակի շարժեց, եւ թվաց ինչ-որ բան է փորձում ասել: Հերթապահ բուժքույրն ասաց. «Այս առավոտ վիրահատությունից առաջ հիվանդը գոռում էր, կցկտուր ու անկապ նախադասություններ էր ասում: Բժիշկն ասաց, որ գնդակը մարմնի միջով անցնելիս համարյա սրտին է դիպել, եւ հույս չկա: Անընդհատ գոռում էր, որ ինչ-որ կղզի է ուզում գնալ: Ինչպես տեսնում եք, ինքն էլ չգիտեր ինչ է ասում»:

Տա Տունգն այժմ հասկացավ, որ Տիևգի շուրթերի շարժումը նշանակում էր, որ նա «կղզի» բառն է ուզում ասել:

«Կարծում եմ հասկացա, թե որն է մեռնողի վերջին ցանկությունը»:

Նա մնաց Տիևգի կողքին, մինչեւ ի վերջո մահը վրա հասավ, իսկ հետո ապարդյուն փորձում էր դազաղ գտնել: Տնտեսվարուհին, լսելով, որ Տա

Տունգն ուզում է Տինգի աճյունը տանել Գուանդուն, առաջարկեց, որ ամենաճիշտը դիակիզումը կլինի. այդ դեպքում Լույնիսկ տեղափոխման դժվարին հարցերը կլուծվեն: Տա Տունգն ստիպված էր դժկամորեն համաձայնել նրա առաջարկին, եւ մինչ նա խիստ զբաղված էր այս հարցերով, Լի Յուան-Հունը պաշտոնապես հաստատվեց Վու-Չանի նորաստեղծ հեղափոխական կառավարության ղեկավար:

«Լի Բուդոայի» անո՞նը հրաշքներ գործեց, թե՛ այլ պատճառներ կային, Էական չէ, բայց պատմականորեն ճիշտ է, որ նա այնպիսի հրամաններ արձակեց, որոնց բոլորը հնազանդվեցին: Վու-Հանի եռյակ քաղաքները համարվեցին «իրենց շքեղությունը վերականգնած», եւ մեկ ամսվա ընթացքում տասնյակ Լահանգներ հռչակեցին իրենց անկախությունը՝ պարզելով Հանրապետական դրոշմ եւ իրենց ներկայացուցիչներն ուղարկելով Վու-Չան՝ մասնակցելու Դաշնակից Լահանգների խորհրդաժողովին:

Սանուկ կայսրը, իր հոգեմայր կայսրուհու՝ հանգուցյալ կայսեր այրու հետ, չգիտեր ինչ անել: Ժամանակավոր կառավարիչն ավելի շատ գիտեր եւ հոգում էր Պեկինի ռեստորանների մասին, քան պետության գործերի: Հուսահատության այս պահին նրանք դիմեցին մի մարդու, որին մոտ երեք տարի առաջ խայտառակ վիճակի մեջ էին դրել: Յուան Շի-Կայը նշանակվեց Հուպեյի եւ Հունանի նոր փոխարքա՝ փոխարինելու Ժույ Չենին, որը լքել էր իր պաշտոնը: Պատրաստվո՞ւմ էր արդյոք Յուանը պայքարել հեղափոխականների դեմ՝ վերադարձնելու համար այդ Լահանգները մանջուրական արքունիքի ենթակայությանը: Ոչ, ո՛չ նա: Այդ նշանակումը նման էր որեւէ բարեկամի ոսկու երկու ծովակտոր խոստանալուն, որոնք ավազակները քիչ առաջ արդեն կողոպտել-տարել էին: Կզնահատե՞ր արդյոք բարեկամն այդ սիրալիրությունը, էլ չենք ասում՝ այն բարեկամը, որին վերջերս էին դուրս վռնդել: Այդուհանդերձ, Յուանը փառամուլ էր եւ իշխանության համար սակարկեց: Գիտեր, որ կստանա այն: Նա նշանակվեց վարչապետ՝ լայն լիազորություններով եւ իր առաջարկած նոր նստավայրով: Տասներկու միլիոն թաեւ արծաթ էր ուզում բանակի համար, որը պետք է գլխավորեր: Գանձարանը դատարկ էր, բայց նա գիտեր, որ կստանա այդ գումարը: Այրի կայսրուհին իր անձնական ֆոնդից նրան տվեց ութսուն հազար թաեւ ոսկի, իսկ մնացածը համալրվեց թագավորական ընտանիքի մյուս անդամների կողմից: Բայց կպայքարե՞ր, արդյոք, Յուանը՝ իր ուզածն ստանալուց հետո: Ոչ, ո՛չ Յուանը: Նա բանակում իր ենթակայության տակ գտնվող սպաներին հրամայեց մի հեռագիր ստորագրել՝ բոլոր զորքերը Պեկին ետ տանելու մասին, պատերազմ ցանկացող թագավորական ըն-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

տանիքի անդամներին ու նախարարներին բացատրելու համար հետեւանքների լրջությունը:

Մինչ Յուանը սակարկում էր իշխանության եւ փողի համար, մի մարդ, որ բացարձակ արհամարհանք ուներ այս երկու բաների հանդեպ, անցնում էր փառքի եւ իշխանության ճանապարհով՝ հակառակ իր կամքի: Բժիշկ Սուն Յաթ-Սենը, որն ասում էր, թե այս հեղափոխության հաջողությունը զուտ պատահականություն էր, արտասահմանից տուն վերադարձավ եւ ընտրվեց Չինաստանի առաջին ժամանակավոր նախագահ: 11-րդ լուսնի 13-րդ օրը նա ստանձնեց պաշտոնը եւ ընդունեց արեւմտյան օրացույցը: Պա հունվարի 1-ն էր՝ Չինաստանի Հանրապետության առաջին տարին (1912 թվականի հունվարի 1-ը):

Բայց մի մարդ էլ կար, որ Լույնքան քիչ էր հոգ տանում իշխանության, փառքի եւ փողի մասին, որքան բժիշկ Սունը:

Տա Տունգը, Հանկոուում մի քանի օր գաղտնի մնալուց հետո, որպեսզի սպասի Տինգ Հո-Սանի աճյունի դիակիզմանը, որն ուզում էր տանել Հարավային ծովում գտնվող ամայի կղզի, շուտով սկսեց իր ուղեւորությունը: Հանրապետությունն այժմ հիմնադրվել էր: Մանջուրները, թեւեւ անվանապես դեռ գոյություն ունեին, իրականում կանգնելու մեկ թիզ հող անգամ չունեին:

Տա Տունգը բավարարել էր իր ձգտումն ու հավակնությունները, եւ քանի օրերն անցնում էին, ավելի ու ավելի էր պատրանքներից ազատվում ու հիասթափվում: Նա սկսեց տեսնել ու հասկանալ, որ անցումային շրջանն ստեղծվել է պատեհապաշտների համար եւ միտված է պատեհապաշտներ ստեղծելու: Երբ Ֆրանսիան՝ այդքան փոքր մի պետություն, քաղաքական այդպիսի փոփոխությունների էր ենթարկվում, այդ երկիրը շատ երկար տարիներ քառսային վիճակում էր գտնվում, եւ շատ պատեհապաշտներ բարգավաճեցին ու վերացան: Նա այդպիսի շրջանի համար չէր ստեղծված: Նա պետք է գնար: Կյանքում առաջին անգամ իրեն միայնակ էր զգում, չափազանց միայնակ: Շատ էր փափագում կնոջ՝ Լոտոսի Բուրմունքի ընկերակցությունը, որին սկսել էր սարսափելի կարոտել: Ինքը չէր կարող Պեկին գնալ, իսկ կինը չէր կարող գալ Հարավ: Հարավն ու Հյուսիսը պետք է որ պատերազմի մեջ լինեին: Նա իր սեփական տունը չի ունեցել, բայց Լի Կանի տունն այն տեղն էր, որ ինքն իր տունն էր համարում: Իր հորեղբայր Կանն արդեն ութսուն տարեկան էր դառնում, եւ որքան էր երջանիկ պետք է լիներ ծերունին հիմա, որ տեսավ, թե ինչպես ի վերջո ստեղծվեց Հանրապետությունը: Հորեղբորը չէր տեսել տասնյոթ տարի եւ գիտեր, որ հորեղ-

բայրն իրեն ավելի շատ է սիրում, քան սեփական որդուն: Հենց որ Յգյանսին արդեն մտներ Հանրապետության մեջ, ինքն առաջինը պետք է սլաւար դեպի տուն: Ղա սրա ճանապարհին էր՝ դեպի Կանտոն, իսկ հետո Հայ-Ան, որտեղ պատրաստվում էր մնալ՝ սպասելով, որ Լուտոսի Բուրմուկը միանա իրեն, երբ սրա համար հարմար լինի ճամփա ընկնելը: Պարտավոր էր նաեւ հարգանքի տուրք մատուցել մեծ հորաքրոջ եւ հորեղբոր կնոջ գերեզմաններին, որ մահացել էին տարիներ առաջ, եւ տեսնել Տա Յուին, որի հանդեպ եղբայրական զգացում ուներ, բայց սրա հիմնական եւ նվիրական ցանկությունն էր՝ տեսնել իր ծերունազարդ հորեղբորը:

Պատերազմի նշաններն ամենուր էին՝ Յանցզիի վրա, ուր գործեր էին տեղաշարժվում այստեղ ու այնտեղ, եւ կապահանգիստներում ու քաղաքներում, որտեղ կրակն իր սպիներն էր թողել: Նանչանին պատերազմի շոշափուկները միայն թեթեւակի էին դիպել, բայց հին քաղաքը, որ թանկ էր իր սրտին, եւ որն այս անցած տարիների ընթացքում հազար անգամ տեսել էր իր մտքի աչքերով, ամբողջովին տարբեր թվաց այն քաղաքից, ինչ նախկինում էր եղել կամ ավելի շուտ՝ իր մտածածից: Փողոցները շատ ավելի նեղ էին, քան ինքն էր հիշում, եւ իրեն շատ լավ ծանոթ՝ ընդարձակ հասարակական վայրերը, թվում էր, անճանաչելիորեն փոքրացել, կուչ էին եկել: Սթնուրտը թվում էր կեղտոտ ու հեղձուցիչ, եւ նա շտապեց գյուղ տեղափոխվել: Երբ հորիզոնից վեր աստիճանաբար հայտնվեց Լի ընտանիքների գյուղը, ավելի ու ավելի անհամբեր դարձավ:

Նա միշտ իր մոտ էր պահում Բո Յգյույ-Իի բանաստեղծությունների հատորյակը, որ գնել էր Պեկինի մի գրախանութից: Ըստ չէր վճարել դրա համար, բայց դա այդ բանաստեղծի երկերի՝ գոյություն ունեցող ամենալավ տպագրված եւ կազմված հրատարակությունն էր: Գիտեր, որ հորեղբորը շատ դուր կգա: Ինքն անձամբ հոգ չէր տանում կազմի մասին, բայց գիրքը միշտ կրում էր իր հետ, երբ կարող էր, փաթաթում էր եւ դնում բարձի տակ կամ իր ճամպրուկի հատակին, եւ դա այն եզակի իրերից մեկն էր, որ չէր կորցրել Հանկուոլից շատ արագ տարհանման ժամանակ: Նա գիրքը միշտ գերազանց վիճակում էր պահել եւ երբեք մատնահետքեր չէր թողել վրան, թեեւ սիրում էր կարդալ Բոյի բանաստեղծությունները: Զգում էր գրքի ներկայությունն իր փոքրիկ ծանրոցի մեջ եւ անհամբեր սպասում էր այն պահին, երբ կտեսներ ծերունու աչքերի երջանիկ փայլը՝ այդպիսի գանձը գտնելուց հետո:

Երեկոյան կողմ էր: Աշնան արեւն իր վերջին շողերն էր արձակում կապույտ երկնքում ցրված՝ ամպի հատուկներ պատառիկների ետեւից: Երկ-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

Նակամարին նայելով՝ Տա Տունգը կարող էր տեսնել երկնի ամպհովանին՝ կապույտ, ճերմակ, դեղին, ոսկե, նարնջե, կարմիր ու ծիրանի գույների մեջ: Գույների այդպիսի պատկերասրահից վար՝ գյուղի ծանոթ տեսարանը, իր մշտապես անփոփոխ ծառերով, տանիքներով, պատերով, լճակներով, բրնձի դաշտերի հողակտոր-կարկատաններով, եւ նույնիսկ խոտի դեզերով, որոնք, թվում էր, հենց նույնն էին, որ տեսել էր պատանեկության տարիներին, արագ հայտնվեց իր աչքերի դեմ: Հետո լավեց շների հաչոցը. նույնիսկ կարող էր երդվել, որ ճանաչեց դրանցից մի քանիսին, թեւ հասկանում էր, որ իր ծանոթ շները վաղուց են սատկել: Ի՛նչ երջանկություն է մարդկային սրտի համար՝ կրկին այցելել մանկության հին ու հարագատ վայրերը՝ այդքան երկար տարիներ բացակայելուց հետո: Եվ կրկին տեսնել մարդկանց, ում այդքան շատ են սիրել:

Հին շիւնության արտաքին դարպասները խարխուլվել էին եւ ճնշող տեսք ունեին: Բայց այդ ի՛նչ էր կախված մուտքի շրջանակի վերելում: Արդյո՞ք կանեփի գործվածքի երկար ու լայն կտոր էր, որ նշանակում էր, թե ընտանիքում մահ կա: Այո, նաեւ կապույտ լապտերներ էին տեղադրված: Արցունքները հորդեցին նրա աչքերից, երբ մտավ մեծ ներքնաբակը: Չախում, կողմնակի դռների վերելում նույն բաներն էին երեւում: Քայլերը դանդաղեցին, ոտքերը թուլացան, էլ չէր կարողանում առաջ շարժվել: Շատ դանդաղ, խորտակված սրտով տուն մտավ եւ ձևի իջավ միջնասենյակի դիմաց, որտեղ Լի Կանի դագաղն էր դրված: Ուզում էր բարձրածայն լաց լինել, բայց ձայնը կորցրել էր: Արցունքները հոսում էին այտերն ի վար: Հազար բան ուներ ասելու հորեղբորը, եւ այժմ դրանք արցունքների էին փոխակերպվել, որոնք թերեւս ավելի խոսուն էին, քան բառերը: Տան միակ անձնավորությունը գյուղի ծեր կանանցից մեկն էր: Նա Տա Տունգին երեխա ժամանակից գիտեր, բայց հիմա չկարողացավ ճանաչել: Կինն ասաց, որ Լի Կանը մահացել է մի քանի օր առաջ: Ասաց նաեւ, որ Տա Յուն միացել էր բանակին հեղափոխության բռնկման ժամանակ, եւ դեռ չգիտեր հոր մահվան մասին:

ՎԵՐՋԱԲԱՆ

«Երկնային կամուրջը երբեմն Դժոխք տանող դարպաս է»:

Հին աշխարհի մի պատմիչ մեզ ավանդել է մորակցացարի եւ ոստրեի պատմությունը:

«Երբ ոստրեն արեւի լույսը էր ընդունում, մի մորակցացար կցոցեց նրա մարմինը: Ոստրեն փակեց իր խեցու փեղկերը եւ բռնեց նրա կտուցը:

«Այսօր անձրեւ չկա,- ասաց մորակցացարը (որն, ըստ ընդունված կարծիքի, կարողանում է կանխագուշակել եղանակը),- վաղն էլ անձրեւ չի լինի: Ոստրեն սատկած կլինի»:

«Այսօր կտուցն ազատել չի կարող,- ի պատասխան ասաց ոստրեն,- վաղը նույնպես չի կարող: Մորակցացարը սատկած կլինի»:

Մինչ նրանք այդ անելանելի վիճակում էին, ձկնորսը կարողացավ երկուսին էլ բռնել»:

Մինչ հեղափոխականներն անում էին հնարավոր ամեն բան՝ տապալելու համար մանջուրներին, իսկ մանջուրներն էլ պատրաստ էին ամեն ինչ տալ, որպեսզի հեղափոխությունը պարտության մատնեին, Յուան Շի-Կայը, մեր պատմության ձկնորսի պես, նույն օգուտն էր քաղում: Նա քայլ իսկ չարեց, մինչեւ չստացավ այն ամենն, ինչ ուզում էր մանջուրական արքունիքից, իսկ երբ ստացել էր, պարզապես հեղափոխական բանակին (որ հապճեպորեն կազմավորվել ու սպառազինվել էր եւ «Լի Բուդայի» հրամանատարության ներքո էր, որը համարվում էր տղամարդկանցից ամենաբարին եւ հետեւաբար զինվորներից ամենավատը) տվեց ոչ ավելին, քան իր ուժի մասին մի որոշ պատկերացում՝ ետ գրավելով Հանկոուն եւ Հան-Յանը, թողնելով նրանց իրենց սեփական հետեւությունն անելու, թե ավարտին կհասցնի իր հաղթանակը՝ գետն անցնելով եւ վերցնելով Վու-Չանը, որը շարունակում էր ռմբակոծել: Այնուհետեւ նա իր գաղտնի պատվիրակին հանձնարարեց հանդիպել իր թշնամիների ներկայացուցչին՝ ոչ թե պահանջելու, որ հանձնվեն, ինչն ի վիճակի էր ստիպելու, այլ որ բանակցություններ վարեն խաղաղ եւ արժանապատիվ կարգավորման ուղղությամբ, ինչը երկու կողմերի համար էլ ընդունելի կլիներ: Կայսրը պետք է հրաժարվեր գահից, բայց դեռ համարվեր կայսր իր Ծիրանագույն արգելված պալատում: Կայսրության մյուս մասը պետք է դառնար հանրապետություն, որն ստեղծվելու էր ժողովրդական սկզբունքների հիման վրա: Ինչ

վերաբերում էր իրեն, և ա շատ համեստ էր: Միայն մեկ փոքրիկ եւ անծնական խնդրանք ուներ: Հին վարչակարգին իր հիանալի ծառայության համար, որի դեմքը փրկել էր, եւ հեղափոխականների հանդեպ իր ողորմած վերաբերմունքի համար, որոնց պարտությունը չէր ուզում տեսնել, և պարզապէս, որպէս պարգէս, ուզում էր առաջադրվել Չինաստանի Հանրապետության առաջին նախագահ: Նրա մեծահոգի առաջարկին, մինչ կայսերական ընտանիքի բոլոր անշնորհակալ անդամները եւ Պեկինի մանջուրական արքունիքի նախարարները կտրականապէս «ոչ» ասացին, անօգնական Այրի կայսրուհին եւ նրա որդեգրած մանուկ կայսրն ասացին «այո», եւ մինչ Նանկինի ևոր ձեւավորված ժամանակավոր կառավարության բոլոր նախարարներն ու կողմնակիցներն ասացին «ոչ», բժիշկ Սուն Յաթ-Սենը՝ նախագահն ինքը, ասաց «այո»: Քանի դեռ մանջուրները չէին գնացել եւ հանրապետությունը չէր հիմնադրվել, և բավարարվելու էր եւ չէր առարկելու: Հենց որ կայսրը հրաժարական տար, և պետք է լիազորությունները վար դներ ու հոգ տաներ, որ Յուանն առաջադրվեր եւ ընտրվեր նախագահ:

Նախքան դժբախտ այրին եւ նրա որդեգրված երեխան երջանիկ Նոր տարի կանցկացնեին, Յուանը դիմեց Գահին՝ խորհուրդ տալով հրաժարական տալ: «Եթե Ֆրանսիայի թագավորը, Ֆրանսիական հեղափոխության ժամանակ, հետեւեր իմաստուն խորհրդին, երբեք չէր կարող այնպէս լինել, որ Լյուդովիկոսի յուրաքանչյուր հետևորդ կործանվեր»: Ժամանակին ասված այս բարի խոսքերն անմիջական ազդեցություն ունեցան:

Կայսերական վերջին խորհրդաժողովի ժամանակ կայսրը, իր կարճ պաշտոնավարման ընթացքում երկրորդ անգամ, դառնորեն լաց էր լինում: Բայց այս անգամ Այրի կայսրուհին նրանից ավելի դառն էր լալիս: Այդ ժամանակաշրջանի պատմիչի խոսքերի համաձայն՝ խորհրդաժողովը հուղարկավորություն էր հիշեցնում: «Կայսրուհին հեկեկում էր եւ նրա արցունքները հոսում էին, բոլոր իշխաններն ու նախարարները բարձրաձայն ու երկար արտասվում էին: Վերջապէս Այրի կայսրուհին կայսրին ասաց. «Այն փաստը, որ Դուք այսօր դեռ ողջ եք, ամբողջությամբ պայմանավորված է Ձեր մեծ նախարար Յուանի գերագանց ծառայությամբ»,- եւ կայսրին պատվիրեց իջնել իր կայսերական գահից՝ Մեծ նախարար Յուանին շնորհակալություն հայտնելու համար: Մեծ նախարար Յուանը, դողալով ու գլուխը գետնին զարկելով, հրաժարվեց, որ իրեն շնորհակալություն հայտնեին, եւ գլուխն այդպէս խոնարհած ու արտասվելով, չէր կարողանում դեմքը վեր բարձրացնել»:

Սյուն Տունի իշխանության 12-րդ լուսնի 25-ին՝ Չինական Փոքր Լոր տարվա տոնին հաջորդող օրը (1912 թվականի փետրվարի 12-ին), արձակվեց հրաժարականի կայսերական հրովարտակը: Հաջորդ օրը, իր խոստմանը հավատարիմ, բժիշկ Սուն Յաթ-Սենը հրաժարական տվեց եւ հետեւեց Նանկինում գտնվող՝ բոլոր տասնյոթ Լահանգների ներկայացուցիչների կողմից Յուն Շի-Կայի՝ Չինաստանի առաջին Լահանգահի պաշտոնին առաջադրմանն ու միաձայն ընտրությանը: Փոխնախագահի համար Յունը չկարողացավ գտնել ավելի հարմար մի անձնավորության, քան «Լի Բուդղան» էր, որը, հարկ է հիշել, հեղափոխականների ընտրությունն էր:

Ժողովրդավարության առաջին օրերին զավեշտալի շատ բաներ տեղի ունեցան: Գեներալ Տանը՝ հեղափոխությունից առաջ մասնավոր խոհարարը, մի շատ հանրաճանաչ գործիչ դարձավ Լիի հրամանատարության ներքո, եւ Լոր կոչումը շատ արագ բարձրացվեց գնդապետի աստիճանի: Հետագայում Լա նշանակվեց Լիի թիկնազորի հրամանատար, իսկ երբ Յունը մեռավ, եւ Լին, որպես Լահանգահ, հաջորդեց Լորն, Տանը, փաստորեն, իսկապես ստացավ գեներալ-մայորի կոչում, եւ Լոր ավագ եղբայրներից յոթը, որոնք Լահանգահում շատ վատ էին վարվել Լոր նկատմամբ, եկան Պեկին՝ իրենց կրտսեր եղբոր մոտ, ու բոլորն էլ վաղ թե ուշ պաշտոններ ստացան Տանի ենթակայության ներքո՝ որպես կապիտաններ:

Ծերունի Չուն՝ հմուտ հրածիզը, չապրեց այնքան, որպեսզի տեսներ հանրապետությունը: Երբ Վու-Չանի հուզումների մասին լսելով՝ մարդիկ խռովություն բարձրացրին, Լա, Լկատելի լինելով կապիտանի իր համագգեստով, ստացավ առաջին գնդակներից մեկը եւ տեղում սպանվեց:

Երբ արդեն Հարավն ու Հյուսիսը միացան, եւ խաղաղությունը վերականգնվեց, Տա Տունը հեռագիր ուղարկեց Լոտոսի Բուրմունքին՝ ասելով, թե ինքը պատրաստ է գնալ, ինչպես պայմանավորվել էին, Հարավային ծովում գտնվող այն դրախտային կղզին: Շուտով Լոտոսի Բուրմունքից պատասխան ստացավ, որ կենսական նշանակության որոշակի պատճառով, որը չէր կարող բացատրել թղթի վրա, իսկ հեռագրով դա շատ ավելի դժվար կլիներ, Լա մի քանի տարի դեռ չէր կարողանա գնալ այդտեղ: Եթե Տա Տունը Պեկին չգար, ինքն անմիջապես Պեկինից կմեկներ Նանչան: Իհարկե, Տա Տունը Լորն հեռագրեց, որ իսկույն գա, բայց տարակուսանքի մեջ էր: Այդ ի՞նչ կենսական նշանակության պատճառ էր: Հիշեց, որ կոզու մասին Տինգի հիշատակելուց ի վեր Լոտոսի Բուրմունքն իրականում երբեք պատրաստակամություն չէր հայտնել, թե իր հետ կգնա այնտեղ:

Արդյո՞ք վախենում էր, որ կղզին ուրվականներով բնակեցված կլիսի: Կատարյալ անհերթություն, ինչպես Տիկզը կասեր: Եվ հետո ինքը պարզորոշ տեսել էր, որ նա այլևս այդքան երկչոտ չէ: Ինչ կարող էր լինել այդ կենսական նշանակության պատճառը: Ինչ - որ բան պետք է եղած լիներ, որ նա իրեն չէր ասել, երբ ինքը հեռանում էր Պեկինից: Հիշեց, որ երբ գնացքն արդեն սկսել էր շարժվել կայարանից, նա կարծես ինչ-որ գաղտնիք ուներ հայտնելու իրեն, բայց շփոթի ծայրը հնչեց, և նա պետք է որ միտքը փոխած լիներ : Որովհետեւ միայն ասաց, որ հաճախ սամակներ գրի իրեն:

Իսկ Լոտոսի Բուրմունքի կենսական նշանակության պատճառը Նրբագեղ Ճառագայթն էր, որն իր դպրոցական կարճ բաճկոնակով ու դպրոցական կարճ կիսաշրջագգեստով և ականջների հետև տետում երկու սեւ, կարճ հյուսերով՝ հրաժեշտ էր տալիս իր ուսուցիչներին ու դասընկերներին Պեկինի օրիորդաց միջին դպրոցում: Սա նրա երկրորդ տարին էր: Նա շատ էր ցավում, որ ստիպված է բաժանվել այստեղ ձեռք բերած որոշ ընկերներից: Վերջին անգամ դպրոցի դարպասներից աղջիկը դուրս ելավ թաց աչքերով, բայց կրկին պայծառ ճառագում էր, երբ եկավ տուն, որը դպրոցից շատ հեռու չէր: Ցատկոտելով և ժպտալով՝ նա կանչեց. «Մայրի՛կ, մայրի՛կ: Ես վերադարձել եմ: Ո՞ր է սոսիւնը: Ուզում եմ այս նկարներն իմ ալբոմում փակցնել: Այսօր դրանք ավելի շատ են»:

Լոտոսի Բուրմունքն իրերն էր կապում: Նա շրջվեց և գորովալից պաշտամունքով նայեց դստերը, ասես առաջին անգամ էր տեսնում նրան երկար բացակայությունից հետո:

«Ուրեմն վերադարձել ես, Նրբագեղ Ճառագայթ: Սոսիւնն իմ գրասեղանին է»: Ապա փիլիսոփայորեն ավելացրեց. «Հուսով եմ՝ կհիշես ով ով է, ո՛չ թե պարզապես լուսանկարներ ես հավաքում ալբոմդ լցնելու համար, ինչպես տղաներն են անում սամակահիշներով: Նրանց միայն քանակն է հետաքրքրում»:

Դարակից չորս ալբոմ վերցնելով և դրանք դնելով իր փոքրիկ գրասեղանին, որի մոտ նստած էր, Նրբագեղ Ճառագայթն ասաց. «Չէ, մայրիկ: Քանակ չեմ ուզում: Ես դրանք շատ ուշադիր ու խնամքով եմ ընտրում: Եթե լուսանկարը գեղարվեստական տեսք չունի, չեմ փակցնում: Եվ եթե տեսնում եմ, որ թեթեամիտ ու ոչ պիտանի նկար է, դարձյալ չեմ փակցնում»:

«Ուսուցիչներդ ի՞նչ ասացին քեզ, երբ լսեցին, որ ընդմիջտ հեռանում ես իրենցից»:

«Նախկին ուսուցիչս ինձ հարցրեց, թե արդյոք նախագահ Յուանի

զինվորների՝ վերջերս Պեկինի շուրջ բարձրացրած խռովությունից մեր վախեցած լինելու պատճառով չէ՞, որ դու հանկարծ որոշեցիր վերադառնալ Նանչան: Տեսիլուսիկին ասաց, որ խռովությունը բեմադրվել էր նախագահի հրամանով, որպեսզի հարավցիներին ցույց տային, որ նա չի կարող թողնել Պեկինը, եւ որ վախենալու ոչինչ չկա: Նա ինձ հարցրեց, թե կուզեի՞, արդյոք, մնալ դպրոցում՝ որպես պանսիոներ, փոխանակ քեզ հետ հարավ գնալու, մայրիկ»:

«Անպատկառ մարդիկ ասում են, թե հեղափոխությունը «ջրի փոփոխություն է, բայց ոչ դեղորայքի», բայց ես իրականում տեսնում եմ տարբերությունը: Հեղափոխությունից առաջ մարդիկ այդքան ինքնահավան ու կոպիտ չէին: Իմ դպրոցական օրերին ուսուցիչներս միայն գովաբանում էին ուրիշ դպրոցների լավ հատկանիշները, իսկ իրենց մասին համեստորեն լռում էին: Դե, իսկ հեղափոխությունը փոխել է դա: Բայց դու ի՞նչ ասացիր նրանց, Սրբազեղ Ճառագայթ»:

«Ասացի՞ չգիտեմ»:

«Ինչո՞ւ չգիտես, Սրբազեղ Ճառագայթ: Արդեն տասներեքն անց ես եւ լավ պիտի իմանաս ամեն բան: Պետք է ասած լինեիր, որ պիտի գնաս տուն, որպեսզի տեսնես մեր հայրիկին, որին նախկինում երբեք չես տեսել»:

Սրբազեղ Ճառագայթն իր գործը շատ ավելի հետաքրքիր էր համարում, քան այն թեման, որի մասին խոսում էին:

«Ճիշտն ասած՝ ավելի շատ անհամբերությամբ սպասում եմ ճամփորդությանը, քան հայրիկին տեսնելուն»: Ապա, փոքր-ինչ դադարից հետո, ներում հայցող տոնով հավելեց. «Գիտես, ես երբեք նախկինում Պեկինից դուրս չեմ եղել, իսկ իմ բոլոր ընկերներն ասում են, որ հայրերն այնքան լավը չեն, որքան մայրերը: Ոմանք նույնիսկ ասում են, թե նրանք սոսկալի արարածներ են»:

«Խեղճ հայրիկ,- հառաչեց Լոտոսի Բուրմուռը: - Իսկ նա քո գոյության մասին նույնիսկ չգիտի»:

«Ինչո՞ւ չես ասել նրան, մայրիկ»:

«Դու չես հասկանա»:

«Կհասկանամ, մայրիկ: Ես հիմա մեծ աղջիկ եմ եւ պետք է իմանամ ինչն ինչոց է»:

«Դե, երբ նա ստիպված էր հեռանալ, դու չէիր ծնվել: Եթե ասեի նրան, չէր գնա, իսկ այստեղ մնալը վտանգավոր էր»:

«Բայց հետո, երբ գնացել էր, դու իհարկե պետք է ասած լինեիր նրան,

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

մայրի՛կ»: Նա փոքր-ինչ վիրավորված էր գգում:

«Ոչ: Նա որոշակի գործ էր կատարում, որը կարող էր նրանից կյանքի գոհաբերում պահանջել: Եվ եթե իմանար քո գոյության մասին, կարող էր եւ հրաժարվել իր վտանգավոր գործից ինչ-որ մի անվտանգ գործի համար»:

«Իսկ դու չե՞ս ուզում, որ նա ապահով գործ կատարի, մայրիկ»:

«Նա իրեն դժբախտ կզգար եւ կուզեր, որ թողած չլիներ նախկին գործը»:

«Օ, հասկանում եմ»: Իրականում նա ավելի շփոթված էր, քան առաջ: Այժմ մտածում էր, որ մորն էլ չի կարողանում հասկանալ: Ոտքի կանգնելով՝ նա փորձեց մատները մաքրել թաշկինակով: Բայց մատներին կպած սոսինձն արդեն չորացել էր, դրա համար էլ մատները բերանը տարավ, որ թրջի: Հետո անփութորեն սրբեց բաճկոնակի վրա:

«Վերջ տուր, Նրբագեղ Ճառագայթ,- խստորեն ասաց մայրը:- Պես եւ լվա՛՛ ձեռքերդ, եթե դրանք կեղտոտ են: Քո անփույթ վարքագիծը իսկ եւ իսկ հորդ վարքագծին է նման»:

«Բայց հաճախ էիր ասում, որ քո գեղարվեստական ճաշակն ունեմ, մայրիկ: Այնուամենայնիվ, դեմ չեմ այն բանին, որ ունեմ հայրիկիս անկարելի վատ սովորությունները, քանի դեռ քեզ չեմ լքել, ինչպես նա, մայրի՛կ, տասներեք տարի չվերադառնալով: Ես երբե՞ք քեզ չեմ լքի, մայրի՛կ»:

Պեկինի շուրջ Յուանի գործերի վերջին խոռվությունը նրա հրամանով էր բեմադրված թե ոչ, դժվար է ասել, բայց դա ամրապնդեց նրա փաստարկը, որ չի կարող ինչայնչ հուսիսում, եւ որ քանի դեռ նոր մայրաքաղաքը պետք է Նանկինը լինի, նախագահը պետք է մնա Պեկինում: Ու որպեսզի երաշխավորի, որ այդպիսի անհաջողություններ այլեւս երբեք տեղի չեն ունենա, նա ռազմական ուժեր ստեղծեց քաղաքի ներսում եւ շուրջը՝ հիմնելով «Մերձպեկինյան անվտանգության պահակազորը»: Դա շատ կարելի էր մի գործիք էր, քանի որ, հետագայում, երբ խորհրդարանը, որն ստիպված տեղափոխվեց Հյուսիս իր հարմարության համար, որոշումներ էր ընդունում ոչ այնքան իր ուզածով, նա օգտագործեց այդ գործերը՝ լուծարելու համար այս մտահոգիչ օրենսդիր մարմինը:

Մերձպեկինյան անվտանգության պահակազորի գլխավոր հրամանատարի կարելի էր պաշտոնը տրվեց Լի Շիաո Մինին, որի հանդեպ նախագահը մեծ վստահություն էր տածում, եւ երբ նշանակման մասին հայտարարված էր, անսպասելի մի այցելու եկավ նրա շտաբ՝ խնդրելով, որ իրեն ուղեկցեն նրա առանձին նստավայրը: Երբ ընդունելության քարտը հանձնե-

ցին, Շիաո Մինը, որ ճոխ ընթրիք էր վայելում իր նոր հարճի հետ, ծառային ասաց, որ այցելուին անմիջապես ներս ուղեկցի: Նա նայեց իր հարճին, որն ամբողջովին թանկարժեք քարերով էր զարդարված ու հագել էր ամենաճոխ մետաքսե զգեստները, եւ հպարտորեն ժպտաց:

«Ներս եկ, Լոտոսի Բուրմուռը», - հաղթականորեն ծայն տվեց նա:

«Երբեք չէի մտածի, որ ի վերջո կգամ քեզ մոտ», - ասաց Լոտոսի Բուրմուռը՝ գրեթե հեկեկալով: Նա հասարակ էր հագնված: Մետաքսի կոշիկ իսկ չկար հագին: Ոչ մի զարդ չէր կրում: Առանց շրթների էր եւ անշար: Մազերը հավաքված էին ամենապարզ ձևով: Եվ այդուհանդերձ՝ գեղեցիկ պնդված տիկինն զգաց, որ ինքը կուզեր ծանոթանալ այս այցելու կնոջ դերձակի ու վարսահարդարի հետ եւ մի քանի հարց տալ նրան գեղեցկության մշակույթի մասին:

«Ես նույնպես: Բայց ինչ էլ լինի, միշտ ուրախ եմ քեզ ընդունել իմ տանը, - ասաց Շիաո Մինը: - Իսկ սա իմ համեստ հարճն է»:

Լոտոսի Բուրմուռը թեթևակի խոնարհվեց եւ շփոթված ու անհանգիստ նայեց տիկնոջը: Ապա շրջվեց դեպի Շիաո Մինը եւ նրան դիմեց խնդրանքով. «Կարո՞ղ եմք առանձին խոսել»:

«Իհարկե», - եւ նա ձեռքով նշան արեց հարճին, որ հեռանա:

Տիկինը դուրս եկավ տարակուսած ու վատ նախազգացումներով եւ պատրաստ էր հետո մի լավ վիճելու:

«Դատելով հագուստիցդ եւ աչքերիդ գույնից՝ հուսով եմ չես պատրաստվում ինձ ասել, թե այրի ես: Խոստովանում եմ, որ իմ սահմանափակ փորձով ես չգիտեմ ինչպես վարվել այրիների հետ...»:

«Վերջ տուր անհեթեթությանդ: Ես քեզ մոտ եմ եկել ի սեր իմ աղջկա»:

«Չե՞ս կարող ասել իմ աղջիկն է: Թանի՞ տարեկան է»:

«Տասներեք»:

«Հա, իհարկե, տասներեք: Հիմար բան եմ հարցնում: Կարող էի իմանալ, - նա արագ հաշվեց: - Այո, Տա Տունգը տասներեք տարի է, ինչ լքել է քեզ»:

«Եվ ես աղջկանս հետ շտապ նրա մոտ եմ գնում: Թանի որ այժմ Պեկինի շուրջ գործող ռազմական դրության պատճառով վտանգավոր է ճանապարհորդել, եկել եմ քեզ խնդրելու, որ ինձ անձեռնմխելիություն շնորհես»:

«Դա բավականին հեշտ է: Դու, իրոք, խելացի կին ես, ամենախելացին, որին երբեմն հանդիպել եմ: Նախքան գալը պետք է նկատի ունենայիր մի բան, որը, համոզված էիր լինելու, ինձ կստիպեր խնդրանքդ կատարել...»:

«Այո: Դա նա է», - Լոտոսի Բուրմուռը մատնացույց արեց Լի Մինի դի-

ԱՅՈՒՆ ԸԻ-Ի

մանկարը, որ կախված էր պատից:

«Իմ հա՞յրը: Ի՞նչ կապ ունի նա այս ամենի հետ»:

«Նա նաեւ իմ հայրն է»: Լուտոսի Բուրմուկը սրբեց արցունքները եւ շարունակեց. «Երբ, երկու տարի առաջ, մայրս արդեն մահվան շեմին էր, գրեց ինձ` ասելով, որ ավելի քան տասը տարի բողոքայականությանը նվիրվելուց հետո ամբողջովին գերծ է աշխարհիկ նկատառումներից: Նա վեր էր դժբախտ մահկանացուներիցս: Նրա համար այն, ինչ մենք համարում ենք պատիվ, պարզապես դատարկություն էր: Իմանալով իմ հանդեպ ունեցած քո չարակամությունը` նա ուզեց, որ քեզ հայտնեմ այս մասին, որպեսզի ես եւ Տա Տունգն այլեւս չտուժենք քո չարամտությունից: Կյանքը երազ է, ասաց նա: Նա պատրաստվում էր թողնել իր երազը եւ ապրել հավերժության մեջ: Մայրս երկրի վրա դժոխք էր տեսել ու տառապել քո եւ իմ հոր պատճառով եւ անհամբեր սպասում էր իր փրկությանը»:

Շիաո Մինն ասեւ արթնացել էր հենց նոր տեսած երազից եւ երկար ժամանակ լուռ էր: Կյանքում առաջին անգամ նա զգաց, որ այս աշխարհում բաներ կան, որոնց վրա նույնքան սխալ է արտասվել, որքան որ ծիծաղել:

«Ես չհնազանդվեցի նրան,- շարունակեց Լուտոսի Բուրմուկը,- որովհետեւ նա սուրբ ու նվիրական էր ինձ համար, եւ ես ցանկություն չունեի թույլ տալու, որ ուրիշ մեկն իմանար նրա ամուսնական անհավատարմության մասին: Ես երբեք չէի պղծի նրա ետմահու պատիվը հանուն իմ սեփական անվտանգության: Բայց հիմա, երբ հասկանում եմ, որ դա մայրական սերն էր նրան մղում ինձ պատվիրել` քեզ ասելու, տեսնում եմ այժմ այդ նույն սերն է երիտասարդ սերնդի նկատմամբ, որ ինձ մղում է քեզ խնդրելու իմ աղջկա անձեռնմխելիության համար: Սա մորս ցանկությանը համապատասխան կլիներ»:

Հուզված նրա տրամաբանության անսովոր ձեւից` այդքան կանացի, այդքան դյուրազգաց, այդքան սրտաշարժ եւ այդուհանդերձ այդքան ճիշտ, Շիաո Մինն ասաց. «Կտամ քեզ ինչ ցանկանում ես: Բայց պետք է ասեմ, որ հիմա ոչ մի տեղ անվտանգ չէ: Երկար ժամանակ ոչ մի իրական խաղաղություն չի լինելու: Ես երեխաներ չունեմ: Բժիշկներն ասում են, որ հույս չկա: Քո դուստրը մեր հոր միակ ժառանգն է: Թող հոգ տանեմ նրա մասին: Ես փող ունեմ, շատ փող: Յուանի համար տարիների ծառայություններն ինձ հարստություն պարգեւեցին իմ ցանկացածից էլ ավելի: Աղջիկն ինձ հետ անվտանգ ու ապահով կլինի: Յուանը Չինաստանի ամենահզոր մարդն է: Նա կճգմի ցանկացած մեկին, ով կհամարձակվի ընդդի-

մանալ իրեն: Ինձ փչացրել են հայրս, մայրս եւ տատս: Ես որոշակի կարգ-ին կրթություն չեմ ստացել երիտասարդ ժամանակ: Երդվում եմ կհետեւեմ, որ քո աղջիկը, որն իմ զարմուհին է, ստանա ամենալավ կրթությունը, որ կարելի է ձեռք բերել փողով»:

«Ինչքա՞ն նման է քո հին եսին: Դու քեզնից բացի ուրիշ ոչ ոքի մասին չես մտածում»:

«Ես եսասե՞ր եմ: Ես առաջարկում եմ քո աղջկան աշխարհի ամենալավ կրթությունը տալ»:

«Այո, նախ՝ որովհետեւ նա քո հոր միս ու արյունն է, երկրորդ՝ որովհետեւ դու երեխաներ չունես, եւ վերջապես՝ որովհետեւ ուզում ես լրացնել մի բանի պակասը, ինչին չես հասել»:

Շիաո Մինը լուռ էր:

«Դու պետք է մտածես ուրիշների մասին: Արդյո՞ք նա երջանիկ կլինի առանց մոր: Հանուն նրա ես կիրաժարվեի դրախտ գնալ»:

«Թույլ տուր, ուրեմն, աջակցել նրան: Գոնե սա՛ պետք է ընդունես»:

«Ես չեմ կարող քեզնից փող վերցնել: Որտեղի՞ց է դա: Յուանի՞ց: Դա հասարակ մարդկանցից քամած արյուն-քրտինքն է: Ես դրան ձեռք չեմ տա»:

«Կվերցնե՞ս հորդ կալվածքը: Այն հսկայական է: Ես ետ եմ գնել այն ամենն, ինչ մայրս ու ես նախկինում վաճառել էինք: Աղջիկը պետք է լավ կրթություն ստանա, իսկ ես գիտեմ, որ Տա Տունգը չի կարող հարուստ լինել: Ոչ էլ երբեւէ կլինի»:

«Ոչ: Մեր հոր հարստությունն էլ է անազնիվ ճանապարհով ձեռք բերվել: Ես դա չեմ վերցնի: Տա Տունգը հարուստ չէ եւ երբեք էլ չի լինի: Դա միանգամայն ճշմարիտ է: Բայց ես դժվարին վիճակի մեջ չեմ: Ես խնայողություններ եմ արել այրի կայսրուհուն ծառայելիս վաստակած իմ գումարներից, որ բավական են նրան պատշաճ կրթություն տալու համար»:

«Հա՛... Իսկ որտեղի՞ց է քո փողը: Այրի կայսրուհուց: Բայց դա մի՞թե նույնպես բնակչության արյունն ու քրտինքը չէ, որին նա հարստահարել է»:

«Բայց ես դա վաստակել եմ ազնիվ աշխատանքով եւ շատ հեռուն չեմ գնում իմանալու, թե ինչպես է առաջացել: Եթե գեթ մի փոքր սեր ունես իմ դստեր հանդեպ, խնդրում եմ տո՛ւր ինձ անձեռնմխելիությունը եւ էլ ոչինչ մի՛ ասա փողի մասին»:

«Շատ լավ, ինչպես կուզես: Բայց կխոստանա՞ս ինձ, որ ամեն անգամ, երբ նա ցանկացած օգնության կարիք ունենա, չես մոռանա, որ ես առաջինն իրավունք ունեմ օգնելու նրան»:

ԱՅՈՒՆ ՇԻՒ

«Խոստանում եմ: Բայց չեմ կարծում, թե նա դրա կարիքը կունենա»:

«Ո՞վ գիտե: Երկիրը քառսի մեջ է, եւ գալիք տարիներին ավելի վատ բաներ կարող են տեղի ունենալ: Յուանը փառասեր է, իսկ Հարավը՝ համար: Բախումներ են լինելու: Ահա թե ինչու եմ քեզ խորհուրդ տալիս, որ աղջկան այստեղ թողնես»:

«Յուանը փառասեր է: Նա հիմա հասել է իր սրտի ուզածին: Ուրիշ էլ ի՞նչ կարող է ունենալ»:

«Ո՞վ գիտե: Ժամանակը ցույց կտա»:

Հաջորդ օրը Լոտոսի Բուրմունքը դստեր հետ հեռացավ Պեկինից:

Անձեռնմխելիությունը շատ օգտակար եղավ: Քանի որ մայրաքաղաքի մոտակայքում զինվորները շարունակում էին թալանել, եւ հսկիչ պահակախումբ էր պետք ուղարկել՝ ամբողջ երկաթուղու երկայնքով պարեկություն անելու համար: Դա, իհարկե, նախագահ Յուանի գաղտնի հրամանը չէր, որ իր զինվորներն այդքան բիրտ ու անվայել վարվեն, քանզի եթե նրանք կալանավորվեին, կզնդակահարվեին Երկնային կամրջի մոտ՝ Շիաո Մինի կողմից ղեկավարվող ռազմադաշտային դատարանի շատ կարճ դատավարությունից հետո: Հեղափոխությունից հետո Երկնային կամուրջն ամբողջովին վերականգնել էր բոլոր մյուս ավանդական արատները, ինչը համարվում էր մահապատժի պաշտոնական հիմնավորում, եւ հիմա ոչ մի օր չէր անցնում առանց այս սոսկալի վայրում դժբախտ մեկին այլ աշխարհ ուղարկելու: Ոչ էլ նախագահի մտադրությունն էր՝ թույլ տալ հսկիչ պահակախմբին, կարգուկանոն պահպանելու պատրվակով, ամեն տեսակի բռնություն ու անարգանք գործել Պեկին եկող եւ Պեկինից մեկնող ճանապարհորդների հանդեպ: Բայց մի հին ասացվածք կար այն մասին, որ «եթե գլխավոր հեծանն ուղիղ չէ, մյուսներն ստիպված են թեքվել»: Այդուհանդերձ, մորն ու աղջկան Շիաո Մինի կողմից տրված անձեռնմխելիությունը ապահովեց անհրաժեշտ պաշտպանությունը:

Երբ նրանք Նանչան ժամանեցին, տեսան, որ Տա Տունգն իրենց է սպասում նավամատույցում: Լոտոսի Բուրմունքը, տեսնելով նրան, հայացքը խոնարհեց եւ մեղմորեն բացականչեց. «Վերջապե՛ս»:

Նրբագեղ Ճառագայթը կարմրեց մինչեւ ականջները: Ուշադիր նայելով գետնին՝ նա դանդաղ մոտեցավ հորը: Մի ձեռքով բռնելով դեպի իրեն անվճռականորեն մեկնած աղջկա ձեռքերը՝ Տա Տունգը մյուսով բարձրացրեց նրա գլուխը եւ սեւեռուն նայեց դեմքին: Հետո շրջվեց կնոջ կողմն ու շշնջաց. «Ուրեմն, սա՛ է կենսական նշանակության պատճառը: Համաձայն եմ»:

Շիաո Մինը հեռագրել էր Նանչանի իր փաստաբաններին, որ իր հոր հին կալվածքների սեփականության իրավունքի բոլոր փաստաթղթերը փոխանցվեն Լոտոսի Բուրմունքին, եւ վերջինս չգիտեր ինչ անի որանց հետ: Տա Տունգն առաջարկեց. «Հայրդ կառուցեց այդ տիրահոջակ կամուրջը, եւ արդյունքը եղավ այս խառնաշփոթն ու աղետը: Հիմա հին կամուրջը գրեթե փտել է ու խարխուլվել եւ մշտական վտանգ է անցորդների համար: Ինչո՞ւ չվերակառուցել նրա բոլոր փողերով՝ օգտագործելով հնարավոր ամենալավ շինանյութը եւ քավելով նրա մեղքը: Ես կդեկլարեմ աշխատանքը եւ ետ կբերեմ մարմարի այն բոլոր քարերը, որ նա հանել էր հին կամրջից»:

Սա էր լուծումը: Եվ նախքան Տա Տունգի՝ Հարավային ծով ուղեւորվելը, որպեսզի ամայի կղզում հուղարկավորեր Տինգի աճյունի մասունքները, Երկնային կամուրջը վերակառուցվեց նրա ղեկավարության եւ հսկողության ներքո՝ համաձայն այն նախագծի, որ հիշողությամբ կազմել էր Լոտոսի Բուրմունքը՝ Ամառային պալատի մարմարե կամրջի նմանությամբ: Կամուրջը որքան գեղեցիկ, նույնքան ամրակուռ էր: Այն կարող էր դիմաւակ իր վրայով անցնող ամենաճանր բեռին եւ թույլ տալ, որ իր տակով անցնի ամենամեծ ջոկա առագաստանավը: Մինչ այսօր, երբ մարդիկ Նանչան քաղաքի մոտ խոսում են կամրջի մասին, մշտապես բացականչում են. «Փա՛ռք Երկնավորին»:

Այդ գնահատականը լիովին արդարացված է:

Կամրջի երկու ծայրերին, ափերի մոտ, լացող ուռիները մշտապես իրենց դյուրաթեք բներն են տարուբերում: Նրանց նուրբ կանաչ ու թարմ դեղին տերեւները ամեն անգամ պարում են մեղմ զեփյուռի տակ եւ իջնում ջրի խիտ եղեգների մեջ: Աջնանը, երբ ծառերը մերկ են ու անտերեւ, եղեգների մեջ լիքը բամբակե ճերմակ աղվափնջիկներ են: Երբեմն կարելի է տեսնել, թե ինչպես միայնակ վայրի մի սագ, որ կորցրել է երամի իր ուղեկիցներին մեծ Բո-Յան լճից դեպի հարավ ձգվող ճանապարհին, գիշերն այստեղ է անցկացնում՝ արժեւորելով տեսարանի գեղեցկությունը: Արեւոտ, տաք օրվա կեսօրին, երբ այս մեծաշուք կամարակապ ուղու վրայով ու տակով անցնող ուղեւորները զբաղված են, անհանգիստ եւ աղմկոտ, հնարավոր չէ տեսնել կամրջի իսկական դեմքը: Բայց երբ մարդիկ տուն են գնացել, թռչուններն ու ձկները հանգստանում են, եւ վառ կարմիր արեւը մայր է մտնում արեւմտյան հորիզոնում, ճերմակ մարմարը նկատելիորեն առանձնանում է փայլուն ֆոնին, կամ երբ լուսինը նվազում է, եւ սառը ցողն է փայլվում գունատ քարի վրա, կամ երբ մանրամաղ անձրեւն է իջ-

ԱՅՈՒՆ ՇԻ-Ի

Նում, եւ երբ միայնակ ու աննավաճար մի նավակ թեք սահում է ջրերի վրա, կամ երբ մշուշն օդի մեջ սկսում է ցրվել, արեւը դանդաղ դուրս է նայում ծառերի ետեւից, եւ երբ ձկնորսն իր փոքրիկ նավակում թիակներն է շարժում ճռռոցով,- ուրեմն դա ամենալավ ժամանակն է տեսնելու երկնային կամուրջը՝ որպէս կատարյալ ներդաշնակության պատկեր: Տեսարանը կամրջի շուրջ շարունակում է փոխվել: Կամրջի վրայով եւ տակով անցնող ուղեւորները, ուրախ լինեն թե տխուր, իրենց սիրելիներից անբաժան լինեն թե նրանցից բաժանված, շարունակում են փոխվել: Բայց Երկնային կամուրջը մնում է այդտեղ հավերժ, հաստատուն եւ շքեղ՝ որպէս գեղեցկության մարմնավորում եւ օրհնություն բոլորի համար:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	7
ԳԼՈՒԽ 1	28
ԳԼՈՒԽ 2	54
ԳԼՈՒԽ 3	73
ԳԼՈՒԽ 4	92
ԳԼՈՒԽ 5	113
ԳԼՈՒԽ 6	132
ԳԼՈՒԽ 7	159
ԳԼՈՒԽ 8	179
ԳԼՈՒԽ 9	198
ԳԼՈՒԽ 10	219
ԳԼՈՒԽ 11	238
ԳԼՈՒԽ 12	264
ԳԼՈՒԽ 13	289
ԳԼՈՒԽ 14	313
ՎԵՐՋԱԲԱՆ	341

ՍՅՈՒՆ ՇԻ-Ի

ԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՍՈՒՐՁԸ

Անգլերենից թարգմանությունը՝
Խորեն ԳԱՄՊԱՐՅԱՆԻ

Ստեփանակերտ 2016

Խմբագիր՝ Յ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան
Էջադրումը՝ Վ. Սարգսյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 22.5 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան

«ԳԵՂարմ» հանդեսի մադենաշարով լույս են տեսել

- «ԹԱՏԵՐԱԽԱԿԵՐ ԱՐԵՒՏՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՅ»- 2010
Իոսիպ Բրոդսկի. «ՏԵՊԵՏԱՐԱՓԻ ՇԱՉՅՈՒՆ» - 2011
Մ. ԲԱՆՏԻՆ. «ԴՆԱՏՈՒՄԱՆ ՊՈՆՏԻԿԱԿԻ ԽՆԴԻՐԱԵՐԸ» - 2012
«ՄԻՐՈՒՄԻ ԱՐԳԱՇԱՐԱԵՐԸ»/Վ.ԽԼԵՔԵՐԿՈՎ, Ն.ԳՈՒՄԻՅՈՎ, Վ.ԽՈՂԱՍԵՐՅՈՎ/
- 2012
ՍԵՐՎԷՂ ԴՈՎԼԵՅՈՎ. «ՄԻՋԱԿԱՆԵՐԻ ԵՐԹԸ» - 2012
ՅՈՒՐԻ ԼՈՏԱՆԱ. «ՄԻՅԱՆՈՒՄԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ» - 2012
ՎԱՌԼԱ ՇԱՂԱՆՈՎ. «ԿՈՒԻՆԱԿԱՆ ՊՏԱԿԱՑՈՐԵՐ»- 2012
ԺԱՐԿՈ ՄԻԼԵՆԻՉ. «ԼԵՈՒՆ՝ ՀՐԱՇԱԳՈՐԾԻ ԱՇԿԱՐՏԸ»- 2013
ՊԱՎԵԼ ՖԻՈՐԵՆՍԿԻ. «ԻԿՈՆՈՍՏԱՍ» - 2014
ՌՈՒՄ ԿՈՆՃԵՊՏՈՒՄԻ ՊՈՆՏԻԿԱ/ Դ.ՊԻՐԳՈՎ, Վ.ՆԵՄԵՐՍՈՎ, Լ.ՌՈՒՔԻՆՍԵՅՆԱ/
- 2014
ՀԵՆՐԻԽ ՍԱՊՐԻՆ. «ԶՈՒԳԱՇԵՌ ԱՐԴԻՆ» - 2014
ՎԱՍԻԼԻ ԳՐՈՍՎԱՆ. «ԿՅԱՆՔ ԵՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ» - 2014
«ԿԱՆՈՒՑԱՆԵՐԻ ԽՈՈՎՈՒԹՅՈՒՆ. ԱԵՏԱՎԵՏԱՅՈՐԻՍԱՆԵՐ» - 2015
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈՒՇԵՆՅՈՒՆ. «ՄԱՏՐՅՈՒՆԱԿԻ ԿԱԼԱՑՈՐԸ»- 2015
ԱՆԴՐԵՎ ՊԼԵՏՆՈՎ. «ՉԵԽԵՆՈՒՐ. ԳՈՒՐԸ. ՊՏԱԿԱՑՈՐԵՐ» - 2015
ԱՐԴԻ ՌՈՒՍՍԿԱՆ ԱԵՐԻՔՈՒՄ (ԱԹՅՈՒՊԳԻՄ) - 2015
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՇԿՈՒՄԸ ԲՐԵՍՏՈՎՍԿԻՄ - 2015
ԶԻՐԻ ՄԱՅՐԻՄ. «ՀՐԵՂԵՆ ԽՈՍՔԵՐ» - 2015
ՄԱ ՔԱՅ. «ՄԻՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԱՆԵՐ» - 2015
ԵՎԳԵՆԻ ՎՈՂՈՎՅՈՎԻՆ. «ԼԱՎՐ» - 2015
ՔԱՅ ՏՅԱՆՍԻՆ. «ԽԱՂԱԿ ԿՅԱՆՔԻ ԵՐԳՈՒՄ» - 2015
ՌՈՒՄ ԱՅԼԱԽՈՇՇԱԿԱՆ ՊՈՆՏԻԿԱ (ԱԹՅՈՒՊԳԻՄ) - 2015
ՉԻՆԱԿԱՆ ԱՏՔԻ ԵՒ ԱՇԿՈՒՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ(ՀԱՏՈՐ
1) - 2016
ՅՈՒ ԶԻՆԱ. «ԱՆՁՐԱՆԻՅ ՊՏԱՍՊԱՐԿՈՂ ԹՈՉՈՒՆԸ» - 2016

ՊԱՍԵԼ ԲԱՍԻԱՍԻ. «ԼԵՒ ՏՈՒՍՈՂ. ՓԱՆՈՒՍ ԴՐԱՆՏԻՅ» - 2016
ԶԺԱՆ ՅԶԻՅԱՆ. «ԵՐԱՉ ՕՊԱԻ ԱՍԱԻԱ» - 2016
ՎԱՆ ԶԵՆՉԻ. «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԱՎԱՆԻ ԱԻՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ» - 2016
ԼՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՊԵՏՐՈՎԵՆՍԿԱՅ. «ՍԵՐ. ԵՐՁԱՆԿՈՒԹՅՈՒՆ. ՈՆԲԳԻՆԱ» - 2016
ԱՆՈՐԿ ԲԵՂԻ. «ՊԵՏԵՐՔՈՐԳ» - 2016
ԴԻԿՈՊՈՍԱՆԵՐ. ԱՆՀԱՅՏ ՊՈՆՏԱՆԵՐԻ ԱՊԱՍՏԱՆ (ԱՆԹՈՂՈԳԻԱ) - 2016
ՌՈՒՄ ԱԻՆԻԱՎԻՐՍԱՆԵՐ (ԱՆԹՈՂՈԳԻԱ) - 2016
ԻԶԻՅԵ ԹԱՆ. «ԿՈՆՏՈՒՅԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲՈՒԴԴՅԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԴԱՆՈՒԲԱՐ, ԲՐԻՍՏՈՆԵՆՈՒԹՅՈՒՆ և ՉԻՆԱԿԱՆ ԱՇԿԱԿՈՒԹՅՈՒՆ»- 2016



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Էլ. ասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.՝ +37497252323